ԴԵՍՊԱՆ ՀԵՆՐԻ ՄՈՐԳԵՆԹԱՈՒԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԴԵՍՊԱՆ ՀԵՆՐԻ ՄՈՐԳԵՆԹԱՈՒԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐԵՎԱՆ – 2012

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ) 52
Մ 920

Գիրքը երաշխավորվել է հրատարակման ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտխորհրդի կողմից

Անգլերենից թարգմանեց Լիլիթ Թութխալյանը

Գիրքը տպագրվել է Ռալֆ Յիրիկյանի աջակցությամբ

Մորգենթաու Հենրի

Մ 920 Դեսպան Մորգենթաուի պատմությունը /Հ. Մորգենթաու. - Եր.: Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2012. – 310 էջ

Առաջին անգամ հայ ընթերցողին է ներկայացվում 1913-1916 թթ. Օսմանյան Թուրքիայում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերի արևելահայերեն հրատարակությունը: Այս հուշագրությունը եզակի սկզբնաղբյուրի նշանակություն ունի Հայոց ցեղասպանության պատմության, ի մասնավորի՝ թուրքական պետության կողմից այդ նպատակադրված և ծրագրված հանցագործության ծալքերը բացահայտելու, ժամանակի թուրքական հանցավոր վարչակարգի մտայնությունների բացահայտման և ուսումնասիրման համար: ԱՄՆ դեսպանի այս հուշագրությունը, հիրավի, կոթողային մի գործ է, որտեղ ներկայացված փաստերն ու վկայություններն անհերքելիորեն ապացուցում են ցեղասպանության ծրագրված և նպատակային իրագործված լինելու հանգամանքը:

Գիրքը նախատեսված է պատմաբանների, արևելագետների, ցեղասպանագետների, ինչպես նաև սույն թեմայով հետաքրքրվող ընթերցողների լայն շրջանի համար:

ISBN 978-9939-822-25-9

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ) 52

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2012

ԱՌԱՋԱԲԱՆ

Առաջին անգամ արևելահայերենով ընթերցողին է ներկայացվում ամերիկացի նշանավոր քաղաքական և հասարակական գործիչ, 1913-1916 թվականներին Օսմանյան կայսրությունում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուի հուշագրությունը: Հայոց ցեղասպանության մասին անհերքելի վկայություններ պարունակող այս գրքում հեղինակը նկարագրում է այդ ժամանակաշրջանում օսմանյան Թուրքիայում տեղի ունեցած իրադարձությունները, հատկապես՝ երիտթուրքերի կողմից իրականացված հայ ժողովրդի ցեղասպանությունը՝ այն որակելով որպես «պատմության մեջ իրագործված մեծագույն ոճիր»:

ԱՄՆ դեսպանի հուշագրությունն իրավամբ կարելի է համարել Հայոց ցեղասպանության պատմական ճշմարտության վկայարան: Այս գիրքը, լույս տեսնելով իր ժամանակին՝ 1918 թվականին, վերահրատարակվում է հաջորդ տարի, քանզի այն պահանջված էր քսաներորդ դարասկզբի մեծագույն ոճրագործության՝ հայերի դեմ իրականացված ցեղասպանությանն առնչվող դեպքերի ու զարգացումների մասին մանրամասն տեղեկություններ պարունակելու առումով:

Հենրի Մորգենթաուն ծնվել է դեռևս չմիավորված Գերմանիայում՝ Բադենի մեծ դքսության Մանհայմ քաղաքում: Մորգենթաուների բազմանդամ ընտանիքը (Հենրին իններորդն էր տասնմեկ զավակ ունեցած Լազարուս և Բաբեթ Մորգենթաուների ընտանիքում) հայտնի էր ծխախոտի արտադրության ոլորտում: 1866-ին ֆինանսական դժվարություններ ունենալու պատճառով Մորգենթաուների ընտանիքը մեկնում է ԱՄՆ՝ հաստատվելով Նյու Յորքում:

Ստանալով բակալավրի աստիճան Նյու Յորքի Սիթի քոլեջում՝ երիտասարդ Հենրին այնուհետև ուսումը շարունակեց Կոլումբիայի իրավունքի դպրոցում՝ ստանալով իրավաբանի բավական խոստումնալից ու հեռանկարային մասնագիտություն: 1882 թվականին Մորգենթաուն ամուսնացավ Ժոզեֆին Սայքսի հետ: Նրանք ունեցան չորս զավակ:

Հենրի Մորգենթաուն անմասն չմնաց նաև ամերիկյան քաղաքական կյանքի անցուդարձերից: Դառնալով ԱՄՆ Նախագահ Վուդրո Վիլսոնի քաղաքական թիմակիցը՝ շուտով նա՝ որպես Դեմոկրատական կուսակցության անդամ, առաջարկ է ստանում Վուդրո Վիլսոնից՝ Օսմանյան կայսրությունում ԱՄՆ դիվանագիտական ներկայացուցչությունը ղեկավարելու համար: Որոշ մտորումներից ու վարանումներից հետո Հենրի Մորգենթաուն ի վերջո տալիս է իր համաձայնությունը և 1913 թվականին դառնում է ԱՄՆ դեսպանը Կոստանդնուպոլսում:

Մեծ է Հենրի Մորգենթաուի ներդրումը Հայկական հարցի և արևմտահայոց իրավունքների պաշտպանության գործում: Ծագումով հրեա ամերիկացի դիվանագետն ու քաղաքական գործիչը, Առաջին աշխարհամարտի տարիներին ներկայացնելով դեռևս չեզոք պետության շահերը, միաժամանակ ջանք ու ժամանակ չէր խնայում թուրքական վայրագությունների զոհ դարձած քրիստոնյա բնակչության կյանքի ու իրավունքների պաշտպանության համար: Մարդասիրություն. թերևս այս բառը շատ դիպուկ է դիվանագետ Մորգենթաուին բնորոշելու համար: Ի վերջո, որպես այլ երկրի դիվանագետ, ով ներկայացնում էր իր և պատերազմի մեջ գտնվող որոշ երկրների շահերը, նա բոլորովին էլ պարտավորված չէր անընդհատ բարձրացնել հայերին վերաբերող խնդիրներ: Սակայն օրեցօր Կոստանդնուպոլսում ԱՄՆ դեսպանատունը հեղեղվում էր կայսրության արևելյան շրջաններում գործող ԱՄՆ հյուպատոսների զեկուցագրերով, որոնցում հաղորդվում էին թուրքական վայրագությունների սահմռկեցուցիչ դրվագներ, և որոնք Մորգենթաուն, իր հերթին, զեկուցագրերի տեսքով ներկայացնում էր ամերիկյան կառավարությանը: Հենրի Մորգենթաուի հենց այս զեկուցագրերը, որոնք ներկայումս պահվում են ԱՄՆ Պետդեպարտամենտի արխիվներում, երիտթուրքերի կողմից իրականացված կանխամտածված ցեղասպանության անհերքելի վկայություններ են: Ավելին, Մորգենթաուն ոչ միայն չէր սահմանափակվում պարզապես տեղեկություններ հաղորդելով, այլև իր կառավարությանը հորդորում էր անհապաղ միջամտել՝ կոտորածները դադարեցնելու համար:

Ամերիկյան կառավարությունը, հակառակ նրան, որ մամուլը ողողված էր հաղորդագրություններով, իսկ ԱՄՆ դեսպանը պարբերաբար Պետդեպարտամենտ էր ուղարկում հայերի կոտորածների նկարագրություններով լի զեկույցներ, գերադասեց չեզոք դիրք գրավել տեղի ունեցող իրադարձությունների հանդեպ:

ԱՄՆ Պետդեպարտամենտին հղված հեռագրերից մեկում Հենրի Մորգենթաուն թուրքական իշխանությունների կողմից իրականացվող հայերի զանգվածային կոտորածները որակում է որպես ռասայական բնաջնջման քաղաքականություն: Այս կապակցությամբ նա գրում է. «Բռնագաղթի իրական նպատակը կողոպուտն ու ոչնչացումն էր. սա, հիրավի, կոտորածների նոր տեսակ էր: Երբ թուրքական իշխանությունները աքսորի հրաման արձակեցին, նրանք այսպիսով մի ողջ ժողովրդի ոչնչացման որոշում կայացրին: Նրանք դա լավ էին գիտակցում և մեր զրույցներում նույնիսկ չէին էլ ջանում թաքցնել այդ փաստը»[1]:

Օսմանյան կառավարիչների հետ իր հարաբերությունները վերջնականապես փչացրած Մորգենթաուն 1916 թվականին դադարեցրեց իր դիվանագիտական առաքելությունը: Թերևս այս որոշումը հասունացել էր դեռևս իր առաջին միջնորդությունների ժամանակ, սակայն նման որոշման դրդապատճառը պերճախոս կերպով շարադրում է Հենրի Մորգենթաուն ինքը՝ իր հուշագրության գլուխներից մեկում գրելով. «Հայերին ոչնչացումից փրկելու անկարողությունս Թուրքիան իմ աչքին վերածեց սոսկ մի տեղավայրի, և ես հասկացա, որ այլևս ի վիճակի չեմ ամենօրյա հարաբերություններ ունենալու այն անձանց հետ, ովքեր, որքան էլ բարյացակամ ու քաղաքավարի լինեին Ամերիկայի դեսպանի հանդեպ, միևնույն է, «գարշահոտություն էին արձակում» մեկ միլիոն զոհերի արյունից: Եթե ես կարողանայի անել ավելին ամերիկացիների, Թուրքիայում բնակվող օտարերկրացիների կամ Օսմանյան կայսրության հալածված ազգերի համար, ես անշուշտ կմնայի...»[2]:

Պատերազմի ավարտից հետո Հենրի Մորգենթաուն ներգրավված էր մի շարք նախաձեռնություններում: Փարիզի խաղաղության վեհաժողովի ընթացքում նա ամերիկյան պատվիրակության Արևելյան Եվրոպայի և Մերձավոր Արևելքի հարցերով խորհրդականն էր: Մարդասիրական կազմակերպությունների կազմում մեծ էր նրա ներդրումը հատկապես հույն փախստականների վերաբնակեցման հարցում:

Հենրի Մորգենթաուի այս հուշագրությունն ուշագրավ և արժեքավոր է հատկապես ԱՄՆ դեսպանի և երիտթուրք պարագլուխների միջև կայացած երկխոսությունների վերարտադրման և դրանց հիման վրա հայերի ցեղասպանությունն իրագործելու իրական նպատակադրությունն ապացուցելու առումով: Այս հուշագրության հետ ծանոթանալիս ընթերցողի մոտ որևէ կասկած չի մնում առ այն, որ հայերի ցեղասպանությունը կանխամտածված է եղել և ծրագրվել է թուրքական պետության կողմից:

Հենրի Մորգենթաուի այս գիրքը կարևոր հոգեբանական դիտարկումների մի ամբողջական հավաքածու է, որտեղ ամփոփված են երիտթուրքերի հրեշավոր բնութագրերն ու միլիոնավոր մարդկանց դեպի անխուսափելի մահ ուղարկելու անսքող պատրաստակամությունն ու վճռականությունը: Այն նաև բացահայտում է գերմանական դիվանագիտական և ռազմական ներկայացուցիչների ցինիկ ու գռեհիկ պահվածքը հայերի զանգվածային կոտորածների հարցում և լիարժեք փաստում է Գերմանիայի մեղսակցության մասին իրականացված հանցագործության մեջ:

Այս հուշագրությունն առաջին անգամ անգլերեն տպագրվել է Նյու

[1] Ambassador Morgenthau's Story. Garden City, NY: Doubleday, Page&Co. 1918, p. 309.
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 385:

Յորքում[3], իսկ հայերեն՝ 1919 թվականին Պոլսում, Ենովք Արմենի թարգմանությամբ[4]: Թարգմանիչն իր խոսքում գրում է. «Դեսպան Մորկընթաուի Յիշատակները»-ին ներկա հայացումին՝ պրակով հրապարակ հանուած ատեն՝ Հայ ժողովուրդին կողմէ գտած խանդավառ ընդունելութիւնը քաջալերիչ նշան մըն էր գործին բարձր արժէքին ըմբռնուելուն, ինչպէս գիտակից գնահատութեան ցոյց մը՝ ամերիկացի հեղինակին կողմէ Հայ Դատին նուիրուած քաղաքական-հրապարակախօսական մեծարժէք երկին՝ զոր հայ լեզուով Հայ հասարակութեան ներկայացնելուն ուրախ է թարգմանիչը»[5]:

Մորգենթաուն հեղինակ է մի շարք այլ հուշագրությունների, որոնք նույնպես ունեն կարևոր սկզբնաղբյուրի նշանակություն Հայոց ցեղասպանության փաստագրման և ուսումնասիրման համար[6]:

Դիվանագիտական առաքելության ավարտից հետո էլ Հենրի Մորգենթաուն չդադարեց հայանպաստ իր գործունեությունը: Արդեն 1915 թվականին նրա անմիջական ջանքերով ու նախաձեռնությամբ ստեղծվում է «Հայ-սիրիական նպաստամատույց» կազմակերպությունը, որը հետագայում վերանվանվում է «Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտե»: Այս կազմակերպությունը կարճ ժամանակահատվածում վիթխարի միջոցներ հավաքեց՝ Մերձավոր Արևելքում, Հունաստանում և Հայաստանում օգնության կարիք ունեցող վերապրողների, հատկապես տասնյակհազարավոր որբերի համար: Ի դեպ, հենց այս կազմակերպության նախաձեռնությամբ դրամահավաք իրականացնելու նպատակով Հոլիվուդում նկարահանվեց «Հոշոտված Հայաստան» կամ «Հոգիների աճուրդ» համր ֆիլմը, որը ներկայացնում էր ցեղասպանության սարսափները վերապրած Արշալույս Մարդիգյանի պատմությունը: Այս ֆիլմում Հենրի Մորգենթաուն մարմնավորեց հենց իր՝ ԱՄՆ դեսպան Մորգենթաուի կերպարը:

ՀԱՅԿ ԴԵՄՈՅԱՆ

---

[3] Ambassador Morgenthau's Story. Garden City, NY: Doubleday, Page&Co. 1918.

[4] Ամերիկեան դեսպան Մր. Մորկընթաուի Յիշատակները եւ Հայկական Եղեռնին գաղտնիքները, թարգմ. Ենովք Արմէն, Կ. Պոլիս, 1919 թ.: Սույն հատորի ֆաքսիմիլային տարբերակը լույս է տեսել Երևանում՝ 1990 թ., «Լույս» հրատարակչության կողմից:

[5] Նույն տեղում:

[6] Morgenthau H. Secrets of Bosporus. Constantinople 1913-1916. London: Hutchinson &Co, 1918; Morgenthau H. The Tragedy of Armenia. London: The Armenian Bureau, 1919; Morgenthau H. All in a Lifetime, Doubleday, Pages&Co., NY, 1922; Morgenthau H. I was sent to Athens, Doubleday, Doran&Company, Inc. NY, 1929.

ՆԱԽԱԲԱՆ

Այս պահին ամերիկացի ժողովուրդը հավանաբար արդեն համոզվել է, որ գերմանացիները կանխամտածված ծրագրել էին աշխարհի զավթումը, սակայն ուղղակի ապացույցների բացակայության պատճառով նրանք դեռևս տատանվում են կատարվածը դատապարտելու հարցում: Ուստի ժամանակակից պատմության ամենահրեշավոր ոճրագործության ականատեսները պարտավոր են ներկայացնել իրենց վկայությունները: Ես մի կողմ եմ դնում ամեն տարակուսանք, որ կարող է վերաբերել իմ իրավունքին՝ բացահայտելու հայրենակիցներիս առջև այն փաստերը, որոնց մասին տեղեկացել եմ Ամերիկան Թուրքիայում ներկայացնելու ժամանակ: Ես ձեռք եմ բերել այդ տեղեկությունները՝ ծառայելով ամերիկացի ժողովրդին, ուստի դրանք նույն չափով պատկանում են նաև նրան: Մեծապես ափսոսում եմ, որ ստիպված եմ բաց թողնել Թուրքիայում ամերիկյան միսիոներական ու կրթական կազմակերպությունների հիանալի գործունեությունը. դա մի առանձին գրքի նյութ է: Նույն պատճառով ստիպված եմ շրջանցել նաև Թուրքիայում բնակվող հրեաների պատմությունը:

Շնորհակալություն եմ հայտնում իմ բարեկամ պարոն Բերթոն Զ. Հենդրիկին այն անգնահատելի աջակցության համար, որ ցուցաբերեց այս գիրքը պատրաստելիս:

Հենրի Մորգենթաու

ԱՄՆ նախկին դեսպանը Թուրքիայում

1918թ., հոկտեմբեր

ԳԼՈՒԽ I

Գերմանացի գերմարդը Կոստանդնուպոլսում

Երբ սկսեցի գրի առնել Թուրքիայում դեսպան աշխատածս տարիների հուշերը, Գերմանիայի փառատենչ դիտավորությունները Օսմանյան կայսրությունում և Մերձավոր Արևելքում կարծես թե ժամանակավոր հաջողության էին հասել: Կենտրոնական տերությունները փաստորեն փլուզման եզրին էին հասցրել Ռուսաստանը, Բալթիկ և Սև ծովերը վերածել էին գերմանական լճերի և Կովկասով նոր ճանապարհ էին բացել դեպի Արևելք: Այդ պահին Գերմանիան գերիշխում էր Սերբիայում, Բուլղարիայում, Ռումինիայում, Թուրքիայում և Հյուսիսային ծովից մինչև Պարսից ծոց ձգվող Տևտոնական կայսրություն ունենալու իր երազանքները փաստորեն իրականացված էր համարում: Թեև 1914-ին այդ փաստը պարզորոշ չգիտակցվեց, սակայն հիմա արդեն աշխարհը գիտի, որ Գերմանիան պատերազմ սկսեց նպատակ ունենալով ոչնչացնել Սերբիան, վերահսկել Բալկանների ժողովուրդներին, Թուրքիան վերածել կախյալ պետության՝ այդպիսով տիրանալով վիթխարի մի արևելյան կայսրության, որը համաշխարհային անսահմանափակ տիրապետության հիմքը կդառնար: Արդյոք Գերմանիայի հարձակողական գործողություններն Արևելքում նշանակո՞ւմ էին, որ այս լայնածավալ ծրագիրը պսակվել է հաջողությամբ:

Երբ մտովի պատկերացնում եմ մի քարտեզ, որի վրա նշված են Գերմանիայի ռազմական ու դիվանագիտական հաղթանակները, այն, ինչին ես վկա եմ եղել Կոստանդնուպոլսում, ստանում է նոր իմաստ:

Այդ քսանվեց ամիսների իրադարձությունները ներկայանում են որպես մի ամբողջական, ավարտուն պատմության մաս: Այն անհատները, ովքեր տեղաշարժվում էին քաղաքական բեմահարթակում, հիմա ինձ ներկայանում են որպես խորապես մտածված, վարպետորեն բեմադրված դրամայի դերակատարներ: Այժմ ես պարզորոշ տեսնում եմ, որ Գերմանիան արդեն մտադիր էր իրականացնել համաշխարհային տիրակալության հասնելու իր ծրագիրը, և որ այն երկիրը, ուր ես ուղարկվել էի որպես ԱՄՆ դեսպան, Կայսեր մտահղացած քաղաքական ու ռազմական ողջ կառույցի անկյունաքարերից մեկն էր: Եթե պատերազմի առաջին իսկ օրերից Գերմանիան վերահսկողություն չհաստատեր Կոստանդնուպոլսում, ապա չէր բացառվում, որ թշնամական գործողություններն ավարտվեին Մառնի ճակատամարտից[1] մի քանի ամիս անց: Ճակատագրի անիմանալի քմահաճույքով ես հայտնվեցի մեծագույն դավա-

դրության կենտրոնում ճիշտ այն պահին, երբ քառորդ դար շարունակ Թուրքիան վերահսկելու Կայսեր դավադիր ծրագրերը մոտենում էին հաջող ավարտի:

Թուրքիային հնազանդեցնելու և նրա բանակն ու տարածքը Գերմանիայի տրամադրության տակ առնելու համար Կայսրը Կոստանդնուպոլիս էր ուղարկել մի դեսպանի, ով ասես ծնված լիներ նման գործունեության համար: Թեկուզ այն պարզ փաստը, որ Կայսրն անձամբ էր ընտրել բարոն ֆոն Վանգենհայմին այդ պաշտոնի համար, վկայում էր այն մասին, որ նա կանխամտածված ընտրել էր մարդկային այն հատկանիշները, որոնք անհրաժեշտ էին դիվանագիտական այդ գերպատասխանատու առաջադրանքը կատարելու համար:

Կայսրը վաղուց էր հասկացել, որ Վանգենհայմն արևելյան խարդավանքներն ի կատար ածելու կատարյալ մի գործիք կարող է լինել: Վանգենհայմը բազմիցս հրավիրվել էր Կորֆու կղզի՝ իր արձակուրդը Կայսեր հետ անցկացնելու: Եվ, անկասկած, հենց այդ օրերին երկու հարազատ հոգիներ բազում ժամեր էին անցկացրել՝ քննարկելով Գերմանիայի հավակնությունները Մերձավոր Արևելքում:

Երբ առաջին անգամ հանդիպեցի Վանգենհայմին, նա հիսունչորս տարեկան էր, արդեն քառորդ դար դիվանագիտական կորպուսի անդամ էր, ծառայել էր աշխարհի տարբեր քաղաքներում (Պետրոգրադ, Կոպենհագեն, Մադրիդ, Աթենք, Մեխիկո), հավատարմատար էր եղել Կոստանդնուպոլսում ու հիմա՝ մի քանի տարի անց, վերադարձել էր Թուրքիա արդեն որպես դեսպան: Նա քաջատեղյակ էր բոլոր երկրներում, այդ թվում և Միացյալ Նահանգներում տիրող իրադրությանը: Վանգենհայմի առաջին կինը ամերիկուհի էր, և Մեքսիկայում որպես դեսպանորդ ծառայելու ընթացքում նա հանգամանորեն ուսումնասիրել էր մեր երկիրը և հիացած էր մեր եռանդով ու առաջընթացով: Նա ուներ դիվանագետին անհրաժեշտ տեխնիկական ողջ զինանոցը. Վանգենհայմը հավասարապես ազատ խոսում էր գերմաներեն, անգլերեն և ֆրանսերեն, լավ գիտեր Արևելքը և ուներ ծանոթների աներևակայելի լայն շրջանակ: Արտաքինով նա իմ ճանաչած ամենաներկայանալի մարդկանցից էր: Երբ ես Գերմանիայում փոքր տղա էի, Vaterland-ի՝ հայրենիքի խորհրդանիշ էր գեղեցկատես, ամրակազմ կնոջ կերպարը՝ յուրովի հիասքանչ Վալկիրիան: Սակայն ժամանակակից Գերմանիայի մասին խոսելիս աչքիս առջև հայտնվում է Վանգենհայմի հաղթանդամ՝ գրեթե երկու մետր հասակը, ջլապինդ մարմինը, աներևակայելի լայն ուսերը՝ մշտապես պիրկ ու աներեր: Ինքնավստահ, հանդուգն պահվածքը, քննախույզ աչքերը, ֆիզիկական ողջ կերտվածքը, որ մշտապես լի էր կյանքով, եռանդով, մարմ-

նավորում էին ոչ թե այն Գերմանիան, որ ժամանակին ես գիտեի, այլ այն Գերմանիան, որի սահմաններ չճանաչող հավակնություններն ի վերջո աշխարհը վերածեցին դժոխքի: Եվ Վանգենհայմի յուրաքանչյուր խոսք ու գործ ազգերի համար խորհրդանշում էին այս նոր ու սարսափելի նախանշանը: Պանգերմանիզմը լցնում էր նրա ողջ օրը և ուղղորդում բոլոր գործողությունները: Կայսերն աստվածացնելը Վանգենհայմի կրոնական միակ բնազդն էր. գերմանական հասարակության այս ազնվազարմ, միաժամանակ բռնակալ տիպարն իրենով մարմնավորում էր պրուսական համակարգը, ինչը, նրա համոզմամբ, մի երևույթ էր, որ պարտադրաբար պետք է մեծարվեր ու երկրպագվեր: Նրա խորին համոզմամբ նման հիմքերի առկայությամբ ի վերուստ կանխորոշված էր, որ Գերմանիան տիրելու է ողջ աշխարհին: Մեծն կալվածատեր յունկերը նրա աչքին մարդկության պսակն էր: Նրա մտերիմներից մեկն ինձ մի օր ասաց. «Ես կարհամարհեի ինքս ինձ, եթե ծնված լինեի քաղաքում»: Այս համոզման էր նաև Վանգենհայմը: Նա մարդկությունը բաժանում էր երկու դասի՝ կառավարողների ու կառավարվողների և ծաղրում էր այն գաղափարը, թե ստորադասները կարող են երբևէ ներթափանցել վերնախավ: Հիշում եմ, թե նա ինչ եռանդով ու ոգևորությամբ էր նկարագրում գերմանական կալվածքների կաստայական բաժանումը, որը մշակել էր Կայսրը՝ դրանք դարձնելով անօտարելի: Նույնիսկ հասել էր նրան, որ կալվածքների ներկա կամ ապագա սեփականատերերը չէին կարող ամուսնանալ առանց Կայսեր համաձայնության: «Այսպիսով, - հաճույքով կրկնում էր Վանգենհայմը, - մենք անաղարտ ենք պահում մեր կառավարող դասակարգերի մաքուր, անապակ արյունը»: Այդ խավի մյուս ներկայացուցիչների նման Վանգենհայմն էլ պաշտում էր պրուսական ռազմական համակարգը: Նրա հիանալի կեցվածքը վկայում էր, որ նա նույնպես ծառայել է բանակում և գերմանական ոգուն հավատարիմ՝ կյանքի յուրաքանչյուր իրադրություն դիտարկում էր զուտ ռազմական տեսանկյունից: Ահա դրա ուշագրավ ապացույցը. երբ նրան հարցրի, թե ինչու Կայսրը չի այցելում Միացյալ Նահանգներ, Վանգենհայմը պատասխանեց. «Նա շատ կցանկանար, սակայն դա խիստ վտանգավոր կլիներ: Պատերազմը կարող է սկսվել հենց այն պահին, երբ նա ծովում լինի: Թշնամին կարող է գերի վերցնել նրան»: Ես առարկեցի՝ հազիվ թե նման բան պատահի, քանզի ԱՄՆ կառավարությունն իր հյուրին տուն կուղեկցի ռազմանավերով, և ոչ մի երկիր չի գնա Ամերիկան իրեն թշնամացնելու և Գերմանիայի դաշնակիցը դարձնելու ռիսկին, ինչը տեղի կունենա հարձակման պարագայում: Սակայն Վանգենհայմը մնում էր այն կարծիքին, որ ռազմական վտանգը նման այցը դարձնում է անհնարին:

Գերմանիայի դիվանագիտական որևէ այլ ներկայացուցչից ավելի շատ Վանգենհայմից էր կախված Կայսեր՝ աշխարհին տիրելու ցանկության հաջողությունը: Գերմանացի այս դիվանագետը Կոստանդնուպոլիս էր ժամանել մեկ նպատակով. քսան տարի շարունակ գերմանական կառավարությունն իր հարաբերությունները բարելավում էր Օսմանյան կայսրության հետ: Այդ ողջ ժամանակաընթացքում Կայսրը պատրաստվում էր համաշխարհային պատերազմի: Կանխորոշված էր, որ այդ պատերազմում Թուրքիան պետք է խաղար գրեթե բախտորոշ դեր: Եթե Գերմանիային չհաջողվեր դաշնակցել Օսմանյան կայսրության հետ, ապա եվրոպական ընդհանուր բախման մեջ հաջողության հասնելու հավանականությունը քիչ էր: Երբ Ֆրանսիան դաշինք կնքեց Ռուսաստանի հետ, նրա տրամադրության տակ հայտնվեց հարյուր յոթանասուն միլիոն մարդ՝ անհրաժեշտության դեպքում Գերմանիայի դեմ պատերազմելու համար: Ավելի քան քսան տարի Գերմանիան ջանում էր դիվանագիտական ուղիներով խափանել Ռուսաստանի դաշինքը Ֆրանսիայի հետ, սակայն այդպես էլ հաջողության չհասավ: Գոյություն ուներ միայն մեկ միջոց, որը կարող էր արժեզրկել ռուս-ֆրանսիական դաշինքը Թուրքիան Գերմանիայի դաշնակիցը դարձնելը: Այդ դեպքում Գերմանիան կարող էր փակել Դարդանելի նեղուցը, որը փաստորեն հաղորդակցության միակ միջոցն էր Ռուսաստանի և նրա արևմտյան դաշնակիցների միջև: Այդ պարզ գործողությունը ցարական բանակին կզրկեր ռազմամթերքից, կկործաներ Ռուսաստանը տնտեսապես՝ դադարեցնելով հարստության գլխավոր աղբյուրի՝ ցորենի արտահանումը, իսկ համաշխարհային պատերազմի դեպքում Ռուսաստանը կանջատեր իր դաշնակիցներից: Այսպիսով, Վանգենհայմի առաքելությունն էր՝ ապահովել Թուրքիայի անվերապահ դաշինքը Գերմանիայի հետ:

Վանգենհայմը վստահ էր՝ եթե հաջողությամբ կատարի այս առաջադրանքը, կհասնի այն պարգևին, որը տարիներ շարունակ իր գերագույն նպատակն էր՝ դառնալ Կայսրության կանցլերը: Թուրքերի հետ անձնական բարեկամական կապեր հաստատելու ունակությունը նրան մեծ առավելություն էր տալիս մրցակիցների համեմատությամբ: Վանգենհայմն ուներ համոզելու մեծ վարպետություն՝ ուժի, սիրալիրության և դաժանության ճիշտ այն համադրությունը, ինչն անհրաժեշտ էր թուրքի հետ շփվելիս: Ես նշեցի նրա պրուսական հատկանիշները, սակայն Վանգենհայմը պրուսացի էր ոչ թե ծագումով, այլ դաստիարակությամբ: Ծագումով Թյուրինգիայից էր: Բռնի ուժի, հավակնոտության ու պրուսական բոլոր անախորժ հատկանիշների հետ մեկտեղ ուներ նաև ավելի մեղմ հատկանիշներ, որոնք բնորոշ են հարավի գերմանացիներին: Ուներ

հատկապես մեկ հատկություն, որը բացարձակապես պրուսական չէր. այն է տակտի զգացողություն և, որպես կանոն, կարողանում էր իր պակաս հաճելի հատկանիշները խնամքով թաքցնել և ցուցադրել իր դրական կողմերը: Վանգենհայմին հաջողվում էր իշխել ոչ այնքան բռնի ուժով, որքան ուժի ու սիրալիրության միահյուսմամբ: Արտաքուստ ամենևին ագրեսիվ չէր: Նա ավելի հաճախ առաջարկում էր, քան հարկադրում: Հաղթանակի էր հասնում ոչ թե բռունցքների, այլ համոզելու միջոցով: Սակայն մենք՝ նրան մոտիկից ճանաչողներս, հստակ գիտակցում էինք, որ այդ ողջ մեղմության քողի տակ թաքնված է նրա ահավոր դաժան ու անթաքույց հավակնոտությունը: Եվ այդուհանդերձ, վերջում մնում էր ոչ թե նրա դաժանության, այլ ահռելի ուժի և միաժամանակ լավ բնավորության տպավորությունը: Հիրավի, Վանգենհայմի էության մեջ միաձուլված էին անհոգ ուսանողի կենսախնդությունը, պրուսական պաշտոնյայի դաժանությունը և աշխարհիկ մարդու թեթևամտությունը: Այդ ածդահա մարդու պատկերն աչքերիս առջև է. ահա նստած է դաշնամուրի առջև և դասական մի գեղեցիկ մեղեդու տարբերակներ է հորինում, հետո հանկարծ սկսում է նվագել գերմանական խնջույքի երգեր կամ մոդայիկ մեղեդիներ: Տեսնում եմ, թե ինչպես է նա պոլոյի խաղադաշտում ցատկում ձիու վրա, հարկադրում հիասքանչ կենդանուն առավելագույն ջանքեր գործադրել, թեև ձին երբևէ չէր հասնում այն արագությանը, որը կգոհացներ այս հավակնոտ հեծյալին: Հիրավի, իր բոլոր դրսևորումներում՝ ահավոր թե զվարճալի, Վանգենհայմը ցուցադրում էր հետապնդելու նույն անողոք որսորդական ոգին: Բերայում հույն կանանց հետ սիրաբանելիս, թե *Սըրկըլ դ'Օրիան* խաղատանը ժամերով թուղթ խաղալիս կամ հանուն գերմանական շահերի թուրք պաշտոնյաներին իր կամքին ենթարկելիս կյանքը նրա համար մի խաղ էր, որը պետք էր խաղալ որոշ ռիսկով, և որտեղ բախտը ժպտում էր նրան, ով համարձակ էր ու հանդուգն, ով պատրաստ էր մի խաղաքարտի վրա դնելու և՛ հաջողությունը, և՛ տապալումը: Եվ ամենավճռական այս խաղում, երբ, Բեռնարդիի[2] արտահայտությամբ, պետք է վճռվեր՝ «Համաշխարհային տիրապետություն կամ կործանում», Վանգենհայմն անտարբեր խաղացող չէր. այդ խաղը նրա համար սովորական հանձնարարություն չէր, որ պետք էր պարզապես կատարել: Ինչպես ասում են գերմանացիները, այս խաղում նա «հուր ու բոց» էր: Այս մարդը գիտակցում էր, որը ինքը հզոր անհատ է, որ ընտրված է բախտորոշ գործեր անելու համար: Այս պահին Վանգենհայմի մասին գրելիս դեռ զգում եմ այդ անհատականության հզոր ուժի ազդեցությունը, թեև մշտապես գիտակցում եմ, որ Վանգենհայմը նույնքան անողոք, անամոթ և դաժան էր, որքան այն կառավա-

ությունը, որին նա ծառայում էր այդպիսի նվիրումով: Սակայն նա պատրաստ էր ընդունելու իր վարած քաղաքականության բոլոր հետևանքները, որքան էլ անտանելի լինեին: Ունենալով միայն մեկ նպատակ՝ գերմանացիներին հատուկ իրատեսությամբ ու տրամաբանությամբ Վանգենհայմը մի կողմ էր նետում մարդասիրության ու պարկեշտության ամեն տեսակի դրսևորում, որ կարող էր խանգարել իր նպատակի իրականացմանը: Նա միանգամայն ընդունում էր Բիսմարկի[3] հայտնի պնդումը. «Հանուն Կայսեր ու Հայրենիքի գերմանացին պետք է պատրաստ լինի զոհելու ոչ միայն կյանքը, այլև պատիվը»:

Ճիշտ այնպես, ինչպես Վանգենհայմը մարմնավորում էր Գերմանիան, նրա գործընկեր Պալավիչինին՝ Ավստրիան: Վանգենհայմի հիմնական հատկանիշը անողոք եսասիրությունն էր, մինչդեռ Պալավիչինին մեղմ, նրբակիրթ շարժուձևով ազնվայր էր: Վանգենհայմի հայացքը մշտապես ուղղված էր ապագային, Ավստրիայի դեսպանինը՝ անցյալին: Վանգենհայմի մեջ միաձուլվել էին վաճառականի ոգին և նվաճելու միջնադարյան մոլուցքը, որոնք խորհրդանշում էին պրուսական weltpolitik-ը՝ համաշխարհային քաղաքականությունը, մինչդեռ Պալավիչինին Մետերնիխի[4] օրերի հնաոճ դիվանագետ էր: «Գերմանիան ցանկանում է, որ այսպես լինի», - պնդում էր Վանգենհայմը, երբ մի կարևոր հարց էր քննարկվում: «Ես պետք է խորհրդակցեմ Արտաքին գործերի իմ գերատեսչության հետ», - կասեր զգուշավոր Պալավիչինին նման իրավիճակում: Վեր ոլորած մոխրագույն փոքր բեղիկներով, փոքր-ինչ փայտացած, նույնիսկ թեթևակի ցից քայլվածքով այս ավստրիացին նման էր հնաոճ մարկիզի, ով մի ժամանակ բեմահարթակների հերոսներից է եղել: Վանգենհայմին ես կհամեմատեի խոշոր գործարար ընկերության ներկայացուցչի հետ, ով շռայլ է իր ծախսերում և գործում է առանց բծախնդրության, մինչդեռ նրա ավստրիացի պաշտոնակիցը նման էր մի մարդու, ով հպարտ էր անցյալում ունեցած իր նվաճումներով և միանգամայն բավարարված էր դրանով: Այն նույն երջանկությունը, որ Վանգենհայմին պատճառում էին պանգերմանական ծրագրերը, Պալավիչինին գտնում էր դիվանագիտական «տեխնիկայի» բոլոր անհասկանալի մանրուքներում: Ավստրիացին արդեն երկար տարիներ իր երկրի ներկայացուցիչն էր Թուրքիայում և դիվանագիտական կորպուսի ավագն էր, ինչով չափազանց հպարտ էր: Նա մեծագույն հաճույքով էր ընդունում այն պատիվը, որ ընծեռում էր նրան այդ դիրքը. պաշտոնական ճաշկերույթների ժամանակ Պալավիչինին էր որոշում հյուրերի տեղերը՝ համաձայն առաջնայնության կարգի, և չկար էթիկետի որևէ մանրուք, որին նա չտիրապետեր կատարելապես: Սակայն պետական հարցերում նա պարզապես Վան-

գենհայմի գործիքն էր: Թվում էր, թե ի սկզբանե հաշտվել էր այն իրողությանը, որ ինքն այն դիվանագետներից է, ով այսպես թե այնպես հարկադրված է ենթարկվել իրենից ավելի հզոր դաշնակցի կամքին: Իր գերմանացի գործընկերոջ համար Պալավիչինին կատարում էր այն դերը, ինչ Ավստրիայի կայսրը՝ Գերմանիայի կայսեր համար: Պատերազմի առաջին ամիսներին այս երկու անձանց պահվածքը, ինչպես հայելու մեջ, արտացոլում էր իրավիճակը. Վանգենհայմի առանց այն էլ հաղթանդամ, պիրկ մարմինն ավելի խոշորակազմ էր դառնում, իսկ ռուսներից կրած յուրաքանչյուր պարտությունից հետո Պալավիչինին դառնում էր է՛լ ավելի խեղճացած ու փոքրամարմին:

Թվում էր, թե այդ լարված, օրհասական ամիսներին Թուրքիայում տիրող իրավիճակը հատուկ ստեղծված էր՝ Վանգենհայմի տիպի փայլուն անձնավորությանը բոլոր հնարավորություններն ընձեռելու համար: Տասը տարի շարունակ Օսմանյան կայսրությունն աստիճանաբար քայքայվում էր և հիմա գտնվում էր այն աստիճանի ուժասպառ վիճակում, որ հեշտությամբ դարձավ գերմանական դիվանագիտության զոհը: Իրավիճակը պատկերացնելու համար հիշենք, որ այդ օրերին Թուրքիայում կանոնավոր գործող հաստատուն կառավարություն գոյություն չուներ: Երիտթուրքերը կառավարություն չէին՝ ըստ էության. դա անպատասխանատու մարդկանց մի խումբ էր, յուրատեսակ գաղտնի մի կազմակերպություն, որը դավերի, սարսափի և քաղաքական սպանությունների միջոցով իր ձեռքն էր վերցրել պետական պաշտոնների հիմնական մասը: Այսկերպ նկարագրելով երիտթուրքերին՝ ես հավանաբար փշրում եմ որոշակի պատրանքներ: Թուրքիա ժամանելուց առաջ ես երիտթուրքերի կազմակերպության մասին միանգամայն այլ պատկերացում ունեի: Հիշում եմ, թե ինչպես դրանից շատ առաջ՝ դեռևս 1908-ին, Թուրքիային վերաբերող նորություններ կարդալիս հրճվում էր դեմոկրատի իմ հոգին: Այդ զեկույցները հայտնում էին, թե երիտասարդ հեղափոխականների մի խումբ, ցած սլանալով Մակեդոնիայի սարերից, արշավել է դեպի Կոստանդնուպոլիս, գահընկեց արել արյունռուշտ սուլթան Համիդին և հաստատել սահմանադրական կարգեր: Օրաթերթերը հիացումով պատմում էին, թե Թուրքիան դարձել է ժողովրդավարական երկիր, ունի խորհրդարան ու բանիմաց, պատասխանատու կառավարություն, համընդհանուր ընտրական իրավունք, ինչպես նաև օրենքի առջև քաղաքացիների հավասարություն, խոսքի և մամուլի ազատություն, ազատամիտ հասարակությանն անհրաժեշտ բոլոր հատկանիշները: Ինձ հայտնի էր, որ տարիներ շարունակ թուրքերից ոմանք պայքարել էին հանուն այդպիսի բարեփոխումների, և նրանց հավակնությունների իրականացումը կար-

ծես թե հավաստում էր, որ «մարդկության առաջընթաց» հորջորջվող երևույթն այնուամենայնիվ գոյություն ունի, և ջարդերի ու խժդժություն-ների երկարատև խառնաշփոթը Օսմանյան կայսրությունում ըստ ամե-նայնի ավարտվել էր: «Մեծ ոճրագործ» Աբդուլ Համիդը մեկուսացվել էր Սալոնիկում, իսկ նրա բարեսիրտ եղբայր Մուհամեդ Հինգերորդը գահ էր բարձրացել առաջադիմական, ժողովրդավարական ծրագրերով: Այդ-պիսին էր նրա խոստումը: Սակայն 1913 թվականին, երբ հասա Կոս-տանդնուպոլիս, շատ բան էր փոխվել. Ավստրիան անեքսիայի էր ենթար-կել թուրքական երկու գավառ՝ Բոսնիան ու Հերցեգովինան, Իտալիան զավթել էր Տրիպոլին: Թուրքիան կործանարար պատերազմ էր վարում բալկանյան երկրների դեմ, իսկ Եվրոպայում կորցրել էր իր բոլոր տի-րույթները, բացառությամբ Կոստանդնուպոլսի և մի փոքր հարակից տարածքի: Թուրքիայի վերածննդի ծրագրերը, որ ոգեկոչել էր հեղա-փոխությունը, ակնհայտորեն ձախողվել էին, և ես շուտով համոզվեցի, որ այսպես կոչված ժողովրդավարական կառավարման չորս տարիները երկիրը դարձրել էին է՛լ ավելի հետամնաց, ավելի աղքատ և ավելի մաս-նատված, քան երբևէ: Հիրավի, իմ ժամանումից դեռ շատ առաջ Թուր-քիայում ժողովրդավարություն հաստատելու փորձը տապալվել էր: Ժո-ղովրդավարական հաստատությունների կայացման պատմության մեջ դա հավանաբար ջախջախիչ և ամենացավալի տապալումն էր: Հազիվ թե անհրաժեշտ է մանրամասն բացատրել այդ տապալման պատճառ-ները: Սակայն, երիտթուրքերին չափից ավելի խիստ քննադատելու հարկ չկա, քանի որ սկզբում նրանք իրոք անկեղծ էին: 1908-ի հուլիսին Սալոնիկի Ազատության հրապարակում Էնվեր փաշան, ով ժողովրդի կողմից ընկալվում էր որպես դարավոր բռնակալության դեմ ըմբոստու-թյան երիտասարդ, հմայիչ առաջնորդ, իր ելույթում հուզված հայտարա-րեց. «Այսօր բռնակալ կառավարությունն այլևս գոյություն չունի: Մենք ամենքս եղբայրներ ենք: Այսուհետ Թուրքիայում չկան բուլղարներ, հույներ, սերբեր, ռումինացիներ, մահմեդականներ, հրեաներ: Նույն կա-պույտ երկնքի ներքո մենք բոլորս հպարտ ենք «օսմանցի» կոչվելու համար»: Այդ հայտարարությունը ներկայացնում էր երիտթուրքերի պատկերացրած ապագա թուրքական պետության տեսլականը, սակայն դա սոսկ երազանք էր, որի իրականացումն ակնհայտորեն վեր էր նրանց կարողություններից: Այն ժողովուրդները, որ դարեր շարունակ խոշ-տանգվել ու ջարդերի էին ենթարկվել թուրքերի կողմից, անկարող էին մեկ գիշերում դառնալ եղբայրներ. նախանձն ու կրոնական նախապա-շարումները Թուրքիան ջլատել էին պատերազմող ցեղերի: Նոր ժողո-վրդավարության հեղինակությունն ամենից ավելի նսեմացրել էին կոր-

ծանարար պատերազմները, ինչպես նաև Օսմանյան կայսրության կորցրած լայնարձակ տարածքները: Գոյություն ունեին տապալման բազում այլ պատճառներ, սակայն այս պահին հազիվ թե դրանք քննարկելու անհրաժեշտություն կա:

Այսպիսով, երիտթուրքերը՝ որպես դրական փոփոխություններ ազդարարող ուժ, անհետացան, սակայն շարունակում էին գոյատևել որպես քաղաքական մեքենա: Նրանց առաջնորդները՝ Թալեաթը, Էնվերը և Ջեմալը, վաղուց արդեն հրաժարվել էին իրենց երկիրը բարեփոխելու հույսերից, սակայն դեռ ձգտում էին հասնել անձնական իշխանության: Գրեթե քսանմիլիոնանոց երկրի փոխարեն, որը պետք է ծաղկում ապրեր ժողովրդավարական կարգերի շնորհիվ, ունենար ընտրական համընդհանուր համակարգ, հզորացներ երկրի արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը, հիմքեր ստեղծեր համընդհանուր կրթության և առաջադիմության համար, տեսա մի Թուրքիա, որը կազմված էր նույն թվով ձայնազուրկ, տգետ և ողորմելի ստրուկներից, իսկ նրանց ղեկավարում էր հանցավոր օլիգարխների մի փոքրաթիվ խումբ, որի նպատակն էր այդ ժողովրդին առավելագույնս ծառայեցնել իր անձնական շահերին: Եվ դրանք հենց այն նույն անձինք էին, ովքեր մի քանի տարի առաջ Թուրքիան վերածել էին «սահմանադրական երկրի»: Դժվար է պատկերացնել ավելի ապշեցուցիչ անկում վեհ իդեալիզմից մինչև ամենագռեհիկ նյութապաշտություն: Թալեաթը, Էնվերն ու Ջեմալը բացահայտ առաջնորդներ էին թվում, սակայն նրանց թիկունքին գրեթե քառասուն հոգուց բաղկացած Կոմիտեն էր. այն հավաքվում էր գաղտնի, կեղծում էր ընտրությունների արդյունքները, պաշտոնների էր նշանակում հավատարիմ մարդկանց: Կոստանդնուպոլսում Կոմիտեն մի ողջ շենք էր զբաղեցնում և ուներ Գերագույն ղեկավար, ով շուրջօրյա զբաղված էր Կոմիտեի գործերով, հրամաններ էր արձակում ստորադասներին: Այդ մարմինն այնպես էր ղեկավարում կուսակցությունն ու երկիրը, ինչպես, ասենք, ամերիկյան որևէ քաղաքի «տերը» կկառավարեր այն մեր պատմության ամենատխրահռչակ շրջանում: Այսինքն՝ այդ կազմակերպությունն այն էր, ինչը մենք երբեմն անվանում ենք «անտեսանելի կառավարություն»: Նման անպատասխանատու վերահսկողություն երբեմն ի հայտ է գալիս ամերիկյան քաղաքներում հիմնականում այն պատճառով, որ քաղաքացիները զբաղված են սոսկ իրենց մասնավոր գործերով և անտեսում են հասարակության խնդիրները: Սակայն Թուրքիայում ժողովուրդը բացարձակապես տգետ էր ժողովրդավարության իմաստն ընբռնելու համար: Երկրի աղքատությունն ու ընդհանուր անկայունությունը ժողովրդին ըստ էության թողել էին առանց կառավարության՝ դարձնելով հանդուգն ար-

կածախնդիրների ավազակախմբի զոհը: «Միություն և առաջադիմություն» կոմիտեն և դրա հզոր առաջնորդ Թալեաթ բեյը հենց այդպիսի մի ավազակախումբ էին: Կոստանդնուպոլսում գործող քառասուն հոգուց կազմված Կոմիտեից բացի ենթակոմիտեներ էին ստեղծվել կայսրության բոլոր խոշոր քաղաքներում: Այն անձինք, ովքեր Կոմիտեի նշանակմամբ իշխանության գլուխ էին անցել, հրամաններ էին ստանում և կատարում հանձնարարականները: Առանց Կոմիտեի հավանության ոչ ոք չէր կարող բարձր կամ ցածր պաշտոն ստանալ:

Սակայն խոստովանեմ, որ, համեմատելով թուրքական «Միություն և առաջադիմություն» կոմիտեն մեր ամերիկյան կոռումպացված ավազակախմբերի հետ, ես մեծ անարդարություն եմ գործում վերջիններիս հանդեպ: Թալեաթը, Էնվերն ու Ջեմալն իրենց «համակարգը» հավելել էին մի «մանրուքով», որն ամերիկյան քաղաքականության մեջ գրեթե բացակայում էր՝ քաղաքական սպանություններն ու կամայական մահապատիժները: Մյուս խմբերից նրանք իշխանությունը զավթել էին բռնությամբ: Հեղաշրջումն իրականացվել էր 1913 թ. հունվարի 26-ին՝ իմ ժամանելուց գրեթե մեկ տարի առաջ: Այդ շրջանում կառավարությունը ենթարկվում էր Քյամիլ փաշայի և Պատերազմի նախարար Նազըմ փաշայի ղեկավարած քաղաքական խմբին: Նրանք ներկայացնում էին «Լիբերալ կուսակցություն» անվան տակ գործող հայտնի ֆրակցիան, որը հիմնականում աչքի էր ընկնում երիտթուրքերի հանդեպ տածած թշնամանքով: Այդ երկուսն էին նախածեռնել աղետալի Բալկանյան պատերազմը և հունվարին հարկադրված եղան ընդունել եվրոպական տերությունների հրամանը՝ Ադրիանապոլիսը հանձնել Բուլղարիային: Շուրջ վեց ամիս երիտթուրքերը ջանում էին կրկին իշխանության գալու հնարավորություն գտնել: Ադրիանապոլսի միտումնավոր հանձնումը ընձեռեց նրանց այդ հնարավորությունը: Ադրիանապոլիսը Թուրքիայի կարևորագույն քաղաքներից էր, և, բնականաբար, այն հանձնելու որոշումն ընկալվեց որպես հերթական քայլ ազգի կործանման ճանապարհին: Թալեաթն ու Էնվերն իրենց երկու հարյուր հետևորդներով ներկայացել էին Բարձր Դռան նախարարական նիստին: Աղմուկ լսելով՝ Նազըմ բեյը դուրս էր եկել նախասրահ: Աներկյուղ կանգնել էր ամբոխի առջև՝ գլանակը բերանին, ձեռքերը գրպաններում: «Դե՛հ, տղաներ, - հանդարտ արտասանել էր նա, - ի՞նչ աղմուկ է սա: Չե՞ք հասկանում, որ խանգարում եք մեր քննարկումներին»:

Հազիվ էր արտասանել այդ բառերը, երբ անշնչացած ընկել էր մահացու կրակոցից:

Թալեաթի ու Էնվերի առաջնորդությամբ ամբոխը ներխուժել էր խոր-

Ա9949 7

հըրդակցությունների սրահ: Սպառնալով մեծ վեզիր Քյամիլին, թե նրան էլ է սպասում Նազըմի ճակատագիրը, նրանք հարկադրել էին վերջինիս հրաժարական տալ:

Քաղաքական սպանությունն այն միջոցն էր, որով այս ցեղապետերը զավթեցին գերագույն իշխանությունը, և քաղաքական սպանությունը շարունակեց մնալ այն գործիքը, որը նրանք օգտագործում էին իշխանությունն իրենց ձեռքին պահելու համար: Ի հավելումն իր այլ պարտականությունների՝ Ջեմալը դարձավ Կոստանդնուպոլսի զինվորական կառավարիչը և ի պաշտոնե վերահսկում էր ոստիկանությանը: Այդ պաշտոնում նա դրսևորում էր Ֆուշեին[5] վայել տաղանդ և այնքան հաջող էր վարում այդ պաշտոնը, որ որևէ մեկը, ով կամենար դավեր նյութել երիտթուրքերի դեմ, հարկադրված էր տեղափոխվել Փարիզ կամ Աթենք: Իմ ժամանմանը նախորդող մի քանի ամսվա ընթացքում երկրում սարսափ էր տիրում: Երիտթուրքերը տապալեցին Աբդուլ Համիդի վարչակարգը, սակայն որդեգրեցին ընդդիմությանը լռեցնելու սուլթան Համիդի գերադասած մեթոդները: Թուրքիայում հանկարծ պարզ դարձավ, որ մեկ Աբդուլ Համիդի փոխարեն ձեռք են բերել մի քանիսին: Հազարավոր մարդկանց ձերբակալում ու աքսորում էին, իսկ քաղաքական հանցագործներին, այն է՝ կառավարող խմբի ընդդիմադիրներին, կախաղան բարձրացնելը սովորական երևույթ էր դարձել:

Կոմիտեի դերի բարձրացմանը հատկապես նպաստեց սուլթանի անճարակությունը: Հիշենք, որ Մուհամեդ Հինգերորդը ոչ միայն սուլթան էր, այլև խալիֆ, ոչ միայն կառավարում էր երկիրը, այլև մահմեդական հավատքի առաջնորդն էր: Որպես հոգևոր առաջնորդ՝ նա վայելում էր միլիոնավոր նվիրյալ հավատացյալների խորին հարգանքը, և այդ փաստը նման դիրք ունեցող ուժեղ մի անհատի անսահման ազդեցություն կշնորհեր Թուրքիան բռնակալներից ազատագրելու գործում: Կարծում եմ, որ նույնիսկ նրանք, ովքեր ամենաջերմ զգացմունքներ էին տածում սուլթանի հանդեպ, նրան չէին համարում վճռական ու կարող մարդ: Հրաշք էր, որ ճակատագրի փորձությունները Մուհամեդին դեռևս լիովին չէին կործանել: Նա Աբդուլ Համիդի եղբայրն էր, այն մարդու, ում Գլադստոնն[6] անվանեց «խոշորագույն ոճրագործ», այն մարդու, ով կառավարում էր լրտեսության ու արյունահեղության միջոցով, ով նույնիսկ իր հարազատների մասին հոգում էր ոչ ավելի, քան կոտորածի ենթարկված հայերի մասին: Գահ բարձրանալուն պես Աբդուլ Համիդի առաջին քայլերից էր թագաժառանգին պալատում փակելը, նրան լրտեսներով շրջապատելը, միայն հարեմի կանանց ու պալատականներից մի քանիսի հետ շփվել թույլ տալը, մշտական սարսափի մեջ պահելը: Բնականաբար,

Մուհամեդը սահմանափակ կրթություն էր ստացել: Թուրքերենից բացի ոչ մի լեզվի չէր տիրապետում, և դրսի աշխարհի մասին ունեցած նրա գիտելիքների միակ աղբյուրը պատահաբար ձեռքն ընկած թուրքական թերթերն էին: Քանի դեռ թագաժառանգը հանդուրժում էր այդ իրողությունը, նրա վիճակն ինչ-որ չափով տանելի էր և համեմատաբար ապահով: Սակայն նա հստակ գիտակցում էր, որ ըմբոստանալու առաջին իսկ փորձը, նույնիսկ չափազանց մեծ հետաքրքրությունը քաղաքական անցուդարձին իր մահվան պատճառը կդառնա: Որքան էլ ծանր էր այդ փորձությունը, այն չէր ազդել նրա՝ ի վերուստ տրված բարեհոգի ու մեղմ բնավորության վրա: Սուլթանը զուրկ էր այն հատկանիշներից, որոնք կարող էին նրան վերածել «ահավոր թուրքի»: Նա պարզապես մեղմ, հանգիստ բնավորությամբ քաղաքավարի ծերուկ էր: Նրան բոլորն էին համակրում, և ես չեմ կարծում, թե նա չար մտքեր ունենար որևէ մարդու հանդեպ: Սուլթանն անկարող էր կառավարել իր կայսրությունը, քանի որ պատրաստ չէր նման դժվարին առաքելության: Նա որոշակի գոհունակությամբ էր կրում իր տիտղոսը և հպարտ էր այն գիտակցությամբ, որ սերում է Մեծ Օսմանի տոհմից: Սակայն նա ի վիճակի չէր դիմակայելու այն անձանց դավերին, ովքեր պայքարում էին երկրում իշխանության հասնելու համար: Աբդուլ Համիդի փոխարեն Թալեաթի, Էնվերի ու Ջեմալի իշխանության ներքո հայտնվելը սուլթանի անձնական կեցությունն առանձնապես չբարելավեց: «Միություն և առաջադիմություն» կոմիտեն նրա կյանքը տնօրինում էր ճիշտ այնպես, ինչպես ողջ Թուրքիայի ճակատագիրը՝ սպառնալիքներով: Սուլթանն արդեն ճաշակել էր նրանց իշխանության համը, երբ մի առիթով փորձեց հաստատել իր անկախությունը, և այդ միջադեպի արդյունքը ոչ մի կասկած չթողեց, թե ով է երկրի իրական տերը: Տասներեք հոգուց կազմված «դավադիրների» և այլ հանցագործների մի խումբ, մի մասը՝ իրական, մյուսը՝ պարզապես քաղաքական ընդդիմադիրներ, պետք է կախաղան բարձրացվեր: Նրանց թվում էր սուլթանի փեսան: Դատավճիռն ի կատար ածելուց առաջ սուլթանը պետք է ստորագրեր հրամանը: Նա աղերսեց ներում շնորհել իր փեսային, թեև դեմ չէր մյուս տասներկու հոգու մահապատժին: Քսան միլիոն բնակչություն ունեցող երկրի իբր կառավարողը բառացիորեն ծնկի իջավ Թալեաթի առջև, սակայն նրա աղերսանքները ոչ մի ազդեցություն չգործեցին այդ անողոք մարդու վրա: Սա, Թալեաթի կարծիքով, այն պահն էր, որ պետք է մեկընդմիշտ վճռեր, թե ո՞վ է երկրի իրական տերը՝ սուլթա՞նը, թե նրանք: Մի քանի օր անց միապետի փեսայի անկենդան մարմինը ճոճվում էր՝ պարանից կախված՝ ի տես ողջ թուրք ժողովրդի, որպես անժխտելի ապացույց, թե ովքեր են երկրի տե-

ները՝ Թալեաթը և Կոմիտեն: Բռնի ուժի ցուցադրության այդ ողբերգական ավարտից հետո սուլթանն այլևս երբեք չփորձեց միջամտել պետական գործերին: Նրան հայտնի էր, թե ինչ էր կատարվել Աբդուլ Համիդի հետ, և նա սոսկում էր իրեն սպասող է՛լ ավելի դաժան ճակատագրից:

Երբ ես ժամանեցի Կոստանդնուպոլիս, երիտթուրքերը լիովին վերահսկում էին սուլթանին: Սովորաբար նրան անվանում էին *«իրադե մեքենա»*, այսինքն՝ այն, ինչը մենք կանվանենք «կնիք դնող»: Նրա պետական պարտականությունները կրում էին զուտ արարողակարգային բնույթ, ինչպես օրինակ՝ դեսպաններ ընդունելը կամ Թալեաթի ու նրա գործընկերների կողմից ներկայացվող թղթերի վրա ստորագրություն դնելը: Թուրքական համակարգում սա աննախադեպ փոփոխություն էր, քանի որ այդ երկրում դարեր շարունակ սուլթանը բացարձակ տիրակալ էր եղել, ում կամքը միակ օրենքն էր, և ով ինքնիշխանության ողջ զորությունը կենտրոնացրել էր իր անձի վրա: Ոչ միայն սուլթանը, այլև խորհրդարանը դարձել էին Կոմիտեի կամակատարը: Կոմիտեն էր ընտրում խորհրդարանի բոլոր անդամներին, ովքեր այնուհետև քվեարկում էին ըստ Կոմիտեի հրահանգների: Ամենակարևոր պաշտոններում Կոմիտեն արդեն նշանակել էր իր համախոհներին և հետամուտ էր կարևոր մի քանի այլ պաշտոնների, որ տարբեր պատճառներով դեռևս մնում էին ուրիշների ձեռքին:

ԳԼՈՒԽ II

«Բոսսերի համակարգը» Օսմանյան կայսրությունում, և ինչպես այն օգտակար եղավ Գերմանիայի համար

Բռնակալների այս ավազակախմբի առաջնորդը՝ Թալեաթը, հիրավի, օժտված էր արտառոց հատկանիշներով: Թալեաթի կյանքն ու հոգեկերտվածքը բնականաբար հետաքրքրում էին ինձ, քանզի ես վաղուց քաջածանոթ էի իմ երկրի «բոսսերի համակարգին», և Թալեաթը հիշեցնում էր այն դաժան, բայց և ընդունակ քաղաքացիներին, ովքեր անցյալում հաճախ իրենց ձեռքն էին վերցնում տեղական և պետական իշխանությունը: Թալեաթի ծագումն այնքան մշուշապատ էր, որ դրա շուրջ բազում պատմություններ էին պտտվում: Ըստ վարկածներից մեկի՝ նա Բուլղարիայի գնչուներից էր, համաձայն մեկ այլ պատմության՝ պոմակ էր. պոմակ էին կոչում բուլղարական ծագում ունեցող այն անձանց, ում նախնիները դարեր առաջ մահմեդականություն էին ընդունել: Ըստ վերջին վարկածի, որը, ըստ իս, համապատասխանում էր իրականությանը, Օսմանյան կայսրության այս տիրակալը ազգությամբ ամենևին էլ թուրք չէր: Ես անձամբ կարող եմ հավաստել, որ իսլամը նրան բոլորովին չէր հուզում, քանզի իր կուսակցության բազում առաջնորդների նման նա էլ էր արհամարհանք տածում ցանկացած դավանանքի հանդեպ: Մի անգամ նա ասաց ինձ. «Ատում եմ բոլոր քահանաներին, ռաբբիներին ու խոջաներին»: Իսկ, ըստ մահմեդական հավատքի, խոջան նույն կրոնավորն է: Ամերիկյան քաղաքական կյանքում հասարակության ամենաստորին խավերից սերած անհատները հաճախ դառնում են ակնառու գործիչներ: Թալեաթը նույնպես իր գործունեությունը սկսել էր որպես փոստատար, այնուհետև աճել-հասել էր մինչև հեռագրիչի պաշտոնին Ադրիանապոլսում և անկեղծորեն հպարտանում էր իր համեստ ծագումով: Մեկ-երկու անգամ այցելել եմ նրան իր տանը: Թեև Թալեաթը Օսմանյան կայսրության ամենահզոր դեմքն էր, սակայն նրա տունը համեստ, հասարակ մարդու տուն էր: Այն էժանագին կահավորում ուներ և Նյու Յորքի միջին արժողության բնակարան էր հիշեցնում: Նրա հպարտության առարկան հեռագրիչ սարքն էր, որով նա մի ժամանակ իր ապրուստն էր վաստակում: Մի առիթով Թալեաթն ինձ ասաց, որ այդ օրը ստացել է Ներքին գործերի նախարարի իր աշխատավարձը, և պարտքերը վերադարձնելուց հետո մնացել է ընդամենը հարյուր դոլար՝ իր ողջ ունեցածը: Ազատ ժամանակի մի մասը Թալեաթը սիրում էր անցկացնել կոշտ ու կոպիտ անձանց հետ, որոնցից կազմված էր «Միություն և առա-

ջադիմություն» կոմիտեն: Մնացած ազատ պահերին, եթե իր աշխատասենյակում չէր, կուսակցության կենտրոնակայանում էր, որտեղից անձամբ վերահսկում էր կուսակցական մեքենայի գործունեությունը: Հակառակ համեստ ծագմանը՝ Թալեաթն ուներ աշխարհիկ մարդուն հատուկ որոշ հատկանիշներ: Թեև վաղ մանկության տարիներին չէր ստացել դանակ-պատառաքաղի հետ վարվելու դասեր (դա պարզապես հասու չէ երկրի չքավոր խավերին), այնուամենայնիվ, Թալեաթը հաճախում էր դիվանագիտական ընդունելությունների և արժանիորեն ու անկաշկանդ ներկայացնում իր երկիրը: Չնայած իր ստացած թերի կրթությանը՝ նա տիրապետում էր ֆրանսերենին ու բավական լավ էր խոսում և, իմ կարծիքով, դրան հասել էր բնատուր ընդունակությունների շնորհիվ: Թալեաթի արտաքինը նույնպես տպավորիչ էր. ամրակազմ էր, լայն թիկունքն ու ուժեղ մկաններն ընդգծում էին նրա մտավոր ունակությունների հզորությունը և բնավորության վճռականությունը, որոնք էլ նպաստեցին նրա վերելքին: Հարցեր քննարկելիս Թալեաթը սիրում էր հենվել գրասեղանին՝ ուսերը բարձրացրած, գլուխը հետ գցած և դաստակները, որ երկու անգամ խոշոր էին սովորական մեկի դաստակներից, ամուր հենած սեղանին: Ես մշտապես այն տպավորությունն էի ստանում, որ եթե Թալեաթի կամքի ուժը և ըմբոստ ոգին վճռեին դրանք սեղանին դնել, ապա թերևս միայն քլունգով կարելի լիներ նրա դաստակները պոկել սեղանից: Հիմա Թալեաթին հիշելիս ես չեմ մտաբերում ո՛չ նրա զվարթ ծիծաղը, ո՛չ հետաքրքիր պատմություն լսելու նրա անթաքույց հաճույքը, ո՛չ սենյակը լայնաքայլ կտրել-անցնելը և ո՛չ էլ նրա դաժանությունն ու վճռականությունը կամ անգթությունը. մտաբերում եմ միայն նրա դաստակները, որոնք մարմնավորում էին այդ անձնավորության ողջ կյանքն ու հոգեկերտվածքը:

Թալեաթն այլ ուժեղ անհատականությունների նման ունենում էր վատ, նույնիսկ մռայլ տրամադրություն: Մի անգամ ես նրան գտա իր սովորական տեղում նստած՝ լայն ուսերը բարձրացրած, աչքերը՝ շողուն, դաստակներն ամուր հենած սեղանին: Երբ նա նման տրամադրություն էր ունենում, ես արդեն գիտեի, որ ինչ-որ վատ բան է լինելու: Իմ բոլոր խնդրանքներին, գլանակի ծուխ արձակելով, Թալեաթը պատասխանեց. «Ո՛չ, ո՛չ, ո՛չ»: Շրջանցելով սեղանը՝ ես կանգնեցի նրա կողքին.

«Չե՛րդ գերազանցություն, ինձ թվում է, թե այս անհանդուրժողության պատճառը Ձեր դաստակներն են. խնդրում եմ, դրանք հետ քաշեք սեղանից»:

Թալեաթի ահավոր դեմքը սկսեց ծամածռվել: Նա վեր տարածեց ձեռքերը, հետ ընկավ բազկաթոռին ու սկսեց հռհռալ: Նրան այնքա՜ն դուր

եկավ իմ վարվելաձևը, որ բավարարեց իմ բոլոր խնդրանքները:

Մի անգամ, երբ մտա նրա գրասենյակ, այնտեղ էին երկու արաբ արքայազններ: Թալեաթը լուրջ էր, պաշտոնական և մերժեց իմ բոլոր խնդրանքները: «Ո՛չ, ես դա չեմ անի» կամ «Մտքովս էլ չի անցնի դիմել այդ քայլին», - պատասխանում էր նա: Ես հասկացա, որ նա ջանում է տպավորություն գործել իր տիտղոսակիր հյուրերի վրա, ցույց տալ, որ այնքան հզոր անձ է դարձել, որ անվարան կարող է դեսպանի մերժել: Նրան ավելի մոտ կանգնելով՝ ես ցածրաձայն ասացի. «Տեսնում եմ, որ ջանում եք տպավորություն գործել այս արքայազնների վրա: Եթե Ձեզ այդ աստիճանի անհրաժեշտ է ձևեր թափել, այդպես վարվեք Ավստրիայի դեսպանի հետ. նա սպասում է դրսում: Իմ գործը չափազանց կարևոր է նման խաղերի համար»:

Թալեաթը ծիծաղեց: «Վերադարձեք մեկ ժամից», - ասաց նա: Ես վերադարձա. արաբ արքայազններն արդեն հեռացել էին, և առանց որևէ դժվարության գոհացուցիչ պատասխաններ ստացա իմ բոլոր հարցերին:

«Ինչ-որ մեկը պիտի կառավարի Թուրքիան, ինչո՞ւ ոչ մենք, - մի օր հարցրեց ինձ Թալեաթը: Այդ հարցը հասունացել էր: - Ես հիասթափված եմ, որ թուրքերն անկարող եղան գնահատել ժողովրդավարության ինստիտուտները,- կրկնում էր նա: - Ես ժողովրդավարության հետ մեծ հույսեր էի կապում և հսկայական աշխատանք եմ տարել դրան հասնելու համար, սակայն ժողովուրդն առայժմ պատրաստ չէ»: Նա տեսավ մի կառավարություն, որն առաջին իսկ ճարպիկ անձնավորությունը կարող էր իր ձեռքն առնել, և վճռեց լինել հենց այդ մեկը: Թուրքիայի բոլոր քաղաքական գործիչներից, իմ կարծիքով, միայն Թալեաթն էր, որ օժտված էր բնատուր արտակարգ ընդունակություններով: Նա ուներ մեծ ուժ և իշխելու կարողություն, օժտված էր նաև սուր ու հստակ մտքով և այլոց շարժառիթների մեջ թափանցելու գրեթե գերմարդկային ունակությամբ: Բացի այդ, ջերմ խառնվածքի և անսպառ հումորի զգացումի շնորհիվ Թալեաթը նաև հրաշալի կազմակերպիչ էր: Նրա հատու միտքը դրսևորվեց այն գործողություններում, որոնք նա ձեռնարկեց Նազըմի սպանությունից հետո՝ այդ քայքայվող կայսրությունում առաջատարի դիրքը գրավելու համար: Նա չփորձեց անմիջապես զավթել իշխանությունը, այլ գործում էր անշտապ, զգուշորեն ճանապարհ հարթելով: Թալեաթը գիտակցում էր իր դիրքի թուլությունը, գիտեր, որ իր դեմ կելնեն բազում ուժեր, գիտակցում էր իրեն սատարած հեղափոխական կոմիտեի զինակիցների նախանձը: Բացի այդ, պետք է հաշվի նստեր բանակի, օտարերկրյա կառավարությունների, ինչպես նաև մի քանի խմբավորման հետ, որոնք այդ պահին ներկայացնում էին Թուրքիայի հասարակական

կարծիքը: Դրանցից յուրաքանչյուրն ի վիճակի էր ոչնչացնելու նրան թե՛ քաղաքականապես, թե՛ ֆիզիկապես: Թալեաթը գիտակցում էր, որ ընթանում է վտանգավոր ուղով և մշտապես սպասում էր բռնի մահվան: «Վստահ չեմ, որ իմ անկողնում կմեռնեմ», - մի անգամ ասաց ինձ: Դառնալով Ներքին գործերի նախարար՝ Թալեաթը վերահսկում էր ոստիկանությունը և գավառների կառավարումը, ինչն օգտագործեց Կոմիտեի դիրքերն ամրապնդելու համար. փորձեց ապահովել բոլոր ազդեցիկ խմբավորումների աջակցությունը՝ հետևողականորեն շնորհելով կառավարական պաշտոններ դրանց ներկայացուցիչներին: Թեև այդուհետ նա դարձավ այն մարդը, ով պատասխանատու էր հարյուրհազարավոր հայերի կոտորածների համար, սակայն այդ պահին Թալեաթը ձևացնում էր, թե Կոմիտեն սատար է կանգնում կայսրության բոլոր ազգերի միասնությանը: Այդ նույն նպատակով նա նախարարների կաբինետում ընդգրկել էր մեկ քրիստոնյա արաբի, մեկ դյոնմեի (ծագումով հրեա, սակայն հավատքով մահմեդական), մեկ չերքեզի, մեկ հայի և մեկ եգիպտացու: Վերջինիս նա դարձրեց մեծ վեզիր. դա կառավարության բարձրագույն պաշտոնն էր, որը մոտավորապես համապատասխանում էր Գերմանական կայսրության կանցլերի պաշտոնին: Այն անձնավորությունը, ում նա ընտրել էր կայսրության այդ շրջանում ամենակարևոր և պատվավոր պաշտոնի համար, ծագումով շատ էր տարբերվում Թալեաթից: ԱՄՆ-ում բոսսերը քաղաքապետի կամ նույնիսկ նահանգապետի պաշտոնի համար հաճախ ընտրում են կամակատարների հասարակության բարձր խավերից, ովքեր որոշակի պարկեշտություն են հաղորդում նրանց խմբավորմանը, և որոնց միաժամանակ կարելի է վերահսկել: Այդ նույն շարժառիթով էր պայմանավորված նաև Թալեաթի և նրա զինակիցների որոշումը, երբ նրանք Սաիդ Հալիմին բարձրացրին մեծ վեզիրի պաշտոնին: Սաիդ Հալիմը եգիպտացի արքայազն էր՝ Եգիպտոսի խեդիվի եղբորորդին, մեծ հարստության և բարձր կուլտուրայի տեր անձնավորություն: Մայրենի լեզվի նման տիրապետում էր անգլերենին ու ֆրանսերենին, իր ներկայությամբ կզարդարեր աշխարհի ցանկացած հասարակություն: Միաժամանակ անսահման սնափառ և հավակնոտ մարդ էր: Սաիդ Հալիմի ամենանվիրական երազանքը Եգիպտոսի խեդիվի պաշտոնին հասնելն էր, և այս երազանքն էր, որ նրան դրդեց իր քաղաքական ճակատագիրը վստահել մի խումբ արկածախնդիրների, որոնք այդ պահին Թուրքիայում վերելք էին ապրում: Նա այդ արկածախնդիրների համար ամենախոշոր «հանգանակություն» կատարողներից էր և հենց նա էր երիտթուրքերին ֆինանսավորել իրենց գործունեության առաջին իսկ օրերից: Ի հատուցումն՝ նրան շնորհվեց Օսմանյան կայսրության ամենաբարձր

պաշտոնը՝ լուռ պայմանավորվածությամբ, որ նա չի փորձի չարաշահել այդ պաշտոնի իրական իշխանությունը, այլ կբավարարվի սոսկ այն մեծարանքով, որ ընձեռում է այդ բարձր դիրքը:

Տարիներ շարունակ Գերմանիայի պատերազմական նախապատրաստությունները ներառում էին նաև այլ երկրների ներքին իրավիճակի ուսումնասիրությունը: Դա կայսերական ծրագրի անբաժան մասերից էր. օգտվելով առկա խառնաշփոթից՝ առաջ մղել ներթափանցման և զավթման սեփական ծրագրերը: Այն, ինչ գերմանական էմիսարները ձեռնարկեցին Ֆրանսիայում, Իտալիայում և նույնիսկ Միացյալ Նահանգներում, քաջ հայտնի է, իսկ նրանց հաջողությունը Ռուսաստանում հիմնավորապես փոխեց պատերազմի ընթացքը: Ակնհայտ է, որ այն իրավիճակը, որ տիրում էր Թուրքիայում 1913 և 1914 թվականներին, կատարյալ հնարավորություն էր ընձեռում նման մեքենայությունների համար: Միևնույն ժամանակ Գերմանիան Թուրքիայում մի զգալի առավելություն ուներ, ինչը մյուս երկրներում այդ աստիճանի ակնհայտ չէր. Թալեաթին ու նրա զինակիցներին Գերմանիան հարկավոր էր ճիշտ նույնքան, որքան Թալեաթը՝ Գերմանիային: Կայսրություն կառավարելը բացարձակապես նոր գործ էր նրանց համար: Ֆինանսները քամուն էին տրվել, բանակն ու ռազմածովային ուժերը քայքայման եզրին էին: Երկրի ներսում հակառակորդները ջանում էին վնասել նրանց, իսկ մեծ պետությունների աչքին նրանք արկածախնդիրներ էին, որոնց կարիերան երկար չէր տևելու: Հայտնի չէր, թե որքան կգոյատևեր նոր ռեժիմը: Թալեաթն ու Կոմիտեն կարիք ունեին որևէ օտար տերության, որը ոտքի կկանգնեցներ բանակն ու ծովային ուժերը, կֆինանսավորեր երկիրը, կօգներ վերականգնելու արդյունաբերական համակարգը և կպաշտպաներ հարևան երկրների ոտնձգություններից: Պետական այլ համակարգերի վերաբերյալ կատարյալ անգիտությունը հրամայաբար պահանջում էր բանիմաց խորհրդատու, ով կօժանդակեր նրանց՝ խուսանավելու միջազգային ինտրիգների «նեղուցներում»: Որտե՞ղ գտնեին նման պաշտպան: Ակներև էր, որ եվրոպական գերտերություններից միայն մեկը կարող էր ստանձնել այդ դերը: Բայց ո՞րը... Տասը տարի առաջ Թուրքիան բնականաբար կդիմեր Անգլիային: Սակայն հիմա թուրքերն Անգլիան դիտարկում էին սոսկ որպես մի երկիր, որն իրենց զրկել էր Եգիպտոսից և բալկանյան պատերազմներից հետո չկարողացավ Թուրքիան փրկել մասնատումից: Ռուսաստանի հետ Մեծ Բրիտանիան այդ ժամանակ վերահսկում էր Պարսկաստանը, և ինչպես հավատացած էին թուրքերը, դա մեծ վտանգ էր իրենց ասիական տիրույթների համար: Անգլիան աստիճանաբար դուրս էր հանում իր ներդրումները Թուրքիայից: Անգլիական պետական

այրերը համոզված էին, որ թուրքերին Եվրոպայից դուրս քշելու առաջադրանքը գրեթե կատարված է, և Բրիտանիայի մերձավորարևելյան ողջ քաղաքականությունն ուղղված էր Բալկանները պաշտպանելուն՝ համաձայն Բուխարեստի պայմանագրի, որը Թուրքիան հրաժարվել էր ճանաչել որպես կատարման համար պարտադիր և մտադիր էր վիճարկել: Բացի այդ, 1914-ին թուրքերը ճիշտ նույնքան վախենում էին նաև Ռուսաստանից, քանզի Պետրոս Մեծի ժամանակներից սկսած Ռուսաստանը նրանց պատմական թշնամին էր: Այդ երկիրն էր, որ ազատություն տվեց Բուլղարիային, Ռումինիային, որը բոլորից ավելի ակտիվ էր գործում Օսմանյան կայսրությունը մասնատելու հարցում և իրեն համարում էր մի տերություն, որն ի վերջո տիրանալու է Կոստանդնուպոլսին: Իմ համոզմամբ, Ռուսաստանի հանդեպ այդ վախն էր հիմնական պատճառը, որ Թուրքիան նետվեց Գերմանիայի գիրկը: Ավելի քան կես դար Թուրքիան Անգլիային համարում էր իր ամենազորեղ պաշտպանն ընդդեմ ռուսական ագրեսիայի, իսկ հիմա Անգլիան փաստորեն դարձել էր Ռուսաստանի դաշնակիցը: Կարծիք կար, որն ընդունում էին նաև ազգի առաջնորդները, որ Մեծ Բրիտանիան միանգամայն գոհ կլինի, եթե Ռուսաստանը ստանա Կոստանդնուպոլիսն ու Դարդանելը:

Թեև 1914 թվականին Ռուսաստանը նման հավակնություններ չուներ, համենայն դեպս ոչ բացահայտ, սակայն ռուսները ճնշում էին Թուրքիային այլ միջոցներով, ինչը Թալեաթի ու Էնվերի համար անհնար էր դարձնում նրանից աջակցություն հայցելը: Իտալիան վերջերս զավթել էր Տրիպոլին՝ թուրքական վերջին տիրույթն Աֆրիկայում: Տվյալ պահին Իտալիան վերահսկում էր նաև Հռոդոսն ու թուրքական այլ կղզիներ և ագրեսիվ մտադրություններ ուներ Փոքր Ասիայի հանդեպ: Ֆրանսիան Ռուսաստանի ու Մեծ Բրիտանիայի դաշնակիցն էր, միաժամանակ շարունակում էր հզորացնել իր ազդեցությունը Սիրիայում, որտեղ լրջորեն մտադիր էր «հաստատվել» երկաթուղիների, ֆրանսախոս գաղութի և կոնցեսիաների միջոցով: Այս ընթացող դրամայում վճռորոշ դեր էին կատարում նաև անձնական կապերը: Անտանտի դեսպանները չէին թաքցնում իրենց քամահրանքը Թուրքիայի քաղաքական վերնախավի ու նրա կիրառած մեթոդների հանդեպ: Սըր Լուի Մալեթը՝ Բրիտանիայի դեսպանը, արտակարգ լրջախոհ, փայլուն կրթություն ստացած անձնավորություն էր, Ֆրանսիայի դեսպանը՝ Բոնպարը, նույնքան պատվելի ու համակրելի մարդ էր: Այս երկուսն իրենց խառնվածքի բերումով ընդունակ չէին մասնակցելու այն մահաբեր դավերին, որոնք այդ պահին թուրքական քաղաքականության մասն էին կազմում: Ռուսաստանի դեսպան Գիրսը հին վարչակարգի ազնվական, գոռոզ ու հակակրելի դիվա-

նագետ էր: Նա չափազանց խելացի էր, սակայն երիտթուրքերին վերաբերվում էր հեգնանքով, իսկ նրանց երկրի հանդեպ ցուցաբերում էր գրեթե սեփականատիրոջ հետաքրքրություն, և թվում էր, թե պատրաստվում է դաժանորեն մտրակելու այս ողորմելի կառավարությանը: Միանգամայն բացահայտ էր, որ Անտանտի երեք դեսպանները Թալեաթի ու Էնվերի վարչակարգը չէին դիտում որպես տևական երևույթ կամ նույնիսկ լուրջ վերաբերմունքի արժանի մի բան: Նրանց հայտնի էր, որ վերջին տասը տարվա ընթացքում տարբեր խմբեր ու խմբակցություններ ապրեցին և՛ վերելք, և՛ անկում, ու վստահ էին, որ այս նորելուկ ուզուրպատորները՝ բռնատերերը, նույնպես կչքվեն:

Սակայն Թուրքիայում կար մի գործունյա անձնավորություն, ով առանց նախապաշարմունքի կարող էր իր սեփական նպատակին հասնելու համար առավելագույնս օգտագործել նման կերպարներին. Վանգենհայմն էր: Նա պարզորոշ տեսավ այն, ինչ նրա դեսպան գործընկերները դեռևս չէին ընկալել. այս մարդիկ հետևողականորեն ամրացնում են իրենց դիրքերը, նրանք փնտրում են որևէ հզոր երկիր, որը կճանաչի իրենց իշխանությունը և կօգնի պահպանելու այն: Այս իրավիճակը լավ ըմբռնելու համար մտովի տեղափոխվենք մի երկիր, որը մեզ ավելի մոտ է, քան Թուրքիան: 1913 թվականին Վիկտորիանո Ուերտան և նրա համագործակից դավադիրները վերահսկողության տակ առան Մեքսիկան այնպիսի մեթոդներով, որոնք շատ չէին տարբերվում այն մեթոդներից, որոնք Թալեաթին ու նրա Կոմիտեին Թուրքիայում բերեցին բարձրագույն իշխանության: Ճիշտ այնպես, ինչպես Ուերտան սպանեց Մադերոյին, երիտթուրքերը սպանեցին Նազըմին, և երկու երկրում էլ սպանությունները դարձան քաղաքական մեթոդ: Ուերտան վերահսկում էր Մեքսիկայի Կոնգրեսն ու դրա մարմինները ճիշտ այնպես, ինչպես Թալեաթն էր ղեկավարում Թուրքիայի խորհրդարանն ու երկրի ազդեցիկ պաշտոնյաներին: Ուերտայի օրոք Մեքսիկան աղքատության ճիրաններում գտնվող երկիր էր՝ ֆինանսներից զուրկ, քայքայված արդյունաբերությամբ, ճիշտ այնպես, ինչպես Թուրքիան՝ Թալեաթի օրոք: Ինչպե՞ս էր փորձում Ուերտան ամրացնել իր դիրքերը և վերականգնել ավերված երկիրը: Իրականում կար միայն մեկ ուղի՝ ապավինել որևէ հզոր պետության աջակցությանը: Նա բազմիցս փորձեց ստանալ Միացյալ Նահանգների աջակցությունը, սակայն երբ մենք հրաժարվեցինք գործ ունենալ մարդասպանի հետ, Ուերտան հայացքն ուղղեց Գերմանիային: Ենթադրենք, թե Կայսրն արձագանքեր: Այդ դեպքում նա կարող էր շտկել Մեքսիկայի ֆինանսական վիճակը, վերակառուցել երկաթուղին, վերականգնել արդյունաբերությունը, արդիականացնել բանակը՝ այդպիսով երկիրն ավելի

ամուր պահելով իր ձեռքին, փաստորեն վերածելով այն սեփականության:

Միայն մեկ հանգամանք էր խանգարում Գերմանիային իրագործել այդ ծրագիրը՝ Մոնրոյի դոկտրինը: Սակայն Մոնրոյի դոկտրինը Թուրքիայի վրա չէր տարածվում, և այն, ինչ ես նկարագրեցի որպես հնարավորություն Մեքսիկայի համար, ճշգրիտ պատկերն էր այն իրողության, որ տեղի ունեցավ Օսմանյան կայսրությունում: Հիմա, երբ հետադարձ հայացք եմ ձգում, ողջ իրավիճակը դառնում է հասկանալի, հստակ ու անխուսափելի: Այն շրջանում Գերմանիան եվրոպական միակ մեծ տերությունն էր, որը Թուրքիայից խոշոր պատառ չէր պոկել, մի փաստ, որը նրան առավելություն էր տալիս: Գերմանիայի ներկայացուցիչը Կոստանդնուպոլսում ոչ միայն բծախնդրության բացակայության, այլ նաև իր հմտության ու հեռատեսության շնորհիվ շատ ավելի ազատ էր կողմնորոշվում ներկա իրավիճակում, քան այլ երկրների ներկայացուցիչները: Վանգենհայմը միակ խորամիտ գերմանացին չէր այնտեղ: Պանգերմանիզմի առանձնապես ազդեցիկ ջատագովներից էր Պոլ Վայցը, ով արդեն երեսուն տարի ներկայացնում էր «Frankfurter Zeitung»-ը Թուրքիայում: Վայցն արտակարգ գիտեր թուրքերին ու թուրքական իրականությունը: Չկար մի գաղտնարան, ուր նա չկարողանար թափանցել: Նա մշտապես Վանգենհայմի կողքին էր. հուշում, խորհուրդ էր տալիս, տեղեկություններ հաղորդում: Կար նաև Գերմանիայի ռազմածովային կցորդ Հումանը, ով գերմանացի ականավոր հնագետի որդին էր, ծնվել էր Զմյուռնիայում և փաստորեն ողջ կյանքն անցկացրել Թուրքիայում: Նա ոչ միայն խոսում էր թուրքերեն, այլև մտածում էր թուրքի նման, այդ ժողովրդի հոգեբանությունը դարձել էր նաև նրա մտածելակերպը: Ավելին, էնվերը՝ երկու գլխավոր թուրք առաջնորդներից մեկը, բարեկամական հարաբերություններ ուներ Հումանի հետ: Երբ խորհում եմ այդ փորձառու եռյակի՝ Վանգենհայմի, Վայցի, Հումանի և նրանց դիմակայող համակրելի ու պատվելի պարոնայք Մալեթի, Բոնպարի ու Գիրսի մասին, արագ զարգացող դեպքերը թվում են այնքան անխուսափելի, որքան բնության օրինաչափ երևույթները: 1914-ի գարնանը Թալեաթն ու էնվերը, ովքեր ներկայացնում էին «Միություն և առաջադիմություն» կոմիտեն, փաստորեն կառավարում էին Օսմանյան կայսրությունը: Վանգենհայմը, մտքի մեջ մշտապես պահելով մոտալուտ պատերազմը, ուներ մեկ հստակ նպատակ՝ վերահսկել Թալեաթին ու էնվերին:

1914-ի հունվարի առաջին օրերին էնվերը դարձավ Պատերազմի նախարար: Այդ ժամանակ նա երեսուներկու տարեկան էր: Ժամանակի թուրք երևելի բոլոր գործիչների նման նա նույնպես համեստ ծագում

ուներ, իսկ նրա «Հեղափոխության հերոս» մականունը բացատրում էր, թե ինչու Թալեաթն ու Կոմիտեն նրան նշանակեցին Պատերազմի նախարար: Էնվերը ռազմական որոշակի հեղինակություն էր, թեև, որքանով ինձ հաջողվեց պարզել, ռազմական նշանակալի հաջողություն երբևիցե չէր ունեցել. 1908 թվականի հեղափոխությունը, որի առաջնորդներից էր Էնվերը, մարդկային փոքրաթիվ զոհեր էր տվել: 1919 թվականին Տրիպոլիում նա իտալացիների դեմ կռվող բանակի հրամանատարն էր, սակայն այդ ռազմարշավն էլ ամենևին նապոլեոնական չէր: Մի անգամ Էնվերն ինքն ինձ պատմեց, թե ինչպես Բալկանյան երկրորդ պատերազմի ժամանակ իր բանակով ողջ գիշեր արշավել է՝ Ադրիանապոլիսը զավթելու, սակայն երբ տեղ է հասել, բուլղարացիներն արդեն լքել էին քաղաքը, և նրա հաղթանակն անարյուն էր եղել: Այսուհանդերձ, Էնվերը, անկասկած, ուներ մի հատկանիշ, որը հաջողության գրավական էր Թուրքիայի նման խառնաշփոթ երկրում՝ հանդգնություն: Նա որոշումներն ընդունում էր արագ, որևէ գործարքի հաջողության համար պատրաստ էր իր ապագան, նույնիսկ կյանքը դնելու խաղաքարտի վրա: Հենց սկզբից նրա կարիերան իրար հաջորդող բարենպաստ ճգնաժամերի շղթա էր եղել: Բնավորությամբ անգութ էր, լի սառնասիրտ վճռականությամբ. դա ոչ ոք չէր կռահի՝ նայելով նրա նուրբ դիմագծերով գեղեցիկ դեմքին, փոքրամարմին, բայց և ամուր կազմվածքին, համակրելի շարժուձևին: Նրան չճանաչողը չէր կասկածի նաև, որ Էնվերին առաջ է մղում անձնական կրքոտ հավակնոտությունը: Ընկերները նրան հաճախ «Նապոլեոնիկ» էին կոչում. այդ մականունը, իրոք, արտահայտում էր նրա ներքին ինքնավստահությունը: Հիշում եմ, մի օր Էնվերի հետ նստած էինք նրա տանը: Մի կողմում կախված էր Նապոլեոնի նկարը, մյուսում՝ Ֆրեդերիկ Մեծի դիմանկարը, իսկ նրանց մեջտեղում Էնվերն էր: Սա նրա սնափառության մասին որոշակի պատկերացում է տալիս: Այս երկու մեծ պետական գործիչ զորավարները նրա կուռքերն էին, և վստահ եմ, որ Էնվերը մտածում էր, թե ճակատագիրն իր համար էլ է նախատեսել նման կարիերա: Այն փաստը, որ նա քսանվեց տարեկանում մասնակցել էր այն հեղափոխությանը, որը տապալեց Աբդուլ Համիդին, բնականաբար դրդում էր նրան համեմատվել Բոնապարտի հետ: Էնվերը քանիցս ինձ ասել էր, թե վստահ է, որ ինքը «ճակատագրի մարդ է»: Նույնիսկ հավատում էր, որ նախախնամության կողմից հատկապես ի՛նքն է ընտրված Թուրքիայի փառքը վերականգնելու և նշանավոր բռնապետ դառնալու համար:

Միաժամանակ, ինչպես նշեցի, Էնվերի արտաքինի մեջ ինչ-որ նուրբ, կանացի բան կար: Նման տեսակը մենք Ամերիկայում կոչում ենք «սրտե-

րի դահիճ», իսկ կանայք այն նկարագրելիս հաճախ օգտագործում են «անդիմադրելի» բառը: Նրա դեմքին որևէ կնճիռ կամ անհարթություն չկար, այն երբեք չէր մատնում նրա զգացմունքներն ու մտքերը. միշտ հանգիստ էր, զուսպ, անվրդով: Այն փաստը, որ Էնվերը, անկասկած, զուրկ էր Նապոլեոնի խորաթափանցությունից, ապացուցում էր այն ուղին, որով նա մտադիր էր հասնել գերագույն իշխանության: Ի սկզբանե նա իր անձնական ճակատագիրը կապել էր Գերմանիայի հետ: Տարիներ շարունակ համակրանք էր տածում Կայսեր հանդեպ: Գերմանիան, գերմանական բանակն ու ռազմածովային ուժերը, գերմաներենը և գերմանական ավտորիտար համակարգն անհաղթահարելի հմայք ունեին թուրքական ժողովրդավարության այս երիտասարդ գործչի համար: Աբդուլ Համիդի անկումից հետո Էնվերը ռազմական առաքելությամբ մեկնեց Բեռլին: Այնտեղ Կայսրը հանձին նրա անմիջապես տեսավ Արևելքի հետ կապված իր երազանքներն իրականացնելու հնարավոր գործիք ու սկսեց տարբեր ձևերով «մշակել» նրան: Այնուհետև Էնվերը երկար ժամանակ մնաց Բեռլինում որպես ռազմական կցորդ, ինչի արդյունքում նրա մտերմությունն այդ երկրի հետ էլ ավելի սերտացավ:

Կոստանդնուպոլիս վերադարձած Էնվերն ավելի շուտ գերմանացի էր, քան թուրք. ազատ տիրապետում էր գերմաներենին, իսկ բեղերի ծայրերը թեթևակի վեր էր ոլորում: Այս մարդը, հիրավի, հիացած էր պրուսականությամբ: Հենց որ նա դարձավ Պատերազմի նախարար, Վանգենհայմը սկսեց հաճոյախոսել, գովաբանել երիտասարդին՝ խրախուսելով նրա հավակնությունները և ըստ ամենայնի խոստանալով Գերմանիայի անվերապահ աջակցությունը դրանք իրականացնելու գործում: Մասնավոր զրույցներում Էնվերը չէր էլ թաքցնում իր հիացմունքը Գերմանիայի հանդեպ:

Այսպիսով, Էնվերի նշանակումը Պատերազմի նախարարի պաշտոնում, ըստ էության, Գերմանիայի հաղթանակն էր: Նա անմիջապես ձեռնամուխ եղավ արմատական փոփոխություններ իրականացնելուն: Անձամբ ինձ Էնվերն ասաց, որ այդ պաշտոնը համաձայնել է ստանձնել այն պայմանով, որ գործի կատարելապես ազատ: Այդպես էլ անում էր: Բանակում դեռևս կային մեծ թվով սպաներ, ովքեր սպանված Նազըմի կուսակիցներն էին և հին կարգերին ավելի կողմնակից էին, քան երիտթուրքերի ռեժիմին: Էնվերն անհապաղ հեռացրեց նրանցից 268-ին, փոխարենը նշանակեց այն թուրքերին, ովքեր հայտնի էին որպես «Միություն և առաջադիմություն» կուսակցության նվիրյալներ, նաև մեծ թվով գերմանացիների: Էնվեր-Թալեաթ զույգը վախենում էր հեղափոխությունից, ինչն ասպարեզից կհաներ նրանց, ինչպես իրենք հեռացրին

նախորդներին: Նրանք ինձ բազմիցս ասել էին, որ իրենց՝ որպես հեղափոխականների տարած հաղթանակը պարզ դարձրեց, թե ինչպիսի դյուրությամբ մի քանի քաջարի անձինք ի վիճակի են վերահսկողության տակ առնելու երկիրը: Ասում էին նաև, որ իրենք թույլ չեն տա, որ բանակում նման մի խմբավորում հեղաշրջում կատարի իրենց դեմ: Էնվերի գործողությունների հանդգնությունը մտահոգել էր նույնիսկ Թալեաթին, սակայն Էնվերը դրսևորեց հաստատակամություն և հրաժարվեց վերանայել իր գործողությունները, թեև հեռացված սպաներից մեկը Շուքրի փաշան էր, ով Բալկանյան պատերազմի ժամանակ մասնակցել էր Ադրիանապոլսի պաշտպանությանը: Բացի այդ, Էնվերը շրջաբերական տարածեց՝ փաստորեն տեղեկացնելով թուրք հրամանատարներին, որ նրանց պաշտոնեական առաջխաղացումը կախված է միայն իր անձից, և որ նրանք առաջ չեն գնա, եթե փորձեն քաղաքականություն խաղալ՝ հարելով այլ՝ երիտթուրքերից տարբեր խմբերի:

Էնվերի առաջին գործողությունները թուրքական բանակի պրուսականացման սկիզբը եղան, սակայն Թալեաթն իր ընկերոջ նման գերմանամոլ չէր: Նա ոչ մի մտադրություն չուներ Գերմանիայի խաղը տանել, այլ աշխատում էր հիմնականում Կոմիտեի և իր համար, սակայն անկարող էր հաջողության հասնել առանց բանակը վերահսկելու: Այդ էր պատճառը, որ նա Էնվերին՝ երկար տարիների իր կուսակցական մտերիմ ընկերոջը, դարձրեց Պատերազմի նախարար: Նրան հզոր բանակ էր պետք, և նա իր խելացի հայացքն ուղղեց այնտեղ, որտեղից կարող էր աջակցություն ստանալ՝ դեպի Գերմանիա: 1913թ. երկրորդ կեսին Վանգենհայմն ու Թալեաթը հասան այն բանին, որ Կայսրը համաձայնեց ռազմական առաքելություն ուղարկել՝ թուրքական զինված ուժերը վերակազմավորելու համար: Թալեաթն ինձ ասաց, որ, հրավիրելով այդ առաքելությունը, նա օգտագործում է Գերմանիային, թեև գերմանացիներին թվում է, թե իրենք են օգտագործում նրան: Նա քաջ գիտակցում էր, որ այս քայլը որոշակի վտանգ է պարունակում: Նրա տեղակալներից մեկը, ով այդ քայլը քննարկել էր Թալեաթի հետ, 1914թ. հունվարին ինձ ներկայացրեց մի զրույցի գրառում, որից պարզ էր դառնում, թե ինչ էր մտածում Թալեաթը. «Ինչու՞ եք երկրի կառավարումը հանձնել գերմանացիներին, - հարցնում է Թալեաթի տեղակալը՝ նկատի ունենալով գերմանական ռազմական առաքելությունը: - Չե՞ք տեսնում, որ դա Թուրքիան Գերմանիայի գաղութը դարձնելու ծրագրի մի մասն է, և որ մենք պարզապես կնմանվենք Եգիպտոսին»: «Շատ լավ ենք գիտակցում, - պատասխանում է Թալեաթը, - որ դա է Գերմանիայի նպատակը: Պարզ գիտակցում ենք նաև, որ անկարող ենք այս երկիրը ոտքի կանգնեցնել

սեփական ուժերով: Ուստի մենք կօգտվենք այն նյութական և տեխնիկական օժանդակությունից, որ կտրամադրեն գերմանացիները: Մենք Գերմանիան կօգտագործենք մեր երկիրը վերականգնելու ու պաշտպանելու համար այնքան ժամանակ, մինչև ինքներս մեր ուժերով կկարողանանք կառավարել մեզ: Երբ այդ օրը գա, մենք քսանչորս ժամում հրաժեշտ կտանք գերմանացիներին ու բարի ճանապարհ կմաղթենք»:

Թուրքական բանակը, անշուշտ, օգնության կարիք ուներ: Մինչև գերմանացիների ժամանելը բանակի վիճակը, ըստ իս, ողջ կայսրության վիճակի ճշգրիտ արտացոլումն էր: Երբ ես պատրաստվում էի իմ առաջին ընդունելությանը, թուրք պաշտոնյաների մի մեծ խումբ թույլտվություն խնդրեց ժամանելու երեկոյան հանդերձով, քանզի չունեին ո՛չ համազգեստ, ո՛չ էլ դրամ՝ այն գնելու կամ վարձով վերցնելու համար. նրանք երեքուկես ամիս աշխատավարձ չէին ստացել: Սակայն նման ընդունելությունների արարողակարգը հաստատում էր մեծ վեզիրը, իսկ նա պնդում էր, որ նրանք ներկայանան համազգեստով, ուստի այդ պաշտոնյաներից շատերը պարզապես չեկան:

Մոտավորապես այդ նույն օրերին գերմանական առաքելությունն առաջարկեց Երկրորդ բանակի հրամանատարին սկսել զորավարժությունները, սակայն հրամանատարը հրաժարվեց՝ պատասխանելով, որ զինվորները կոշիկ չունեն:

Թեև ավելի ուշ բացահայտվեց Թալեաթի սանձարձակ ու չարամիտ էությունը, սակայն ես մնում եմ այն կարծիքին, որ առնվազն այն ժամանակ նա դեռևս Գերմանիայի պատրաստակամ դրածոն չէր: Մի դրվագ, որի անմիջական մասնակիցներից մեկը ես էի, հաստատում է այդ կարծիքը: Գերտերությունների ու Թուրքիայի հարաբերությունները նկարագրելիս ես ոչինչ չասացի Միացյալ Նահանգների մասին: Այն ժամանակ մենք իրականում գործնական լուրջ հարաբերություններ չունեինք: Թուրքերը Նահանգներն ընկալում էին որպես իդեալիստների և ալտրուիստների երկիր, և այն փաստը, որ մենք, ելնելով զուտ մարդասիրական նկատառումներից, միլիոնների հասնող ծախսեր էինք անում նրանց երկրում՝ բարձրակարգ ուսումնական հաստատություններ բացելու համար, հարուցում էր նրանց զարմանքը, իսկ գուցե նաև հիացմունքը: Նրանք բարեհաճ էին ամերիկացիների հանդեպ և մեզ համարում էին օտար պետություններից միակ անշահախնդիր բարեկամը: Սակայն մեր շահերը Թուրքիայում նշանակալի չէին. Standard Oil Company-ն այնտեղ բարգավաճ բիզնես ուներ, «Singer» ընկերությունը կարի մեքենաներ էր վաճառում հայերին ու հույներին: Մենք մեծ քանակությամբ թուրքական ծխախոտ էինք գնում, նաև արմավ, գորգեր և հավաքում էինք թուրքական մարուխի

արմատ: Գումարեք միսիոներներին ու կրթության մասնագետներին. ահա և մեր բոլոր կապերը Օսմանյան կայսրության հետ: Թուրքերը գիտեին, որ մենք չենք կամենում մասնատել իրենց երկիրը կամ միջամտել բալկանյան քաղաքականությանը: Հավանաբար, իմ երկրի անտարբերության փաստն էր պատճառը, որ Թալեաթն ինձ հետ այդքան անկաշկանդ քննարկում էր Թուրքիայի ներքին գործերը: Այդ քննարկումների ընթացքում ես հաճախ արտահայտել եմ իմ պատրաստակամությունը նրանց օգտակար լինելու, և Թալեաթը, ինչպես նաև Կաբինետի մյուս անդամները հաճախ խորհրդակցում էին ինձ հետ գործնական հարցերի շուրջ: Իմ ժամանումից քիչ անց ես ելույթով հանդես եկա Կոստանդնուպոլսի Ամերիկյան առևտրական պալատում: Ներկա էին Թալեաթը, Ջեմալը և պատասխանատու այլ անձինք: Ես խոսեցի Թուրքիայի տնտեսական հետամնացության մասին, սակայն կոչ արեցի նրանց չհուսահատվել: Այնուհետև նկարագրեցի Միացյալ Նահանգների տնտեսության վիճակը քաղաքացիական պատերազմից հետո և նշեցի, որ իրավիճակը մեր երկրի հարավային քայքայված նահանգներում հիշեցնում է Թուրքիայի ներկայիս տնտեսական վիճակը: Այնուհետև պատմեցի, թե մենք ինչպես գործի անցանք՝ օգտագործելով մեր պաշարները և ստեղծեցինք այսօրվա բարգավաճ երկիրը: Իմ ելույթը, կարծում եմ, մեծ տպավորություն գործեց, հատկապես՝ այն մասը, որտեղ ես նշեցի, որ քաղաքացիական պատերազմից հետո ԱՄՆ-ը խոշոր վարկեր էր վերցնում արտասահմանյան ֆինանսական շուկաներում և խրախուսում էր ներգաղթն աշխարհի բոլոր անկյուններից:

Այս ելույթը նոր գաղափար տվեց Թալեաթին. ուրեմն հնարավոր է, որ Միացյալ Նահանգները տրամադրեր նրան այն նյութական օժանդակությունը, որը նա փորձում էր ստանալ Եվրոպայից: Ես արդեն առաջարկել էի, որ ֆինանսների գծով ամերիկացի մասնագետ ուղարկվի՝ ուսումնասիրելու Թուրքիայի ֆինանսական վիճակը, և այդ կապակցությամբ նշել էի նյույորքցի պարոն Հենրի Բրուերին: Թուրքերը հաճությամբ ընդունեցին այդ առաջարկը: Այդ օրերին Թուրքիան ֆինանսների խիստ կարիք ուներ: Ֆրանսիան տարիներ շարունակ ֆինանսավորել էր Թուրքիային, և 1914-ի գարնանը ֆրանսիական դրամատները բանակցում էին մեկ այլ խոշոր վարկի պայմանների շուրջ: Թեև ժամանակին Գերմանիան Թուրքիային տրամադրել էր վարկեր, սակայն, Բեռլինի ֆինանսական շուկայի ներկա վիճակից ելնելով, թուրքերն այդ աղբյուրից զգալի աջակցություն չէին ակնկալում:

1913թ. դեկտեմբերի վերջին Բուստանի էֆենդին՝ Թուրքիայի առևտրի ու գյուղատնտեսության նախարարը, որ քրիստոնյա արաբ էր, ազատ

տիրապետում էր անգլերենին և 1893 թվականին եղել էր Թուրքիայի ներկայացուցիչը Չիկագոյի համաշխարհային ցուցահանդեսում, այցելեց ինձ ու բարձրացրեց Թուրքիային ամերիկյան վարկ տրամադրելու հնարավորության հարցը: Բուստանիին հետաքրքրում էր, թե կգտնվե՞ն արդյոք ամերիկացի ֆինանսիստներ, ովքեր հանձն կառնեն Թուրքիայի ֆինանսական ողջ համակարգի վերակազմավորումը: Նրա խնդրանքը, իրոք, հուսահատ ճիչ էր և խորապես ցնցեց ինձ: Ինչպես այն օրերին նշել էի օրագրումս, նրանք փորձում են դրամ հայթայթել, որտեղից հնարավոր է: Սակայն այդ ժամանակ ես ընդամենը վեց շաբաթ էի Թուրքիայում և, անշուշտ, բավականաչափ տվյալներ չունեի՝ ամերիկյան բանկերին նման խոշոր գործարք առաջարկելու համար: Բուստանիին խոստովանեցի, որ իմ կարծիքն Ամերիկայում մեծ ազդեցություն չի գործի, քանզի հիմնված չէ Թուրքիայի տնտեսական վիճակի կատարյալ իմացության վրա:

Մի քանի օր անց ինձ այցելեց Թալեաթն ու առաջարկեց զբոսաշրջության մեկնել կայսրության ողջ տարածքով՝ իրավիճակն ուսումնասիրելու համար: Հարցրեց, թե կարող եմ արդյոք մինչ այդ ապահովել ոչ շատ մեծ ժամանակավոր վարկ՝ իրենց առժամանակ կործանումից փրկելու համար: Ասաց, որ Թուրքիայի գանձարանում փող չկա, և եթե ինձ հաջողվի հինգ միլիոն ամերիկյան դոլար հայթայթել, դա նրանց կբավարարի: Ես Թալեաթին ասացի, որ կփորձեմ նրանց համար գտնել այդ գումարը և որ ընդունում եմ նրա՝ կայսրության տարածքում ճամփորդելու առաջարկը՝ միաժամանակ մտմտալով ամերիկյան ներդրողներին գրավելու հնարավորությունները: Պետքարտուղարության համաձայնությունը ստանալուց հետո ես նամակ գրեցի իմ զարմիկ ու գործընկեր պարոն Ռոբերտ Սայմոնին՝ խնդրելով Նյու Յորքի հաստատություններին ու բանկերին համոզել ոչ մեծ, կարճաժամկետ և ապահովագրված վարկ տրամադրել Թուրքիային: Պարոն Սայմոնի հարցուփորձի արդյունքում շուտով պարզվեց, որ թուրքերին տրամադրվող վարկը Նյու Յորքում որպես գրավիչ բիզնես չի ընկալվում: Սակայն Ռոբերտ Սայմոնը գրում էր նաև, որ պարոն Ս. Բիլլինգսն աշխույժ հետաքրքրություն է ցուցաբերում այդ հարցում, և եթե ես դեմ չեմ, ապա Բիլլինգսն իր զբոսանավով կժամանի Թուրքիա՝ այդ խնդիրը պետական այրերի ու ինձ հետ քննարկելու համար: Մի քանի օր անց պարոն Բիլլինգսն ուղևորվեց Կոստանդնուպոլիս:

Պարոն Բիլլինգսի ժամանման լուրն արագ տարածվեց Թուրքիայի մայրաքաղաքում: Այն փաստը, որ նա ժամանում էր սեփական նավով, բազմապատկում էր իրադարձության կարևորությունն ու հմայքը: Եվ այն

փաստը, որ ամերիկացի միլիոնատերը պատրաստ է սատար կանգնելու Թուրքիայի սնանկացած գանձարանին, և որ այդ աջակցությունը միայն առաջին քայլն է ամերիկյան կապիտալիստների կողմից թուրքական ողջ ֆինանսական համակարգի վերակենդանացման գործում, աներևակայելի իրարանցում առաջացրեց օտարերկրյա դեսպանություններում: Լուրը տարածվեց այնպիսի արագությամբ, որ ես կասկածում եմ, թե թուրքական կառավարությունը որևէ ջանք էր գործադրել այն գաղտնիք պահելու համար: Իմ այդ կասկածը հաստատեց գլխավոր ռաբբի Նահումի այցելությունը: Նա ինձ տեղեկացրեց, որ եկել է Թալեաթի խնդրանքով:

- Լուրեր են պտտվում, թե ամերիկացիները մտադիր են վարկ տրամադրել Թուրքիային, - ասաց գլխավոր ռաբբին, - Թալեաթը չափազանց գոհ կլիներ, եթե Դուք չհերքեիք այդ լուրերը:

Վանգենհայմը դրսևորեց գրեթե հիստերիկ հետաքրքրություն: Թուրքերին ֆինանսական օգնության հասնող Ամերիկայի գաղափարը բացարձակապես չէր տեղավորվում նրա ծրագրերում, քանի որ, նրա համոզմամբ, Թուրքիայի սնանկությունն առանձնապես արժեքավոր էր որպես միջոց Օսմանյան կայսրությունը Գերմանիայի գիրկը նետելու համար:

Մի անգամ ես Վանգենհայմին ցույց տվեցի մի գիրք, որտեղ պատկերված էին պարոն Բիլլինգսի տները, գեղանկարչական գործերի հավաքածուն, արշավածիների նկարները: Դա նրան շատ հետաքրքրեց, և ոչ միայն ձիերը (Վանգենհայմն ինքը հմուտ հեծյալ էր), այլև հսկայական հարստության վկայությունը: Հաջորդ մի քանի օրվա ընթացքում տարբեր երկրների դեսպաններ ու հավատարմատարներ էին գալիս իմ աշխատասենյակ՝ խնդրանքով, որ ցույց տամ այդ գիրքը:

Երբ պարոն Բիլլինգսի ժամանման օրը մոտեցավ, Թալեաթը սկսեց նրան զվարճացնելու ճոխ ծրագրեր մշակել: Ինձ հետ խորհրդակցում էր նախատեսվող ճաշկերույթների, կեսօրվա նախաճաշերի, ընդունելություններին հրավիրվածների ցուցակների մասին: Ինչպես միշտ, Վանգենհայմը բոլորից առաջ ընկավ: Նա չէր կարող մասնակցել ծրագրված ճաշկերույթին և խնդրեց իրեն հրավիրել կեսօրվա նախաճաշին: Եվ այսպես նա պարոն Բիլլինգսին հանդիպեց մյուս դիվանագետներից մի քանի ժամ շուտ: Պարոն Բիլլինգսը նրան անկեղծորեն ասաց, որ հետաքրքրված է Թուրքիայով և չի բացառում, որ վարկ կտրամադրի:

Երեկոյան պարոն Բիլլինգսի պատվին ճաշկերույթ տրվեց: Ներկա էին թուրքական կառավարության բոլոր երևելի դեմքերը: Ճաշից առաջ Թալեաթը, Բիլլինգսը և ես երկար զրուցեցինք վարկի մասին: Թալեաթը տեղեկացրեց, որ հենց այդ նույն օրը ֆրանսիական բանկերի տերերն

ընդունել են թուրքերի պայմանները, և որ տվյալ պահին իրենք ամերիկյան դրամի կարիքը չունեն: Նա չափազանց սիրալիր էր Բիլլինգսի հետ. բազմիցս հայտնեց իր երախտագիտությունն ու բարձր գնահատանքը: Իրոք, պետք էր երախտապարտ լինել, քանզի պարոն Բիլլինգսի ժամանումը Թուրքիային հնարավորություն տվեց ի վերջո ավարտին հասցնել բանակցությունները ֆրանսիացի բանկիրների հետ: Նրա երախտագիտությունը մի զվարճալի դրսևորում ունեցավ. Էնվերը՝ կառավարության երկրորդ դեմքը, տոնում էր իր հարսանյաց հանդեսը, երբ ժամանեց պարոն Բիլլինգսը: Այն աճող դերը, որ ուներ Էնվերը Թուրքիայի կյանքում, ապացուցում էր այն փաստը, որ թեև Էնվերը, ինչպես արդեն նշել եմ, համեստ ծագում ուներ, սակայն նրա հարսնացուն թուրքական թագավորական տոհմից էր:

Թուրքական հարսանիքը երկարատև արարողություն է, կարող է տևել երկու-երեք օր: Դեսպանական ընդունելության հաջորդ օրը՝ կեսօրին, Թալեաթը Բիլլինգսի պատվին նախաճաշ տվեց *Սրրկը դ'Օրիանում* և պնդեց, որ Էնվերը լքի իր հարսանյաց ծիսակատարությունը՝ նախաճաշին ներկա լինելու համար: Էնվերը ներկայացավ նախաճաշին, լսեց բոլոր ելույթները, ապա միայն վերադարձավ իր հարսանյաց հանդեսին:

Վստահ եմ, որ Թալեաթը Բիլլինգսի հետ կապված այս միջադեպն ավարտված չէր համարում: Երբ մտովի հետադարձ հայացք եմ գցում, պարզ է դառնում, որ նա փորձում էր փրկել իր երկիրը և մշտապես մտքում էր պահում այն հնարավորությունը, որ Ամերիկան կարող էր աջակցել այդ գործում: Նա ինձ հետ հաճախ էր խոսում պարոն «Բիլլինգսի» մասին, ինչպես նա էր արտասանում այդ անունը: Երբ Թուրքիան կապերը խզեց Ֆրանսիայի ու Անգլիայի հետ և ֆինանսական կախվածություն ուներ Գերմանիայից, նա մտորում էր Բիլլինգսի այցի շուրջ: Թերևս մեր երկրի մասին նա խորհում էր որպես ֆինանսական մի հանգրվանի, որին կարելի է ապավինել, երբ իրականանա գերմանացիներից ազատվելու իր ծրագիրը: Ես վստահ եմ, որ պատերազմի օրերին ամերիկյան օժանդակության հնարավորությունը նրան դրդել էր կատարել քայլեր, որոնք այլ պարագայում նա չէր ձեռնարկի: «Ողջույններս պարոն Բիիլլինգսին». սրանք էին վերջին բառերը, որ նա ինձ ասաց Կոստանդնուպոլսից իմ մեկնելուց առաջ: Այսպիսով, զբոսանավով այդ այցելությունը թեև ունեցավ որոշ կատակերգական կողմեր, սակայն, վստահ եմ, ի վերջո փրկեց բազում կյանքեր սովամահությունից ու կոտորածներից:

ԳԼՈՒԽ III

«Կայսեր անձնական ներկայացուցիչ» Վանգենհայմը դեմ է Հունաստանին ամերիկյան ռազմանավեր վաճառելուն

Դեռևս 1914 թ. մարտին գերմանացիներն արդեն Թուրքիային բավական ամուր պահում էին իրենց ձեռքին: Լիման ֆոն Սանդերսը, որ ժամանեց դեկտեմբերին, թուրքական բանակի ականավոր դեմքերից էր: Սկզբում ֆոն Սանդերսի նշանակումն ընդունվեց առանց թշնամանքի, քանի որ առաջին անգամ չէր, որ գերմանացի մասնագետներ էին հրավիրվում թուրքական բանակի մարտունակությունը բարձրացնելու նպատակով. օրինակ՝ ֆոն դեր Գոլցը, ինչպես նաև անգլիական ռազմածովային առաքելությունը՝ ծովակալ Լիմփսի ղեկավարությամբ, որը հենց այդ օրերին Թուրքիայում էր և փորձում էր իրագործել թուրքական բանակը վերակազմավորելու դժվարին գործը: Սակայն շուտով պարզ դարձավ, որ ֆոն Սանդերսի ռազմական առաքելությունը միանգամայն տարբերվում է վերոհիշյալ մյուս առաքելությունների գործելակերպից: Ֆոն Սանդերսի ժամանումից առաջ արդեն հայտարարվել էր, որ նա ստանձնելու է թուրքական Առաջին բանակի հրամանատարությունը, և որ գեներալ Բրոնսար ֆոն Շելենդորֆը նշանակվելու է Գլխավոր շտաբի պետ: Այս նշանակումներից պարզ էր դառնում, որ Կայսրը գրեթե ավարտին է հասցրել թուրքական բանակը սեփականացնելու իր մտադրությունը: Հասկանալու համար իշխանության այն չափը, որ տալիս էր ֆոն Սանդերսին այդ նշանակումը, բավական է հիշել, որ Առաջին բանակը փաստացիորեն վերահսկում էր իրադրությունը Կոստանդնուպոլսում: Այս փոփոխություններից միանգամայն պարզ էր դառնում, թե ինչ աստիճանի սերտ էին էնվեր փաշայի կապերը պրուսական իշխանությունների հետ: Բնականաբար, Անտանտի ներկայացուցիչները չէին կարող հանդուրժել գերմանական բռնատիրությունը: Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դեսպաններն անհապաղ հանդիպում պահանջեցին մեծ վեզիրի հետ և ոչ այնքան քաղաքավարի, որքան կրքոտ բողոքարկեցին ֆոն Սանդերսի նշանակումը: Թուրքական կաբինետի պաշտոնյաները սովորականի նման թոթվեցին իրենց ուսերն ու կմկմացին՝ պնդելով, թե փոփոխությունը մեծ կարևորություն չունի, սակայն, այդուամենայնիվ, հետ վերցրին ֆոն Սանդերսին Առաջին բանակի հրամանատար նշանակելու մասին որոշումը՝ նշանակելով նրան Գլխավոր տեսուչ: Սակայն դա չշտկեց իրավիճակը, քանզի այդ նոր պաշտոնը ֆոն Սանդերսին նույնիսկ ավելի մեծ իշխանություն էր տալիս, քան նախորդը: Այսպիսով, 1914թ.

հունվարին՝ Առաջին համաշխարհային պատերազմից յոթ ամիս առաջ, թուրքական բանակում գերմանացիները զբաղեցնում էին հետևյալ պաշտոնները. Գլխավոր շտաբի պետը գերմանացի էր, Գլխավոր տեսուչը՝ նույնպես, գերմանացի բազմաթիվ սպաներ զբաղեցնում էին առաջին կարևորության պաշտոններ, իսկ թուրքական քաղաքական գործիչ, Պատերազմի նախարար Էնվեր փաշան Գերմանիայի կարկառուն համախոհներից էր:

Դիվանագիտական այս հաղթանակն ապահովելու համար Վանգենհայմին շնորհվեց արծակուրդ, որը, անկասկած, նա վաստակել էր: Նույն ժամանակ արծակուրդ մեկնեց նաև Գիրսը՝ Ռուսաստանի դեսպանը: Այդ շրջանում ես բացարձակապես անտեղյակ էի դիվանագիտական նրբություններից, և բարոնուհի Վանգենհայմն ինձ բացատրեց, թե իրականում ինչ էին նշանակում այդ արծակուրդները: Վանգենհայմի արծակուրդը նշանակում էր, որ Գերմանիայի արտաքին գործերի գերատեսչությունը ֆոն Սանդերսի հետ կապված միջադեպն ավարտված է համարում՝ Գերմանիայի հաղթանակով: Մինչդեռ Գիրսի արծակուրդը նշանակում էր, որ Ռուսաստանը հրաժարվում է ընդունել այդ տեսակետը, և, վերջինիս կարծիքով, ֆոն Սանդերսի գործն ավարտված չէ: Հիշում եմ՝ այս մասին գրեցի ընտանիքիս, որ այս առեղծվածային արևելյան դիվանագիտական խաղերում մեծ պետությունները միմյանց հետ խոսում են ոչ թե բառերով, այլ գործողություններով, և որպես ապացույց նշեցի բարոնուհի Վանգենհայմի մեկնաբանություններն այդ արծակուրդների վերաբերյալ:

Մի միջադեպ, որը տեղի ունեցավ իմ տանը, բոլորի համար պարզ դարձրեց, թե որքան լուրջ էր ընկալում ֆոն Սանդերսն իր ռազմական առաքելությունը: Փետրվարի 18-ին ես իմ առաջին դիվանագիտական ճաշկերույթի հրավերն արեցի: Ներկա էին նաև գեներալ ֆոն Սանդերսը և նրա երկու դուստրերը: Գեներալը նստած էր իմ դստեր՝ Ռութի կողքին, սակայն Ռութը հաճելի ժամանց չէր վայելում. շքեղ համազգեստով գերմանացի գեներալը՝ կուրծքը մեդալներով զարդարած, ողջ ճաշկերույթի ընթացքում գրեթե ոչ մի բառ չարտասանեց: Լուռ ու մռայլ ծամում էր ուտելիքը և իմ դստեր զրույց սկսելու բոլոր փորձերին տալիս էր կտրուկ, միավանկ պատասխաններ: Այս ականավոր ռազմական գործիչն իրեն պահում էր անդաստիարակ մանկան նման:

Ճաշկերույթի ավարտին ինձ մոտեցավ ֆոն Մուտիուսը՝՝ Գերմանիայի գործերի ժամանակավոր հավատարմատարը՝ չափազանց գրգռված: Բավական ժամանակ անց միայն կարողացավ զսպել իրեն և արտահայտվել.

- Պարո՛ն դեսպան, Դուք ահավոր սխալ եք գործել, - ասաց նա:

- Ի՞նչ է պատահել, - հարցրի ես՝ բնականաբար խիստ զարմացած

- Դուք լուրջ վիրավորանք եք հասցրել ֆելդմարշալ ֆոն Սանդերսին. ճաշկերույթի ժամանակ նրան նստեցրել էիք օտարերկրյա հավատարմատարներից հետո: Նա Կայսեր անձնական ներկայացուցիչն է և, որպես այդպիսին, դեսպանների հետ հավասարազոր կարգավիճակ ունի: Նա պետք է նստած լիներ կառավարության անդամներից և օտարերկրյա հավատարմատարներից առաջ:

Այդպիսով ես փաստորեն անարգել էի Կայսեր անձը: Ուրեմն դա էր ֆոն Սանդերսի կոպիտ վարքագծի պատճառը: Բարեբախտաբար իմ կարգավիճակն անխոցելի էր. այդ ճաշկերույթում հյուրերի տեղավորման հարցում ես պատասխանատվություն չէի կրում, քանի որ հյուրերի ցուցակն ուղարկել էի Ավստրիայի դեսպան և դիվանագիտական կորպուսի ավագ մարկիզ Պալավիչինիին, ով Կոստանդնուպոլսում նման նուրբ հարցերի գիտակ էր համարվում: Մարկիզը վերադարձրեց ցուցակը՝ յուրաքանչյուր անվան դիմաց կարմիր թանաքով նշելով հրավիրյալի կարևորությունը՝ 1,2,3,4 և այլն: Այդ փաստաթուղթը, որտեղ գեներալ ֆոն Սանդերսի անվան դիմաց նշված էր «13», ես պահել եմ մինչ օրս: Խոստովանեմ սակայն, որ «13» աթոռը գերմանացի գեներալին տարել էր գրեթե սեղանի ծայրը:

Ես ֆոն Մուտիուսին բացատրեցի իրավիճակը և խնդրեցի պարոն Պանֆիլիին՝ Ավստրիայի դեսպանության խորհրդականին, ով նույնպես հյուրերի թվում էր, մոտենալ և բացատրել իրավիճակը գերմանացի վրդովված դիվանագետին: Քանի որ գերմանացիներն ու ավստրիացիները դաշնակիցներ էին, հասկանալի պիտի լիներ, որ եղածը թյուրիմացություն էր, միտումնավոր չէր: Պանֆիլին ասաց, որ ինքը չէր կողմնորոշվել ֆոն Սանդերսի ստույգ տեղը որոշելու հարցում և այն պարզելու համար դիմել էր մարկիզին: Արդյունքում Պալավիչինին անձամբ որոշել էր գեներալին նստեցնել «13» աթոռին: Գերմանիայի դեսպանությունը, սակայն, չբավարարվեց այդ բացատրությամբ. Վանգենհայմը ժամանեց Ավստրիայի դեսպանատուն և բավական վրդովված հարցը քննարկեց Պալավիչինիի հետ:

- Եթե Լիման ֆոն Սանդերսը ներկայացնում է Կայսերը, հապա ու՞մ եք ներկայացնում Դուք, - հարցրել էր Պալավիչինին Վանգենհայմին: Սա հզոր փաստարկ էր, քանի որ դեսպանը միշտ համարվում է միապետի «երկրորդ եսը»: - Ընդունված չէ, - շարունակել էր մարկիզը, - որ միապետը երկու ներկայացուցիչ ունենա նույն երկրում:

Քանի որ Պալավիչինին անզիջում դիրք էր գրավել, Վանգենհայմը հարցը ներկայացրեց մեծ վեզիրին: Սակայն Սաիդ Հալիմը հրաժարվել էր ստանձնել նման կարևորության որոշման պատասխանատվությունը

և հարցը տեղափոխել էր Նախարարների խորհրդի քննարկմանը: Խորհուրդն ամենայն լրջությամբ ուսումնասիրել էր այն և վճիռ կայացրել. ֆոն Սանդերսի կարգավիճակը պետք է դասել օտարերկրյա հավատարմատարներից ավելի բարձր, սակայն թուրքական կառավարության անդամներից ավելի ցածր: Հիմա արդեն օտարերկրյա հավատարմատարները բողոքի ձայն բարձրացրին: Այս հարցն արծարծելու պատճառով ֆոն Սանդերսը ոչ միայն արժանացավ համընդհանուր արհամարհանքի, այլև իր գոռոզ, բռնակալի կեցվածքով հրահրեց բոլորի քամահրանքը: Նախարարները հայտարարեցին՝ եթե ֆոն Սանդերսին նման միջոցառումների ժամանակ որևէ նախապատվություն ցուցաբերվի, ապա նրանք բոլորը կլքեն սեղանը: Այդուհետ ֆոն Սանդերսն այլևս չհրավիրվեց դիվանագիտական ճաշկերույթների: Սըր Լուի Մալեթը՝ Բրիտանիայի դեսպանը, հեգնոտ հետաքրքրությամբ հետևում էր իրադարձություններին: «Լավ է, - ասում էր նա, - որ դա տեղի չունեցավ բրիտանական դեսպանատանը, հակառակ դեպքում թերթերի էջերը կնվիրվեին Անգլիայի ու Գերմանիայի միջև ծագած լարված հարաբերություններին»:

Եվ, այդուհանդերձ, այս միջադեպն ունեցավ միջազգային կարևորության հետևանքներ: Ֆոն Սանդերսի փառասիրությունը հարկադրեց նրան պետական գաղտնիք բացել. ինքը շարքային զինվորական չէ, որ ուղարկվել է թուրքական բանակը վարժեցնելու համար: Նա այն է, ինչ պնդում է՝ Կայսեր անձնական ներկայացուցիչը: Կայսրն ընտրել էր իրեն ճիշտ այնպես, ինչպես ընտրել էր Վանգենհայմին՝ Թուրքիայում իր ծրագրերն իրականացնելու համար: Ավելի ուշ այնպիսի արտառոց հպարտությամբ, որով գերմանացի ազնվականներն արտահայտվում են իրենց միապետի մասին, ֆոն Սանդերսն ինձ պատմեց, թե ինչպես Կայսրը երկու ժամ զրուցել էր իր հետ հենց այն նույն օրը, երբ որոշել էր նրան Կոստանդնուպոլիս ուղարկել, և թե ինչպես նրա մեկնելուց առաջ Վիլհելմը մի ամբողջ ժամ նրան վերջին հրահանգներն էր տվել: Վաշինգտոն ուղարկած իմ զեկույցում ես նշեցի ճաշկերույթի միջադեպը՝ որպես Թուրքիայում Գերմանիայի աճող ազդեցության ապացույց, և ենթադրում եմ, որ մյուս դեսպանները նույնպես այդ մասին զեկուցել էին իրենց կառավարություններին: Ճաշկերույթին ներկա մեր ռազմական կցորդը՝ մայոր Ջոն Թեյլորը, այդ միջադեպին վերաբերվեց մեծ ուշադրությամբ: Դրանից մեկ ամիս անց նա և նավապետ Մաքքոլին՝ Կոստանդնուպոլսում տեղակայված «Սկորպիոն» պահականավի հրամանատարը, Կահիրեում նախաճաշում էին լորդ Քիտչընների հետ: Հրավիրյալները շատ չէին. միայն երկու ամերիկացիները, ինքը՝ լորդ Քիտչընները, նրա քույրը և օգնականը: Մայոր Թեյլորը պատմել էր միջադեպի մասին, որը խիստ

հետաքրքրել էր լորդ Քիտչներին.

- Ձեր կարծիքով, դա ի՞նչ է նշանակում, - հարցրել էր նա:

- Կարծում եմ, - պատասխանել էր Թեյլորը, - դա նշանակում է, որ երբ սկսվի մեծ պատերազմը, Թուրքիան ըստ ամենայնի կդառնա Գերմանիայի դաշնակիցը. եթե ոչ անմիջականորեն դաշինքի անդամ, ապա, կարծում եմ, առնվազն կմոբիլիզացնի իր ուժերը կովկասյան ուղղության վրա՝ այդպիսով ռուսական երեք զինվորական կորպուս շեղելով ռազմական գործողությունների թատերաբեմից:

Մի պահ մտածելուց հետո Քիտչները պատասխանել էր.

- Ես համամիտ եմ Ձեզ հետ: Եվ արդեն մի քանի ամիս է, ինչ մենք ինքներս ենք տեսնում, թե Գերմանիան ինչպես է վերահսկողության տակ վերցրել թուրքական բանակը: Գերմանացի սպաներն ամեն օր վարժեցնում են թուրք զինվորներին, և ես վստահ եմ, որ դա վերահաս պատերազմին պատրաստվելու նպատակով է:

Այսպես մի քանի ամիս շարունակ մենք հետևում էինք «թուրքական բանակը՝ գերմանական վերահսկողության տակ» հորջորջմամբ ներկայացմանը: Գերմանացի սպաները վարժանքներ էին անցկացնում զինվորների հետ ամեն օր, և այս ամենը, իմ համոզմամբ, վերահաս պատերազմին պատրաստվելու նպատակով: Թե ինչպիսին էին վարժանքի արդյունքները, պարզ դարձավ հուլիսին, երբ մեծ զորահանդես տեղի ունեցավ: Սա մի հիասքանչ տոնական իրադարձություն էր: Սուլթանը ներկայացավ ամենայն շուքով. նստել էր շքեղ զարդարված վրանում՝ շրջապատված փոքր շքախմբով: Ներկա էին նաև Եգիպտոսի խեդիվը, Թուրքիայի գահաժառանգ արքայազնը, թագավորական ընտանիքի անդամները, ինչպես նաև կառավարությունն իր ողջ կազմով: Մեզ համար պարզ դարձավ, որ նախորդ վեց ամսվա ընթացքում թուրքական բանակն ամբողջովին պրուսականացվել էր: Այն, ինչը դեռևս հունվարին ցնցոտիավոր, անկազմակերպ մի ամբոխ էր, հիմա շարժվում էր «սագերի» քայլքով. զինվորները հագել էին գերմանական մոխրագույն համազգեստ և նույնիսկ սաղավարտներ, որ հիշեցնում էին գերմանական «pickelhaube» սրածայր սաղավարտները: Գերմանացի սպաները չափազանց հպարտ էին թուրք զինվորների այդ կերպարանափոխմամբ. հունվարի այն խղճուկ ամբոխը հիմա վերափոխվել էր հիանալի զորաշարժվող, քայլը հստակ դրոշմող և կոկիկ հագնված բանակի, ինչը, հիրավի, գովեստի արժանի ռազմական հաջողություն էր:

Երբ սուլթանն ինձ հրավիրեց իր վրանը, ես, բնականաբար, նրան շնորհավորեցի այդ ձեռքբերումների առթիվ: Նա առանձնապես ոգևորված չէր, ասաց, որ պատերազմի հավանականությունը ցավալի փաստ

է, քանզի ինքը համոզված խաղաղասեր էր: Գերմանացիների այդ տոնահանդեսին ես աղաղակող բացակայություն նկատեցի. Ֆրանսիայի, Բրիտանիայի, Իտալիայի և Ռուսաստանի դեսպանները չէին եկել: Ավելի ուշ Բոնապարն ասաց, որ ստացել էր տասը տոմս, սակայն դա հրավեր չէր համարել: Վանգենհայմը գոհունակ դեմքով ինձ ասաց, որ մյուս դեսպանները նախանձում են և չեն ցանկանում վկա լինել այն հաջողություններին, որոնց թուրքական բանակը հասել է գերմանացիների ջանքերով: Սակայն ես կասկած չունեմ՝ դեսպանները չէին եկել, քանի որ ցանկություն չունեին մասնակցելու գերմանական տոնախմբությանը, և ես նրանց չեմ մեղադրում:

Ես ունեի նաև այլ վկայություններ առ այն, որ Գերմանիան դերակատարություն ունի թուրքերի վարած քաղաքականության մեջ: Հունիսին Թուրքիայի և Հունաստանի փոխհարաբերությունները ծայրաստիճան սրվեցին: Լոնդոնի պայմանագրի համաձայն (1913թ. մայիսի 30)՝ Քիոս և Միթիլին կղզիները հանձնվեցին Հունաստանին: Մեկ հայացք քարտեզին, և անմիջապես պարզ է դառնում այդ կղզիների ռազմավարական նշանակությունը: Դրանք գտնվում են էգեյան ծովում և պահապանների պես վերահսկում են ծովածոցը, նաև Զմյուռնիայի հիասքանչ նավահանգիստը: Միանգամայն պարզ է՝ եթե որևէ հզոր պետություն մշտապես հաստատվի այս երկու կետերում, ի վերջո կվերահսկի Զմյուռնիան և Փոքր Ասիայի ողջ էգեյան ծովափը: Հունաստանի կողմից կղզիների տևական վերահսկումն առկա ժողովրդագրական պայմաններում Թուրքիայի համար մշտական ռազմական սպառնալիք էր: Կղզիների բնակիչները հույներ էին. այդպես էր դեռ Հոմերոսի ժամանակ: Փոքր Ասիայի ծովափնյա հատվածը նույնպես հունաբնակ էր: Միջերկրականում գտնվող թուրքական ամենախոշոր նավահանգստի՝ Զմյուռնիայի բնակչության կեսը նույնպես հույներ էին: Քաղաքի արդյունաբերությունը, առևտուրն ու մշակույթն այն աստիճանի հունական էին, որ թուրքերն այն սովորաբար անվանում էին «*գյավուր Իզմիր*»՝«անհավատ Զմյուռնիա»: Թեև պաշտոնապես այստեղի հույները օսմանահպատակ էին, սակայն նրանք չէին թաքցնում իրենց սերը հայրենիքի՝ Հունաստանի հանդեպ: Ավելին, այս ասիացի հույները նույնիսկ հանգանակություններ էին կատարում հույների ազգային շահերի առաջխաղացման համար: Հունաստանը և էգեյան կղզիները փաստորեն «Զմիավորված Հունաստան» էին՝ Graecia Irredenta, և այն, որ Հունաստանը վճռական էր դրանք հետ վերցնելու հարցում, ճիշտ այնպես, ինչպես հետ էր վերցրել Կրետեն, դիվանագիտական գաղտնիք չէր: Եթե հունական բանակը հայտնվեր Փոքր Ասիայի ծովեզրին, ապա տեղի հույն բնակչությունը, անկասկած, կդիմավորեր

նրան խանդավառությամբ և կաջակցեր բոլոր միջոցներով:

Սակայն, քանի որ Գերմանիան իր սեփական ծրագրերն ուներ Փոքր Ասիայի հարցում, այս տարածքի հույն բնակչությունն անխուսափելիորեն արգելք էր պանգերմանական նկրտումների համար: Քանի դեռ այս տարածքը մնում էր հունաբնակ, այն բնական արգելք էր դեպի Պարսից ծոց Գերմանիայի առաջխաղացման համար, ճիշտ այնպես, ինչպես Սերբիան: Յուրաքանչյուր ոք, ով թեկուզ հպանցիկ ծանոթ է պանգերմանիզմի վերաբերյալ եղած գրականությանը, ծանոթ է այն յուրահատուկ մեթոդին, որը գերմանացի հրապարակախոսները խրախուսում էին կիրառել այն ազգերի հանդեպ, որոնք հայտնվում էին Գերմանիայի ճանապարհին. այդ մեթոդը տեղահանումն էր՝ ժողովուրդների բարբարոս արտաքսումը Եվրոպայի մի մասից մյուսը իբրև անասունների հոտի, և տարիներ շարունակ այդ մեթոդը գերմանական էքսպանսիայի վերաբերյալ Կայսեր ծրագրերի մասն էր կազմել:

Պատերազմի սկզբից Գերմանիան այս մեթոդը կիրառել էր Բելգիայի, Լեհաստանի և Սերբիայի նկատմամբ: Ինչպես կանդրադառնամ ստորև, դրա ամենանողկալի դրսևորումը եղավ Հայաստանի պարագայում: Գերմանիայի դրդմամբ այս պահին Թուրքիան սկսեց կիրառել տեղահանումների մեթոդը Փոքր Ասիայում բնակվող իր հույն հպատակների հանդեպ: Երեք տարի անց գերմանացի ծովակալ Ուզդոմը, որ ռմբակոծությունների ընթացքում գտնվում էր Դարդանելի մերձակայքում, ինձ ասաց, որ գերմանացիներն էին, որ «առաջարկ էին արել շտապ հեռացնել հույներին մերձափնյա շրջաններից»: Ըստ ծովակալի՝ Գերմանիայի շարժառիթը զուտ ռազմական էր: Արդյոք Թալեաթն ու նրա համագործակիցները գիտակցո՞ւմ էին, որ Գերմանիայի խաղն են խաղում՝ ինձ հայտնի չէ, սակայն, անկասկած, գերմանացիները նրանց մշտապես հրահրում էին այդ «հաճելի» գործին:

Ծավալվող իրադարձությունները նախանշում էին այն քաղաքականությունը, որը կիրառվեց հայերի կոտորածների ընթացքում: Թուրք զինվորները հարձակվեցին հույների վրա և խմբերով քշեցին դեպի նավերը: Նրանք հույներին անձնական գործերը կարգավորելու ո՛չ ժամանակ տվեցին, ո՛չ էլ մտածում էին ընտանիքի անդամներին չբաժանելու մասին: Որոշվել էր հույներին տեղափոխել Էգեյան ծովում գտնվող հունաբնակ կղզիներ: Բնականաբար հույներն ըմբոստացան նման գործողությունների դեմ, ինչի հետևանքով տեղի ունեցան հատվածային ջարդեր, մասնավորապես՝ Ֆոքեայում, որտեղ հիսունից ավելի մարդ սպանվեց: Թուրքերը պահանջեցին, որ Զմյուռնիայում գործող օտարերկրյա բոլոր հաստատություններն ազատվեն իրենց հույն աշխատակիցներից և նրանց

փոխարինեն մահմեդականներով: Ի թիվս ամերիկյան այլ ընկերությունների նման ցուցումներ ստացավ նաև «Singer» արտադրական ընկերությունը: Թեև ես միջամտեցի ու ստացա վաթսուն օր հավելյալ ժամանակ, այդուամենայնիվ, ամերիկյան այս հաստատությունը նույնպես հարկադրված եղավ ենթարկվել հրամանին: Բոլոր քրիստոնյաները պաշտոնապես ենթարկվում էին բոյկոտի և ոչ միայն Փոքր Ասիայում, այլև Կոստանդնուպոլսում: Այս մեթոդը, սակայն, չէր տարածվում հրեաների վրա, ովքեր միշտ շատ ավելի ընդունելի են եղել թուրքերի համար, քան քրիստոնյաները: Իշխանությունները մասնավորապես խնդրել էին հրեաներին ցուցանակներ փակցնել իրենց դռների վրա՝ նշելով ազգությունն ու արհեստը. օրինակ՝ «հրեա Աբրահամ, դերձակ» կամ «հրեա Իսահակ, կոշկակար» և այլն: Ես դիտարկում եմ այս բոյկոտը որպես թուրքական կառավարման համակարգի անհեթեթություն, քանի որ այս պարագայում պետությունը տնտեսական բոյկոտ էր իրականացնում սեփական հպատակների դեմ:

Հույների դեմ իրականացված բռնարարքները վրդովեցրին ինձ: Այն պահին մտքովս իսկ չէր անցնում, թե տեղահանումները կատարվում են գերմանացիների դրդմամբ: Ես դրանք դիտում էի որպես թուրքերին հատուկ դաժանության բռնկում: Մինչ այդ Թալեաթին արդեն լավ էի ճանաչում: Ես նրան հանդիպում էի գրեթե ամեն օր, և նա ինձ հետ քննարկում էր միջազգային հարաբերությունների զարգացումները: Ես կտրականապես դեմ էի հույների դեմ ուղղված նրա գործողություններին, ասացի, որ դա ամենաբացասական ազդեցությունը կգործի դրսում և որ դա դիպչում է նաև ամերիկյան շահերին: Թալեաթը բացատրեց իր ազգային քաղաքականությունը: «Օսմանյան կայսրությունում առկա տարաբնույթ միավորումները, - ասաց նա, - մշտապես դավեր են նյութում Թուրքիայի դեմ: Տեղաբնակ այդ ժողովուրդների թշնամանքի հետևանքով Թուրքիան կորցրեց Հունաստանը, Սերբիան, Ռումինիան, Բուլղարիան, Բոսնիան, Հերցեգովինան, Եգիպտոսն ու Տրիպոլին, ինչի հետևանքով Օսմանյան կայսրությունը հայտնվեց փլուզման եզրին: Փրկելու համար այն, ինչ մնացել է Թուրքիայից, - ավելացրեց Թալեաթը, - անհրաժեշտ է ազատվել օտարազգիներից»: «Թուրքիան՝ թուրքերի համար». հիմա սա էր Թալեաթին ուղղորդող գաղափարը: Այդ նպատակով էլ նա առաջարկել էր իրականացնել Զմյուռնիայի ու հարակից կղզիների թուրքացումը: Շուրջ քառասուն հազար հույն արդեն տարհանվել էր: Նա ինձ մեկ անգամ ևս խնդրեց հորդորել ամերիկյան ընկերություններին աշխատանքի վերցնել միայն թուրքերին: Նշեց նաև, որ բռնությունների ու սպանությունների վերաբերյալ պտտվող լուրերը մեծապես չափազանցված են, և

առաջարկեց հանձնաժողով ուղարկել հետաքննություն կատարելու նպատակով:

- Հանձնաժողովը նրանց անհրաժեշտ է թուրքերին արդարացնելու համար, - ասաց ինձ սըր Լուի Մալեթը՝ Բրիտանիայի դեսպանը: Նա իրավացի էր. նշված հանձնաժողովի ներկայացրած զեկույցում Թուրքիան արդարացված էր:

Թուրքիայի հույները հայերի համեմատությամբ ունեին մեծ առավելություն, քանզի գոյություն ուներ Հունաստանի կառավարությունը, որը բնականաբար պաշտպան էր կանգնում նրանց: Թուրքերը հասկանում էին, որ տարհանումները կարող են հանգեցնել պատերազմի Հունաստանի հետ: Իրականում նրանց համար ցանկալի էր այդ պատերազմը, և նրանք պատրաստվում էին դրան: Թուրք ժողովուրդն այնքան խանդավառ էր, որ ազգովին գումար հավաքեց և գնեց բրազիլական պատվերով Անգլիայում կառուցվող խոշոր զրահանավը: Կառավարությունը պատվիրեց երկրորդ ռազմանավը՝ նույնպես Անգլիայում և մի քանի սուզանավ ու կործանիչներ՝ Ֆրանսիայում: Կոստանդնուպոլսում նավատորմային այս պատրաստությունների նպատակը գաղտնիք չէր: Այն պահին, երբ թուրքերը կստանային այդ նավերը կամ թեկուզ զրահապատ նավերից մեկը, որոնց կառուցումը մոտենում էր ավարտին, Թուրքիան մտադիր էր հարձակվել Հունաստանի վրա և զավթել կղզիները: Թեկուզ մեկ «Սուլթան Օսման»-ի (այս անվանումն էին տվել թուրքերը բրազիլական նավին) նման ժամանակակից ռազմանավը կարող էր հեշտությամբ ծնկի բերել հունական ողջ նավատորմը և վերահսկել էգեյան ծովը: Բոլորս սպասում էինք, որ աշնանը, հենց ավարտվի այդ հզոր նավի շինարարությունը և մի քանի ամիս անց այն ուղևորվի Թուրքիա, կբռնկվի թուրք-հունական պատերազմը: Ի՞նչ կարող էր անել հունական նավատորմն այդ մոտալուտ վտանգի դեմ:

Այսպիսին էր իրադրությունը, երբ հունիսի սկզբին ինձ այցելեց Թուրքիայի ռազմածովային նախարարը՝ կայսրության առաջին երեք դեմքերից մեկը՝ Ջեմալ փաշան: Երբևէ չէի տեսել որևէ մեկին այդ աստիճանի մտահոգ: Նա սկսեց ֆրանսերենով բորբոքված ինչ-որ բան պատմել իմ թարգմանչին. նրա բեղերը հուզմունքից ցնցվում էին, ձեռքերը կատաղի այս ու այն կողմ էր նետում: Ջեմալն իրեն ամենևին չէր տիրապետում:

Ես բավականաչափ գիտեմ ֆրանսերեն՝ հասկանալու համար, թե նա ինչ էր ասում, և Ջեմալի բերած նորությունները (առաջին անգամ էի լսում այդ մասին), բացատրում էին նրա տենդային վիճակի պատճառը: Ըստ նրա՝ ամերիկյան կառավարությունը բանակցություններ է վարում Հունաստանի հետ «Այդահո» և «Միսիսիպի» նավերի վաճառքի շուրջ: Նրա

ցանկությունն էր, որ ես անհապաղ քայլեր ձեռնարկեի այդ գործարքը կանխելու համար: Ջեմալը խնդրատուի դեմքով աղերսում, համոզում էր անհապաղ միջամտել: Թուրքերը, ասում էր նա, Ամերիկան մշտապես համարել են իրենց լավագույն բարեկամը, և ես՝ որպես Ամերիկայի դեսպանը Թուրքիայում, բազմիցս արտահայտել եմ պատրաստակամությունս օժանդակելու իրենց, և այժմ մեր բարյացակամությունն ապացուցելու ժամանակն է:

- Քանի որ Հունաստանը և Թուրքիան փաստորեն պատերազմի շեմին են, - ասաց Ջեմալը, - այդ նավերի վաճառքը խախտում է Ամերիկայի չեզոքությունը: Սակայն եթե սա զուտ առևտրական գործարք է, Թուրքիան կկամենար հնարավորություն ունենալ մասնակցելու դրան:

Մենք կվճարենք ավելին, քան հույները, - ավելացրեց նա և իր խոսքն ավարտեց լուրջ խնդրանքով, որ ես այս հարցի վերաբերյալ շտապ հեռագրեմ իմ կառավարությանը: Ես խոստացա դա անել:

Այսպիսով խելամիտ հույներն իրավիճակը շրջեցին հօգուտ իրենց: Թուրքիան չէր թաքցնում Հունաստանի վրա հարձակվելու իր մտադրությունը պատվիրված ռազմանավերը ստանալուն պես: Մինչդեռ այդ երկու նավերը, որոնց վաճառքի շուրջ բանակցում էին հույները, հենց այդ պահին պատրաստ էին մարտերին մասնակցելու: «Այդահոն» և «Միսիսիպին» ամերիկյան նավատորմի անփոխարինելի նավերից չէին: Թեև դրանք պիտանի չէին առաջին գծում կռվելու համար, սակայն բավականաչափ հզոր էին թուրքական ողջ նավատորմը Էգեյան ծովից դուրս մղելու համար: Ակնհայտորեն հույները մտադիր չէին քաղաքավարի կերպով հետաձգել օրհասական պատերազմը մինչև թուրքական նավերի կառուցման ավարտը: Նրանք որոշել էին գրոհել ամերիկյան նավերը՝ ձեռք բերելուն պես: Ջեմալի կարծիքը, անշուշտ, իրավական ոչ մի հիմք չուներ: Որքան էլ մեծ լիներ Թուրքիայի և Հունաստանի միջև առկա պատերազմի վտանգը, այդ պահին խաղաղություն էր տիրում: Միանգամայն պարզ էր, որ Հունաստանը նույնքան իրավունք ուներ ռազմանավեր գնելու Ամերիկայից, որքան Թուրքիան՝ Բրազիլիայից կամ Մեծ Բրիտանիայից:

Սակայն Ջեմալը միակ պաշտոնյան չէր, որ ջանում էր ձախողել այդ գործարքը: Գերմանիայի դեսպանը նույնպես կրքոտ հետաքրքրություն ցուցաբերեց այդ գործընթացի հանդեպ: Ջեմալի այցից մի քանի օր անց Վանգենհայմն ու ես ձիերով զբոսնում էինք Կոստանդնուպոլսից հյուսիս ընկած սարերում: Վանգենհայմը խոսակցություն սկսեց հույների մասին, որոնց հանդեպ ընդգծված հակակրանք ուներ, նաև պատերազմի հնարավորության և ամերիկյան ռազմանավերի հնարավոր վաճառքի մասին:

Նա մանրամասն խոսեց գործարքի մասին՝ առաջ քաշելով հենց այն փաստարկները, որոնք բերել էր Ջեմալը: Այս փաստն իմ մեջ կասկած հարուցեց. ուրեմն նա անձամբ էր նախապատրաստել Ջեմալին՝ ինձ հետ զրուցելու համար:

- Ինքներդ տեսեք, թե ինչ վտանգավոր նախադեպ եք ստեղծում, - ասաց Վանգենհայմը: - Հնարավոր է, որ մի օր Ամերիկան հայտնվի այն իրադրության մեջ, ինչ Թուրքիան՝ այսօր: Ենթադրենք, թե դուք ճապոնիայի հետ պատերազմի շեմին եք, իսկ Անգլիան զրահապատ նավեր է վաճառում՝ ճապոնացիներին: Դա դուր կգա՞ր Միացյալ Նահանգներին:

Այնուհետև Վանգենհայմը մի միտք արտահայտեց, որը բացահայտեց նրա բողոքի իրական պատճառը: Այս վերջին երեք տարվա ընթացքում այդ մասին հաճախ եմ խորհել: Այդ տեսարանն անջնջելիորեն տպավորվել է հիշողությանս մեջ. մենք հեծնել ենք մեր ձիերը, շուրջը Բելգրադի դարավոր լուռ անտառն է, իսկ հեռվում միջօրեի արևի ներքո շողշողում է Սև ծովը: Վանգենհայմը հանկարծ դարձավ շատ լուրջ և անկեղծ: Նայեց աչքերիս ու ասաց. «Կարծում եմ Ամերիկան չի գիտակցում այս հարցի ողջ լրջությունը: Այդ նավերի վաճառքը կարող է Եվրոպայում պատերազմի առիթ դառնալ»:

Մեր այս զրույցը տեղի ունեցավ հունիսի 13-ին՝ պատերազմական հրդեհի բռնկումից մոտավորապես վեց շաբաթ առաջ: Վանգենհայմին հայտնի էր, որ Գերմանիան թափով պատրաստվում է պատերազմի: Գիտեր նաև, որ նախապատրաստությունները դեռևս ավարտված չեն: Գերմանիայի մյուս բոլոր դեսպանների նման Վանգենհայմն էլ հրահանգ էր ստացել կանխելու ցանկացած առճակատում, ինչը կարող էր հանգեցնել պատերազմի նախքան նախապատրաստությունների լիակատար ավարտը: Նա առարկություններ չուներ հույների արտաքսման հարցում, քանի որ դա ինքնին նախապատրաստությունների մի մասն էր, սակայն չափազանց մտահոգ էր այն հանգամանքով, որ հույները կարող են զինվել, ինչպես նաև՝ Բալկաններում տիրող իրավիճակով:

Այդ օրերին Բալկանները ծխացող հրաբխի էին նման: Եվրոպան անցել էր Բալկանյան երկու պատերազմով առանց ամբողջապես ներքաշվելու դրանց մեջ, սակայն Վանգենհայմը գիտակցում էր, որ այս երրորդ պատերազմը կրակի նման կկլանի ողջ մայրցամաքը: Գիտակցում էր, որ պատերազմն անխուսափելի է, պարզապես չէր ցանկանում, որ այն բռնկվի հենց այդ պահին: Հիմա նա փորձում էր ազդել ինձ վրա Գերմանիայի համար մի քիչ էլ ժամանակ շահելու նպատակով: Անգամ պնդում էր, որ ես հեռագրեմ անձամբ ԱՄՆ Նախագահին, բացատրեմ իրավիճակի լրջությունը և նրա ուշադրությունը հրավիրեմ այն հեռագրերին, որոնք

ուղարկվել էին Պետքարտուղարություն նավերի նախատեսվող վաճառքի վերաբերյալ: Նրա առաջարկը անպարկեշտ համարեցի և հրաժարվեցի կատարել այն:

Ջեմալին և մյուս թուրք պաշտոնյաներին, ովքեր շարունակում էին ինձ վրա ճնշում գործադրել, ես առաջարկեցի, որ իրենց դեսպանը Վաշինգտոնում այդ հարցը քննարկի անձամբ ԱՄՆ Նախագահի հետ: Նրանք հաշվի առան այդ խորհուրդը, սակայն հույները նրանցից ավելի արագ էին գործել: Հունիսի 22-ին՝ ժամը երկուսին, Վաշինգտոնում Հունաստանի գործերի ժամանակավոր հավատարմատարը և հունական նավատորմի հրամանատար Ցուկլասն այցելել էին Նախագահ Վիլսոնին և պայմանավորվել վաճառքի հարցում: Երբ նրանք դուրս էին եկել Նախագահի աշխատասենյակից, ներս էր մտել Թուրքիայի դեսպանը ... ընդամենը տասնհինգ րոպե ուշացումով:

Ես ենթադրում եմ, որ Նախագահ Վիլսոնը համաձայնել էր վաճառքին, քանի որ նրան հայտնի էր, որ Թուրքիան պատրաստվում է հարձակվելու Հունաստանի վրա, և վստահ էր, որ «Այդահոն» և «Միսիսիպին» կկանխեն այդ հարձակումը և կպահպանեն խաղաղությունը Բալկաններում:

Կոնգրեսի հավանությամբ 1914թ. հուլիսի 8-ին ԱՄՆ վարչակազմը 12.535.276.98 դոլարով վաճառեց նավերը միջնորդ Ֆրեդ Ջ. Գաունթլեթին: Կոնգրեսն անմիջապես որոշեց, որ վաճառքից ստացված գումարը պետք է օգտագործվի ժամանակակից հսկա «Կալիֆոռնիա» զրահանավը կառուցելու համար: Պարոն Գաունթլեթը նավերը փոխանցեց հունական կառավարությանը: Նշված ռազմանավերը վերանվանվել էին «Կիլկիս» ու «Լեմնոս» և անմիջապես իրենց տեղն էին գրավել հունական նավատորմում՝ որպես նրա ամենահզոր նավեր: Հույների խանդավառությունը սահման չուներ:

Այդ օրերին մենք արդեն դեսպանատնից տեղափոխվել էինք Բոսֆորի ափին գտնվող մեր ամառանոցը: Սովորաբար ամռանը բոլոր դեսպանությունները տեղափոխվում էին այնտեղ: Դժվար էր գտնել ավելի հիասքանչ մի վայր: Մեր տունը վենետիկյան ոճով կառուցված երեքհարկանի շինություն էր, որի հետևում վեր էր խոյանում իրար հաջորդող և իրար վրա կախվող պարտեզ-դարատափներով մի ժայռ: Առանձնատունը գրեթե ջրի եզրին էր, ու Բոսֆորի սրընթաց ալիքները տանն այնքան էին մոտենում, որ հատկապես լուսնալույս գիշերներին թվում էր, թե կանգնած ես արագ սլացող նավի կամրջակին: Ցերեկները Բոսֆորը, որի լայնությունն այնտեղ մեկ մղոնից քիչ ավելի էր, լի էր զվարճալի խայտաբղետ նավակներով: Ես պարզորոշ ու հստակ մտաբերում եմ այդ

զվարթ տեսարանը, քանի որ հիշում եմ նաև դրա հակապատկերը մի քանի ամիս անց, երբ Թուրքիան պատերազմի մեջ մտնելուն պես անմիջապես փակեց նեղուցը: Ամեն օր ռուսական հսկա շոգենավերը սևծովյան նավահանգիստներից սլանում էին Զմյուռնիա, Ալեքսանդրիա և այլ քաղաքներ՝ ակներև դարձնելով ջրային այս նեղ հատվածի կարևորությունը և բացահայտում էին եվրոպական պետությունների հազարամյա արյունալի մրցակցությունը՝ դրան տիրելու համար: Սակայն ամռան առաջին շաբաթները դեռևս խաղաղ էին: Բոլոր դեսպանները, հավատարմատարներն իրենց ընտանիքներով մշտապես այնտեղ էին: Ամեն օր հավաքվում էին այն բոլոր պետությունների ներկայացուցիչները, որ առաջիկա չորս տարվա ընթացքում պիտի մտնեին մարդկության պատմության ամենաարյունալի պատերազմի մեջ: Այդ պահին նրանք ամենքը բարեկամներ էին թվում՝ նույն ճաշասեղանների շուրջ նստած կամ ձեռք ձեռքի զբոսնելիս: Մի երկրի դեսպանը սիրալիր ուղեկցում էր մեկ այլ՝ գուցե հակառակորդ երկրի դեսպանի տիկնոջը ճաշասեղանի մոտ: Ճաշից հետո կազմվում էին ոչ մեծ խմբեր: Մեծ վեզիրը հանպատրաստից ընդունելություն էր տալիս մի անկյունում, մյուս անկյունում ցածրաձայն զրուցում էին կառավարության անդամները: Նախաշեմին նստած դեսպանները քննարկում էին հունական զարգացումները, թուրք պաշտոնյաները տարակուսանքով հետևում էին աշխույժ տեսարանին և հավանաբար ցածրաձայն քննարկում այն իրենց լեզվով: Ռուսաստանի դեսպանը շրջում էր սրահում՝ մերթընդմերթ ընտրելով մեկին, ում հետ կկամենար զրուցել և թևանցուկ անելով տանում էր մի անկյուն՝ գաղտնի առանձնազրույց վարելու: Այդ նույն ժամանակ մեր որդիներն ու դուստրերը, դիվանագիտական կորպուսի կրտսեր անդամներն ու զանազան առաքելությունների սպաներ պարում էին ու սիրաբանում. կարծես այդ ամենը կազմակերպված էր սոսկ նրանց զվարճության համար: Այս ամենի հետ մեկտեղ հնարավոր մահափորձից խուսափելու համար ո՛չ մեծ վեզիրը, ո՛չ էլ թուրք այլ բարձրաստիճան պաշտոնյաներ տանից դուրս չէին գալիս առանց թիկնապահների ու պահակախմբի: Նման հեղհեղուկ մթնոլորտը, թեև տարբեր զգացումներ էր արթնացնում, սակայն, անշուշտ, նաև հետաքրքրական էր: Ես զգում էի նաև, որ այդ ամենի մեջ որոշակի լարվածություն կա. պատերազմը զրույցների նախընտրելի թեման էր: Թվում էր, թե բոլորը գիտակցում էին, որ այս խաղաղ, թեթևամիտ կյանքը երկար չի տևի, և որ ամեն պահ մի փոքր կայծ կարող է ամեն ինչ հրդեհի մեջ նետել:

Այդուհանդերձ, երբ վրա հասավ ճգնաժամը, այն սենսացիա չառաջացրեց: Հունիսի 29-ին տեղեկացանք Ավստրիայի Մեծն դուքսի և նրա

տիկնոջ սպանության մասին: Նորությունը հանգիստ ընդունվեց, թեև բոլորն էլ ապշած էին և գիտակցում էին, որ չափազանց բախտորոշ դեպք է տեղի ունեցել, սակայն դրա առանձնահատուկ զգացմունքային արձագանքը չկար: Կատարված ողբերգությունից մեկ-երկու օր անց ես երկար զրույց ունեցա Թալեաթի հետ դիվանագիտական հարցերի շուրջ: Նա նույնիսկ չհիշատակեց կատարվածը: Այժմ ես այն կարծիքին եմ, որ այդ պահին մենք ամենքս յուրատեսակ զգացմունքային կաթված էինք ստացել, քանզի շատ շատերից ավելի լավ էինք տեղեկացված և, անշուշտ, պարզորոշ գիտակցում էինք ստեղծված իրավիճակի ողջ վտանգավորությունը: Մի քանի օր անց մեր լեզուն կարծես բացվեց. մենք անվերջ խոսում էինք վերահաս պատերազմի մասին: Երբ հանդիպեցի Ֆոն Մուտիուսին՝ Գերմանիայի հավատարմատարին, ու Վայցին՝ «Frankfurter Zeitung»-ի թղթակից-դիվանագետին, նրանք նույնպես քննարկում էին մոտալուտ պատերազմը: Նրանց կանխատեսումների մեջ դարձյալ առկա էր գերմանական նույն մոտեցումը. «Երբ պատերազմը սկսվի, - ասացին նրանք, - Ամերիկան, անշուշտ, կօգտվի առիթից ու իր ձեռքը կվերցնի մեքսիկական ու հարավամերիկյան ողջ առևտուրը»:

Երբ ես այցելեցի Պալավիչինիին՝ ցավակցությունս հայտնելու Մեծն դուքսի մահվան կապակցությամբ, նա ինձ ընդունեց պատշաճ լրջությամբ. գիտակցում էր, որ ներկայացնում է կայսերական ընտանիքը, և նրա վիշտը կարծես անձնական երանգ ուներ: Կարելի էր կարծել, թե Պալավիչինին կորցրել էր հարազատ որդուն: Ես իմ ու իմ երկրի վրդովմունքը հայտնեցի ոճրագործության վերաբերյալ և մեր կարեկցանքը՝ ծերունազարդ կայսերը:

- Ja, ja, es ist sehr schrecklich (այո՛, այո, շատ սարսափելի է), - գրեթե շշուկով պատասխանեց նա: - Սերբիան կդատապարտվի իր արարքի համար, - ավելացրեց նա: - Նրանց հատուցում կպարտադրվի:

Մի քանի օր անց, երբ Պալավիչինին այցելեց ինձ, խոսեց ազգայնական խմբավորումների մասին, որոնց Սերբիան գոյության իրավունք էր տվել, նաև Սերբիայի մտադրության մասին՝ անեքսիայի ենթարկել Բոսնիան ու Հերցեգովինան: Ասաց, որ իր կառավարությունը կպնդի, որ Սերբիան վերացնի այդ խմբավորումները և հրաժարվի վերոնշյալ նկատառումներից: Ասաց նաև, որ ըստ ամենայնի անհրաժեշտ կլինի պատժիչ ջոկատ ուղարկել Սերբիա՝ Մեծն դուքսի սպանության նման անհանդուրժելի արարքները կանխելու համար: Այսպես ես առաջին տեղեկությունը ստացա հուլիսի 22-ի հայտնի վերջնագրի մասին:

Հուլիսի 4-ին Սուրբ Մարիա եկեղեցում կայացած Մեծն դուքսի և դքսուհու հոգեհանգստի պատարագին ներկա էր դիվանագիտական ողջ

կորպուսը: Եկեղեցին գտնվում էր Գրանդ Ռու դե Պերա փողոցում՝ Ավստրիայի դեսպանատնից ոչ հեռու: Եկեղեցուն մոտենալու համար անհրաժեշտ էր իջնել քարե քառասուն աստիճաններով: Ներքևում կանգնած էին դեսպանության բոլոր աշխատակիցները՝ ծառայողական համազգեստով, ձախ թևքերին՝ կրեպե սև ժապավեններ: Նրանք մեզ դիմավորում և ուղեկցում էին մեր տեղերը: Բոլոր դեսպանները նստած էին առաջին կարգում: Հիմա ես այդ ամենը վերհիշում եմ տարօրինակ զգացումով, քանի որ դա վերջին անգամն էր, երբ բոլորս նստած էինք կողք կողքի: Գեղեցիկ, արժանապատիվ պատարագ էր: Հիշում եմ այն հստակ ու պարզորոշ, քանի որ դրանից անմիջապես հետո պատկերը կտրուկ փոխվեց: Երբ պերճաշուք հագնված հոգևորականներն ավարտեցին արարողությունը, մենք հերթով սեղմեցինք Ավստրիայի դեսպանի ձեռքը, վերադարձանք մեր մեքենաների մոտ և Բոսֆորի ափով ուղևորվեցինք ութ մղոն ձգվող ճանապարհով, որ տանում էր Ամերիկայի դեսպանատուն:

Այդ օրը ոչ միայն մեր կողմից միջնադարյան ազնվականության սպանված ժառանգի հիշատակին հարգանքի տուրք մատուցելու օրն էր, այլև Հուլիսի 4-ն էր[1]. այդ երկու իրադարձությունները խորհրդանշում էին ազգային երկու իդեալներ: Հաճախ եմ վերհիշում դեսպանների այն խումբը, որ իջնում էր եկեղեցուց սկիզբ առնող քարե աստիճաններով և Մեծն դուքսի հիշատակը պատվելուց հետո շարժվում դեպի տոնականորեն զարդարված Ամերիկայի դեսպանատուն՝ տոնելու Անկախության հռչակագրի օրը: Նեղուցում կանգնած օտարերկրյա բոլոր նավերը զարդարված էին՝ ի պատիվ մեր ազգային տոնի, իսկ դեսպաններն ու հավատարմատարները ներկայանում էին մեդալներով պատված շքերթային համազգեստով: Վերին այգիներից երևում էր այն վայրը, ուր 2500 տարի առաջ իր պարսկական բանակով Ասիայից ներխուժեց Դարեհը՝ մեկ այլ պատմական բռնակալ, ում ցեղը դեռևս ամբողջությամբ չի վերացել: Այնտեղ էր նաև հիասքանչ «Ռոբերտ քոլեջը»՝ մի հաստատություն, որը ներկայացնում էր Օսմանյան կայսրություն «ներթափանցելու» ամերիկյան գաղափարը: Գիշերը այգիները լուսավորվում էին չինական լապտերով: Ամերիկյան ավանդական հրավառությունը, որ լուսավորում էր շրջակա սարերն ու Բոսֆորը, և Ամերիկայի դրոշը, որ ծածանվում էր շենքի առջև, կարծես մարտահրավեր էին նետում բռնակալության անթաքույց ներկայությանը, ինչին բախվեցինք օրվա առաջին կեսին: Նեղուցի մյուս

[1] Միացյալ Նահանգների ազգային տոնը՝ Անկախության օրը, Լ.Թ.:

կողմում՝ մոտ մեկ մղոն հեռավորությամբ, մութ ու մռայլ ասիական սարերում, որ դարեր շարունակ եղել են ռազմատենչ բռնակալների ծննդավայրը, թույլ արտացոլվում էին այդ լույսերի խորհրդավոր ցոլքերը:

Եկեղեցում, նաև մեր ընդունելության ժամանակ դեսպանների խմբին նայելիս զարմանքով նկատեցի, որ մի ծանոթ դեմք չի երևում. Վանգենհայմը՝ Ավստրիայի դաշնակիցը, այնտեղ չէր: Այդ պահին դա ինձ խիստ զարմացրեց, սակայն ավելի ուշ բացատրություն ստացա անձամբ նրանից: Նա մի քանի օր առաջ մեկնել էր Բեռլին: Կայսրը նրան հրամայել էր ներկայանալ կայսերական խորհրդին, որը հավաքվել էր հուլիսի 5-ին: Խորհուրդը որոշում էր կայացրել Եվրոպան նետել պատերազմի մեջ:

ԳԼՈՒԽ IV

Գերմանիան մոբիլիզացնում է թուրքական բանակը

Օգոստոսին հրատարակված թերթերում, որոնց էջերում նկարագրվում էր Եվրոպայում ընթացող զորահավաքը, ինձ առանձնապես զարմացնում էր համատարած հիացմունքը, որով նկարագրվում էր այն վերամբարձ ոգին, որը մեկ գիշերվա ընթացքում բնակչությունը վերածեց զինվորականների: Այդ օրերին Թուրքիան դեռևս պատերազմի մեջ չէր, և երկրի քաղաքական ղեկավարներն ի լուր աշխարհի հայտարարում էին խիստ չեզոքություն պահպանելու իրենց մտադրության մասին: Հակառակ այդ խաղաղասեր հայտարարություններին՝ Կոստանդնուպոլսում ծավալվող իրադարձությունները գրեթե նույնքան ռազմաշունչ էին, որքան եվրոպական մայրաքաղաքներում տեղի ունեցող դեպքերը: Թեև Թուրքիան պատերազմ չէր հայտարարել, սակայն երկրի բանակը հավաքագրվում էր, ինչպես մեզ բացատրեցին՝ նախազգուշական նկատառումներով: Սակայն այն տեսարանները, որոնց ես ականատես եղա Կոստանդնուպոլսում, նման չէին այն տենդոտ իրավիճակին, որ տիրում էր Եվրոպայի բոլոր քաղաքներում: Սովորաբար տղամարդկանց ռազմատենչ հայրենասիրությունը, կանանց վեհ համբերությունն ու անձնազոհությունը երբեմն որոշակի հերոսական երանգներ են հաղորդում պատերազմներին, սակայն Թուրքիայում տիրում էր համընդհանուր հուսալքում ու թշվառություն: Փողոցներով ամեն օր անցնում էին խայտաբղետ օսմանական խմբեր, գունավոր հագուստ հագած բոկոտն արաբներ՝ ուսերին գցած կտավե երկար պարկերով, որոնք պարունակում էին հնգօրյա անհրաժեշտ սննդապաշար: Դանդաղաքայլ, շփոթահար նրանք շարժվում էին ուս ուսի նույնքան հուսահատ բեդվինների կողքին, որոնց անսպասելի դուրս էին հանել անապատից ու զենքի կոչել:

Իրենց խանութներից, ագարակներից դուրս հանված ու այստեղ քշված թուրքերի, չերքեզների, հույների, քրդերի, հայերի, հրեաների խայտաբղետ խմբերը քայլում էին՝ միմյանց հրմշտելով: Նրանց մեծ մասը ցնցոտիներով էր և սովալլուկ: Ամեն ինչ մատնում էր նրանց հուսալքությունն ու անասնական հնազանդությունը ճակատագրին, ինչից խուսափելն անհնար էր: Վերահաս մարտի հրճվանք, առավել ևս սեփական անձը հանուն մեծ գործի զոհաբերելու խանդավառություն չկար: Իրար հետևից անցնում էին օրեցօր փլուզվող կայսրության ակամա զավակները, ընկած մի կայսրության, որը հուսահատության վերջին ճիգն էր անում՝ զինվելու կռվի համար:

Այս թշվառ արարածները չէին հասկանում, թե ինչ ուժ է իրենց քաշել-բերել երկրի բոլոր անկյուններից: Նույնիսկ մենք՝ դիվանագիտական կորպուսի անդամներս, լավ չէինք պատկերացնում իրավիճակը: Ավելի ուշ մենք իմացանք, որ մարդկանց այս հավաքագրման հրամանը ստացվել էր ոչ թե Էնվերից կամ Թալեաթից, կամ էլ Թուրքիայի կառավարությունից, այլ Բեռլինի Գերագույն հրամանատարությունից և Կոստանդնուպոլսում գտնվող նրա ներկայացուցիչներից: Իրականում այդ բարդ օպերացիան ղեկավարում էին Լիման ֆոն Սանդերսը և Բրոնսարը: Գերմանական ակտիվ գործունեության անհերքելի նշաններ կային: Այն պահին, երբ գերմանական բանակը հատեց Հռենոսը, Կոստանդնուպոլսից մի քանի մղոն այն կողմ սկսվեցին հզոր ռադիոկայանի կառուցման աշխատանքները: Ողջ շինանյութը բերվում էր Գերմանիայից՝ Ռումինիայի տարածքով, իսկ բարձրակարգ վարպետները, որ աշխատում էին լուսաբացից մինչև մայրամուտ, անկասկած, գերմանացիներ էին: Անշուշտ, չեզոքության օրենքներն արգելում էին պատերազմող երկրի կողմից նման կայանի կառուցումը չեզոք երկրում, ինչպիսին Թուրքիան էր: Ուստի պաշտոնապես հայտարարվեց, թե վեր խոյացող այս շինությունը կառուցվում է գերմանական ընկերության կողմից Թուրքիայի կառավարության համար սուլթանի սեփականությունը հանդիսացող տարածքում: Սակայն այդ հորինվածքը ոչ ոքի չէր կարող մոլորեցնել: Վանգենհայմը՝ Գերմանիայի դեսպանը, այդ շինության մասին՝ որպես գերմանականի, խոսում էր մշտապես ու անկաշկանդ:

«Տեսե՞լ եք մեր անլար կապը, - հարցնում էր նա ինձ, - գնա՛նք, գնանք տեսեք»: Նա հպարտությամբ ասաց, որ կայանն ամենահզորն է աշխարհում, այնքան հզոր, որ ի զորու է որսալու էյֆելյան աշտարակից արձակված բոլոր ազդանշանները: Վանգենհայմն ավելացրեց նաև, որ այդ կայանը նրան մշտապես կապի մեջ կպահի Բեռլինի հետ: Նրան այնքան քիչ էր մտահոգում կայանի գերմանական պատկանելությունը թաքցնելու խնդիրը, որ երբ սովորական հեռագրակապը խափանվում էր, ինձ առաջարկում էր հեռագիր ուղարկելու համար օգտվել վերոհիշյալ կայանից:

Ընդունիչ կայանը, թեև ոչ բացահայտ, Թուրքիայի ու Բեռլինի միջև առկա կապի արտաքին խորհրդանիշն էր: Նման հսկա կայանի կառուցումը բավական երկար տևեց, և այդ ժամանակահատվածում Վանգենհայմն օգտագործում էր «Կորկովադոյի»՝ Բոսֆորի նեղուցում, Գերմանիայի դեսպանատան դիմաց խարիսխ ձգած գերմանական առևտրական նավի հաղորդիչ սարքերը: Գործնական նպատակների համար Վանգենհայմը մշտապես հեռախոսային կապ ուներ Բեռլինի հետ:

Մոբիլիզացիայի ընթացքում գերմանացի սպաները գրեթե նույնքան ակտիվ էին, որքան թուրքերը: Նրանք մեծագույն հաճույք էին ստանում այդ գործից և, իրոք, թվում էր, թե իրենց կյանքի լավագույն օրերն են ապրում: Բրոնսարը, Հումանը և Լաֆերցը մշտապես էնվերի կողքին էին, հուշում, ղեկավարում էին գործողությունները: Ամեն օր հսկայական ավտոմեքենաներով, որ բռնագրավել էին քաղաքացիական բնակչությունից, գերմանացի սպաները սլանում էին քաղաքի փողոցներով: Գիշերները նրանք հավաքվում էին ռեստորաններում, զվարճանքի այլ հաստատություններում և ներկա վիճակի հետ կապված իրենց ցնծությունն արտահայտում՝ կլանելով մեծ քանակությամբ շամպայն, որը նույնպես բռնագրավված էր: Առանձնահատուկ աղմկոտ և վառ անհատականություն էր ֆոն դեր Գոլց փաշան: Փողոցներով նա անցնում էր գրեթե թագավորական շուքով, հսկա, շլացուցիչ ավտոմեքենայով, որի երկու կողմերին պատկերված էին գերմանական փայլփլուն արծիվներ: Առջևում նստած շեփորահարը բարձր, հանդուգն ազդանշաններ էր տալիս անցնող ավտոմեքենաներին: Աստվա՛ծ մի արասցե, եթե որևէ թուրք կամ այլազգի հայտնվեր նրանց ճանապարհին: Գերմանացիները չէին թաքցնում իրենց համոզմունքը, որ իրենք քաղաքի տերերն են: Ճիշտ այնպես, ինչպես Վանգենհայմը մի փոքր «*Վիլհելմշտրասսե*»[7] էր հաստատել իր դեսպանատանը, այնպես էլ գերմանացի զինվորականներն այստեղ հաստատել էին Բեռլինի Գլխավոր շտաբի «ենթակայան»: Նրանք նույնիսկ իրենց տիկնանց ու երեխաներին էին բերել Գերմանիայից: Բարոնուհի Վանգենհայմը մի առիթով ասաց, որ Գերմանիայի դեսպանատանն ունի իր սեփական «արքունիքը»:

Գերմանացիները, սակայն, միակն էին, ում գոհացնում էր այս իրավիճակը: Մոբիլիզացիայի ժամանակ կատարվող բռնագրավումներն իրականում վերածվեցին քաղաքացիական բնակչության անթաքույց կողոպուտի: Բռնագրավում էին բոլոր ձիերը, ջորիները, ուղտերը, ոչխարները, կովերը և այլ կենդանիներ, ինչ նրանց ձեռքն էր ընկնում: Էնվերն ասաց ինձ, որ հարյուր հիսուն հազար կենդանի են բռնագրավել: Եվ այդ ամենը կատարվում էր բացարձակ անշնորք, առանց մտածելու կենդանիներին պահելու մասին. շատ գյուղերում մնացել էր միայն երկու կով կամ երկու ձի: Բռնագրավման այդ մեթոդը, որի մասին ես դեռ կխոսեմ, ունեցավ իր անխուսափելի հետևանքը. ոչնչացվեց երկրի գյուղատնտեսությունը, ինչի հետևանքով հարյուրհազարավոր մարդիկ դատապարտվեցին սովի: Սակայն թուրքերը գերմանացիների պես կարծում էին, թե պատերազմը երկար չի տևի, որ իրենք արագ կվերականգնեն այն կորուստները, որ կրում էր գյուղական բնակչությունը բանակը մթերքով

ապահովելու նրանց մեթոդներից: Կառավարությունը լկտի ու անհեռատես էր նաև առևտրականներից ու խանութպաններից նրանց ունեցվածքը բռնագրավելու հարցում: Այդ գործողությունները չէին տարբերվում ավազակային կողոպուտից: Սակայն առևտրականների շարքում մահմեդականներ գրեթե չկային. դրանք հիմնականում քրիստոնյաներ էին ու սակավաթիվ հրեաներ: Այդպիսով թուրք պաշտոնյաները ոչ միայն ապահովում էին բանակի կարիքները, այլև լցնում իրենց գրպանները և կրոնական հրճվանք ապրում, որ կողոպտում են անհավատներին: Մտնելով խանութ՝ բառացիորեն հավաքում էին ամեն ինչ, փոխարենը թողնում ստացական, որ պարզապես թղթի մի կտոր էր, քանի որ կառավարությունն այդպես էլ չէր վճարել Իտալական ու Բալկանյան պատերազմների ժամանակ բռնագրավված ապրանքների դիմաց: Վաճառականները չէին էլ ակնկալում որևէ փոխհատուցում նաև այս վերջին բռնագրավումների դիմաց: Հետագայում նրանք, ովքեր լավ էին պատկերացնում պետական համակարգը և քաղաքական կապեր ունեին, կարողացան վերականգնել իրենց ունեցվածքի մինչև 70 տոկոսը, իսկ մնացած 30 տոկոսի ճակատագիրը գաղտնիք չէր նրանց համար, ովքեր թուրք բյուրոկրատների հետ շփվելու փորձ ունեին:

Այսպիսով, բնակչության հիմնական մասի համար բռնագրավումը նշանակում էր ֆինանսական կործանում: Այն փաստը, որ իրականում դա կողոպուտ էր, պարզ էր դառնում այն ապրանքներից, որոնք վերցնում էին՝ իբր զինվորների համար: Այսպես օրինակ՝ սպաները հափշտակում էին իրենց ձեռքն ընկած բուրդը, որոշ դեպքերում տանում էին նաև կանացի մետաքսե գուլպաներ, սեղմիրաններ, մանկական հողաթափեր: Ես լսել եմ նաև մի դեպքի մասին, երբ նրանք թուրքական մթերային խանութը լցրել էին նրբահամ, հազվագյուտ ուտելիքով, այդ թվում՝ խավիարով: Մի վաճառականից, որը կանացի սպիտակեղեն էր վաճառում, պահանջել էին վերմակներ, և քանի որ նա չուներ, ինչ ցանկանում էին, վերցրել էին այն, ինչ եղել էր: Ավելի ուշ նա իր սեփական ապրանքը տեսել էր մրցակից վաճառականների խանութների ցուցափեղկերում: Թուրքերը նման ձևով էին վարվում նաև բազմաթիվ այլ հարցերում: Իշխող գաղափարն էր՝ հափշտակել եղած ամեն տեսակի շարժական գույք և այն վերածել դրամի: Թե ուր էր գնում այդ փողը, ինձ հայտնի չէ, սակայն գիտեմ, որ շատերն այդ միջոցով հարստություն դիզեցին: Ես էնվերին ասացի, որ մոբիլիզացման և բռնագրավման բիրտ մեթոդները կործանում են երկիրը: Շատ շուտով Թուրքիայում տարածվեց սով ու տառապանք: Չորս միլիոն տղամարդկանցից ավելի քան մեկուկես միլիոնը զորակոչվեց, ինչի հետևանքով մոտավորապես մեկ միլիոն ընտանիք մնաց առանց ապրուստ վաս-

տակողի՝ հայտնվելով ծայրահեղ չքավոր վիճակում: Թուրքական կառավարությունը զինվորներին ամսական վճարում էր 25 սենթ, իսկ ընտանիքներին ամսական տալիս էր 1.20 դոլար օժանդակություն: Այդպիսով հազարավոր մարդիկ սովամահ եղան, շատ շատերը հյուծվեցին թերսնումից: Կարծում եմ, որ պատերազմ սկսելուց ի վեր կայսրությունը կորցրեց իր թուրք բնակչության մեկ քառորդը: Ես հարցրի Էնվերին, թե ինչու է թույլ տալիս, որ իր ժողովուրդը կործանվի: Սակայն հայրենակիցների տառապանքները նրան չէին մտահոգում: Նա շատ ավելի տպավորված էր սեփական ընդունակությամբ՝ փաստորեն առանց դրամի մեծ բանակ հավաքել, մի բան, որ, ինչպես ինքն էր գոռոզաբար հայտարարում, որևէ պետության երբևէ չէր հաջողվել: Դրան հասնելու համար Էնվերը հրաման էր արձակել, համաձայն որի՝ հավաքագրումից խուսափելը հավասարազոր էր դասալքության և պատժվում էր մահով: Նա նաև հաստատեց մի կարգ, ըստ որի՝ օսմանյան յուրաքանչյուր հպատակ, վճարելով 190 դոլար, կարող էր ազատվել զինվորական ծառայությունից: Էնվերը վստահ էր, որ մեծ գործ է արել: Սա Էնվերի համար իր անսահման իշխանության առաջին ապացույցն էր, որը նրան չափազանց դուր էր գալիս:

Այն, որ գերմանացիներն էին ղեկավարում մոբիլիզացիան, ոչ թե կարծիք է, այլ փաստ: Ապացուցելու համար կարող եմ նշել, որ գերմանացիներն ապրանքներ էին բռնագրավում իրենց անունից, իրենց իսկ կարիքների համար: Ես ունեմ բռնագրավման տեսարանի մի լուսանկար, որը կատարել էր Հումանը՝ Գերմանիայի ծովային կցորդը. բռնագրավվածը քուսպի նավաբեռ էր: Փաստաթուղթը թվագրված է՝ 1914թ., սեպտեմբերի 29: «Դերինջե» շոգենավի ուղեբեռը, որը հիշատակում եք սեպտեմբերի 26-ի ծեր նամակում, իմ կողմից բռնագրավվել է Գերմանիայի կառավարության օգտին», - գրված է այնտեղ: Սա հստակ ապացուցում է, որ Թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնելուց դեռևս մեկ ամիս առաջ Գերմանիան ինքնիշխան գործում էր Կոստանդնուպոլսում:

ԳԼՈՒԽ V

Վանգենհայմը զարտուղի ճանապարհով անցկացնում է «Գեբեն» և «Բրեսլաու» ռազմանավերը Դարդանելի նեղուցով

Օգոստոսի 10-ին ճանապարհ ընկա դիմավորելու «Սիցիլիա» իտալական փոքր նավը, որը հենց նոր էր ժամանել Վենետիկից: Այդ նավն ինձ համար առանձնահատուկ նշանակություն ուներ. դրանով ժամանում էին դուստրս ու նրա ամուսինը՝ Մորիս Վերթհայմը, և նրանց երեք փոքրիկ աղջիկները: Ուղևորները բավականին հուզված էին, քանի որ Հոնիական ծովում ականատես էին եղել ծովամարտի:

«Մենք նախաճաշում էինք տախտակամածին, - պատմեց դուստրս, - երբ հորիզոնում նկատեցի երկու տարօրինակ նավեր: Անմիջապես բերեցի հեռադիտակս և տեսա երկու հսկա ռազմանավեր. մեկն ուներ երկու արտառոց, տարօրինակ աշտարակներ, մյուսը բավական սովորական տեսք ունեցող ռազմանավ էր: Նկատեցինք նաև մեկ այլ նավ, որը թիկունքից արագ մոտենում էր այս երկու նավերին: Այնուհետև լսվեց հրացանային համազարկ: Ջուրը վեր ցայտեց, օդում ծխի ճերմակ քուլաներ հայտնվեցին: Մի որոշ ժամանակ անհասկանալի էր, թե ինչ է կատարվում, հետո հանկարծ պարզ դարձավ, որ մենք ծովամարտի վկա ենք դարձել: Նավերն անվերջ խուսանավում էին, հետո երկու մեծ նավերը շրջադարձ կատարեցին և կատաղի գրոհեցին փոքր նավի վրա: Հետո, չգիտես ինչու, հետ դարձան: Այնուհետև փոքր նավը փոխեց ուղղությունը և հանգիստ ընթացավ դեպի մեր շոգենավը: Ես փոքր-ինչ վախեցած էի, սակայն այլևս ոչինչ չկատարվեց: Նավը պտույտ կատարեց մեր շուրջը: Անձնակազմի մրոտ դեմքերով անդամները ոգևորված ժպտում էին: Նրանք ազդանշաններով բազմաթիվ հարցեր էին տալիս մեր նավապետին, հետո շրջվեցին ու վերջապես հեռացան: Նավապետն ասաց, որ երկու խոշոր նավերը գերմանական են, որոնց կալանել էին Միջերկրական ծովում, և որոնք առայժմ փորձում էին խուսափել բրիտանական նավերից: Ասաց նաև, որ բրիտանական նավերը դրանց հետապնդում են ողջ Միջերկրականով, իսկ գերմանական նավերը փորձում են հասնել Կոստանդնուպոլիս»:

- Դու որևէ բան լսե՞լ ես այդ մասին: Ի՞նչ ես կարծում, որտե՞ղ է հիմա բրիտանական նավատորմը, - հարցրեց ինձ դուստրս:

Մի քանի ժամ անց ես պատահաբար հանդիպեցի Վանգենհայմին: Երբ պատմեցի դստերս տեսածը, նա մեծ հետաքրքրություն ցուցաբերեց: Նախաճաշից անմիջապես հետո Վանգենհայմն Ավստրիայի դես-

պան Պալավիչինիի հետ այցելեց Ամերիկայի դեսպանատուն և հանդիպում խնդրեց իմ դստեր հետ: Երկու դեսպաններն ամենայն լրջությամբ նստեցին նրա դիմաց և ենթարկեցին թեև քաղաքավարի, սակայն քողարկված հարցաքննության: Հանդիպումից հետո դուստրս ինձ ասաց. «Կյանքումս ինձ այդ աստիճանի կարևոր անձ չէի զգացել»: Նրանց հետաքրքրում էր ամեն մի մանրուք. հարցնում էին, թե քանի կրակոց է արձակվել, ինչ ուղղությամբ են հեռացել գերմանական նավերը, «Սիցիլիայի» ուղևորներից յուրաքանչյուրն ինչ ասաց և այլն, և այլն: Այս այցելությունը դաշնակից դեսպաններին, կարծում եմ, հոգու աներևակայելի հանգստություն ու բավարարվածություն բերեց, քանի որ նրանք մեզանից հեռացան բարձր տրամադրությամբ: Թվում էր, թե նրանց ուսերից ծանր բեռ է ընկել: Անշուշտ, նման լավատեսության պատճառ կար. դուստրս հայտնեց դեսպաններին մի նորություն, որ նրանք ամենից շատ էին ցանկանում լսել՝ գերմանական նավերը ճողոպրել են բրիտանական ռազմանավերից և սլանում են դեպի Դարդանել: Այն նավերը, որոնց ծովամարտին բրիտանական նավի հետ ականատես էր եղել դուստրս, իրականում գերմանական «Գեբեն» և «Բրեսլաու» ռազմանավերն էին:

Հաջորդ օրը պաշտոնական այցով ներկայացա Գերմանիայի դեսպանատուն: Սակայն ոգևորված Վանգենհայմը տրամադրված չէր առօրյա հարցեր քննարկելու: Ես նրան երբեք այդ աստիճանի նյարդային ու ոգևորված չէի տեսել: Մի քանի րոպեից ավելի չէր կարողանում նստել. վեր էր ցատկում, նետվում դեպի պատուհանը և անհանգիստ հայացք ձգում Բոսֆորի ուղղությամբ, ուր մոտավորապես երեք քառորդ մղոն հեռավորությամբ գտնվում էր նրա մասնավոր «Կորկովադո» ընդունիչ կայանը: Նրա դեմքն այրվում էր, աչքերը փայլում էին: Հետուառաջ քայլում էր սենյակում, մերթ խոսում իրենց վերջին հաղթանակի մասին, մերթ կրկին նետվում էր դեպի պատուհանը և հայացք գցում «Կորկովադոյի» ուղղությամբ:

- Ինչ-որ բան լրջորեն շեղում է Ձեր ուշադրությունը, - ասացի ես՝ տեղիցս վեր կենալով, - ավելի լավ է ես գնամ, մեկ ուրիշ անգամ կգամ:

- Ո՛չ, ո՛չ, - բացականչեց Վանգենհայմը, - մնացեք, խնդրում եմ, սա պանծալի օր է լինելու Գերմանիայի համար: Եթե մի քանի րոպե էլ մնաք, կարևոր նորություն կիմանաք. այն ուղղակիորեն վերաբերում է Թուրքիայի առնչությանն այս պատերազմին:

Հետո շտապեց պատշգամբ և կախվեց բազրիքից: Նույն պահին ես նկատեցի, որ «Կորկովադոյից» ինչ-որ բան նետեցին դեպի դեսպանի բակը: Վանգենհայմը ցած սլացավ, ինչ-որ ծրար խլեց այն գետնից վերցրած նավաստու ձեռքից և մեկ վայրկյան անց վերադարձավ սենյակ:

- Դրանք այստեղ են, - գոչեց նա:

- Ի՞նչն է այստեղ:

- «Գեբենն» ու «Բրեսլաուն» անցել են Դարդանելը:

Քոլեջի ուսանողի ոգևորությամբ, ում թիմը հաղթել է ֆուտբոլային խաղում, նա օդում թափահարեց հեռագիրը: Հետո անմիջապես զսպեց իրեն, լուրջ դեմքով մոտեցավ ինձ, կատակով թափահարեց մատը, հոնքերը բարձրացրեց ու ասաց.

- Դուք, անշուշտ, հասկանում եք, որ մենք այդ նավերը վաճառել ենք Թուրքիային, իսկ ծովակալ Սուշոնը, - Վանգենհայմն այստեղ աչքով արեց, - կծառայի սուլթանին:

Վանգենհայմը պատճառներ ուներ հրճվանք ապրելու: Այդ երկու նավերի ժամանումը նրա դիվանագիտական կարիերայի ամենանշանակալի իրադարձությունն էր: Դա, իրոք, Գերմանիայի առաջին դիվանագիտական հաղթանակն էր: Տարիներ շարունակ Վանգենհայմն անթաքույց հավակնում էր Գերմանիայի կանցլերի պաշտոնին և հիմա գործում էր իբրև մի անձնավորություն, ով չափազանց մոտ է իր նպատակին: «Գեբենի» ու «Բրեսլաուի» ժամանումը նրա անձնական հաղթանակն էր: Թուրքական կառավարության հետ Վանգենհայմը կարգավորել էր այդ նավերի անցումը Դարդանելով ու հեռագրակապով ուղղորդել դրանց տեղաշարժը Միջերկրական ծովում: Նշված երկու նավերն անվնաս հասցնելով Կոստանդնուպոլիս՝ Վանգենհայմը, անկասկած, վերջապես կնքեց թուրք-գերմանական դաշինք: Նրա երեք տարվա խարդավանքներն ու գաղտնախաղերը վերջապես պսակվեցին հաջողությամբ: Թերևս գոյություն չունեն երկու այլ նավեր, որոնք նույնքան նշանակալի ազդեցություն ունեցած լինեն պատմության ընթացքի վրա, որքան գերմանական այդ երկու ռազմանավերը: Այն պահին մեզանից քչերն էին գիտակցում դրանց կարևորությունը, սակայն հետագա իրադարձությունները լիովին արդարացրին Վանգենհայմի ոգևորությունը: «Գեբենը» վերջին սերնդի հզոր ռազմանավ էր, իսկ «Բրեսլաուն» մեծ նավ չէր, սակայն սա էլ «Գեբենի» նման կարող էր շարժվել մեծ արագությամբ, ինչը չափազանց կարևոր էր այդ ջրերում: Պատերազմին նախորդող մի քանի ամսվա ընթացքում այդ երկու նավերը շրջում էին Միջերկրականում և պատերազմը սկսվելու պահին թարմացնում էին իրենց պաշարները Մեսինայում: Ես միշտ այն կարծիքին եմ եղել, որ այդ երկու նավերի (դրանք ավելի արագաշարժ էին, քան Միջերկրականում գտնվող ֆրանսիական կամ անգլիական որևէ նավ) առկայությունը Թուրքիայի ափերից ոչ հեռու, հենց այն պահին, երբ բռնկվեց պատերազմը, պատահականություն չէր: Առանձնապես հաջող էր հենց «Գեբենի» ընտրությունը, քանի որ այն

արդեն երկու անգամ «այցելել էր» Կոստանդնուպոլիս, և նավի սպաներն ու ողջ անձնակազմը ծանոթ էին Դարդանելին: Երկու նավերի անձնակազմերը պատերազմի լուրը ստանալու պահին այնքան ոգևորված էին, որ սկսեցին երգել ու պարել, բարձրացրին ծովակալին իրենց ուսերի վրա և իսկական գերմանական տոնախմբություն արեցին: Ասում են, որ ծովակալ Սուշոնը որպես այդ օրվա հիշատակ պահել է իր ճերմակ համազգեստը. այն ծածկված էր նավաստիների աղտոտ ձեռքերի հետքերով:

Հակառակ այն հրճվանքին, որ խոստանում էր ճակատամարտի ակնկալիքը, այդ երկու նավերը դեռևս գտնվում էին բավական վտանգավոր վիճակում. դրանք չէին կարող մրցել բրիտանական ու ֆրանսիական ծովային հզոր ուժերի հետ, որոնք շրջում էին Միջերկրական ծովում: «Գեբենն» ու «Բրեսլաուն» հեռու էին իրենց ծովային հենակայաններից, ածխի պաշարը լրացնելը լուրջ խնդիր էր, քանի որ Անգլիան վերահսկում էր բոլոր կարևոր հանգուցային կայանները: Դրանք որտե՞ղ կարող էին անվտանգ ապաստան գտնել: Մեսինայում գերմանական նավերի շուրջը պտտվում էին մի քանի իտալական կործանիչներ՝ պարտադրելով չեզոքություն և պարբերաբար հիշեցնում էին, որ այդ նավահանգստում նրանք կարող են մնալ միայն քսանչորս ժամ: Դեպի Ավստրիայի Պոլա նավահանգիստ նրանց ճանապարհը կտրելու նպատակով Բրիտանիան նավեր էր տեղակայել Օտրանտոյի ծովածոցում՝ Ադրիատիկ ծովի վերին մասում: Բրիտանական նավատորմը հսկում էր նաև Ջիբրալթարն ու Սուեզի ջրանցքը՝ փախչելու մյուս երկու հնարավոր ուղիները: Միայն մեկ վայր գոյություն ուներ, որտեղ «Գեբենն» ու «Բրեսլաուն» կարող էին ապաստան և բարեկամական վերաբերմունք գտնել՝ Կոստանդնուպոլիսը: Ակնհայտ էր, որ բրիտանական ուժերն այդ տարբերակը բացառել էին՝ համարելով այն անհնարին: Օգոստոսի առաջին օրերին միջազգային իրավունքը՝ որպես ազգերի միջև վարվելակերպի ուղեցույց, դեռևս ամբողջովին չէր վերացել: Այդ պահին Թուրքիան չեզոք երկիր էր և հակառակ գերմանական ազդեցության բազում վկայությունների՝ թվում էր, թե այդպիսին էլ կմնա: Փարիզի պայմանագիրը, որը ստորագրվել էր 1856 թվականին, ինչպես նաև 1871 թվականին ստորագրված Լոնդոնի պայմանագիրն արգելում էին ռազմանավերի մուտքը Դարդանել, բացառությամբ՝ սուլթանի հատուկ թույլտվության, որը, սակայն, կարող էր տրվել միայն խաղաղ պայմաններում: Իրականում կառավարությունը հազվադեպ էր տալիս այդ թույլտվությունը, բացառությամբ արարողակարգային դեպքերի: Ներկա պահին սուլթանի կողմից ռազմանավերի Դարդանել մուտք գործելու արգելքի վերացումը հավասարազոր կլիներ ոչ բարեկամական ակցիայի, իսկ «Գեբենին» ու «Բրեսլաուին» թույլ տալ

մնալ Թուրքիայի տարածքային ջրերում քսանչորս ժամից ավելի հավասարազոր կլիներ պատերազմ հայտարարելուն: Զարմանալի չէ, որ 1914թ. օգոստոսի առաջին օրերին, երբ Գերմանիան դեռևս պաշտոնապես չէր հստակեցրել իր դիրքորոշումն առ այն, որ «միջազգային իրավունք այլևս գոյություն չունի», անգլիացիները մտածում էին, որ նշված պայմանագրերի դրույթները բավարար հիմք են գերմանական նավերը Դարդանելից և Կոստանդնուպոլսից հեռու պահելու համար: Հիմնվելով այդ պայմանագրերի անխախտելիության վրա՝ բրիտանական նավատորմը փակել էր բոլոր ելքերը, որտեղից գերմանական այդ երկու նավերը կարող էին ճողոպրել. բացառություն էր Դարդանելը: Եթե Մեծ Բրիտանիան պատերազմ հայտարարելու պահին հզոր նավատորմ ուղարկեր կենսականորեն կարևոր այդ կետը, վերջին երեք տարիների պատմությունը բոլորովին այլ կլիներ:

«Նորին մեծությունն ակնկալում է, որ «Գեբենն» ու «Բրեսլաուն» կկարողանան հաջողությամբ «պոկվել» հետապնդումից». նման հեռագիր էին ստացել վերոհիշյալ նավերը օգոստոսի 4-ի երեկոյան Մեսինայում: Նավահանգստում Իտալիայի կառավարության արտոնած քսանչորսժամյա ներկայության ժամկետը սպառվում էր: Նավահանգստից դուրս Օտրանտոյի նեղուցում, կանգնած էին անգլիական ռազմանավերը: Դրանք կեղծ ռադիոազդանշաններ էին ուղարկում գերմանացիներին՝ կարգադրելով շտապել դեպի Պոլա: Նվագախմբի երաժշտության և ծածանվող դրոշների ներքո արտասանած վերամբարձ ճառերից ու խմիչքից ոգևորված սպաներն ու անձնակազմը «Գեբենն» և «Բրեսլաուն» մեծ արագությամբ ուղղեցին դեպի նրանց սպասող բրիտանական նավերը: Անգլիական «Գլոչեսթր» փոքր հետախուզական նավը մերձակայքում էր և մշտական կապի մեջ էր բրիտանական ռազմանավերի հետ, որոնց հայտնում էր գերմանացիների տեղաշարժերի մասին: Հանկարծ անցնելով Սպարտիվենտո հրվանդանը «Գեբեն» ու «Բրեսլաու» ռազմանավերի ռադիոսարքերն այնպիսի աղմուկ-աղաղակ բարձրացրին, որ «Գլոչեսթրն» անկարող էր որևէ ընկալելի ազդանշան ուղարկել: Այնուհետև գերմանական նավերը շրջվեցին հարավ՝ ուղղություն վերցնելով դեպի էգեյան ծով: Փոքր, արագաշարժ «Գլոչեսթրը» նրանցից շատ չէր հեռանում և, ինչպես պատմում էր դուստրս, մեկ կամ երկու անգամ բավական հանդուգն փորձ էր կատարել նրանց ծովամարտի մեջ ներքաշելու:

Մի քանի ժամ ուշացումով բրիտանական նավատորմը փորձեց հետապնդել «Գեբենին» ու «Բրեսլաուին», սակայն ապարդյուն. գերմանական նավերը թեև պակաս հզոր էին մարտական պայմաններում, սակայն ավելի արագաշարժ էին: Նույնիսկ այդ պարագայում բրիտանացի

ծովակալը հավանաբար կարծում էր, թե ձախողել է գերմանացիների ծրագրերը: Գերմանական նավերը կարող էին հասնել Դարդանել, սակայն այնտեղ նրանց ուղին կփակեր միջազգային իրավունքը:

Այդ նույն ժամանակ Վանգենհայմը տոնում էր իր մեծ դիվանագիտական հաղթանակը: Բոսֆորում տեղակայված «Կորկովադոյի» ընդունիչ կայանից նա չափազանց հաճելի լուրեր էր հաղորդում ծովակալ Սուշոնին. նա ասում էր ծովակալին Դարդանել հասնելուն պես բարձրացնել թուրքական դրոշը, քանի որ Սուշոնի նավերն անսպասելիորեն դարձել էին թուրքական նավատորմի մասը, ուստի միջազգային արգելքն այլևս կիրառելի չէր. նշված ռազմանավերն արդեն «Գեբեն» ու «Բրեսլաու» չէին, քանի որ Վանգենհայմն արևելյան աճպարարի նման դրանք մեկ ակնթարթում դարձրել էր «Սուլթան Սելիմ» և «Մեդիլի»: Գերմանացի դեսպանը խելամտորեն օգտագործեց իրավիճակը՝ «առքուվաճառք» իրականացնելու համար: Ինչպես արդեն նշեցի, երբ սկսվեց պատերազմը, Թուրքիայի պատվերով երկու ռազմանավ էր կառուցվում Անգլիայում: Նավեր գնելը սոսկ պետական գործ չէր. գործարքը, համենայն դեպս, արտաքուստ արտահայտում էր թուրք ժողովրդի համազգային խանդավառությունը: Դրանք պետք է դառնային այն միջոցները, որոնք Թուրքիան կիրառելու էր Հունաստանի դեմ և հետ էր վերցնելու Էգեյան ծովում գտնվող կղզիները, իսկ թուրք ժողովուրդը փող էր հավաքել դրանք կառուցելու համար՝ կազմակերպելով այսպես կոչված համազգային դրամահավաք: Գործակալները շրջում էին տնից տուն՝ դժվարությամբ հավաքելով փոքր գումարներ: Այդ առիթով կազմակերպվում էին զվարճանքներ ու տոնավաճառներ, և ի հավաստումն իրենց նվիրումի՝ թուրք կանայք վաճառում էին իրենց զարդերն ընդհանուր գործին աջակցելու նպատակով: Այսպիսով, այդ երկու նավերը հայրենասիրության խանդավառ դրսևորումներ էին, ինչն արտասովոր երևույթ էր Թուրքիայի համար, իրականում այնքան արտասովոր, որ շատերի համար պարզ էր դարձել, որ դա կառավարության ձեռքի գործն է: Պատերազմը սկսվելու պահին Թուրքիան իր վերջին վճարումները կատարեց անգլիացի նավաշինարարներին, և թուրքական անձնակազմերը ժամանեցին Անգլիա՝ պատրաստի նավերը տուն տանելու համար: Սակայն նավերը հանձնելու վերջնաժամկետից մի քանի օր առաջ գործին միջամտեց բրիտանական կառավարությունը և կարգադրեց նավերը փոխանցել բրիտանական նավատորմին:

Կասկած չի կարող լինել, որ այդկերպ վարվելու համար Անգլիան ուներ ոչ միայն իրավական, այլև բարոյական հիմք: Այդ քայլի արդարացված լինելը նույնպես հարց չի առաջացնում, ինչպես նաև այն, որ

եթե Անգլիան նույնկերպ վարվեր որևէ այլ պետության հետ, դա վրդովմունք չէր հարուցի: Սակայն այդ ամենը թուրքերին բոլորովին չէր հետաքրքրում. թուրքերի համար փաստն այն էր, որ նրանք Անգլիայում ունեին երկու նավ, որոնք գնելու համար մեծ ջանքեր էին գործադրել, և որոնք Անգլիան խորամանկորեն խլեց իրենցից: Նման քայլը նրանց կվրդովեցներ նույնիսկ առանց դրսի ճնշման, սակայն դրսի ճնշումները չափազանց մեծ էին: Այդ գործարքը Վանգենհայմին ընձեռեց իր կյանքի մեծագույն հնարավորությունը. թուրքական մամուլը ողողված էր Անգլիային հասցեին արված կոպիտ հարձակումներով, որոնց հեղինակն էր Գերմանիայի դեսպանությունը: Թուրքիայի ղեկավարներին Վանգենհայմն անվերջ հիշեցնում էր Անգլիայի նենգության մասին և վստահեցնում, որ Գերմանիան՝ Թուրքիայի հավատարիմ բարեկամը, պատրաստ է փոխհատուցելու անգլիացիների «անօրինական» զավթման դիմաց: Նա Թուրքիային առաջարկեց կատարել «Գեբենի» ու «Բրեսլաուի» յուրատեսակ «առքուվաճառքը» և դրանք ընդգրկել թուրքական նավատորմում Անգլիայում բռնագրավված նավերի փոխարեն: Այդ պահին գերմանական վերոհիշյալ երկու նավերը շրջում էին Միջերկրական ծովում թերևս նման զարգացման ակնկալիքով: Այն նույն օրը, երբ երկու նավերն անցան Դարդանելով, Կոստանդնուպոլսում հրատարակվող «Ikdam» թուրքական օրաթերթը տպագրեց այդ «վաճառքի» հաղթական նկարագրությունը՝ վերնագրելով այն «Կառավարության նշանակալի հաջողությունը»:

Այսպիսով Վանգենհայմի խորամանկ հնարքը ծառայեց երկու նպատակի. նախ՝ Թուրքիայի բնակչությանը Գերմանիան ներկայացվեց որպես թուրք ժողովրդի բարեկամ, ապա՝ այն արդարացրեց նավերի մուտքը Դարդանել և թուրքական ջրերում դրանց գտնվելը: Այդ ամենը համոզիչ էր թուրք ժողովրդի առավել տգետ զանգվածի համար և հզոր փաստարկ էր կառավարության ձեռքին՝ Անտանտի դիվանագետների բողոքներին դիմակայելու համար: Սակայն ոչ մի խելամիտ մարդու այս ամենը մոլորեցնել չէր կարող: Թեև «Գեբենն» ու «Բրեսլաուն» անվանափոխվել էին, իսկ դրանց գերմանացի անձնակազմը ֆես էր դրել, բոլորիս էլ պարզ էր, որ այս պատմությունը սկզբից մինչև վերջ խաբեություն է: Նրանց, ում հայտնի էր Թուրքիայի ֆինանսական վիճակը, նման ժամանակակից նավեր գնելու հնարավորությունը կարող էր միայն զվարճացնել: Այդ նավերն այդպես էլ երբեք թուրքական նավատորմի մաս չդարձան. ավելին, թուրքական ողջ նավատորմը բռնագրավվեց այդ երկու նավերի օգտին: Մի կարճ ժամանակ համապատասխան տպավորություն գործելու նպատակով թուրք ծովայինների մի փոքր խումբ տեղակայվեց այդ

նավերում, սակայն այնտեղ ակտիվորեն շարունակում էին գործել գերմանացի սպաներն ու նավաստիները: Ինձ հետ զրուցելիս Վանգենհայմը երբեք չէր թաքցնում այն փաստը, որ վերոհիշյալ նավերը շարունակում են Գերմանիայի սեփականությունը մնալ: «Երբեք չէի ակնկալի, որ հարկադրված կլինեմ այդչափ խոշոր հաշիվներ փակել», - ասաց նա ինձ մի անգամ՝ ակնարկելով «Գեբենի» ու «Բրեսլաուի» հետ կապված ծախսերը: Դրանք նա միշտ կոչում էր «մեր նավերը»: Նույնիսկ Թալեաթն ինձ ասաց ոչ պակաս անկեղծ, որ վերոնշյալ ռազմանավերը Թուրքիային չեն պատկանում:

- Գերմանացիները պնդում են, թե նավերը պատկանում են թուրքերին, - նկատեց նա մի անգամ իրեն հատուկ քմծիծաղով: - Համենայն դեպս, սփոփիչ է դրանք այստեղ ունենալը: Պատերազմից հետո, երբ գերմանացիները հաղթեն, նրանք կմոռանան դրանց մասին ու կթողնեն նավերը մեզ, իսկ եթե պարտվեն, ի վիճակի չեն լինի դրանք մեզանից խլելու:

Գերմանական կառավարությունը չէր էլ փորձում ներկայացնել նավերի վաճառքը որպես ազնիվ գործարք: Երբ Բեռլինում Հունաստանի ներկայացուցիչը բողոքեց գործարքի դեմ՝ որպես Հունաստանի հանդեպ ոչ բարեկամական քայլի (միամտորեն «մոռանալով» այն նավերի մասին, որ Հունաստանը վերջերս գնել էր Ամերիկայից), գերմանացի պաշտոնյաները նրան հանգստացրել էին՝ շշուկով խոստովանելով, որ դրանք շարունակում են Գերմանիայի սեփականությունը մնալ: Սակայն երբ Անտանտի դեսպանները բողոքում էին գերմանական նավերի առկայության դեմ, թուրք պաշտոնյաները շարունակում էին համառորեն ձևացնել, թե դրանք Թուրքիայի նավատորմի անբաժանելի մասն են: Գերմանացի սպաներն ու ծովայինները մեծ հաճույք էին ստանում «Գեբենն» ու «Բրեսլաուն» իբրև թուրքական նավեր ներկայացնելու կեղծիքից: Հաճույքով իրենց գլխին ֆես էին դնում՝ աշխարհին անհերքելի ապացույց ներկայացնելով, թե Կայսեր այս հավատարիմ ծովայինները հիմա սուլթանի ռազմածովային ուժերի մասն են: Մեկ անգամ «Գեբենը» վեր լողաց Բոսֆորով, կանգ առավ Ռուսաստանի դեսպանատան առջև ու խարիսխ գցեց: Նավի ողջ անձնակազմը՝ սպաներն ու նավաստիները, շարվեցին տախտակամածին՝ հակառակորդի դեսպանատան դիմաց: Այնուհետև բոլորը միասին հանդիսավորությամբ հանեցին թուրքական ֆեսերն ու դրեցին գերմանական գլխարկներ: Գերմանացի նավաստիները նվագախմբի ուղեկցությամբ կատարեցին «Deutschland uber Alles», «Die Wacht am Rein»[8], ինչպես նաև գերմանական այլ երգեր: Մեկ ժամից ավելի ռուս դեսպանի պատվին «սերենադներ» կատարելուց հետո գերմանացի

սպաներն ու նավաստիները հանեցին իրենց գերմանական գլխարկները և կրկին դրեցին թուրքական ֆեսերը: Այնուհետև «Գեբենը» բարձրացրեց խարիսխը և թեքվելով հարավ՝ ուղղվեց դեպի իր կայանը: Նավը հանդարտ հեռանում էր՝ ռուս դիվանագետի հիշողության մեջ թողնելով գերմանական ռազմաշունչ երգերի հետզհետե թուլացող հնչյունները:

Ես հաճախ եմ խորհում այն մասին, թե ինչ կլիներ, եթե անգլիական ռազմանավերը, որ հետապնդում էին «Գեբենին» ու «Բրեսլաուին» մինչև Դարդանելի մուտքը, այդքան «օրինապաշտ ջենտլմեն» չգտնվեին և խախտեին միջազգային օրենքը: Ենթադրենք, թե նրանք էլ մտնեին նեղուց, գրոհեին գերմանական նավերի վրա Մարմարա ծովում ու խորտակեին դրանք: Նրանք կարող էին անել դա, և իմանալով այն ամենը, ինչ հայտնի է մեզ հիմա՝ նման գործողությունն արդարացված կլիներ: Հնարավոր է, որ այդ նավերի խորտակումը Թուրքիային հարկադրեր չմտնել պատերազմի մեջ, քանզի այդ նավերի ժամանումը Թուրքիայի համար անխուսափելի դարձրեց անհրաժեշտ պահին Գերմանիային միանալը: Այդ նավերն ավելի հզորացրին թուրքական նավատորմը Ռուսաստանի սևծովյան նավատորմիղի համեմատությամբ՝ երաշխավորելով, որ ռուսները Կոստանդնուպոլսի վրա չեն հարձակվի: Փաստորեն «Գեբենն» ու «Բրեսլաուն» գերմանացիների ու օսմանյան ռազմածովային ուժերի համար ապահովեցին Սև ծովի վերահսկումը: Ավելին, այս երկու նավերը կարող էին հեշտությամբ վերահսկել Կոստանդնուպոլիսը՝ գերմանացիներին հնարավորություն տալով անհրաժեշտության դեպքում ահաբեկել թուրքերին: Ես համոզված եմ՝ երբ որևէ խոհեմ պատմաբան վերլուծի այս պատերազմին վերաբերող փաստերը և դրանց հետևանքները, կհանգի այն եզրակացության, որ վերոհիշյալ գերմանական նավերի մուտքը Դարդանել անխուսափելի դարձրեց Թուրքիայի դաշինքը Գերմանիայի հետ այն պահին, երբ վերջինս ուներ դրա անհրաժեշտությունը, և որ դա փաստորեն վճռեց Օսմանյան կայսրության ճակատագիրը: Նույնիսկ այն օրերին թուրքական կառավարության մեջ կային մարդիկ, ովքեր գիտակցում էին դա: Կոստանդնուպոլսում խոսակցություններ էին պտտվում (ես դրանց վավերությունը չեմ երաշխավորի), թե կառավարության այն նիստը, որի ընթացքում կայացվել էր այդ բախտորոշ որոշումը, այնքան էլ հարթ չէր ընթացել: Խոսակցություններ կային, որ մեծ վեզիրն ու Ջեմալը դեմ էին եղել կեղծ վաճառքին և պահանջել էին, որ այն չկայանա: Երբ քննարկումները շիկացել էին, Էնվերը, որ վարում էր Գերմանիայի խաղը, հայտնել էր, որ արդեն ըստ էության կնքվել է «առքուվաճառքի» գործարքը: Հայտարարությանը հաջորդած լռության մեջ այդ երիտասարդ «Նապոլեոնը» հանել է ատրճանակը ու դրել սեղա-

նին: «Եթե որևէ մեկը ցանկանում է վիճարկել «առքուվաճառքը», - ասել է նա ցածրաձայն, - ես պատրաստ եմ»:

Մի քանի շաբաթ անց, երբ «Գեբենն» ու «Բրեսլաուն» արդեն մշտապես կառանվել էին Բոսֆորում, Ֆինանսների նախարար Ջավիդ բեյը պատահաբար հանդիպել էր բելգիացի հայտնի մի իրավաբանի, ով այդ օրերին Կոստանդնուպոլսում էր: «Ահավոր լուրեր ունեմ ձեզ համար, - ասել էր սրտացավ թուրք պաշտոնյան, - գերմանացիները զավթել են Բրյուսելը»: Բելգիացին, որ աժդահա, մոտ երկու մետր հասակ ունեցող անձնավորություն էր, մխիթարելով նրբակազմ թուրքին՝ ձեռքը դրել էր նրա ուսին. «Ես ձեզ համար ավելի ահավոր լուրեր ունեմ, - պատասխանել էր նա՝ ձեռքն ուղղելով նեղուցի կողմը, որտեղ խարիսխ էին գցել «Գեբենն» ու «Բրեսլաուն», - գերմանացիները գրավել են Թուրքիան»:

ԳԼՈՒԽ VI

Վանգենհայմը պատմում է ԱՄՆ դեսպանին՝ ինչպես Կայսրն սկսեց պատերազմը

Սակայն կար մի տեղ, որտեղ նշված գործարքն ընդունվեց ոգևորությամբ Գերմանիայի դեսպանությունը: Արագ խանդավառվող Վանգենհայմն անչափ ոգեշնչված էր այս «հաջողությամբ». կատարվող իրադարձությունները նրա տևտոնական ցասումը հասցրել էին տենդային աստիճանի: «Գեբենն» ու «Բրեսլաուն» ժամանեցին հենց այն պահին, երբ գերմանացիները զավթեցին Լիեժը, Նամուրը և բելգիական այլ քաղաքներ: Դրան հաջորդեց գերմանացիների ներխուժումը Ֆրանսիա և թվացյալ հաղթարշավը դեպի Փարիզ: Այդ իրադարձությունները Վանգենհայմը, ինչպես և հարիր է ռազմատենչ պրուսացուն, ընդունեց որպես քառասնամյա երազանքի իրականացում: Մենք բոլորս դեռ բնակվում էինք դեսպանական ամառանոցներում Բոսֆորի ափին: Գերմանացիների տարածքում կար մի զովասուն զբոսայգի, որ սուլթանը նվիրել էր Կայսեր կառավարությանը, սակայն ինչ-ինչ պատճառներով Վանգենհայմին կարծես թե չէր գոհացնում դեսպանական ամառանոցը: Փողոցում ալեկոծ Բոսֆորից հինգ-վեց մետր հեռավորությամբ, ուղիղ գերմանական դեսպանատան դիմաց, գտնվում էր մի փոքրիկ պահակատուն, կողքը՝ քարե նստարան՝ պահակների համար նախատեսված: Դա Վանգենհայմի նախընտրած հանգստատեղերից էր: Գերմանացի դիվանագետի կերպարանքն ընդմիշտ կմնա իմ հիշողության մեջ. Մառնի ճակատամարտին նախորդող խանդավառ օրերին նա նստում էր այդ նեղլիկ նստարանին, ժամանակ առ ժամանակ վեր էր ցատկում և քայլում իր առանձնատան առջևով: Կոստանդնուպոլսից դեպի քաղաքի հյուսիսային արվարձաններ գնացողները պիտի անցնեին այդ ճանապարհով, և նույնիսկ ռուս ու ֆրանսիացի դիվանագետները հաճախ էին անցնում այստեղով լարված՝ անշուշտ, արհամարհելով քարե նստարանին հաղթական դեմքով նստած դեսպանին: Երբեմն ինձ թվում է, թե Վանգենհայմն այստեղ նստում էր մեկ նպատակով՝ իր սիգարի ծուխը նրանց ուղղությամբ փչելու համար: Այդ ամենն ինձ հիշեցնում էր Շիլլերի «Վիլհելմ Տել» դրաման, երբ Տելը, նետն ու աղեղը ձեռքին, սարերում դիրք բռնած, սպասում է, որ Գեսլերը՝ նախանշած զոհը, անցնի այդ ճանապարհով. «Այստեղով, այս խոր կիրճով նա պետք է անցնի. Կյուսնախտ տանող այլ ճանապարհ չկա»:

Վանգենհայմը նաև զրուցում էր իր բարեկամների կամ նրանց հետ, ում բարեկամ էր համարում և իր փոքրիկ ուրախություններն էր կիսում

Գերմանիայի հաղթանակների առիթով: Ես նկատել էի, որ նա նստարանին հայտնվում է միայն այն դեպքում, երբ Գերմանիան հաղթանակ էր տանում, իսկ եթե լուրերը հակառակի մասին էին վկայում, նա բացարձակապես չէր երևում: Այդ առիթով ես ակնարկեցի, թե Վանգենհայմն ինձ հիշեցնում է «եղանակի խամաճիկի». լավ եղանակին նա միշտ տուփից դուրս է ցատկում, իսկ երբ ամպեր են կուտակվում, թաքնվում է տուփի մեջ: Մյուս դիվանագետների հետ Վանգենհայմն էլ ծիծաղեց իմ այդ փոքրիկ կատակի վրա:

Այն օրերին «եղանակը» Գերմանիայի դեսպանի համար, անշուշտ, բարենպաստ էր: Գերմանական բանակի հաջողությունները նրան այնքան էին ոգևորել, որ Վանգենհայմը երբեմն անզգույշ բացահայտումներ էր անում, և նրա այդ տենդագին ոգևորությունը մի օր նրան մղեց որոշ փաստեր ինձ ասելու, որոնք, ըստ իս, միշտ պատմական մեծ արժեք կունենան: Նա բացատրեց, թե իրականում ե՛րբ և ինչպե՛ս Գերմանիան մտահղացավ այս պատերազմը: Նրա կողմից այդ գաղտնիքի բացահայտումն այսօր թվում է հրեշավոր արարք, սակայն հարկ է հիշել Վանգենհայմի հոգեկան վիճակն այդ օրերին: Ողջ աշխարհը հավատացած էր, որ Փարիզը դատապարտված է: Վանգենհայմը նույնպես այդ համոզմունքն ուներ, ինչն արտահայտում էր հաճախ հնչող հայտարարություններով առ այն, որ երկու կամ երեք ամսում պատերազմն ավարտված կլինի: Ակնհայտ էր, որ Գերմանիայի ծրագրերն ընթանում էին ըստ նախանշվածի:

Արդեն հիշատակել եմ, որ Մեծն դուքսի սպանությունից անմիջապես հետո Գերմանիայի դեսպանը մեկնեց Բեռլին: Եվ հիմա նա բացատրեց իր մեկնելու պատճառը. Կայսրը նրան կանչել էր Բեռլին՝ մասնակցելու կայսերական խորհրդին: Խորհրդի նիստը տեղի էր ունեցել հուլիսի 5-ին Պոտսդամում: Այդ հավաքը, որին ներկա էին եղել գրեթե բոլոր նշանավոր դեսպանները, նախագահում էր անձամբ Կայսրը: Վանգենհայմը հրավիրված էր՝ հավաստիացնելու Թուրքիայի դիրքորոշման մասին և գործընկերներին ներկայացնելու ընդհանուր իրավիճակը Կոստանդնուպոլսում, որը համարվում էր գալիք պատերազմի ամենակարևոր կետը: Խոսելով ներկաների մասին՝ Վանգենհայմը չէր նշում նրանց անունները, թեև ընդգծեց, որ նրանց թվում էին... Սա այնքան կարևոր փաստ է, որ ես մեջբերում եմ գերմաներենով արտասանած նրա ճշգրիտ բառերը.

«Die Hupter des Generalstabs und der Marine» (Գլխավոր շտաբի ու նավատորմի ղեկավարությունը): Կարծում եմ, որ նա նկատի ուներ ֆոն Մոլտկեին և ֆոն Տիրպիցին: Ներկա էին նաև խոշոր բանկիրներ, երկաթուղիների տնօրեններ և գերմանական արդյունաբերության ղեկավար-

ներ, ովքեր նույնքան անհրաժեշտ էին Գերմանիային պատերազմը նախապատրաստելու համար, որքան բանակը:

Վանգենհայմն ասաց, որ Կայսրը հանդիսավոր կերպով ներկաներից յուրաքանչյուրին ուղղեց հետևյալ հարցը. «Պատրա՞ստ եք պատերազմի»: Բոլորը պատասխանեցին՝ այո, բացի բանկիրներից: Նրանք ասացին, որ իրենց անհրաժեշտ է ևս երկու շաբաթ՝ օտարերկրյա արժեթղթերը վաճառելու և վարկեր վերցնելու համար: Այն ժամանակ քչերն էին ընկալում Սարաևոյում կատարվածը՝ որպես մի իրադարձություն, ինչն անխուսափելիորեն կհանգեցներ պատերազմի: Վերոհիշյալ հավաքի նպատակն էր, ասաց Վանգենհայմը, թույլ չտալ, որ նման կասկածներ առաջանան: Որոշվեց բանկիրներին հավելյալ ժամանակ տալ՝ իրենց ֆինանսական վիճակը մոտալուտ պատերազմին համապատասխանեցնելու համար: Այնուհետև հավաքի որոշ անդամներ վերադարձան իրենց գործին, իսկ ոմանք էլ մեկնեցին արձակուրդ: Կայսրն իր նավով մեկնեց Նորվեգիա, ֆոն Բեթման-Հոլվեգը՝ հանգստի, իսկ Վանգենհայմը վերադարձավ Կոստանդնուպոլիս:

Պատմելով ինձ այդ հավաքի մասին՝ Վանգենհայմը փաստորեն խոստովանեց, որ Գերմանիան նետվում է պատերազմի մեջ: Ինձ թվում է, որ նա հպարտ էր այս ողջ «բեմադրությամբ». Գերմանիան գործին նախապատրաստվել էր այդ աստիճանի հիմնովին և հեռատեսորեն, և նա հպարտ էր, որ ինքն անձամբ հրավիրվել էր մասնակցելու նման պատմական հավաքի: Ես հաճախ էի մտորում այն մասին, թե ինչու նա որոշեց ինձ հայտնել այդ կարևորագույն գաղտնիքը, և եկա այն եզրահանգման, որ դա, ըստ ամենայնի, նրա անհուն սնափառության արդյունքն էր՝ ցույց տալ, թե ինքը որքա՞ն մոտ է կանգնած իր Կայսրին, և այն դերակատարումը, որ ինքն ուներ այդ պատերազմը սանձազերծելու գործում: Ինչպիսին էլ լիներ շարժառիթը, նրա անզգուշությունն ինձ համար բացահայտեց, թե ովքեր էին այդ հրեշավոր հանցագործության մեղավորները: Այն երկնագույն, կարմիր, դեղին գրքույկները, որ պատերազմից հետո մի քանի ամիս շարունակ ողողել էին Եվրոպան, ինչպես նաև գերմանացի քարոզիչների ձեռքով տարածված հարյուրավոր փաստաթղթերը, որոնք փորձում էին ապացուցել Գերմանիայի «անմեղությունը», ինձ վրա ոչ մի տպավորություն չէին գործում: Նրանց պատասխանատվության վերաբերյալ իմ եզրահանգումները հիմնված չեն ո՛չ կասկածի, ո՛չ համոզմունքի, ո՛չ էլ անուղղակի վկայության վրա: Այդ ամենի մասին վիճելու կամ ինչ-որ բան ապացուցելու հարկ չկա: Ես պարզապես գիտեմ: Դավադրությունը, որ հանգեցրեց մարդկության ամենաահավոր ողբերգության, կազմակերպվել էր Կայսեր և նրա կայսերական խորհրդի կողմից 1914թ.

հուլիսի 5-ի Պոտսդամի կոնֆերանսի ժամանակ: Հավաքի գլխավոր մասնակիցներից մեկը, դավադրության ակներև հաջողությունից շլացած, անձամբ ինձ հայտնել էր բոլոր մանրամասները: Երբ լսում եմ վեճեր այս պատերազմի պատասխանատուների մասին կամ կարդում եմ Գերմանիայի ներկայացրած ստահոդ բացատրությունները, պարզապես մտաբերում եմ Վանգենհայմի աժդահա կերպարանքը, երբ օգոստոսյան մի օր նա հայտնվեց՝ սիգարը բերանին և պատմեց ինձ այն պատմական հավաքի մասին: Արժե՞ արդյոք ժամանակ վատնել՝ շարունակելով քննարկել այդ հարցը:

Կայսերական խորհուրդը հավաքվեց հուլիսի 5-ին, իսկ սերբական վերջնագիրը ներկայացվեց հուլիսի 22-ին: Դա մոտավորապես երկու շաբաթվա ընդմիջում էր, որ պահանջել էին բանկիրները՝ իրենց գործն ավարտելու համար: Աշխարհի բոլոր խոշոր բորսաների գրառումները ցույց են տալիս, որ այդ ժամանակահատվածում գերմանական դրամատները մեծ շահույթ ունեցան: Գրառումները վկայում են, որ մեծ քանակությամբ բաժնետոմսեր են վաճառվել, ինչի արդյունքում գները զգալիորեն ընկել են: Դա որոշ անորոշություն ստեղծեց շուկաներում, սակայն Վանգենհայմի բացատրությունը վերացնում էր որևէ կասկած, եթե այդպիսին դեռ կար: Գերմանիան իր բաժնետոմսերը վերածում էր կանխիկ դրամի պատերազմի նախապատրաստվելու նպատակով: Եթե որևէ մեկը ցանկություն ունի անձամբ հաստատելու Վանգենհայմի պատմածը, կառաջարկեի ստուգել այդ երկու պատմական շաբաթների ընթացքում Նյու Յորքի բորսայի գրանցած տվյալները: Առկա էր գների աննախադեպ անկում, հատկապես՝ միջազգային շուկա ունեցող բաժնետոմսերի համար: Հուլիսի 5-ից հուլիսի 22-ն ընկած ժամանակահատվածում «Union Pacific»-ի բաժնետոմսերի արժեքը նվազեց 155 1/2-ից մինչև 127 1/2, «Baltimor and Ohio»-ինը՝ 91 1/2-ից մինչև 81, «United States Steel»-ինը՝ 61-ից մինչև 50 1/2, «Canadian Pacific»-ինը՝ 194-ից մինչև 185 1/2 և «Northern Pacific»-ինը՝ 111 3/8-ից մինչև 108: Այդ նույն ժամանակ բաժնետոմսերի արժեքի այս անկման համար եռանդուն պրոտեկցիոնիստները մեղադրում էին Սիմոնս-Անդերվուդի սակագների վերաբերյալ ակտը[9], մինչդեռ ամերիկյան վարչակազմի այլ քննադատներ դա վերագրում էին Կենտրոնական բանկի որոշմանը, որը դեռ ուժի մեջ չէր մտել: Որքան միամիտ էին Ուոլ Սթրիթի ֆինանսական փորձագետներն ու բրոկերները. նրանք չէին էլ կասկածում, որ Պոտսդամում տեղի ունեցած և անձամբ Կայսեր նախագահությամբ անցկացված համաժողովն այն իրական ուժն էր, որ թուլացնում էր շուկան:

Վանգենհայմն ինձ հայտնեց ոչ միայն Պոտսդամի կոնֆերանսի ման-

ռամասները, այլև այն նույն գաղտնիքը, ինչը Կոստանդնուպոլսում Իտալիայի դեսպան մարկիզ Գարոնիին էր ասել: Այդ պահին Իտալիան համարվում էր Գերմանիայի դաշնակիցը:

Ավստրիայի դեսպան մարկիզ Պալավիչինին նույնպես փաստորեն խոստովանեց, որ Կենտրոնական տերությունները պատերազմի են նախապատրաստվում: Օգոստոսի 18-ին՝ Ֆրանց Իոսիֆի ծննդյան օրը, ես արարողակարգային դեսպանական այց կատարեցի՝ շնորհավորանքներս հայտնելու Պալավիչինիին: Բնականաբար զրույցն ընթացավ Ավստրիայի կայսեր անձի շուրջ. նա այդ օրը բոլորել էր իր 84 տարին: Պալավիչինին նրա մասին խոսում էր մեծ հպարտությամբ և հարգանքով: Պատմեց, թե որքան աշխույժ ու հստակ միտք ունի ծերունազարդ կայսրը և թե ինչպիսի խորությամբ է ընկալում միջազգային հարաբերությունները, ինչպես է ամեն ինչ պահում սեփական վերահսկողության տակ: Ավստրիայի կայսեր հասարակական կյանքի իմացությունն ապացուցելու համար Պալավիչինին օրինակ բերեց ընթացող պատերազմը: Մայիսին Պալավիչինին ընդունելության էր արժանացել Ֆրանց Իոսիֆի մոտ՝ Վիեննայում: Նա պատմեց, որ զրույցի ժամանակ կայսրը նշել էր, որ Եվրոպայում պատերազմն այլևս անխուսափելի է: Կենտրոնական տերությունները չեն ընդունի Բուխարեստի պայմանագիրը որպես հիմք՝ բալկանյան հիմնախնդիրը կարգավորելու համար, և միայն համընդհանուր պատերազմը կարող է երբևէ կարգավորել այդ հարցը: Հիշեցնեմ, որ Բուխարեստի պայմանագիրն այն համաձայնությունն էր, որով ավարտվեց Բալկանյան երկրորդ պատերազմը: Դրա հետևանքով Թուրքիայի եվրոպական տիրույթները, բացառությամբ Կոստանդնուպոլսի, և հարակից ոչ մեծ տարածքը բաժանվեցին բալկանյան պետությունների, մասնավորապես Սերբիայի ու Հունաստանի միջև: Այդ պայմանագիրը զգալիորեն հզորացրեց Սերբիան, բազմապատկեց այդ երկրի ռեսուրսները, այն չափով, որ Ավստրիան մտավախություն ուներ, թե աջակցում է եվրոպական մի նոր պետության ստեղծմանը, որն ի վիճակի կլինի հզորանալու և դիմադրելու Ավստրիայի ընդարձակման ծրագրերին: Բոսնիայում ու Հերցեգովինայում ավստրիական լծի տակ էին մեծ թվով սերբեր, ովքեր ամենից շատ ցանկանում էին միավորվել իրենց երկրի հետ: Ավելին, պանգերմանական ծրագրերն Արևելքում անհրաժեշտություն էին դարձնում Սերբիայի ոչնչացումը, մի երկրի, որը, քանի դեռ կանգուն էր, արգելափակում էր Գերմանիայի ճանապարհը դեպի Արևելք: Ավստրոգերմանական ակնկալիքն այն էր, որ Բալկանյան պատերազմը կվերացնի Սերբիան՝ որպես պետություն, որ թուրքերը պարզապես կոչնչացնեն Պետեր թագավորի զորքերը: Դա էին պահանջում գերմանական ծրագրե-

ը, և այդ էր պատճառը, որ Ավստրիան ու Գերմանիան ոչինչ չձեռնարկեցին բալկանյան պատերազմները կանխելու համար: Սակայն արդյունքը ճիշտ հակառակը եղավ. հակամարտությունից ծնվեց է՛լ ավելի զորեղ Սերբիա, որը ժայռի կարծրությամբ կանգնած էր գերմանական «ջրհեղեղի» ճանապարհին:

Պատմաբանների մեծ մասը կհամաձայնի, որ Բուխարեստի պայմանագիրն անխուսափելի դարձրեց այդ պատերազմը: Ձեռքիս տակ ունեմ մարկիզ Պալավիչինիի վկայությունն այն մասին, որ այդ կարծիքին էր նաև Ֆրանց Իոսիֆը. այն հանդիպումը, որի ընթացքում կայսրն արել էր այդ հայտարարությունը, տեղի էր ունեցել մայիսին՝ Մեծն դուքսի սպանությունից ավելի քան մեկ ամիս առաջ: Այսպիսով, մենք ունենք Ավստրիայի կայսեր հավաստիացումը, որ պատերազմը պետք է սկսվեր, եթե նույնիսկ չլիներ Սարաևոյի սպանությունը: Միանգամայն պարզ է, որ այդ հանցագործությունը հարմար պատրվակ էր պատերազմ սկսելու համար, որն արդեն իսկ կանխորոշված էր Կենտրոնական տերությունների կողմից:

ԳԼՈՒԽ VII

Գերմանիայի ծրագրերը նոր տարածքների, ածխալցիչ կայանների և ռազմատուգանքի վերաբերյալ

Չնայած այն բախտորոշ օգոստոս ու սեպտեմբեր ամիսներին՝ Վանգենհայմը շարունակեց իր գրեթե անպատասխանատու վարքագիծը՝ երբեմն բացահայտ գոռոզ, երբեմն ընկճված, միշտ նյարդային ու լարված, ամերիկացուս հանդեպ՝ քծնող, թշնամական երկրների ներկայացուցիչների նկատմամբ՝ չար ու ճղճիմ: Նրա անհանգստությունն ու անհամբերությունը հասկանալի էին դառնում, երբ նա նստում էր քարե նստարանին ու սրտատրոփ սպասում, որ թեկուզ երկու կամ երեք րոպե ավելի շուտ տեղեկանա Բեռլինից իրեն ուղարկվող հեռագրերի մասին, որ ստանում էր «Կորկովադոյի» ընդունիչ կայանը: Վանգենհայմը երբեք չէր կորցնում գերմանական հաղթանակներն ազդարարելու առիթը: Մի քանի անգամ, խախտելով ընդունված կարգը, առանց նախապես զգուշացնելու հայտնվում էր իմ տանը՝ ինձ պատմելու վերջին իրադարձությունների մասին կամ կարդալու քաղվածքներ ստացված հեռագրերից: Նա միշտ չափազանց անկեղծ էր, շիտակ ու նույնիսկ ոչ խելամիտ: Հիշում եմ նրա տառապագին դեմքն այն օրը, երբ Անգլիան պատերազմ հայտարարեց: Վանգենհայմը մշտապես մեծ հիացմունքով էր խոսում Անգլիայի ու հատկապես Ամերիկայի մասին: «Աշխարհում միայն երեք մեծ երկիր կա, - կրկնում էր նա հաճախ, - Գերմանիան, Անգլիան ու Միացյալ Նահանգները: Մենք երեքս պետք է միահամուռ գործենք և այդ դեպքում կտիրենք աշխարհին»: Բրիտանական կայսրության հանդեպ ունեցած խանդավառությունը միանգամից մարեց, երբ Անգլիան որոշեց հարգել պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները և պատերազմ հայտարարեց: Վանգենհայմն ասաց, որ պատերազմը երկար չի տևի, և որ Սեդանի[10] օրը կնշվի Փարիզում: Սակայն երբ օգոստոսի 5-ին ես այցելեցի Գերմանիայի դեսպանատուն, Վանգենհայմին տեսա ավելի նյարդային և մտախոհ, քան երբևէ: Բարոնուհի Վանգենհայմը՝ բարձրահասակ, գեղադեմ մի կին, սենյակում նստած, կարդում էր 1870 թվականի պատերազմի մասին իր մոր հուշերը: Նրանք երկուսն էլ Անգլիայից ստացված նորություններն ընկալել էին որպես գրեթե անձնական ողբերգություն: Սակայն ամենից ավելի ինձ ցնցեց Վանգենհայմի անկարողությունն ըմբռնելու Անգլիայի գործողությունների շարժառիթը: «Չափազանց անխոհեմ քաղաքականություն է», - բացականչում էր նա կրկին ու կրկին: Նրա վերաբերմունքը ճիշտ այնպիսին էր, ինչպիսին Բեթման-Հոլվեգինը,

ով Բուխարեստի պայմանագիրն անվանել էր «թղթի կտոր»:

Օգոստոսի 26-ին ես դուրս էի եկել զբոսանքի, երբ պատահաբար հանդիպեցի Գերմանիայի դեսպանին: Ինչպես միշտ, նա սկսեց խոսել Ֆրանսիայում Գերմանիայի տարած հաղթանակների մասին, կրկնել սովորական դարձած կանխագուշակումը, թե մեկ շաբաթվա ընթացքում գերմանական բանակը կմտնի Փարիզ: «Որոշիչ գործոնն այս պատերազմում կլինի Կրուպի հրետանին, - ասաց նա: - Եվ հիշեք, - ավելացրեց, - որ այս անգամ մենք լրջորեն ենք տրամադրված. կռվելու ենք առանց վերապահումների և թույլ չենք տա մեզ կանգնեցնել, ինչպես դա եղավ 1870-ին: Այն ժամանակ Վիկտորյա թագուհին, ռուսաց ցարն ու Ֆրանց Իոսիֆը միջամտեցին և համոզեցին մեզ խնայել Փարիզը: Հիմա, սակայն, միջամտող չի լինի: Մենք Բեռլին կտեղափոխենք Փարիզում գտնվող բոլոր գանձերը, ճիշտ այնպես, ինչպես Նապոլեոնը Ֆրանսիա ուղարկեց իտալական արվեստի գործերը»:

Միանգամայն ակնհայտ է, որ Մառնի ճակատամարտը Փարիզը փրկեց Լուվենի[11] ճակատագրից:

Վանգենհայմն այնքան վստահ էր սպասում մոտալուտ հաղթանակին, որ սկսեց քննարկել խաղաղության պայմանները: Ֆրանսիական բանակը ջախջախելուց հետո, հոխորտում էր նա, Գերմանիան Ֆրանսիայից կպահանջի համընդհանուր զորացրում և ռազմատուգանք: Գերմանիան գուցե և համաձայնի հինգ միլիարդ ամերիկյան դոլարի, սակայն եթե Ֆրանսիան համառորեն շարունակի պատերազմել, հարկադրված կլինի վճարել քսան միլիարդ դոլար: Նա ասաց նաև, թե Գերմանիան կպահանջի ամենուրեք իրեն տրամադրել նավահանգիստներ և ածխալցիչ կայաններ[12]: Վանգենհայմի արտահայտություններից դատելով՝ այն ժամանակ Գերմանիան ձգտում էր ոչ այնքան նոր տարածքների, որքան շոշափելի առավելության առևտրական գործարքներում: Գերմանիան վճռել էր դառնալ առևտրային խոշոր պետություն, իսկ դրա համար անհրաժեշտ էր ունենալ բաց նավահանգիստներ, Բաղդադի երկաթուղին և արտոնյալ իրավունքներ Հարավային Ամերիկայում ու Աֆրիկայում: Վանգենհայմը նշեց նաև, որ Գերմանիան կարիք չունի հավելյալ տարածքների, որտեղ բնակչությունը գերմանալեզու չէ, քանի որ իրենք արդեն հայտնվել են նման անախորժ վիճակում Էլզաս-Լոթարինգիայում, Լեհաստանում և այլ ոչ գերմանալեզու վայրերում: Անշուշտ, Ռուսաստանում վերջերս տեղի ունեցած դեպքերի լույսի ներքո այդ հայտարարությունը բավական ուշագրավ էր: Խոսելով Գերմանիայի կողմից նավահանգիստների ու ածխալցիչ կայանների վերաբերյալ հնչած պահանջների մասին՝ նա չհիշատակեց Մեծ Բրիտանիան: Սակայն նա պետք է որ մտածեր

Անգլիայի մասին, քանի որ գոյություն չուներ մեկ այլ պետություն, որն ի զորու էր «ամենուրեք» Գերմանիային ածխալցիչ կայաններ տրամադրելու:

Բոլոր այս զրույցներն ինձ համար հարցեր էին պարզում, ինչպես Վանգենհայմի կողմից հուլիսի 5-ի կոնֆերանսի բացահայտումը: Այդ դրվագը պարզորոշ խոսում էր այն մասին, որ Գերմանիան կանխամտածված էր սկսել պատերազմը: Մինչդեռ հոյակապ ծրագրերը, որ բացահայտվում էին չափազանց ունակ, բայց և շաղակրատ դեսպանի կողմից, լույս էին սփռում այն պատճառների վրա, որոնք Գերմանիային դրդեցին նախաձեռնելու այդ ռազմարշավը: Վանգենհայմն ինձ տվեց գերմանական կայսրության մտահղացած ծովահենական զարհուրելի ռազմարշավի ամբողջական պատկերը, որի արդյունքում հաղթական ավարը պիտի լինեին հարևան երկրների հավաքական հարստությունն ու դիրքը աշխարհում, որ հիմնված էր նրանց՝ դարերի ընթացքում կուտակած գիտելիքների և աշխատանքի վրա:

Եթե Անգլիան փորձի սովով սպառնալ Գերմանիային, ավելացրեց Վանգենհայմը, պատասխանը շատ հստակ կլինի. Գերմանիան սովի կմատնի Ֆրանսիային: Հարկ է հիշել, որ այն օրերին Գերմանիան ակնկալում էր մեկ շաբաթվա ընթացքում մտնել Փարիզ և վստահ էր, որ արդյունքում դա նրան թույլ կտա վերահսկողության տակ առնել ողջ երկիրը: Ըստ Վանգենհայմի՝ գերմանական ծրագիրը ենթադրում էր Ֆրանսիան որպես գրավ պահել Անգլիայի հետ տարվող խաղում, այսպես ասած՝ մի վիթխարի պատանդ: Այն դեպքում, եթե Անգլիան հասներ ռազմական որևէ առավելության, Գերմանիան հակահարված կհասցներ՝ պատժելով ողջ ֆրանսիացի ժողովրդին: Այդ պահին գերմանացի զինվորները սպանում էին անմեղ բելգիացիներին՝ ի պատասխան նրանց որոշ հայրենակիցների իբր անհնազանդության: Ակնհայտ էր, որ գերմանացիները պատրաստ էին այդ սկզբունքը կիրառել ոչ միայն անհատների, այլև երկրների հանդեպ:

Այս և մյուս բոլոր զրույցների ընթացքում Վանգենհայմն անթաքույց թշնամանք էր դրսևորում Ռուսաստանի հանդեպ: «Մենք կանգնել ենք Ռուսաստանի կոշտուկի վրա, - ասաց նա, - և շարունակելու ենք սեղմել»:

Դա ըստ ամենայնի նշանակում էր, որ Գերմանիան «Գեբենն» ու «Բրեսլաուն» ներքաշեց Դարդանել և այդ «հանճարեղ» քայլով վերահսկողության տակ առավ Կոստանդնուպոլիսը: «Բյուզանդական հնամյա մայրաքաղաքը, - ասաց Վանգենհայմը, - այն պարգևն է, որ կպահանջեր հաղթական Ռուսաստանը, իսկ տաք ծովերում կլոր տարին գործող նավահանգստի բացակայությունը Ռուսաստանի թույլ տեղն է՝ նրա «կոշտուկը»: Վանգենհայմը պարծենում էր, որ այդ պահին Գերմանիան

174 թնդանոթ է տեղադրել Դարդանելում, և որ նեղուցը հնարավոր կլինի փակել երեսուն րոպեի ընթացքում, և որ գերմանացի ծովակալ Սուշոնը նրան տեղեկացրել է, որ նեղուցն այլևս «անթափանցելի» է: «Սակայն մենք չենք փակի Դարդանելը, - ասաց նա, - եթե, իհարկե, Անգլիան չփորձի գրոհել»:

Թեև Անգլիան պատերազմ էր հայտարարել Գերմանիային, սակայն ռազմական գործողություններում նշանակալի դեր չէր խաղում: «Նրա խղճուկ, փոքրաթիվ բանակը» հերոսական նահանջ էր կատարում Մոնսից[13]: Վանգենհայմը ողջ հոգով արհամարհում էր Անգլիան՝ որպես հակառակորդ: «Գերմանացիները ծրագրում են, - ասաց նա, - հրետանի տեղադրել Կալեի նեղուցում և ռումբեր նետել Անգլիայի ծովափնյա քաղաքների վրա»: Նրա մտքով իսկ չէր անցնում, որ Գերմանիային գուցե չհաջողվի զավթել Կալեն մոտակա տասը օրում: Մեր զրույցների ընթացքում Վանգենհայմը ծաղրում էր այն գաղափարը, թե Անգլիան կարող է երբևէ իր սեփական հզոր բանակը ստեղծել: «Դա պարզապես ծիծաղելի է, - ասում էր նա, - միլիտարիզմի ոգով դաստիարակված սերունդներ են հարկավոր գերմանականի տիպի բանակ ունենալու համար: Մենք այն ստեղծում էինք երկու հարյուր տարի: Երեսուն տարվա մշտական վարժանք է անհրաժեշտ մեր գեներալների նման զինվորականներ պատրաստելու համար: Մեր բանակը մշտապես կպահպանի իր ներուժը: Ամեն տարի կես միլիոն երիտասարդներ զինվորագրման տարիքի են հասնում, և մենք չենք կարող այդ թվով զինվորներ կորցնել ամեն տարի՝ սոսկ բանակայինների թիվն անփոփոխ պահելու համար»:

Մի քանի շաբաթ անց քաղաքակիրթ աշխարհը ցնցվեց գերմանացիների կողմից անգլիական ծովափնյա քաղաքներ Սկարբորոյի և Հարթլփուլի ռմբակոծությունից: Դա պատահական քայլ չէր, այլ գերմանացիների մանրակրկիտ մշակած ծրագրի մի մասը: 1914թ. սեպտեմբերի 4-ին Վանգենհայմն ինձ ասաց, որ Գերմանիան մտադիր է ռմբակոծել Անգլիայի նավահանգստային բոլոր քաղաքները սննդամթերքի առաքումները խափանելու նպատակով: Ակնհայտ էր նաև, որ գերմանացիների դաժանությունը ամերիկյան ծովային առևտրի հարցում ֆոն Տիրպիցի անակնկալ որոշումը չէր, քանի որ այդ նույն օրը Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպանն ինձ զգուշացրեց, որ Ամերիկայի համար խիստ վտանգավոր է դառնալու Անգլիա նավեր ուղարկելը:

ԳԼՈՒԽ VIII

Գերմանական քարոզչության դասական օրինակ

Օգոստոսյան ու սեպտեմբերյան այդ օրերին Գերմանիան մտադրություն չուներ Թուրքիան անհապաղ պատերազմի մեջ ներքաշելու: Քանի որ այդ շրջանում ես չափազանց մտահոգված էի թուրք ժողովրդի բարօրության և խաղաղության պահպանման հարցով, հեռագիր ուղարկեցի Վաշինգտոն՝ հարցնելով, թե արդյոք կարող եմ օգտագործել ազդեցությունս Թուրքիան չեզոք պահելու համար: Պատասխան գրության մեջ նշվում էր, որ կարող եմ գործել ոչ պաշտոնապես, զուտ մարդասիրական հիմունքներով: Քանի որ Անգլիայի ու Ֆրանսիայի դեսպանները զգալի ջանքեր էին գործադրում՝ Թուրքիան պատերազմից հեռու պահելու համար, ուստի ես հասկանում էի, որ այդ նույն նպատակով իմ միջամտությունը կգոհացնի բրիտանական կառավարությանը, սակայն Գերմանիան իմ կողմից արված ցանկացած միջամտություն կարող էր ընկալել որպես չեզոքության խախտում: Ես հարցրի Վանգենհայմին, թե արդյոք իմ նման գործողություններն առարկության առիթ կտան, թե ոչ: Նրա պատասխանը փոքր-ինչ զարմացրեց ինձ, թեև ավելի ուշ պարզ դարձավ դրա բուն իմաստը: «Ամենևի՛ն, - ասաց նա, - Գերմանիան ավելի շատ է ցանկանում, որ Թուրքիան չեզոք մնա»:

Անկասկած, այդ պահին Թուրքիայի վարած քաղաքականությունը միանգամայն ներդաշնակ էր Գերմանիայի ծրագրերին: Վանգենհայմի ազդեցությունը Թուրքիայի կառավարական շրջաններում ավելի ու ավելի էր աճում, և Թուրքիայի վարած քաղաքականությունը լավագույնս ծառայում էր Գերմանիայի շահերին: Այդ քաղաքականության նպատակն էր Անտանտի երկրները «փշերի» վրա պահելը: Թուրքիայի դիրքորոշումը հայտնի չէր. պարզ չէր՝ այն կմնա չեզո՞ք, թե պատերազմին կմասնակցի որպես Գերմանիայի դաշնակից: Քանի որ Թուրքիայի դիրքորոշումն անորոշ էր, Ռուսաստանը ստիպված էր մեծաթիվ զորք պահել Կովկասում: Անգլիան հարկադրված ամրացնում էր իր դիրքերը Եգիպտոսում և Հնդկաստանում՝ բավական մեծ նավատորմ տեղադրելով Դարդանելի մոտ: Այդ ամենը, անշուշտ, նպաստում էր գերմանացիների ծրագրերի իրագործմանը, քանզի զգալիորեն թուլացնում էր Անգլիայի ու Ռուսաստանի ուժերը պատերազմի եվրոպական թատերաբեմում: Խոսքս այն ժամանակահատվածի մասին է, որը նախորդեց Մառնի ճակատամարտին, երբ Գերմանիան իր դաշնակից Ավստրիայի օգնությամբ ակնկալում էր պարտության մատնել Ֆրանսիային ու Ռուսաստանին: Այդ

հաղթանակը Գերմանիային հնարավորություն կընձեռեր թելադրել Եվրոպայի ապագան: Եթե այդ ժամանակահատվածում Թուրքիան ներքաշված լիներ ռազմական գործողություններում, չէր կարողանա ավելին անել այդ հաղթանակի համար, քան անում էր հիմա՝ ռուսական ու անգլիական զգալի ուժերը հեռու պահելով ամենաբախտորոշ ճակատներից: Սակայն եթե Գերմանիան հեշտ հաղթանակ տաներ Թուրքիայի օգնությամբ, այս նոր դաշնակիցը կարող էր ինչ-որ չափով կաշկանդիչ դեր խաղալ: Թուրքիան, անկասկած, փոխհատուցումներ կպահանջեր՝ ամենևին համեստ չգտնվելով այդ հարցում. ամենայն հավանականությամբ, դրանք կներառեին Եգիպտոսի լիակատար վերահսկումը և բալկանյան տարածքների «վերադարձը»: Նման վերադասավորումները կխափանեին Կայսեր ծրագրերը: Դա էր պատճառը, որ նա ոչ մի ցանկություն չուներ Թուրքիան տեսնելու ակտիվ դաշնակցի դերում: Թերևս բացառությամբ այն պարագայի, եթե հնարավորինս արագ բաղձալի հաղթանակի չհասնեին: Եթե Ռուսաստանը զգալի առավելության հասներ Ավստրիայի նկատմամբ, ապա Թուրքիայի ակտիվ աջակցությունն արժեք կունենար, մանավանդ եթե դա համընկներ Բուլղարիայի ու Ռումինիայի ներգրավմանը պատերազմի մեջ որպես Գերմանիայի դաշնակիցներ: Այդ պահին Վանգենհայմը սպասողական դիրք էր բռնել՝ Թուրքիան ներկայացնելով որպես Գերմանիայի հնարավոր դաշնակից, հզորացնում էր նրա բանակն ու նավատորմը՝ մտադրված այդ երկիրն օգտագործել լավագույնս, երբ հարմար ժամանակը գա: Եթե Գերմանիային չհաջողվեր հաղթանակ տանել պատերազմում առանց Թուրքիայի աջակցության, ապա Գերմանիան պատրաստ էր նրան ընդունելու որպես դաշնակից: Եթե Գերմանիային հաջողվեր հաղթել պատերազմում առանց Թուրքիայի մասնակցության, անկասկած, հարկադրված չէր լինի նրան վճարել աջակցության համար: Մինչդեռ խելամիտ քայլ էր թուրքերին պատրաստ պահելն այն դեպքում, եթե Գերմանիայի հաղթանակի համար անհրաժեշտ լիներ թուրքական ուժերի օգտագործումը:

Թուրքիայի բարեհաճությունը շահելու համար Գերմանիայի ու Անտանտի միջև մղվող պայքարը բացահայտորեն անհավասար էր: Անշուշտ, «Գեբենն» ու «Բրեսլաուն» զարտուղի ճանապարհով Մարմարա ծով հասցնելը Գերմանիայի հաղթանակն էր: Անգլիայի, Ֆրանսիայի ու Ռուսաստանի դեսպանները դա քաջ գիտակցում էին, նաև այն, որ անկարող են Թուրքիան դարձնել Անտանտի ակտիվ դաշնակիցը: Հավանաբար նրանք չէին էլ ցանկանում դա անել, սակայն հույս ունեին չեզոք պահել Թուրքիան: Հիմա նրանց բոլոր ջանքերն այդ նպատակին էին ուղղված: «Դուք պատերազմի ձեր բաժինը ստացել եք, - ասում էին նրանք Թալեաթին ու

էնվերին: - Վերջին չորս տարում դուք կռվել եք երկու պատերազմներում. եթե այս մեկի մեջ էլ ներքաշվեք, դուք վերջնականապես կկործանեք ձեր երկիրը»: Չեզոքության դիմաց Անտանտը միայն մի բան կարող էր առաջարկել նրանց՝ Օսմանյան կայսրության ամբողջականության երաշխիքը: Թուրքիան պատերազմից հեռու պահելու իրենց մեծ ցանկությունն Անտանտի դեսպաններն ապացուցեցին՝ հրաժարվելով խստորեն հետամուտ լինել «Գեբենի» ու «Բրեսլաուի» հետ կապված իրենց բողոքներին: Հիրավի, նրանք բազմիցս բողոքել էին նշված նավերի շարունակվող ներկայության դեմ, սակայն թուրք պաշտոնյաներն ամեն անգամ պնդում էին, թե դրանք թուրքական նավեր են: «Եթե իրոք այդպես է, - վիճում էր սըր Լուի Մալեթը, և նրա փաստարկը, իրոք, անհերքելի էր,- ինչո՞ւ չեք հեռացնում գերմանացի սպաներին ու նավաստիներին»: «Այդպիսի մտադրություն կա,- պատասխանում էր մեծ վեզիրը, - թուրք ծովայիններն ուղարկվել էին համալրելու Անգլիայում կառուցվող նավերը: Հիմա նրանք վերադառնում են Թուրքիա և Կոստանդնուպոլիս հասնելուն պես ծառայության կուղարկվեն «Գեբենի» ու «Բրեսլաուի» վրա»: Սակայն անցնում էին օրեր ու շաբաթներ, նշված անձնակազմն արդեն վերադարձել էր տուն, իսկ այն երկու նավերի վրա շարունակում էին ծառայել գերմանացիները: Այդ անվերջանալի հետաձգումները, անշուշտ, չէին կարող մոլորեցնել Բրիտանիայի ու Ֆրանսիայի արտաքին գործերի գերատեսչություններին: «Գեբենի» ու «Բրեսլաուի» ներկայությունը շարունակում էր պատերազմի առիթ լինել, սակայն Անտանտի դեսպանները չէին պահանջում իրենց անձնագրերը[14]. նման քայլը կհանգեցներ ճգնաժամի, ինչը նրանք փորձում էին կանխել, իսկ հնարավորության դեպքում՝ իսպառ բացառել Թուրքիայի մասնակցությունը պատերազմին՝ որպես Գերմանիայի դաշնակից: Ցավոք, Անտանտի խոստումը՝ երաշխավորել Թուրքիայի ամբողջականությունը, չգրավեց Թուրքիային իրենց կողմը:

«Նրանք խոստացել էին, որ բալկանյան պատերազմներից հետո մեզ չեն մասնատի, - ասում էր Թալեաթը, - տեսեք, թե ինչ կատարվեց Թուրքիայի եվրոպական մասի հետ»:

Վանգենհայմը մշտապես թմբկահարում էր այդ փաստը: «Դրանց ասածներին հավատալ չի կարելի, - ասում էր նա Թալեաթին ու էնվերին, - մեկ տարի առաջ նրանք բոլորը ձեզնից երես էին թեքել»: Հետո նա շատ խելամիտ ձևով օգտագործում էր այն միակ զգացումը, որը, իրոք, հատուկ է թուրքերին: Օսմանի ժառանգները նման չեն իմ իմացած այլ ազգերի ներկայացուցիչներին. նրանք ո՛չ ատում են, ո՛չ սիրում, տևական համակրանք կամ թշնամանք չեն տածում, այլ միայն վախենում են:

Բնականաբար, նրանք ուրիշներին վերագրում են այն շարժառիթները, որոնք ուղղորդում են իրենց վարքագիծը: «Որքան հիմար եք դուք, - ասում էր Վանգենհայմը Թալեաթին ու Էնվերին, երբ խոսքը էր լինում անգլիացիների մասին: - Չե՞ք հասկանում, թե ինչու են նրանք ձեզ պատերազմից հեռու պահում. նրանք վախենում են ձեզնից: Չե՞ք գիտակցում, որ Գերմանիայի օգնությամբ դուք նորից ռազմական ուժ եք դարձել: Զարմանալի չէ, որ Անգլիան չի ցանկանում ձեր դեմ պատերազմել»: Վանգենհայմն այդ գաղափարը ներշնչում էր թուրքերին այնքան ժամանակ, մինչև նրանք ի վերջո հավատացին դրան, քանի որ այդ փաստարկը ոչ միայն բացատրում էր Անտանտի վարքագիծը, այլև շոյում էր իրենց թուրքական ինքնասիրությունը:

Ինչպիսին էլ լիներ Էնվերի ու Թալեաթի վերաբերմունքը, իմ կարծիքով, թուրք հասարակության բոլոր շերտերում Անգլիան ու Ֆրանսիան ավելի մեծ համակրանք էին վայելում, քան Գերմանիան: Սուլթանը դեմ էր պատերազմին: Նրա ժառանգորդը՝ Յուսուֆ Իզզեդինը, բացահայտորեն Անտանտի կողմնակիցն էր, մեծ վեզիր Սաիդ Հալիմը Անգլիան գերադասում էր Գերմանիայից: Ջեմալը՝ եռիշխանության երրորդ անդամը, ֆրանսամետի համբավ էր վայելում. նա վերջերս էր վերադարձել Փարիզից, որտեղ արժանացել էր ընդունելության, ինչից չափազանց շոյված էր: Կառավարության անդամների մեծամասնությունը Գերմանիայի հանդեպ համակրանք չուներ, իսկ հասարակական կարծիքը, այնքանով, որքանով որ այն գոյություն ունի Թուրքիայում, որպես Թուրքիայի պատմական բարեկամ ընկալում էր Անգլիան, այլ ոչ թե Գերմանիան: Այնպես որ Վանգենհայմը մեծ դիմադրություն պետք է հաղթահարեր, և այն մեթոդները, որ նա կիրառում էր՝ կոտրելու համար այդ դիմադրությունը, գերմանական քարոզչության դասական օրինակ կարող էին ծառայել: Նա լայնածավալ քարոզարշավ ծավալեց թերթերում Անգլիայի, Ֆրանսիայի ու Ռուսաստանի դեմ: Ես արդեն նկարագրեցի Թուրքիայի ապրումները, երբ նրանք կորցրին Անգլիայում պատվիրված նավերը: Վանգենհայմի գործակալները թերթերի գնված էջերը լցրին Անգլիայի դեմ թունոտ հարձակումներով՝ այդ նավերը զավթելու մեղադրանքով: Թուրքական ողջ մամուլը շուտով հայտնվեց վերահսկողության տակ: Վանգենհայմը գնեց «Ikdam»-ը՝ թուրքական ազդեցիկ օրաթերթերից մեկը, որն անմիջապես սկսեց գովաբանել Գերմանիան ու փնովել Անտանտը: «Osmanischer Lloyd»-ը, որը լույս էր տեսնում ֆրանսերեն ու գերմաներեն, վերածվեց գերմանական դեսպանության թերթիկի: Թեև Թուրքիայի Սահմանադրությունը երաշխավորում էր ազատ մամուլ, սակայն, Կենտրոնական տերությունների շահերից ելնելով, երկրում գրաքննություն էր հաս-

տատվել: Բոլոր թուրք խմբագիրներին հանձնարարվել էր գովաբանել Գերմանիան, և նրանք հետևում էին այդ հրահանգին: «Jeune Turc»-ը՝ ֆրանսերենով տպագրվող ու Անտանտին համակրող օրաթերթը, արգելվեց: Թուրքական մամուլը չափազանցած էր ներկայացնում Գերմանիայի հաղթանակները կամ պարզապես հորինում էր դրանք: Մշտապես նորություններ էին տպագրում Անտանտի պարտությունների մասին, որպես կանոն՝ հնարովի: Օրվա վերջում Վանգենհայմն ու Պալավիչինին ինձ ցույց էին տալիս պաշտոնական հեռագրերը, որոնցում նկարագրվում էին ռազմական գործողությունների մանրամասները: Սակայն երբ ես առավոտյան ընթերցում էի թերթերը, պարզ էր դառնում, որ այդ լուրերն աղավաղված են կամ կեղծված հօգուտ Գերմանիայի: Ոմն բարոն Օպենհայմ ճամփորդում էր Թուրքիայով՝ ձևավորելով հակաանգլիական ու հակաֆրանսիական հասարակական կարծիք: Ներկայանում էր որպես հնագետ, սակայն իրականում ամենուրեք գրասենյակներ էր հիմնում, որտեղից զրպարտությունների հեղեղ էր թափվում Անտանտի երկրների գլխին: Պատերին հայտնվել էին հսկա քարտեզներ, որոնց վրա պատկերված էին այն բոլոր տարածքները, որ Թուրքիան կորցրել էր հարյուր տարվա ընթացքում: Ռուսաստանը ներկայացված էր որպես այդ «թալանների» հիմնական մեղավորը: Նա ուշադրություն էր հրավիրվում այն հանգամանքին, որ հիմա Անգլիան Ռուսաստանի դաշնակիցն է: Տպագրվող նկարներում Անտանտի երկրները ներկայացվում էին որպես անհագուրդ գազաններ, որ իրենց ճանկերը գցում են անպաշտպան Թուրքիայի վրա: Էնվերը պատկերվում էր որպես հերոս, ով կարողացավ հետ վերցնել Ադրիանապոլիսը, Գերմանիան՝ որպես Թուրքիայի բարեկամ: Կայսրը հանկարծ դարձավ «Վիլհելմ հաջի»՝ իսլամի մեծ պաշտպան: Նույնիսկ պատմություններ էին տպագրվում՝ իբր նա մահմեդականություն է ընդունել: Թուրքիայի բնակչությունը տեղեկացվում էր՝ իբր Հնդկաստանի ու Եգիպտոսի մահմեդականները պատրաստվում են ապստամբելու և դուրս նետելու անգլիացի «բռնակալներին»: Թուրք հասարակ մարդուն սովորեցնում էին արտասանել «Gott Strafe England» (Աստված պատժի Անգլիային - Լ. Թ.): Եվ այդ ողջ ժամանակաընթացքում այս խայտառակ քարոզչության շարժիչ ուժը գերմանական դրամն էր:

Սակայն Գերմանիան անում էր ավելին, քան պարզապես թուրքերի ուղեղը թունավորելը. Գերմանիան յուրացնում էր Թուրքիայի ռազմական պաշարները: Արդեն նկարագրել եմ, թե ինչպես 1914 թվականին Կայսրն իր հրամանատարության տակ վերցրեց թուրքական բանակը և վերափոխեց այն՝ պատրաստվելով եվրոպական պատերազմի: Այժմ նա այդ նույնն անում էր թուրքական նավատորմի հետ: Օգոստոսին Վանգեն-

հայմն պարծենալով ինձ ասաց. «Այժմ մենք վերահսկում ենք թուրքական բանակն ու նավատորմը»: Երբ «Գեբենն» ու «Բրեսլաուն» ժամանեցին, անգլիացի փորձագետների մի խումբ, որը ղեկավարում էր ծովակալ Լիմպասը, ջանասիրաբար իրականացնում էր թուրքական նավատորմի վերականգնման աշխատանքները: Շատ շուտով Լիմպասը և նրա թիմն առանց որևէ ձևականության հեռացվեցին աշխատանքից: Նրանց հանդեպ դրսևորված այդ վարվելակերպը, իրոք, նողկալի էր, քանի որ անգլիացիների նկատմամբ չցուցաբերվեցին քաղաքավարության ամենատարրական նշաններ: Բրիտանացի ծովային սպաներն անաղմուկ, առանց ուշադրություն գրավելու մեկնեցին Կոստանդնուպոլսից՝ ուղևորվելով Անգլիա. բոլորը՝ բացի ծովակալից. նա դստեր հիվանդության պատճառով հարկադրված էր դեռ մնալ:

Ամեն գիշեր Բեռլինից գերմանացիներ էին ժամանում Կոստանդնուպոլիս: Ի վերջո նրանց թիվը հասավ 3800 մարդու, որոնց մեծ մասն ուղարկվել էր համալրելու թուրքական նավատորմը և զինամթերք պատրաստելու: Երեկոյան նրանք լցվում էին սրճարանները, իսկ վաղ առավոտյան ողողում էին Կոստանդնուպոլսի փողոցները՝ հայրենասիրական երգեր գոռալով: Նրանցից շատերը հմուտ մեքենագետներ էին. նրանք անմիջապես անցան գործի՝ վերանորոգելով ռազմանավերը, դրանք նախապատրաստելով առաջիկա պատերազմի համար: Բրիտանական «Armstrong Vickers» ընկերությունը բարձրակարգ նավաշինարան ուներ Կոստանդնուպոլսում, որը զավթեցին գերմանացիները: Աշխատանքներն ընթանում էին գիշերուզօր, և մենք գրեթե չէինք քնում մետաղի անդադար զրնգոցից: Վանգենհայմը նոր հնարավորություն էր գտել Թալեաթի, Էնվերի ու Ջեմալի ուղեղները թունավորելու համար: Նա հայտարարեց, թե, գերմանացի վարպետների կարծիքով, թուրքական նավերը ծայրաստիճան անսարք վիճակում են և դրանում բնականաբար մեղադրեց անգլիացիներին: Ասաց նաև, որ անգլիացիները միտումնավոր չեն կանխել թուրքական նավատորմի քայքայումը, և հայտարարեց, որ դա Թուրքիան կործանելու անգլիացիների դավադրության մի մասն է: «Տեսե՛ք, - բացականչում էր նա, - տեսե՛ք, թե ինչ ենք անում մենք՝ գերմանացիներս, թուրքական բանակի համար, և ինչպես են վարվել անգլիացիները ձեր նավերի հետ»: Դա, իհարկե, բացարձակ սուտ էր. ծովակալ Լիմպասը խնամքով և հետևողականորեն ջանացել էր վերակառուցել թուրքական նավատորմը և հասել էր գերազանց արդյունքների:

Այդ ողջ ընթացքում գերմանացիներն աշխատում էին Դարդանելում՝ հզորացնելով ամրությունները և պատրաստվելով Անտանտի երկրների հնարավոր հարձակմանը: Սեպտեմբերին հաջորդեց հոկտեմբերը: Հիմա

արդեն Բարձր Դուռն ըստ էության դադարեց լինել Օսմանյան կայսրության ղեկավար մարմինը: Ես, հիրավի, կարծում եմ, որ այն պահին ղեկավարող իշխանության նստավայրը գերմանական առևտրական «Գեներալ» նավն էր, որը խարսխված էր Ոսկեղջյուրի ծոցում՝ Գալաթա կամրջի մերձակայքում, որտեղից դեպի նավը տանող աստիճան էր կառուցվել: Ինձ քաջ ծանոթ էր նավի այցելուներից մեկը՝ մի ամերիկացի, որ հաճախ էր այցելում ինձ դեսպանատանը և խոսում անցուդարձից: Նա պատմեց ինձ, որ «Գեներալը» փաստորեն գերմանական ակումբի կամ հյուրանոցի էր վերածվել: «Գեբենի» ու «Բրեսլաուի» սպաները, ինչպես նաև գերմանացի այլ սպաներ, որ ուղարկվել էին հսկողության տակ պահելու թուրքական նավերը, սնվում ու քնում էին նավում: Ծովակալ Սուշոնը, ով նավերը հասցրել էր Կոստանդնուպոլիս, վարում էր այդ հավաքները: Սուշոնը ֆրանսիացի հուգենոտների տոհմից էր, կարճահասակ էր ու ձիգ, իսկական ծովային, չափազանց խանդավառ մարդ էր, սուր աչքի տեր: Բծախնդրությունն ու հրամայելու զուտ գերմանական կիրքը նրա մեջ զուգակցվում էին գաղիական անմիջականությամբ և թեթևությամբ: Բնականաբար, նա զգալի աշխուժություն էր հաղորդում «Գեներալի» վրա տեղի ունեցող հավաքներին, որոնց ընթացքում շռայլորեն մատուցվող գարեջուրն ու շամպայնն անկաշկանդ էին դարձնում գերմանացի սպաների լեզուն: Նրանց արտահայտություններից պարզ էր դառնում, որ իրենք իրականում պատրանքներ չունեն թուրքական նավատորմի իրական ղեկավարության վերաբերյալ: Գործի անցնելու նրանց անհամբերությունն օրեցօր աճում էր: Գերմանացիները կրկին ու կրկին հայտարարում էին՝ եթե թուրքերն անհապաղ չհարձակվեն ռուսների վրա, ապա իրենք՝ գերմանացիները, կհարկադրեն թուրքերին անել այդ քայլը: Պատմում էին, թե ինչպես են նրանք գերմանական նավեր ուղարկել Սև ծով՝ այն հույսով, որ դա կհրահրի ռուսներին որևէ գործողության, ինչն անխուսափելի կդարձնի պատերազմը: Հոկտեմբերի վերջին օրերին ամերիկացի բարեկամս տեղեկացրեց, որ թշնամական գործողությունների հետաձգումն այլևս անհնար է դարձել. թուրքական նավատորմը պատրաստ է ռազմական գործողությունների, ամեն բան պատրաստ է. գերմանացի սպաների վայրենի անհամբերությունն այլևս անհնար է զսպել: «Նրանք նման են կռվազան, չարամիտ տղեկների: Կռիվ են փնտրում», - ասաց նա:

ԳԼՈՒԽ IX

Գերմանիան փակում է Դարդանելը՝ Ռուսաստանը կտրելով իր դաշնակիցներից

Սեպտեմբերի 27-ին սըր Լուի Մալեթը՝ Բրիտանիայի դեսպանը, չափազանց մտահոգված մտավ իմ աշխատասենյակ: Նրանից քիչ առաջ ինձ այցելել էր Եգիպտոսի խեդիվը, և ես սըր Մալեթի հետ սկսեցի զրուցել եգիպտական հարցերի շուրջ:

«Եկեք այդ մասին խոսենք մեկ այլ ժամանակ, - ասաց նա: - Ես շատ ավելի կարևոր լուր ունեմ ձեզ հայտնելու. նրանք փակել են Դարդանելը»: «Նրանք» ասելիս նա, անշուշտ, նկատի ուներ ոչ թե թուրքական կառավարությունը՝ այն միակ ուժը, որը օրինական իրավունք ուներ նման քայլ կատարելու, այլ Թուրքիան իրականում կառավարող գերմանացիներին: Սըր Լուի Մալեթը լուրջ հիմքեր ուներ ինձ հետ խորհրդակցելու այդ մասին. այդ քայլը ոչ միայն մարտահրավեր էր դաշնակից ուժերին, այլև Միացյալ Նահանգներին: Նա խնդրեց, որ մենք միասին գնանք ու համատեղ բողոք ներկայացնենք այդ քայլի դեմ: Ես, սակայն, նկատեցի, որ առանձին գործելն ավելի նպատակահարմար կլինի, և անհապաղ ուղևորվեցի մեծ վեզիրի մոտ:

Երբ տեղ հասա, կառավարության նիստ էր ընթանում: Նախասրահում սպասելիս լսում էի բարձր տոնով վիճող բորբոքված ձայներ: Աղմուկի մեջ հստակ լսելի էին Թալեաթի, Էնվերի, Ջավիդի՝ Ֆինանսների նախարարի, նաև կառավարության այլ անդամների ծանոթ ձայները: Այն, ինչ լսվում էր բարակ պատերի հետևից, բավարար էր եզրակացնելու համար, որ Թուրքիայի ազդեցիկ առաջնորդները նույնքան վրդովված են նեղուցի փակման փաստով, որքան սըր Մալեթն ու ես:

Իմ խնդրանքով մեծ վեզիրը դուրս եկավ սրահից՝ ինձ հետ զրուցելու համար: Բավական խղճուկ տեսք ուներ: Վեզիրը, առնվազն ըստ տիտղոսի, թուրքական կառավարության ամենակարևոր պաշտոնյան էր՝ սուլթանի խոսնակը, սակայն այդ պահին նա կատարյալ անօգնական, երկյուղած մեկն էր. դեմքը գունատ էր, մարմինը՝ դողդոջուն: Հուզմունքից չէր կարողանում խոսել: Երբ ես հարցրի՝ արդյոք ճիշտ է Դարդանելի փակման լուրը, նա վերջապես կարողացավ տիրապետել իրեն և հաստատեց լուրը: «Դուք, անշուշտ, գիտակցում եք, որ դա պատերազմ է նշանակում», - ասացի ես և Միացյալ Նահանգների անունից ամենայն խստությամբ դատապարտեցի այդ քայլը:

Մեր զրույցի ողջ ընթացքում ներսից լսվում էին Թալեաթի ու նրա պաշտոնակիցների բարձր ձայները: Մեծ վեզիրը ներողություն խնդրեց ու վերադարձավ նրանց մոտ: Այդ հարցն ինձ հետ քննարկելու համար նա ուղարկեց Զավիդին:

«Այս ամենը բոլորիս համար խիստ անսպասելի էր». սրանք էին Զավիդի առաջին բառերը: Նման խոստովանությունը խոսուն հայտարարություն էր առ այն, որ Թուրքիայի նախարարների խորհուրդն այն կասեցնելու ոչ մի հնարավորություն չունի: Ես կրկնեցի, որ Միացյալ Նահանգները չի հանդուրժի Դարդանելի փակումը. Թուրքիան պատերազմող երկիր չէ, և խաղաղ պայմաններում սուլթանն օրինական ոչ մի իրավունք չունի փակելու նեղուցն առևտրական նավերի դիմաց: Ասացի նաև, որ Ամերիկայի դեսպանության համար մթերքով ու պաշարներով բեռնված ամերիկյան մի նավ այս պահին գտնվում է նեղուցի մոտակայքում և սպասում է ներս մտնելու թույլտվության: Զավիդն առաջարկեց, որ նշված նավը բեռնաթափվի Զմյուռնիայում: Պատրաստակամությամբ ավելացրեց, որ թուրքական կառավարությունը կվճարի բեռները ցամաքով Կոստանդնուպոլիս փոխադրելու ծախսը: Այդ առաջարկը խնդրից խուսափելու ծիծաղաշարժ փորձ էր, և ես մերժեցի այն հենց նույն պահին:

Զավիդը տեղեկացրեց, որ Նախարարների խորհուրդն առաջարկում է քննության առնել այդ հարցը, և որ նրանք այդ պահին հենց դա են քննարկում: Նա ներկայացրեց ինձ իրադարձությունների շղթան. թուրքական տորպեդանավն անցել է Դարդանելով և փորձել է մտնել էգեյան ծով: Այնտեղ տեղակայված բրիտանական նավերը կանգնեցրել են թուրքական նավը, խուզարկել այն ու պարզել, որ այնտեղ գերմանացի ծովայիններ կան: Անգլիացի ծովակալն անմիջապես կարգադրել է, որ նավը հետ դառնա. այդ պարագայում նա միանգամայն իրավասու էր այդպես վարվել: Գերմանացի գեներալ Վեբեր փաշան, որ պատասխանատու էր ամրաշինությունների համար, առանց թուրքերի հետ խորհրդակցելու անմիջապես հրամայել էր փակել նեղուցը: Վանգենհայմն ինձ արդեն հայտնել էր պարծանքով, որ Դարդանելը հնարավոր է փակել երեսուն րոպեի ընթացքում, և այդ պահին գերմանացիներն ապացուցում էին դա: Նեղուցի մեջ իջեցվել էին ցանցեր ու ռումբեր, փարոսի լույսերը մարվել էին, բոլոր նավերին ազդանշաններով հաղորդել էին, որ նեղուցը փակ է: Այդպիսով գերմանացիներն իրականացրել էին մինչ օրս կատարած իրենց ամենահանդուգն արարքը: Իսկ այդ պահին Թուրքիայի պետական այրերը, որ բացառիկ իրավունք ունեին տնօրինելու ջրային այս կարևորագույն ճանապարհը, դողում և կարկամում էին՝ գերմանացիների

արարքից սարսափած, նմանվելով երկյուղած ճագարների, սակայն անկարող էին որևէ քայլ ձեռնարկել: Աչքերիս առջև ուրվագծվում էր պատկերն այն ծայրահեղ իրավիճակի, որին տևտոնական ճնշումն ու ահաբեկումը հասցրել էին թուրքական կառավարության առաջնորդներին: Եվ միևնույն պահին ես մտովի տեսնում էի սուլթանին, ում ստորագրությունն անհրաժեշտ էր նեղուցը փակելու համար, իսկ նա հանգիստ ննջում էր իր պալատում՝ բացարձակապես անտեղյակ այդ անցուդարձին:

Թեև Ջավիդն ինձ ասաց, որ կառավարությունը կարող է որոշում ընդունել Դարդանելը վերաբացելու մասին, սակայն նման որոշում չկայացվեց: Արդեն չորս տարի է՝ 1914թ. սեպտեմբերի 27-ից ի վեր, ինչ այդ կարևորագույն ջրուղին փակ է: Ինձ համար միանգամայն պարզ է, թե ինչ է խորհրդանշում այդ քայլը: 1914թ. սեպտեմբերը հիասթափությունների ամիս էր գերմանացիների համար. ֆրանսիացիները հետ մղեցին նրանց գրոհը և գերմանական բանակը քշեցին դեպի խրամատները էյնի երկայնքով: Ռուսները հաղթական արշավով անցան Գալիցիայով. նրանք արդեն գրավել էին Լեմբերգը և, ըստ ամենայնի, շուտով անցնելու էին Կարպատներն ու մտնեին Ավստրո-Հունգարիա: Այդ օրերին Պալավիչինին՝ Ավստրիայի դեսպանը, խղճուկ, հուսախաբ մարդու տեսք ուներ: Ինձ խոստովանեց, որ վախով է մտածում ապագայի մասին: Ավստրիայի դեսպանն ասաց նաև, որ կարճատև ու հաղթական պատերազմի գերմանական ծրագիրն ակնհայտորեն տապալվեց, և որ հիմա արդեն պարզ է, որ Գերմանիան կհաղթի (եթե, իհարկե, ընդհանրապես ի վիճակի է հաղթելու, ինչն ավելի ու ավելի կասկածներ է հարուցում) միայն երկարատև պայքարից հետո:

Արդեն ասացի, թե ինչպես Վանգենհայմը, թուրքական բանակն ու նավատորմը մշտապես պատրաստ վիճակում պահելով, երկիրն իր ձեռքն էր հավաքել՝ նպատակ ունենալով թուրքական ուժերն օգտագործել միայն այն դեպքում, եթե Գերմանիային չհաջողվի առաջին իսկ հարվածից ջախջախել Ֆրանսիան ու Ռուսաստանը: Հիմա, երբ ձախողումն այլևս բացահայտ էր, Վանգենհայմը ցուցում էր ստացել Թուրքիան դարձնել ակտիվ դաշնակից: Մինչ այդ պահը քսանմիլիոնանոց այս երկիրը պասիվ գործընկեր էր, որին Վանգենհայմը հեռու էր պահում ակտիվ գործողություններից, մինչ այն պահը, երբ Գերմանիան կվճռեր, որ անհրաժեշտ է վճարել Թուրքիային պատերազմի ակտիվ մասնակից դառնալու գինը: Եկել էր պահը, երբ Գերմանիային անհրաժեշտ էր թուրքական բանակը, և իրավիճակի կտրուկ փոփոխության ակնհայտ նշաններից էր Դարդանելը փակելը: Այդպիսով Վանգենհայմը կատարեց իր առջև դրված խնդիրը և այն հաղթանակով պսակեց՝ Թուրքիա բերելով

«Գեբենն» ու «Բրեսլաուն»: Նույնիսկ այսօր ամերիկացիներից քչերն են գիտակցում, թե ինչ վիթխարի նշանակություն ուներ այդ քայլը ռազմական հետագա գործողությունների համար: Մինչդեռ այն փաստը, որ պատերազմը ձգվեց այդքան երկար, բացատրվում է հենց Դարդանելի փակման փաստով:

Դարդանելը փակելը դեր խաղաց նաև Ռուսաստանն իր դաշնակիցներից կտրելու հարցում, ինչը ոչ ավելի, քան մեկ տարում հանգեցրեց Ռուսաստանի պարտությանն ու տապալմանը. դա իր հերթին հնարավոր դարձրեց Ռուսաստանում հեղափոխության հաղթանակը: Քարտեզը պարզ ցույց է տալիս, որ «Ռուսաստան» կոչվող այս անծայրածիր տարածքը բաց ծովերին հասնելու միայն չորս ուղի ունի. մեկը՝ Բալթիկ ծովով, որը գերմանական նավատորմն արդեն փակել էր, մյուսը Արխանգելսկ նավահանգիստն էր՝ Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի ափերին, որը տարին մի քանի ամիս սառած է լինում, և Ռուսաստանի սրտի հետ կապված է միայն միագիծ երկաթուղով: Հաջորդը խաղաղօվկիանոսյան Վլադիվոստոկ նավահանգիստն է, որը նույնպես տարին երեք ամիս սառցակալած է լինում, և որը Ռուսաստանի հետ կապված է Սիբիրյան երկաթուղու նեղ՝ 5000 մղոն երկարությամբ ճանապարհով: Չորրորդ ուղին Դարդանելն է, որն իրականում միակ պիտանի ճանապարհն է: Այդ նեղ դարպասով հարյուր յոթանասունհինգ միլիոն բնակչություն ունեցող երկրի արտադրանքը հասնում էր Եվրոպա, և ռուսական բոլոր արտահանումների և ներկրումների ինը տասներորդը տարիներ շարունակ անցնում էր այդ ճանապարհով: Անսպասելիորեն փակելով Դարդանելը՝ Գերմանիան կործանեց Ռուսաստանը և՛ որպես տնտեսական, և՛ որպես ռազմական ուժ:

Արգելափակելով ռուսական ցորենի արտահանումը՝ Գերմանիան զրկեց նրան այն ֆինանսական զորությունից, ինչն անհրաժեշտ էր պատերազմում հաջողության հասնելու համար: Թերևս ավելի բախտորոշ էր այն, որ Գերմանիան կանխեց անգլիական ու ֆրանսիական զինամթերքի առաքումը ռուսական ռազմաճակատ այն քանակով, որն անհրաժեշտ էր գերմանացիների գրոհները հետ մղելու համար: Դարդանելը փակելուն պես Ռուսաստանը հարկադրված եղավ բավարարվել Արխանգելսկի ու Վլադիվոստոկի նավահանգիստներով՝ վերոնշյալ պաշարները ստանալու համար: 1915 թվականին Ռուսաստանի ռազմական ձախողման պատճառն այսօր արդեն ակնհայտ է. զինվորները կռվելու համար պարզապես զինամթերք չունեին: 1918 թվականի առաջին կեսի ընթացքում Գերմանիան ապարդյուն փորձում էր «սեպ խրել» Անգլիայի ու Ֆրանսիայի բանակների մեջ արևմտյան ռազմաճակատում. այն է՝ անջա-

տել Դաշնակիցներին և այդպիսով հնարավորություն ստանալ նրանց վրա առանձին-առանձին գրոհելու: Սակայն ռուս- ֆրանսիական պայմանագիրն ի չիք դարձնելու և Ռուսաստանի ու նրա արևմտյան դաշնակիցների միջև «սեպ խրելու» գործողությունն ավելի հեշտ եղավ: Դա, ինչպես արդեն նշեցի, պարզ խնդիր էր. հարկ էր վերահսկել կաշառակեր, թուլակամ կառավարությանը, այնուհետև, քանի դեռ երկիրը պատերազմի մեջ չէր, ձեռքը վերցնել նրա գործադիր իշխանությունը, տիրանալ երկրի բանակին, նավատորմին ու պաշարներին: Ապա անհրաժեշտ պահին, արհամարհելով երկրի թվացյալ ղեկավարներին, փակել մոտավորապես քսան մղոն երկարությամբ և երեք մղոն լայնությամբ ջրային նեղ ճանապարհը: Չզոհաբերվեց մարդկային ոչ մի կյանք, չարձակվեց ոչ մի կրակոց, և այդուհանդերձ Գերմանիան արեց այն, ինչն ըստ ամենայնի չէր կարող իրականացնել երեքմիլիոնանոց բանակը, որը պիտի դիմակայեր լավ զինված ռուսական բանակին: Սա պատերազմի ամենադրամատիկ հաղթանակներից էր, որն իրականացվեց գերմանական քարոզչության, գերմանական ներթափանցման և գերմանական դիվանագիտության շնորհիվ:

Ռուսաստանի մեկուսացմանը հաջորդած օրերին Բոսֆորը նմանվել էր նավահանգստի, որին պատուհասել էր ժանտախտը: Յորենով, փայտով և այլ ապրանքներով բեռնված հարյուրավոր նավեր էին ժամանում այնտեղ Ռուսաստանից, Ռումինիայից, Բուլղարիայից, սակայն պարզում էին, որ ջրուղին փակ է: Նավերն ընդունելու համար կառամատույցների թիվը բավարար չէր, և նավերը հարկադրված էին հետ քաշվել նեղուցից, խարիսխ գցել մոտակայքում՝ սպասելով հետագա զարգացումներին: Ջրային տարածքը կայմերի, ծխնելույզների խճակծիկ էր ասես. նավերն այնքան շատ էին, որ մոտորային փոքր նավակները դժվարությամբ էին շրջանցում դրանք: Թուրքերն ակնարկում էին, թե հնարավոր է, որ նեղուցը բացվի, և այդ պատճառով նավերը, որոնց թիվն օր օրի աճում էր, մոտավորապես մեկ ամիս համբերությամբ սպասում էին: Սակայն հետո մեկը մյուսի հետևից շրջվեցին դեպի Սև ծով և վհատված ճանապարհվեցին տուն: Մի քանի շաբաթից Բոսֆորն ու նրա հարակից ջրերն ամայացան: Տարիներ շարունակ աշխարհի այս ամենաաշխույժ նավահանգիստներից մեկի անդորրն այժմ խախտում էր միայն պատահական շարժումը. երբեմն թուրքական որևէ նավակ կամ ոչ մեծ առագաստանավ էր անցնում: Ստույգ պատկերացում կազմելու համար, թե ինչ էր դա նշանակում ռազմական տեսանկյունից, բավական է հիշատակել հաջորդ տարի Ռուսական ռազմաճակատում տեղի ունեցած կռիվները. գերմանական հրետանու դեմ ռուս մուժիկները կռվում էին իրենց անպաշտպան

մարմիններով, հատուկենտ ատրճանակներով ու հրացաններով, այն դեպքում, երբ անօգուտ ռազմամթերքի սարեր էին կուտակվում ռուսների հեռավոր խաղաղօվկիանոսյան և հյուսիսային նավահանգիստներում. չկար երկաթուղի, որ դրանք հասցներ ռազմաճակատ:

ԳԼՈՒԽ X

Թուրքիան վերացնում է կապիտուլյացիաները էնվերն ապրում է պալատում. մեծ փողեր և հարսնացու՝ կայսերական ընտանիքից

Մեկ այլ հարց, որը տարիներ շարունակ քննարկման առարկա էր, հիմա դարձավ Թուրքիայի միջազգային իրավիճակին առնչվող խնդիր. դա կապիտուլյացիաների[15] խնդիրն էր: Դրանք պայմանագրերով ամրագրված իրավունքներ էին, որոնք դարեր շարունակ որոշում էին օտարազգիների կարգավիճակը Օսմանյան կայսրությունում: Եվրոպական տերությունների կողմից Թուրքիան երբևէ որպես հավասար չի ընկալվել և երբեք լիովին անկախ չի եղել: Սուլթանի օրենքներն ու երկրի սովորույթներն այն աստիճանի տարբեր էին Եվրոպայի և Ամերիկայի օրենքներից ու սովորույթներից, որ ոչ մի քրիստոնյա երկիր չէր հանդուրժի դրանց կիրառումը Թուրքիայում գտնվող իր քաղաքացիների հանդեպ: Այդ էր պատճառը, որ շատ դեպքերում Թուրքիայի հետ կապիտուլյացիաների պայմանագիր ունեցող երկրների քաղաքացիների կամ հպատակների հանդեպ գործում էր արտաերկրայնության սկզբունքը: Եվրոպական գրեթե բոլոր երկրները, ինչպես նաև Միացյալ Նահանգները, տարիներ շարունակ ունեցել են իրենց հյուպատոսական դատարաններն ու բանտերը, որտեղ դատվել ու դատապարտվել են Թուրքիայում հանցանք գործած իրենց քաղաքացիները: Թուրքիայում գործում էին նաև ամերիկյան դպրոցներ, որոնք ենթարկվում էին ոչ թե թուրքական օրենքներին, այլ այն երկրի օրենքներին, որը հոգ էր տանում նրանց մասին՝ ԱՄՆ-ի: Այսպես՝ ամերիկյան բարեգործական ջանքերով ստեղծված «Ռոբերտ քոլեջը» և Կոստանդնուպոլսի Կանանց քոլեջը՝ Բոսֆորի ափին գտնվող այդ հիասքանչ հաստատությունները, ինչպես նաև կրոնական, բարեգործական, կրթական հարյուրավոր այլ հաստատություններ փաստորեն ամերիկյան տարածք էին և ի դեմս ԱՄՆ դեսպանության տեսնում էին իրենց պաշտպանին: Պետություններից մի քանիսն ունեին սեփական փոստային գրասենյակներ, քանի որ չէին ցանկանում իրենց նամակագրությունը վստահել օսմանյան փոստային ծառայությանը: Թուրքիայում օտարերկրացիներին հարկելու իրավունքը նույնպես սահմանափակ էր: Առանց օտար պետությունների համաձայնության Թուրքիան չէր կարող նույնիսկ ավելացնել մաքսատուրքերը: 1914 թվականին մաքսատուրքերը Թուրքիայում կազմում էին 11 տոկոս: Թուրքական կառավարությունը փորձում էր բարձրացնել դրանք մինչև 14 տոկոս: Մենք Անգլիան

մշտապես դիտարկել ենք որպես ազատ առևտուր ունեցող միակ երկիրը՝ անտեսելով այն փաստը, որ թուրքական մաքսատուրքերի այս սահմանափակումը Օսմանյան կայսրությունը դարձնում էր Կոբդենի[16] ակամա հետևորդը: Թուրքիային արգելված էր զարգացնել սեփական արդյունաբերությունը, փոխարենը երկիրը հարկադրված էր մեծ քանակությամբ անորակ ապրանք գնել Եվրոպայից: Թուրքիայի պետական այրերը տարիներ շարունակ պայքարում էին այդ սահմանափակումների դեմ՝ հայտարարելով, որ դրանք վիրավորում են թուրք ժողովրդի արժանապատվությունը և խոչընդոտում Թուրքիայի առաջընթացին: Համաձայնությունը երկկողմ էր, և Թուրքիան չէր կարող փոխել այն առանց մասնակից բոլոր կողմերի համաձայնության: Այդ պահին, երբ և՛ Անտանտը, և՛ Կենտրոնական տերությունները փորձում էին սիրաշահել Թուրքիային, փոփոխություններ կատարելու արտակարգ առիթ էր ստեղծվել: Այսպիսով, այն պահին, երբ գերմանացիները սկսեցին իրենց արշավը դեպի Փարիզ, լուրեր տարածվեցին, թե Թուրքիան մտադիր է անվավեր ճանաչել կապիտուլյացիաների վերաբերյալ պայմանագիրը: Լուրեր էին պտտվում նաև, թե Գերմանիան համաձայնել է դրան՝ հաշվի առնելով Թուրքիայի հնարավոր աջակցությունը պատերազմում, և որ Անգլիան իր հերթին համաձայնել է աբրոգացիայի[17]՝ որպես Թուրքիան չեզոքացնելու գնի մի մաս: Լուրերից և ոչ մեկը իրականությանը չէր համապատասխանում: Սակայն աբրոգացիայի հավանականությունն արդեն խուճապահար արեց Թուրքիայի օտարազգի բնակչությանը: Թուրքական օրենքներին ենթարկվելու, թուրքական բանտերում հայտնվելու հնարավորությունն իսկ սառեցնում էր նրանց արյունը, և դա անհիմն սարսափ չէր:

Այդ օրերին ես երկարատև զրույց ունեցա Էնվերի հետ: Նա խնդրեց ինձ այցելել իրեն տանը, քանի որ վիրաբուժական գործողությունից հետո պառկած էր ոտքի մատի բորբոքված վերքով: Եվ այդպես ես առիթ ունեցա տեսնելու Պատերազմի նախարարին տնային պայմաններում: Համեստ ծագումով այս անձնավորությունը հիմա արդեն վերնախավի դեմքերից էր: Քաղաքի ամենախաղաղ ու հարուստ շրջաններից մեկում գտնվող նրա տունը հիասքանչ հինավուրց շինություն էր՝ չափազանց ընդարձակ ու անսահման շքեղ: Ինձ ուղեկցեցին չորս թե հինգ նախասրահների միջով. դռներից մեկը կիսաբացվեց, և այնտեղից ինձ վրա փութանցիկ հայացք նետեց Նորին մեծություն արքայադուստրը՝ Էնվերի կինը: Քիչ այն կողմ մեկ այլ թուրք տիկին բացեց դուռը և խուսափուկ նայեց ԱՄՆ դեսպանին: Վերջապես ինձ ուղեկցեցին մի գեղեցիկ սենյակ, որտեղ բազմոցին պառկած էր Էնվերը: Հագին մետաքսե երկար խալաթ էր, իսկ գուլպաներով ոտքերը կախվել էին բազմոցի եզրից: Այդ հա-գուս-

տով էնվերը շատ ավելի երիտասարդ տեսք ուներ, քան համազգեստով. խնամված գունատ դեմք, որն ավելի էր ընդգծում նրա թուխ մազերը, ճերմակամաշկ նուրբ ձեռքեր՝ բարակ, երկար մատներով: Կարող էր թվալ, թե նա երեսուն տարեկան էլ չկա, մինչդեռ իրականում նրա տարիքը երեսունից շատ ավելին էր: Ձեռքին ջութակ կար, սենյակում գտնվող դաշնամուրն էլ վկայում էր, որ նա սիրում է երաժշտություն: Պատերին հրաշալի պաստառներ էին, իսկ ամենաուշագրավը ոչ բարձր հարթակն էր՝ վրան ոսկեզօծ աթոռ. էնվերի՝ արքայական գերդաստանի պատկանող կնոջ հարսանեկան գահն էր: Խոստովանեմ, որ ինձ շրջապատող այդ շքեղությունը որոշ ոչ այնքան բարի մտքեր արթնացրեց իմ մեջ, և ես չէի կարող չխորհել մի հարցի շուրջ, որը հետագայում հաճախ էր հնչում Կոստանդնուպոլսում. էնվերին որտեղի՞ց այդքան դրամ՝ այս շքեղությունը ստեղծելու համար: Սեփական միջոցներ նա չուներ. ծնողները ծայրահեղ չքավոր էին, իսկ նախարարական աշխատավարձը մոտավորապես ութ հազար ամերիկյան դոլարի չափ էր: Կինը համեստ գումար էր ստանում որպես արքայական ընտանիքի անդամ, չուներ մասնավոր եկամուտ: Էնվերը ձեռներեց անձնավորություն չէր. ողջ կյանքում եղել էր հեղափոխական, ռազմական առաջնորդ և քաղաքական գործիչ: Իսկ հիմա ապրում էր այնպիսի շքեղության մեջ, ինչը, անշուշտ, չափազանց մեծ եկամուտ էր ենթադրում: Ակնհայտ էր, որ էնվերը խոշոր ու անակնկալ հարստություն էր ձեռք բերել: Ես արդեն լսել էի անշարժ գույքի մեջ կատարած նրա ներդրումների մասին, ինչը քաղաքում խոսակցության թեմա էր դարձել:

Էնվերը ցանկանում էր քննարկել կապիտուլյացիաները: Ասաց, որ կառավարությունը փաստորեն դրանք չեղյալ հայտարարելու որոշում է կայացրել, և որ իրեն հետաքրքրում է Միացյալ Նահանգների կարծիքը: Ապա ավելացրեց նաև, որ, անշուշտ, մի երկիր, որը պայքարել է իր անկախության համար, պետք է համակրանքով վերաբերվի Թուրքիային, որը փորձում է թոթափել լուծը: Միացյալ Նահանգները օժանդակել է Ճապոնիային՝ ձերբազատվելու այդ լծից: Կօգնե՞նք արդյոք հիմա Թուրքիային. չէ՞ որ Թուրքիան Ճապոնիայից պակաս քաղաքակիրթ երկիր չէ:

Ես պատասխանեցի, որ Ամերիկան կարող է համաձայնել կապիտուլյացիաների կասեցմանը, եթե խոսքը դրանց տնտեսական բաղադրիչի մասին է: Ես այն կարծիքին էի, որ Թուրքիային անհրաժեշտ է իրավունք տալ վերահսկելու մաքսատուրքեր գանձելը և օտարերկրացիներին հարկել նույն չափով, որքանով սեփական քաղաքացիներին: Սակայն քանի դեռ թուրքական դատարանները և բանտերը շարունակում են մնալ ներկայիս վիճակում, մենք երբեք չենք հանդուրժի դատական ոլորտին

առնչվող կապիտուլյացիաների վերացումը: Թուրքիան պետք է անհրաժեշտաբար վերացնի դատարաններում տիրող չարաշահումները: Իսկ հետո, երբ արդարություն իրականացնելիս նրանք սկսեն առաջնորդվել եվրոպական գաղափարներով, այդ հարցը կարելի է քննարկել: Էնվերն ասաց, որ Թուրքիան չի առարկի տարբեր ատյաններ ունենալու գաղափարին, և համաձայն է, որ որոշ դատավորների նշանակի ԱՄՆ-ը: Սակայն ես առարկեցի. քանի որ ամերիկացի դատավորները չեն տիրապետում թուրքերենին և ծանոթ չեն թուրքական օրենքներին, Էնվերի այդ առաջարկի իրականացումն ունի գործնական զգալի դժվարություններ: Ասացի նաև, որ ամերիկյան դպրոցներն ու քոլեջները չափազանց թանկ են ամերիկացիների համար, և որ մենք երբևիցե չենք համաձայնի հանձնել դրանք թուրքական իրավասությանը:

Բոլոր դեսպանների կողմից ներկայացված բողոքներին հակառակ՝ թուրքական կառավարությունը տեղեկացրեց, որ հոկտեմբերի 1-ից կապիտուլյացիաներն անվավեր են ճանաչվում: Այս աբրոգացիան երիտթուրքերի՝ արտասահմանյան խնամակալությունից ազատվելու և նոր՝ «Թուրքիան թուրքերի համար» սկզբունքի վրա հիմնված երկիր կառուցելու ծրագրի մաս էր: Ինչպես հետագայում կհամոզվենք, այդ սկզբունքը թուրքական քաղաքականության կիզակետն էր ոչ միայն օտար պետությունների, այլև սեփական հպատակների հետ ունեցած հարաբերություններում: Այս հարցի վերաբերյալ Անգլիայի դիրքորոշումը չէր տարբերվում Միացյալ Նահանգների դիրքորոշումից. բրիտանական կառավարությունը կարող է համաձայնել տնտեսական, բայց ոչ մյուս սահմանափակումների վերացմանը: Վանգենհայմը լրջորեն մտահոգված էր, և, ըստ իս, Գերմանիայի արտաքին գործերի գերատեսչությունը նախատել էր նրան աբրոգացիան հանդուրժելու համար, քանի որ նա առանց քաշվելու խնդրեց հայտարարել, որ դրա պատասխանատուն ես եմ եղել: Որքան մոտենում էր հոկտեմբերի 1-ը, այնքան աճում էր Թուրքիայում գտնվող օտարազգիների տագնապը: Դարդանելի նեղուցը փակ էր, նրանք կտրված էին Եվրոպայից և հիմա մնացել էին թուրքական դատարանների ու բանտերի բարեգթության հույսին: Քանի որ թուրքական բանտերում անմեղ մարդկանց պահում էին հանցագործների հետ մեկտեղ, մանր զանցանքների համար մեղադրվող, սակայն դեռևս չդատապարտված անձանց նետում էին մարդասպանների բանտախցերը և խոշտանգում էին անհնազանդ վկաներին չհամագործակցելու համար, ուստի Թուրքիայի օտարերկրացի բնակիչների սարսափը միանգամայն հասկանալի էր դառնում: Կրթական հաստատությունները նույնպես մտավախություններ ունեին: Նրանց շահերը պաշտպանելու համար ես դիմեցի Էնվերին: Նա

հավատացրեց, որ թուրքերն ամերիկացիների նկատմամբ թշնամական դիտավորություններ չունեն: Ես պնդեցի, որ նա պետք է աներկբայորեն ապացուցի, որ ամերիկացիներին ոչինչ չի սպառնում:

- Շատ բարի, - ասաց նա, - ի՞նչ եք առաջարկում:

- Կարո՞ղ եք կապիտուլյացիաները չեղյալ հայտարարելու օրը բացեիբաց այցելել «Ռոբերտ քոլեջ»:

Սա անսովոր առաջարկ էր, քանի որ նշված հաստատության ողջ պատմության ընթացքում և ոչ մի բարձրաստիճան թուրք պաշտոնյա չէր այցելել այնտեղ: Սակայն ես բավականաչափ ուսումնասիրել էի թուրքերի բնավորությունը՝ հասկանալու համար, որ Էնվերի հանդիսավոր այցը հասարակական ցնցում կառաջացնի: Այդ այցի վերաբերյալ շրջանառվող լուրերը կհասնեն կայսրության ամենահեռավոր անկյունները, և թուրքերի համար դա վստահաբար կնշանակի, որ Թուրքիայի ամենաազդեցիկ դեմքերից մեկը այս և ամերիկյան մյուս հաստատությունները վերցրել է իր հովանավորության ներքո: Նման այցն ամերիկյան դպրոցների ու քոլեջների համար կունենար ավելի մեծ պաշտպանական նշանակություն, քան՝ մի ողջ զորամաս: Եվ ես չափազանց ուրախ էի, որ Էնվերն անմիջապես համաձայնեց այդ առաջարկին:

Կապիտուլյացիաների կասեցման օրը Էնվերը երկու մեքենայի ուղեկցությամբ ժամանեց ԱՄՆ դեսպանատուն: Մեքենաներից մեկը նրա և ինձ համար էր, մյուսը՝ նրա համհարզների, ովքեր համազգեստով էին: Ես գոհ էի, որ այդ ողջ ձեռնարկը Էնվերն իրականացնում էր մեծ շուքով, քանզի իմ ցանկությունն էր, որ այն հնարավորինս լայն արձագանք ստանար: Ճանապարհին ես Էնվերին պատմեցի ամերիկյան կրթական հաստատությունների և Թուրքիայում նրանց կատարած աշխատանքի մասին: Նա շատ տեղեկացված չէր դրանց մասին ու թուրքերի ճնշող մեծամասնության պես կասկածներ ուներ, թե դրանք քաղաքական քողարկված նպատակներ ունեն: «Մենք՝ ամերիկացիներս, - ասացի ես,- Թուրքիայում նյութական շահ չենք հետապնդում: Պարզապես ցանկանում ենք, որ դուք բարյացակամ վերաբերմունք ցուցաբերեք մեր երեխաների ու քոլեջների հանդեպ, որոնք շատ թանկ են ամեն մի ամերիկացու սրտին»: Ասացի նաև, որ պարոն Քլիվլենդ Հ. Դոջը՝ «Ռոբերտ քոլեջի» հոգաբարձուների խորհրդի նախագահը, և պարոն Չարլզ Ռ. Քրեյնը՝ Կանանց քոլեջի հոգաբարձուների խորհրդի նախագահը, ԱՄՆ Նախագահ Վուդրո Վիլսոնի մտերիմ բարեկամներն են: «Այս կրթական հաստատությունները, - ավելացրի ես, - ներկայացնում են այն դրականը, ինչ գոյություն ունի Ամերիկայում, և ալտրուիզմի այն ոգին, որը մեր երկրում հարստություն է կուտակում, իսկ հետո օգտագործում այն դպրոցներ ու քոլեջներ հիմ-

նելու համար: Թուրքիայում նման հաստատություններ հիմնելով՝ նրանք ոչ թե ջանում են դավանափոխ անել թուրքերին՝ ուղղորդելով նրանց դեպի քրիստոնեություն, այլ օգնել նրանց գիտություն ու արվեստ ունենալու և այդպիսով դաստիարակելու ավելի լավ քաղաքացիներ: Ամերիկացիների համոզմամբ՝ այս բիբլիական հողն է տվել նրանց իրենց կրոնը, և նրանք ցանկանում են փոխհատուցել դա այն լավագույնով, ինչն ունի Ամերիկան՝ կրթական համակարգը»: Այնուհետև ես նրան պատմեցի տիկին Ռասըլ Սեյջի և օրիորդ Հելեն Գուլդի մասին, ովքեր զգալի նվիրատվություններ էին կատարել Կանանց քոլեջին:

- Բայց նրանց որտեղի՞ց այդքան միջոցներ նման բարեգործության համար, - հարցրեց Էնվերը:

Մեկ ժամի չափ ես նրան զբաղեցրի պատմություններով մեր սեփական «Ամերիկյան գիշերներից»: Պատմեցի, թե ինչպես Ջեյ Գուլդը՝ թշվառ մի պատանի, ժամանեց Նյու Յորք առանց մի սենթի, ձեռքում՝ մկնաթակարդ, որ ինքն էր նախագծել, և թե ինչպես երեսուն տարի անց նա մահացավ՝ թողնելով հարյուր միլիոն դոլարի հարստություն: Պատմեցի նաև, թե ինչպես Կոմոնդոր Վանդերբիլթն իր կյանքը սկսել է որպես լաստանավ վարող, իսկ հետագայում դարձել էր Ամերիկայի երկաթգծերի ամենախոշոր մագնատը, թե ինչպես Ռոկեֆելլերն իր գործունեությունն սկսել էր Քլիվլենդի առևտրական ֆիրմայում որպես շարքային ծառայող՝ շաբաթական վեց դոլար աշխատավարձով, իսկ հետագայում կուտակել համաշխարհային պատմության մեջ ամենախոշոր կապիտալը, որը երբևէ եղել է մեկ մարդու ձեռքին: Ես պատմեցի Էնվերին, թե ինչպես Դոջերը դարձան Ամերիկայի «պղնձե արքաները», իսկ Քրեյնները՝ մետաղյա խողովակների խոշորագույն արտադրողներ: Էնվերի կարծիքով, այդ պատմությունները շատ ավելի զմայլելի էին, քան արաբական «Հազար ու մի գիշերների» որևէ հեքիաթ: Ավելի ուշ ես իմացա, որ նա այդ պատմություններն այնքան հաճախ էր պատմել, որ Կոստանդնուպոլսի գրեթե ողջ վերնախավը գիտեր դրանք: Էնվերը չափազանց տպավորված էր նաև այն ամենով, ինչ պատմեցի ամերիկյան կրթական հաստատությունների մասին: Նա շրջեց բոլոր կառույցներում՝ արտահայտելով իր խանդավառությունը տեսածի հանդեպ, նույնիսկ ասաց, որ կկամենար իր եղբորն ուղարկել այնտեղ: Հետո թեյ խմեց տիկին Գեյթսի՝ նախագահ Գեյթսի տիկնոջ հետ, խելամտորեն քննարկեց ուսումնական ծրագրերը և հարցրեց, թե արդյոք չենք կարող ուսումնական ծրագրում ներառել նաև գյուղատնտեսության վերաբերյալ դասընթացներ: Նրա համար իրապես հայտնություն էին ուսուցիչները, որոնց նա հանդիպեց: «Ես ակնկալում էի տեսնել միսիոներների, ինչպես նրանց պատկերում են

բեռլինյան լրագրերում, - ասաց նա, - երկար մազերով, կախ ծնոտներով, ձեռքերը՝ աղոթքի համար մշտապես իրար հպած: Մինչդեռ հանդիպեցի դոկտոր Գեյթսին, ով ազատ տիրապետում է թուրքերենին և գործում է որպես աշխարհիկ անձնավորություն: Ես անչափ տպավորված եմ. շնորհակալությո՛ւն ինձ այստեղ բերելու համար»:

Այդ օրը մենք էնվերին տեսանք նրա ամենահաճելի կողմից: Իմ այն գաղափարը, թե նրա այցն ինքնին քոլեջները կպաշտպանի ոտնձգություններից, արդարացվեց: Վերջին չորս տարվա ընթացքում Օսմանյան Թուրքիան բավականաչափ վտանգավոր տեղ էր դարձել, սակայն ամերիկյան քոլեջները որևէ խնդիր չունեցան ո՛չ Թուրքիայի կառավարության և ո՛չ էլ թուրք բնակչության հետ:

Հիրավի, տագնապալի իրադարձությունների շարքում էնվերի այս այցը հաճելի դրվագ էր: Էնվերը, որ կարող էր երբեմն շատ սիրալիր լինել, կանխամտածված կերպով Թուրքիան նետեց պատերազմի մեջ՝ որպես Գերմանիայի դաշնակից: Հիմա արդեն Գերմանիան հասել էր այն կետին, երբ այլևս չէր թաքցնում իր մտադրությունները: Ինչպես արդեն նշեցի, պատճառն այն էր, որ այդ պահին Գերմանիան ցանկանում էր Թուրքիային հեռու պահել պատերազմից, քանի որ Գլխավոր շտաբը ակնկալում էր, որ հաղթանակի կհասնի առանց Թուրքիայի աջակցության: Սակայն հիմա արդեն Վանգենհայմը ցանկանում էր, որ Թուրքիան մտնի պատերազմի մեջ: Այդ ժամանակ ես հանդես էի գալիս գերմանական շահերի դեմ՝ ջանալով պաշտպանել ամերիկյան հաստատությունները և էնվերին ու Թալեաթին հորդորում էի երկիրը չներքաշել պատերազմի մեջ: Դա բարկացնում էր Վանգենհայմին:

- Ես կարծում էի, թե դուք չեզոք եք, - բացականչեց նա:

- Իսկ ես կարծում էի՝ դո՛ւք եք չեզոք Թուրքիայում, - պատասխանեցի ես:

Հոկտեմբերի վերջին Վանգենհայմն արդեն ամեն ինչ նախապատրաստել էր ռազմական գործողությունների համար. հիմա միայն մի լավ առիթ էր պետք:

Թեև Գերմանիան փակել էր Դարդանելը, այդուհանդերձ, Գերմանիայի դեսպանի գործը հեշտ չէր: Թալեաթը դեռևս վստահ չէր, որ իր համար քաղաքական լավագույն քայլը պատերազմն է, քանի որ, ինչպես արդեն նշեցի, պաշտոնական շրջանակներում Դաշնակիցները բավական մեծ թվով համակիրներ ունեին: Թալեաթի ծրագիրն էր ոչ թե նախարարական բոլոր աթոռները միանգամից զավթելը, այլ աստիճանաբար իր համար ուղի հարթելը դեպի բացարձակ իշխանություն: Վճռական այս պահին կառավարության ամենահարգված անդամներն էին Ֆինանսների նա-

խարար Ջավիդը՝ ծագումով հրեա, դավանանքով մահմեդական, Հասարակական աշխատանքների նախարար Մահմուդ փաշան՝ ազգությամբ չերքեզ, Առևտրի և գյուղատնտեսության նախարար Բուստանի էֆենդին՝ քրիստոնյա արաբ, և Օսկան էֆենդին՝ Փոստի և հեռագրատների նախարարը՝ ազգությամբ հայ և իհարկե՝ քրիստոնյա: Բոլոր այս ղեկավարները, ինչպես նաև մեծ վեզիրը, բացահայտ դեմ էին պատերազմին և տեղեկացրել էին Էնվերին ու Թալեաթին, որ հրաժարական կտան, եթե Գերմանիայի դավերը հաջողությամբ պսակվեն: Մթնոլորտը շիկացած էր. մեկ դրվագը կբացահայտի, թե որքան էր շիկացած. սըր Լուի Մալեթը՝ Բրիտանիայի դեսպանը, ընդունեց հոկտեմբերի 20-ին ԱՄՆ դեսպանատանը ճաշելու իմ հրավերը, սակայն վերջին պահին տեղեկացրեց, որ վատառողջ է և չի կարողանա գալ: Մեկ-երկու ժամ անց ես այցելեցի սըր Լուի Մալեթին և գտա նրան իր այգում միանգամայն հիանալի վիճակում: Սըր Լուին ժպտաց ու խոստովանեց, որ իր «հիվանդությունը» զուտ քաղաքական բնույթի է: Նա նամակ էր ստացել, որ այդ երեկո իր վրա մահափորձ է կատարվելու. հայտնում էին ողբերգության ստույգ վայրն ու ժամը: Այդ պատճառով նա վճռել էր մնալ տանը: Քանի որ ես կասկած չունեի, որ նման հանցագործությունը միանգամայն հնարավոր է, սըր Լուիին առաջարկեցի մեր դեսպանության պաշտպանությունը: Տվեցի մեր այգու հետին դռան բանալին և լորդ Ուեսլիի՝ նրա քարտուղարներից մեկի հետ (նա դուքս Վելինգտոնի տոհմից էր) կատարեցի բոլոր նախապատրաստությունները՝ նրան մեր դեսպանատուն փոխադրելու համար, եթե դրա կարիքը լինի: Մեր երկու դեսպանատները տեղակայված էին այնպես, որ հարձակման դեպքում նա կարող էր աննկատ դուրս գալ իր այգու հետևի դռնակից և մտնել մեր այգի: «Այս մարդիկ վերադառնում են միջնադար, - ասաց սըր Լուին, - երբ միանգամայն ընդունելի էր դեսպաններին ստորգետնյա զնդան նետելը»: Մտածեցի՝ նրա մտքով անցնում է, թե ժամանակակից թուրքերը կարող են իր հետ նույնկերպ վարվել:

Ես անմիջապես գնացի մեծ վեզիրի մոտ և տեղեկացրի իրավիճակի մասին՝ պնդելով, որ իրադրությունը կարող է շտկել միայն Թալեաթի այցը՝ հավաստիքներով, որ սըր Լուիին ոչինչ չի սպառնում: Պահանջս միանգամայն տեղին էր, քանզի ճգնաժամի պայմաններում մենք էինք ներկայացնում բրիտանական շահերը: Երկու ժամ անց Թալեաթն այցելել էր սըր Լուիին: Թեև թուրքական թերթերից մեկը վիրավորական նյութեր էր տպագրում սըր Լուի Մալեթի մասին, սակայն նա անձամբ վայելում էր թուրքերի համակրանքը: Մեծ վեզիրը, որ անկեղծորեն վրդովված էր այդ սպառնալիքից, հայտնեց իր զարմանքն ու ափսոսանքը, որ նման բան է տեղի ունեցել:

ԳԼՈՒԽ XI

Գերմանիան պատերազմի մեջ է ներքաշում Թուրքիային

Բոլորս խիստ նյարդային վիճակում էինք, քանի որ տեղյակ էինք՝ գերմանացիները ջանք չեն խնայում «casus belli»՝ պատերազմի առիթ ստեղծելու համար: Սուշոնը հաճախ «Գեբենն» ու «Բրեսլաուն» ուղարկում էր Սև ծովում մանևրելու՝ այն հույսով, թե ռուսական նավատորմը հարձակում կգործի դրանց վրա: Չնչին միջադեպերը կարող էին վերածվել պատերազմի: Պարսկական ու կովկասյան սահմանների վրա ռուսական ու թուրքական բանակների միջև երբեմն հրածգություն էր լինում: Հոկտեմբերի 29-ին բեդվին զինվորներն անցան Եգիպտոսի սահմանը և բախումներ ունեցան բրիտանական բանակի հետ: Այդ նույն օրը ես երկար զրուցեցի Թալեաթի հետ: Այցիս նպատակն էր ներկայացնել Բրիտանիայի դեսպանի շահերը և տեղեկացնել բեդվինների կողմից Եգիպտոսի սահմանն անցնելու մասին: «Կարծում եմ, - գրել էր ինձ սըր Լուի Մալեթը, - սա պատերազմ է նշանակում: Կարող եք այս լուրերը հայտնել Թալեաթին և բացատրել այդ խելացնոր քայլի հավանական հետևանքները»: Այս հարցի առնչությամբ սըր Լուին արդեն բարդություններ էր ունեցել թուրքերի հետ: Երբ նա մեծ վեզիրին բողոքել էր Եգիպտական սահմանի մոտակայքում թուրքական զորքերի ներկայության դեմ, վերջինս նշել էր, որ Թուրքիան Եգիպտական սահման չի ճանաչում: Նա, անշուշտ, նկատի ուներ, որ Եգիպտոսն ինքնին Թուրքիայի տարածք է, և որ անգլիական շրջափակումը ժամանակավոր երևույթ է: Երբ ես Թալեաթի ուշադրությունը հրավիրեցի նշված «եգիպտական միջադեպին», նա պատասխանեց, որ օսմանյան ոչ մի բեդվին Եգիպտոս չի մտել: Թուրքերը ջրհորներ էին փորում Սինայի թերակղզում՝ պատրաստվելով Անգլիայի դեմ հնարավոր պատերազմի: Անգլիան ավերում էր այդ ջրհորները, իսկ բեդվինները, ինչպես ասաց Թալեաթը, փորձել են կանխել դա: Այդ հանդիպման ժամանակ Թալեաթն ինձ անկեղծորեն ասաց, որ Թուրքիան վճռել է դաշնակցել Գերմանիայի հետ, հաղթել կամ պարտվել նրա հետ: Կրկնեց նախկինում ասածները՝ ավելացնելով, որ եթե Գերմանիան հաղթի (իսկ ինքը վստահ է, որ կհաղթի), Կայսրը հաշվեհարդար կտեսնի Թուրքիայի հետ, եթե հիմա թուրքերը նրան չօգնեն նվաճելու այդ հաղթանակը: Թալեաթն անկեղծորեն խոստովանեց, որ այդ վախը (շարժառիթ, որը, ինչպես արդեն նշեցի, մեծապես կանխորոշում էր թուրքերի գործողությունները) հրում էր Թուրքիային Գերմանիայի գիրկը: Նա բավական

սառնասիրտ վերլուծեց ողջ իրավիճակը: Թալեաթն ասաց, որ ազգերը չեն կարող իրենց թույլ տալ այնպիսի զգացմունքներ, ինչպիսիք են երախտագիտությունը, ատելությունը կամ սերը: Գործելու միակ ուղենիշը պետք է լինի սառնասիրտ քաղաքականությունը:

«Այս պահին, - ասաց Թալեաթը, - Գերմանիայի հետ դաշնակից լինելը բխում է մեր շահերից: Եթե մեկ ամիս անց մեր շահերը մեզ թելադրեն գրկախառնվել Անգլիայի ու Ֆրանսիայի հետ, մենք դա կանենք նույնքան պատրաստակամորեն: Ռուսաստանը, - շարունակեց նա, - մեր ամենաոխերիմ թշնամին է, և մենք վախենում ենք նրանից: Եթե այս պահին, երբ Գերմանիան գրոհում է Ռուսաստանի վրա, մենք կարողանանք մի զգալի հարված հասցնել ռուսներին, որից հետո նրանք միառժամանակ ի վիճակի չլինեն մեզ վնասելու, ապա Թուրքիան պարտավոր է հասցնել այդ հարվածը»: Հետո, դառնալով ինձ կեսքախծոտ-կեսհանդուգն ժպիտով, ամփոփեց ողջ իրավիճակը. «Ich mit die Deutschen» (ես գերմանացիների հետ եմ), - ասաց նա կոտրտված գերմաներենով:

Քանի որ թուրքական կառավարությունն այդչափ տրոհված էր, գերմանացիները հարկադրված եղան թուրքերին հրել դեպի անդունդ: Երեկոյան Թալեաթի հետ ունեցած իմ զրույցից հետո, Ռուսաստանից ճակատագրական լուրեր ստացվեցին. թուրքական երեք տորպեդակիր նավեր մտել էին Օդեսայի նավահանգիստ, ջրասույզ արել ռուսական «Դոնեց» ռազմանավը, սպանել անձնակազմի մի մասին և վնասել ռուսական երկու ռազմանավ: Նաև ջրասույզ էին արել ֆրանսիական «Պորտուգալ» նավը սպանելով անձնակազմի երկու անդամներին և վիրավորելով ևս երկուսին: Այնուհետև հրետանին շրջել էին դեպի քաղաք և գնդակոծել շաքարի գործարանը, ինչի հետևանքով եղել էին մարդկային զոհեր: Թուրքական այդ նավերի հրամանատարները գերմանացի սպաներ էին: Թուրք անձնակազմից քչերն էին եղել նավերում, քանի որ կրոնական Բայրամի տոնի առթիվ նրանց հանգստյան օր էր տրամադրվել: Դա չարամիտ ու ոչնչով չարդարացված քայլ էր. գերմանացիները միտումնավոր հարձակվել էին քաղաքի վրա պատերազմ հրահրելու նպատակով: Ինչպես բարեկամս ինձ հայտնեց, «Գեներալ» նավի վրա ծառայող գերմանացի սպաները շարունակ սպառնում էին նման քայլի դիմել, եթե թուրքերն իրենք դա չանեն: Դե ինչ, հիմա արդեն արեցին: Երբ այդ մասին լուրը հասավ Կոստանդնուպոլիս, Ջեմալը *Սրրկը դ'Օրիան* ակումբում թուղթ էր խաղում: Քանի որ նա Թուրքիայի ծովային ուժերի նախարարն էր, այդ հարձակումը պաշտոնական քայլ լինելու դեպքում կարող էր արտոնված լինել միայն նրա հրամանով: Երբ նրան դուրս կանչեցին՝ այդ լուրերը հայտնելու, Ջեմալն ապշած էր. «Ես այդ մասին ոչինչ չգիտեմ, -

ասաց նա, - ես նման հրաման չեմ տվել»: Հոկտեմբերի 29-ի երեկոյան ես մեկ այլ զրույց ունեցա Թալեաթի հետ: Նա ասաց, որ կանխավ ոչինչ չգիտեր հարձակման մասին, և որ ողջ պատասխանատվությունը կրում է գեներալ Սուշոնը:

Արդյոք Ջեմալն ու Թալեաթն անկե՞ղծ էին, երբ ասում էին՝ իբր ոչնչից տեղյակ չեն՝ ես չգիտեմ: Ինձ թվում է, որ նրանք գերմանացիներից սպասում էին նման լկտիություն: Սակայն մեծ վեզիր Սաիդ Հալիմն անկեղծորեն վշտացած էր: Երբ պարոն Բոնպարն ու սըր Լուի Մալեթն այցի գնացին նրան ու իրենց անձնագրերը հետ պահանջեցին, նա սկսեց լաց լինել. աղաչում էր նրանց չհեռանալ, հետաձգել մեկնումը, վստահ էր, որ վիճակը կարելի է շտկել: Մեծ վեզիրը Կաբինետի միակ անդամն էր, ում էնվերն ու Թալեաթը, իրոք, ցանկանում էին հանգստացնել: Եգիպտոսի թագավորական տոհմի արքայազնի՝ մեծահարուստ ազնվականի ներկայությունը առանձնահատուկ կշիռ էր հաղորդում թուրքական կառավարությանը: Ըստ ամենայնի՝ դրանով էր բացատրվում ինձ ուղարկված հաղորդագրությունը, որում Թալեաթն ինձ հորդորում էր այցելել Ռուսաստանի դեսպանին և պարզել, թե ինչ կարող է անել Թուրքիան՝ վիճակը շտկելու և ռուսաց ցարին գոհացնելու համար: Հազիվ թե Թալեաթն անկեղծորեն ցանկանում էր, որ ես շտկեմ իրավիճակը. նրա նպատակն էր պարզապես ցույց տալ մեծ վեզիրին, որ ինքը փորձում է կատարել վերջինիս ցանկությունը և այդ միջոցով պահել նրան կառավարությունում: Ես հանդիպեցի պարոն Գիրսին, սակայն նա հաշտվելու ոչ մի ցանկություն չուներ: Ասաց, որ Թուրքիան կարող է շտկել իրավիճակը՝ միայն գերմանացի սպաներին հեռացնելով թուրքական բանակից և նավատորմից: Նա ցուցում էր ստացել անհապաղ հեռանալ Թուրքիայից և պատրաստվում էր մեկնելու: Որոշել էր առժամանակ մնալ Բուլղարիայում՝ սպասելով պատասխանի և վերադառնալ Թուրքիա միայն այն դեպքում, երբ իր պայմաններն ընդունվեն:

«Ռուսաստանն ինքը կերաշխավորի, որ թուրքական նավերն այլևս չմտնեն Սև ծով», - մռայլ հայտարարեց Գիրսը: Կեսօրին ինձ այցելեց Թալեաթն ու ասաց, որ հենց նոր նախաճաշում էր Վանգենհայմի հետ: «Կաբինետը քննարկում է ռուսների պատասխանը, - ասաց նա, - իսկ մեծ վեզիրը կկամենար, որ պարոն Գիրսը գրավոր ներկայացնի ռուսների պահանջները»: Թալեաթը հարցրեց, թե ես չէի ցանկանա բանակցել այդ հարցի շուրջ: Այդ պահին ռուսների շահերը ներկայացնում էր Գարոնին՝ Իտալիայի դեսպանը: Ես ասացի Թալեաթին, որ այլևս նման բանակցություններ վարել չեմ կարող, և որ այսուհետ բոլոր բանակցությունները հարկ է վարել Իտալիայի դեսպանի միջոցով:

- Կարո՞ղ եք ինձ հետ խոսել որպես Թալեաթ և ոչ թե որպես մեծ վեզիրի «փոստատար», - հարցրի ես:

Թալեաթը ծիծաղելով պատասխանեց.

- Լավ, ուրեմն այսպես. Վանգենհայմը, Էնվերն ու ես կգերադասեինք, որ պատերազմը հիմա սկսվեր:

Բուստանին, Օսկանը, Մահմուդը և Ջավիդը, հավատարիմ իրենց խոստմանը, դուրս եկան կառավարության կազմից՝ այն թողնելով մահմեդական թուրքերի ձեռքին: Մեծ վեզիրը, թեև սպառնում էր հրաժարական տալ, այդուհանդերձ մնաց կառավարության կազմում: Նա չափազանց սնոտիապաշտ ու ինքնագոհ անձնավորություն էր և այնպիսի հաճույք էր ստանում իր դիրքից ու փառքից, որ երբ հարկ եղավ վերջնական որոշում կայացնել, անկարող եղավ հրաժարվել պաշտոնից: Թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնելու վերջնական արդյունքն այն էր, որ առնվազն ներքին քաղաքականության առումով երկիրն ամբողջովին հայտնվեց «Միություն և առաջադիմություն» կոմիտեի ձեռքին, որը հիմա արդեն ըստ էության վերահսկում էր ողջ կառավարությունը: Այսպիսով, այն իդեալիստական կազմակերպությունը, որ ստեղծվել էր Թուրքիային ժողովրդավարության բարիքները բերելու նպատակով, ի վերջո վերածվեց պրուսական միահեծան իշխանության գործիքի:

Մի վերջին դրվագ՝ այդ լարված օրերից: Հոկտեմբերի 30-ին՝ երեկոյան, ես այցելեցի Բրիտանիայի դեսպանատուն: Բրիտանահպատակներից շատերը գալիս էին ԱՄՆ դեսպանատուն՝ պաշտպանություն խնդրելու. օտարերկրացիներին հետապնդելը և նույնիսկ կոտորածների ահը բոլորին էին մտահոգում: Այդ խառնաշփոթի մեջ ես գտա մի անսասան անձնավորության. սըր Լուին նստել էր իր աշխատասենյակում՝ մեծ բուխարու դիմաց, փաստաթղթերի կույտերով շրջապատված: Քարտուղարներն ու մյուս աշխատակիցներն անվերջ ելումուտ էին անում՝ բերելով փաստաթղթեր, որոնք ավելացնում էին դեսպանին շրջապատող թղթերի կույտերը: Սըր Լուին վերցնում էր փաստաթղթերը, մեկ առ մեկ դրանց վրայով սահեցնում հայացքը և, որոշ բացառությամբ, նետում դրանք բուխարու կրակը: Այդ փաստաթղթերը պարունակում էին Մեծ Բրիտանիայի դեսպանության հավանաբար հարյուր տարվա արխիվները: Դրանցում ներկայացված էին մի շարք հարգարժան դեսպանների ակնառու նվաճումները: Պարունակում էին Ստրատֆորդ դե Ռեդքլիֆի՝ Թուրքիայում տարած բոլոր դիվանագիտական հաղթանակների պատմությունը: «Մեծն էլչին», ինչպես անվանում էին նրան թուրքերը, գրեթե հիսուն տարի՝ 1810-1858 թվականներին, ըստ էության կառավարում էր Թուրքիան՝ այն ծառայեցնելով Անգլիայի շահերին: Բարձր Դռանը հավա-

տարմագրված Բրիտանիայի անվանի դեսպանների փաստաթղթերը հիմա մեկ առ մեկ հայտնվում էին սըր Լուիի վառած կրակում: Բրիտանական երկարամյա գերակայությունը Թուրքիայում հասել էր իր ավարտին: Գերմանիայի կայսեր քսանամյա ջանքերը՝ բրիտանական ազդեցությանը վերջ դնելու և Անգլիայի իրավահաջորդը դառնալու, վերջապես պսակվեցին հաջողությամբ, և սըր Լուիի աշխատասենյակում վառվող կրակը Թուրքիայում Անգլիայի անհետացած իշխանության «թաղման խարույկն» էր: Ես նայում էի այդ պատկառելի և փոքր-ինչ թախծոտ դիվանագետին, որ նստել էր դեսպանատան շքեղ կահավորված գրասենյակում, և խորհում էի, թե ինչպես մի ժամանակ սուլթանները վախվորած հարգանքով գլուխ էին խոնարհում Անգլիայի արքաների առջև, այն օրերին, երբ Պրուսիան ու Գերմանիան սոսկ անվանումներ էին: Եվ այդուհանդերձ, Բրիտանիայի դեսպանը բրիտանացի բոլոր դիվանագետների ու զինվորականների նման զուսպ էր ու անվրդով: Կրակի առջև նստած՝ մենք քննարկեցինք նրա մեկնելու հետ կապված մանրամասները: Նա ինձ հանձնեց բրիտանացի ռեզիդենտների ցուցակը, թե ովքեր պետք է մնային, ովքեր՝ մեկնեին, և մենք մի վերջին անգամ ճշտեցինք մեր կողմից բրիտանական շահերի պաշտպանությունն ստանձնելու գործին վերաբերող հարցեր: Թեև բազում առումներով Թուրքիայում բրիտանական ազդեցության տապալումը մտահոգիչ էր, սակայն Մեծ Բրիտանիայի ու նրա դեսպանի պատվին առայժմ ոչինչ չէր սպառնում: Սըր Լուին թուրք պաշտոնյաներին Վանգենհայմի նման չէր գնել փողով, չէր կաշառել թուրքական մամուլը՝ ոտնահարելով միջազգային իրավունքի բոլոր պահանջները, չէր եղբայրացել քաղաքական բախտախնդիրների ավազակախմբի հետ և կեղծիքների ու խաբեության անվերջանալի դավեր չէր նյութել հակառակորդի դեմ: Դիվանագիտական խաղը, որն ավարտվեց Անգլիայի պարտությամբ, այն խաղերից էր, որ բրիտանական պաշտոնյաները չեն խաղում. դրա համար անհրաժեշտ էր յուրատեսակ տաղանդ, ինչպիսին միայն Վանգենհայմն ուներ: Անհրաժեշտ էր նաև գերմանական պետական մտածողություն, որը, ըստ Բիսմարկի, նշանակում է պատրաստ լինել «հանուն հայրենիքի զոհաբերելու ոչ միայն կյանքը, այլև պատիվը»:

ԳԼՈՒԽ XII

Թուրքերը փորձում են պատշաճ վարվել թշնամի երկրների քաղաքացիների հետ, սակայն գերմանացիները պահանջում են հալածել նրանց

Օդեսայի ռմբակոծումից որոշ ժամանակ անց ես առանձնացա էնվերի հետ՝ քննարկելու մի հարց, որը մտահոգում էր Թուրքիայում բնակվող բոլոր օտարերկրացիներին. ինչպե՞ս է վարվելու օսմանյան կառավարությունը թշնամական երկրների քաղաքացիների հետ: Արդյոք կառավարությունը կմեկուսացնի՞ նրանց, կստեղծի՞ համակենտրոնացման ճամբարներ, կհալածի՞ գերմանացիներին հատուկ ոխերիմ ատելությամբ, թե՞ կկիրառի քրիստոնյաների հանդեպ թուրքերի նախընտրած մեթոդը՝ կտտանք ու կոտորածներ: Այդ տարիներին Օսմանյան կայսրությունում բնակվում էին թշնամի երկրների հազարավոր քաղաքացիներ: Նրանցից շատերն իրենց ողջ կյանքն ապրել էին այստեղ, մյուսները ծնվել էին օսմանյան հողում: Երբ Թուրքիան մտավ պատերազմի մեջ, այս մարդիկ ամենադաժան վերաբերմունքի սպասելու բոլոր պատճառներն ունեին: Չափազանցություն չի լինի ասել, որ նրանց մեծ մասն ապրում էր սպանվելու մշտական սարսափի մեջ: Դարդանելը փակ էր, և օտարերկրացիների համար դրսից օգնություն ստանալու հնարավորությունը չնչին էր. կապիտուլյացիաների օրենքները, որոնց հովանու ներքո նրանք ապրել էին դարեր շարունակ, վերացվել էին: Օսմանյան կայսրության օտարազգի քաղաքացիների և նրանց ոչնչացման միջև միայն ամերիկյան դրոշն էր: Պատերազմական իրավիճակն ինձ՝ ԱՄՆ դեսպանիս, դարձրել էր Բրիտանիայի, Ֆրանսիայի, Սերբիայի ու Բելգիայի բոլոր քաղաքացիների պաշտպանը: Ինձ համար հենց սկզբից պարզ էր, որ իմ խնդիրը դժվար է լինելու. մի կողմից՝ գերմանացիները, որ առաջ էին մղում իրենց տխրահռչակ ճնշումների և դաժանության մեթոդները, մյուս կողմից թուրքերը՝ քրիստոնյաների հանդեպ ունեցած ավանդական ատելությամբ, նաև՝ իրենց ձեռքում հայտնված բոլոր անպաշտպաններին ճնշելու բնածին մոլուցքը: Սակայն ես հզոր փաստարկներ ունեի և հիմա եկել էի էնվերի մոտ՝ ներկայացնելու դրանք: Թուրքերին անհրաժեշտ էր Միացյալ Նահանգների բարենպաստ կարծիքը, քանզի նրանք հույս ունեին պատերազմից հետո ստանալ ամերիկյան ֆինանսիստների նյութական աջակցությունը: Այդ օրերին Կոստանդնուպոլսում գտնվող բոլոր դեսպանությունները կասկած չունեին, որ Ամերիկան հանդես կգա խաղաղարարի դերում: «Եթե Թուրքիան ցանկանում է, որ Ամերիկան

լինի իր բարեկամը, - ասացի ես Էնվերին, - ապա պարտավոր է քաղաքակիրթ վերաբերմունք ցուցաբերել օտարերկրյա քաղաքացիների նկատմամբ: - Դուք ջանում եք վերականգնել ձեր դիրքը որպես գերտերություն, - ավելացրի ես, - ուստի պետք է հիշեք, որ քաղաքակիրթ աշխարհն ուշադիր հետևելու է ձեզ: Ձեր ապագան կախված է նրանից, թե ձեզ ինչպես կդրսևորեք այս պատերազմում»:

Թուրքիայի վերնախավը, նաև Էնվերը գիտակցում էին, որ դրսի աշխարհն իրենց ընկալում է որպես մի ժողովրդի, որը հարգանք չունի մարդկային կյանքի նվիրականության կամ նուրբ զգացմունքների հանդեպ, և այդ վերաբերմունքը նրանց խորապես վիրավորում էր: Ես Էնվերին հիշեցրի, որ հիմա Թուրքիային արտակարգ հնարավորություն է տրվել ապացուցելու, որ նման կարծիքն անհիմն է: «Աշխարհի կարծիքով, դուք բարբարոսներ եք, ձեր վարքագծով ապացուցե՛ք օտարներին, որ դա այդպես չէ, - հորդորում էի ես,- միայն այդկերպ դուք կարող եք ընդմիշտ ազատվել տխրահռչակ կապիտուլյացիաներից: Ապացուցե՛ք, որ դուք արժանի եք ազատվելու օտարերկրյա վերահսկողությունից: Եղեք քաղաքակիրթ, եղեք ժամանակակից»:

Նկատի ունենալով այն, ինչ այդ պահին կատարվում էր Բելգիայում և Հյուսիսային Ֆրանսիայում, իմ կողմից «ժամանակակից» բառն օգտագործելն այնքան էլ տեղին չէր: Էնվերն իսկույն օգտվեց դրանից: Մինչ այդ պահը նա պահպանում էր իր մշտական արժանապատիվ կեցվածքը. դեմքը, ինչպես միշտ, ուշադիր, խաղաղ, զգացմունքներից գրեթե զուրկ արտահայտություն ուներ: Բայց մեկ ակնթարթում նրա ողջ արտաքինը փոխվեց. դեմքին լկտի ժպիտ հայտնվեց, մոտենալով նա ձեռքը հենեց սեղանին ու ասաց. «Ժամանակակից՝ ոչ: Ինչպես էլ Թուրքիան վարի այս պատերազմը, մենք առնվազն ժամանակակից չենք լինի. դա ամենաբարբարոս մեթոդն է: Մենք կփորձենք պարզապես պարկեշտ լինել»:

Բնականաբար, ես դա որպես խոստում ընկալեցի: Սակայն, ծանոթ լինելով թուրքական խառնվածքի փոփոխականությանը, գիտակցում էի, որ անհրաժեշտ է ավելին, քան խոստում: Գերմանացիները մշտապես բորբոքում էին թուրք պաշտոնյաներին՝ համոզելով կիրառել գերմանացիների նախընտրած ծրագիրը օտարերկրացիների հանդեպ: Գերմանիան վերականգնել էր հնադարյան ու միջնադարյան պատերազմական պրակտիկայի բազմաթիվ սկզբունքներ: Անցյալից մնացած ամենաբարբարոս մեթոդն էր՝ բնակչությանը, ցանկալի է՝ ականավոր ու ազդեցիկ անձանց, պատանդ վերցնել մյուսների «լավ վարքի» դիմաց: Այդ պահին գերմանական ռազմական անձնակազմը թուրքերին դրդում էր օտարերկրացիներին պահել հենց այդ նպատակի համար: Ճիշտ այնպես, ինչ-

պես գերմանացիները Բելգիայում պատանդ էին վերցնում խաղաղ բնակիչներին՝ որպես բելգիացիների «բարեկամական վերաբերմունքի» երաշխիք և իրենց բանակի առջևից քայլեցնում էին կանանց ու երեխաներին, այդպես էլ Թուրքիայում գերմանացիները ծրագրում էին օգտագործել ֆրանսիացիներին ու անգլիացիներին՝ որպես Դաշնակիցների նավատորմի դեմ իրենց պաշտպանական համակարգի մի մաս: Ինձ ստույգ հայտնի էր, որ այդ չարամիտ ճնշումը մշտապես առկա է, և անհրաժեշտ էր, որ ես անհապաղ ընդդիմանամ դրան և հնարավորության դեպքում ձախողեմ այն ամենասկզբից: Ես որոշեցի, որ Անտանտի դիվանագետների և քաղաքացիների մեկնումը Կոստանդնուպոլսից կպարզի, թե որքանով եմ ես ընդունակ պաշտպանելու օտարերկրացի ռեզիդենտներին: Վստահ էի՝ եթե մեկնել ցանկացող բոլոր ֆրանսիացիներն ու անգլիացիները կարողանան անվնաս դուրս գալ Թուրքիայից, կնշանակի դա զսպիչ ազդեցություն կգործի ոչ միայն գերմանացիների, այլև թուրք ցածրաստիճան պաշտոնյաների վրա:

Երբ հաջորդ օրը ժամանեցի երկաթուղային կայարան, հասկացա, որ ինձ դժվարին գործ է սպասում: Թուրք իշխանությունների հետ պիտի պայմանավորվեի երկու գնացքների վերաբերյալ. մեկը՝ ֆրանսիացիների ու անգլիացիների համար, որ մեկնելու էր ժամը յոթին, մյուսը՝ դիվանագետների ու նրանց աշխատակազմերի համար. նրանք մեկնելու էին ժամը իններին: Սակայն որոշված ժամանակացույցը խախտվեց: Կայարանում վախեցած ու վրդովված բազում մարդիկ էին հավաքվել: Ոստիկանությունը բուռն գործունեություն էր ծավալել և հետ էր հրում ամբոխին: Դա մի աներևակայելի տեսարան էր՝ զինվորների, ժանդարմների, դիվանագետների, ուղեբեռների և թուրք պաշտոնյաների մի խուռներամ ամբոխ...

Նրանց մեջ ամենաակնառու դեմքերից մեկը Բեդրի բեյն էր՝ ոստիկանապետ, փաստաբան, քաղաքական գործիչ, ով վերջերս էր ստանձնել այդ պաշտոնը և խորապես գիտակցում էր իր նոր դիրքի կարևորությունը: Բեդրին Թալեաթի մտերիմներից էր, նրա քաղաքական ենթական և ամենաարժեքավոր «գործիքներից» մեկը: «Միություն և առաջադիմություն» կոմիտեում նա բարձր դիրք էր զբաղեցնում և նախարարական պաշտոնի հասնելու հավակնություններ ուներ: Ատում էր օտարերկրացիներին ու օտարերկրյա ազդեցությունը: Բեդրիի համոզմամբ՝ թուրքական հողը պատկանում է բացառապես թուրքերին, և նա քամահրանքով էր վերաբերվում բոլոր մյուս ազգերին: Նրան հատկապես վրդովեցնում էր օտարերկրյա դեսպանությունների՝ տարիների մշտական միջամտությունն իր երկրի ներքին գործերին: Թուրքիայում հազիվ թե գտնվեր ուրիշ

մեկը, ում համար կապիտուլյացիաների մշտական վերացումը նույնքան լուրջ խնդիր լիներ, ինչքան Բեդրի բեյի համար: Հաջորդած ամիսների ընթացքում ես, բնականաբար, բազում առիթներ ունեցա առնչվելու Բեդրի բեյի հետ. նա մշտապես հանդիպում էր իմ ճանապարհին, չարախինդ հրճվանքով միջամտում բոլոր այն քայլերին, որ ես կատարում էի օտարերկրացիների շահերը պաշտպանելու համար: Նրա վերաբերմունքը կեսսադրիչ-կեսկատակ բնույթ ուներ: Մենք մշտապես ձգտում էինք մոլորեցնել միմյանց. ես՝ ջանալով պաշտպանել ֆրանսիացիներին ու անգլիացիներին, իսկ նա՝ անվերջ խոչընդոտներ ստեղծելով: Այդ պայքարը վերածվեց Ոստիկանության պրեֆեկտի և ամերիկյան դեսպանության միջև մենամարտի: Բեդրին ճարպիկ, կրթված, սուր մտքի տեր, ոչ չափազանց չարամիտ անձնավորություն էր, սակայն չափից ավելի էր տարվում անօգնական օտարերկրացիների գլխին զանազան խաղեր խաղալով: Անշուշտ, այդ օրը նա ըմբոշխնում էր իր դիրքը:

- Ի՞նչ է կատարվում, - հարցրի ես Բեդրիին:

- Մենք փոխել ենք մեր մտադրությունը, - ասաց նա, և իսկույն պարզ դարձավ, որ նման մտափոխությունը մեծապես գոհացնում է նրան: - Մեր թույլտվությամբ կմեկնի այն գնացքը, որը տանելու է դեսպաններին ու նրանց աշխատակազմերը: Սակայն ոչ պաշտոնական անձանց մեկնումը որոշել ենք արգելել. նրանց գնացքը չի մեկնի:

Իմ աշխատակազմը և ես մեծ ջանքեր էինք թափել օտարերկրյա բնակիչների մեկնումը կազմակերպելու համար, մինչդեռ արդեն ակներև էր, որ ինչ-որ մեկի ազդեցությամբ մեր ջանքերը ի չիք էին դարձել: Ծրագրերի այս անսպասելի փոփոխությունն աներևակայելի շփոթ ու լարվածություն առաջացրեց: Կայարանում գոյացել էր ուղևորների երկու խումբ. նրանք, ում արտոնված էր մեկնել, և նրանք, ում դա թույլ չէր տրվել: Բրիտանիայի ու Ֆրանսիայի դեսպանները չէին կամենում մեկնել առանց իրենց հայրենակիցների, վերջիններս էլ իրենց հերթին հրաժարվում էին հավատալ, որ իրենց գնացքը, որը, թուրք պաշտոնյաների խոստման համաձայն, վստահաբար պետք է մեկներ, չի մեկնելու: Ես շտապեցի էնվերի մոտ, և նա հաստատեց Բեդրիի ասածը: «Թուրքիան բազմաթիվ հպատակներ ունի Եգիպտոսում,- ասաց նա, - նրանց վիճակը մտահոգիչ է: Թուրքիայից բրիտանացի ու ֆրանսիացի քաղաքացիների մեկնելուց առաջ երաշխիքներ պիտի տրվեն, որ այդ երկրներում թուրք քաղաքացիների իրավունքները կպաշտպանվեն»: Ես կարգավորեցի այդ հարցը, իսկ սըր Լուի Մալեթն անմիջապես ներկայացրեց պահանջվող երաշխիքները, սակայն դա չհարթեց խնդիրը: Իրականում դա ընդամենը պատրվակ էր: Բեդրին առաջվա պես հրաժարվում էր թույլ տալ գնացքի մեկ-

նումը: «Գնացքի մեկնելը հետաձգելու հրամանը չի կարող վերանայվել,- ասաց նա , - քանի որ խառնաշփոթ կառաջացնի ժամանակացույցում և կարող է վթարների պատճառ դառնալ»: Ինձ համար պարզ էր, որ դա զուտ թուրքական խուսափողական խաղ է: Ինձ հայտնի էր, որ հրամանն իջեցվել էր ոչ թե Բեդրիի կողմից, այլ շատ ավելի բարձրից: Սակայն այդ պահին ես անկարող էի որևէ քայլ ձեռնարկել: Ավելին, Բեդրին ոչ մեկին թույլ չէր տալիս բարձրանալ դիվանագետների գնացքը, մինչև ես անձամբ չհաստատեի տվյալ անձի ինքնությունը: Եվ այսպես ես ստիպված էի կանգնել փոքր դարպասի մոտ և զննել յուրաքանչյուր խնդրարկուի: Նեղլիկ դարպասից փորձում էին ներս մտնել ոչ միայն դիվանագիտական կորպուսի անդամները, և իրավիճակը հիշեցնում էր Բրուկլինի կամրջի վրա գոյացող խցանումների փոքր տարբերակը: Մարդիկ այս ու այն կողմ էին վազվզում, ստուգում ուղեբեռը, վիճում պաշտոնյաների հետ, մխիթարում հուզված կանանց ու վախեցած երեխաներին, մինչդեռ Բեդրին՝ զուսպ ու հավաք, հեգնական ժպիտով դիտում էր ողջ իրարանցումը: Գլխարկները վայր էին ընկնում, հագուստները պատռվում, ու խառնաշփոթն է՛լ ավելի էր թեժացնում Մալեթի՝ Բրիտանիայի դեսպանի քաշքշուկը թուրք պաշտոնյայի հետ. նախնական հաղթանակն անգլիացու կողմն էր: Հետո տեսա Բոնպարին՝ Ֆրանսիայի դեսպանին, ով, թուրք ժանդարմի ուսերից բռնած, կատաղի թափ էր տալիս նրան: Մի կին իր երեխային նետեց իմ գիրկը, հետո կանանցից մեկն ինձ հանձնեց մի տղայի, այնուհետև, երբ ես կանգնած էի դարպասի մոտ և հավաստում էի Թուրքիայից մեկնող անձանց ինքնությունը, բրիտանական դեսպանության աշխատակիցներից մեկն ինձ խնդրեց հսկել իր շանը: Այդ ընթացքում սըր Լուի Մալեթը դարձավ ծայրահեղ ագրեսիվ ու հրաժարվեց մեկնել: «Ես կմնամ այստեղ այնքան ժամանակ, - ասաց նա, - մինչև բրիտանացի վերջին հպատակը կհեռանա Թուրքիայից»: Սակայն ես նրան հիշեցրի, որ նա այլևս բրիտանացիների պաշտպանը չէ: Ես՝ ԱՄՆ դեսպանս, ստանձնել եմ այդ պարտավորությունը և հազիվ թե կարողանամ կատարել պարտականություններս, եթե նա մնա Կոստանդնուպոլսում: «Թուրքերը, անկասկած, չեն ընդունի Բրիտանիայի շահերը ներկայացնելու իմ իրավասությունները, եթե Դուք մնաք այստեղ», - ասացի ես և առաջարկեցի նրան մի քանի օր մնալ Դեդեաղաչում և այնտեղ սպասել իր հայրենակիցներին: Սըր Լուին, թեև դժկամությամբ, ընդունեց իմ առաջարկը և նստեց գնացք: Գնացքը տեղից շարժվեց, և ես մի վերջին հայացք գցեցի Բրիտանիայի դեսպան վրա: Նա նստած էր առանձին վագոնում՝ շրջապատված կապոցներով, արկղերով, ճամպրուկներով ու դիվանագիտական փոստի ծանրոցներով, դեսպանության անձնակազմը կող-

քին, իր քարտուղարի շան՝ համակրանք արտահայտող հայացքի ներքո:

Պաշտոնական դիրք չունեցող օտարերկրացիները ևս մի քանի ժամ մնացին կայարանում՝ հուսալով, որ վերջին պահին իրենց թույլ կտան մեկնել, սակայն Բեդրին անզիջում էր: Նրանք գրեթե անհուսալի վիճակում էին. Կոստանդնուպոլսում թողել էին իրենց բնակարանները և հիմա հայտնվել էին անելանելի դրության մեջ: Մի քանիսին բարեկամները տարան իրենց մոտ գիշերելու, ոմանք տեղավորվեցին հյուրանոցներում, սակայն նրանց վիճակը ծայրաստիճան մտահոգիչ էր: Պարզ էր, որ, հակառակ բոլոր խոստումների, Թուրքիան մտադիր էր այս օտարերկրացիներին պատանդ պահել: Մի կողմից Էնվերն ու Թալեաթն ասում էին ինձ, որ մտադիր են պատերազմը մարդասիրաբար վարել, մյուս կողմից նրանց ստորադասները, ինչպես օրինակ՝ Բեդրին, դրսևորում էին մի վարքագիծ, որն ի չիք էր դարձնում քաղաքակիրթ ձևանալու բոլոր հավակնությունները: Փաստ էր, որ թուրք պաշտոնյաները չէին կարողանում համաձայնության գալ միմյանց հետ օտարերկրացիների հետ վարվելու հարցում, մինչդեռ Գերմանիայի Գլխավոր շտաբը նրանց ներշնչում էր, որ սխալ են վարվում իրենց թշնամի օտարերկրացիների հետ՝ թեկուզ չնչին կարեկցանք ցուցաբերելով: Ի վերջո հաջորդ օրն ինձ հաջողվեց կազմակերպել նրանց մեկնումը: Բեդրին, որ բավական հանդուրժողական տրամադրություն ուներ, այդ օրը ցերեկն անցկացրեց դեսպանատանը՝ վավերացնելով մեկնողների անձնագրերը: Երեկոյան մենք միասին գնացինք կայարան և գնացքը բարեհաջող ուղարկեցինք Դեդեաղաչ: Գնացքում տեղավորված հիսուն կանանց ու երեխաներին ես նվիրեցի «Թուրքական հաճույք» քաղցրավենիքի մեկական տուփ: Դա երջանիկ մարդկանց խումբ էր, և նրանք չէին թաքցնում իրենց հրճվանքը Թուրքիայից մեկնելու առիթով: Այնուհետև Դեդեաղաչում նրանք միացան դիվանագիտական կորպուսին, և ինչպես հետո տեղեկացա, այդ միավորումը չափազանց հուզիչ էր եղել: Ես երջանիկ էի նրանց երախտագիտության բազում հավաստիքները ստանալու համար, հատկապես այն նամակը, որ ստորագրել էր ավելի քան հարյուր մարդ՝ իրենց երախտագիտությունը հայտնելով տիկին Մորգենթաուին, դեսպանության անձնակազմին և ինձ:

Մեկնել ցանկացողների թիվը դեռևս բավական մեծ էր, և ես հաջորդ օրն այցելեցի Թալեաթին այդ հարցը քննարկելու նպատակով: Նա չափազանց սիրալիր էր: «Կաբինետը, - ասաց նա, - քննարկել է թուրքաբնակ անգլիացիների ու ֆրանսիացիների հարցը, և իմ փաստարկները զգալի ազդեցություն են գործել կառավարության անդամների վրա: Որոշում է կայացվել, որ թշնամի պետությունների քաղաքացիները կա-

որոշ են մեկնել կամ մնալ՝ ըստ իրենց ցանկության: Համակենտրոնացման ճամբարներ չեն լինելու: Քաղաքացիական անձինք կարող են շարունակել ապրել սովորականի նման և քանի դեռ իրենց լավ են պահում, ոչ մի անախորժություն չեն ունենա: Օտարազգիների նկատմամբ մեր ցուցաբերած վերաբերմունքով մենք ցանկանում ենք ապացուցել, որ բարբարոսներ չենք, - ասաց Թալեաթը: Այդ խոստման դիմաց նա ինձ խնդրեց պարզել, թե արդյոք ամերիկյան ու եվրոպական մամուլում չի՞ կարելի իրենց հնարավորինս գովաբանել այդ որոշման համար:

Դեսպանատուն վերադառնալուն պես ես հրավիրեցի պարոն Թերոն Դեյմոնին՝ «Associated Press»-ի թղթակցին, դոկտոր Լեդերերին՝ «Berliner Tageblatt»-ի թղթակցին և դոկտոր Սանդլերին, ով ներկայացնում էր «Paris Herald»-ը: Հարցազրույց ունեցա նրանց հետ՝ գովաբանելով Թալեաթի վերաբերմունքը օտարերկրացիների հանդեպ: Այնուհետև լուրերն ուղարկեցի նաև Վաշինգտոն, Լոնդոն և Փարիզ, նաև մեր բոլոր հյուպատոսներին:

Թղթակիցների հետ հազիվ էր զրույցն ավարտվել, երբ դարձյալ մտահոգիչ լուրեր ստացա: Այդ երեկո մեկ այլ գնացքի մեկնում էի նախապատրաստել, և հիմա տեղեկացնում են, որ թուրքերը հրաժարվում են մեկնելու արտոնագիր տալ: Այդ նորությունները, որ ստացա Թալեաթի հստակ խոստումից հետո, անշուշտ, չափազանց անախորժ էին: Անմիջապես մեկնեցի կայարան և այն, ինչին ականատես եղա, հարուցեց զայրույթս Ներքին գործերի նախարարի հանդեպ: Կայարանը լի էր հուսահատ մարդկանցով. կանայք լալիս էին, երեխաները՝ ճչում, մինչդեռ թուրք զինվորների մի գումարտակ, որի հրամանատարը գաճաճ, ինքնագոհ ինչ-որ մայոր էր, հրացանների կոթերով նրանց դուրս էր հրում կայարանից: Բեդրին սովորականի նման այնտեղ էր և, ինչպես միշտ, «ընբոշխնում էր» խառնաշփոթ իրավիճակը: «Ուղևորներից ոմանք, - տեղեկացրեց նա ինձ, - չեն վճարել իրենց եկամտահարկերը, և այդ պատճառով նրանց թույլ չեն տա մեկնել»: Ես ասացի, որ անձամբ պատասխանատու կլինեմ այդ վճարումների համար: «Ձեզ հետ ոտք չեմ կարող գցել, այնպես չէ՞, պարո՛ն դեսպան», - ծիծաղեց Բեդրին: Ես վստահ էի, որ իմ առաջարկը կարգավորում է խնդիրը, և որ գնացքը կմեկնի ըստ ժամանակացույցի: Սակայն անսպասելի մեկ այլ հրաման հետաձգեց գնացքի մեկնումը:

Քանի որ խոստումը ստացել էի Թալեաթից, վճռեցի գնալ նրա մոտ և պարզել պատճառը: Արագ ինձ գցեցի մեքենայի մեջ ու սլացա Բարձր Դուռ, որտեղ նրա գլխավոր գրասենյակն էր: Այնտեղ ոչ ոք չկար: Ես շտապեցի Թալեաթի առանձնատուն: Ես արդեն եղել էի էնվերի տանը, և

հիմա այս միջադեպն ինձ հնարավորություն էր ընձեռում համեմատելու էնվերի ապրելակերպը նրա ավելի հզոր պաշտոնակցի կենսաոճի հետ. տարբերությունն ապշեցուցիչ էր: Էնվերը բնակվում էր շքեղության մեջ, քաղաքի ամենաբարեկեցիկ թաղամասերից մեկում, մինչդեռ հիմա ես անցնում էի քաղաքի ամենաչքավոր թաղամասով: Մտանք մի նեղլիկ փողոց, որի երկու կողմում անշուք, փայտե չներկված տնակներ էին: Միայն մի բան էր տարբերում այդ փողոցը Կոստանդնուպոլսի մյուս բոլոր թաղամասերից՝ հուշելով, որ այդտեղ բնակվում է Օսմանյան կայսրության հզորագույն անձնավորությունը: Փողոցի երկու ծայրերին ժանդարմներ էին կանգնած. նրանք ոչ մեկին թույլ չէին տալիս ներս մտնել, եթե տվյալ անձն այնտեղ գտնվելու բավարար պատճառ չուներ: Բոլոր մեքենաների նման մեր մեքենան էլ կանգնեցրին, սակայն երբ ես բացատրեցի այդտեղ հայտնվելուս պատճառը, մենք անմիջապես թույլտվություն ստացանք շարունակելու մեր ճանապարհը: Ի տարբերություն էնվերի պալատի բազում սենյակների ու շքեղ կահույքի՝ Թալեաթի տունը հին, կիսավեր, եռահարկ շինություն էր: Ինչպես ես ավելի ուշ իմացա, այդ ամենը ներկայացման մի մասն էր, որ «բեմադրել էր» Թալեաթն իր կարիերան առաջ մղելու համար: Ինչպես ամերիկյան բազում քաղաքական գործիչներ, Թալեաթն էլ էր հասկացել, որ իր դիրքը՝ որպես «ժողովրդի մարդու», քաղաքական կարևոր նշանակություն ունի, և գիտակցում էր, որ անակնկալ հարստությունն ու դրա ցուցադրումը կթուլացնեն իր դիրքերը «Միություն և առաջադիմություն» կոմիտեում, որի անդամների մեծամասնությունը, ինչպես և նա, ծագումով ցածր խավերից էր: Տան ներսի կահավորումը լիովին համապատասխանում էր տան արտաքին տեսքին: Արևելյան շքեղության ոչ մի նշույլ չկար. էժանագին կահույք, պատերին՝ մի քանի ցածրարժեք վիմատիպ նկարներ, հատակին՝ մեկերկու հնամաշ գորգ: Մի կողմում՝ փայտե սեղան, որի վրայի հեռագրասարքը մի ժամանակ Թալեաթի ապրուստի միջոցն էր եղել, իսկ այդ շրջանում՝ գործընկերների հետ հաղորդակցվելու գործիք: Թուրքիայում տիրող տագնապալից պայմաններում Թալեաթը երբեմն գերադասում էր անձամբ ուղարկել հեռագրերը:

Այդ սենյակում ես մի քանի րոպե սպասեցի, մինչև ժամանեց Թուրքիայի «մեծն տիրակալը»: Քիչ անց բացվեց սենյակի մյուս կողմում գտնվող դուռը, ու ներս մտավ անբարետես մի հսկա՝ գունագեղ հագուստով: Ինձ ապշեցրեց տարբերությունն այս Թալեաթի ու այն Թալեաթի միջև, ով ինձ այնքան լավ ծանոթ էր Բարձր Դուռ կատարած այցելություններից: Սա այլևս եվրոպական հագուստի, եվրոպական շարժուձևի նուրբ քողի տակ թաքնված Թալեաթը չէր: Այն անձնավորությունը, ում

հիմա տեսնում էի, հիրավի, բուլղարական գնչուի տեսք ուներ. գլխին թուրքական ավանդական ֆես էր, հաղթանդամ մարմինը ծածկում էր մոխրագույն գիշերազգեստը: Տրամադրությունը կեսբարեկամական-կեսհանդուգն էր: Թալեաթը հիանալի գիտակցում էր, թե ինչ անհետաձգելի գործ է հարկադրել ինձ խախտել իր տնային անդորրը, և իրեն պահում էր չարամիտ դպրոցականի նման: Ներս մտավ ու նստեց՝ բարի ժպիտը դեմքին ու անմիջապես սկսեց արդարանալ: Դուռը կրկին անաղմուկ բացվեց, և հայտնվեց երկչոտ մի աղջնակ՝ ձեռքին սուրճի ու ծխախոտի մատուցարան: Աղջկա թիկունքում կանգնած էր քսան-քսանհինգ տարեկան մի կին և թեթևակի ներս էր հրում նրան. Թալեաթի կինն էր ու նրա որդեգրած դուստրը: Ինձ արդեն հայտնի էր, որ թեև թրքուհիները հասարակության մեջ դերակատարում չունեն և տանը հյուրեր չեն ընդունում, սակայն չափազանց հետաքրքրասեր են իրենց ամուսինների հյուրերի հանդեպ և նրանց տեսնելու առիթն աշխատում են բաց չթողնել: Այս պարագայում տիկին Թալեաթին, ըստ երևույթին, չէր բավարարել նախնական զննումը, քանի որ մի քանի րոպե անց նա հայտնվեց իմ դիմացի պատուհանի այն կողմում՝ անտեսանելի իր ամուսնու համար, ում հայացքն այլ կողմ էր ուղղված: Մի քանի րոպե լուռ ու քննախույզ կանգնել էր այնտեղ: Քանի որ գտնվում էր իր տանը, դեմքը ծածկված չէր: Տիկին Թալեաթի դեմքը գեղեցիկ էր, աչքերը խելացի էին, ու միանգամայն պարզ էր, որ այդքան մոտ տարածությունից Ամերիկայի դեսպանին զննելը նրան մեծ հաճույք էր պատճառում: «Դե՛, ի՞նչ կասեք, Թալեաթ, - ասացի ես՝ հասկանալով, որ եկել է պարզ խոսելու ժամանակը, - գիտակցո՞ւմ եք, թե որքան անխոհեմ եք գործում: Մի քանի ժամ առաջ Դուք ինձ հավաստիացրիք, որ հարգալից եք վարվելու ֆրանսիացիների ու անգլիացիների հետ և խնդրեցիք ինձ տարածել այդ լուրն ամերիկյան ու եվրոպական մամուլում: Ես լրագրողներին հրավիրեցի ու հաղորդեցի նրանց, թե որքան բարյացակամ եք Դուք օտարների նկատմամբ: Դա Ձեր անձնական խնդրանքն էր, և վաղը ողջ աշխարհը կկարդա այդ մասին: Իսկ հիմա անում եք հնարավոր ամեն բան՝ իմ ջանքերը ծախողման մատնելու համար: Դուք դրժեցիք խելամիտ լինելու Ձեր խոստումը: Կատարելու՞ եք վերջապես ինձ տված Ձեր խոստումները, թե ոչ: Գուցե մտադիր եք անվերջ փոխե՞լ Ձեր իսկ մտադրությունները: Եկեք հասկանանք իրար: Մենք՝ ամերիկացիներս, իսկապես կատարում ենք մեր խոստումները և հպարտանում ենք դրանով: Մենք հավատարիմ ենք մեր խոսքին թե՛ որպես անհատներ, թե՛ որպես պետություն և հրաժարվում ենք գործ ունենալ այն մարդկանց հետ, ովքեր այդպես չեն վարվում: Ուրեմն պետք է գիտակցեք, որ մենք Ձեզ հետ որևէ գործ ունենալ չենք կարող, եթե ես

վստահ չլինեմ, որ Ձեր խոսքին կարելի է հավատալ»:

- Բայց դա իմ մեղքը չէր, - պատասխանեց Թալեաթը: - Այդ գնացքը կանգնեցնելու մեղքը գերմանացիներինն է: Գերմանիայի Գլխավոր շտաբի պետը օրերս վերադարձել է և մեծ աղմուկ է բարձրացրել՝ պնդելով, թե մենք չափազանց մեղմ ենք վարվում ֆրանսիացիների ու անգլիացիների հետ, և որ չպետք է նրանց թույլ տալ հեռանալ: Նա ասաց, որ մենք նրանց պետք է պատանդ պահենք: Այս ամենը նրա միջամտության հետևանքն է:

Ես այդպես էլ կարծում էի. Թալեաթն ինձ խոստացել էր, սակայն հետո Բրոնսարը՝ Գերմանիայի Գլխավոր շտաբի պետը, ըստ էության չեղյալ էր համարել նրա հրամանը: Թալեաթի խոստովանությունն ինձ ընձեռեց մի հնարավորություն, ինչին սպասում էի: Այդ պահին իմ հարաբերությունները Թալեաթի հետ այնքան բարեկամական էին, որ նրա հետ ես կարող էի խոսել ամենայն անկեղծությամբ:

- Լսե՛ք, Ձեզ անհրաժեշտ է մեկը, ով խորհուրդ կտա, թե ինչպես վարվել օտարերկրացիների հետ: Ինքներդ որոշեք՝ դա կլինեմ ե՛ս, թե Գերմանիայի Գլխավոր շտաբը: Չե՞ք կարծում, որ ճիշտ չէ լիովին վստահել գերմանացիներին: Պահը կգա, երբ Դուք իմ կարիքը կունենաք՝ նրանց դիմակայելու համար:

- Ի՞նչ նկատի ունեք, - հարցրեց Թալեաթը լարված ուշադրությամբ:

- Վստահաբար, գերմանացիները ձեզանից պահանջել են քայլեր անել, որոնք դուք չեք ցանկանում կատարել: Եթե դուք պատասխանեք նրանց, որ ԱՄՆ դեսպանը դեմ է դրան, իմ աջակցությունը կարող է ձեզ օգտակար լինել: Բացի այդ, Ձեզ հայտնի է, որ բոլորն ակնկալում են, թե մի քանի ամսից խաղաղություն կհաստատվի: Ձեզ հայտնի է, որ գերմանացիների համար Թուրքիան ոչինչ է, և, անշուշտ, Դուք չեք կարող ակնկալել Դաշնակիցների աջակցությունը: Աշխարհում միայն մեկ պետություն կա, որը Օսմանյան Թուրքիան կարող է դիտարկել որպես անշահախնդիր բարեկամ՝ Միացյալ Նահանգները:

Ասածիս ճշմարտությունն այնքան ակներև էր, որ անհրաժեշտություն չկար դա վիճարկելու: Սակայն ես ունեի նաև մեկ այլ փաստարկ, որն է՛լ ավելի անհերքելի էր. Պատերազմի նախարարության և քաղաքացիական իշխանությունների միջև արդեն պայքար էր սկսվել: Ինձ հայտնի էր՝ թեև Թալեաթը Ներքին գործերի նախարարն է և քաղաքացիական անձ, սակայն իր հեղինակության ամենաչնչին մասնիկն իսկ չի զիջի էնվերին, ոչ էլ գերմանացիներին կամ բանակի ներկայացուցիչներին:

- Եթե թույլ տաք, որ գերմանացիներն այս հարցում հաղթանակ տանեն, - ասացի ես, - Դուք կհայտնվեք նրանց ձեռքում: Հիմա Դուք նախարար եք, սակայն քաղաքացիական անձ: Թույլ կտա՞ք, որ բանակը, հան-

ձինս էնվերի ու գերմանացիների, անտեսի Ձեր հրամանները: Ըստ էության՝ այսօր հենց դա է տեղի ունենում: Եթե Դուք դա հանդուրժեք, շուտով կհամոզվեք, որ նրանք են վարում բոլոր գործերը: Գերմանացիներն այս երկիրը կկառավարեն ռազմական օրենքներով, իսկ այդ դեպքում ի՞նչ եք անելու Դուք և մյուս քաղաքացիական անձինք:

Ակնհայտ էր, որ այդ փաստարկը Թալեաթի վրա ուժեղ ազդեցություն գործեց: Մի պահ նա լուռ մնաց՝ մտորելով ասածիս շուրջ: Հետո ամենայն վճռականությամբ ասաց. «Ես կօգնեմ Ձեզ»: Նա շրջվեց դեպի սեղանն ու սկսեց աշխատել հեռագրասարքի վրա: Ես երբեք չեմ մոռանա այդ տեսարանը. մոխրագույն գիշերազգեստ հագած ածդահա Թալեաթը՝ գլխին կարմիր ֆես, փութով տպագրում է իր անձնական հեռագրիչ սարքի վրա իր անձնական ծածկագրով: Նրա երիտասարդ կինը պատուհանից նայում է ամուսնուն, իսկ սենյակը ողողված է վերջալույսի շողերով: Ակնհայտ էր, Թուրքիայի առաջնորդն իր սեփական խնդիրներն ուներ: Վեճը շարունակվեց հեռագրիչի միջոցով, և հիմա նա իր պատասխանը տպում էր աճող գրգռվածությամբ: Դառնալով ինձ՝ ասաց, որ կայարանի այն փքված մայորը պահանջում է էնվերի կողմից ստորագրված հրաման, քանի որ հեռագրով հաղորդված հրամանը կարող է հեշտությամբ կեղծված լինել: Անցավ որոշ ժամանակ, մինչև Թալեաթը գտավ էնվերին, և վեճը վերսկսվեց: Այդ պահին Թալեաթը հեռագրով ստացավ նորություններ, որոնք գրեթե ձախողեցին իմ գործը: Հեռագրասարքի երկարատև չխկչխկոցից հետո (այդ ընթացքում Թալեաթի դեմքն աստիճանաբար կորցնում էր սիրալիր արտահայտությունը և ավելի զայրագին էր դառնում) նա շրջվեց իմ կողմն ու ասաց.

- Անգլիացիները ռմբահարել են Դարդանելը և սպանել երկու թուրքի,- հետո ավելացրեց, - ամեն մի սպանված մահմեդականի դիմաց մենք երեք քրիստոնյա կսպանենք:

Մի պահ ինձ թվաց, թե ամեն բան կորած է. Թալեաթի դեմքը միայն ատելություն էր արտահայտում: Ավելի ուշ, կարդալով Կրոմերի զեկուցագիրը Դարդանելում կատարվածի մասին, ես պարզեցի, որ Բրիտանական կոմիտեն այդ անժամանակ հարձակումը դատապարտել էր որպես սխալ քայլ, քանի որ այն թուրքերին հուշել էր անգլիացիների ծրագրերի մասին: Ես կարծում եմ, որ դա սխալ էր նաև մեկ այլ պատճառով. այդ կրակոցները գրեթե խափանեցին օտարերկրացիներին Թուրքիայից դուրս բերելու ծրագրերը: Թալեաթը կատաղած էր, և ես հարկադրված էի նորից ու նորից կրկնել ասածներս, սակայն ի վերջո ինձ հաջողվեց խաղաղեցնել նրան: Ակնհայտ էր, որ նա տատանվում է երկու ցանկությունների միջև՝ պատժել անգլիացիներին և ապացուցել էնվերին ու գեր-

մանացիներին իր իշխանության հզորությունը: Բարեբախտաբար հաղթեց երկրորդը. նա հաստատակամ էր իր հզորությունն ապացուցելու մեջ:

Այդպես անցավ ավելի քան երկու ժամ: Հյուրընկալ տանտիրոջ դերն ակամա ստանձնած Թալեաթը ժամանակ առ ժամանակ դադարում էր հեռագրել և ինձ հայտնում էր քաղաքական վերջին ասեկոսեները:

- Ջավիդը՝ Թուրքիայի ֆինանսների նախարարը, – ասաց նա, - հրաժարական է տվել, սակայն խոստացել է տնից օգնել մեզ:

Մեծ վեզիրին, հակառակ նրա սպառնալիքներին, համոզել են շարունակել պաշտոնավարել: Քանի դեռ Բեյրութը, Ալեքսանդրիան կամ այլ անպաշտպան նավահանգիստ չեն ենթարկվել հարձակման, երկրի ներքին շրջաններում բնակվող օտարերկրացիներին չեն հալածի: Սակայն եթե նման հարձակումներ տեղի ունենան, դրանց դիմաց «վարձահատույց կլինեն» անգլիացիներն ու ֆրանսիացիները: Թալեաթի ասածներից պարզ էր դառնում, որ գերմանացիների հանդեպ նա հատուկ համակրանք չի տածում:

- Նրանք գոռոզամիտ են ու կոպիտ, - ասաց Թալեաթը, - մշտապես միջամտում են ռազմական հարցերին, իսկ թուրքերին արհամարհանքով են վերաբերվում:

Վերջապես գնացքի հարցը կարգավորվեց: Այդ ժամանակամիջոցում Թալեաթի տրամադրությունը մի քանի անգամ փոխվեց՝ չափազանց բարյացակամ, դաժան կամ հանդուրժող: Թուրքերին հատուկ է բնավորության մի գիծ, որն անհասկանալի է Արևմուտքի մարդուն. դա հումորի յուրատեսակ զգացումն է: Թալեաթն ինքը չափազանց սիրում էր լավ կատակ և զվարճալի պատմություններ: Հիմա, երբ վերահաստատվեցին բարեկամական հարաբերություններ, և նա կատարեց իր խոստումը, կրկին լավ տրամադրություն ուներ:

- Այդ մարդիկ հիմա արդեն կարող են մեկնել, - ծիծաղելով ասաց նա,- «Թուրքական հաճույք» գնելու ժամանակն է, պարո՛ն դեսպան:

Անշուշտ, նա նկատի ուներ այն փոքր նվերները, որ ես նախորդ օրը բաժանել էի մեկնող կանանց ու երեխաներին:

Մենք անմիջապես վերադարձանք կայարան, որտեղ անմխիթար ուղևորները սպասում էին դրական պատասխանի: Ես ասացի նրանց, որ գնացքը երեկոյան կմեկնի. նրանց երախտագիտությունն ու շնորհակալական խոսքերը չափազանց հուզիչ էին:

ԳԼՈՒԽ XIII

Ներխուժում «Նոտր Դամ դե Սիոն» դպրոց

Թալեաթի հայտարարությունն այն մասին, թե գնացքի մեկնումը հետաձգվել է Գերմանիայի Գլխավոր շտաբի պետ Բրոնսարի մեղքով, արժեքավոր տեղեկություն էր: Ես վճռեցի պարզել այդ հարցը և հաջորդ օրը այդ նպատակով այցելեցի Վանգենհայմին: Ասացի նրան, որ թուրքական իշխանությունները խոստացել են հանդուրժող լինել իրենց թշնամիների հանդեպ, և որ ես, անտարակույս, չեմ ընդունի Գերմանական շտաբի պետի որևէ միջամտություն այդ հարցում: Վանգենհայմն ինձ բազմիցս ասել էր, որ ԱՄՆ Նախագահ Վիլսոնին համարում է խաղաղարար պետական գործիչ, ուստի ես նրան ներկայացրի այն նույն փաստարկները, որ բերել էի Թալեաթին: Նման վարվելակերպը չի օժանդակի նրա երկրին, երբ գա խաղաղության օրը՝ ասացի ես: Մենք զավեշտալի վիճակում ենք հայտնվել. «բարբարոս մի երկիր», որպիսին Թուրքիան է, փորձում է պատերազմել քաղաքակիրթ ձևով և բարյացակամ վերաբերվել իր քրիստոնյա թշնամիներին, մինչդեռ ենթադրաբար քաղաքակիրթ և քրիստոնյա մի պետություն՝ Գերմանիան, փորձում է համոզել նրան գործել որպես բարբարոս: «Ձեր կարծիքով, ի՞նչ տպավորություն կգործի դա ամերիկացի ժողովրդի վրա», - հարցրի ես Վանգենհայմին: Նա օգնելու պատրաստակամություն հայտնեց և առաջարկեց, որ ես փորձեմ համոզել ամերիկյան կառավարությանը ազատ առևտրի ռեժիմ հաստատել Գերմանիայի հետ, որպեսզի վերջինս կարողանա մեծ քանակությամբ պղինձ, ցորեն ու բամբակ ստանալ: Ինչպես կհամոզվեք ստորև, սա մի թեմա էր, որին Վանգենհայմը մշտապես անդրադառնում էր:

Հակառակ Վանգենհայմի՝ թուրքերի ճնշումներից օտարազգիներին պաշտպանելու խոստմանը՝ Գերմանիայի դեսպանությունից ես ոչ մի աջակցություն չէի ստանում: Գիտակցում էի, որ իմ կրոնական պատկանելության պատճառով որոշ շրջաններում տպավորություն էր ստեղծվել, թե ես բավարար ջանքեր չեմ գործադրում քրիստոնյա ազգերի ներկայացուցիչներին և նրանց կրոնական կազմակերպությունները՝ հիվանդանոցները, դպրոցները, մենաստաններն ու եկեղեցիները, պաշտպանելու համար: Եվ ես բնականաբար մտածեցի, որ քրիստոնյա ամենազոր գործընկերներիս աջակցությունը կամրապնդի իմ ազդեցությունը թուրքերի վրա: Այդ հարցի շուրջ ես երկար զրույց ունեցա Պալավիչինիի հետ, ով կաթոլիկ էր և կաթոլիկ ամենահզոր պետության ներկայացուցիչը: Պալավիչինին անկեղծորեն ասաց, որ Վանգենհայմը թուրքերին

նյարդայնացնող որևէ քայլ չի անի: Գերմանացիները մշտապես մտավախություն ունեին, թե անգլիական ու ֆրանսիական նավատորմերը կներխուժեն Դարդանել, կգրավեն Կոստանդնուպոլիսը, կհանձնեն այն ռուսներին, և, ըստ Պալավիչինիի, միայն թուրքական ուժերը կարող էին կանխել այդ աղետը: Այդ պատճառով գերմանացիները մտածում էին, որ իրենք կախման մեջ են թուրքական կառավարության բարեհաճությունից և նրանց բարկացնող որևէ քայլ չեն անի: Պալավիչինին ջանում էր համոզել ինձ, որ անձամբ ինքն ու Վանգենհայմը կկամենային ինձ օժանդակել, սակայն հազիվ թե դա կարելի էր անկեղծ հայտարարություն համարել, քանզի եթե գերմանացիները մշտապես չմիջամտեին, թուրքերն իրենց ավելի պարկեշտ կպահեին: Ինձ համար պարզ էր, որ չար ոգին ոչ թե Թուրքիայի կառավարությունն էր, այլ ֆոն Բրոնսարը՝ Գերմանիայի Գլխավոր շտաբի պետը: Այն փաստը, որ Թուրքիայի կառավարության որոշ անդամներ, ովքեր ներկայացնում էին եվրոպական ու քրիստոնյա քաղաքակրթությունը, ինչպես օրինակ՝ Բուստանին ու Օսկանը, հրաժարական տվեցին որպես բողոք Թուրքիայի պատերազմի մեջ մտնելուն, է՛լ ավելի վտանգավոր դարձրին օտարերկրացիների դրությունը: Թուրք պաշտոնյաները նույնպես տարակարծիք էին. մի օր հաստատված քաղաքականությունը կարող էր մյուս օրը կտրուկ շրջադարձ կատարել, և արդյունքում մենք երբեք տեղյակ չէինք լինում, թե ինչ է սպասվում: Այն փաստը, որ կառավարությունն ինձ խոստացել էր օտարներին չվնասել, ինքնին ոչինչ չէր նշանակում, քանզի որոշ պաշտոնյա անձինք, ինչպես օրինակ՝ Բեդրի բեյը, շատ հաճախ կարող էին արդարացում գտնել հրահանգները չկատարելու համար: Իրավիճակը մշտարթուն աչալրջություն էր պահանջում. ես պիտի ոչ միայն խոստումներ կորզեի Թալեաթից ու Էնվերից, այլև անձամբ հետևեի, որ այդ խոստումները կատարվեն:

Նոյեմբերյան մի օր ես արթնացա առավոտյան ժամը չորսին: Երազ էի տեսել կամ նախազգացում ունեի, թե ինչ-որ բան է կատարվում «Սիոնի քույրերի»՝ ֆրանսիացի կուսակրոն կանանց, միանձնուհիների կազմակերպության հետ. տարիներ շարունակ օրիորդաց վարժարան էր գործում Կոստանդնուպոլսում: Ֆրանսիայի դեսպանի կինը՝ տիկին Բոնպարը, և Թուրքիայում ֆրանսիական համայնքի մի քանի տիկին մեզ խնդրել էին ուշադիր լինել հատկապես այդ հաստատության հանդեպ: Դա հիանալի կազմակերպված դպրոց էր. բազմաթիվ ազգերի լավագույն ընտանիքների դուստրեր ուսանում էին այդ դպրոցում, և երբ աշակերտուհիները հավաքվում էին, քրիստոնյաները՝ արծաթյա խաչերով, իսկ ոչ քրիստոնյաները՝ արծաթե աստղերով, դա գեղեցիկ, տպավորիչ տեսա-

ոան էր: Բնականաբար, այն միտքը, որ վայրենի թուրքերը կարող են ներխուժել այնտեղ, բավական էր յուրաքանչյուր պարկեշտ մարդու վրդովմունքը շարժելու համար: Թեև տագնապալի զգացողություններից բացի, թե ինչ-որ արտառոց դեպք է պատահել, այլ փաստեր չկային, այդուհանդերձ, տիկին Մորգենթաուն ու ես վճռեցինք նախաճաշից անմիջապես հետո մեկնել այնտեղ: Արտաքուստ կասկածելի ոչինչ չկար. անդորր էր, ամեն ինչ հանգիստ էր ու խաղաղ: Սակայն երբ մենք սկսեցինք բարձրանալ աստիճաններով, հինգ թուրք ժանդարմներ անմիջապես հետևեցին մեզ: Մեր հետևից ներս մտան շքամուտքից՝ տագնապեցնելով այնտեղ գտնվող աշակերտուհիներին: Թեև դա զուտ պատահականություն էր, սակայն այն փաստը, որ ԱՄՆ դեսպանը ժամանել է ժանդարմների ուղեկցությամբ, նրանց առավել անհանգստացրեց:

- Ի՞նչ եք կամենում, - հարցրի ես՝ շրջվելով դեպի ժանդարմները:

Քանի որ նրանք խոսում էին միայն թուրքերեն, բնականաբար, հարցս չհասկացան և սկսեցին ինձ հետ հրել: Թուրքերենի իմ իմացությունը չափազանց սահմանափակ էր, սակայն ինձ հայտնի էր «էլչի» բառը, որը նշանակում է դեսպան, և ինքս ինձ մատնացույց անելով՝ ասացի. «Elçi Amerikan»: Այդ թերի թուրքերենը հրաշք գործեց. Թուրքիայում յուրաքանչյուր դեսպան հարգարժան անձ է, և այս ժանդարմներն անմիջապես ընդունեցին իմ իրավասությունները: Այդ ընթացքում քույրերն արդեն կանչել էին մայր էլվիրային՝ տնօրինուհուն: Մայր էլվիրան Կոստանդնուպոլսի ամենաազդեցիկ ու նշանավոր դեմքերից էր: Հանգիստ ներս մտնելով՝ նա կանգ առավ թուրք ժանդարմների դիմաց առանց երկյուղի նշույլի՝ նրանց ճնշելով իր արժանապատիվ, հիասքանչ կեցվածքով: Նա ինձ գրեթե գերմարդկային էակ թվաց: Մայր էլվիրան Ֆրանսիայի ազնվական ընտանիքներից մեկի դուստրն էր: Մոտավորապես քառասուն տարեկան էր, սևաթույր մազերով, փայլուն սևորակ աչքերով, որոնք շողում էին խելք, նրբազգացություն և ամուր կամք արտահայտող դեմքի վրա: Այդ պահին նրան նայելիս մտածում էի, որ նա, հիրավի, պատիվ կբերեր և հմայք կհաղորդեր աշխարհի ցանկացած երկրի դիվանագիտական ծառայությանը: Մի քանի վայրկյանում մայր էլվիրան վերահսկողության տակ առավ այս անախորժ իրավիճակը: Խնդրեց կանչել աղջիկներից մեկին, ով խոսում էր թուրքերեն, և սկսեց հարցեր տալ ժանդարմներին: Նրանք պատասխանեցին, որ գործում են համաձայն Բեդրիի հրամանի: Այդ օրը օտարերկրյա բոլոր դպրոցները պետք է փակվեին, և կառավարությունը մտադիր էր գրավել նրանց շենքերը: Այս վարժարանում յոթանասուներկու կուսակրոն քույրեր և ուսուցիչներ կային: Ոստիկանությունը հրաման էր ստացել նրանց բոլորին փակել երկու սենյա-

կում, որտեղ նրանք փաստորեն պիտի պատանդ պահվեին: Հրամայված էր վարժարանի մոտավորապես երկու հարյուր աշակերտուհիների դուրս նետել փողոց, որտեղ նրանք պետք է տնօրինեին իրենց կյանքը. վարար անձրևն ու ցուրտ եղանակն առավել դաժան էին դարձնում այդ վճիռը: Կոստանդնուպոլսի յուրաքանչյուր օտարերկրյա դպրոց և կրոնական հաստատություն այդ պահին նույնպիսի վիճակում էին. ես միայնակ անկարող էի դիմակայել դրան: Անմիջապես հեռախոսով կապվեցի իմ թրքախոս իրավաբան-խորհրդականի հետ: Այս միջադեպն առանձնապես ուշագրավ կլիներ նրանց համար, ովքեր հավատում են նախախնամությանը: Երբ ես ժամանեցի Կոստանդնուպոլիս, այնտեղ դեռևս հեռախոսներ չկային, բայց վերջին մի քանի ամսվա ընթացքում անգլիական մի ընկերություն սկսել էր տեղադրել հեռախոսային համակարգ: «Սիոնի քույրերի» միջադեպի նախորդ օրը իրավաբանական հարցերով իմ խորհրդականը զանգահարեց ինձ ու հպարտությամբ հայտնեց, որ հենց այդ պահին իր աշխատասենյակում հեռախոս են տեղադրում: Ես գրեցի նրա հեռախոսի համարն ու հիմա գտա այն գրպանումս: Առանց թարգմանչի գործս շատ դժվար կլիներ, առանց հեռախոսի նրան անմիջապես դեպքի վայր չէի կարողանա կանչել:

Ես կարողացա հետաձգել ժանդարմների գործողությունները մինչև նրա ժամանումը, իսկ կինս, որ, բարեբախտաբար, խոսում էր ֆրանսերեն, քույրերից պարզում էր գործի մանրամասները: Տիկին Մորգենթաուն լավ գիտեր թուրքերին՝ գիտակցելու համար, որ նրանց գործողությունները չեն սահմանափակվի միայն քույրերին ու աշակերտուհիներին շենքից վտարելով: Նման հաստատությունները թուրքերը համարում էին գանձարաններ. դրանցում գտնվող թանկարժեք իրերի մասին քաղաքում պտտվող լուրերը մեծապես չափազանցված էին, և միանգամայն արդարացի կլիներ ենթադրել, որ, ի թիվս այլ պատճառների, այս վտարումը նաև նպատակ ուներ գտնելու հարստության իրական ապացույցներ:

- Դուք այստեղ դրամ կամ թանկարժեք իրեր ունե՞ք, - հարցրեց տիկին Մորգենթաուն քույրերից մեկին:

Պարզվեց, որ ունեն և բավական խոշոր գումար, որը պահվում էր վերևում՝ չհրկիզվող պահարանում: Կինս ինձ ասաց, որ ես զբաղեցնեմ ժանդարմներին, իսկ ինքը քույրերից մեկի հետ անաղմուկ հեռացավ: Վերևում քույրը ցույց էր տվել ճերմակ ֆլանելի՝ քառակուսի կտրված կտորներ, որոնց մեջ կարված էին քսանական ոսկեդրամ: Ընդհանուր առմամբ «Սիոնի քույրերն» այդկերպ թաքցրել էին մոտավորապես հիսուն հազար ֆրանկ: Վերջին ժամանակները նրանք արդեն սպասում էին այդ

վտարմանը և իրենց դրամը թաքցնում էին նման ձևով, որպեսզի կարողանան տանել իրենց հետ, երբ հարկադրված լինեն հեռանալ Թուրքիայից: Քույրերն ունեին նաև արժեքավոր իրերի մի քանի կապոց, թանկարժեք փաստաթղթեր, ինչպես օրինակ՝ նրանց դպրոցի կանոնադրությունը: Այստեղ, անշուշտ, կային թուրքերի ագահությունը գրգռող իրեր: Տիկին Մորգենթաուին հայտնել էին, որ այն պահից, երբ թուրք ժանդարմները կգրավեն շենքը, չնչին հնարավորություն կմնա, որպեսզի «Սիոնի քույրերը» երբևէ տեսնեն այդ դրամը: Քույրերի օգնությամբ կինս իր մարմնի վրա, որքան հնարավոր էր, ոսկի թաքցրեց, իջավ աստիճաններով, անցավ ժանդարմների շարքի միջով ու դուրս եկավ շենքից՝ ուղիղ անձրևի տակ: Ավելի ուշ նա ինձ խոստովանեց, որ ժանդարմների մոտով անցնելիս սարսափից քարացել էր, թեև արտաքուստ միանգամայն հանգիստ ու անվրդով էր թվում: Նա նստեց սպասող մեքենան, որը նրան հասցրեց ԱՄՆ դեսպանատուն, դրամը տեղավորեց մեր չհրկիզվող պահարանում, շտապ վերադարձավ «Սիոնի քույրեր» վարժարան: Եվ կրկին քույրերի ուղեկցությամբ տիկին Մորգենթաուն աստիճաններով բարձրացավ: Այս անգամ նրան ուղեկցեցին տաճարի սրահ, որը գտնվում էր մենաստանի հետնամասում. մենաստանից այդ սրահը տանող մուտք կար: Քույրերից մեկը բարձրացրեց հատակի մի տախտակը, որի տակ՝ թաքստոցում, ոսկյա դրամներ կային: Դրանք նույնպես թաքցվեցին տիկին Մորգենթաուի զգեստի տակ, և նա, մեկ անգամ ևս ժանդարմների մոտով անցնելով, դուրս եկավ անձրևով ողողված փողոց ու կրկին մեքենայով սլացավ դեսպանատուն: Այդ երկու «ճանապարհորդությունների» արդյունքում կինս կարողացավ քույրերի դրամը տեղափոխել այնտեղ, որտեղ այն անհասանելի էր թուրքերի համար:

Տիկին Մորգենթաուի ելումուտերի արանքում վարժարան ժամանեց Բեդրին: Նա ինձ ասաց, որ Թալեաթն անձամբ հրամայել է փակել այդ օրինակ բոլոր հաստատությունները, և որ նրանք մտադիր են ողջ աշխատանքն ավարտել մինչև ժամը ինը: Ինչպես արդեն նշել եմ, թուրքերը հումորի զգացում ունեն, սակայն կավելացնեի, որ այն երբեմն արտահայտվում է այլասերված ձևով: Այս պահին Բեդրին, ըստ էության, կարծում էր, թե ավելի քան յոթանասուն քույրերի երկու սենյակում փակելը և երկու հարյուր երիտասարդ, նրբորեն փայփայված աղջիկների Կոստանդնուպոլսի փողոցները նետելը հիասքանչ կատակ է:

- Մենք մտադիր էինք գործը սկսել վաղ առավոտյան և ավարտել, մինչև Դուք որևէ բան կլսեիք այդ մասին, սակայն պարզվում է՝ Դուք երբեք չեք քնում, - ծիծաղելով ասաց Բեդրին:

- Ձեր կողմից անհեթեթություն է մեզ հետ նման կատակներ անելը, -

ասացի ես, - չգիտե՞ք, որ ես մտադիր եմ գիրք գրել: Եթե պիտի շարունակեք նույն ձևով վարվել, ես իմ գրքում ձեզ կներկայացնեմ որպես ոճրագործ:

Ես դա ասացի պահի ազդեցությամբ. իրականում հենց ա՛յդ պահին մտքովս անցավ, որ այդ ամենը կարող է տպագրելու համար ուշագրավ նյութ լինել: Բեդրին այս հայտարարությունը լուրջ ընդունեց և խոժոռվեց.

- Դուք իրո՞ք մտադիր եք գիրք գրել, - հարցրեց նա մտահոգ:

- Իսկ ինչու՞ ոչ, - պատասխանեցի ես: - Գեներալ Լյու Վոլասը ծառայել է այստեղ և գիրք է գրել: Սանսեթ Քոքսը նույնպես ծառայել է այստեղ. նա էլ գիրք գրեց: Ես էլ կգրեմ: Իսկ Դուք այն կարևոր դերակատարներից եք, որ անպայման պիտի լինի գրքում: Ինչո՞ւ եք շարունակում գործել այնպես, որ ես հարկադրված լինեմ Ձեզ ներկայացնել որպես ահավոր մի անձնավորության: Այս քույրերը մշտապես ձեր լավ բարեկամն են եղել, նրանք ձեզ ոչ մի վատություն չեն արել, կրթել են ձեր դուստրերից շատերին: Ինչու՞ եք նրանց հետ նման խայտառակ ձևով վարվում:

Իմ այս կոչն ունեցավ իր ազդեցությունը. Բեդրին խոստացավ հետաձգել հրամանի կատարումը, մինչև հաջողվի կապվել Թալեաթի հետ: Մի քանի րոպե անց լսափողից հնչեց Թալեաթի ծիծաղը. «Փորձում էի փախչել Ձեզանից, - ասաց նա, - սակայն ինձ կրկին բռնեցիք: Ի՞նչ իմաստ ունի աղմուկ բարձրացնել այս հարցի շուրջ: Ֆրանսիացիներն իրենք դուրս քշեցին իրենց բոլոր վանականներին և միանձնուհիներին, այնպես չէ՞: Ինչու՞ մենք չենք կարող նույնկերպ վարվել:

Երբ ես բողոքեցի անվայելուչ շտապողականության դեմ, Թալեաթը Բեդրիին հրամայեց հետաձգել հրամանի կատարումը, մինչև մենք քննարկենք հարցը: Մայր էլվիրան և քույրերը շունչ քաշեցին: Արդեն պատրաստվում էինք մեկնելու, երբ Բեդրիի գլխում նոր միտք ծագեց. կար մի մանրուք, որի մասին մոռացել էր:

- «Սիոնի» քույրերին առայժմ հանգիստ կթողնենք, - ասաց նա, - բայց նրանց փողերը պետք է վերցնենք:

Ես դժկամությամբ համաձայնեցի նրա առաջարկին, թեպետ գիտեի, որ արժեքավոր ամեն ինչ հուսալիորեն պահված է ԱՄՆ դեսպանատանը: Մեծագույն հաճույքով դիտում էի, թե ինչպես Բեդրին և նրա գործակալները խառնում են վարժարանը: Նրանց հաջողվեց գտնել միայն մի փոքր տուփ՝ մեջը մի քանի պղնձադրամ, այնքան չնչին մրցանակ, որ թուրքերը չկամեցան վերցնել: Նրանք չափազանց զարմացած ու հիասթափված էին. այն օրվանից մինչ օրս էլ նրանք այդպես էլ չհասկացան, թե ինչ կատարվեց վարժարանի փողերի հետ: Եթե իմ թուրք բարեկամները բարեհաճեն կարդալ այս գիրքը, կիմանան, որ այստեղ ես առաջին ան-

գամ բացահայտում եմ այն դժնդակ օրերի բազում գաղտնիքներից մեկը:

Քանի որ մենաստանի պատուհաններից մի քանիսը բացվում էին դեպի տաճարի բակ, որը Վատիկանի սեփականությունն էր, մեզ հայտնի էր, որ թուրքական կառավարությունն իրավասու չէ այն զավթել: Այն քույրերին, ովքեր իրենց դրսևորել էին որպես չեզոք անձինք, թույլատրվել էր մնալ շինության այն մասում, որը նայում էր Վատիկանի սեփականությանը, մինչդեռ շենքի մնացյալ մասը վերածվեց ինժեներական դպրոցի: Մեզ հաջողվեց պայմանավորվել, որ ֆրանսիացի քույրերին տասը օր ժամանակ տրվի հայրենիք վերադառնալու համար: Բոլորը բարեհաջող տեղ հասան, և հիմա նրանցից շատերը բարեգործական և ռազմաճակատին աջակցելու գործով են զբաղված:

Կատակով արված իմ հայտարարությունն այն մասին, թե մտադիր եմ գիրք գրել, խորապես ազդել էր Բեդրիի վրա, և հաջորդող մի քանի շաբաթվա ընթացքում նա պարբերաբար անդրադառնում էր այդ թեմային: Ես կեսկատակ շարունակում էի պնդել՝ եթե նրա վարքը չշտկվի, ես հարկադրված կլինեմ նրան ներկայացնել ոճրագործի դերում: Մի անգամ նա ամենայն լրջությամբ հարցրեց, թե ինչ կարող է անել, որպեսզի ես նրան ավելի բարենպաստ լույսի ներքո ներկայացնեմ: Նման արտահայտությունն ինձ արդարացի հնարավորություն ընձեռեց մի բանի, որին երկար էի սպասել: Տարիներ շարունակ Կոստանդնուպոլիսը ճերմակամորթ ստրուկների վաճառքի կենտրոն էր, և գարշելի մի ավազակախումբ այնտեղ գործում էր կեղծ սինագոգի անվան տակ: Այդ ավազակախմբի դեմ պայքարելու համար կազմված կոմիտեն ինձ ընտրել էր պատվավոր նախագահ: Ես Բեդրիին ասացի, որ հենց հիմա ինքը հնարավորություն ունի փրկելու իր հեղինակությունը: Պատերազմական պայմաններում Բեդրիի՝ որպես ոստիկանապետի իրավասությունները մեծապես ընդլայնվել էին, և նրա ձեռնարկած ակտիվ գործողությունները հնարավորություն կտային քաղաքն ընդմիշտ մաքրելու այդ խայտառակ երևույթից: Այն ոգևորությունը, որով Բեդրին ընդունեց իմ առաջարկը, ինչպես նաև այն հետևողականությունը, որով նա իրականացրեց այդ գործը, նրան պիտի արժանացնեն բոլոր ազնիվ մարդկանց երախտագիտությանը: Մի քանի որ անց Կոստանդնուպոլսի բոլոր ստրկավաճառները փախչում էին, ով ուր կարող էր. նրանցից շատերը ձերբակալվեցին, մի քանիսին հաջողվեց ճողոպրել: Օտարազգի հանցագործները բանտում որոշ ժամանակ նստելուց հետո արտաքսվեցին երկրից: Բեդրին ինձ տրամադրեց բոլոր հանցագործների լուսանկարները, և հիմա դրանք պահվում են Պետքարտուղարությունում: Այն ժամանակ ես դեռ գիրք չէի գրում, սակայն ինձ պարտավորված զգացի հանրությանը ներկայացնել

Բեդրիի գործունեությունը: Ես ուղարկեցի նրա լուսանկարը «New York Times» թերթին՝ մի քանի տող գրելով կատարվածի մասին, և այդ նյութը տպագրվեց օրաթերթի կիրակնօրյա համարում: Այն փաստը, որ ամերիկյան նշանավոր մի թերթ գրել է իր մասին, աննկարագրելիորեն երջանկացրեց Բեդրիին: Ամիսներ շարունակ նա գրպանում պահում էր թերթի այն համարը, որտեղ զետեղված էր նրա լուսանկարը, և ցույց էր տալիս բոլոր ծանոթներին: Այս միջադեպը վերջ դրեց Ոստիկանության պետի և իմ միջև եղած հակամարտությանը, և մինչև իմ ծառայության ավարտը մենք լուրջ բախումներ այլևս չունեցանք:

ԳԼՈՒԽ XIV

Վանգենհայմը և «Բեթղեհեմ» պողպատի ընկերությունը «Սրբազան պատերազմ», որի գաղափարը ծնվել էր Գերմանիայում

Այդ ընթացքում ես խորացնում էի գիտելիքներս ժամանակակից գերմանացու խառնվածքի մասին՝ հանձինս Վանգենհայմի և նրա գործընկերների: Պատերազմի առաջին իսկ օրերին գերմանացիները մեզ՝ ամերիկացիներիս համար բացահայտեցին իրենց բնավորության քծնող կողմերը. հենց պարզ դարձավ, որ Ամերիկայում հասարակական կարծիքը գրեթե միաձայն սատարում է Դաշնակիցներին, և որ ամերիկյան կառավարությունը չի ոտնահարի չեզոքության օրենքները հանուն Գերմանիայի շահերի, գերմանացիների բարեկամական վերաբերմունքը վերածվեց գրեթե թշնամանքի:

Գերմանացիների մտահոգության առարկան, որին Գերմանիայի դեսպանն անդրադառնում էր ծանձրացնող համառությամբ, նույն հին թեման էր. ամերիկյան զինամթերքի վաճառքը Դաշնակիցներին: Այդ թեմային նա անդրադառնում էր ամեն հանդիպման ժամանակ: Վանգենհայմն ինձ անվերջ խնդրում էր դիմել Նախագահ Վիլսոնին և նրան հորդորել էմբարգո[18] հայտարարել: Իմ պնդումներն առ այն, որ զինամթերքի վաճառքը միանգամայն օրինական է, նրա վրա ոչ մի տպավորություն չէին գործում: Պայքարը Դարդանելում ավելի ու ավելի էր թեժանում, իսկ դրան զուգահեռ աճում էր Վանգենհայմի համառությունը խոսելու ամերիկյան զինամթերքի վաճառքի մասին: Նա պնդում էր, որ Դարդանելում արձակված ռումբերի մեծ մասն արտադրված է Ամերիկայում, և որ Միացյալ Նահանգները ըստ էության պատերազմում է Թուրքիայի դեմ:

Մի օր, սովորականից ավելի վրդովված, նա բերեց ռումբի մի բեկոր, որի վրա պարզորոշ երևում էր «B.S.Co» մակագրությունը:

- Նայե՛ք, - բացականչեց նա, - կարծեմ, ձեզ հայտնի է, թե ինչ է «B.S.Co». դա նշանակում է «Բեթղեհեմի պողպատի ընկերություն»: Թուրքերը կկատաղեն, և իմացա՛ծ եղեք, որ դրա համար մենք պատասխանատվության կկանչենք ամերիկյան կառավարությանը: Մենք ավելի ու ավելի շատ ապացույցներ ենք ստանում և մտադիր ենք ձեզ պատասխանատվության կանչել յուրաքանչյուր զինվորի մահվան համար, որի պատճառը ամերիկյան փամփուշտներն են եղել: Եթե Դուք գրեք Վաշինգտոն և հարկադրեք նրանց դադարեցնել ռազմամթերքի վաճառքը մեր հակառակորդներին, այս պատերազմը շատ շուտով կավարտվի:

Ես պաշտպանվում էի նույն փաստարկներով՝ Վանգենհայմի ուշադ-

ությունը հրավիրելով այն հանգամանքի վրա, որ Իսպանական պատերազմի[19] ընթացքում Գերմանիան զինամթերք էր վաճառում Իսպանիային, սակայն ես ոչ մի արդյունքի չհասա. Վանգենհայմը միայն տեսնում էր, որ ամերիկյան զինամթերքը մեծապես օգնում է հակառակորդին. հարցի իրավական մասը նրան ամենևին չէր հետաքրքրում: Ես, անշուշտ, կտրականապես հրաժարվեցի այդ մասին գրել ԱՄՆ Նախագահին:

Մի քանի օր անց «Ikdam» օրաթերթում հայտնվեց մի հոդված, որտեղ վերլուծվում էին թուրք-ամերիկյան հարաբերությունները: Հոդվածը հիմնականում բավական «բարյացակամ» էր Ամերիկայի հանդեպ, սակայն դրա իրական նպատակն էր հակադրել անցյալն ու ներկան և ուշադրություն հրավիրել ԱՄՆ-ի կողմից Թուրքիայի թշնամիներին զինամթերք վաճառելու փաստին, ինչը, ըստ հոդվածագրի, չի համապատասխանում պատմականորեն բարեկամական հարաբերություններ ունեցող երկու երկրների շահերին: Հասկանալի էր, որ հոդվածը գրված էր մեկ նպատակով՝ թուրք ժողովրդին ներկայացնել վերջին պարբերության ենթատեքստը. «Ինչպես Դարդանելից հաղորդում է մեր թղթակիցը, բրիտանացիների և ֆրանսիացիների կողմից վերջին գրոհի ժամանակ արձակված ռումբերի մեծ մասն արտադրվել է Ամերիկայում»:

Այդ ժամանակահատվածում «Ikdam» օրաթերթը վերահսկվում էր Գերմանիայի դեսպանության կողմից և ամբողջովին ծառայում էր գերմանական քարոզչության նպատակներին: Նման գաղափարի ներարկումը ջղագրգիռ, մոլեռանդ թուրքերին կարող էր շատ ողբերգական հետևանքներ ունենալ: Այդ մասին ես անմիջապես խոսեցի Գերմանիայի դեսպանի՝ այն անձնավորության հետ, ում անմիջական պատասխանատուն էի համարում այդ հարձակման համար: Սկզբում Վանգենհայմը չքմեղանում էր երեխայի նման՝ համառորեն պնդելով, թե ինքը ոչնչից տեղյակ չէ: Ես նրա ուշադրությունը հրավիրեցի այն հանգամանքի վրա, որ թերթում տպագրված հայտարարությունը գրեթե ամբողջովին կրկնում է այն ամենը, ինչ նա ինձ ասել էր մի քանի օր առաջ, և որ հոդվածի բառերը պարզապես նրա ասածի կրկնությունն են:

- Կա՛մ Դուք ինքներդ եք գրել հոդվածը, - ասացի ես, - կա՛մ հրավիրել եք լրագրողի և նրան հուշել հիմնական գաղափարը:

Վանգենհայմը համոզվեց, որ փաստը ժխտելն այլևս անհնար է:

- Հետո՞, - ասաց նա՝ գլուխը հետ գցելով, - ի՞նչ եք մտադիր անել:

Այդ անպատկառ վերաբերմունքը զայրացրեց ինձ, և ես դա չթաքցրի:

- Ես կասեմ Ձեզ, թե ինչ եմ մտադիր անել, - պատասխանեցի ես, - Ձեզ քաջ հայտնի է, որ ես ի վիճակի եմ սպառնալիքներս իրագործելու:

Կամ Դուք կդադարեք հակաամերիկյան տրամադրություններ բորբոքել Թուրքիայում, կամ ես հակագերմանական քարոզչություն կսկսեմ:

- Գիտե՞ք, բարո՛ն, - ավելացրի ես, - այս երկրում դուք՝ գերմանացիներդ, շատ բարակ սառույցի վրայով եք քայլում: Ձեզ քաջ հայտնի է, որ թուրքերը չեն համակրում ձեզ: Գիտեք նաև, որ ամերիկացիներին այստեղ շատ ավելի մեծ համակրանքով են վերաբերվում, քան գերմանացիներին: Մի պահ ենթադրենք՝ ես հայտնում եմ թուրքերին, որ դուք նրանց շահագործում եք ձեր սեփական նպատակների համար, որ իրականում նրանց ձեզ դաշնակից չեք համարում, այլ ընկալում եք որպես խամաճիկներ ձեր սեփական խաղում: Հակաամերիկյան տրամադրություններ տարածելով՝ դուք հարվածում եք իմ ամենացավոտ տեղին. հարվածի տակ եք դնում մեր կրոնական ու կրթական հաստատությունները: Ոչ մեկին հայտնի չէ, թե ինչ կանեն թուրքերը, եթե իմանան, որ իրենց հարազատը սպանվել է ամերիկյան փամփուշտից: Դուք անհապա՛ղ կդադարեցնեք այդ գրոհները, կամ երեք շաբաթից ես ողջ Թուրքիան կողողեմ գերմանացիների հանդեպ թշնամանքով: Սա պատերազմ կլինի մեր միջև, և ես պատրաստ եմ դրան:

Վանգենհայմի տրամադրությունն անմիջապես փոխվեց. շրջվեց, ձեռքը դրեց ուսիս, իսկ դեմքին հայտնվեց գրեթե սիրալիր արտահայտություն:

- Լավ, լավ, եկեք բարեկամներ լինենք, - ասաց նա, - տեսնում եմ, որ այս հարցում Դուք իրավացի եք: Հասկանում եմ, որ նման հարձակումները կարող են վնասել Ձեր բարեկամներին, միսիոներներին: Խոստանում եմ, որ դա այլևս չի կրկնվի:

Այդ օրվանից թուրքական մամուլում հակաամերիկյան ակնարկներ այլևս չհայտնվեցին: Հարձակումների կտրուկ դադարեցումն ինձ համոզեց, որ Թուրքիայում գերմանացիները սերմանել էին Vaterland-ի նախընտրած գործիքներից մեկը՝ կառավարության կողմից մամուլի լիակատար վերահսկում: Սակայն երբ մտաբերում եմ Վանգենհայմի տխրահռչակ դավերն այդ պահին, նրա ընդվզումները անգլիական ռազմանավերի կողմից ամերիկյան ռումբերի օգտագործման վերաբերյալ (եթե, իհարկե, անգլիացիներն օգտագործել են դրանք, ինչի հարցում ես լուրջ կասկածներ ունեմ), դրանք պարզապես զավեշտական են թվում: Վանգենհայմն ինձ բացատրել էր անցյալում Թուրքիան հակամարտության մեջ ներքաշելու Գերմանիայի հիմնական շարժառիթներից մեկը: Նա այդ մասին խոսեց հանգիստ ու սառնասիրտ, կարծես դա աշխարհում գոյություն ունեցող ամենասովորական երևույթներից էր: Իր աշխատասենյակում նստած՝ վայելում էր գերմանական սև, հաստ մի սիգար, երբ ներ-

կայացրեց Գերմանիայի ծրագրերը՝ ողջ մահմեդական մոլեռանդ աշխարհը քրիստոնյաների դեմ ոտքի հանելու գաղափարը: Գերմանիան ծրագրել էր իսկական «սրբազան պատերազմ» սկսել աշխարհում անգլիական և ֆրանսիական ազդեցությունը վերացնելու նպատակով:

- Թուրքիան ինքնին կարևոր չէ, - ասաց Վանգենհայմը, - թուրքական բանակը փոքր է, և մենք դրանից շատ բան չենք էլ ակնկալում: Հիմնականում այն կպաշտպանվի, սակայն այստեղ կարևորը մահմեդական աշխարհն է: Եթե մեզ հաջողվի մահմեդականներին ոտքի հանել անգլիացիների ու ռուսների դեմ, մենք նրանց կհարկադրենք խաղաղություն կնքել:

Թե ինչ նկատի ուներ Վանգենհայմը «կարևորը» ասելիս, պարզ դարձավ նոյեմբերի 13-ին, երբ սուլթանը պատերազմի հրովարտակ արձակեց: Նշված հրովարտակն իրականում ջիհադի՝ անհավատների դեմ «սրբազան պատերազմի» կոչ էր: Դրանից շատ չանցած՝ շեյխ-ուլ-իսլամը հրապարակեց իր հայտարարագիրը՝ ողջ մահմեդական աշխարհին կոչ անելով ոտքի ելնել՝ իրենց քրիստոնյա բռնակալներին կոտորելու համար: «Օ՛հ, մահմեդականներ, - այսպես էր ավարտվում փաստաթուղթը, - դուք, որ լի եք երջանկությամբ և շուտով կզոհաբերեք ձեր կյանքն ու ունեցվածքը արդար դատի և չարը խափանելու գործին, միավորվե՛ք այժմ կայսերական գահի շուրջ, ենթարկվե՛ք Ամենակարողի հրամաններին, որ Ղուրանում մեզ խոստանում է անսահման բերկրանք այս և մյուս աշխարհում, փարվե՛ք Խալիֆի գահի ոտքին և իմացեք, որ մեր երկիրը պատերազմում է Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի, ինչպես նաև նրանց դաշնակիցների դեմ, և որ դրանք իսլամի թշնամիներն են: Հավատացյալների առաջնորդ Խալիֆը կոչ է անում ձեզ՝ բոլոր մահմեդականներիդ, մասնակցել Սրբազան պատերազմին»:

Կրոնական առաջնորդներն այս կոչն ընթերցեցին մզկիթներում իրենց հետևորդներին: Այն լայնորեն լուսաբանվում էր նաև թերթերում և տարածվել էր մահմեդական մեծաթիվ բնակչություն ունեցող բոլոր երկրներում՝ Հնդկաստանում, Չինաստանում, Իրանում, Եգիպտոսում, Ալժիրում, Տրիպոլիում, Մարոկկոյում և այլուր: Նշված բոլոր երկրներում այն ներկայացվել էր բազմահազարանոց հավաքներում, և բնակչությանը հարկադրում էին ենթարկվել հրամանին: Թուրքական «Ikdam» օրաթերթը, որը պատկանում էր գերմանացիներին, անդադար սադրում էր ամբոխին: «Մեր թշնամիների արարքները, - գրում էր թուրք-գերմանական թերթի խմբագիրը, - հարուցել են Ալլահի ցասումը: Հայտնվել է հուսո ճառագայթը: Բոլոր մահմեդականները՝ ահել թե ջահել, տղամարդիկ, կանայք և երեխաները, պարտավոր են կատարել իրենց պարտքը, որ-

պեսզի այդ ճառագայթը չմարի, այլ հավերժ շողա: Ինչպիսի՜ մեծ գործեր կարող են անել նվիրյալ տղամարդկանց ձեռքերը մյուսների՝ կանանց ու երեխաների օգնությամբ: Եկել է գործելու ժամանակը: Մենք ամենքս պիտի կռվենք մեր ողջ ուժով, ամբողջ հոգով, ատամներով և եղունգներով: Մեր մարմինների, մեր հոգիների բոլոր նյարդերով: Եթե այդպես վարվենք, ապա լծի տակ հայտնված մահմեդական թագավորությունների ազատագրումն ապահովված է: Այնուհետև, Աստծո կամոք, մենք կքայլենք անկաշկանդ մեր բարեկամների հետ, ովքեր ողջույն են հղում Կիսալուսնին: Ալլա՛հը մեզ օգնական, և Մարգարեն մեզ ապավեն»:

Սուլթանի հռչակագիրը պաշտոնական հանրային փաստաթուղթ էր և առաջարկվող «սրբազան պատերազմի» մասին խոսում էր միայն ընդհանուր գծերով, սակայն այդ նույն ժամանակամիջոցում հայտնվեց գաղտնի մի պարսավագիր, որը հավատացյալներին ավելի հստակ ցուցումներ էր տալիս: Այն մզկիթներում չէր ընթերցվում. գաղտնի տարածվել էր մահմեդական բոլոր երկրներում՝ Հնդկաստանում, Եգիպտոսում, Մարոկկոյում, Սիրիայում և այլուր: Կանխամտածված այն տպագրված էր արաբերեն՝ Ղուրանի լեզվով: Դա մի երկարաշունչ փաստաթուղթ էր, որի անգլերեն տարբերակը պարունակում էր տասը հազար բառ: Տեքստն առատորեն համեմված էր Ղուրանից բերված մեջբերումներով, որոնց ոճն ամբողջովին միտված էր ռասայական ու կրոնական ատելություն արթնացնելուն: Այն մանրակրկիտ ներկայացնում էր համայն քրիստոնյաների, բացառությամբ գերմանացի ազգի, սպանության՝ ֆիզիկական ոչնչացման ծրագիրը: Մի քանի մեջբերում կբացահայտի այդ փաստաթղթի ոգին. «Օ՛հ, հավատացյալներ և սիրելի մահմեդականներ, թեկուզ մեկ ակնթարթ խորհեք ներկայիս իսլամական աշխարհի վիճակի մասին. եթե նույնիսկ մի պահ պատկերացնեք այն, ապա երկար կողբաք: Կգիտակցեք առկա աղետալի վիճակը, որն արտասուքներ կբերի և ողբի կրակ կվառի: Դուք կտեսնեք, որ մեծագույն երկիր Հնդկաստանը, որտեղ բնակվում են միլիոնավոր մահմեդականներ, կրոնական պառակտումների և անկամության հետևանքով հայտնվել է Աստծո թշնամիների՝ անհավատ անգլիացիների ձեռքին: Ճավա կղզում դուք կտեսնեք քառասուն միլիոն մահմեդականների, ովքեր հոլանդացիների լծի տակ տառապում են շղթայված, թեև այդ անհավատները շատ ավելի փոքրաթիվ են և մահմեդականների նման բարձր քաղաքակրթություն չունեն: Ձեր աչքերի առջև Եգիպտոսը, Մարոկկոն, Թունիսը, Ալժիրը և Սուդանը հեծում են աննկարագրելի տառապանքներից Ալլահի և նրա Մարգարեի թշնամիների ճիրաններում: Դուք տեսնում եք անծայրածիր Սիբիրը և Թուրքեստանը, Խիվան և Բուխարան, Կովկասը, Ղրիմը և Կազանը,

Սպահանը և Խուզիստանը, որտեղ Ալլահի նվիրյալ հավատացյալները հայտնվել են բռնակալների ոտքերի տակ, ովքեր մեր հավատքի թշնամիներն են: Դուք վկա եք, թե ինչպես են պատրաստվում մասնատելու Պարսկաստանը, և դուք տեսնում եք Խալիֆաթի քաղաքը, որը դարեր շարունակ մարտնչել է մեր հավատի ոսոխների դեմ, իսկ այժմ դարձել է բռնակալների թիրախ: Ուրեմն ուր էլ հայացք գցեք, կտեսնեք, որ ճշմարիտ հավատքի ոսոխները, հատկապես՝ անգլիացիները, ռուսները և ֆրանսիացիները, ճնշում են իսլամը և ոտնահարում մեր իրավունքները բոլոր հնարավոր միջոցներով: Անհնար է մեկ առ մեկ թվարկել այն բոլոր վիրավորանքները, որ ստացել ենք այդ ազգերից. նրանց ցանկությունն է երկրի երեսից իսպառ վերացնել իսլամը, ոչնչացնել բոլոր մահմեդականներին: Բռնատիրությունն անցել է բոլոր սահմանները, մեր համբերության բաժակն այլևս լցվել է... Մահմեդականները տքնում են, անհավատները՝ ուտում: Մահմեդականները սովի տառապանքին են մատնված, մինչդեռ անհավատները պճնվում են և ապրում շքեղության մեջ: Իսլամի աշխարհն անկում է ապրում, անդունդ գլորվում, մինչդեռ քրիստոնեական աշխարհն առաջ է ընթանում, վերելք է ապրում: Մահմեդականները վերածվել են ստրուկների, և անհավատները կառավարում են մեզ: Այս ամենը հնարավոր դարձավ, երբ մահմեդականները հրաժարվեցին Ղուրանում բերված ծրագրից և ուրացան Սրբազան պատերազմը... Բայց այժմ եկել է Սրբազան պատերազմի օրը, որը հավերժական ազատություն կբերի իսլամական աշխարհին նրան ճնշող անհավատների լծից: Սրբազան պատերազմն այժմ դարձել է սրբազան պարտք: Իմացե՛ք, անհավատների արյունը իսլամական հողում կարելի է անպատիժ թափել, բացառությամբ նրանց, ում մահմեդական զորությունը խոստացել է անվտանգություն, և նրանց, ովքեր մեր դաշնակիցներն են (այսպիսով պարզ է դառնում, որ գերմանացիների ու ավստրիացիների կոտորածներ չեն սպասվում): Իսլամի վրա իշխող անհավատների սպանությունը դարձել է սրբազան պարտք՝ անկախ նրանից՝ դա կկատարվի բացահայտ թե գաղտնի, ինչպես հրամայում է Ղուրանը. «Սպանե՛ք նրանց, որտեղ էլ գտնեք: Իմացե՛ք, որ մենք նրանց հանձնել ենք ձեր ձեռքը և նրանց վրա անսահման իշխանություն տվել: Նա, ով մեզ վրա իշխող մեկ անհավատ կսպանի՝ ծածուկ թե բացահայտ, կարժանանա Ալլահի շնորհին: Աշխարհի ցանկացած վայրում գտնվող յուրաքանչյուր մահմեդական պիտի հանդիսավոր երդում տա, որ կսպանի առնվազն երեք կամ չորս անհավատի, ովքեր իշխում են իրենց վրա, քանզի այդպիսիք Ալլահի հավատքի թշնամիներն են: Թող ամեն մի մահմեդական իմանա, որ այդ անելու համար Ալլահը, որ արարել է երկինք ու երկիր, կկրկնապատկի

իր պարգևը: Այդպես վարվող ամեն մի մահմեդական կազատվի Ահեղ դատաստանի սարսափներից, երբ արքնանան հանգուցյալները: Ո՞ր մի անհատը կարող է նման պարգևը մերժել այդպիսի չնչին արարքի դիմաց: Եկել է ժամը, երբ ամենքս պիտի ելնենք մեկ մարդու նման՝ մեկ ձեռքում սուր, մյուսում հրացան, գրպանում մահացու գնդակներ և ռումբեր, իսկ սրտում՝ հավատքի լույսը: Ժամն է հասել, որ մենք ի լուր աշխարհի բարձրաձայն հայտարարենք՝ Հնդկաստանը Հնդկաստանի՛ մահմեդականներին, Ճավան Ճավայի՛ մահմեդականներին, Մարոկկոն Մարոկկոյի՛ մահմեդականներին, Թունիսը Թունիսի՛ մահմեդականներին, Եգիպտոսը Եգիպտոսի՛ մահմեդականներին, Իրանը Իրանի՛ մահմեդականներին, Թուրանը Թուրանի՛ մահմեդականներին, Բուխարան Բուխարայի՛ մահմեդականներին, Կովկասը Կովկասի՛ մահմեդականներին և Օսմանյան կայսրությունը՝ օսմանցի թուրքերին ու արաբներին»:

Ստորև ներկայացված էին «սրբազան» նպատակին հասնելու անհրաժեշտ ցուցումները: Լինելու է «սրտի պատերազմ». Մարգարեի յուրաքանչյուր հետևորդ սրտի խորքում անպայման պետք է ատելություն փայփայի անհավատների հանդեպ: «Խոսքի պատերազմ». ամեն մի մահմեդական խոսքով, գրչով պարտավոր է այդ նույն ատելությունը տարածել ամենուր, որտեղ կան մահմեդականներ: Նաև՝ «գործողությունների պատերազմ». սպանել անհավատներին ամենուր, որտեղ նրանք կհամարձակվեն հայտնվել: Վերջինը, ըստ պարսավագրի, «ճշմարիտ պատերազմն է»: Կլինի «փոքր սրբազան պատերազմ» և «մեծ սրբազան պատերազմ»: Առաջինը նկարագրում է այն կռիվը, որ յուրաքանչյուր մահմեդական պետք է մղի իր հարևան քրիստոնյաների դեմ, իսկ երկրորդը համաշխարհային մեծ պատերազմն է, որի ընթացքում միավորված իսլամը կպայքարի բռնակալների դեմ Հնդկաստանում, Արաբիայում, Թուրքիայում, Աֆրիկայում և այլուր: «Սրբազան պատերազմը, - շարունակում էր պարսավագիրը, - կլինի երեք տիպի. առաջինը՝ անհատական պատերազմ. սա անձնական գործողությունների ամբողջությունն է: Այն կարող է իրագործվել կտրող, սպանող գործիքներով, այն սրբազան պատերազմի օրինակով, որ նվիրյալներից մեկն իրականացրեց Փիթեր Գալի՝ անգլիացի անհավատ նահանգապետի դեմ, Հնդկաստանում ոստիկանության անգլիացի պետի սպանության օրինակով կամ Աբի Բուսիրի ձեռքով (Ալլա՛հը նրան օրհնի), Մեքքա ժամանող պաշտոնյաների սպանության օրինակով»: Փաստաթուղթը օրինակ էր բերում նաև մի քանի այլ սպանություններ, կոչ էր արվում դրանք իրագործած նվիրյալներից օրինակ վերցնել: Երկրորդ՝ հավատացյալներին կոչ էր արվում վրիժառու «խմբեր» կազմել և կոտորել քրիստոնյաներին: Նման խմբերից

ամենաօգտակարները համարվում էին նրանք, որոնք կազմվել էին և գործում էին գաղտնի: «Այսօրվա իսլամական աշխարհը մեծապես կշահի նման գաղտնի խմբերի շնորհիվ»: Երրորդ մեթոդը «կազմակերպված գործողություններն են», այն է՝ հմտորեն վարժեցված բանակի միջոցով:

Կոտորածների, սպանությունների այս հրահանգների հավաքածուի բոլոր մասերում նկատվող խմբագրական աշխատանքը վկայում էր գերմանացու ձեռքի առկայության մասին: Պետք է սպանվեին միայն այն անհատները, «ովքեր իշխում են մեզ վրա», այսինքն՝ նրանք, ովքեր ունեն մահմեդական հպատակներ: Քանի որ Գերմանիան նման հպատակներ չուներ, այս դարձվածքը պետք է գերմանացիներին պաշտպաներ հարձակումներից: Սեփական շահերի հարցում իրենց հատուկ ուշադրությամբ և կատարյալ անտարբերությամբ դաշնակցի շահերի հանդեպ՝ գերմանացիները բացահայտ կերպով անտեսել էին այն փաստը, որ Ավստրիան մեծ թվով մահմեդական հպատակներ ունի Բոսնիայում և Հերցեգովինայում: Մահմեդականներին հրամայված էր բանակներ կազմել, «թեև կարող է անհրաժեշտություն ծագել օտարածին որոշ տարրեր ներգրավելու». այն է՝ հրավիրել գերմանացի հրահանգիչների և սպաների: «Դուք պետք է հիշեք (սա, հավանաբար, ամենուրեք գերմանացիներին պաշտպանելու նպատակ ուներ), որ բացարձակապես անօրինական է պայքարել այդ դավանանքի այն ժողովրդի դեմ, ում հետ պայմանագիր է կնքվել, որը թշնամական զգացումներ չի տածում Խալիֆաթի աթոռի հանդեպ, և որը հայտնվել է մահմեդականների հովանավորության ներքո»:

Թեև ես չունեի Վանգենհայմի անձնական հաստատումն առ այն, որ գերմանացիները մտադիր են ամենուրեք ոտքի հանել մահմեդականներին Անգլիայի, Ֆրանսիայի ու Ռուսաստանի դեմ, սակայն այս դրվագները միանշանակ վկայում են, թե իրականում ով էր կանգնած այդ տարօրինակ փաստաթղթի հետևում: Երբ առիթ եղավ այս հարցը քննարկելու Վանգենհայմի հետ, ինձ համար պարզ դարձավ, որ, նրա կարծիքով, նման «սրբազան պատերազմը» ամենակարճ ճանապարհն է Անգլիային հարկադրելու խաղաղություն կնքել: Ըստ այդ տեսակետի՝ սա պետք է մեծապես նպաստեր խաղաղության գործին: Այդ շրջանում Վանգենհայմն այն կարծիքին էր (դա, ի դեպ, իշխում էր պաշտոնական շատ շրջաններում), որ Գերմանիան սխալ գործեց՝ Անգլիային պատերազմի մեջ ներքաշելով, և եթե հիմա Անգլիայի թիկունքում՝ Հնդկաստանում, Եգիպտոսում, Սուդանում և այլուր, կրակոցներ հնչեն, Բրիտանական կայսրությունը հարկադրված կլինի նահանջել: Վանգենհայմը վստահ էր՝ եթե նույնիսկ բրիտանահպատակ մահմեդականները հրաժարվեն ապստամբել, միայն դրա սպառնալիքը բավական կլինի Անգլիային հար-

կադրել Բելգիան ու Ֆրանսիան թողնել բախտի քմահաճույքին: Նման սադրող բնույթ ունեցող գրականության տարածումը վայրագության աստիճանի մոլեռանդ մարդկանց շրջանում ակնհայտորեն վտանգավոր էր: Ես միակ չեզոք դիվանագետը չէի, որ չափազանց լուրջ վտանգներ էի կանխազգում: Բուլղարիայի դեսպանորդ պարոն Տոչևը՝ դիվանագիտական կորպուսի ամենաընդունակ անդամներից մեկը, ինձ ասում էր, որ իր երկիրը ջանում է չեզոքություն պահպանել: Կողմերից ամեն մեկն ակնկալում էր, որ Բուլղարիան իր դաշնակիցը կդառնա, իսկ Բուլղարիայի քաղաքականության նպատակն էր սպասողական վիճակում պահել կռվող բոլոր կողմերին: Եթե Գերմանիային հաջողվեր «սրբազան պատերազմ» սկսել, և եթե կոտորածներ սկսվեին, Բուլղարիան, ըստ պարոն Տոչևի, միանշանակ ուժերը կմիավորեր Անտանտի հետ:

Մենք պայմանավորվեցինք, որ նա կայցելի Վանգենհայմին և կհաստատի այդ դիրքորոշումը, իսկ ես նույնպիսի ճնշում կգործադրեմ էնվերի վրա: Սակայն «սրբազան պատերազմը» ձախողվեց հենց սկզբից. Հնդկաստանի, Եգիպտոսի, Մարոկկոյի և Ալժիրի մահմեդականները հասկանում էին, որ գտնվում են շատ ավելի բարվոք վիճակում, քան կարող էին լինել այլ պայմաններում: Ավելին, պարզամիտ մահմեդականները չէին կարողանում ըմբռնել, թե ինչու պետք է «սրբազան պատերազմ» մղեն քրիստոնյաների դեմ՝ միաժամանակ համագործակցելով նույնպես քրիստոնյա Գերմանիայի ու Ավստրիայի հետ: Նման դաշինքն այդ ամենը վերածում էր զավեշտի: Հիրավի, Ղուրանը հրամայում է ոչնչացնել քրիստոնյաներին, սակայն Սուրբ գիրքը բացառություն չի անում գերմանացիների համար, իսկ մոլեռանդ մահմեդականի գիտակցության մեջ գերմանացի «*ռայյան*»[20] նույնպիսի քրիստոնյա տականք է, ինչպիսիք են անգլիացին կամ ֆրանսիացին, և նրանց սպանությունը նույնքան սրբազան գործ է: Եվրոպական դիվանագիտության պարտադրած նրբերանգները նրանց համար նույնքան անհասկանալի էին, որքան ձգողականության օրենքը կամ միգամածությունների տեսությունը: Այդ հանգամանքը հաշվի առնելու գերմանացիների անընդունակությունը գերմանական պնդաճակատության և թուրքական ազգային հոգեբանության կատարյալ չիմացության ևս մեկ ապացույց էր: Միակ պարզորոշ ու տեսանելի փաստը Կայսեր անսահման ցանկությունն էր երեք հարյուր միլիոն մահմեդականների հրահրել քրիստոնյաների դեմ՝ կազմակերպելով հերթական Բարդուղիմեոսյան գիշեր[21]:

Ուրեմն ի՞նչ, «սրբազան պատերազմ» այդպես էլ երբեք տեղի չունեցա՞վ: Արդյոք Վանգենհայմի «Մեծ նպատակը» տապալվե՞ց: Երբ մտաբերում եմ այդ չարաբաստիկ ջիհադը, մի տեսարան եմ վերհիշում. ԱՄՆ

դեսպանատանը սեղանի մի կողմում նստած էնվերն անվրդով թեյ և գաթա է վայելում, դիմացը նստած եմ ես՝ նույնքան խաղաղ տրամադրությամբ: Այդ օրը նոյեմբերի 14-ն է՝ սուլթանի կողմից «սրբազան պատերազմ» հայտարարելու հաջորդ օրը: Մզկիթներում և այլուր հավաքներ են տեղի ունեցել, որոնց ընթացքում հայտարարություններ են ընթերցվել, հնչել են բոցավառ ելույթներ: Այդ պահին էնվերն ինձ համոզում է, թե ամերիկացիներին ոչինչ չի սպառնում, ավելին, որ ջարդեր ընդհանրապես չեն լինի: Մինչ նա խոսում է, ներս է մտնում քարտուղարս և տեղեկացնում, որ սակավաթիվ մի ամբոխ ցույց է կազմակերպել օտարերկրյա որոշ հաստատությունների դիմաց: Նրանք ներխուժել են ավստրիական մի խանութ, որն անզգուշորեն դրել է «անգլիական հագուստ» ցուցանակը: Ես էնվերին հարցրի, թե դա ինչ է նշանակում: Նա ասաց, որ սխալ է կատարվել, և որ ոչ մի մտադրություն չկա հարձակվելու որևէ մեկի վրա: Նրա մեկնումից մի քանի րոպե անց ինձ տեղեկացրին, որ ամբոխը հարձակվել է «Բոմարշե» հրուշակեղենի խանութի վրա և հիմա շարժվում է դեպի Բրիտանիայի դեսպանատուն: Ես իսկույն հեռաձայնեցի էնվերին: Նա պատասխանեց, որ ամեն բան կարգին է, որ դեսպանությանը ոչինչ չի սպառնում: Մեկ-երկու րոպե անց ամբոխը կտրուկ շրջվեց և ուղղվեց դեպի Կոստանդնուպոլսի ամենանշանավոր «Թոքաթլյան» ռեստորան:

Այն փաստը, որ ռեստորանը պատկանում էր հայի, դարձնում էր այն օրինական ավար: Երկար կեռիկավոր փայտերով զինված վեց տղամարդիկ կոտրել էին բոլոր պատուհաններն ու հայելիները, մյուսները պոկել էին սեղանի մարմարյա մասերը և ջարդուփշուր արել: Մի քանի րոպեում ողջ ռեստորանն ավերվել էր:

Հենց դա էր «սրբազան պատերազմը», ինչպես այն հասկացել էին Կոստանդնուպոլսում: Ահա այսպես ավարտվեց Գերմանիայի տխրահռչակ փորձը ոտքի հանելու երեք հարյուր միլիոն մահմեդականների ընդդեմ քրիստոնյա աշխարհի: Հրահրող գրականություն տարածելով՝ Կայսրը միայն մեկ նպատակի հասավ. մահմեդականի հոգում անհուն թշնամանքի ալիք բարձրացավ քրիստոնյաների հանդեպ, ինչը մահմեդական զգայական տարօրինակ էության հիմնական գիծն է: Այդպիսով գերմանացիները բորբոքեցին կրքեր, որոնք դրսևորվեցին հայերի և այլ հպատակ ժողովուրդների կոտորածներում:

ԳԼՈՒԽ XV

Ջեմալը՝ խռովարար Մարկոս Անտոնիոս
Խաղաղություն հաստատելու գերմանացիների առաջին փորձը

1914թ. նոյեմբերի սկզբին Հայդար Փաշայում գտնվող երկաթուղային կայարանը վերածվել էր հսկայական ցույցի բեմահարթակի: Ծովային ուժերի նախարար Ջեմալը՝ Թուրքիայի ամենահզոր դեմքերից մեկը, մեկնում էր ստանձնելու թուրքական Չորրորդ բանակի հրամանատարությունը, որի կենտրոնակայանը Սիրիայում էր: Կառավարության բոլոր անդամները և Կոստանդնուպոլսի ազդեցիկ անձինք հավաքվել էին այնտեղ՝ մեկնող սատրապին հաղորդելու իրենց խանդավառ բարեմաղթանքները: Նրան մեծարում էին որպես «Եգիպտոսի փրկչի», իսկ Ջեմալն ինքը գնացքի մեկնումից անմիջապես առաջ հանդիսավոր հայտարարեց. «Մինչև Եգիպտոսը չգրավեմ, Կոստանդնուպոլիս չեմ վերադառնա»:

Ողջ արարողությունն ինձ փոքր-ինչ ուռճացված թվաց: Այն անխուսափելիորեն հիշեցնում էր մեկ այլ արյունոտ եռիշխանության երրորդ անդամին, ով շուրջ երկու հազար տարի առաջ լքեց իր երկիրը՝ Արևելքի գերագույն միապետ դառնալու համար: Բնավորության որոշ գծերով Ջեմալը հիշեցնում էր Մարկոս Անտոնիոսին: Իր հռոմեացի նախորդի նման նա էլ անառակ կյանք էր վարում: Անտոնիոսի նման նա էլ անզուսպ խաղամոլ էր և իր ազատ ժամանակի մեծ մասն անցկացնում էր խաղասեղանի մոտ՝ *Սըրկըլ դ'Օրիան* խաղատանը: Եվս մեկ հատկանիշ, որը խիստ բնորոշ էր երկուսին էլ՝ անսահման փառասիրությունը: Ջեմալի օրոք թուրքերի երկիրը փլուզվում էր ճիշտ այնպես, ինչպես հանրապետական Հռոմն էր կործանվում Անտոնիոսի տիրապետության ժամանակ: Ջեմալը վստահ էր, որ կարող է դառնալ երկու կամ երեք գավառի տիրակալը, գուցե և կարող է դինաստիա հիմնել: Հուսով էր, որ այն ռազմարշավը, որը հիմա ընթացքի մեջ էր, նրան ոչ միայն կդարձնի Թուրքիայի բաղձալի գավառի տիրակալը, այլև աշխարհի հզորագույն մարդկանցից մեկը: Ավելի ուշ Սիրիայում նա իշխում էր անկախ՝ որպես միջնադարյան բարոն-ավազակ: Նա դարձավ յուրատեսակ կրտսեր սուլթան, ով ուներ իր սեփական արքունիքը, սեփական սելամլըքը[22], իր անունից հրամաններ էր արձակում, իրականացնում էր ցանկացած արդարադատություն՝ հաճախ անտեսելով Կոստանդնուպոլսի իշխանություններին:

Այն ցնծությունը, որով նրա գործընկերները ողջունում էին Ջեմալին, այնքան էլ անշահախնդիր չէր: Իրականում նրանցից շատերն ուրախ էին, որ Ջեմալը մեկնում է: Վաղուց արդեն Ջեմալը փուշ էր դարձել Թալեաթի

ու էնվերի աչքին, և նրանք անչափ գոհ էին, որ նա այսուհետ իր հավակնոտ, կամակոր բնավորությունը կցուցադրի Միջերկրականի գավառներում բնակվող սիրիացիներին, հայերին և մյուս այլադավաններին: Կոստանդնուպոլսում Ջեմալին չէին համակրում: Եռիշխանության մյուս անդամներն իրենց պակաս համակրելի գծերով հանդերձ ունեին նաև որոշակի գրավիչ հատկանիշներ. Թալեաթը՝ կոպիտ առնականություն և թեթև բնավորություն, էնվերը՝ խիզախություն և հաճելի վարվեցողություն, մինչդեռ Ջեմալը զուրկ էր նման հատկանիշներից: Ամերիկացի մի բժիշկ, որ մասնագիտացել էր ֆիզիոգնոմիայի[23] բնագավառում, Ջեմալին համարում էր բացառիկ տիպար: Նա ինձ ասաց, որ երբևէ չի տեսել մի դեմք, որի արտահայտության մեջ այդ աստիճանի համադրված լինեն դաժանությունը, կամային հզորությունը և խորաթափանց միտքը: Ինչպես ցույց տվեց պատմությունը, էնվերը կարող էր լինել դաժան և արյունախում, սակայն իր ամենանողկալի հատկանիշները կարողանում էր թաքցնել անվրդով, խաղաղ, նույնիսկ երբեմն հաճելի դիմակի տակ: Ջեմալը չէր թաքցնում իր էությունը. նրա դեմքին պարզորոշ արտացոլվում էր հոգին: Աչքերը՝ սև ու սևեռուն՝ սրաթափանց արտահայտությամբ, մտքի արագընթաց անցումը մի թեմայից մյուսը՝ կայծակնային արագությամբ ընկալելով ամեն մանրուք, վկայում էին ծայրաստիճան խորամանկության, անողոքության և եսակենտրոնության մասին: Նույնիսկ ծիծաղը, որ մերկացնում էր ճերմակ ատամները, տհաճ էր, մի տեսակ՝ անասնական: Սևաթույր մազերը, սև մորուքը, որ հատկապես ցայտուն էին գունատ դեմքի վրա, միայն սաստկացնում էին այդ տպավորությունը: Առաջին հայացքից Ջեմալի կեցվածքն ուշագրավ չէր. նա փոքրամարմին էր, կարճահասակ, փոքր-ինչ կորամեջք, սակայն երբ սկսում էր շարժվել, զգացվում էր, որ այդ մարմինը լի է էներգիայով: Նրա մատներն ուժգին սեղմում էին զրուցակցի մատները, իսկ ինքն ուղղակի նայում էր աչքերիդ մեջ սուր, խորաթափանց հայացքով, և նման պահերին այդ մարդու՝ որպես անհատի հզորությունը խիստ տպավորիչ էր:

Թեև ես Ջեմալի հետ միայն մեկ կարճատև հանդիպում էի ունեցել, ամենևին չզարմացա, երբ իմացա, որ Ջեմալի համար քաղաքական կանխամտածված սպանություններն առօրյա, սովորական աշխատանքի մի մասն էին կազմում: Մյուս բոլոր երիտթուրքերի նման Ջեմալը նույնպես բավական համեստ ծագում ուներ: Անդամակցել էր «Միություն և առաջադիմություն» կոմիտեին դրա ստեղծման առաջին օրերից և իր կամային ուժերի, ինչպես նաև անողոք խառնվածքի շնորհիվ շատ արագ դարձել էր Կոմիտեի առաջնորդներից մեկը: Այնուհետև դարձավ Կոստանդնուպոլսի զինվորական կառավարիչը: Այդ պաշտոնում նրա հիմնական

աշխատանքը իշխող ուժերի բոլոր հակառակորդներին ասպարեզից հեռացնելն էր: Այս «հաճելի» պարտականությունները նա կատարում էր հմուտ վարպետությամբ, և երկրում ծայր առած ահաբեկչական գործողությունները հիմնականում Ջեմալի ձեռքի գործն էին: Նա դարձավ Կաբինետի անդամ, սակայն չէր կարող հաշտ ու ներդաշնակ աշխատել գործընկերների հետ. անվերջանալի խնդիրներ էր ստեղծում: Անտանտի հետ ունեցած կապերի խզումից առաջ նա ֆրանսամետի համարում ուներ: Անտանտի հանդեպ Ջեմալն ինչպիսի զգացում էլ տածեր, նա ամենևին չէր ջանում թաքցնել իր նողկանքը գերմանացիների հանդեպ: Լուրեր էին պտտվում, թե նա գերմանացիներին հայհոյում է նույնիսկ նրանց ներկայությամբ, անշուշտ՝ թուրքերեն: Ջեմալն այն սակավաթիվ թուրք պաշտոնյաներից էր, որ երբեք չընկավ նրանց ազդեցության տակ: Ըստ էության՝ Ջեմալն իրականում ներկայացնում էր այն գաղափարը, որն արագորեն տարածվում էր թուրքական քաղաքականության մեջ՝ պանթուրքիզմը. արհամարհում էր Օսմանյան կայսրության լծի տակ գտնվող ժողովուրդներին՝ արաբներին, հույներին, հայերին, չերքեզներին, հրեաներին և մտադիր էր թուրքացնել ողջ կայսրությունը: Ջեմալի անձնական հավակնությունները հաճախ բախումների առիթ էին դառնում Էնվերի ու Թալեաթի հետ. նրանք ինձ բազմիցս խոստովանել են, որ անկարող են վերահսկել նրան: Ինչպես արդեն ասացի, այդ էր պատճառը, որ նրանց ուրախացնում էր Ջեմալի մեկնումը: Իհարկե, նրանք չէին ակնկալում, թե Ջեմալը կգրավի Սուեզի ջրանցքը և անգլիացիներին դուրս կքշի Եգիպտոսից: Այդ նշանակումը բացահայտում էր այն խառնաշփոթ իրավիճակը, որ տիրում էր Թուրքիայում: Որպես Ռազմածովային ուժերի նախարարի՝ Ջեմալի իսկական տեղը նավատորմային բաժանմունքն էր, մինչդեռ իր պաշտոնեական դիրքում լինելու և նավատորմը գլխավորելու փոխարեն նրան ուղարկեցին Սիրիայի և Սինայի արևակեզ ավազուտներ՝ բանակը առաջնորդելու համար:

Այդուհանդերձ, Ջեմալի հեռարշավը ներկայացնում էր Թուրքիայի թատերական ջանքը Դաշնակիցների աչքին հաստատվելու որպես ռազմական ուժ: Կայարանից նրա մեկնումը թուրք ողջ բնակչության համար պատմական պահ էր. ընդամենը հարյուր տարվա ընթացքում Թուրքիան կորցրեց իր գաղութների զգալի մասը, և ոչինչ այնքան ցավագին չէր ազգային արժանապատվության համար, որքան անգլիացիների կողմից Եգիպտոսի զավթումը: Անգլիան օկուպացիայի ընթացքում ճանաչում էր Թուրքիայի ինքնիշխանությունը, սակայն այն պահին, երբ Թուրքիան պատերազմ հայտարարեց Մեծ Բրիտանիային, անգլիացիները վերջ դրեցին այդ ֆարսին և պաշտոնապես իրենց իշխանության տակ առան

այդ սքանչելի գավառը: Ջեմալի ռազմարշավը պատասխան էր անգլիացիների այդ քայլին: Թուրքերին ասվել էր, որ պատերազմի իրական պատճառը անհետացող Օսմանյան կայսրության վերականգնումն է, և որ այդ նշանակալի գործում Եգիպտոսի ազատագրումն առաջին քայլերից է: Թուրքերին հայտնի էր նաև, որ անգլիական վարչարարության շրջանում Եգիպտոսը վերածվել էր ծաղկող երկրի, և որ այդ հանգամանքը երկիրը նվաճողին մեծ հարստություն կբերեր: Զարմանալի չէ, որ մեկնող Ջեմալին թուրքերն ուղեկցում էին ոգևորիչ բացականչություններով:

Գրեթե այդ նույն շրջանում Էնվերը մեկնեց իրականացնելու թուրքական մեկ այլ խոշոր ռազմական նախաձեռնություն՝ հարձակում Ռուսաստանի վրա Կովկասի միջով: Այստեղ նույնպես կային թուրքական գավառներ, որոնք անհրաժեշտ էր «հետ վերցնել»: 1878 թվականի պատերազմից հետո Թուրքիան հարկադրված եղավ Ռուսաստանին զիջել Կասպից և Սև ծովերի միջև գտնվող բարեբեր տարածքները, որոնք հիմնականում բնակեցված էին հայերով, և հիմա Էնվերը պետք է այդ տարածքները վերանվաճեր: Սակայն Էնվերի մեկնումը ծափողջույններով չուղեկցվեց. նա հեռացավ անաղմուկ: Այս երկու անձանց մեկնումը նշանակում էր, որ պատերազմը իրո՛ք սկսվել է:

Հակառակ այս ռազմարշավների՝ Կոստանդնուպոլսում ընթանում էին նաև ոչ ռազմական նախապատրաստություններ: Այդ օրերին՝ 1914 թվականի երկրորդ կեսին, քաղաքի արտաքին տեսքը, հիրավի, պատերազմական էր, սակայն հանկարծակի այն վերածվեց խաղաղության մեծ կենտրոնակայանի: Անգլիական նավատորմը մշտապես սպառնում էր Դարդանելին, և քաղաքի փողոցներով ամեն օր թուրքական զորախմբեր էին անցնում: Սակայն այդ զորաշարժերը չէին գրավում գերմանական դեսպանության ուշադրությունը: Վանգենհայմի հոգսը միայն ու միայն մեկն էր. այդ անձնավորությունը հանկարծ դարձավ խաղաղասեր: Հիմա արդեն նա պարզել էր, որ ամենալուրջ ծառայությունը, որ Գերմանիայի դեսպանը կարող է մատուցել իր Կայսերը, կլինի պատերազմի ավարտը՝ այնպիսի պայմաններով, որոնք Գերմանիան կփրկեն ջախջախումից, նույնիսկ կործանումից: Անհրաժեշտ էր ապահովել պայմանավորվածություններ, որոնք կվերականգնեին Vaterland-ի դիրքն ազգերի ընտանիքում:

Նոյեմբերին Վանգենհայմը սկսեց քննարկել այդ հարցը: Նա ինձ բացատրեց, որ դա գերմանական համակարգի մասն է՝ միանգամայն պատրաստ լինել ոչ միայն պատերազմի, այլև խաղաղության: «Իմաստուն գեներալը ճակատամարտ սկսելիս մշտապես ձեռքի տակ ունի նաև

նահանջելու ծրագիր՝ պարտության դեպքում կիրառելու համար, - ասաց Գերմանիայի դեսպանը: - Այդ սկզբունքը ճշմարիտ է նաև պատերազմ սկսող պետության համար: Պատերազմի ընթացքում միայն մեկ բան է հստակ՝ վաղ թե ուշ այն կավարտվի: Նշանակում է՝ եթե ծրագրում ենք պատերազմ, պետք է պատրաստ լինենք նաև խաղաղության»:

Այդուհանդերձ, Վանգենհայմին այդ պահին հուզում էին ավելի շոշափելի բաներ, քան փիլիսոփայական այդ սկզբունքը. Գերմանիան ռազմական գործողություններին վերջ դնելու անհետաձգելի պատճառներ ուներ, և Վանգենհայմը քննարկում էր դրանք: Ցինիկ անկեղծությամբ նա ասաց, որ Գերմանիան նախապատրաստվել էր միայն կարճատև պատերազմի, քանզի ակնկալում էր երկու սրընթաց գրոհներով ոչ ավելի, քան վեց ամսում ջախջախել Ֆրանսիան ու Ռուսաստանը: Այդ ծրագիրն ակնհայտորեն տապալվեց, և հիմա քիչ հավանական էր, որ Գերմանիան հաղթանակ տաներ այդ պատերազմում՝ բացատրում էր ինձ Վանգենհայմը և ավելացնում. «Գերմանիան մեծ սխալ կգործի, եթե ուժասպառության աստիճանի համառությամբ շարունակի պատերազմել, քանզի նման պատերազմը նշանակում է իր գաղութների, իր առևտրական նավատորմի, ինչպես նաև տնտեսական ու առևտրական կարգավիճակի անդառնալի կորուստ»:

- Եթե մենք երեսուն օրում Փարիզ չմտնենք, պարտված ենք, - օգոստոսին ասաց ինձ Վանգենհայմը, ու թեև Մառնի ճակատամարտից հետո նրա կեցվածքը փոքր-ինչ փոխվել էր, նա չէր փորձում թաքցնել այն փաստը, որ այդ անասելի շտապողականության մեջ ընթացող արշավանքը ձախողված է, որ միակ բանը, որին սպասում է Գերմանիան առաջիկայում, դանդաղ ընթացող, հյուծող պատերազմն է: Եվ միակ բանը, որ կարող են ձեռք բերել նման կացության մեջ, «ո՛չ հաղթանակ, ո՛չ պարտություն» վիճակն է: «Մենք սխալ գործեցինք, - ասաց Վանգենհայմը, - երկարատև պայքարի համար պաշարներ չնախապատրաստեցինք: Այդ սխալը մենք այլևս չենք կրկնի: Հաջորդ անգամ այնքան պղինձ ու բամբակ կպաշարենք, որ կբավականացնեն շուրջ հինգ տարի»:

Վանգենհայմը մեկ այլ պատճառ էլ ուներ՝ անհապաղ խաղաղության ձգտելու համար, և այդ պատճառը լույս էր սփռում գերմանացիների լկտի դիվանագիտության վրա. Եգիպտոսը նվաճելու նպատակին ուղղված Թուրքիայի նախապատրաստությունները նյարդայնացնում ու զայրացնում էին Գերմանիայի դեսպանին: Նրան առանձնապես մտահոգում էր այն հետաքրքրությունն ու եռանդը, որ թուրքերը դրսևորում էին այդ հարցում: Սկզբում ես բնականաբար կարծում էի, թե Վանգենհայմին մտահոգում է Թուրքիայի պարտության հնարավորությունը, սակայն նա ինքը

խոստովանեց, որ իր մտահոգության իրական պատճառը թուրքերի հնարավոր հաջողությունն է: Թուրքերի հաղթարշավը Եգիպտոսում, բացատրեց ինձ Վանգենհայմը, կարող է լրջորեն խափանել Գերմանիայի ծրագրերը: Եթե Թուրքիան զավթի Եգիպտոսը, բանակցությունների սեղանի շուրջ բնականաբար կպահանջի իրեն հանձնել այդ գավառի վերահսկողությունը և այդ հարցում կակնկալի գերմանացիների աջակցությունը, մինչդեռ Գերմանիան ոչ մի մտադրություն չունի աջակցելու Օսմանյան Թուրքիայի վերականգնմանը: Գերմանիան հույս ուներ համաձայնության գալու Անգլիայի հետ, և դրա հիմքում պետք է լիներ շահերի բաժանումը Արևելքում: Գերմանիան ավելի շատ երազում էր տիրանալ Միջագետքին, ինչը նրա Համբուրգ-Բաղդադ ծրագրի անբաժան մասն էր: Փոխարենը Գերմանիան պատրաստ էր իր հավանությունը տալու Անգլիայի կողմից Եգիպտոսի բռնակցմանը: Այդպիսով գերմանացիները ծրագրում էին, որ իրենք և անգլիացիները Թուրքիան կբաժանեն երկու հիասքանչ դոմինյոնի[24]: Դա առաջարկություններից մեկն էր, որ Գերմանիան մտադիր էր ներկայացնել խաղաղության կոնֆերանսում, որի կազմակերպման վրա հիմա աշխատում էր Վանգենհայմը: Միանգամայն պարզ էր, որ Թուրքիայի կողմից Եգիպտոսի գրավումը կբարդացնի նման ծրագրի իրագործումը: Հարկ չկա մեկնաբանելու իր դաշնակից Թուրքիայի հանդեպ Գերմանիայի վարվելակերպի բարոյականությունը: Այդ ամենը լիովին համահունչ էր Գերմանիայի՝ արտաքին գործերում կիրառվող «իրապաշտ» քաղաքականությանը:

1914 թվականի վերջին և 1915 թվականի սկզբին գերմանական հասարակության գրեթե բոլոր խավերն անհամբերությամբ ակնկալում էին խաղաղության հաստատում և իրենց հայացքներն ուղղել էին դեպի Կոստանդնուպոլիս՝ որպես այն վայրը, որտեղ խաղաղ բանակցությունները կարող էին նպաստավոր մեկնարկ ունենալ: Գերմանացիները կասկած չունեին, որ ԱՄՆ Նախագահ Վիլսոնը հանդես կգա խաղաղարարի դերում. այդ դերում մեկ այլ անձնավորության մասին նրանք մտածել իսկ չէին ցանկանում: Խնդիրը միայն Նախագահի հետ այդ հարցը քննարկելու լավագույն եղանակ գտնելն էր: Այդ բանակցությունները, ըստ ամենայնի, պետք է անցկացվեին Եվրոպայում ամերիկյան դեսպանատներից մեկի միջոցով: Գերմանացիները բնականաբար չէին կարող կապ հաստատել ամերիկյան դեսպանատների հետ թշնամիների մայրաքաղաքներում: Դա, ինչպես նաև այլ հանգամանքներ, գերմանացի պաշտոնյաներին հարկադրեց դիմել Թուրքիայում Միացյալ Նահանգների դեսպանին:

Այդ օրերին Կոստանդնուպոլսում հայտնվեց գերմանացի մի դիվա-

նագետ, ով իր դերակատարությունն ունեցավ ժամանակակից պատմության մեջ. դա դոկտոր Ռիխարդ ֆոն Կյուլմանն էր՝ հետագայում Գերմանիայի արտաքին գործերի նախարարը: Վերջին հինգ տարիներին դոկտոր ֆոն Կյուլմանը մշտապես հայտնվում էր այն տեղերում, որտեղ Գերմանական կայսրությունը դիվանագիտական կարևոր ու գաղտնի բանակցություններ էր վարում: Իշխան Լիխնովսկին նկարագրել է նրա գործունեությունը 1913-1914 թթ. Լոնդոնում: Նա ակնհայտորեն մեծ դեր խաղաց Բրեստ-Լիտովսկի խաղաղության տխրահռչակ պայմանագրի կնքման ժամանակ: Պատերազմը սկսվելուց շատ չանցած՝ դոկտոր ֆոն Կյուլմանը ժամանեց Կոստանդնուպոլիս որպես գերմանական դեսպանության խորհրդական՝ փոխարինելով զորակոչված ֆոն Մուտիուսին: Ֆոն Կյուլմանի նշանակումն արդարացված էր. ծնվել էր Կոստանդնուպոլսում, այնտեղ էր անցկացրել իր երիտասարդ տարիները: Հայրը անատոլիական երկաթուղու տնօրենն էր: Թուրքերի հոգեբանությունը հասկանում էր այնպես, ինչպես կհասկանար միայն նա, ով երկար տարիներ ապրել էր նրանց երկրում: Անձնական առումով նա դիվանագիտական կորպուսի համար ուշագրավ հավելում էր: Նա ինձ ոչ ագրեսիվ, չափազանց գրավիչ անձնավորություն թվաց: Բացահայտորեն ջանում էր մտերմանալ Ամերիկայի դեսպանության աշխատակիցների հետ և բոլորիս համար որոշակի հետաքրքրություն էր ներկայացնում, քանի որ նոր էր վերադարձել խրամատներից և մեզ պատերազմական առօրյայի դրվագներ էր պատմում: Այդ շրջանում մենք ամենքս մեծ հետաքրքրություն ունեինք պատերազմի ժամանակակից մեթոդների հանդեպ, և Կյուլմանի մանրակրկիտ պատմությունները խրամատներում ընթացող կռիվների մասին մեզ երկար օրեր ու երեկոներ պահում էին լարված զգոնության մեջ: Նրա սիրած թեմաներից էր նաև Welt-Politik-ը, և ինձ ապշեցնում էր միջազգային հարաբերությունների բոլոր հարցերի վերաբերյալ նրա գերազանց իմացությունը: Այն օրերին մենք Կյուլմանին կարևոր անձ չէինք համարում, սակայն այն փութաջանությունը, որով նա կատարում էր իր պարտականությունները, գրավում էր բոլորիս ուշադրությունը: Շուտով ես զգացի, որ նա «թավշյա» զգուշավորությամբ կիրառում է իր հզոր ազդեցությունը: Նկատեցի, որ նա սակավախոս է, սակայն չափազանց ուշադիր է լսում ուրիշների ասածը և մտովի դասավորում դրանք: Կյուլմանը Վանգենհայմի ամենամտերիմ մարդկանցից էր. նա էր ապահովում դեսպանի կապը Գերմանիայի արտաքին գործերի գերատեսչության հետ: Դեկտեմբերի կեսերին ֆոն Կյուլմանը մեկնեց Բեռլին, որտեղ մնաց գրեթե երկու շաբաթ: Վերադարձավ 1915թ. հունվարի առաջին օրերին, և դրանից հետո մթնոլորտը Գերմանիայի դեսպա-

նատանը զգալիորեն փոխվեց: Մինչ այդ Վանգենհայմը խաղաղ բանակցությունների հարցը հիմնականում քննարկում էր ոչ պաշտոնական մթնոլորտում, սակայն այժմ այդ թեման առանձնահատուկ նշանակություն ստացավ: Ինձ համար հասկանալի էր, որ Կյուլմանին կանչել էին Բեռլին՝ այդ թեմայի վերաբերյալ բոլոր մանրամասներին տեղեկանալու համար, և որ նա վերադարձել էր հստակ հանձնարարականով, որին Վանգենհայմը պարտավոր էր անհապաղ հետևել: Խաղաղության վերաբերյալ մեր ունեցած բոլոր ամենակարևոր զրույցների ընթացքում Կյուլմանը մշտապես մոտակայքում էր լինում. ինչպես միշտ՝ սակավախոս, բայց ուշադիր լսող ստորադասի դերում:

Վանգենհայմն ինձ ասաց, որ 1915 թ. հունվարը չափազանց բարենպաստ ամիս կլիներ պատերազմն ավարտելու համար. Իտալիան դեռևս չէր մտել պատերազմի մեջ, թեև առկա էին բոլոր նշանները, որ դա տեղի կունենա գարնանը: Բուլղարիան ու Ռումինիան շարունակում էին հեռվից հետևել դեպքերի զարգացմանը, թեև ոչ ոք չէր ակնկալում, թե նրանց սպասողական դիրքորոշումը երկար կտևի: Անգլիան ու Ֆրանսիան պատրաստվում էին իրականացնելու «գարնանային վեց գրոհներից» առաջինը, և գերմանացիներն առիթ չունեին կասկածելու, որ այն հաջողությամբ կպսակվի. իրականում նրանք սարսափում էին, որ գերմանական բանակը պարտություն կկրի: Բրիտանական ու ֆրանսիական ռազմանավերը շրջում էին Դարդանելում: Գերմանիայի Գլխավոր շտաբն ու Կոստանդնուպոլսի ռազմական ու ռազմածովային բոլոր փորձագետները վստահ էին, որ Դաշնակիցների նավատորմը կարող է ճեղքել պաշտպանությունը և գրավել քաղաքը: Այդ պահին թուրքերի մեծ մասն արդեն հոգնել էր պատերազմից, և Գերմանիան երբևէ չէր անտեսում այն հավանականությունը, որ թուրքերը կարող են ինքնուրույն խաղաղության պայմանագիր կնքել: Ավելի ուշ ես պարզեցի՝ երբ ռազմական իրադրությունը Գերմանիայի օգտին չէր լինում, վերջինս սկսում էր մտածել խաղաղության մասին, սակայն իրավիճակը փոքր-ինչ շտկվելուն պես անմիջապես նորից դառնում էր ռազմամոլ. ինչպես ասում են՝ «հիվանդանալիս սատանան երդվում է, որ ճգնավոր կդառնա, սակայն ապաքինվելուն պես նույն սատանան է»: Այդուամենայնիվ, Վանգենհայմը որքան էլ շատ ցանկանար խաղաղության հասնել հունվարին, պարզ էր, որ նա մշտատև խաղաղության մասին չէր մտածում: Այդ ժամանակ խաղաղության ճանապարհին կանգնած ամենազգալի խոչընդոտն այն փաստն էր, որ Գերմանիան իր կատարած հանցագործությունների համար բնավ չէր զղջում, և Վանգենհայմն իր գլխին ամենևին էլ «մոխիր չէր ցանում»: Գերմանիան սխալ հաշվարկ էր կատարել, ընդամենը՝ այդքանը: Վանգեն-

հայմն ու մյուս գերմանացիները ստեղծված իրավիճակում միայն տեսնում էին, որ ցորենի, բամբակի ու պղնձի իրենց պաշարները բավարար չեղան երկարատև պատերազմի համար: Վանգենհայմի հետ ունեցած իմ զրույցների գրառումներում հաճախ հանդիպում են այսպիսի արտահայտություններ՝ «հաջորդ պատերազմի ժամանակ», «հաջորդ անգամ», և վստահությամբ խոսելով հաջորդ՝ համաշխարհային ավելի մեծ աղետի մասին՝ նա պարզապես արտահայտում էր իշխող ռազմայունկերական դասակարգի տեսակետը: Ակնհայտ էր, որ գերմանացիները ձգտում են հաշտության՝ որպես յուրատեսակ զինադադարի, որը նրանց գեներալներին ու արդյունաբերության առաջնորդներին ժամանակ կտա պատրաստվելու հաջորդ պատերազմին: Այն ժամանակ՝ գրեթե չորս տարի առաջ, Գերմանիան առաջարկում էր նույնպիսի խաղաղ բանակցություններ, որպիսիք առաջարկել է այդ ժամանակից ի վեր և դեռ հիմա էլ շարունակում է առաջարկել բազում առիթներով: Վանգենհայմի ծրագիրը հետևյալն էր. մարտնչող կողմերի ներկայացուցիչները պետք է հավաքվեն բանակցային սեղանի շուրջ և գործը կարգավորեն «տալու և վերցնելու» սկզբունքով: Նա ասաց, որ հարկ չկա կողմերին հարկադրել նախօրոք պահանջներ ներկայացնել. «Եթե երկու կողմերը նախապես ներկայացնեն իրենց պահանջները, դա կխափանի ողջ գործը, - ասաց նա: - Ի՞նչ պիտի անենք: Գերմանիան, անշուշտ, կներկայացնի իր պահանջները, որոնք մյուս կողմը կհամարի ծիծաղաշարժ և տարօրինակ: Անտանտի ներկայացրած պահանջները կզայրացնեն ողջ Գերմանիային: Դրա հետևանքով երկու կողմերն այն աստիճանի կվրդովվեն, որ ոչ մի կոնֆերանս տեղի չի ունենա: Ո՛չ, ոչ, եթե մենք ցանկանում ենք վերջ դնել այս պատերազմին, հարկ է զինադադար կնքել: Հենց որ դադարենք կռվել, նոր պատերազմ չենք սկսի: Պատմության մեջ գոյություն չունի գեթ մի դեպք, երբ մեծ պատերազմի ժամանակ հաստատված զինադադարը չավարտվի խաղաղություն կնքելով: Հիմա էլ այդպես կլինի»:

Վանգենհայմի ակնարկներից ես փոքր-ինչ պատկերացում կազմեցի գերմանացիների առաջարկած պայմանների մասին: Եգիպտոսի ու Միջագետքի խնդիրը, որի մասին խոսվեց վերևում, դրանցից մեկն էր: Վանգենհայմը վստահորեն պնդում էր, որ Գերմանիան պետք է անպայման ծովային ռազմակայաններ ունենա Բրյուսելում, որտեղից իր նավատորմը կարող է մշտապես սպառնալ Անգլիային ծովային շրջափակմամբ և այդպիսով ապահովել «ծովերի ազատությունը»: Գերմանիան ցանկանում էր նաև ածխահանության իրավունք ունենալ ամենուրեք: Սա անհեթեթ պահանջ էր, քանի որ խաղաղ ժամանակներում Գերմանիան միշտ վայելել է այդ իրավունքը: Գերմանիան կարող է համաձայնել Ֆրանսիային

զիջել Լոթարինգիան ու Բելգիայի մի մասը, հնարավոր է և Բրյուսելը՝ դրամական փոխհատուցման դիմաց:

Վանգենհայմը խնդրեց, որ ես Գերմանիայի պահանջները ներկայացնեմ ամերիկյան կառավարությանը: Վաշինգտոն ուղարկած իմ նամակի վրա 1915թ. հունվարի 11 ամսաթիվն է: Նամակում մանրակրկիտ ներկայացված էր տիրող ներքին իրադրությունը, այն դրդապատճառները, որոնք Գերմանիային ու Թուրքիային հարկադրում են համաձայնել խաղաղության:

Այդ իրավիճակի ուշագրավ փաստերից է այն, որ Գերմանիան բացարձակապես անտեսում էր Ավստրիային: Պալավիչինին՝ Ավստրիայի դեսպանը, բոլորովին անտեղյակ էր ակնկալվող բանակցություններից, մինչև անձամբ նրան չտեղեկացրի այդ մասին: Արհամարհելով իր դաշնակցին՝ Գերմանիայի դեսպանն անձնական քամահրանք չէր դրսևորում. նա պարզապես վարվում է նրա հետ ճիշտ այնպես, ինչպես Գերմանիայի արտաքին գործերի գերատեսչությունը՝ Վիեննայի հետ՝ ոչ որպես հավասարի, այլ որպես վարձկալի: Աշխարհին քաջ հայտնի է Գերմանիայի կողմից Ավստրո-Հունգարիայի ռազմական ու դիվանագիտական կլանումը, սակայն այն, որ Վանգենհայմը կարող էր նախաձեռնել խաղաղ բանակցություններ և թույլ տալ, որ Պալավիչինին այդ մասին տեղեկանա երրորդ կողմից, ապացուցում է, որ դեռևս 1915թ. հունվարին Ավստրո-Հունգարիան դադարել էր անկախ պետություն լինել:

Վերոնշյալ առաջարկից, իհարկե, ոչինչ չստացվեց: Մեր կառավարությունը հրաժարվեց որևէ գործողություն նախաձեռնել՝ մտածելով, որ դրա ժամանակը դեռ չի եկել: Ինչպես հետո կտեսնենք, Գերմանիան ու Թուրքիան բազմիցս անդրադառնում են այս թեմային: Բանակցությունների այս մասն ավարտվեց մարտի վերջին, երբ դոկտոր Կյուլմանը նշանակվեց Հաագայում Գերմանիայի հավատարմատարը և մեկնեց Կոստանդնուպոլսից: Մինչ այդ եկավ ԱՄՆ դեսպանատուն՝ հրաժեշտ տալու, ինչպես միշտ՝ հմայիչ ու զվարթ: Սեղմեց ձեռքս և պատրաստվում էր դուրս գալ, երբ ինձ ուղղեց վերջին բառերը. - «Ձերդ գերազանցություն, երեք ամսից խաղաղություն կլինի»:

Հետագա իրադարձություններն ինձ ստիպեցին մտաբերել նրա բառերը: Այդ հպանցիկ միջադեպը և լավատեսական կանխատեսումը եղան 1915թ. մարտին:

ԳԼՈՒԽ XVI

Թուրքերը պատրաստվում են Կոստանդնուպոլիսը լքելու և նոր մայրաքաղաք գտնելու Փոքր Ասիայում Դաշնակիցների նավատորմը ռմբակոծում է Դարդանելը

Հավանաբար միակ բանը, որ ստիպում էր գերմանացիներին ձգտել խաղաղության, Դարդանելում տիրող իրավիճակն էր: Հունվարի սկզբին, երբ Վանգենհայմը համոզեց ինձ նամակ ուղարկել Վաշինգտոն, Կոստանդնուպոլսում ծայրաստիճան լարված իրավիճակ էր: Լուրեր էին պտտվում, թե Դաշնակիցները քառասուն ռազմանավ են կանգնեցրել նեղուցի մուտքի մոտ և մտադիր են զենքի ուժով գրավել Դարդանելը: Կոստանդնուպոլսում գերակշռում էր այն համոզմունքը, որ այդպիսի փորձը հաջողությամբ կպսակվի, և դա ավելի էր սրում իրադրությունը: Վանգենհայմը համամիտ էր դրան, որոշ չափով նաև՝ ֆոն դեր Գոլցը, ով Դարդանելի պաշտպանական գծի մասին գիտեր ավելին, քան որևէ մեկը, քանզի տարիներ շարունակ եղել էր Թուրքիայի ռազմական հրահանգիչը: Իմ օրագրում գտա ֆոն դեր Գոլցի կարծիքի հստակ շարադրանքն այդ հարցի վերաբերյալ: Այդ մասին ինձ տեղեկացրել էր Վանգենհայմը, և ես մեջբերում են այն ճիշտ այնպես, ինչպես գրի եմ առել այն օրերին. «Թեև նա այն կարծիքին է, որ Դարդանելն ուժով զավթելը գրեթե անհնար է, սակայն եթե Անգլիան այն համարի կարևոր քայլ պատերազմի ընդհանուր համատեքստում, նրանք կարող են զոհաբերել տասը նավ, ճեղքել պաշտպանությունը և անել դա շատ արագ: Ներխուժումից տասը ժամ անց նրանք կարող են հայտնվել Մարմարա ծովում»:

Այն նույն օրը, երբ Վանգենհայմն ինձ հայտնեց ֆոն դեր Գոլցի մասնագիտական կարծիքը, խնդրեց նաև անձնական թանկարժեք իրերով լեցուն մի քանի արկղ պահել ԱՄՆ դեսպանատանը: Ակնհայտ էր, նա պատրաստվում էր մեկնելու:

Ընթերցելով Կրոմերի զեկույցը Դարդանելի ռմբակոծության մասին՝ ես պարզեցի, որ ծովակալ սըր Ջոն Ֆիշերը՝ այն ժամանակ Մեծ Բրիտանիայի ծովային ուժերի հրամանատարը, հաջողության գինը նշանակել էր տասներկու նավ կորցնելը: Այդ հարցում ֆոն դեր Գոլցի և Ֆիշերի հաշվարկները գրեթե համընկնում էին:

Երբ դաշնակից ուժերի կողմից Դարդանելի ռմբակոծման լուրը հասավ մեզ, Թուրքիայում բավական հուսահատ իրավիճակ էր. ամենուրեք նկատելի էին վախի, խուճապի նշաններ, որոնք տարածվել էին ոչ միայն բնակչության, այլև պաշտոնական շրջաններում: Չորս կողմից Թուրքիա-

ՀԵՆՐԻ ՄՈՐԳԵՆԹԱՈՒ
1913-1916 թվականներին ԱՄՆ դեսպանը Կոստանդնուպոլսում

ՀԻՆԳՎԵՐՐՈՐ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ՏԻԿԻՆ ՄՈՐԳԵՆԹԱՈՒ
ԱՄՆ դեսպանի կիներ

Տիկին Մորգենթաուն (աջից) ֆրանսիական հոսպիտալի տնօրեն քույր Ժաննայի հետ

ԱՄՆ ԴԵՍՊԱՆԱՏՆԻՑ ԲԱՑՎՈՂ ՊՈԼՍՅԱՆ ՏԵՍԱՐԱՆ

Լոսանկարի կենտրոնում Ռազմածովային նախարարության շենքն է՝ հանրահայտ Ոսկեղջյուրը, ետևին պլանում երևում է քաղաքը



ԲՈՍՖՈՐԻ ԱՓԻՆ ԳՏՆՎՈՂ, ԲԵՅԼԵՐԲԵՅԻ ՊԱԼԱՏԸ

Այստեղ մինչև իր մահը բանտարկված է եղել Աբդուլ Համիդը, այն պահից, երբ դուրս բերվեց Սալոնիկից: Լուսանկարն արված է Կոստանդնուպոլսի մոտ խարիսխ գցած ամերիկյան «Սկորպիոն» պարեկանավից:

ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆԸ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՒՄ

Այստեղ դեսպան Մորգենթաուն զբաղվել է դիվանագիտական գործունեությամբ 1913 թվականի աշնանից մինչև 1916-ի գարուն:

Երբ Թուրքիան մտավ պատերազմի մեջ, դեսպան Մորգենթաուն դարձավ նաև իր պետությունների գործերի ժամանակավոր հավատարմատար:

ՀԵՆՐԻ ՄՈՐԳԵՆԹԱՈՒՆ ԱՄՆ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ԲԱՑՕԹՅԱ ՊԱՏՇԳԱՄԲՈՒՄ

Երկու փղաները կրա թոռներն են՝ Հենրի Մ. և Մորթիմեր Ջ. Փոքր. աղջիկները Թուրքիայում Շվեդիայի հավատարմատար Կ. դ'Ամկարավարդի դուստրերն են (տիկին դ'Ամկարավարդն առաջ Լ.):

ԹԱԼԵԱԹ ՓԱՇԱ

Օսմանյան Թուրքիայի նախկին մեծ վեզիրը

1914-ին, երբ բռնկվեց պատերազմը, Թալեաթը Թուրքիայի ներքին գործերի նախարարն էր և «Միություն և առաջադիմություն» կոմիտեի՝ Օսմանյան կայսրությունը վերահսկող գաղտնի կազմակերպության ամենաազդեցիկ առաջնորդը: Նախկինում Թալեաթը փոստատար է եղել, ապա հեռագրագիր Ադրիանապոլսում: Նա օժտված քաղաքական գործիչ էր: Ներկայացնում էր Թուրքիան Ռուսաստանի հետ տարվող հաշտության բանակցություններում, և նրա ստորագրությունը դրվել է Բրեստ-Լիտովսկի պայմանագրի տակ:





ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԵՏԵՎԱԿԱՆ ՈՒ ՀԵԾԵԼԱՋՈՐԸ

1914 թվականի հունվարին թուրքական բանակը տարերային ու խղճուկ ուժ էր ներկայացնում: Այս զորքերը ցուցադրում են գերմանական դեսուչների կողմից անցկացված վեցամսյա զինավարժությունների արդյունքը:



ԲՈՒՍՏԱՄԻ ԷՖԵՆԴԻ

Թուրքիայի առևտրի և գյուղատնտեսության նախկին նախարարը

Նա այցելեց դեսպան Մորգենթաուին 1914 թվականի հունվարին՝ հայցելով Միացյալ Նահանգների օժանդակությունը Թուրքիան ֆինանսապես վերակառուցելու գործում:

ՀՅ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՄՈՒՀԱՄԵԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Թուրքիայի նախկին սուլթանը

Նորին վեհությունը ծեր, բարեսիրտ մարդ էր՝ բացարձակ անտեղյակ աշխարհի անցուդարձից: Անձնապես թույլ և ոչ նախաձեռնող:

Ներքևի լուսանկարում սուլթանի կառքն էր ԱՄՆ դեսպանատան մոտ, այն ուղարկվել է՝ դեսպան Մորգենթաուին սուլթանական ընդունելության գալուն համար:



ԲԱՐՈՆ ՖՈՆ ՎԱՆԳԵՆՀԱՅՄ

Թուրքիայում Գերմանիայի դեսպանը

Ընտրվել էր անձամբ Կայսեր կողմից՝ Թուրքիան Գերմանիայի պահանջներին ենթարկելու և վերահաս պատերազմում Գերմանիայի դաշնակիցը դարձնելու համար: Այդ ամենը նրան հաջողվեց: Հանս Վանգենհայմը ներկայացնում էր գերմանական դիվանագիտության ամենաանողոք ու լկտի կողմերը: Նա, ինչպես Բիսմարկը, այն համոզմունքն ուներ, որ հայրենասեր գերմանացին պետք է պատրաստ լինի Կայսեր և Հայրենիքի համար զոհաբերելու ոչ միայն կյանքը, այլև պատիվը: Վանգենհայմը բացառիկ վարպետությամբ բանեցնում էր 1914 թվականին Թուրքիան կառավարող անխոհեմ արկածախնդիրներին՝ նրանց դարձնելով Գերմանիայի գործիքը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՍՈՒԼԹԱՆ ՄՈՒՀԱՄԵԴ ՀԻՆԳԵՐՈՐԴԸ ԳՆՈՒՄ Է ՈՒՐԲԱԹՕՐՅԱ ԱՂՈԹՔԻ

ԹԱԼԵԱԹՆ ՈՒ ԷՆՎԵՐԸ ՋՈՐԱՀԱՆԴԵՍԻ ԺԱՄԱՆԱԿ

Աջից Թալեաթն է՝ լայն ուսերով ամրահաս: Էնվերը ձախից կանգնած փոքրամարմին մարդն է,. նրանք գնում են այն փոխակերպումը, որ իրականացրել են գերմանացի գինվորական հրահանգիչները թուրքական բանակում:

Սա այն պահն է, որտեղ 1914 թվականի օգոստոսին և սեպտեմբերին իր ժամանակի հիմնական մասն է անցկացրել Գերմանիայի դեսպան Վանգենհայմը՝ ցնծություն ապրելով գերմանական հաղթանակներից:

Այստեղից ռադիոկապի միջոցով ուղղորդելով «Գեբեն» ու «Բրեսլաու» նավերին՝ նա դրանք ի վերջո բերեց-հասցրեց Կոստանդնուպոլիս:

ՋԵՄԱԼ ՓԱՇԱ

Թուրքիայի ռազմածովային ուժերի նախարարը

1914 թվականին Ջեմալը ղեկավարում էր Թուրքիայի ոստիկանությունը: Նա պատասխանատու էր Թուրքիան ղեկավարող հանցավոր ավազակախմբին ընդդիմացող քաղաքացիներին վերացնելու գործում: Ընդդիմադիրներին կամ պարզապես վերացնում էին, կամ դա անում էին դատարանների միջոցով: Հետագայում Ջեմալը դարձավ Ռազմածովային ուժերի նախարար և ի պաշտոնե անգիջում դիրք գրավեց Ամերիկայի կողմից Հունաստանին ռազմանավեր վաճառելու գործարքի հարցում: Այնուհետև նա ուղարկվեց Պաղեստին որպես բանակային Չորրորդ կորպուսի հրամանատար, որտեղ աչքի ընկավ որպես ոչ մահմեդական բնակչության զանգվածային ոչնչացման կազմակերպիչ:

ՄԱՐԿԻԶ ԳԱՐՈՆԻ
Իտալիայի դեսպան Կոստանդնուպոլսում
(1914թ.)

Մ. ՏՈՉԵՎ
Բուլղարիայի հավատարմատար Կոստանդնու-
պոլսում (1914թ.)



ԱՄՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԱՌԱՆՈՑԸ ԲՈՍՖՈՐԻ ԱՓԻՆ

Այսպեղից ոչ շատ հեռու՝ նեղուցի մյուս կողմում, որն ընդամենը մեկ մղոն լայնություն ունի, Դարևին իր ասիական հրուանգախմբով հատեց նեղուցը 2500 հազար տարի առաջ:

ԷՆՎԵՐ ՓԱՇԱ

Օսմանյան կայսրության Պատերազմի նախարարը

Ծագումով ռամիկ Էնվերը քանվեց դարեվանում դարձավ այն հեղափոխության առաջնորդը, որը գահընկեց արեց Աբդուլ Համիդին ու հաստատեց երիտթուրքերի վարչակարգը: Այդ ժամանակ երիտթուրքերն անկեղծորեն ցանկանում էին Թուրքիայում ժողովրդավարություն հաստատել: Այս ողորմելի փորձը անփառունակ ավարտ ունեցավ, և երիտթուրքերի պարագլուխները սկսեցին ղեկավարել Օսմանյան կայսրությունը՝ իրենց սեփական շահերից ելնելով: Նրանք ձևավորեցին մի կառավարություն, որն ավելի անբարոյական էր ու ոճրագործ, քան Աբդուլ Համիդինը: Էնվերն այն մարդն է, ով պատասխանատու է թուրքական բանակը Գերմանիային հանձնելու գործում: Նա երևակայում էր, թե ինքը Նապոլեոնի ու Ֆրեդերիկ Մեծի «խառնուրդն է»:

ՍԱԻԴ ՀԱԼԻՄ

Օսմանյան կայսրության նախկին մեծ վեզիրը

Սաիդը եգիպտացի արքայազն էր, ով հանգանակություններ էր կատարել երիտթուրքերի քաղաքական գործունեության համար և որպես փոխհատուցում ստացել էր մեծ վեզիրի պաշտոնը, սակայն նրան արգելված էր իրական որևէ իշխանություն բանեցնել: Սաիդ Հալիմին խոստացել էին՝ երբ երիտթուրքերն անգլիացիներին վտարեն Եգիպտոսից, նա կդառնա խեդիվ:

ՍԸՐ ԼՈՒԻ ՄԱԼԵԹ

Մեծ Բրիտանիայի դեսպանը Կոստանդնուպոլսում (ձախից), երբ պատերազմը սկսվեց:

Մյուսը պարոն Բոմպարն է՝ Ֆրանսիայի դեսպանը:

ԳԵՆԵՐԱԼ ԼԻՄԱՆ ՖՈՆ ԱՆԴԵՐՍ

Կայսեր կողմից 1913 թվականի վերջին Կոստանդնուպոլիս ուղարկված գերմանական առաքելության առաջնորդը: Նրա խնդիրն էր վերակազմավորել թուրքական բանակը մոտալուտ պատերազմի համար: Նա նաև ղեկավարեց զորակոչը Թուրքիայում 1914-ի օգոստոսին՝ պատերազմի մեջ Թուրքիայի ներքաշվելուց երեք ամիս առաջ:

ԳԵՐՄԱՆԱՑԻ ՈՒ ԹՈՒՐՔ ՍՊԱՆԵՐԸ «ԳԵԲԵՆԻ»
ՏԱԽՏԱԿԱՄԱՇԻՆ

Բոլորը, բացառությամբ ձախ և աջ կողմերում կանգնածների, գերմանացիներ են: Թուրքիայի՝ Եվրոպական պատերազմի մեջ ներքաշվելուց երկու ամիս առաջ ծովակալ Սուշոնը՝ այս խմբի կենտրոնական դեմքը, վերահսկում էր թուրքական նավատորմը:

ԲԵԴՐԻ ԲԵՅ

Կոստանդնուպոլսի ոստիկանության պետը

Երիտթուրքերի առաջնորդներից է և Թալեաթի մտերիմ բարեկամը: Անգլիացիներին ու ֆրանսիացիներին պաշտպանելու դեսպան Մորգենթաուի փորձերը դարձան յուրաքանչյուր պայքար Մորգենթաուի ու Բեդրիի միջև: Նա, ինչպես գերմանացիները, այն կարծիքին էր, թե օտարերկրացիներին չի կարելի «երես տալ»:

ՋԱՎԻԴ ԲԵՅ

Օսմանյան Թուրքիայի ֆինանսների նախարարը

Ծագումով հրեա, դավանանքով մահմեդական, երիտթուրքերի կուսակցության ազդեցիկ անդամներից մեկը: Նրա համակրանքը Դաշնակիցների կողմն էր, ուստի Ջավիդը հրաժարական տվեց, երբ Թուրքիան պատերազմի մեջ մտավ որպես Գերմանիայի դաշնակից, սակայն հետագայում վերադարձավ այդ նույն պաշտոնին:

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆԸ

Երբ Թուրքիան ներքաշվեց պատերազմի մեջ, ինչպես բազում այլ հաստատություններ, այս մեկը նույնպես հայտնվեց պարոն Մորգենթաուի պաշտպանության ներքո: Եղավ մի պահ, երբ ԱՄՆ դեսպանը Բարձր Դռանը ներկայացնում էր փոքր պետությունների շահերը:

«ՌՈԲԵՐՏ ՔՈԼԵՋԸ» ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՒՄ

Հիմնվել էր ամերիկացիների կողմից ավելի քան հիսուն տարի առաջ: Թուրքիայի լավագույն կրթական հաստատությունն էր. այստեղ կրթություն էին ստացել բալկանյան երկրների բազմաթիվ առաջնորդներ:



ԱՄՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ ԴԵՍՊԱՆ ՄՈՐԳԵՆԹԱՈՒԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ

ԹՈՒՐՔ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԶԻՆՎՈՐ

Հանդերձանքն ու զենքը ներմուծել են գերմանացիները, իսկ ֆեսը՝ օսմանցիների հնագույն խորհրդանիշը, փոխարինվել է ժամանակակից սաղավարտով:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԸ

Էնվեր փաշայի շքար-կայանն էր: Այս շենքում էր, որ Էնվերը խոստացավ դեսպան Մորգենթաուին չխոշտանգել օտարերկրյա քաղաքացիներին: «Կվարվե՞ք որպես ժամանակակից մարդիկ», - հարցրել էր ԱՄՆ դեսպանը: «Ոչ, ոչ որպես ժամանակակից, - պատասխանել էր Էնվերը՝ հավանաբար մտաբերելով Բելգիան, - դա եղածներից ամենաարդարամտ եղանակն է. Թուրքիան պարզապես կփորձի լինել պարկեշտ»:



ՌԱԶԱՄԱԾՈՎԱՅԻՆ ՈՒԺԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԸ

Ջեմալի շքար-կայանն էր: Պատերազմի սկսվելուց շատ չանցած՝ Ջեմալի՝ որպես բանակային Չորրորդ կորպուսի հրամանատար Սիրիա ուղարկվելուց հետո Էնվերը զբաղեցրեց նաև այդ պաշտոնը: Սա ծանր պաշտոն չէր, քանի որ թուրքական նավատորմը պատերազմում մեծ դերակատարություն չուներ:

ՀԱՅԿԱԿԱՆ ... ԱՌՈՒՄՆԱՆ

ՀԱԼԻԼ ԲԵՅԸ ԲԵՌԼԻՆՈՒՄ

Հալիլ Թուրքիայի խորհրդարանի նախագահն է և երիտթուրքերի առաջնորդը, հետագայում՝ Արտաքին գործերի նախարարը:

ԹԱԼԵԱԹ ՓԱՇԱՆ ԵՎ ԿՅՈՒԼՄԱՆԸ

Կյուլմանը (աջից) ներկայումս Գերմանիայի արտաքին գործերի նախարարն է:

1915 թվականին գտնվում էր Կոստանդնուպոլսում որպես միջնորդ հաշտության բանակցություններում:



ԳԵՆԵՐԱԼ ՄԱՐՏԵՆՍ

Գերմանիայի գլխավոր տեխնիկական փեսուչը Դարդանելում (աջից) և ծովակալ Ֆոն Ուգդոմը՝ թուրքական առափնյա պաշտպանության գլխավոր հրահանգիչը:



«ԿԱՐՄԻՐ ՄԱՀԻԿ»

Այստեղ նշում է թուրքական դաշտային հոսպիտալի գտնվելու վայրը՝ որպես զգուշացնում օդաչուներին՝ տարածքը չռմբակոծելու համար:

ԷՆՎԵՐ ՓԱՇԱ

«Ես կմտնեմ պատմության մեջ որպես այն մարդը, ով բացահայտեց Անգլիայի ու նրա նավատորմի խոցելիությունը, - ասաց այս թուրք առաջնորդը դեսպան Մորգենթաուին, - ես կապացուցեմ, որ Անգլիայի նավատորմն անպարտելի չէ»:

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՌԱԶՄԱԿԱՅԱՆԸ ԴԱՐԴԱՆԵԼՈՒՄ

Այս խրամատները հիմնականում լավ պաշտպանված էին. թուրքերը պաշտպանում էին իրենց մարտկոցները թաքաբար ու եռանդով:

ՀԱՅԱՅՔԸ ԳԱԼԻՊՈԼԻ ՔԱՂԱՔԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ
Դպրոցական այս մասը գրեթե ամրացված չէ:



ԲՐԻՏԱՆԱԿԱՆ «ԱԼԲԻՈՆ» ՆԱՎԸ

«Ալբիոնը» ռմբակոծում է ամրաշինությունները նեղուցի ներսի մասում: Նավի շուրջ երևացող ջրի ցայտուկները ցույց են տալիս, որ թուրքերը կարագի պատասխանում են կրակոցներին:

ԳՐՏԴ



ԴԱՐԴԱՆԵԼԸ 1915 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-ԻՆ

Երբ դեպպան Մորգենթաուն թուրքական կառավարության իրավերով այցելեց բոլոր մարտկոցները, տեսավ, որ դրանք լավ պաշտպանված են, սակայն չունեն բավարար չափով զինամթերք և կապարելապես զիջում են Դաշնակիցների նավատորմի հրանոթներին հեռահարության առումով: Մարտի 19-ին գերմանացիներն ու թուրքերը պատրաստ էին հետ քաշվելու Ադրիանոպոլիս և Կոստանդնուպոլիսը թողնելու բրիտանացիների ողորմածությանը, սակայն Դաշնակիցները կասեցրին գրոհը հենց այն պահին, երբ կատարյալ հաղթանակն արդեն իրենցն էր:

ՉԵՄԸՆԼԻՔ ԵՎ ԱՆԱԴՈԼՈՒ ՀԱՄԻԴԻԵ ԲԵՐԴԱԿԱՑՄՆ

Լուսանկարի հետին պլանում Անադոլու Համիդիեն է, որը գլխավոր ամրաշինությունն էր Դարդանելի ասիական մասում: Սա ամենամեծ վեասը հասցրեց Դաշնակիցների նավատորմին և միաժամանակ գրոհի հիմնական թիրախն էր:

Անադոլու Համիդիեն մեծ մասամբ պաշտպանում էին գերմանացի սպաներն ու զինվորները:



ԴԱՐԴԱՆՈՍ ԲԵՐԴԱԿԱՑՄՆԸ. ԱՅՍ ԹՆԴԱՆՈԹՆԵՐԸ ՏԵՂԱԴՐՎԵԼ ԵԻՆ 1905 ԹՎԱԿԱՆԻՆ

Միայն այն բանից հետո, երբ Բուլղարիան մրավ պատերազմի մեջ, և Սերբիան ընկավ, գերմանացիները ամրակետեր կառուցեցին Դարդանելում: Հիմա արդեն նեղուցն ամբողջովին ամրացված է Հելիգոլանդի պես: Այս պահին թերևս աշխարհի բոլոր նավատորմերն ի զորու չեն ճեղքելու նեղուցի պաշտպանությունը:



ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀՈՍՊԻՏԱԼԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՔՈԼԵՋԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ
(ամերիկյան հասարակություն)

ԱՄՆ դեսպանատան բացօթյա պատշգամբում. պարոն Մորգենթաուից ձախ կանգնած երիտասարդը պարոն Կոլուչան է Թուրքիայում Բուլղարիայի հավատարմատարը:

ԱԲԴՈՒԼ ՀԱՄԻԴԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀԱՅՏՆԻ Է ՈՐՊԵՍ «ԱՐՅՈՒՆՈՒՇՏ ՍՈՒԼԹԱՆ»

Գլադստոնը նրան անվանել է «մեծ մարդասպան»: Հայկական հարցը լուծելու համար նա որդեգրեց ողջ հայ ժողովրդին բնաջնջելու պետական քաղաքականություն: Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի ու Ամերիկայի հանդեպ ունեցած նրա վախը միակ բանն էր, որ խանգարեց ավարտին հասցնելու այդ գործընթացը: Նրա հաջորդները՝ Թալեաթն ու Էնվերը, որ այդ պետություններից այլևս չէին վախենում, ավելի «հաջողակ» գտնվեցին նրա ծրագիրն իրականացնելու հարցում:

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ ԲՆՈՐՈՇ ՏԵՍԱՐԱՆ

ՁԿՆՈՐՍԱԿԱՆ ԳՅՈՒՂ ՎԱՆԱ ԼՃԻ ԱՓԻՆ
Վանի շրջանում կոտորվեց գրեթե հիսունհինգ հազար հայ

ՎԱՆԵՑԻ ԲՌՆԱԳԱՂԹՅԱԼՆԵՐ
Նրանք հավաքվել են հանրային փռոի շուրջ հաց ստանալու հույսով: Այս մարդկանց դուրս էին հանել իրենց տներից առանց նախազգուշացման և թշել դեպի անապատ: Բռնագաղթի ժամանակ մահացան հազարավոր կանայք, երեխաներ ու տղամարդիկ ոչ միայն գրկանքներից ու սովից, այլև ուղեկցող զինվորների անմարդկային դաժանությունից:

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԿԱՅՍՐ ՎԻԼՀԵԼՄ ԵՐԿՐՈՐԴԸ՝
ԹՈՒՐՔԱԿԱՆ ՖԵԼԴՄԱՐՇԱԼԻ ՀԱՄԱՋԳԵՍՏՈՎ.

Նա մնաց անսասան՝ հրաժարվելով միջամտել (հայերի օգտին), երբ նրա դաշնակից Թուրքերը երկրի ողջ կարածքում սպանեցին վեց հարյուր հազարից մինչև մեկ միլիոն հայ: Մի ողջ ժողովրդի սպանությունը պրուսական դոկտրինի ամենազարհուրելի հեղինակն էր. այն է՝ ամեն ինչ արդարացված է, եթե դա ծառայում է գերմանական զենքի հաղթանակին: Կոտորածներից հետո Վիլհելմ Երկրորդը պարգևատրեց սուլթանին ճիշտ այնպես, ինչպես 1898 թվականին, երբ Աբդուլ Համիդը կոտորել տվեց երկու հարյուր հազար քրիստոնյայի, Կայսրն այցելեց միապետին և հրապարակավ ողջագուրվեց նրա հետ:

ԱՎԵՐԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԾՎԱԾ ՎԱՆԸ...

ՈՒՐՖԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Այստեղ կենդանի հրկիզվեցին բազում հայեր: Սա չորրորդ դարի գործող եկեղեցի է:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐՈՒՄՆԵՐԻ ԱՐԽԻՎԱՅԻՆ

ՀԱՅԱԶԳԻ ԶԻՆՎՈՐՆԵՐ

Մինչև 1908 թվականը հայերին արգելված էր ծառայել օսմանյան բանակում: Բալկանյան պատերազմների ժամանակ նրանք աչքի ընկան իրենց խիզախությամբ և ռազմական հմտությամբ: Ներկայիս պատերազմում թուրքերը հայերից խլեցին զենքը և նրանց դարձրին բեռնակիրներ և ճանապարհ կառուցող բանվորներ:

ՆՐԱՆՔ, ՈՎՔԵՐ ԸՆԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ...

Նման տեսարանները սովորական էին դարձել հայկական բոլոր գավառներում 1915-ի գարնանն ու ամռանը: Մահն իր տարբեր դրսևորումներով՝ կոտորած, սովամահություն, ուժասպառություն, ոչնչացրեց բռնագաղթյալների մեծ մասին: Թուրքերը «աքսորների» խողի ներքո իրականացնում էին բնաջնջման քաղաքականություն:

ԽԱՐԲԵՐԴ

Այստեղ տեղի ունեցավ հայ տղամարդկանց լայնածավալ կոտորած

ՀԱՅ ... ԳՐԱԴԱՐԱՆ



ՈՒՐՖԱ
Փոքր Ասիայի խոշորագույն քաղաքներից մեկը

ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՀԵՏՔԵՐԸ ԵՐՋՆԿԱՅՈՒՄ
Այսպիսի մասունքներ կարելի է գտնել Հայաստանի ողջ տարածքում



ԲԱՐՈՆ ՖՈՆ ՎԱՆԳԵՆՀԱՅՄԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ
Դեսպան Մորգենթաուն թայլում Ի. Էնվեր փաշայի կողքից, իսկ նրանց առջևից՝ Թալեաթ փաշան



Հենրի Մորգենթաուի հուշագրության՝ 1918 թ. անգլերեն առաջին հրատարակության մեջ ընդգրկված քարտեզներ

յին պատուհասել էին աղետները: Մինչ 1915թ. հունվարի 1-ը Թուրքիան ոչ մի քայլ չէր ձեռնարկել պատերազմում իր մասնակցությունն արդարացնելու համար: Հակառակը, փաստորեն ամենուրեք Թուրքիան կրում էր պարտություն պարտության հետևից: Ջեմալը, ինչպես արդեն նշեցի, մեկնել էր Կոստանդնուպոլսից որպես Եգիպտոսի ապագա «տիրակալ», սակայն նրա արշավանքն արյունալի ու նվաստացուցիչ պարտություն կրեց: Ռուսաստանից Կովկասը հետ խլելու էնվերի փորձն ավարտվեց է՛լ ավելի խայտառակ ռազմական աղետով: Նա արհամարհեց գերմանացիների խորհուրդը՝ ռուսներին թույլ տալ մոտենալ Սվազին և այնտեղ դիմավորել նրանց: Փոխարենը նա հանդգնորեն փորձեց զավթել ռուսական տարածքը: Նրա բանակը ջախջախիչ պարտություն կրեց, սակայն նրանց տառապանքները չավարտվեցին սոսկ ռազմական ձախողումներով: Թուրքերի բժշկական և սանիտարական ծառայությունները հուսահատ վիճակում էին. ռազմական բոլոր ճամբարներում բռնկվեցին տիֆի և դիզենտերիայի համաճարակներ, որոնց հետևանքով մահացավ շուրջ հարյուր հազար մարդ: Այդ զինվորների տառապանքների մասին սոսկալի պատմություններ էին մեզ հասնում: Գաղտնիք չէր, որ Անգլիան պատրաստվում է ներխուժելու Միջագետք, և ոչ ոք կասկած չուներ, որ նրանք հաջողության կհասնեն: Թուրքերն ամեն օր լուրերի էին սպասում, թե ուր որ է բուլղարացիները պատերազմ կհայտարարեն և կարշավեն դեպի Կոստանդնուպոլիս: Նրանց հայտնի էր, որ նման գրոհին անխուսափելիորեն կմիանան նաև Ռումինիան ու Հունաստանը: Գաղտնիք չէր նաև, որ Իտալիան սպասում էր եղանակի տաքանալուն, որ միանար Դաշնակիցներին: Այդ պահին ռուսական նավատորմը ռմբակոծում էր Տրապիզոնը, և ամեն պահ սպասվում էր նրանց ներխուժումը Բոսֆոր: Թուրքիայում աղետալի վիճակ էր. ողջ երկրում հազարավոր մարդիկ սովամահ էին լինում, կարող բոլոր տղամարդկանց տարել էին բանակ, և միայն քչերն էին մնացել՝ դաշտերում աշխատելու: Հանցավոր բռնագրավումները գրեթե ոչնչացրել էին ձեռներեցությունը, գանձարանը դատարկ էր, քանի որ Դարդանելի փակումը և Միջերկրականի նավահանգիստների շրջափակումը կասեցրել էին բոլոր տեսակի ներմուծումները և մաքսատուրքերի գանձումը: Ժողովրդի ահագնացող զայրույթն ամեն օր կարող էր շրջվել Թալեաթի և նրա գործընկերների դեմ: Այդ ամենից բացի՝ թուրքերն իմացան, որ Անգլիան ու նրա դաշնակիցները հսկայական նավերով մոտենում են Կոստանդնուպոլսին՝ սպառնալով ոչնչացնել պաշտպանական կառույցները և գրավել քաղաքը: Այդ օրերին ոչինչ այնպես չէր սարսափեցնում թուրքերին, որքան բրիտանական նավատորմը, որի հաղթական արշավանքների դարավոր ավանդույթը գրավել

էր թուրքերի երևակայությունը: Անգլիական նավատորմը նրանց թվում էր գերմարդկային, անհաղթահարելի մի ուժ, որի հետ մրցելն անիմաստ էր:

Վանգենհայմը, ինչպես նաև գերմանական ողջ ռազմական, ծովային անձնակազմը Դարդանելի գրավումը համարում էին ոչ միայն հնարավոր, այլև անխուսափելի: Բրիտանացիների հաջողության հասնելու հնարավորությունը մարդկանց զրույցներում ամենից ավելի հաճախ արծարծվող թեմաներից էր. թե՛ փորձագիտական, թե՛ սիրողական կարծիքների նժարը մշտապես թեքվում էր Դաշնակիցների կողմը: Թալեաթն ինձ ասաց, որ նեղուցի գրավման փորձը կհաջողվի. այն պայմանավորված էր մի քանի նավ զոհաբերելու անգլիացիների պատրաստակամությամբ: Թալեաթն ավելացրեց, որ թուրքական ուժերը Եգիպտոս ուղարկելու իրական պատճառը անգլիացիների ուշադրությունը Գալիպոլիի թերակղզու վրա պատրաստվող գրոհից շեղելն է: Տիրող տրամադրությունները բացահայտում էին այն փաստը, որ հունվարի 1-ին Թուրքիայի կառավարությունը պատրաստեց երկու գնացք. մեկը սուլթանին՝ իր շքախմբի հետ Փոքր Ասիա տեղափոխելու համար, մյուսը նախատեսված էր Վանգենհայմի, Պալավիչինիի ու դիվանագիտական կորպուսի մյուս անդամների համար: Հունվարի 2-ին ես զրուցեցի Պալավիչինիի հետ և բավական ուշագրավ նորություններ իմացա: Նա ինձ ցույց տվեց Բեդրիի՝ Ոստիկանության պետի գրած հավաստագիրը, որը Պալավիչինիի ու նրա անձնակազմի համար տեղեր էր ապահովում նշված գնացքներից մեկում: Հավաստագրերից բացի նա ուներ նաև տոմսեր իր և անձնակազմի բոլոր անդամների համար: Ասաց, որ գնացքներից ամեն մեկը կունենա միայն երեք վագոն, որպեսզի ապահովի շարժակազմի արագ ընթացքը: Նրան ասված էր պատրաստ լինել, քանի որ մեկնելու մասին նա պետք է տեղեկացվեր մեկնումից միայն մեկ ժամ առաջ: Վանգենհայմը չէր թաքցնում իր մտավախությունները. ինձ ասաց, որ ամեն ինչ պատրաստել է տիկնոջը Բեռլին ուղարկելու համար և տիկին Մորգենթաուին առաջարկեց միանալ իրենց ու հեռանալ վտանգավոր գոտուց: Վանգենհայմը բացահայտեց իր վախի պատճառը (այն օրերին գերիշխող զգացում էր). ռմբակոծությունները կհանգեցնեն հրդեհների և կոտորածների ոչ միայն Կոստանդնուպոլսում, այլև Թուրքիայի ողջ տարածքում: Նախազգուշացնելով նման խժդժությունների մասին՝ նա մի առաջարկ արեց. եթե բրիտանական նավատորմը մտնի Դարդանել, Թուրքիայում ոչ մի անգլիացի չի փրկվի. բոլորին կգլխատեն: Քանի որ դժվար է ամերիկացուն տարբերել անգլիացուց, նա առաջարկեց, որ ես ամերիկացիներին ապահովեմ հատուկ մետաղանիշերով՝ նրանց փրկելու համար: Ես վստահ եմ, որ Վանգենհայմի առաջարկի իրական նպատակը անգլիացիներին տար-

բերակելն էր և նրանց թուրքերի հաշվեհարդարին հանձնելը, ուստի մերժեցի նրա «սիրալիր» առաջարկը:

Մեկ այլ միջադեպ նույնպես կբացահայտի հունվարյան այն օրերին տիրող լարված իրադրությունը: Ես նկատեցի, որ Բրիտանիայի դեսպանատան լուսամուտներից մի քանիսի փեղկերը բաց են, և տիկնոջս հետ գնացինք պարզելու դրա պատճառը: Վերջերս մենք ամուր փակել ու կնքել էինք դեսպանատան շենքը, որ թողնվել էր իմ հոգածությանը, և հիմա մենք կոտրեցինք կնիքներն ու ներս մտանք: Մեր հետաքննչական այցից երկու ժամ անց ինձ այցելեց Վանգենհայմը: Նա ինձ լավ հայտնի նյարդային հոգեվիճակում էր: «Լուրեր են շրջում, - ասաց նա, - թե տիկին Մորգենթաուն և Դուք գնացել էիք Անգլիայի դեսպանատուն՝ անգլիացի ծովակալի համար այն նախապատրաստելու նպատակով, քանի որ նա շուտով ժամանելու է և զբաղեցնելու է այդ շենքը»:

Հիմա այդ ամենը փոքր-ինչ անհեթեթ է հնչում, քանի որ այդ ժամանակ Դաշնակիցների նավատորմը հարձակում չգործեց: Հենց այն պահին, երբ ողջ քաղաքը տենդոտ տագնապով սպասում էր անգլիական նավերի հարձակմանը, Բրիտանիայի կառավարությունը Լոնդոնում մտորում էր նման հարձակման նպատակահարմարության մասին: Փաստաթղթերը վկայում են, որ հունվարի 2-ին Պետրոգրադից զանգահարել են Լոնդոն՝ խնդրելով ուժի որևէ ցուցադրում կազմակերպել թուրքերի դեմ, ովքեր այդ պահին Կովկասում ճնշում էին ռուսներին: Թեև ռուսների խնդրանքին անմիջապես տրվել էր սփոփիչ պատասխան, սակայն Դարդանելի վրա գրոհելու հրամանը Բրիտանիայի կառավարությունն արձակեց միայն հունվարի 28-ին: Այլևս գաղտնիք չէր, որ չկար համընդհանուր վստահություն նման նախաձեռնության հաջողության հարցում: Ծովակալ Կարդենը գրում է. «Նեղուցում շտապողականությամբ չի կարելի գործել, թեև մեծածավալ ռազմական գործողությունները կարող են հաջողություն բերել»: Տապալման գինը, շարունակում էր նա, կլինի այն, որ Արևելքում Անգլիան կկորցնի իր հեղինակությունն ու ազդեցությունը: Ստորև կտեսնենք, թե որքան արդարացի էր այդ կանխատեսումը:

Մինչ այդ օրը ծովային գործողությունների արմատական և ընդունված աքսիոմներից էր այն, որ ռազմանավերը չպետք է փորձեն գրոհել ցամաքի վրա գտնվող կանգուն ամրությունների վրա: Սակայն գերմանացիներն ապացուցեցին դյուրաշարժ թնդանոթների հզորությունը Լիեժի և Նամուրի ամրությունների կործանման ժամանակ, և Անգլիայի որոշակի շրջաններում կարծիք կար, թե այդ իրադարձությունները փոփոխել են վերոնշյալ ռազմածովային սկզբունքը: Պարոն Չերչիլը՝ այն ժամանակ Ծովակալության ղեկավարը, մեծ հույսեր էր կապում նոր կառուցված

«Էլիզաբեթ թագուհի» ռազմանավի կործանարար հզորության հետ. այն այդ պահին շտապում էր միանալ Միջերկրականում գտնվող բրիտանական նավատորմին: Կոստանդնուպոլսում մենք, անշուշտ, ոչինչ չգիտեինք այդ քննարկումների մասին, սակայն դրանց արդյունքները պարզ դարձան փետրվարի երկրորդ կեսին: Փետրվարի 19-ի կեսօրին Ավստրիայի դեսպան Պալավիչինին ինձ կարևոր լուրեր հայտնեց: Մարկիզը մեծ արժանապատվության տեր անձնավորություն էր, սակայն այդ օրը նա արտառոց նյարդային էր և չէր փորձում թաքցնել իր մտավախությունները: «Դաշնակիցների նավատորմը, - ասաց նա, - վերսկսել է հարձակումը Դարդանելի վրա, և ռմբակոծություններն այս անգամ առանձնակի կատաղի են»: Այդ պահին ավստրիացիների գործերը վատ էին. ռուսական հաղթական բանակն առաջ էր շարժվում, Սերբիան ավստրիացիներին դուրս էր մղել իր տարածքից, և եվրոպական մամուլը լի էր Ավստրիական կայսրության փլուզման վերաբերյալ կանխատեսումներով: Այդ օրը Պալավիչինիի տրամադրությունն արտացոլում էր նրա հայրենիքին սպառնացող վտանգը: Նա զգայուն, հպարտ անձնավորություն էր. հպարտ էր Ավստրոհունգարական կայսրության և Կայսեր մասին ունեցած իր պատկերացումներով: Նա մտավախություն ուներ, որ Հաբսբուրգ կոչվող այդ ահարկու կառույցը, որ դիմագրավել էր դարերի մարտահրավերներին, հիմա կործանման եզրին է: Բոլոր մարդկանց նման Պալավիչինին նույնպես կարեկցանքի կարիք ուներ: Վանգենհայմից կարեկցանք ստանալու հույս չկար. ավստրիացու հետ նա մտերիմ չէր, նրան վերաբերվում էր որպես մի ժողովրդի ներկայացուցչի, ով հարկադրված ենթարկվել է Գերմանիային: Ըստ ամենայնի՝ դա էր պատճառը, որ Ավստրիայի դեսպանը գերադասում էր իր մտավախությունների մասին խոսել ինձ հետ: Դարդանելի ռմբակոծումը նրա համար վերջին հարվածն էր: Կենտրոնական տերությունները վստահ էին, որ Ռուսաստանի դիմաց փակել են բոլոր ելքերն ու մուտքերը, շրջափակել են Դարդանելը, և ռուսները չեն կարողանա արտահանել ցորեն կամ ներկրել պատերազմի ժամանակ այնքան անհրաժեշտ զինամթերք: Գերմանիան ու Ավստրիան վստահ էին, որ հեռու են պահում իրենց վտանգավոր հակառակորդին, և եթե հնարավոր լիներ այդ իրավիճակը բավականաչափ երկար պահել, Ռուսաստանի կործանումն անխուսափելի էր: Ճիշտ է, այդ պահին ցարի բանակը հաղթական արշավով առաջ էր շարժվում, ինչն ինքնին վտանգավոր էր Ավստրիայի համար, սակայն ռուսների ռազմական պաշարները վաղ թե ուշ կսպառվեին, և այդ ժամանակ նրանց քանակական առավելությունն իրենց չէր փրկի կործանումից: Սակայն եթե Ռուսաստանը գրավեր Կոստանդնուպոլիսը, վերահսկեր Դարդանելն ու Բոսֆորը, ի զորու կլիներ

ձեռք բերելու բավարար քանակությամբ զինամթերք, և արդյունքում Կենտրոնական տերությունները պարտության կմատնվեին: Պալավիչինին գիտակցում էր, որ նման պարտությունը շատ ավելի լուրջ հետևանքներ կունենար Ավստրիայի, քան Գերմանիայի համար: Վանգենհայմն ինձ ասել էր՝ եթե Ավստրո - Հունգարիան տապալվի, ապա Գերմանիան մտադիր է ընդունել այդ երկրի տասներկու միլիոն գերմանացի հպատակներին Հոհենցոլլերների տիրույթում, և Պալավիչինին, անշուշտ, գիտակցում էր այդ վտանգը: Ուստի Դաշնակիցների հարձակումը Դարդանելի վրա Պալավիչինիի համար հավասարազոր էր իր երկրի կործանմանը: Հարկ է նշել, որ Կոստանդնուպոլսում գտնվող մյուս բոլոր պաշտոնատար անձանց նման նա նույնպես վստահ էր, որ նման գրոհի հաջողությունը կասկածից վեր է:

Այդ նույն կասկածները թունավորում էին նաև Վանգենհայմի կյանքը: Ինչպես արդեն նշեցի, Ռուսաստանի մեկուսացումը գրեթե ամբողջությամբ նրա ձեռքի գործն էր: Նա էր, որ «Գեբենն» ու «Բրեսլաուն» հասցրեց Կոստանդնուպոլիս և դավեր նյութելով՝ Թուրքիային հարկադրեց պատերազմի մեջ մտնել: Նեղուցի գրավումը նշանակում էր ավելին, քան Ռուսաստանը սոսկ պատերազմի մշտական ու հզոր մասնակցի վերածելը. դա նշանակում էր, և սա Վանգենհայմի համար բնավ մանրուք չէր, որ նրա անձնական հաղթանակը հօդս ցնդեց: Սակայն Վանգենհայմն արտահայտում էր իր մտավախությունները Պալավիչինիից շատ տարբեր ձևով: Որպես տիպիկ գերմանացի՝ նա ապավինում էր սպառնալիքներին և հոխորտանքին: Արտաքուստ ընկճված չէր թվում, սակայն նրա ողջ մարմինը ցնցվում էր կատաղությունից: Նա չէր անիծում ճակատագիրը, այլ հակահարվածի ուղիներ էր փնտրում. գալիս էր իմ աշխատասենյակ, նստում էր, ծխում և նախկին եռանդով խոսում այն պատժամիջոցների մասին, որ պատրաստվում էր կիրառելու իր թշնամու դեմ: Նրան հատկապես տանջում էր Գերմանիայի դեսպանատան խոցելի վիճակը. այն գտնվում էր բլրի գագաթին, քաղաքի ամենաակնառու շինություններից էր և անգլիական նավատորմի համար հիանալի նշանակետ էր: Եթե անգլիական նավատորմը մտներ նավահանգիստ, ապա առաջին իսկ պահին կտեսներ Հոհենցոլլերներին նվիրված հուշարձանը, և այն ռմբակոծելու գայթակղությունն անհաղթահարելի կլիներ: «Թող միայն փորձեն ավերել իմ դեսպանատունը, - ասում էր նա, - ես նրանց ցույց կտամ: Եթե մի կրակոց իսկ արձակեն դեսպանատան ուղղությամբ, մենք կպայթեցնենք Անգլիայի ու Ֆրանսիայի դեսպանատները: Գնացե՛ք և ծովակալին հայտնե՛ք այդ մասին: Ասացե՛ք, որ պայթուցիկ նյութերն արդեն պատրաստ են»:

Վանգենհայմին չափազանց անհանգստացնում էր նաև թուրքական կառավարությունը Կոստանդնուպոլսից Էսքիշեհիր տեղափոխելու առաջարկը: Հունվարի սկզբին, երբ բոլորը սպասում էին Դաշնակիցների նավերի հայտնվելուն, նախապատրաստություններ էին ընթանում՝ Թուրքիայի կառավարությունը Փոքր Ասիա տեղափոխելու համար: Հիմա, անգլիական ու ֆրանսիական թնդանոթների առաջին իսկ համազարկերից հետո մեկ անգամ ևս հատուկ գնացքներ նախապատրաստվեցին: Վանգենհայմը և Պալավիչինին ինձ հաղորդեցին, որ սուլթանին ու կառավարությանը Փոքր Ասիա ուղեկցելու ցանկություն չունեն: Եթե Դաշնակիցները գրավեն Կոստանդնուպոլիսը, Կենտրոնական տերությունների դեսպանները կկտրվեն իրենց երկրներից և ամբողջությամբ կհայտնվեն թուրքերի ձեռքին: «Այդ դեպքում թուրքերը կարող են մեզ պատանդ պահել», - ասաց Վանգենհայմը: Նրանք Թալեաթին հորդորեցին արտակարգ կառավարություն հաստատել Ադրիանապոլսում, որտեղից նրանք կարող էին ելումուտ անել Կոստանդնուպոլիս, իսկ քաղաքը զավթելու դեպքում՝ փախչել, սակայն թուրքերը չընդունեցին այդ առաջարկը, քանի որ վախենում էին, թե Բուլղարիան կարող է հարձակում ձեռնարկել: Վանգենհայմն ու Պալավիչինին հայտնվեցին երկու կրակի արանքում. եթե մնային Կոստանդնուպոլսում, կարող էին դառնալ անգլիացիների ու ֆրանսիացիների գերին, իսկ եթե մեկնեին Էսքիշեհիր, հնարավոր էր, կդառնային թուրքերի գերին: Ինձ հայտնի էին թուրք-գերմանական հարաբերությունների խարխուլ հիմքերի բազում վկայություններ, բայց այս մեկն ամենախոսունն էր: Բոլորի նման Վանգենհայմը նույնպես գիտեր՝ եթե անգլիացիներն ու ֆրանսիացիները գրավեն Կոստանդնուպոլիսը, թուրքերն իրենց կատաղությունը կուղղեն ոչ այնքան Անտանտի, որքան գերմանացիների դեմ, ովքեր իրենց ներքաշեցին պատերազմի մեջ:

Հիմա տարօրինակ է թվում բոլորի այն վստահությունը, թե Դաշնակիցների նավատորմի հաղթանակը Դարդանելում անխուսափելի է, և որ Կոստանդնուպոլսի զավթումը օրերի հարց է: Հիշում եմ փետրվարի 24-ին ԱՄՆ դեսպանատանը տեղի ունեցած աշխույժ քննարկումները: Առիթը տիկին Մորգենթաուի ամենշաբաթյա ընդունելությունն էր, ինչն այդ օրերին դիվանագետների համար հանդիպելու թերևս միակ հնարավորությունն էր: Այդ օրը ներկա էին գրեթե բոլորը: Դարդանելի հուժկու ռմբակոծումը տեղի էր ունեցել հինգ օր առաջ, ինչի հետևանքով նեղուցի ափին գտնվող մոտակա բոլոր հենակետերը ոչնչացվել էին: Քննարկումները պտտվում էին միայն մեկ հարցի շուրջ. արդյոք Դաշնակիցները նեղուցից ներս կմտնե՞ն, թե ոչ: Ի՞նչ կլինի, եթե մտնեն: Բոլորն արտահայտում էին իրենց կարծիքը: Վանգենհայմը, Պալավիչինին, Իտալիայի

դեսպան Գարոնին, Շվեդիայի դեսպանորդ դ'Անկարսվարդը, Բուլղարիայի դեսպանորդ Կոլուչևը, Կյուլմանը և Գերմանիայի դեսպանության առաջին քարտուղար Շարֆենբերգը միակարծիք էին, որ Դաշնակիցների գրոհը հաջողությամբ կավարտվի: Հատկապես հստակ հիշում եմ Կյուլմանի վերաբերմունքը: Նա այնպես էր քննարկում Կոստանդնուպոլսի զավթումը, կարծես դա արդեն կատարված փաստ էր: Պարսկաստանի դեսպանը չափազանց տագնապած էր. նրա դեսպանատունը գտնվում էր Բարձր Դռնից ոչ հեռու: Ասաց, որ մտավախություն ունի, որ Պորտայի շենքը կգնդակոծվի. մի քանի անզգույշ կրակոցներ կարող են հրդեհել իր նստավայրը: Ինձ հարցրեց, թե արդյոք կարող է իրենց արխիվները տեղափոխել ԱՄՆ դեսպանատուն: Ամենաաներևակայելի լուրեր էին շրջում, թե «Standard Oil»-ի[25] աշխատակիցը Դարդանելում տեսել է զորքով լեցուն 17 նավ, թե ռազմանավերն արդեն արձակել են 800 կրակոց և հողին հավասարեցրել ափամերձ բլուրները, որ կրակել են Թալեաթի թիկնապահի վրա (ակնարկելով, թե գնդակը նրա համար չէր նախատեսված): Լուրեր էին պտտվում, թե ողջ թուրք բնակչությունը սարսափահար է, թե երբ անգլիացիներն ու ֆրանսիացիները քաղաք մտնեն, այդ իրադարձությունը կտոնեն՝ հարձակվելով թուրք կանանց վրա: Դա, անշուշտ, ցնդաբանություն էր: Այդ բոլոր ասեկոսեները տարածում էին գերմանացիները և նրանց թուրք բարեկամները: Իրականում Կոստանդնուպոլսի բնակչության մեծ մասը հավանաբար աղոթում էր, որ Դաշնակիցների գրոհը հաջողությամբ ավարտվի և իրենց ազատագրի երկիրը կառավարող քաղաքական ավազակախմբից:

Այս ողջ խառնաշփոթի մեջ մեկուսի կանգնած էր հուսահատ մի անձնավորություն՝ Թալեաթը: Երբ էլ հանդիպեի նրան, այդ օրերին նա հուսալքված, պարտվող մարդու հոգեվիճակում էր: Թուրքերը բոլոր պրիմիտիվ ժողովուրդների նման դեմքերին ցուցանում են իրենց բոլոր զգացումները՝ հրճվանքից արագ անցնելով հուսահատության: Բրիտանական թնդանոթների որոտը Դարդանելում Թալեաթի համար ըստ ամենայնի ազդարարում էր աշխարհի վերջը: Ադրիանապոլսի փոստատարի կարիերան հասել էր իր վերջնակետին: Նա ինձ հետ կրկին խոսեց իր այն մտահոգությունների մասին, թե անգլիացիները կգրավեն Թուրքիայի մայրաքաղաքը, և կրկնեց, որ զղջում է պատերազմում Թուրքիայի մասնակցության համար: Թալեաթը քաջ գիտակցում էր, թե ինչ կկատարվի, երբ Դաշնակիցները մտնեն Մարմարա ծով: Կրոմերի հանձնախմբի զեկույցի համաձայն՝ լորդ Քիտչընները, համաձայնելով այդ զուտ ծովային արշավին, հեղափոխություն էր ակնկալում Թուրքիայում, ինչը կնպաստեր գործի հաջողությանը: Լորդ Քիտչընները խիստ քննադատության

արժանացավ Դարդանելի վրա հարձակման գործում իր ունեցած դերի համար: Սակայն նրա հիշատակը պաշտպանելու համար պետք է ասեմ, որ այդ պահին նա լիովին իրավացի էր: Եթե Դաշնակիցները կոտրեին նեղուցի պաշտպանների դիմադրությունը և ներխուժեին Կոստանդնուպոլիս, երիտթուրքերի վարչակազմն արյունալի վախճան կունենար: Հենց կրակոցներ հնչեցին, փողոցում հայտնվեցին թռուցիկներ, որոնք մեղադրում էին Թալեաթին և նրա համախոհներին Թուրքիային պատուհասած բոլոր արհավիրքների համար: Ոստիկանապետ Բեդրին զբաղված էր բոլոր գործազուրկ երիտասարդներին փողոցներից հավաքելով և քաղաքից արտաքսելով: Նրա նպատակն էր Կոստանդնուպոլիսը մաքրել բոլոր նրանցից, ովքեր կարող էին հեղափոխություն հրահրել երիտթուրքերի դեմ: Լուրեր էին շրջում, թե Բեդրին ավելի շատ սարսափում է նման հեղափոխությունից, քան բրիտանական նավատորմից: Հեղափոխության Նեմեսիսը ամեն պահ հետապնդում էր նաև Թալեաթին:

Այս դրվագը կբացահայտի քաղաքում տիրող լարվածության աստիճանը: «Berliner Tageblatt»-ի թղթակից դոկտոր Լեդերերը կարճատև այց կատարեց Դարդանելի ափ և վերադառնալուն պես տեղեկացրեց դիվանագետների կանանց, որ գերմանացի սպաները խոստովանել են՝ մշտապես իրենց հետ ունեն դիասավաններ, քանի որ համոզված են, որ այդտեղ են թաղվելու: Լուրը կայծակի արագությամբ տարածվեց քաղաքում, և դոկտոր Լեդերերին սպառնացին ծերբակալությամբ՝ նման լուրեր տարածելու համար: Նա օգնություն խնդրեց ինձանից, և ես նրան տարա Վանգենհայմի մոտ, սակայն վերջինս հրաժարվեց նրա հետ որևէ առնչություն ունենալ: «Լեդերերն Ավստրիայի հպատակ է, - ասաց նա, - թեև գերմանական թերթի ներկայացուցիչ է»: Նրա զայրույթը Լեդերերի հանդեպ սահման չուներ: Ի վերջո ինձ հաջողվեց ծախորդ լրագրողին ուղարկել Ավստրիայի դեսպանատուն, որտեղ նա կարողացավ հանգրվանել գիշերը: Մի քանի օր անց Լեդերերը հարկադրված եղավ մեկնել Կոստանդնուպոլսից:

Այդ լարված մթնոլորտում կար մի անձնավորություն, ով բացարձակ հանգստություն էր պահպանում: Թեև դեսպանները, գեներալներն ու քաղաքական գործիչներն ակնկալում էին վատթարագույնը, սակայն Էնվերի ձայնը մնում էր ցածր ու վստահ: Նրա սառնասրտությունն ու քաջությունը լավագույնս դրսևորվեցին այդ օրերին: Դեկտեմբերի վերջին ու հունվարին, երբ քաղաքը ցնցեց ռմբակոծությունների առաջին սարսափը, Էնվերը Կովկասում կռվում էր ռուսների դեմ: Ինչպես արդեն ասացի, այդ ռազմարշավը նրան փառք չբերեց: Էնվերը նոյեմբերին մեկնեց Կոստանդնուպոլսից՝ իր բանակին միանալու որպես ապագա զավթիչ, իսկ

հունվարի վերջին վերադարձավ որպես լիովին ջախջախված ու բարոյալքված բանակի հրամանատար: Նման դառը փորձությունը կկործաներ ցանկացած առաջնորդի, և այն հանգամանքը, որ էնվերն իրեն հեռու էր պահում հասարակության աչքից, վկայում էր այն մասին, որ նա չափազանց ծանր է տանում իր պարտությունը: Նրա վերադարձից հետո առաջին անգամ էնվերին տեսա «Կարմիր մահիկի» օգտին կազմակերպված համերգի ժամանակ. նա նստել էր օթյակի խորքում, ասես ցանկանում էր հնարավորինս աննկատ մնալ: Ակնհայտ էր, որ վստահ չէ, թե կարժանանա հասարակության ջերմ ողջույններին: Համերգին ներկա էին Կոստանդնուպոլսի բոլոր նշանավոր անձինք՝ թագաժառանգ արքայազնը, Կառավարության անդամներ, դեսպաններ: Համաձայն ավանդույթի՝ թագաժառանգ արքայազնը մեկ առ մեկ ընդունում էր վերոնշյալ պաշտոնյաներին, ովքեր ողջույնի ու շնորհավորանքի խոսքեր էին ասում նրան: Դրանից հետո բոլորը շարժվում էին օթյակից օթյակ: Էնվերը նույնպես հրավիրվեց թագաժառանգի օթյակ: Հրավերը ոգեշնչեց նրան, և նա սկսեց շփվել դիվանագետների հետ, ովքեր նրան ողջունում էին բացառիկ ջերմությամբ և քաղաքավարությամբ: Էնվերը դա ընկալեց որպես իր դիրքի վերականգնման բարենպաստ նշան և ճգնաժամի պայմաններում վերստին ստանձնեց առաջնորդի դերը: Մի քանի օր անց նա ինձ հետ քննարկեց իրադրությունը: Ասաց, որ իրեն ապշեցնում է համատարած վախի մթնոլորտը և սուլթանին ու կառավարությունը Կոստանդնուպոլսից հեռացնելու և քաղաքն անգլիացիներին հանձնելու նախապատրաստությունները. այդ ամենը նրա մեջ նողկանք էր առաջացնում: Նա չէր հավատում, թե Դաշնակիցները կարող են մտնել Դարդանելի նեղուց, քանի որ ինքն անձամբ այդ օրերին ուսումնասիրել էր ամրաշինությունները և վստահ էր, որ դրանք կդիմակայեն ցանկացած գրոհի: Պնդում էր, որ եթե նույնիսկ նավերը ներխուժեն նեղուց, Կոստանդնուպոլիսը պարտավոր է դիմադրել մինչև վերջին մարդը:

Սակայն էնվերի վստահությունը չէր համոզում նրա զինակիցներին: Նրանք պատրաստվել էին անգլիական նավատորմի ներխուժմանը: Բայց եթե պարզվեր, որ Դաշնակիցները, հակառակ թուրքական զորքի հերոսական դիմադրության, կգավթեն քաղաքը, իշխանավորները պատրաստ էին դրան: Նրանք առաջարկում էին Կոստանդնուպոլսի հետ վարվել այնպես, ինչպես ռուսները վարվեցին Մոսկվայի հետ, երբ Նապոլեոնը մոտեցավ մայրաքաղաքին: «Նրանք այս քաղաքը չեն գրավի, - ասում էին թուրքերը, - միայն՝ մոխրակույտերը»: Եվ դա սոսկ սպառնալիք չէր:

Ինձ հայտնի դարձավ, որ քաղաքի ոստիկանական բոլոր տեղամա-

սերում և այլուր տեղադրված են վառելանյութերով լի կաթսաներ, որոնք մի քանի վայրկյանում քաղաքը կրակի կմատնեին: Քանի որ Կոստանդնուպոլսի շենքերը հիմնականում փայտաշեն էին, դա դժվար խնդիր չէր լինի: Սակայն թուրքերը վճռականորեն պատրաստ էին ոչնչացնելու ավելին, քան միայն շինությունները. պետք է կրակի մատնվեին նաև քրիստոնեական հոյակերտ ճարտարապետական կոթողները, որոնք կառուցվել էին թուրքերի ներխուժումից շատ տարիներ առաջ: Նրանք հատկապես վճռական էին Սուրբ Սոֆիայի մզկիթը պայթեցնելու հարցում: Այդ շինությունը, որը մինչև բռնագրավվելը և մահմեդական մզկիթի վերածվելը քրիստոնեական եկեղեցի էր, Բյուզանդական կայսրության ամենափառահեղ շինություններից էր: Նման կամայականության հնարավո-րությունը, անշուշտ, բորբոքեց բոլորիս զայրույթը, և ես դիմեցի Թալեաթին՝ խնդրելով խնայել Սուրբ Սոֆիան: Ճարտարապետական հրաշքի ոչնչացման հնարավորությունը նա թեթև տարավ: «Միություն և առաջադիմություն» կոմիտեում հազիվ վեց մարդ գտնվի, որ նման հնությանը որևէ արժեք վերագրի: Մենք բոլորս սիրում ենք ժամանակակից շինություններ»: Այդ պահին դա ինձ տրված միակ պատասխանն էր:

Էնվերի այն պնդումը, թե Դարդանելը հնարավոր է պաշտպանել, հարուցեց նրա գործընկերների կասկածը նրա ողջամտության վերաբերյալ: Երբ Էնվերը դեռևս Կովկասում էր, ասաց Բեդրին, Թալեաթը ժողով հրավիրեց, մի յուրատեսակ ռազմական խորհուրդ՝ Դարդանելի հարցով: Մասնակցում էին գերմանացի գեներալ Լիման ֆոն Սանդերսը, ով վերապատրաստել էր թուրքական բանակը, գերմանացի ծովակալ Ուզդոմը՝ Օսմանյան կայսրության ծովային պաշտպանական գծի հրահանգիչը, գեներալ Բրոնսարը՝ թուրքական բանակի գերմանական շտաբի պետը և մի շարք այլ անձինք: Ներկաներից յուրաքանչյուրը հայտնել էր իր վստահությունը, որ անգլո-ֆրանսիական նավատորմն ի զորու է ճեղքելու Դարդանելի պաշտպանական գիծը: Բեդրիի կարծիքով, վիճահարույց էր միայն այն հարցը, թե պաշտպանական գիծը ճեղքելուց հետո արդյոք քանի՞ ժամ կպահանջվի, որպեսզի նավերը հասնեն Կոստանդնուպոլիս՝ ո՞ւթ թե քսան: Էնվերի դիրքորոշումը հայտնի էր, սակայն այս ժողովը որոշեց անտեսել այն և նախապատրաստություններ սկսել առանց նրան տեղեկացնելու՝ գոնե առժամանակ Պաշտպանության նախարարին հեռու պահելով նշված քննարկումներից:

Մարտի սկզբին ինձ այցելության եկան Բեդրին ու Ջանֆոլադը՝ Հանրային անվտանգության հարցերով տնօրենը: Այդ պահին արդեն սկսվել էր փախուստը մայրաքաղաքից: Թուրք կանանց ու երեխաներին տեղափոխում էին երկրի ներքին շրջաններ, բոլոր բանկերին պարտադրել էին

ոսկին ուղարկել Փոքր Ասիա, Բարձր Դռան բոլոր արխիվներն արդեն տեղափոխվել էին Էսքիշեհիր, և, ըստ էության, բոլոր դեսպաններն ու նրանց աշխատակազմը, ինչպես նաև պետական պաշտոնյաների զգալի մասը պատրաստ էին մեկնելու: Թանգարանի տնօրենը՝ այն վեց անձանցից մեկը, ով «սիրում էր հնություններ», ինչպես արտահայտվեց Թալեաթը, Կոստանդնուպոլսում գտնվող բոլոր արժեքները թաքցրել էր նկուղներում կամ ինչ-որ այլ ձևով՝ ոչնչացումից պաշտպանելու համար: Բեդրին այցելեց ինձ՝ մեկնելուս մանրամասները կարգավորելու համար: Որպես դեսպան ես հավատարմագրված էի անձամբ սուլթանի կողմից:

- Ձեր պարտքն է, - ասաց Բեդրին, - լինել այնտեղ, որտեղ սուլթանն է: - Ապա ավելացրեց, - գնացքը պատրաստ է:

Բեդրին կամենում էր իմանալ, թե քանի հոգի են ինձ ուղեկցելու, որպեսզի համապատասխան տեղեր ապահովեր: Ես կտրականապես հրաժարվեցի այդ առաջարկից: Բեդրիին տեղեկացրի, որ պարտականություններս ինձ հարկադրում են մնալ Կոստանդնուպոլսում: - Միայն չեզոք դեսպանը, - ասացի ես, - ի վիճակի է կանխելու կոտորածները և քաղաքի ավերումը: Հանուն քաղաքակիրթ աշխարհի ես պարտավոր եմ հնարավորություններիս սահմաններում կանխել նման արհավիրքները: Եթե իմ՝ որպես դեսպանի դիրքն անխուսափելի է դարձնում սուլթանին հետևելը, ես հրաժարական կտամ՝ դառնալով պատվո հյուպատոս:

Թե՛ Բեդրին, թե՛ Ջանփոլադն ինձնից շատ ավելի երիտասարդ և անփորձ մարդիկ էին, ուստի նրանց ասացի, որ միջազգային ճգնաժամի այս պայմաններում նրանք պատկառելի, փորձառու անձնավորության կարիք ունեն: Ես մտածում էի ոչ միայն օտարերկրացիների և ամերիկյան հաստատությունների մասին, այլև, ելնելով մարդասիրական ավելի լայն նկատառումներից, փորձում էի պաշտպանել Թուրքիայի բնակչությանը հնարավոր վայրագություններից: Բազմազգ բանակը, որի որոշակի տարրեր հակված էին կողոպուտի և ջարդերի, մտահոգության տեղիք էր տալիս: Ես Բեդրիին ու Ջանփոլադին առաջարկեցի, որ մենք երեքով ստեղծենք մի կոմիտե, որը կստանձնի վերահաս ճգնաժամի վերահսկումը:

Նրանք համաձայնեցին, և մենք երեքով գործողությունների ծրագիր կազմեցինք: Կոստանդնուպոլսի քարտեզի վրա նշեցինք քաղաքի այն մասերը, որոնք, պատերազմի օրենքների համաձայն, դաշնակից ուժերի կողմից կարող էին ենթարկվել ռմբակոծության: Մենք եկանք այն եզրահանգման, որ Պատերազմի նախարարությունը, Ռազմածովային նախարարությունը, փոստային գրասենյակները, երկաթուղային կայարանները և հանրային բոլոր շինություններն ամենայն հավանականությամբ կրակի նշանակետ կդառնան, և նշեցինք այն շրջանները, որոնք, մեր պնդմամբ,

պետք է լինեին անձեռնմխելի: Քաղաքի բնակելի մասը՝ Բերան, որտեղ գտնվում էին նաև բոլոր դեսպանատները, Ոսկեղջյուրի[26] հյուսիսային ափին էր: Մենք նշեցինք այն՝ որպես ռմբակոծման ոչ ենթակա շրջան: Նշեցինք նաև Ստամբուլի ու Գալաթայի որոշ թուրքական բնակելի շրջանները: Ես հեռագրեցի Վաշինգտոն՝ խնդրելով վավերացնել այդ ծրագրերը և ձեռք բերել բրիտանական ու ֆրանսիական կառավարությունների համաձայնությունը հարգելու այս գոտիների անվտանգությունը: Վաշինգտոնից ստացված պատասխանը հավանություն էր տալիս իմ գործողություններին:

Այսպիսով բոլոր նախապատրաստություններն արված էին: Կայարանում կանգնած գնացքները պատրաստ էին սուլթանին և դեսպաններին Փոքր Ասիա տանելու: Շոգեքարշերը ծուխ էին արձակում և ամեն պահ պատրաստ էին ճանապարհ ընկնելու: Մենք սպասում էինք Դաշնակիցների նավատորմի հաղթական ժամանմանը:

ԳԼՈՒԽ XVII

Էնվերը ներկայանում է իբրև մեկը, ով ի ցույց դրեց «բրիտանական նավատորմի խոցելիությունը» Դարդանելի՝ իր դարն ապրած պաշտպանական համակարգը

Երբ իրավիճակը ծայրաստիճան լարվեց, Էնվերը խնդրեց ինձ այցելել Դարդանելի մերձափնյա մաս: Նա շարունակում էր պնդել, որ իրենց պաշտպանական համակարգն անխոցելի է, և որ ինքը չի կարողանում հասկանալ Կոստանդնուպոլսում տիրող խուճապի պատճառը: Ինքն անձամբ այցելել էր Դարդանել, մեկ առ մեկ զննել հրանոթներն ու հրակետերը, եղել էր պաշտպանական դիրքերում և լիովին վստահ էր, որ թուրք մարտիկներն ի զորու են երկար ժամանակ հետ պահելու Դաշնակիցների նավատորմը: Նույն մտավախությունն այնտեղ էր բերել նաև Թալեաթին, և այդ այցը նվազեցրել էր վերջինիս երկյուղը: Էնվերը համոզված էր՝ եթե ես գնամ պաշտպանական դիրքեր, համոզվեմ, որ նավերը երբեք նեղուցով ներս չեն մտնի, վստահությունս կհայտնեմ նաև ուրիշներին, և տիրող մտավախությունը կնվազի: Ես թոթափեցի դեսպանի կողմից սեփական անձը վտանգելու ողջամտության վերաբերյալ բնական մտահոգությունս (ռմբակոծումները շարունակվում էին գրեթե ամեն օր) և անմիջապես ընդունեցի Էնվերի հրավերը:

Ամսի 15-ի առավոտյան մենք Կոստանդնուպոլսից մեկնեցինք Յուրյուք: Էնվերն անձամբ մեզ ուղեկցեց մինչև Մարմարայի ափին գտնվող Պանդերմա քաղաք: Խմբում կային մի քանի բարձրաստիճան պաշտոնյաներ՝ Իբրահիմ բեյը՝ Արդարադատության նախարարը, Հուսնի փաշան՝ երիտթուրքերի հեղափոխության ժամանակ այն բանակի հրամանատարգեներալը, ով գահընկեց արեց Աբդուլ Համիդին, խորհրդարանի անդամ Շերիֆ Զաֆեր փաշան՝ ազգությամբ արաբ, Մուհամեդ Մարգարեի տոհմակիցը: Հատկապես հաճելի ուղեկից էր Ֆուադ փաշան՝ տարեց ֆելդմարշալը, ով արկածախնդիր կարիերա էր ունեցել: Հակառակ իր պատկառելի տարիքին՝ նա զվարճանալու անսպառ եռանդ ուներ, հսկայական քանակությամբ ուտելիք ու խմիչք էր կլանում, Օթելլոյի նման աքսորից, ճակատամարտերից և մահից մի կերպ փրկվելու բազում պատմություններ ուներ: Բոլոր այս մարդիկ Էնվերից շատ ավելի տարեց էին, ունեին անհամեմատ ավելի պատվարժան նախնիներ, սակայն երիտասարդ Էնվերին վերաբերվում էին ամենայն հարգանքով:

Էնվերին կարծես թե ուրախացնում էր ստեղծված իրավիճակը քննարկելու հնարավորությունը: Նախաճաշից հետո նա ինձ մի կողմ տարավ,

և մենք միասին տախտակամած բարձրացանք: Արևոտ, հաճելի օր էր, և Մարմարա ծովի կապույտն այնքա՜ն գունեղ էր... Հազիվ թե աշխարհի մեկ այլ մասում նման մուգ կապույտ գտնվի: Ամենից ավելի ես տպավորված էի այդ լռակյաց ջրերի գրեթե խաղաղավետ ամայությամբ: Միայն մեր նավն էր երևում հորիզոնում: Այս ծովը, որը խաղաղ ժամանակներում աշխարհի խոշորագույն առևտրական մայրուղիներից էր, այժմ վերածվել էր հնամենի մնացուկի: Ողջ տեսարանը Մերձավոր Արևելքում գերմանական դիվանագիտության տարած մեծ հաղթանակի հստակ արտացոլումն էր: Վեց ամսից ավելի նեղուցի ջրերով չէր անցել ռուսական ոչ մի առևտրանավ: Ռումինիայի ու Բուլղարիայի առևտուրը, որ սովորաբար Եվրոպա էր հասնում այդ ներքին ծովով, վաղուց ընդհատվել էր: Այս ողբերգական իրավիճակի նպատակը Ռուսաստանը մեկուսացնելն էր և իր դաշնակիցներից կտրելը: Ինչպիսի՜ վիթխարի դեր խաղաց այդ փաստը համաշխարհային պատմության մեջ վերջին երեք տարվա ընթացքում: Հիմա Անգլիան ու Ֆրանսիան ջանում էին չեզոքացնել գերմանացիների այդ առավելությունը՝ միավորելով սեփական ռազմական ռեսուրսները իրենց արևելյան հզոր դաշնակցի ռեսուրսներին և վերականգնել հազարավոր նավերի ելումուտը Դարդանել ու Մարմարա ծով, ինչը կնշանավորեր Ռուսաստանի գոյությունը որպես ռազմական, տնտեսական և նույնիսկ, ինչպես դա ապացուցեցին հետագա դեպքերը, քաղաքական ուժ: Մենք մոտենում էինք պատերազմի ամենամեծ ճգնաժամին:

Կհաղթե՞ն արդյոք Անգլիան ու նրա դաշնակիցներն այս պատերազմում: Նրանց նավերին կհաջողվի՞ ոչնչացնել Դարդանելի պաշտպանական գիծը, ներխուժել նեղուց և Ռուսաստանը դարձնել պատերազմի հիմնական մասնակիցներից մեկը: Այս հարցերն էինք մենք հիմա քննարկում էնվերի հետ գրեթե երեք ժամ՝ հետուառաջ քայլելով նավի տախտակամածի վրա: Էնվերը կրկին խոսք բացեց «անմիտ խուճապի» մասին, որով համակված էին մայրաքաղաքի բնակչության գրեթե բոլոր շերտերը: «Եթե նույնիսկ Բուլղարիան ու Հունաստանը շրջվեն մեր դեմ, - ասաց նա, - մենք դարձյալ մինչև վերջ կպաշտպանենք Կոստանդնուպոլիսը: Մենք հսկայական քանակությամբ զենք ու զինամթերք ունենք, և դրանք ամուր հողի վրա են, մինչդեռ անգլիական ու ֆրանսիական թնդանոթները ջրի վրա են: Նեղուցի բնական առավելություններն այնքան զգալի են, որ ռազմանավերը չեն կարող դրանց հետ մրցել: Ինձ չի հետաքրքրում, թե ինչ են մտածում մյուսները: Ես այս խնդիրն ուսումնասիրել եմ ավելի խորքով, քան որևէ մեկը, և վստահ եմ, որ իրավացի եմ: Քանի դեռ ես եմ Պատերազմի նախարարը, մենք անձնատուր չենք լինի: Իսկապես չեմ հասկանում անգլիական ու ֆրանսիական նավերի նպատակը: Ենթա-

դրենք՝ մտնեն Դարդանել, անցնեն Մարմարա ծովը և հասնեն Կոստանդնուպոլիս, հետո՞ ինչ: Ընդունում եմ, որ նրանք կարող են ռմբակոծել և կործանել քաղաքը, սակայն այն զավթել չեն կարողանա, քանի որ չունեն անհրաժեշտ թվաքանակով զինվորներ ափ ուղարկելու համար: Եթե նրանք մեծ բանակով չգան, կհայտնվեն ծուղակում: Հնարավոր է, որ քաղաքում մնան երկու, երեք շաբաթ, մինչև պաշարները վերջանան, դրանից հետո հարկադրված կլինեն հետ դառնալ, կրկին անցնել նեղուցը և ենթարկվել ոչնչացման վտանգի: Այդ ժամանակամիջոցում մենք կվերականգնենք ամրակետերը, զորք կհավաքենք և կսպասենք նրանց: Կարծում եմ՝ նրանց արածն անմտություն է»:

Արդեն պատմել եմ, որ Նապոլեոնը էնվերի կուռքն էր, և Դարդանելի ռազմական գործողությունները նա տեսնում էր, հիրավի, որպես նապոլեոնյան հնարավորություններ: Մենք դեռ քայլում էինք տախտակամածի վրա, երբ նա հանկարծ կանգ առավ, լուրջ հայացքով նայեց ինձ ու ասաց. - Պատմության մեջ ես կմնամ որպես մի անձնավորություն, ով կարողացավ բացահայտել Անգլիայի և նրա նավատորմի խոցելիությունը: Ես կապացուցեմ, որ անգլիական նավատորմն անպարտելի չէ: Պատերազմից մի քանի տարի առաջ ես եղել եմ Անգլիայում և քննարկել եմ այդ երկրի դիրքը տարբեր բարձրաստիճան անձանց հետ՝ էսքվիթի, Չերչիլի, Հալդեյնի: Ես ասացի, որ իրենք սխալ ուղով են ընթանում: Ուինսթոն Չերչիլը հայտարարեց, որ միայն երկրի նավատորմը բավարար է Անգլիան պաշտպանելու համար, և որ իրենք մեծ բանակի կարիք չունեն: Ես նրան պատասխանեցի՝ ոչ մի մեծ կայսրություն չի կարող երկար գոյատևել ո՛չ առանց բանակի, ո՛չ առանց նավատորմի: Պարզվեց, որ Բրիտանիայում գերիշխում էր Չերչիլի տեսակետը: Միայն մեկ մարդ համաձայնեց ինձ հետ՝ լորդ Ռոբերտսը: Դե ինչ, հիմա Չերչիլն այստեղ է ուղարկել իր նավատորմը՝ հավանաբար ինձ ապացուցելու համար, որ անգլիական նավատորմն ի զորու է անելու այն ամենը, ինչի մասին խոսել էինք: Տեսնե՛նք:

Ծովային այս արշավանքը էնվերը համարում էր Չերչիլի մարտահրավերը՝ նետված իրեն, որպես Լոնդոնում տեղի ունեցած իրենց վիճաբանության շարունակություն:

- Դուք նույնպես պետք է մեծ բանակ ունենաք, - ասաց էնվերը՝ նկատի ունենալով Միացյալ Նահանգները: - Չեմ հավատում, - շարունակեց նա,- որ Անգլիան փորձում է Դարդանել մտնել Ռուսաստանի խնդրանքով: Անգլիայում ես քննարկեցի համընդհանուր պատերազմի հնարավորությունը Չերչիլի հետ: Նա հարցրեց, թե նման դեպքում ինչպես կվարվի Թուրքիան, և ավելացրեց, որ եթե մենք անցնենք Գերմանիայի կողմը, բրիտանական նավատորմը կմտնի Դարդանել և կգրավի Կոստանդնու-

պոլիսը: Չերչիլը չի օգնում Ռուսաստանին. նա իրականացնում է իր սպառնալիքը:

Էնվերը խոսում էր ամենայն վճռականությամբ: Ասաց, որ առաջին գծի ամրություններին հասցված վնասը լիովին վերացված է, և որ իրենք ունեն պաշտպանական միջոցներ, որոնց գոյության մասին թշնամին չի կասկածում: Նա դառնացած էր խոսում անգլիացիների մասին՝ նրանց մեղադրելով թուրք պաշտոնյաներին կաշառելու փորձերում: Նույնիսկ ասաց, որ իր դեմ մահափորձ են կազմակերպել: Սակայն գերմանացիների հանդեպ էլ նա բարեկամական զգացումներ չէր տածում: Վանգենհայմի կոշտ համառությունը նրան խիստ վրդովեցնում էր: Նրա խոսքերով՝ թուրքերն ու գերմանացի սպաները իրար լավ չեն հասկանում.

- Թուրքերն ու գերմանացիները միմյանց չեն համակրում: Մենք նրանց հետ ենք, քանի դեռ դա բխում է մեր շահերից, և նրանք մեզ հետ են, քանի դեռ դա բխում է իրենց շահերից: Գերմանիան կստարի Թուրքիային այնքան ժամանակ, որքան դա նրանց անհրաժեշտ է, մենք կստարենք Գերմանիային այնքան ժամանակ, քանի դեռ դա հարկավոր է մեզ:

Մեր զրույցի ավարտին Էնվերը տպավորված էր թվում այն անձնական մտերմությունից, որ հաստատվեց մեր միջև: Ըստ երևույթին մտածում էր, որ ինքը՝ մեծն Էնվերը, թուրքական հեղափոխության Նապոլեոնը, իրեն թույլ տվեց իր երկրի գործերը քննարկել սովորական մի դեսպանի հետ: «Թող Ձեզ հայտնի լինի, որ Գերմանիայում չկա մեկը, ում հետ Կայսրը զրուցեր նույնքան անկեղծորեն, որքան ես՝ Ձեզ հետ այսօր»:

Պանդերմա հասանք ժամը մոտ երկուսին: Էնվերն ու նրա մեքենան ափ իջեցվեցին, իսկ մեր խումբը շարունակեց ճանապարհը: Իրիկնամուտին մեր նավը հասավ Գալիպոլի: Նավահանգստում նավը խարիսխ ձգեց, և մենք գիշերեցինք նավում: Ողջ երեկո լսվում էր ամրությունների ռմբակոծման որոտը, սակայն պատերազմի և մահվան այդ հիշեցումները թուրք պաշտոնյաների վրա որևէ ազդեցություն չգործեցին: Այս ճամփորդությունը նրանց համար զվարճալի արկած էր. երկար ամիսներ նրանք զբաղվել էին ծանր, քրտնաջան աշխատանքով ու հիմա իրենց պահում էին անսպասելի արձակուրդ ստացած դպրոցականների նման: Նրանք կատակում էին, միմյանց պատմություններ պատմում, երգում անբարո երգեր ու մանկական չարաճճի կատակներ անում: Պատվելի Ֆուադը, թեև գրեթե իննսուն տարեկան էր, չափազանց սիրում էր զվարճանալ և հիմա դարձել էր նրանց կոպիտ կատակների թիրախը, և դա նրան մեծագույն հաճույք էր պատճառում: Խրախճանքը հասավ իր գագաթնակետին, երբ նրա բարեկամներից մեկը ծածուկ օդեկոլոն լցրեց Ֆուադի բաժակի մեջ: Ծերունին մի պահ նայեց խմիչքին, հետո այնտեղ

ջուր ավելացրեց: Ինձ ասել էին, որ ռաքին՝ թուրքական հայտնի օղին, համտեսելու ճիշտ ձևը այն ջրի հետ խառնելն է. եթե խմիչքը ճերմակում է, նշանակում է իսկական է և կարելի է խմել: Պարզվեց, որ ջուրը նույն ազդեցությունն ունի նաև օդեկոլոնի վրա, քանի որ Ֆուադի ըմպելիքը ջուր ավելացնելուց հետո ճերմակեց: Ծերունին իրեն ծաղրողների հիացական բացականչությունների ուղեկցությամբ, առանց խոժոռվելու բաժակի ողջ պարունակությունը լցրեց կոկորդն ու կուլ տվեց:

Առավոտյան շարունակեցինք մեր ճանապարհը: Արդեն Դարդանելի մոտակայքում էինք և Գալիպոլիից մեկնելու էինք Չանաք Կալե, որը մոտ քսանհինգ մղոն հեռու էր: Նեղուցի այդ մասը հետաքրքրություն չի ներկայացնում և ռազմական որևէ կարևորություն չունի: Այդ մասում նեղուցը մոտ երկու մղոն լայնություն ունի, երկու ափերը ցածրադիր են և ճահճոտ, միայն մի քանի ավերված, դեռևս չլքված գյուղեր են երևում: Ինձ ասել էին, որ այդ մասում հնադարյան մի քանի ամրություններ կան, որոնց ժանգոտած թնդանոթներն ուղղված են դեպի Մարմարա ծով: Հենակետերն այնտեղ կառուցվել են 19-րդ դարի սկզբին թշնամու նավերի մուտքը հյուսիսից նեղուց արգելափակելու նպատակով: Սակայն հիմա այդ հենակետերն այնքան ավերված էին, որ ես դրանք չտեսա: Թուրքերը տեղեկացրին, որ դրանք մարտունակ չեն, և որ իրականում նեղուցի հյուսիսային մասում՝ Նագարայից մինչև Մարմարա, ոչինչ չկա, որ կարողանա դիմադրել ժամանակակից նավատորմին: Դարդանելի այդ մասի ամենամեծ հետաքրքրություն ներկայացնողը զուտ պատմական ու առասպելական էր. ժամանակակից Լապսակի քաղաքը հայտնվել էր հինավուրց Լամպսակուս քաղաքի տեղում՝ Գալիպոլիի ճիշտ դիմացը, իսկ Նագարա տեղավայրը գտնվում էր հին Աբիդոս գյուղի տեղում, որտեղից, ըստ հունական դիցաբանության, Լեանդրն ամեն գիշեր լողալով անցնում էր Հելլեսպոնտոսը՝ իր սիրած Հերոյին[27] հասնելու համար. այդ սխրանքը լորդ Բայրոնը կրկնեց գրեթե հարյուր տարի առաջ: Այդտեղ էր նաև, որ Քսերքսեսը[28] նավերից կառուցված կամրջով Ասիայից անցավ Հունաստան՝ սկսելով այն հայտնի արշավանքը, որ նրան պետք է աշխարհակալ դարձներ: Նրա արշավուղին անցնելիս մտածեցի, որ Քսերքսեսի ոգին դեռ ապրում է: Դարդանելի այդ ամենանեղ մասը գերմանացիների ու թուրքերի համար ամենևին ռոմանտիկ վայր չէր, քանի որ այդտեղ սուզանավերի դեմ նրանք տեղադրել էին լարեր, ցանցեր ու ականներ: Այս սարքավորումները, ինչպես կտեսնենք ստորև, անգլիական ու ֆրանսիական սուզանավերը հեռու չպահեցին Մարմարայից ու Բոսֆորից: Այս տափարակ ափերի ծանձրացնող միօրինակությունը փոխարինվեց բնության ավելի աշխույժ տեսարանով միայն այն պահին,

երբ շրջանցեցինք Նագարայի պատմական հրվանդանը: Նեղուցի եվրոպական մասում ժայռերը կտրուկ իջնում են դեպի ջուրը՝ հիշեցնելով Հուդզոն գետի վրա գտնվող մեր ամերիկյան Փելիսեյդս տեղանքը: Այդտեղից հպանցիկ տեսա այն բլուրների ու սարերի շղթան, որը հետագայում դաշնակից հանդուգն բանակների համար դարձավ ողբերգական խոչընդոտ: Նագարայից հարավ գտնվող տարածքի ռելիեֆը՝ բազմաթիվ բլուրներ ու ժայռերի շղթան, բացահայտում է, թե ինչու են ռազմական ինժեներները որպես պաշտպանական լավագույն դիրք ընտրել Դարդանելի հատկապես այդ մասը: Մեր նավը մոտենում էր այն կետին, որը թերևս ողջ նեղուցի ամենակարևոր մասն էր՝ Չանաք քաղաքին, կամ եթե օգտագործենք դրա եվրոպական նոր անվանումը՝ Դարդանելին: Խաղաղ պայմաններում դա աշխույժ, տասնվեց հազար բնակչություն ունեցող ծովափնյա քաղաք էր՝ փայտաշեն տներով, բրդի և այլ ապրանքների առևտրի բավական խոշոր կենտրոն, որը դարեր շարունակ մնացել էր աննշան կարևորության վայր: Հիմա այնտեղ զինվորներից բացի ոչ ոք չկար. քաղաքացիական բնակչությունը տեղափոխվել էր Անատոլիա: Մեզ ասացին, որ քաղաքը ռմբակոծվել է բրիտանական նավատորմի կողմից, սակայն դա այնքան էլ արժանահավատ տեղեկություն չէր, քանի որ ես տեսա միայն մեկ քանդված շինություն, որը վնասվել էր պատահաբար, երբ դրան դիպել էր մոտակայքում գտնվող ամրաշինություններին ուղղված ռումբը:

Չևադ փաշան՝ Դարդանելում թուրքական բանակի գլխավոր հրամանատարը, դիմավորեց մեզ և ուղեկցեց շտաբ: Չևադը զուսպ, հաճելի ու սիրալիր շարժուձևով անձնավորություն էր: Ազատ տիրապետում էր գերմաներենին, և ես թարգմանչի կարիք չունեի: Ինձ հատկապես տպավորեց գերմանացի սպաների հարգալից վերաբերմունքը նրա նկատմամբ: Միանգամայն պարզ էր, որ ռազմական գործողությունների այդ թատերաբեմում նա է գլխավոր հրամանատարը, իսկ Կայսեր գեներալները սոսկ նրա ենթականերն են: Երբ մտնում էինք նրա աշխատասենյակ, Չևադը կանգ առավ տորպեդի բեկորի մոտ, որը կանգնեցված էր սրահի մեջտեղում, ըստ երևույթին՝ որպես հուշանվեր: «Ահա՛ այն «նշանավոր հանցագործը», - ասաց նա՝ մատնացույց անելով բեկորը: Այդ օրերին թերթերը գովաբանում էին անգլիական սուզանավի սխրանքը, որն Անգլիայից հասել էր Դարդանել, անցել ականապատված ջրերով և տորպեդահարել թուրքական «Մեսուդիե» ռազմանավը: «Ահա՛ այն տորպեդը, որն այդ բանն արել է - ասաց Չևադը: - Երբ ցած իջնենք, կտեսնեք նավի բեկորները»:

Առաջին հենակետը, որ այցելեցի, Անադոլու Համիդիեն էր (այսինքն՝

ասիական Համիդիեն), որը գտնվում էր ծովեզրին՝ Չանաքի մոտակայքում: Առաջին տպավորությունս այն էր, թե ես գտնվում եմ Գերմանիայում. բոլոր սպաները գերմանացի էին, և դիրքերն ամրապնդելու համար նրանք մարտկոցներ էին կառուցում ավազով լի պարկերից և այլ նյութերից: Ամենուրեք հնչում էր ոչ թե թուրքերենը, այլ գերմաներենը: Գնդապետ Վերլեն, ով ինձ ուղեկցում էր այդ դիրքում, հրճվանքով ցուցադրում էր դրանք: Իր աշխատանքի համար նա արտիստի հպարտություն էր ապրում և ինձ պատմում էր իր երջանկության մասին, երբ Գերմանիան վերջապես հայտնվեց պատերազմում: Իր ողջ կյանքը, ասում էր նա, անցել էր ռազմական վարժանքների մեջ, և ինքը, ինչպես և գերմանացիների զգալի մասը, զորավարժություններից, բեմադրված մարտերից և այլ շինծու ռազմական գործողություններից ծանձրացել էր: Նրա տարիքը մոտենում էր հիսունի. նա գնդապետ էր և մտավախություն ուներ, որ իր կարիերան կավարտի առանց ճշմարիտ ռազմական փորձառության: Հետո հիանալի փոփոխություն տեղի ունեցավ, և հիմա ինքն այդտեղ է, կռվում է ամենահիսկական անգլիացի թշնամու դեմ, կրակում է իրական փամփուշտներով իրական զենքից: Վերլեն ամենևին էլ դաժան մարդ չէր. նա «gemütlich» էր՝ անբռնազբոս, պարկեշտ պարոն էր՝ Բադեն քաղաքից, միանգամայն հաճելի անձնավորություն և, սակայն, լի էր «*Der Tag*»-ի[29] ոգով: Պարզապես դա մի մարդ էր, ով իր ողջ կյանքում արհեստ էր սովորել և հիմա հրճվում էր այն կիրառելու հնարավորությունից: Վերլեն լույս էր սփռում գերմանական ռազմական բնավորության վրա, ինչպես նաև այն ուժերի, որ իրականում սանձազերծեցին պատերազմը: Ինձ թվում էր, թե ես Գերմանիայում եմ և ոչ թե Թուրքիայում: Հարցրի գնդապետին, թե ինչու նեղուցի այդ ափին այդքան քիչ թուրքեր կան:

- Երբ մենք կեսօրին անցնենք մյուս կողմը, այդ հարցը չեք տա, - ժպտալով պատասխանեց նա:

Անադոլու Համիդիեի դիրքն իդեալական էր. այն կանգնած էր ուղղակի ջրի եզրին և համենայն դեպս այդ պահին ուներ տասը թնդանոթ, որոնցից յուրաքանչյուրը նշանակետի վրա էր պահում Դարդանելի ողջ տարածքը: Եզրապատի վրայով բացվում էին ողջ նեղուցի համայնապատկերը և Կում Կալե ամրակետը, որ գտնվում էր մոտ տասնհինգ մղոն հեռավորության վրա՝ անմիջականորեն Դարդանելի մուտքի մոտ, պարզ երևում էր ու բացահայտ աչքի էր զարնում: Ոչ մի նավ չէր կարող մտնել այդ ջրերը առանց հայտնվելու այդ ամրակետի թնդանոթների ճիշտ դիմացը: Սակայն աշտարակն ինքնին տպավորություն չէր գործում. համենայն դեպս ինձ նման ոչ մասնագետի աչքին ամենևին տպավորիչ չէր: Դրա ցածրիկ եզրապատերի շեղաբլուրները պարզապես հողի գնդեր

էին և մնացել էին ճիշտ այն վիճակում, ինչպիսին նրանց թողել էին ֆրանսիացի շինարարները 1837 թվականին: Կարծիք կար, թե գերմանացիներն ամբողջովին նորոգել էին Դարդանելի պաշտպանական գիծը, բայց դա այդպես չէր: Անադոլու Համիդիեն պաշտպանող թնդանոթներն ավելի քան երեսուն տարվա պատմություն ունեին, բոլորը՝ Կրուպի 1885թ. մոդելի, և դրանցից մի քանիսի ժանգոտած արտաքին մասերը մատնում էին նրանց տարիքը: Դրանք կրակում էին ընդամենը ինը մղոն շառավղով, մինչդեռ դրանց դիմակայող ռազմանավերը կրակում էին տասը մղոն հեռավորությունից, իսկ «էլիզաբեթ թագուհին»՝ նույնիսկ տասնմեկ: Անադոլու Համիդիեի զենքերի առնչությամբ իմ բերած թվերը ստույգ են նաև մյուս բոլոր ամրակետերի համար: Այսպիսով, հեռահարության առումով առավելությունը Դաշնակիցների կողմն էր. «էլիզաբեթ թագուհին» մենակ ի զորու էր ոչնչացնելու բոլոր ամրակետերը: Զինամթերքը նույնպես սակավ էր: Եվրոպական ու ամերիկյան թերթերը գրում էին, թե Ռումինիայի տարածքով Գերմանիայից Դարդանել են մտնում փամփուշտներով ու հրացաններով լի գնացքներ: Այս ճանապարհորդության ընթացքում իմ հավաքած փաստերը, ինչպես նաև հետագա իրադարձությունները ապացուցեցին, որ դրանք հորինված պատմություններ էին: Իմ այցի ընթացքում Ադրիանապոլսից քիչ քանակով «կարմիր գլուխներ» բերվեցին՝ մետաղի միջով չթափանցող փամփուշտներ, որոնք կարելի էր օգտագործել միայն նավերից ցամաք իջնող ուժերի դեմ: Զինամթերքը տեղադրվել էր Համիդիեում, որը, սակայն, շատ չէր ու ոչ մի արժեք չուներ նավերի դեմ կռվելու համար: Ես շեշտն առանձնակի դնում եմ Համիդիեի վրա, քանի որ այն Դարդանելի կարևորագույն հենակետն էր: Ռմբակոծումների ողջ ընթացքում այն հայտնվեց Դաշնակիցների հրակոծության տակ ավելի հաճախ, քան որևէ այլ ամրակետ և ապահովեց հարձակվող նավերին հասցված վնասի 60 տոկոսը: Մարտի 18-ին սաստիկ ռմբակոծության ժամանակ «Բյուվեն»՝ ֆրանսիական ռազմանավը, կործանարար կրակոցներ ստացավ Անադոլու Համիդիեից: Հարձակման ընթացքում այդ ամրակետից վնաս հասցվեց նաև մի քանի այլ նավերի: Ամրակետի բոլոր սպաները գերմանացի էին, և նրանց 85 տոկոսը «Գեբեն» ու «Բրեսլաու» նավերի անձնակազմի անդամներն էին: Մենք նստեցինք մեքենա ու ռազմական ճանապարհով սլացանք Դարդանոս՝ անցնելով «Մեսուդիեի» բեկորների մոտով: Եթե Անադոլու Համիդիեի անձնակազմը կազմված էր միայն գերմանացիներից, ապա Դարդանոսինը ամբողջովին թուրքական էր: Դարդանոսի թնդանոթները քիչ ավելի ժամանակակից էին՝ Կրուպի 1905թ. մոդելի: Այդտեղ էր գտնվում նաև մինչ այդ տեղադրված գերմանական միակ նոր մարտկոցը՝ կազմված մի քանի

թնդանոթից, որոնք բերվել էին Բոսֆորում տեղակայված գերմանական ու թուրքական ռազմանավերից: Մեր այցից մի քանի օր առաջ Դաշնակիցների նավատորմը մտել էր Էրենքյոյի ծովածոց և ուժգին ռմբակոծության ենթարկել Դարդանոսը. հետևանքները նկատելի էին ամենուր: Գրեթե կես մղոն շառավղով հողն ամբողջովին այրված էր. հիշեցնում էր Ֆրանսիայի մարտադաշտերի լուսանկարները: Տարօրինակ կերպով, հակառակ այս դաժան ռմբակոծության, թնդանոթներն անվնաս էին մնացել: Ինչպես տեղեկացրին ինձ ուղեկցողներս, դրանցից և ոչ մեկը չէր վնասվել: «Պատերազմի ավարտից հետո, - ասաց գեներալ Մերթենսը, - մենք այստեղ զբոսաշրջության մեծ կենտրոն կկառուցենք՝ հյուրանոց և այլն, ու ձեզ՝ ամերիկացիներիդ, հնություններ կվաճառենք: Դրանք պեղելու համար շատ փորելու հարկ չի լինի. դա հիմա մեր փոխարեն անգլիական նավերն են անում»:

Ասվածը հնչեց որպես կատակ, սակայն ճշմարտություն էր: Դարդանոսը, որտեղ գտնվում էր ամրակետը, հին աշխարհի ամենահայտնի քաղաքներից էր: Հոմերոսի ժամանակներում այն Պրիամոսի թագավորության մաս էր կազմում: Դեռևս կանգուն էին շինությունների ու սյուների բեկորները: Դաշնակիցների ռումբերը հողից հանում էին բազմաթիվ հնամենի առարկաներ, որ գտնվում էին այնտեղ հազարավոր տարիներ: Բարեկամներիցս մեկը բարձրացրեց ջրի մի կուժ, որը, ըստ ամենայնի, օգտագործել էին Տրոյայի ժամանակներում: Անհետացած քաղաքակրթությունների վկայությունները պեղելու գործում ժամանակակից հրետանու արդյունավետությունն ապշեցուցիչ էր, թեև ոչ միշտ էին հնություններն անվնաս հայտնվում հողի մակերեսին:

Թուրք գեներալները հպարտությամբ էին պատմում, թե Դարդանոսն ինչպես էր մարտնչում բրիտանական նավերի դեմ: Նրանք ինձ ցույց տվեցին այն թնդանոթները, որոնք հատկապես դիպուկ էին գործել, ու սիրով շոյում էին դրանք: Անձամբ ինձ համար Ջևադը կանչեց լեյտենանտ Հասանին՝ թուրք սպային, ով պաշտպանել էր այդ դիրքերը. նա փոքրամարմին երիտասարդ էր՝ սև մազերով, սևաչյա, չափազանց համեստ: Նշանավոր գեներալների ներկայությունից նա կծկվել էր: Ջևադը թփթփացրեց նրա այտերին, մինչդեռ մեկ այլ թուրք սպա շոյում էր երիտասարդի մազերը. կարծես դա մի հավատարիմ շուն էր, որը լավ էր ծառայել: «Քեզնմանները հերոսներ են դառնում», - ասաց գեներալ Ջևադը: Նա խնդրեց Հասանին նկարագրել հարձակումը և դրան հաջորդած պաշտպանական գործողությունները: Հուզված լեյտենանտը ցածրաձայն պատմեց այդ մասին: Նա գրեթե լալիս էր՝ շոյված իր պետերի գնահատանքից: «Բանակում դու փայլուն ապագա կունենաս», - հեռանալուց առաջ ասաց

նրան գեներալ Ջևադը:

Տարաբախտ Հասանի «ապագան» իրականացավ երկու օր անց, երբ Դաշնակիցների նավատորմը ծեռնարկեց իր ամենահուժկու գրոհը: Ռումբերից մեկն ընկավ այն խրամատը, որտեղ Հասանն էր, և սպանեց նրան: Սակայն այն օրը, երբ ես հանդիպեցի նրան դիրքերում, գեներալների գովասանքը նրա անցյալ կամ ապագա տառապանքների դիմաց բավարար փոխհատուցում էր:

Ինձ զարմացնում էր այն փաստը, որ, չնայած զինամթերքի հսկայական քանակին, Դաշնակիցներին չէր հաջողվում հարվածել Դարդանոսի այդ ամրակետին: Բնականաբար սկզբում ես մտածեցի, որ նման ծախողումը բացատրվում է վատ նշանառությամբ, սակայն իմ գերմանացի ուղեկցողն ասաց, որ դա չէ պատճառը: Բոլոր այդ ոչ դիպուկ կրակոցները միայն ապացուցում էին, որ արագ տեղաշարժվող նավերը զրկված են բոլոր առավելություններից անշարժ ամրակետին կրակելիս: Սակայն Դարդանոսի ամրակետի պարագայում կար նաև մեկ այլ պատճառ. գերմանացիներն իմ ուշադրությունը հրավիրեցին ամրակետի դիրքին. այն կանգնած էր բլրի գագաթին՝ նավերի համար միանգամայն տեսանելի, և հորիզոնի մաս էր կազմում: Մինչդեռ Դարդանոսի ամրակետը, որի կողմն էր ձգվում գալարվող խրամատը, կազմված էր ընդամենը հինգ պողպատե աշտարակներից, որոնց վրա տեղադրված էին թնդանոթները: «Դրան հարվածելը չափազանց դժվար է. շատ հեշտ կարող է թվալ, սակայն դա խաբուսիկ տպավորություն է». «օպտիկական» այդ բացատրությունը ես այնքան էլ լավ չըմբռնեցի, սակայն պարզ էր, որ հորիզոնի գծի վրա ստեղծվում է յուրատեսակ խաբկանք, ուստի դիպուկ հարվածը թիրախին կարող է լինել սոսկ պատահականության արդյունք: Կրակողին կարող է թվալ, թե լավ նշան է բռնել, մինչդեռ նրա ականը կթռչի այլ ուղղությամբ: Դարդանոսի պատմությունը, իրոք, հրաշք էր թվում. մինչև մարտի 18-ը նավերը դրա ուղղությամբ արձակել էին մոտավորապես 4000 կրակոց: Բեկորներից մեկը դիպել էր ինչ-որ աշտարակի՝ թեթևակի քերծելով ներկը, մյուս աշտարակը հարվածից փոքր-ինչ թեքվել էր, երրորդին հարվածել էին հիմքի մոտ և դրանից պոկել մարդկային ծեռքի չափ մի բեկոր, սակայն թնդանոթներից և ոչ մեկը նույնիսկ թեթևակի վնասված չէր: Գրոհի ընթացքում սպանվել էր ութ հոգի, այդ թվում՝ լեյտենանտ Հասանը, մոտավորապես քառասունը վիրավորվել էր: Դա էր ողջ վնասը: «Օպտիկական խաբկանքը փրկեց Դարդանոսը», - ասաց գերմանացիներից մեկը:

ԳԼՈՒԽ XVIII

Դաշնակիցների նավատորմը հեռանում է՝ հաղթանակին ընդհուպ մոտեցած

Մենք կրկին ավտոմեքենա նստեցինք ու շարժվեցինք ափի երկայնքով: Ինձ ուղեկցողները ուշադրությունս հրավիրեցին ականապատված դաշտերին, որոնք գրեթե յոթ մղոն երկարությամբ ձգվում էին Չանաքից դեպի հարավ: Այդ հատվածում գերմանացիներն ու թուրքերը տեղադրել էին մոտ 400 ական: Նրանք անթաքույց հաճույքով ինձ տեղեկացրին, որ այդ մահաբեր սարքերի զգալի մասը «տրամադրել են» ռուսները: Ամեն օր ռուսական տորպեդանավերն ականներ էին տեղադրում Սև ծովից դեպի Բոսֆոր տանող հատվածում՝ այն հույսով, որ ջրի հոսքը դրանք կքշի դեպի Թուրքիա, և այնտեղ ականները կկատարեն իրենց առաջադրանքը: Ամեն առավոտ թուրքական ու գերմանական ականորսները դրանք հանում էին ջրից ու տեղադրում Դարդանելի նեղուցում:

Էրենքյոյի դիրքերը նույնպես ենթարկվել էին հուժկու ռմբակոծությունների, սակայն մեծ վնաս չէին կրել: Ի տարբերություն Դարդանոսի՝ Էրենքյոյը գտնվում էր սարի հետևում և ծովից անտեսանելի էր: Ինձ ասացին նաև, որ Էրենքյոյն ամրացնելու համար թուրքերը հարկադրված էին ամբողջովին զինաթափել Չանաքից Նագարա ձգվող հատվածում գտնվող ամրակետերը: Այդ էր պատճառը, որ հիմա Դարդանելի նշված մասում տեղակայված ամրակետերը փաստորեն անզեն էին: Հիշյալ նպատակի համար այդտեղից տեղափոխված թնդանոթները Կրուպի հնաոճ՝ 1885 թվականի նմուշներ էին:

Էրենքյոյից հարավ՝ ճանապարհամերձ բլուրների վրա, գերմանացիները նորամուծություն էին մտցրել. գտել էին Բուլղարական պատերազմից մնացած մի քանի ոչ խոշոր թնդանոթներ՝ դրանք տեղադրելով բետոնե հիմքի վրա: Մարտկոցներից յուրաքանչյուրն ուներ չորս-հինգ նման ամրակետ, ու երբ ավելի մոտեցա, նկատեցի, որ դրանց զգալի մասը ոչ մի տեսակի թնդանոթ չունի: Ավելի զարմանալի էր տասնվեց, եթե չեմ սխալվում, ցուլերի հոտը: Ցուլերը ներգրավված էին մարտական գործողություններում: Ցուլերը, նշված փոքր թնդանոթներից մեկը քաշելով, տեղափոխում էին տեղից տեղ: Ըստ երևույթին՝ դա պաշտպանական ծրագրի մի մասն էր: Այն պահին, երբ պարզվում էր, որ այդ կետը դարձել է նավերի թիրախ, թնդանոթները ցուլերի օգնությամբ տեղափոխում էին մեկ այլ ամրակետ:

«Մենք նույնիսկ սրանից էլ հաջող մտահղացումներ ունենք», - ասաց սպաներից մեկը: Մեզ մոտ կանչվեց մի հիսնապետ, ով զեկուցեց իր գործողությունների մասին: Նա պատասխանատու էր մի սարքի համար, որը հեռվից իրական թնդանոթի տեսք ուներ: Սակայն երբ այն մոտիկից զննեցի, պարզվեց, որ դա կոյուղու խողովակի երկարավուն հատված է: Բլրի հետևում, անգլիացիների նավատորմից լիովին թաքնված, տեղադրված էր թնդանոթը, որից կրակում էր հիսնապետը: Երկու դիրքերի միջև հեռախոսակապ էր հաստատված: Երբ տրվում էր կրակելու հրաման, իրական թնդանոթից արձակվում էր կրակոցը, իսկ կոյուղու խողովակի. պատասխանատուն այրում էր մի քանի գրամ սև փոշի, որից լավ տեսանելի սև ամպ էր բարձրանում: Բնականաբար անգլիացիներն ու ֆրանսիացիներն իրենց նավերից կենթադրեին, թե իրենց ուղղությամբ կրակում են ծխամպի կետից, և նրանց ուշադրությունը կենտրոնանում էր հենց այդ կետի վրա: Կեղծ թնդանոթի շուրջ հողն ամբողջովին փոսերի էր վերածվել: Ինձ ասացին, որ այդպիսով պատասխանատու հիսնապետն իր վրա էր հրավիրել ավելի քան 500 կրակոց, մինդեռ իսկական թնդանոթը մնացել էր աննկատ ու անվնաս:

Երենքյոյից մենք մեքենայով վերադարձանք գեներալ Զևադի շտաբկայան, որտեղ և նախաճաշեցինք: Զևադն ինձ ուղեկցեց դիտակետ, որտեղից աչքերիս առջև բացվեց Էգեյան ծովի անծայրածիր կապույտը: Այդտեղից երևում էր Դարդանելի մուտքը. Սեդ-ուլ-Բահրը և Կում Կալեն հառնում էին որպես նեղուցի պահապաններ, իսկ նրանց միջև ծփում էր արևի տակ շողացող ջուրը: Հեռվում նշմարվում էին անգլիական ու ֆրանսիական փառավոր նավերը, որոնք շարժվում էին նեղուցի մուտքի երկայնքով, իսկ փոքր-ինչ ավելի հեռու երևում էր Թենեդոս կղզին, որի թիկունքում, ինչպես մեզ հայտնի էր, թաքնվում էր ավելի մեծ նավատորմ: Բնականաբար այդ տեսարանը հազարավոր պատմական ու առասպելական պատմությունների հուշեր էր արթնացնում: Թերևս աշխարհում գոյություն չունի երկրորդ նման վայր, որն այդ աստիճանի բանաստեղծական, ռոմանտիկ լինի: Իմ թուրք ուղեկցողը՝ գեներալ Զևադը, նույնպես զգաց այդ ոգին. վերցնելով հեռադիտակը՝ նա հայացքն ուղղեց մոտ վեց մղոն հեռավորությամբ գտնվող մի դժգույն կետի:

- Նայե՛ք այն կետին,- ասաց նա՝ ինձ հանձնելով հեռադիտակը: - Գիտե՞ք, թե դա ինչ է:

Ես նայեցի, սակայն ավազե ծովափն անծանոթ էր ինձ:

- Դա Տրոյայի հարթավայրն է, - ասաց նա,- իսկ այն գալարվող գետը, - ավելացրեց, - մենք՝ թուրքերս, կոչում ենք Մենդերե, իսկ հռոմեացիներին այն հայտնի էր որպես Սքամադեր: Մեր թիկունքում՝ մի քանի մղոն

հեռավորության վրա, Իդա լեռն է:

Հետո նա հեռադիտակը կրկին շրջեց ծովի կողմը, զննեց այն մասը, որտեղ բրիտանական նավերն էին, և կրկին խնդրեց ինձ նայել մի կետի: Աչքերիս առջև անմիջապես երևաց մի հիասքանչ անգլիական ռազմանավ՝ պատրաստ մարտի: Այն անշտապ սահում էր առաջ պարեկություն անող զինվորի նման:

- Դա, - ասաց գեներալ Ջևադը, - «Ագամեմնոնն է». կրակե՞մ դրա վրա, - հարցրեց ինձ:

- Այո՛, եթե խոստանում եք նավին չդիպչել, - պատասխանեցի ես:

Նախաճաշեցինք շտաբ-կայանում, որտեղ մեզ միացան ծովակալ Ուզդոմը, գեներալ Մերթենսը և գեներալ Պոմյանկովսկին՝ Կոստանդնուպոլսում Ավստրիայի ռազմական կցորդը: Զրույցի ընթացքում իշխող տրամադրությունը աներկբա վստահությունն էր ապագայի հանդեպ: Ինչ էլ մտածեին Կոստանդնուպոլսում գտնվող դիվանագետներն ու քաղաքական գործիչները, այդ մարդիկ՝ թուրքերն ու գերմանացիները, ոչ մի կասկած չունեին (համենայն դեպս խոսակցության մեջ դա չէր զգացվում), որ Դաշնակիցների նավատորմը չի անցնի իրենց պաշտպանական դիրքերով: Ամենից շատ նրանք ցանկանում էին, որ թշնամին ձեռնարկի ևս մեկ գրոհ: «Եթե թեկուզ մի՞ հնարավորություն լինի «էլիզաբեթ թագուհու» վրա կրակելու», - ոգևորված ասաց գերմանացիներից մեկը՝ նկատի ունենալով բրիտանական նավատորմի ամենամեծ նավը, որն այդ պահին կառանված էր նեղուցի մուտքի մոտ: Որքան ավելի էր պակասում Հռենոսի գինու քանակը, այնքան ավելի էր սաստկանում նրանց կռվելու ցանկությունը: «Եթե միայն այդ հիմարները փորձեն ափ իջնել...», - բացականչեց մյուսը:

Թուրք և գերմանացի սպաներն ասես մրցում էին միմյանց հետ՝ արտահայտելով ամեն ինչ կործանելու իրենց մոլուցքը: Ըստ ամենայնի՝ ասվածի զգալի մասը հոխորտանք էր՝ ինձ վրա տպավորություն գործելու համար: Իրականում ես գաղտնի տեղեկություններ ունեի, որ այդ իրավիճակին տված նրանց ճիշտ գնահատականը այդքան լավատեսական չէր: Սակայն նրանք հայտարարում էին, թե պատերազմում անգլիական ու գերմանական նավատորմերի համար իրենց ուժերը չափելու իրական հնարավորություն չի ստեղծվում, այդ իսկ պատճառով գերմանացիները կողջունեն Դարդանելում ստեղծված հնարավորությունը:

Անատոլիական կողմի կարևոր կետերն այցելելուց հետո մենք նախաճաշեցինք ու նավակով ուղևորվեցինք Գալիպոլիի թերակղզի: Ճանապարհին քիչ էր մնում լուրջ փորձանքի հանդիպեինք: Երբ մոտենում էինք

Գալիպոլիի ափին, նավավարին հարցրինք՝ գիտի արդյոք, թե որտեղ են գտնվում ականապատված տարածքները, և կարող է մեզ անցկացնել ջրանցքով: «Այո՛», - պատասխանեց նա ու նավը տարավ ուղիղ դեպի ականները: Բարեբախտաբար, ուղեկիցներս ճիշտ ժամանակին նկատեցին նրա սխալը, և մենք բարեհաջող ժամանեցինք Քիլիդ-ուլ-Բահր: Այստեղ գտնվող մարտկոցները գրեթե նույն վիճակում էին, ինչ մյուս ափում և նեղուցի հիմնական պաշտպանական միջոցն էին: Ոչ մասնագետի աչքին այստեղ ամեն բան կարող էր հիանալի վիճակում երևալ, բացառությամբ այն փաստի, որ հրետանին հնացած մոդելի էր, իսկ զինամթերքը՝ անբավարար: Այստեղ հուժկու ռմբակոծության հետքեր կային: Թեև թնդանոթները չէին վնասվել, սակայն դիրքերը չորս կողմից շրջապատված էին ռումբերի առաջացրած փոսերով: Թուրք և գերմանացի ուղեկցողները մտահոգ զննում էին ավերածության հետքերը և հիացմունքով արտահայտվում Դաշնակիցների ճշգրիտ նշանառության մասին:

«Այդպիսի հեռավորությունից ինչպե՞ս են այդքան դիպուկ կրակել». այս հարցն էին նրանք տալիս միմյանց: Հատկանշական էր, որ նշված կրակոցներն արձակվել էին ոչ թե նեղուցի մոտ գտնվող նավերից, այլ այն նավերից, որոնք տեղակայված էին էգեյան ծովում՝ Գալիպոլիի թերակղզու մյուս կողմում: Կրակողները ոչ միայն չէին կարող տեսնել թիրախը, այլև կրակել էին մոտավորապես տասը մղոն հեռավորությունից, սարերի վրայով, և այդուհանդերձ նրանց զարկերը գրեթե հասել էին Քիլիդ-ուլ-Բահրի դիրքերին: Այդ օրը, սակայն, տեղանքը խաղաղ էր, ռմբակոծություններ չեղան: Հատուկ ինձ համար սպաները թնդանոթ սպասարկող անձնակազմին հրամայեցին կատարել մարտական բոլոր գործողությունները, որպեսզի ես լիակատար պատկերացում ունենամ թուրքերի գործողությունների մասին: Հրետանավորները հիմա մտովի պատկերացնում էին, թե անգլիական նավերը մոտենում են, նրանց թնդանոթներն ուղղված են Մարգարեի հետևորդների վրա: Շեփորահարը հնչեցրեց ազդանշանը, և ողջ անձնակազմը զբաղեցրեց նախանշված տեղերը. նրանցից ոմանք քաշ են տալիս ականները, մյուսները բացում են թնդանոթների փողերը, մյուսները զբաղված են նշանառությամբ, ծգում են լիսեռները, ոմանք էլ ականները տեղադրում են թնդանոթների մեջ: Ամեն բան արվում է ջանասիրաբար: Զգացվում է, որ գերմանացիները հիանալի հրահանգիչներ են եղել, սակայն դա ավելին էր, քան գերմանական ճշգրտությունը. մարդկանց դեմքերը վառվում էին մոլեռանդությունից, և դա ոգեշնչում էր թուրք զինվորներին: Նրանք անմիջապես պատկերացնում են, թե կրակում են անհավատ անգլիացիների վրա, և վարժությունը

միանգամայն հավաստի է ստացվում: Կրակոցներից բարձր հնչում է նրանց հրամանատարի երգանման աղոթք-կանչը, որով մահմեդականները տասներեք դար շարունակ նետվում են կռվի մեջ՝ «Չկա Աստված Ալլահից բացի, և Մուհամեդը նրա Մարգարեն է»:

Երբ նայում էի կռվելու մոլուցքով լցված այս մարդկանց ու տեսնում նրանց դեմքերին գրված անթաքույց ատելությունը «անհավատների» հանդեպ, նորովի էի ընկալում առավոտյան գերմանացիների արտահայտած մտքի արդարացիությունը՝ թուրք ու գերմանացի զինվորներին անհրաժեշտ է իրարից հեռու պահել: Վստահ եմ, որ հակառակ դեպքում առնվազն մեկ «սրբազան պատերազմ» հաջողությամբ կավարտվեր, և որ թուրքերը քրիստոնյաների հանդեպ ունեցած իրենց ատելությունը կթափեին նրանց վրա, ովքեր այդ ժամանակ մոտակայքում կլինեին՝ մի պահ անտեսելով, որ նրանք դաշնակիցներ են:

Նույն օրը երեկոյան ես վերադարձա Կոստանդնուպոլիս, իսկ երկու օր անց՝ մարտի 18-ին, Դաշնակիցների նավատորմը ձեռնարկեց իր ամենախոշոր գրոհը: Ինչպես հայտնի է աշխարհին, այդ գրոհը կործանարար եղավ Դաշնակիցների համար. կործանվեցին «Բյուվե», «Օվկիանոս» ու «Անհաղթ» նավերը, և ևս չորսը լուրջ վնասվածքներ ստացան: Մարտի 18-ի ճակատամարտում ներգրավված տասնվեց նավերից յոթը մշտապես կամ ժամանակավորապես դուրս եկավ շարքից: Բնականաբար գերմանացիներն ու թուրքերը հրճված էին իրենց հաղթանակով: Ոստիկանությունը շրջում էր քաղաքում և բնակիչներին հրամայում հաղթանակի պատվին տներում դրոշներ տեղադրել: Թուրքերն այնքան ընդունակ չէին հայրենասիրության կամ որևէ տեսակի ոգևորության, որ առանց հատուկ հրամանի երբեք չէին զարդարի իրենց տները: Իրականում ո՛չ թուրքերը, ո՛չ էլ գերմանացիները այս խանդավառությունը լուրջ չէին ընդունում, քանզի վստահ չէին, որ իրո՛ք հաղթել են: Շատերը դեռ հավատում էին, թե դաշնակից ուժերին կհաջողվի նեղուցը գրոհով գրավել: Միակ հարցը, ասում էին նրանք, այն է, թե արդյոք Անտանտը պատրա՞ստ է անհրաժեշտ քանակով նավեր զոհաբերել: Ո՛չ Վանգենհայմը և ո՛չ էլ Պալավիչինին չէին հավատում, թե մարտի 18-ի աղետալի դեպքերը կկանգնեցնեն ռազմածովային գրոհները, և մի քանի օր շարունակ տագնապով սպասում էին նավատորմի վերադարձին: Օրեր, շաբաթներ շարունակ իրավիճակը ծայրաստիճան լարված էր: Բոլորս սպասում էինք նոր գրոհների, սակայն փառապանծ արմադան այդպես էլ չվերադարձավ:

Ինձ հաճախ են հարցնում՝ արդյոք Դաշնակիցների նավատորմը

պետք է վերադառնար: Դաշնակիցների ուժերն իրո՞ք ի զորու էին գրավելու Կոստանդնուպոլիսը: Իմ կարծիքը մեծ արժեք չունի, քանի որ ես այդ հարցերում մասնագետ չեմ, սակայն կարող եմ մեջբերել գերմանացի գեներալների ու ծովակալների, ինչպես նաև թուրքերի կարծիքը, ովքեր, բացի էնվերից, վստահ էին, որ Դաշնակիցներին դա կհաջողվի: Եվ ինձ թվում է, որ էնվերի լավատեսությունը պարզապես շինծու էր, դերասանություն: Ասածս ոչ թե իմ անձնական կարծիքն է, այլ Թուրքիայում գտնվող մասնագետ պաշտոնյաներինը: «Յուրյուքի» տախտակամածի վրա մեր ունեցած զրույցի ընթացքում էնվերն ինձ ասաց, որ նա ունի «շատ զենք ու զինամթերք», սակայն դա իրականությանը չէր համապատասխանում: Քարտեզի վրա պարզորոշ նկատելի է, թե ինչու Թուրքիան այդ ժամանակահատվածում Գերմանիայից կամ Ավստրիայից զինամթերք չէր ստանում: Իրականում Թուրքիան ամբողջովին կտրված էր իր դաշնակիցներից, ճիշտ այնպես, ինչպես Ռուսաստանը: Կոստանդնուպոլսից մինչև Գերմանիա կար երկու երկաթուղի. մեկն անցնում էր Բուլղարիայի, Սերբիայի տարածքով: Բուլղարիան դաշնակից չէր, ու թեև աչք էր փակում հրացանների ու փամփուշտների տեղափոխման վրա, սակայն այդ գիծն անհնար էր օգտագործել, քանի որ Սերբիան, որը վերահսկում էր Նիշից Բելգրադ տանող կենսական նշանակություն ունեցող հատվածը, դեռ զավթված չէր: Մյուս երկաթուղին անցնում էր Ռումինիայով Բուխարեստով: Այդ ուղին անկախ էր Սերբիայից և ռումինական կառավարության համաձայնության դեպքում կարող էր ուղիղ ճանապարհ դառնալ Կրուպսից Դարդանել: Ելնելով այն հանգամանքից, որ զենքը կարելի էր փոխադրել ռումինական կառավարության լռելյայն համաձայնությամբ, հուշում էր, որ զենքն ու զինամթերքը գալիս են հենց այդ ճանապարհով: Ֆրանսիացիներն ու անգլիացիները անդադար բողոքներ էին ներկայացնում Բուխարեստին չեզոքությունը խախտելու համար, սակայն ի պատասխան ստանում էին միայն զայրալից ժխտումներ գերմանացիների կողմից նշված երկաթուղին երբևէ օգտագործելու վերաբերյալ: Հիմա արդեն կասկած չկա, որ ռումինական կառավարությունը միանգամայն արդարացի էր այդ հարցում: Չի բացառվում, որ գերմանացիներն իրենք էին տարածել այդ լուրերը, որպեսզի Դաշնակիցները հավատան, թե իրենց զինամթերքի պաշարներն անսպառ են:

Ենթադրենք, թե Դաշնակիցների նավատորմը վերադառնար, ասենք մարտի 19-ին: Ի՞նչ կլիներ այդ դեպքում: Փաստ է, որ պաշտպանական դիրքերում զինամթերք գրեթե չէր մնացել: Նրանք հասել էին դիմադրության վերջնակետին, երբ մարտի 18-ի կեսօրին բրիտանական նավա-

տորմը շրջադարձ կատարեց ու հեռացավ: Ես թույլտվություն էի ստացել պարոն Ջորջ Ա. Շրեյների՝ «Associated Press»-ի ամերիկացի ճանաչված թղթակցի համար, որպեսզի այդ կապակցությամբ այցելեր Դարդանել: Մարտի 18-ի երեկոյան թղթակիցն այդ իրավիճակը քննարկեց գեներալ Մերքենսի հետ, ով նեղուցի պաշտպանական գծի տեխնիկական ապահովման գլխավոր պատասխանատուն էր: Գեներալ Մերքենսը խոստովանեց, որ պաշտպանվողներին բավական մռայլ հեռանկար է սպասում: «Մենք սպասում էինք, որ բրիտանական նավատորմը կվերադառնա հաջորդ օրն առավոտյան, - ասաց նա, - և եթե նրանք գային, ապա մենք կկարողանայինք պաշտպանվել միայն մի քանի ժամ»:

Գեներալ Մերքենսն ուղղակիորեն չհայտարարեց, թե զինամթերքը փաստորեն սպառված է, սակայն պարոն Շրեյները պարզեց, որ դա այդպես է: Փաստն այն էր, որ Համիդիե ամրակետում՝ Դարդանելի ասիական մասում գտնվող պաշտպանական ամենահզոր կետում, մնացել էին զրահահատ ընդամենը տասնյոթ արկ, իսկ Քիլիդ-ուլ-Բահրում, որը եվրոպական մասի պաշտպանական ամենահզոր կետն էր՝ տասը:

- Խորհուրդ կտամ վաղը վեր կենալ առավոտյան ժամը վեցին, - ասաց գեներալ Մերքենսը, - և նայել Անատոլիայի սարերին: Կտեսնեք, թե մենք ինչ ենք մտադիր անել:

Պաշտպանական բոլոր դիրքերում զինվորներին հրամայված էր կրակել մինչև վերջին փամփուշտը, այնուհետև լքել դիրքերը: Երբ ամրակետերը լռեն, Դաշնակիցների գործը կհեշտանա. նրանց խոչընդոտող միակ գործոնը կլինի ականապատված տարածքը, որը ձգվում էր մոտավորապես երկու մղոն էրենքյոյից հյուսիս՝ դեպի Քիլիդ-ուլ-Բահր: Դաշնակիցների նավատորմն ուներ բազում ականորս սարքեր, որոնք մի քանի ժամում կմաքրեին նեղուցը: Ինչպես արդեն նշել էի, Չանաքից հյուսիս տեղադրված էր մի քանի թնդանոթ, սակայն դրանք հին էին՝ 1878թ. մոդելի, և չէին կարող կրակել արկերով, որոնք ներթափանցում են ժամանակակից մետաղյա սարքերի միջով: Նագարայից հյուսիս միայն երկու մարտկոց կար, երկուսն էլ՝ դեռևս 1835 թվականի: Եվ այսպես, եթե լռեցվեին առաջին գծի պաշտպանական դիրքերը, գերմանական ու թուրքական ռազմանավերից բացի ոչինչ չէր խանգարի Դաշնակիցներին հասնել Կոստանդնուպոլիս: Թուրք-գերմանական ողջ նավատորմի առաջին կարգի միակ ռազմանավը «Գեբենն» էր, սակայն նա էլ չէր կարողանա դիմադրել «էլիզաբեթ թագուհուն»: Հակառակորդ նավատորմերի հզորության անհամաչափությունն այնքան ահռելի էր, որ խիստ կասկածելի էր դառնում, թե այդ ընդհարումը երբևէ տեղի կունենա: Այդ իրավիճակում Դաշնակիցների նավատորմը կհայտնվեր Կոստանդնուպոլսի

մոտակայքում մարտի 20-ի առավոտյան: Ի՞նչ էր լինելու հետո: Մենք բազմաթիվ քննարկումներ լսեցինք այդ զուտ ծովային հարձակման արդարացված լինելու մասին: Ինձ հետ զրուցելիս Էնվերը շեշտը դնում էր առանց բավականաչափ ցամաքային ուժերի աջակցության Կոստանդնուպոլիս նավատորմ ուղարկելու փաստի անհեթեթության վրա: Դարդանելի ռազմական գործողությունների վերաբերյալ կատարված քննադատության զգալի մասը վերաբերում էր հենց այդ փաստին: Այնուամենայնիվ, ըստ իս, այդ զուտ ծովային գրոհն արդարացված էր: Այս եզրակացությանը ես հանգում եմ՝ ելնելով Թուրքիայում այդ պահին տիրող քաղաքական իրավիճակից: Սովորական պայմաններում նման ձեռնարկը հավանաբար անմտություն կլիներ, սակայն Կոստանդնուպոլսում տիրող քաղաքական իրավիճակը հեռու էր սովորականից: Այդ պահին Թուրքիայում հիմնավորապես կայացած կառավարություն գոյություն չուներ: Քաղաքական կոմիտեն, որի անդամների թիվը չէր գերազանցում քառասունը, և որը ղեկավարում էին Թալեաթը, Էնվերն ու Ջեմալը, վերահսկում էր կենտրոնական կառավարությանը, սակայն կայսրության տարածքում վերջինիս հեղինակությունը հետզհետե ավելի ու ավելի էր թուլանում: Իրականում 1915թ. մարտի 18-ին, երբ Դաշնակիցների նավատորմը կասեցրեց գրոհը, ողջ Օսմանյան կայսրությունը կործանման եզրին էր: Ամենուրեք հայտնվել էին նորելուկ հավակնոտ իշխանիկներ, ովքեր սպասում էին երկրի փլուզմանը, որպեսզի հափշտակեն ժառանգության իրենց բաժինը: Ինչպես արդեն նշեցի, Ջեմալը Սիրիայում, փաստորեն, արդեն հիմնել էր անկախ կառավարություն: Զմյուռնիայում Ռահմի բեյը՝ գեներալ նահանգապետը, հաճախ արհամարհում էր մայրաքաղաքի իշխանություններին: Ադրիանապոլսում ժամանակի ամենախիզախ թուրքերից մեկը հաջի Ադիլը, դավեր էր նյութում՝ սեփական կառավարություն հիմնելու համար: Արաբիան փաստորեն արդեն անկախացել էր: Օսմանյան հպատակների շրջանում արագ տարածվում էր ըմբոստության ոգին: Հույներն ու հայերը նույնպես կողջունեին Դաշնակիցներին աջակցելու հնարավորությունը: Թվում էր, թե առկա ֆինանսական ու արդյունաբերական պայմաններն անխուսափելի են դարձնում հեղափոխությունը: Բազում ագարակատերեր գործադուլ էին հայտարարել: Նրանք սերմացու չունեին և որպես նվեր այն կառավարությունից էլ չէին ընդունի, քանզի, ինչպես իրենք էին պատճառաբանում, այն պահին, երբ ցորենը հասունանար, բանակն այն կբռնագրավեր: Ինչ վերաբերում էր մայրաքաղաքին, ապա Կոստանդնուպոլսի բնակչությունը և թուրք հասարակության ողջամիտ մասը ոչ միայն չէին դիմադրի Դաշնակիցներին, այլև գրկաբաց կողջունեին նրանց: Թուրքերն աղոթում էին, որ բրիտանա-

ցիներն ու ֆրանսիացիները գրավեն Կոստանդնուպոլիսը, քանի որ դա նրանց կազատեր այն կառավարող ավազակախմբից, նաև ատելի գերմանացիներից, խաղաղություն կհաստատեր և վերջ կդներ նրանց թշվառ գոյությանը:

Ոչ ոք դա այնքան լավ չէր գիտակցում, որքան Թալեաթը: Նա պատրաստ էր հեռանալու այն պահին, երբ Դաշնակիցները հայտնվեին քաղաքի մերձակայքում: Արդեն մի քանի ամիս էր, ինչ թուրք առաջնորդները նախանձով նայում էին «Միներվա» ավտոմեքենային, որն այն օրվանից, երբ Թուրքիան մտավ պատերազմի մեջ, կանգնած էր բելգիական առաքելության շենքի առջև: Թալեաթը վերջապես ստացավ պանծալի մրցանակը: Նա ինչ-որ տեղից ձեռք էր բերել երկրորդ ավտոմեքենան, որը լցված էր պահեստային անիվներով, վառելանյութով և երկար ճանապարհորդության համար անհրաժեշտ բոլոր պարագաներով: Այդ մեքենային պետք է ուղեկցեր ավելի հավակնոտ մյուս մեքենան՝ որպես «թիկնապահ»: Այդ երկու մեքենաները Թալեաթը կանգնեցրել էր քաղաքի ասիական մասում՝ մշտապես դրանց մոտակայքում գտնվող վարորդների հետ: Ամեն ինչ պատրաստ էր անհապաղ Փոքր Ասիա տեղափոխվելու համար, սակայն Դաշնակիցների հսկա արմադան այդպես էլ չվերադարձավ:

Այդ հիշարժան պարտությունից գրեթե մեկ շաբաթ անց ես այցելեցի Գերմանիայի դեսպանատուն: Վանգենհայմը հյուրընկալում էր ինչ-որ բարձրաստիճան անձի և ցանկություն էր հայտնել, որ ես հանդիպեմ նրա հետ: Ես մտա Վանգենհայմի աշխատասենյակ: Այնտեղ էր վերջերս Բելգիայից վերադարձած ֆոն դեր Գոլց փաշան, ով Բելգիայում կատարում էր կառավարչի պարտականությունները: Խոստովանեմ, որ ինձ համար դժվար էր համապատասխանեցնել նրա մասին տարածվող լուրերը այն Գոլցի հետ, ում հանդիպեցի ոչ պաշտոնական պայմաններում: Այդ առավոտ զուսպ, ակնոցավոր այս պարոնը բավական անվնաս ու պարկեշտ մարդու տպավորություն գործեց: Նա յոթանասունչորս տարեկան էր, սակայն շատ ավելի երիտասարդ էր երևում. մազերի ճերմակը գրեթե աննկատ էր, դեմքը՝ կնճիռներից զուրկ: Ես նրան վաթսունհինգից ավելի չէի կարծի: Պաշտոնյա գերմանացիներին բնորոշ կոշտությունը, կտրուկ շարժուձևն ու մեծամիտ արժանապատվությունը նրան հատուկ չէին: Ուներ երաժշտական խոր, հաճելի ձայն, շարժուձևը միանգամայն բարեկամական ու մեղմ էր: Նրա արտաքինում փքվածության միակ վկայությունը համազգեստն էր. նա հագնված էր որպես ֆելդմարշալ, կրծքին փայլում էին մեդալներն ու ոսկյա ժապավենը: Ֆոն դեր Գոլցը բացատրեց ու գրեթե ներողամտություն հայցեց իր պարգևների համար՝ նշելով, որ հենց նոր է վերադարձել սուլթանի հետ ունեցած տեսակցությունից:

Նա Կոստանդնուպոլիս էր ժամանել սուլթանին Կայսեր ուղարկած մեդալը հանձնելու համար և իր հետ Բեռլին տանելու գնահատանքի նույնքան կարևոր մի դրսևորում սուլթանի կողմից Կայսերը՝ ի հավելումն սուլթանի նվիրած տասը հազար գլանակի:

Առժամանակ մենք երեքով զրուցում էինք, սուրճ խմում, գերմանական բլիթներ վայելում, ծխում գերմանական սիգարներ: Ինքս շատ չէի խոսում, սակայն ֆոն դեր Գոլցի ու Վանգենհայմի զրույցը լույս էր սփռում գերմանական մտածելակերպի վրա և հատկապես գերմանական ռազմական զեկույցների հավաստիության վրա: Նրանց ամենից ավելի հետաքրքրում էր Դարդանելի ճակատամարտի այն մասը, որը վերաբերում էր Անգլիայի բացարձակ անկեղծությանը սեփական կորուստների վերաբերյալ. նրանց ապշեցրել էր բրիտանական կառավարության պաշտոնական հայտարարությունն այն մասին, որ կործանվել է երեք նավ, իսկ ևս չորսը լրջորեն վնասվել է: Ես այդ հայտարարության մեջ միայն տեսնում էի բրիտանացիների բնական ցանկությունը հրապարակելու նույնիսկ ամենավատ լուրերը: Մենք՝ ամերիկացիներս, նույնպես այն կարծիքին ենք, որ դա լավագույն քաղաքականությունն է պատերազմի ժամանակ, սակայն նման բացահայտ բացատրությունը չէր կարող գոհացնել այդ իմաստուն ու լուրջ տևտոնացիներին. ո՛չ, Անգլիան ճշմարտությունը հայտնելու մեկ այլ խորքային նպատակ ունի, բայց ի՞նչ նպատակ...

- Es ist ausserordentlich! (աներևակայելի՛ է), - ասաց ֆոն դեր Գոլցը՝ նկատի ունենալով Անգլիայի կողմից սեփական պարտությունն ընդունելը:

- Es ist unerhört! (չլսված բան է), - հայտարարեց նույնքան ապշած Վանգենհայմը:

Այդ փորձառու դիվանագետներն առաջարկում էին բացատրություն բացատրության հետևից և ի վերջո եկան մի եզրակացության, որ հարիր էր ավելի նուրբ ռազմավարությանը: Անգլիան, համաձայնեցին նրանք, ոչ մի ցանկություն չուներ իրականացնելու այդ գրոհը, քանի որ հաջողության դեպքում հարկադրված կլիներ Կոստանդնուպոլիսը հանձնել ռուսներին, իսկ Անգլիայի ծրագրերի մեջ դա չէր մտնում: Հրապարակելով կորուստները՝ Անգլիան Ռուսաստանին ցույց տվեց խնդրի աներևակայելի բարդությունը և փաստորեն դրանով ապացուցեց ողջ ծեռնարկի անհնարին լինելը: Նման կորուստներից հետո Անգլիան ակնկալում էր Ռուսաստանը կհասկանա, որ Բրիտանիան անկեղծորեն փորձեց վերցնել այդ բաղձալի «պատերազմական մրցանակը», և չի պահանջի նորանոր զոհաբերություններ:

Պատերազմի այդ կարևոր դրվագի հետևանքն ի հայտ եկավ 1915-16 թվականների ձմռանը: Այս ժամանակամիջոցում Բուլղարիան արդեն

միացել էր Կենտրոնական տերություններին, Սերբիան զավթված էր, ու գերմանացիները ստացել էին ամբողջական ու անխափան երկաթուղային կապ Կոստանդնուպոլսից Ավստրիա և Գերմանիա: Կրուպի հսկայական թնդանոթները սկսեցին ժամանել այդ ճանապարհով՝ բոլորը նախատեսված Դարդանելի համար: Վերջին թողարկման տասնվեց խոշոր մարտկոցներ տեղադրվել էին նեղուցի մուտքի մոտ՝ ամբողջովին վերահսկելով Սեդ-ուլ-Բահրը: Գերմանիան թուրքերին վարկ տվեց հինգ հարյուր միլիոն մարկ, որի զգալի մասը ծախսվեց այդ անփոխարինելի երկաթուղու պաշտպանության համար: Այն խղճուկ պաշտպանություն ունեցող նեղուցը, ուր ես այցելեցի 1915 թվականի մարտին, հիմա այլևս անխոցելի էր Հելիգոլանդի[30] նման: Չեմ կարծում, թե հիմա արդեն աշխարհի բոլոր նավատորմերը միասին կկարողանային զավթել Դարդանելի նեղուցը:

ԳԼՈՒԽ XIX

Պայքար երեք հազար խաղաղ բնակիչների համար

1915թ. մայիսի 2-ին ԱՄՆ դեսպանատուն ժամանեց Էնվերի օգնականը: Նա բերել էր մի ուղերձ, որը ես Էնվերի խնդրանքով պետք է փոխանցեի Ֆրանսիայի ու Մեծ Բրիտանիայի կառավարություններին: Այդ այցից մոտավորապես մեկ շաբաթ առաջ Դաշնակիցները ափհանում էին կատարել Գալիպոլիի թերակղզում: Հավանաբար նրանք եկել էին այն եզրակացության, որ միայն ծովային գրոհով անհնար է ոչնչացնել պաշտպանական դիրքերը և բացել ճանապարհ դեպի Կոստանդնուպոլիս: Եվ հիմա կազմել էին մեկ այլ ծրագիր՝ ցամաք ուղարկել մեծաթիվ զորք, որին ծովի կողմից կսատարեին նավերը: Մի քանի հազար ավստրալիացիներ ու նորզելանդացիներ արդեն խրամատներ էին փորել թերակղզում, և Կոստանդնուպոլսում տիրող լարվածությունը հիշեցնում էր այն իրավիճակը, որ տիրում էր երկու ամիս առաջ, երբ հայտնվեցին Դաշնակիցների նավերը:

Էնվերը տեղեկացնում էր, որ Դաշնակիցների ռմբակոծումները չափազանց վտանգավոր են. նրանք արհամարհում են միջազգային ընդունված կարգը, ըստ որի՝ նման ռմբակոծումները պետք է ուղղվեն միայն ռազմական ամրակետերի վրա: Նրա խոսքերով՝ բրիտանական ու ֆրանսիական ականներն ընկնում են ամենուր՝ ավերելով մահմեդական անպաշտպան գյուղերը, սպանելով հարյուրավոր անմեղ բնակիչների: Էնվերն ինձ խնդրում էր տեղեկացնել Դաշնակիցների կառավարություններին, որ նման վարվելակերպը պետք է անհապաղ դադարեցվի: Նա որոշել էր հավաքել Կոստանդնուպոլսում բնակվող Բրիտանիայի ու Ֆրանսիայի բոլոր քաղաքացիներին, տանել Գալիպոլիի թերակղզի և ցրել նրանց մահմեդական քաղաքներում ու գյուղերում: Այդ պարագայում Դաշնակիցները ռումբեր կնետեին ոչ միայն խաղաղ ու անպաշտպան մահմեդականների, այլև իրենց սեփական քաղաքացիների վրա: Էնվերի կարծիքով, ԱՄՆ դեսպանի կողմից բրիտանական ու ֆրանսիական կառավարություններին հաղորդած նման սպառնալիքը պետք է որ վերջ դներ «դաժանություններին»: Ինձ տրվում էր մի քանի օր՝ ասվածը Լոնդոն ու Փարիզ հաղորդելու համար:

Այդ օրերին Կոստանդնուպոլսում բնակվում էին Բրիտանիայի ու Ֆրանսիայի շուրջ երեք հազար քաղաքացիներ: Նրանց մեծ մասը պատկանում էր այսպես կոչված լևանտցիների դասին: Նրանք, գրեթե բոլորը, ծնվել էին Թուրքիայում, և շատ դեպքերում նրանց ընտանիքների երկու

կամ ավելի սերունդներ ապրել էին այնտեղ: Եվրոպական քաղաքացիությունը նրանց գրեթե միակ կապն էր այն երկրի ժողովրդի հետ, որից սերված էին: Թուրքիայի խոշոր քաղաքներում մենք հաճախ հանդիպում էինք կանանց ու տղամարդկանց, ովքեր ծագումով ու ազգությամբ անգլիացի էին, սակայն իրենց լեզվով չէին խոսում, քանզի Լևանտում ընդունված լեզուն ֆրանսերենն էր: Նրանց մեծ մասն Անգլիայում կամ եվրոպական այլ երկրում երբեք չէր եղել. նրանք ունեին միայն մեկ հայրենի տուն, և այդ տունը Թուրքիան էր: Այն փաստը, որ լևանտցիները սովորաբար պահպանում էին իրենց մայր երկրի քաղաքացիությունը, հիմա նրանց վրիժառության թիրախ էր դարձրել թուրքերի ձեռքին: Բացի լևանտցիներից՝ Կոստանդնուպոլսում բնակվում էին բազմաթիվ անգլիացիներ ու ֆրանսիացիներ՝ դպրոցների ուսուցիչներ, միսիոներներ, գործարարներ ու առևտրականներ: Հիմա օսմանյան կառավարությունը մտադիր էր հավաքել նրանց բոլորին՝ նրանց, ովքեր անմիջականորեն կապված էին Անգլիայի ու Ֆրանսիայի հետ, և նրանց, ովքեր այդ երկրների հետ գրեթե առնչություն չունեին, ու տեղափոխել բոլորին Գալիպոլիի թերակղզու վտանգավոր մասը՝ դարձնելով Դաշնակիցների նավատորմի գործողությունների թիրախ:

Երբ ստացա այդ ապշեցուցիչ տեղեկությունները, բնականաբար, առաջին հարցս այն էր, թե Դաշնակիցների նավատորմն իրո՞ք ռմբակոծում է անպաշտպան քաղաքները: Եթե նրանք սպանում էին խաղաղ բնակչությանը՝ կանանց, երեխաներին ու տղամարդկանց նման ձևով, ենվերի կողմից առաջարկվող հատուցման եղանակը թերևս որոշ չափով արդարացված կլիներ: Սակայն ինձ անհավանական էր թվում, որ անգլիացիներն ու ֆրանսիացիները կարող են նման բարբարոսություն կատարել: Ես արդեն բազում նման բողոքներ էի ստացել թուրք պաշտոնյաներից, որոնց ստահոդ լինելը շուտով պարզվեց: Օրերս դոկտոր Մեյերը՝ Սուլեյման Նումանի՝ սուլթանի բժշկական անձնակազմի ղեկավարի առաջին օգնականը, տեղեկացրեց ինձ, թե բրիտանացիները ռմբակոծել են թուրքական մի հոսպիտալ ու սպանել 1000 վիրավորի: Երբ ես հետաքննեցի այդ գործը, պարզվեց, որ շինությունը փոքր-ինչ վնասվել էր, և սպանվել էր միայն մեկ մարդ: Հիմա ես այդ նույն կասկածներն ունեի, որ Դաշնակիցների բարբարոսությունների մասին շրջանառվող վերջին պատմությունները նույնքան ստահոդ են: Շուտով պարզվեց, որ իսկապես այդպես է. Դաշնակիցների նավատորմն ամենևին չէր ռմբակոծում մահմեդական գյուղերը: Բրիտանական մի քանի ռազմանավ տեղակայված էր Սարոսի ծոցում՝ էգեյան ծովի հարևանությամբ, թերակղզու արևմտյան մասում, և այդտեղից կրակում էր Գալիպոլի քաղաքի վրա: Քա-

ղաքների ողջ «ռմբակոծությունը» սահմանափակվում էր սոսկ այդ քաղաքով: Բրիտանացիները դրանով չէին խախտում քաղաքակիրթ ձևով պատերազմ վարելու օրենքները, քանի որ Գալիպոլիի քաղաքացիական բնակչությունը վաղուց արդեն տարհանվել էր, և թուրքերը ռազմական շտաբներ էին հաստատել որոշ տներում, որոնք ուղղակի դարձել էին Դաշնակիցների կրակոցների նշանակետը: Ինձ հայտնի չէ պատերազմական որևէ օրենք, որն արգելում է հարձակումը ռազմական շտաբկայանի վրա: Ինչ վերաբերում է սպանված խաղաղ բնակչության մասին պատմությանը՝ կանայք, տղամարդիկ ու երեխաներ, ապա դա նույնպես արտառոց չափազանցություն էր, քանի որ խաղաղ բնակչությունը վաղուց հեռացել էր այնտեղից, և բոլոր զոհերը պետք է որ լինեին կայսրության զինվորները:

Ես այդ վիճակը քննարկեցի պարոն Էռնեստ Ուայլի՝ Կոստանդնուպոլսի ամենահայտնի ֆրանսիացու, և պարոն Հոֆման Ֆիլիպի՝ մեր դեսպանության խորհրդականի հետ, և որոշեցի, որ անհապաղ պետք է գնամ Բարձր Դուռ ու բողոք ներկայացնեմ էնվերին:

Երբ տեղ հասա, Նախարարների խորհրդի նիստ էր ընթանում, սակայն էնվերը դուրս եկավ ինձ ընդառաջ: Նրա պահվածքը սովորականից ավելի ցուցադրական էր: Նա խիստ բարկացած տոնով սկսեց նկարագրել բրիտանացիների հարձակումը: Սա նույն անսասան էնվերը չէր, ում ճանաչում էի: «Այդ վախկոտ անգլիացիները, - բացականչեց նա, - երկար ժամանակ ջանում էին մտնել Դարդանել, սակայն չկարողացան: Իսկ հիմա տեսեք, թե ինչպես են վրեժ լուծում: Նրանց նավերը գաղտնաբար սողոսկում են նեղուցից այն կողմ գտնվող ծովածոցը, ուր մեր թնդանոթների համազարկերը նրանց չեն հասնում, և սարերի վրայով կրակում են մեր փոքր գյուղերի վրա՝ սպանելով անպաշտպան ծերունիներին, կանանց, երեխաներին ու ռմբակոծում են մեր հիվանդանոցները: Կարծում եք՝ մենք թույլ կտա՞նք նրանց այդկերպ վարվել: Բայց ի՞նչ կարող ենք անել. մեր թնդանոթները չեն կարող կրակել սարերի վրայով, և մենք հնարավորություն չունենք կռվի բռնվելու նրանց հետ: Եթե հնարավոր լիներ, մենք նրանց հե՛տ կշպրտեինք, ճիշտ այնպես, ինչպես մեկ ամիս առաջ դուրս մղեցինք նեղուցից: Մենք չունենք նավատորմ, որպեսզի կարողանանք ուղարկել Անգլիա՝ նրանց անպաշտպան քաղաքները ռմբակոծելու, ինչպես նրանք են վարվում մեր քաղաքների հետ, ուստի որոշել ենք բոլոր անգլիացիներին ու ֆրանսիացիներին տեղափոխել Գալիպոլի. թող իրենց քաղաքացիներին սպանեն մերոնց հետ հավասար»:

Ես նրան պատասխանեցի՝ եթե իրավիճակը լիներ նրա նկարագրածի նման, ապա վրդովվելու իրավունք կունենար: Ես էնվերի ուշադրությունը

հրավիրեցի այն փաստին, որ նրա խոսքերը իրականությանը չեն համապատասխանում. ինքը Դաշնակիցներին մեղադրում է այնպիսի հանցագործությունների համար, որ նրանք չեն գործել: «Սա ձեր կողմից հորինված ամենաբարբարոս բանն է, - ասացի ես, - բրիտանացիները բոլոր իրավունքներն ունեն ռմբակոծելու Գալիպոլիում գտնվող ռազմական շտաբկայանները»:

Սակայն իմ փաստարկը էնվերի վրա որևէ տպավորություն չգործեց: Իմ եզրահանգումն էր՝ նա վճռել է այդ քայլին դիմել ոչ թե որպես միջոց սեփական համաքաղաքացիներին պաշտպանելու համար, այլ՝ որովհետև նա և նրա համախոհները կուրացել էին ատելությունից: Այն փաստը, որ ավստրալիացիներն ու նորզելանդացիները բարեհաջող նավերից իջել էին ցամաք, արթնացրել էր նրանց ամենավայրագ բնազդները: Էնվերն ինքը ափհանման մասին հիշատակեց մեր զրույցի ընթացքում: Թեև փորձում էր անհոգ ձևանալ և ասաց, որ անգլիացիներին ու ֆրանսիացիներին շուտով «հետ կնետի» ծով, ես նկատեցի, որ նրա համար դա չափազանց ցավոտ թեմա է: Թուրքերը, ինչպես արդեն նշել եմ, իրենց հոգեբանությամբ խիստ պրիմիտիվ մարդիկ են, ուստի Գալիպոլիում բրիտանական զորքերի հայտնվելը իր իշխանության տակ գտնվող հարյուրավոր անմեղ բրիտանացիների սպանությամբ փոխհատուցելը, էնվերի պատկերացմամբ, միանգամայն տրամաբանական էր: Մեր զրույցի արդյունքում ես ընդամենը մի քանի զիջում ստացա. էնվերը համաձայնեց հետաձգել տեղահանությունները մինչև հինգշաբթի (զրույցը տեղի ունեցավ կիրակի օրը) և չվնասել այն բրիտանացիներին ու ֆրանսիացիներին, ովքեր որևէ կերպ կապված էին ամերիկյան հաստատությունների հետ: «Մյուսները պետք է մեկնեն». սա էր նրա վերջին խոսքը: «Ավելին, - հավելեց նա, - չենք ցանկանում նաև, որ Մարմարա ծովում գտնվող թշնամական սուզանավերը խորտակեն Դարդանել ուղարկած մեր փոխադրանավերը: Հետագայում մի քանի անգլիացի ու ֆրանսիացի կուղարկենք ամեն մի նավի վրա՝ որպես մեր զինվորներին պաշտպանելու միջոց»:

Երբ վերադարձա մեր դեսպանատուն, պարզվեց, որ նախատեսվող տեղահանման մասին լուրերն արդեն տարածվել են: Դրան հետևած զարմանքն ու հուսահատությունն աներևակայելի էին նույնիսկ այդ՝ մշտապես ցնցող լուրեր ստացող քաղաքի համար: Տարիներ շարունակ Լևանտում բնակվող եվրոպացիները կարծես թե յուրացրել էին տեղի զգացմունքայնությունը՝ հատկապես վախի ու սարսափի առումով, ու հիմա, երբ զրկվել էին իրենց դեսպանությունների պաշտպանությունից, նրանց սարսափը բազմապատկվել էր: ԱՄՆ դեսպանատունը սկսեց լցվել

ահաբեկված մարդկանցով. նրանք այնպես էին լալիս ու բղավում, կարծես իրենց տանելու էին գնդակահարության, և փրկության որևէ հնարավորություն այդ մարդկանց մտքով անգամ չէր անցնում: Սակայն նրանք պնդում էին, որ ես բացառություններ անեմ իրենց համար: Մեկը չի կարող գնալ, քանի որ ընտանիք ունի իր խնամքի տակ, մյուսը հիվանդ երեխա ունի, երրորդն ինքն է հիվանդ: Իմ ընդունարանը լցվել էր խելակորույս մայրերով, ովքեր աղերսում էին ազատել իրենց որդիներին, և կանանցով, ովքեր հատուկ վերաբերմունք էին հայցում իրենց ամուսինների համար: Աներևակայելի առաջարկներ էին անում՝ ես պետք է հրաժարական տամ իմ պաշտոնից որպես բողոքի ակցիա, նույնիսկ՝ սպառնամ, թե Միացյալ Նահանգները պատերազմ կհայտարարի Թուրքիային: Նրանք անդադար աղերսում էին տիկնոջս, ով ժամեր շարունակ լսում էր այդ մարդկանց պատմություններն ու ջանում էր հանգստացնել նրանց: Սակայն կային նաև այնպիսիք, ովքեր արիաբար էին տանում իրենց վիճակը: Էնվերի հետ ունեցած իմ զրույցից մեկ օր անց Բեդրին՝ ոստիկանապետը, սկսեց ծերբակալել նախանշված զոհերից մի քանիսին:

Հաջորդ օրն առավոտյան իմ այցելուներից մեկը (նա գերմանացի էր) մի առաջարկ արեց, որը սովորական իրադրությունում միանգամայն բնական կարող էր թվալ: Ասաց, որ Գերմանիայի հեղինակությունը մեծապես կտուժի, եթե թուրքերն իրականացնեն այդ ծրագիրը. աշխարհը չի հավատա, որ դա գերմանացիների ձեռքի գործը չէ: Նա ասաց, որ ես պետք է այցելեմ Գերմանիայի ու Ավստրիայի դեսպաններին՝ վստահ, որ նրանք կսատարեն իմ պահանջի կատարմանը՝ քաղաքակիրթ վարվել այդ մարդկանց հետ: Քանի որ նախկինում ես բազմիցս ապարդյուն փորձել էի պաշտպանել օտարերկրացիների շահերը Վանգենհայմի մոտ, վստահ էի, որ չարժե այդ հարցում հայցել նրա աջակցությունը: Ավելին, խաղաղ քաղաքացիներին որպես պաշտպանական վահան օգտագործելն այնքան ծանոթ գերմանական գործելաոճ էր, որ բնավ վստահ չէի, թե գերմանական Գլխավոր շտաբը չէր դրդել թուրքերին այդ քայլին: Ես, սակայն, որոշեցի հետևել իմ այցելուի խորհրդին և խնդրել Վանգենհայմի աջակցությունը: Պիտի խոստովանեմ, որ այդ քայլին գնում էի առանց որևէ հույսի, սոսկ այն մտքով, որ արդարացի կլինի Վանգենհայմին առնվազն օգնելու հնարավորություն տալ: Երեկոյան՝ մոտավորապես ժամը տասին, գնացի նրա մոտ և մնացի մինչև ժամը տասնմեկը: Մեկ ժամվա մեծ մասն անպտուղ անցկացրի՝ փորձելով նրա մեջ հետաքրքրություն արթնացնել խաղաղ բնակիչների ճակատագրի հանդեպ: Վանգենհայմը կտրուկ հայտարարեց, որ չի օգնի: «Միանգամայն արդարացված կլինի, - ասաց նա, - եթե թուրքերը Գալիպոլիում համակենտրոնացման ճամբար

հիմնեն: Արդարացի կլինի նաև անգլիացի ու ֆրանսիացի քաղաքացիներին նստեցնել թուրքական փոխադրանավերը՝ դրանք հարձակումներից պաշտպանելու համար»: Երբ ես փորձում էի վիճել այդ հարցի շուրջ, Վանգենհայմը կտրուկ փոխում էր զրույցի թեման: Այդ օրերին կատարած իմ գրառումների համաձայն՝ Գերմանիայի դեսպանը քննարկեց բազում հարցեր, բացի այն հարցից, որի համար ես գնացել էի նրա մոտ:

- Թուրքերի այդ քայլը մեծապես կվնասի Գերմանիային, - սկսում եմ ես:

- Իսկ Դուք գիտեք, որ Գաբա Թեփեում անգլիական զորքերը մնացել են առանց սննդի ու ջրի, - պատասխանում է նա: - Նրանք փորձել են գրոհով մի ջրհոր գրավել, սակայն հետ են շպրտվել: Անգլիացիները դուրս են բերել իրենց նավերը, որպեսզի իրենց զինվորները նահանջելու տեղ չունենան:

- Գալիպոլիի մասին, - ընդհատում եմ ես, - այստեղ՝ Կոստանդնուպոլսում, գերմանացիներն իրենք են ասում, որ Գերմանիան պարտավոր է կանգնեցնել դա:

- Դաշնակիցները քառասունհինգ հազար մարդ են ուղարկել թերակղզի, - պատասխանում է Վանգենհայմը, - ու նրանցից տասը հազար մարդ արդեն սպանվել է: Մի քանի օրից մենք նորից կգրոհենք ու կոչընչացնենք մնացյալներին:

Երբ փորձում էի թեմային մոտենալ մեկ այլ տեսանկյունից, այդ հմուտ դիվանագետը սկսում էր քննարկել Ռումինիայի հետ կապված խնդիրները և այդ երկրի միջոցով զինամթերք ձեռք բերելու հնարավորությունները:

- Ձեր Պետքարտուղար Բրայանը, - ասաց նա - հայտարարել է՝ եթե ԱՄՆ-ը հրաժարվի Դաշնակիցներին զինամթերք վաճառելուց, ապա դա արդեն չեզոքություն չի լինի: Մենք այդ նույն փաստարկն օգտագործեցինք ռումինացիների պարագայում. եթե զինամթերք չվաճառելը չեզոքություն չէ, ապա այն փոխադրելուց հրաժարվելն առավել ևս չեզոքություն չէ:

Այս վեճի զավեշտական ասպեկտը դուր էր գալիս Վանգենհայմին, սակայն նրան հիշեցրի, որ ես այդտեղ եմ գտնվում 2000-3000 խաղաղ բնակիչների կյանքի հարցը քննարկելու նպատակով: Երբ կրկին անդրադարձա այդ թեմային, Վանգենհայմը պատասխանեց, որ այդ ընթացքում Ամերիկան՝ որպես խաղաղարար ուժ, Գերմանիայի համար ընդունելի չէ, քանի որ Միացյալ Նահանգները չափից ավելի սերտ կապեր ունի Անտանտի հետ: Նա հարկադրեց ինձ լսել Կարպատներում գերմանացիների հաջողությունների մանրամասները, նաև իտալական ուղղության

վերջին նորությունները: «Ավելի գերադասելի է պատերազմել Իտալիայի դեմ, քան նրա դաշնակիցը լինել», - ասաց նա:

Մեկ այլ պարագայում դա ինձ չափազանց զվարճալի կթվար, բայց ոչ հիմա: Պարզ էր, որ նախատեսվող տեղահանումների մասին Վանգենհայմը մտադիր չէր ասել ավելին, քան այն, որ թուրքերի գործողություններն արդարացված են: Նրա հայտարարությունն այն մասին, թե Գալիպոլիում նախատեսված է հիմնել համակենտրոնացման ճամբար, բացահայտում էր նրա վերաբերմունքն ամբողջությամբ: Մինչ այդ թուրքերն օտարազգիների համար ոչ մի տեղ համակենտրոնացման ճամբարներ չէին հիմնել: Ես ամենայն անկեղծությամբ թուրքերին խորհուրդ տվեցի նման քայլի չդիմել, ու նրանք հետևեցին իմ խորհրդին: Մյուս կողմից գերմանացիները բողոքում էին, թե թուրքերը չափից ավելի «փափկասիրտ» են, և համոզում էին նրանց երկրի ներքին շրջաններում նման ճամբարներ հիմնել: Այն, որ Վանգենհայմն ասաց «համակենտրոնացման ճամբար Գալիպոլիում», նշանակում էր, որ գերմանական տեսակետը վերջապես հաղթանակել է, և որ ես պարտություն էի կրում օտարերկրացիների համար մղած իմ պայքարում: Համակենտրոնացման ճամբարը սարսռելի տեղ է նույնիսկ ամենաբարենպաստ պայմանների առկայության դեպքում, սակայն, բացի գերմանացիներից ու թուրքերից, ո՞վ կմտահղանար ճամբար հիմնել ռազմադաշտի ճիշտ կենտրոնում: Ենթադրենք, թե անգլիացիներն ու ֆրանսիացիները որոշել էին հավաքել թշնամական պետությունների բոլոր քաղաքացիներին, քշել նրանց դեպի ռազմաճակատի գիծ և փակել ճամբարում՝ չեզոք հողի վրա, երկու բանակների կրակագծի ճիշտ մեջտեղը: Հենց այդպիսին էր համակենտրոնացման ճամբարը, որտեղ թուրքերն ու գերմանացիները մտադիր էին հավաքել Կոստանդնուպոլսում բնակվող թշնամի պետությունների քաղաքացիներին: Վանգենհայմի հետ ունեցած զրույցից հետո ես այլևս կասկած չունեի, որ գերմանացիներն այդ դավադրության մասնակիցն են: Նրանք վախենում էին, որ հակառակորդի ցամաքային հարձակումը Դարդանելի վրա հաջողությամբ կպսակվի, ճիշտ այնպես, ինչպես մտավախություն ունեին, թե ծովային գրոհը հաջողությամբ կավարտվի, և պատրաստ էին դիմելու ցանկացած միջոցի՝ այդ թվում նաև հազարավոր խաղաղ բնակիչների կյանքի հաշվին նման զարգացումը կանխելու համար:

Վանգենհայմի հետ ունեցած իմ զրույցը՝ նրա աջակցությունը ստանալու հույսով, որևէ արդյունք չունեցավ, սակայն ամրապնդեց իմ վճռականությունը ծախողելու այդ ծրագիրը: Ես այցելեցի նաև Պալավիչինիին՝ Ավստրիայի դեսպանին: Նա իսկույն ևեթ հայտարարեց, որ նման տեղահանումը «անմարդկային արարք է»:

- Այդ մասին ես կխոսեմ մեծ վեզիրի հետ, - ասաց նա, - և կփորձեմ կանխել:

- Բայց Դուք գիտեք, որ դա բացարձակապես իզուր կլինի, - պատասխանեցի ես, - մեծ վեզիրը որևէ իշխանություն չունի. նա սոսկ կամակատար է: Կա միայն մեկ անձնավորություն, ով ի վիճակի է կանգնեցնելու բռնագաղթը՝ էնվերը:

Պալավիչինին շատ ավելի նրբազգաց ու բարի անձնավորություն էր, քան Վանգենհայմը, և ես ոչ մի կասկած չունեի, որ նա միանգամայն անկեղծ էր այդ հանցագործությունը կանխելու իր ցանկության մեջ: Բայց Պալավիչինին հին ավստրիական դպրոցի դիվանագետ էր: Նրա համոզմամբ՝ ոչինչ այնքան էական չէր, որքան դիվանագիտական արարողակարգը: Էթիկետը պահանջում էր, որ նա՝ որպես իր կայսեր ներկայացուցիչ, բոլոր բանակցությունները վարեր մեծ վեզիրի հետ, ով միևնույն ժամանակ Արտաքին գործերի նախարարն էր: Պալավիչինին պետական գործերը երբեք չէր քննարկում Թալեաթի կամ էնվերի հետ. իրականում նա շատ սահմանափակ պաշտոնական հարաբերություններ ուներ այդ անձանց հետ, ովքեր Թուրքիայի իրական ղեկավարներն էին: Եվ հիմա, նրա կարծիքով, 3000 կյանք փրկելը բավարար պատճառ չէր դիվանագիտական ավանդական գործառույթները խախտելու համար: «Այս պարագայում իմ պարտքն է խստորեն հետևել օրենքներին», - ասաց նա: Բարեսիրտ մարդ լինելով՝ նա իսկապես խոսեց Սաիդ Հալիմի հետ: Նրա օրինակին հետևելով՝ Վանգենհայմը նույնպես այցելեց մեծ վեզիրին, սակայն նրա պարագայում բողոքը նախատեսված էր միայն պաշտոնական արձանագրությունների համար: «Սրանով կարող եք խաբել մի քանի հոգու, - ասացի ես Գերմանիայի դեսպանին, - սակայն լավ գիտեք, որ մեծ վեզիրի հետ խոսելը հավասարազոր է օդ փչելուն»:

Սակայն կար դիվանագիտական կորպուսի մեկ այլ անդամ, ով սրտանց փորձում էր պաշտպանել վտանգի մեջ գտնվող օտարերկրացիներին: Դա պարոն Կոլուչևն էր՝ Բուլղարիայի հավատարմատարը: Թուրք-գերմանական դավի մասին տեղեկանալուն պես նա անմիջապես այցելեց ինձ ու առաջարկեց իր օգնությունը: Նա առաջարկեց ժամանակ չկորցնել՝ բողոքներ ներկայացնելով մեծ վեզիրին, այլ հայտարարեց, որ կգնա ուղիղ իշխանավորների, անձամբ էնվերի մոտ: Այդ ժամանակահատվածում Կոլուչևը չափազանց կարևոր դեմք էր, քանի որ Բուլղարիան չեզոքություն էր պահպանում, և պատերազմող երկու կողմերը ջանում էին սիրաշահել նրան:

Այդ ընթացքում Բեդրին ու նրա կամակատարներն արդեն ձերբակալում էին դատապարտված անգլիացիներին ու ֆրանսիացիներին: Տեղա-

հանությունը պետք է սկսվեր հինգշաբթի առավոտյան: Չորեքշաբթի օրը խուճապը վերածվեց հիստերիայի: Թվում էր, թե Կոստանդնուպոլսի բոլոր օտարերկրացիները հավաքվել են ԱՄՆ դեսպանատանը: Հեկեկացող կանանց ու ընկճված տղամարդկանց բազմությունը հավաքվել էր շենքի դիմաց և հարակից հատվածներում: Գրեթե երեք հարյուր մարդ մուտք գործեց իմ աշխատասենյակ՝ հուսահատ կառչելով դեսպանից ու նրա անձնակազմից: Նրանցից շատերը ասես մտածում էին, որ իրենց ճակատագիրը հենց իմ ձեռքում է: Հուսալքված այս մարդկանցից ոմանք նույնիսկ մեղադրում էին ինձ՝ պնդելով, որ ես չեմ անում հնարավորը: Աշխատասենյակից դուրս գալով ու մտնելով ընդունարան՝ անմիջապես հայտնվում էի ահաբեկված ու խուճապահար կանանց ու մայրերի ամբոխի կենտրոնում: Ծայրաստիճան նյարդային լարվածություն էր: Ես հեռածայնեցի էնվերին ու հանդիպում պահանջեցի: Նա պատասխանեց, որ սիրով կընդունի ինձ չորեքշաբթի: Սակայն մինչ այդ աքսորյալները արդեն կհայտնվեին Գալիպոլիի ճանապարհին: «Ո՛չ, - ասացի ես, - ես Ձեզ պիտի այսօր տեսնեմ»: Էնվերը զանազան պատճառաբանություններ բերեց, թե ինքը զբաղված է, որ նախօրոք ձեռք բերված պայմանավորվածություններ ունի:

«Ենթադրում եմ, որ ցանկանում եք ինձ տեսնել անգլիացիների ու ֆրանսիացիների հարցով, - ասաց նա: - Եթե այդպես է, կարող եմ Ձեզ հենց հիմա ասել, որ դա ապարդյուն կլինի: Ամեն բան որոշված է: Ոստիկանությանը կարգադրվել է մինչև երեկո նրանց հավաքել և վաղն առավոտյան տարհանել»: Ես շարունակում էի պնդել, որ պետք է նրան անպայման հենց այդ օրը հանդիպեմ, նա շարունակում էր խուսափել հանդիպումից: «Ողջ օրը զբաղված եմ, - ասաց նա, - ժամը չորսին նախարարների խորհուրդ է հրավիրված. դա շատ կարևոր է, ես չեմ կարող բացակայել»: Դեսպանատան մոտ հավաքված կանանց վիճակն ինձ մղեց միանգամայն աննախադեպ քայլի: «Ես մերժում չե՛մ հանդուրժի, - ասացի էնվերին, - ես կլինեմ այդտեղ ժամը չորսին: Եթե Դուք հրաժարվեք ինձ ընդունելուց, ես կպահանջեմ ինձ թույլ տալ մուտք գործել խորհրդակցական սենյակ և հարցը կներկայացնեմ ողջ կառավարությանը: Կկամենայի տեսնել՝ արդյոք Թուրքիայի նախարարների խորհուրդը կմերժի՞ ընդունել Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանին»: Ինձ թվաց՝ լսեցի, թե ինչպես էնվերը շնչակտուր եղավ: Չեմ կարծում, թե պատասխանատվության զգացում ունեցող որևէ դեսպան նրան նման ապշեցուցիչ պատասխան տար: Բավական երկարատև լռությունից հետո նա ասաց. «Եթե ժամը 3:30-ին ժամանեք Բարձր Դուռ, ես կընդունեմ Ձեզ»:

Երբ ժամանեցի Բարձր Դուռ, ինձ տեղեկացրին, որ Էնվերը հանդիպում ունի Բուլղարիայի հավատարմատարի հետ: Ես բնականաբար պատրաստ էի սպասելու, քանզի ինձ հայտնի էր, թե նրանք ինչ են քննարկում: Վերջապես պարոն Կոլուչևը դուրս եկավ: Նրա դեմքը լարված էր ու մտահոգ. պարզ էր՝ ինչ փորձություն էր անցել:

- Անհույս է, - ասաց նա, - Էնվերի վրա ոչինչ չի ազդում: Նա միանգամայն վճռական է գործն ավարտի հասցնելու հարցում: Չեմ կարող Ձեզ հաջողություն մաղթել, քանի որ հաջողության չեք հասնի:

Էնվերի ու իմ հանդիպումը մինչ այդ ունեցած հանդիպումներից ամենահիշարժանն էր: Գրեթե մեկ ժամ մենք քննարկում էինք օտարերկրյա քաղաքացիների ճակատագիրը: Էնվերն իր չափազանց քաղաքավարի, բայց և ամենաանզիջում տրամադրության մեջ էր: Մինչ զրույցը սկսելը հայտնեց, որ խոսելն անիմաստ է, քանի որ թեման փակված է: Սակայն ես պնդեցի, որ պարտավոր եմ պատմել նրան, թե աշխարհում ի՞նչ լավ տպավորություն է գործել սեփական թշնամիների հանդեպ Թուրքիայի վերաբերմունքը:

- Այս հարցում դուք շատ ավելի լավ տպավորություն եք գործել, քան պատերազմող կողմերից որևէ մեկը, - ասացի ես: - Դուք նրանց համակենտրոնացման ճամբարներ չեք ուղարկել, դուք նրանց թույլ եք տվել մնալ այստեղ ու շարունակել ապրել իրենց կյանքով: Այս ամենը դուք արել եք ի հեճուկս սաստիկ ճնշման: Ինչո՞ւ եք հիմա ոչնչացնում այդ բարենպաստ տպավորությունը և կատարում այդ ճակատագրական սխալը:

Սակայն Էնվերը շարունակում էր պնդել, թե Դաշնակիցների նավատորմը ռմբակոծում է անպաշտպան քաղաքները՝ սպանելով կանանց, երեխաների և վիրավոր զինվորների:

- Ձեր միջոցով մենք նրանց զգուշացրինք, որ պետք է դադարեցնեն այդ գործողությունները, - ասաց նա, - սակայն նրանք շարունակում են:

Այդ հայտարարությունը, անշուշտ, չէր համապատասխանում իրականությանը, սակայն ինձ չէր հաջողվում համոզել Էնվերին, որ ինքը սխալվում է: Նա շնորհակալություն հայտնեց իմ ջանքերի համար և խնդրեց ներողամիտ լինել իմ խորհրդին չհետևելու համար: Ես ասացի, որ օտարերկրյա քաղաքացիներն առաջարկում են, որ ես դադարեցնեմ Թուրքիայում ներկայացնել Անգլիայի ու Ֆրանսիայի շահերը: «Մենք միայն գոհ կլինենք, - արագ պատասխանեց Էնվերը, - մեր միջև խնդիրներ են ծագում միայն այն ժամանակ, երբ Դուք գալիս ու մեզ անհանգստացնում եք անգլիացիներին ու ֆրանսիացիներին առնչվող հարցերով»: Ես հարցրի՝ արդյոք երբևէ նրանց վատ խորհուրդ տվել եմ: Էնվերը մեծահոգաբար պատասխանեց, որ, իմ առաջարկներին հետևելով, երբեք

սխալներ չեն գործել:

- Շատ բարի, - ասացի ես, - ուրեմն այս անգամ էլ հետևեք իմ խորհրդին: Հետո կտեսնեք, որ սխալ չեք վարվել: Ես պնդում եմ, որ, նման քայլ կատարելով, ձեր կառավարությունն ահավոր սխալ է գործում:

- Բայց հրամանն արդեն տրված է, - ասաց Էնվերը, - ես չեմ կարող հակառակ հրաման արձակել: Այդպես վարվելով՝ կկորցնեմ ողջ հեղինակությունս բանակում: Հրաման արձակելուց հետո ես երբեք այն չեմ փոխում: Կինս խնդրեց ինձ զինվորական ծառայությունից ազատել մեր սպասավորներից մի քանիսին, սակայն ես մերժեցի: Մեծ վեզիրը խնդրեց բացառություն անել իր քարտուղարի համար, ես նրան նույնպես մերժեցի, քանի որ արդեն տվել էի հրամանը: Ես հրամաններս երբեք չեմ փոխում, հիմա էլ չեմ փոխի: Եթե կարող եք որևէ եղանակ հուշել, որով հնարավոր է կատարել հրամանը և փրկել ձեր հովանավորյալներին, ես սիրով կլսեմ:

Ես արդեն բացահայտել էի թուրքական էության ամենացայտուն գծերից մեկը՝ սակարկելու ու փոխզիջման գնալու հակումը: Առաջարկ անելու Էնվերի խնդրանքն ինձ հնարավորություն ընձեռեց շահարկելու այդ հակումը:

- Շատ բարի, - ասացի ես, - ինձ թվում է՝ կարող եմ: Կարծում եմ, որ կարելի է կատարել Ձեր հրամանն առանց անգլիացիներին ու ֆրանսիացիներին այնտեղ ուղարկելու: Եթե միայն մի քանիսին ուղարկեք, հրամանը կատարված կլինի: Դուք կկարողանաք պահպանել կարգապահությունը բանակում, և այդ մի քանիսը նույնքան հզոր զսպող հանգամանք կլինեն Դաշնակիցների նավատորմի համար, որքան բոլորը միասին:

Ինձ թվաց, թե Էնվերը պատրաստակամորեն օգտվեց իմ այդ առաջարկից՝ որպես առկա երկընտրանքի հանգուցալուծում:

- Քանի՞ մարդ կարող եմ ուղարկել, - հարցրեց նա արագ:

Այն պահին, երբ նա տվեց այդ հարցը, ես հասկացա, որ հաղթեցի:

- Ես կառաջարկեի քառասուն՝ քսան անգլիացի և քսան ֆրանսիացի:

- Հիսո՛ւն, - ասաց Էնվերը:

- Շա՛տ բարի, տասը հոգու շուրջ չենք վիճի, - համաձայնեցի ես, - սակայն ևս մեկ զիջում պիտի անեք. այդ հիսունին ես եմ ընտրելու:

Ձեռք բերված համաձայնությունը թուլացրեց լարվածությունը և կրկին երևան բերեց Էնվերի բնավորության ավելի հաճելի կողմը:

- Ո՛չ, պարոն դեսպան, - ասաց նա, - այսօր Դուք ինձ հետ պահեցիք սխալ գործելուց, թույլ տվեք հիմա էլ ես Ձեզ հետ պահեմ սխալ քայլից: Եթե Դուք ընտրեք հիսուն աքսորականի, ձեռք կբերեք հիսուն թշնամի:

Ես Ձեզ շատ լավ եմ վերաբերվում, ուստի նման բան թույլ տալ չեմ կարող: Ես կապացուցեմ, որ, իրոք, Ձեր բարեկամն եմ: Որևէ այլ առաջարկ ունե՞ք:

- Ինչու՞ չընտրել ամենաերիտասարդներին. նրանք ավելի դիմացկուն են:

- Արդարացի է, - պատասխանեց էնվերը:

Նա ասաց, որ Բեդրին, ով այդ ժամանակ շենքում էր, կընտրի «զոհերին»: Դա ինձ որոշ չափով անհանգստացրեց. գիտեի, որ Բեդրին դժգոհ կլինի հրամանի փոփոխությունից: Նրա ատելությունը օտարերկրացիների հանդեպ բազմիցս բացահայտվել էր տարբեր առիթներով, և ոստիկանապետը կաներ հնարավոր ամեն ինչ՝ հրամանը շրջանցելու համար: Ես էնվերին խնդրեցի կանչել Բեդրիին և նոր հրամանը տալ իմ ներկայությամբ: Բեդրին ներս մտավ և, ինչպես կարծում էի, նոր հրամանն ընդունեց մեծագույն դժկամությամբ: Այն պահին, երբ լսեց, որ կարող է միայն հիսուն մարդ հավաքել և միայն՝ երիտասարդներին, նա բարձրացրեց ձեռքերն ու սկսեց սենյակում հետ ու առաջ քայլել:

- Ո՛չ, ո՛չ, դա անհնար է, - ասաց նա, - ինձ երիտասարդներ պետք չեն, ինձ պետք են հեղինակավոր անձինք:

Սակայն էնվերը հավատարիմ մնաց մեր պայմանավորվածությանը և Բեդրիին հրամայեց հավաքել միայն երիտասարդներին: Ակնհայտ էր, անհրաժեշտ էր փոխել Բեդրիի տրամադրությունը, և ես նրան հրավիրեցի ինձ հետ գալ ԱՄՆ դեսպանատուն՝ թեյ խմելու ու կարգավորելու բոլոր խնդիրները: Այդ հրավերը վայրկենաբար ազդեցություն գործեց, ինչն ամերիկյան մտածելակերպի համար դժվարընկալելի է: Ամերիկացին ոչ մի արտառոց բան չէր տեսնի Ամերիկայի դեսպանի հետ մեքենայով հրապարակայնորեն երթևեկելու կամ դեսպանատանը թեյ խմելու մեջ: Սակայն սա մի պատիվ էր, որին Ոստիկանության պետի նման մանր պաշտոնյան Թուրքիայի մայրաքաղաքում երբեք չի արժանանում: Հնարավոր է, որ, Բեդրիին հրավիրելով, ես նվաստացրի պաշտոնս, գուցե Պալավիչինին այդպես մտածեր, սակայն դա, ըստ իս, արդարացված էր, քանի որ դրա շնորհիվ Բեդրին շատ ավելի զիջող դարձավ:

Երբ ժամանեցինք դեսպանատուն, մարդիկ դեռ այնտեղ էին ու անհամբեր սպասում էին իմ միջամտության արդյունքներին: Երբ ես հայտարարեցի, որ պետք է մեկնեն միայն հիսուն հոգի և՝ ամենաերիտասարդները, բոլորը մի պահ քարացան: Սկզբում նրանք չէին կարողանում հասկանալ. չէին հավատում, որ ինձ հաջողվել է այդ չափով փոխել հրամանը, սակայն երբ խոսքերիս իմաստն ընկալվեց, ես հայտնվեցի մի ամբոխի մեջտեղում, որը մեկ վայրկյանում ասես խենթացավ, բայց ոչ թե

վշտից, այլ ուրախությունից: Կանայք, արցունքներն աչքներին, ծնկի էին գալիս, բռնում ձեռքերս և ծածկում դրանք համբույրներով: Տարեց այրերը, հակառակ իմ կատաղի դիմադրությանը, գրկում էին ինձ ու համբուրում այտերս: Երախտագիտության այս դրսևորումներից շփոթված՝ ես մի քանի րոպե պայքարեցի այդ ամբոխի դեմ: Վերջապես ինձ հաջողվեց դուրս պրծնել, և մենք Բեդրիի հետ փակվեցինք սենյակներից մեկում:

- Կարո՞ղ եմ գոնե մի քանի նշանավոր մարդկանց վերցնել, - հարցրեց Բեդրին:

- Միայն մեկին, - պատասխանեցի ես:

- Գուցե երեքի՞ն, - նորից հարցրեց նա:

- Կարող եք տանել բոլորին, ովքեր հիսունից երիտասարդ են, - ասացի ես:

Սակայն դա Բեդրիին չգոհացրեց, քանի որ նրանց մեջ ոչ մի հայտնի մարդ չկար: Բեդրին աչք ուներ պարոնայք Վեյլի, Ռեյի և դոկտոր Ֆրյուի վրա, սակայն ես մի «պահուստային կարկառուն դեմք» ունեի, ում պատրաստ էի զիջելու՝ դոկտոր Վիգրամը: Նա անգլիական եկեղեցու կղերական էր, օտարերկրացիների համայնքի ամենահայտնի անձանցից մեկը, ով ինձ աղաչում էր անել այնպես, որ իրեն թույլ տան գնալ պատանդների հետ և տալ այն սփոփանքը, որ կարող է առաջարկել միայն հավատքը: Ինձ հայտնի էր, որ դոկտոր Վիգրամին ոչինչ այնքան չէր ուրախացնի, որքան իրեն որպես «ընծա» ներկայացնելը՝ «ազնվականների» հանդեպ ունեցած Բեդրիի կիրքը բավարարելու համար:

- Միակ կարկառուն դեմքը, ում կարող եք տանել, դոկտոր Վիգրամն է, - ասացի Բեդրիին: Նա ընդունեց առաջարկս՝ որպես լավագույնը, ինչ կարող էր կորզել:

Պարոն Հոֆման Ֆիլիպը՝ ամերիկյան դեսպանության խորհրդականը, ներկայումս ԱՄՆ հավատարմատարը Կոլումբիայում, ցանկություն էր հայտնել ուղեկցել պատանդներին՝ նրանց համար տանելի վիճակ ապահովելու համար: Մարդասիրության այդ դրսևորումը պարոն Ֆիլիպի կողմից միակ դեպքը չէր. երբ Թուրքիան մտավ պատերազմի մեջ, նա թեև վատառողջ էր, սակայն վերադարձավ Կոստանդնուպոլիս՝ օգնելու տեղի օտարերկրացիներին: Այդ խառնակ ժամանակների ողջ ընթացքում նա մշտապես կարեկցանք էր ցուցաբերում տարաբախտների, հիվանդների ու աղքատների հանդեպ, ինչը խորապես արմատավորված էր նրա բնավորության մեջ: Թեև դեսպանության աշխատակիցները նման վտանգավոր առաքելություններ չէին կատարում, սակայն պարոն Ֆիլիպն այնքան անկեղծ էր խնդրում, որ ի վերջո, թեև դժկամորեն, ես տվեցի համաձայնությունս: Ես նաև խմբին ուղեկցելու թույլտվություն ստացա

«Collier's» ընկերության ներկայացուցիչ պարոն Արթուր Ռուլի և բրուկլինյան «Eagle» ընկերությունը ներկայացնող պարոն Հենրի Վեստ Սայդըմի համար:

Վերջում Բեդրին այնուամենայնիվ արեց իր սրտի ուզածը. թեև այն հիսուն անձինք, որ պետք է մեկնեին, տեղեկացվել էին, որ նավը մեկնելու է հաջորդ առավոտ՝ ժամը վեցին, Բեդրին կեսգիշերին ժանդարմների ուղեկցությամբ մտել էր նրանց տները և հանել անկողիններից: Հաջորդ օրը նավահանգստում հավաքված խումբը թշվառ տեսք ուներ: Բեդրին այնտեղ էր և ղեկավարում էր ողջ գործընթացը: Նա մոտեցավ ինձ ու ժպիտով նախատեց՝ միայն մեկ «ազնվական» զիջելու համար: Սակայն, ընդհանուր առմամբ, նա իրեն բավական զուսպ էր պահում, թեև չհամբերեց ու պատանդներին հայտնեց, որ բրիտանական ինքնաթիռները ռումբեր են նետում Գալիպոլիի վրա: Այնտեղ գտնվող քսանհինգ «անգլիացիներից» միայն երկուսն էին ծնվել Մեծ Բրիտանիայում, իսկ քսանհինգ «ֆրանսիացիներից» միայն երկուսը՝ Ֆրանսիայում: Պատանդներն իրենց հետ բերել էին ուտելիքով ու անհրաժեշտ իրերով լցված պարկեր: Նրանց ազգականները հավելյալ պարկեր էին բերել նրանց համար, իսկ տիկին Մորգենթաուն սննդամթերքով լեցուն մի քանի մեծ արկղեր ուղարկել էր նավ: Այդ երիտասարդների բաժանումն իրենց ընտանիքներից չափազանց հուզիչ էր, սակայն նրանք բոլորը մեծ արիություն ցուցաբերեցին:

Ես վերադարձա դեսպանատուն՝ վերջին օրերի լարումից հոգնած և բոլորովին տրամադրություն չունեի արժանանալու այն պատվին, որ սպասում էր ինձ այնտեղ: Մի քանի րոպեից հայտնեցին, որ ժամանել է Նորին գերազանցություն Գերմանիայի դեսպանը: Վանգենհայմը մի քանի րոպե զրուցեց ընդհանուր թեմաներով, հետո անցավ իր այցելության բուն նպատակին: Նա ինձ խնդրեց հեռագրել Վաշինգտոն և տեղեկացնել, որ ինքը՝ Վանգենհայմը, «միջամտել է» Գալիպոլի ուղարկվող աքսորյալների թիվը մինչև հիսուն նվազեցնելու գործին: Դա այն աստիճանի լկտի առաջարկ էր, որ ես հազիվ կարողացա զսպել ինձ: Ինձ հայտնի էր, որ նա այցելել էր մեծ վեզիրին մեկ նպատակով՝ օգտագործել այդ փաստն այլ նպատակների համար, սակայն չէի սպասում, թե կփորձի շահարկել դա այդքան արագ:

«Դե լավ, գոնե տեղեկացրեք ձեր կառավարությանը, որ ես այդ հարցում թուրքերին «hetz» չեմ արել»: Գերմաներեն «hetzen» բայը նշանակում է մոտավորապես «շներին կատաղեցնել»: Վանգենհայմին անմեղսունակ ներկայացնելու ոչ մի ցանկություն չունեի և այդպես էլ ասացի նրան: Ավելին, ես հեռագրեցի Վաշինգտոն առ այն, որ նա հրաժարվեց

ինձ օգնելուց: Մեկ-երկու օր անց Վանգենհայմը հեռաձայնեց ինձ ու սկսեց խոսել բարկացած ու նյարդային: Գերմանիայի կառավարությունը նրան տեղեկացրել էր իմ հեռագրի մասին: Ես նրան պատասխանեցի՝ եթե ակնկալում է դրական գնահատականի արժանանալ, նման հարցերում օժանդակելու համար պիտի նեղություն կրի և ինչ-որ բան անի:

Գալիպոլիում աքսորվածները ծանր ժամանակներ էին ապրում. նրանց տեղավորել էին երկու փայտաշեն տնակներում՝ առանց մահճակալների: Միակ ուտելիքն իրենց հետ տարածն էր: Մոծակները գիշերցերեկ տանջում էին նրանց. Թուրքիայում դրանք իսկապես ամենուրեք են: Եթե պարոն Ֆիլիպն այնտեղ չլիներ, նրանց վիճակը չափազանց ծանր կլիներ: Թշվառներն արդեն մի քանի օր էր, ինչ այնտեղ էին, ու ես սկսեցի աշխատանք տանել Էնվերի հետ՝ նրանց հետ բերելու համար: Բրիտանիայի արտաքին գերատեսչության ղեկավար սըր Էդվարդ Գրեյը մեր Պետքարտուղարության միջոցով ինձ գրություն էր փոխանցել՝ խնդրանքով, որ ես այն հանձնեմ Էնվերին և Թուրքիայի կառավարության մյուս անդամներին: Հաղորդագրության մեջ ասվում էր, որ բրիտանական կառավարությունը նրանց անձամբ պատասխանատու կհամարի աքսորյալների կյանքին հասցված որևէ վնասի համար: Մայիսի 9-ին ես ուղերձը հանձնեցի Էնվերին: Ես նրան տեսել էի ամենատարբեր տրամադրություններով, սակայն այն անզուսպ կատաղությունը, որ առաջացրեց սըր Էդվարդի նախազգուշացումը, ինձ համար բոլորովին անսպասելի էր: Երբ ես ընթերցում էի հեռագիրը, Էնվերը գունատվեց և բացարձակապես կորցրեց ինքնատիրապետումը: Էնվերի՝ քաղաքակիրթ մարդու եվրոպական դիմակը, որ նա կրում էր այնքա՜ն խնամքով, մի ակնթարթում անհետացավ. իմ դիմաց այդ պահին տեսնում էի նրան այնպիսին, ինչպիսին կար իրականում՝ վայրի, արյունռուշտ թուրք:

- Նրանք հետ չեն դառնա, - բղավեց նա, - կմնան այնտեղ, մինչև նեխեն: Թող այդ անգլիացիները միայն փորձեն դիպչել ինձ:

Ինձ համար պարզ էր, որ այն մեթոդը, որ մշտապես կիրառել էի Էնվերի հետ շփվելիս՝ համոզելը, նրա հետ վարվելու միակ միջոցն էր: Ես փորձեցի հանգստացնել նախարարին: Որոշ ժամանակ անց նա հանդարտվեց:

- Այլևս երբեք ինձ չսպառնաք, - ասաց նա:

Մեկ շաբաթ Գալիպոլիում մնալուց հետո աքսորվածները վերադարձան: Թուրքերն իրենց ռազմական շտաբ-կայանը տեղափոխեցին Գալիպոլիից, և արդյունքում անգլիական նավատորմը դադարեց քաղաքի ռմբակոծումները: Բոլորը ողջ-առողջ տուն վերադարձան, որտեղ նրանց դիմավորեցին մեծ ցնծությամբ:

ԳԼՈՒԽ XX

Օտարերկրյա քաղաքացիների նոր փորձությունները

Գալիպոլիի բռնագաղթերը որոշ պատկերացում կտան այն դժվարությունների մասին, որոնց ես բախվում էի՝ փորձելով կատարել իմ պարտավորությունները որպես Օսմանյան կայսրությունում Դաշնակիցների շահերի ներկայացուցիչ: Սակայն, ատելության այդ բռնկումներին հակառակ, թուրք պաշտոնյաներն ընդհանուր առմամբ իրենց դրականորեն էին դրսևորում: Նրանք նախապես ինձ խոստացան, որ թշնամի պետությունների քաղաքացիներին կվերաբերվեն հավուր պատշաճի և թույլ կտան մնալ Թուրքիայում ու շարունակել զբաղվել իրենց գործով կամ մեկնել երկրից: Նրանք հավատում էին, որ պատերազմի ավարտից հետո աշխարհն իրենց կդատապարտի ոչ թե սեփական քաղաքացիների, այլ օտարերկրյա քաղաքացիների հանդեպ դրսևորած վերաբերմունքի համար, ուստի Թուրքիայում բնակվող իտալացին, անգլիացին կամ ֆրանսիացին շատ ավելի ապահով էին, քան հայը, հույնը կամ հրեան: Սակայն բարեկիրթ լինելու այդ ցանկության դեմ մշտապես ընբոստանում էին չարամիտ ուժերը: Պետքարտուղարություն ուղարկած նամակում ես գրել էի այն ուժերի մասին, որոնք մշտապես պայքարի մեջ էին Թուրքիայում բնակվող օտարերկրացիների հետ. «Գերմանիայի դեսպանը 1915թ. մայիսի 14-ին շարունակում է ճնշում գործադրել թուրքերի վրա՝ պնդելով, թե բռնամիջոցները և մարտնչող երկրների քաղաքացիներին պատանդ վերցնելը միանգամայն արդարացված կլիներ: Ես հարկադրված էի հաղթահարել գերմանացի գործընկերոջս համառ դիմադրությունը, երբ փորձում էի մեկնելու թույլտվություն ստանալ մեր պաշտպանության տակ գտնվող օտարերկրյա քաղաքացիների համար»:

Ժամանակ առ ժամանակ թուրք պաշտոնյաները պատժիչ միջոցներ էին կիրառում իրենց օտարերկրյա քաղաքացիների հանդեպ՝ սովորաբար որպես փոխհատուցում հասցված վնասի, որպես կանոն՝ հնարովի, որ իբր հասցվել էր նրանց քաղաքացիներին թշնամական երկրներում: Նման գործողությունները լարված իրավիճակ էին ստեղծում, երբեմն ողբերգական կամ զավեշտալի՝ մշտապես, սակայն, բացահայտելով թուրքական խառնվածքն ու տևտոնական մեթոդները:

Մի օր Թալեաթի հետ առօրյա հարցեր էինք քննարկում, երբ հեռախոսազանգ հնչեց:

- Ձեզ են խնդրում, - ասաց նախարարը՝ փոխանցելով ինձ լսափողը: Զանգահարողն իմ քարտուղարն էր: Նա ինձ տեղեկացրեց, որ Բեդրին

ծերբակալել է սըր էդվին Փիրսին, բանտ նետել և բռնագրավել նրա բոլոր փաստաթղթերը: Սըր էդվինը Կոստանդնուպոլսում բնակվող բրիտանահպատակ ճանաչված դեմքերից էր: Քառասուն տարի անընդմեջ նա Թուրքիայի մայրաքաղաքում աշխատում էր որպես փաստաբան, հանդես էր գալիս մամուլի էջերում և տպագրել էր գրքեր, որոնք հեղինակություն էին բերել նրան՝ որպես Արևելքի պատմության և քաղաքականության մասնագետի: Նա գրեթե ութսուն տարեկան էր, պատվարժան մի անձնավորություն: Երբ սկսվեց պատերազմը, ինձ հաջողվեց խոստում կորզել Թալեաթից ու Բեդրիից, որ սըր էդվին Փիրսին և «Ռոբերտ քոլեջի» պրոֆեսոր Վան Միլլինգենին ոչ մի պարագայում չեն անհանգստացնի: Թալեաթի ներկայությամբ հեռախոսով ստացված լուրը նշանակում էր, որ խոստումը դրժվել է: Շրջվելով դեպի Թալեաթը՝ ես խոսեցի առանց վրդովմունքս թաքցնելու:

- Սա՞ է Ձեր խոստման արժեքը: Սըր էդվին Փիրսի նման հարգարժան, տարեց անձնավորությանը վիրավորելուց բացի ավելի արժանի գործ չունե՞ք անելու: Նա ձեզ ի՞նչ է արել:

- Լա՛վ, լավ, կարիք չկա վրդովվելու, - պատասխանեց Թալեաթը, - նա ընդամենը մի քանի ժամ է եղել բանտում: Ես կկարգադրեմ ազատ արձակել նրան:

Նա փորձեց հեռաձայնել Բեդրիին, սակայն ապարդյուն: Ես արդեն բավական լավ էի ճանաչում Բեդրիին՝ նրա գործելակերպը հասկանալու համար. երբ Բեդրին իրո՛ք ցանկանում էր, որ իր հետ կապվեն հեռախոսով, նա աշխարհի ամենահասանելի մարդն էր, իսկ եթե կապի մեջ գտնվելն անախորժություններ էր խոստանում, ամենաքրտնաջան փընտրտուքն անգամ չէր գտնի նրան: Քանի որ Բեդրին ինձ խոստացել էր, որ սըր էդվինին չեն անհանգստացնի, ուստի սա այն դեպքերից էր, երբ ոստիկանապետը գերադասում էր անհասանելի լինել:

- Ես կմնամ այս սենյակում այնքան ժամանակ, մինչև գտնեք Բեդրիին, - ասացի ես Թալեաթին: Աժդահա թուրքն իմ խոսքերն ընդունեց առանց դժգոհության: Մենք բավական երկար սպասեցինք, սակայն Բեդրիին հաջողվում էր անհասանելի մնալ: Ի վերջո ես հեռաձայնեցի քարտուղարիս և հանձնարարեցի գնալ ու գտնել անհետացած ոստիկանապետին:

- Հայտնեք Բեդրիին, որ ես Թալեաթին պատանդ եմ պահում իր սեփական աշխատասենյակում և թույլ չեմ տա, որ հեռանա այնքան ժամանակ, մինչև նա Բեդրիին չկարգադրի ազատ արձակել սըր էդվին Փիրսին:

Թալեաթը հաճույքով էր հետևում այս կատակերգական իրավիճակին. նա ինձնից էլ լավ էր ճանաչում Բեդրիին, և նրան խիստ հետաքրքրք-

ռում էր, թե ինձ կհաջողվի՞ արդյոք գտնել նրան: Մի քանի ռոպե անց հեռախոսազանգ հնչեց. Բեդրին էր: Ես Թալեաթին ասացի, որ հայտնի նրան, որ ես իմ անձնական ավտոմեքենայով կուղևորվեմ բանտ՝ դուրս բերելու սըր էդվինին:

«Խնդրում եմ, թույլ չտաք նրան անել այդ քայլը, - պատասխանել էր Բեդրին, - դա ինձ ծիծաղելի վիճակի մեջ կդնի և կոչնչացնի իմ հեղինակությունը»:

- Շատ բարի, - ասացի ես, - ես կսպասեմ մինչև ժամը 6:15: Եթե մինչ այդ սըր էդվինը չվերադառնա իր ընտանիքի մոտ, ես անձամբ կգնամ ոստիկանական տեղամաս ու դուրս կբերեմ նրան:

Դեսպանատուն վերադառնալու ճանապարհին ես կանգ առա Փիրսերի տան մոտ և փորձեցի հանգստացնել լեդի Փիրսին ու նրա դստերը:

- Եթե Ձեր հայրը չվերադառնա մինչև ժամը 6:15, անմիջապես տեղեկացրեք ինձ, - ասացի ես օրիորդ Փիրսին:

Ճիշտ նշված ժամին հեռախոսազանգ եկավ: Օրիորդ Փիրսն էր. նա ինձ տեղեկացրեց, որ սըր էդվինը հենց այդ պահին տուն է մտել:

Հաջորդ օրը սըր էդվինն այցելեց դեսպանատուն՝ իմ գործադրած ջանքերի համար շնորհակալություն հայտնելու: Ասաց, որ իր ազատման համար միջամտել է նաև Գերմանիայի դեսպանը: Նրա ասածն ինձ փոքրինչ զարմացրեց: Ես գիտեի, որ ոչ ոք միջամտելու հնարավորություն չուներ, քանի որ ամեն ինչ կատարվեց այն պահին, երբ ես Թալեաթի մոտ էի: Կես ժամ անց հանդիպեցի Վանգենհայմին. նա եկել էր տիկին Մորգենթաուի ընդունելությանը: Ես խոսեցի Փիրսի մասին ու հարցրի նրան՝ արդյոք որևէ քայլ ձեռնարկե՞լ էր նրան ազատելու համար: Հարցս նրան խիստ զարմացրեց:

- Ի՜նչ, - բացականչեց նա, - ես աջակցել եմ, որ այդ մարդուն ազատե՜ն... Der alte Gauner! (ծեր սրիկա): Ես այն մարդն եմ, ով միջամտել է նրա ձերբակալությանը:

- Ի՞նչ ունեք նրա դեմ, - հարցրի ես:

- 1876-ին այդ անձնավորությունը ռուսամետ էր ու հակաթուրք, - պատասխանեց Վանգենհայմը:

Այսպիսի «երկար» հիշողություն ունեն գերմանացիները: 1876 թվականին սըր էդվինը մի քանի հոդված էր գրել Լոնդոնի «Daily News» թերթի համար՝ նկարագրելով Բուլղարիայում կատարված կոտորածները: Այն ժամանակ այդ զազրելի բարբարոսության մասին տեղեկությունները թերահավատորեն էին ընդունվում, իսկ սըր էդվինի հոդվածներն անհերքելի փաստեր էին ներկայացնում անգլախոս հասարակությանը և նկատելի դեր խաղացին Բուլղարիան թուրքական լծից ազատելու գործում:

Լրագրողի մարդասիրական արարքը հռչակ բերեց սըր էդվինին, ու քառասուն տարի անց Գերմանիան վճռել էր պատժել նրան՝ նետելով թուրքական բանտ: Եվ կրկին թուրքերն իրենց գերմանացի դաշնակիցներից խոհեմ գտնվեցին. նրանք ոչ միայն ազատեցին սըր էդվինին ու վերադարձրին նրա թղթերը, այլև թույլ տվեցին վերադառնալ Լոնդոն:

Բեդրին, սակայն, իմ հաջողված միջամտության պատճառով իրեն ստորացված էր զգում և վճռեց հաշվեհարդար տեսնել: Սըր էդվին Փիրսից հետո Կոստանդնուպոլսի մյուս նշանավոր անգլախոս իրավաբանը յոթանասունամյա մալթացի դոկտոր Միցին էր: Ժամանակի իշխանությունները քեն ունեին նրա հանդեպ, քանի որ նա «Levant Herald» թերթի սեփականատերն էր, մի թերթ, որը հոդվածներ էր հրապարակում՝ քննադատելով «Միություն ու առաջադիմություն» կոմիտեին: Փիրսի հետ կապված իրադարձությունների նույն օրը՝ երեկոյան ժամը տասնմեկին, Բեդրին այցելեց դոկտոր Միցիի տուն, ծերունազարդ պարոնին դուրս հանեց անկողնուց, ձերբակալեց ու նստեցրեց այն գնացքը, որը մեկնում էր Փոքր Ասիայում գտնվող Անգորա քաղաք: Քանի որ Անգորայում տիֆի ահավոր համաճարակ էր, դոկտոր Միցիի տարիքի մարդու համար, մեղմ ասած, ամենևին հարմար վայր չէր: Հաջորդ օրն առավոտյան, երբ լսեցի այդ լուրը, դոկտոր Միցին արդեն աքսորի ճանապարհին էր:

- Այս անգամ ես Չեզանից առաջ ընկա, - հաղթական ծիծաղով ասաց Բեդրին:

Նա երեխայի նման գոհ էր ու երջանիկ. վերջապես «հիմարացրել էր» Ամերիկայի դեսպանին, ով, ամեն ինչից անտեղյակ, քնած էր իր անկողնում, երբ ծեր մարդուն գնացքով արտաքսում էին Փոքր Ասիայում գտնվող տենդից տառապող մարդկանց ճամբար:

Սակայն Բեդրիի հաղթանակը լիակատար չէր: Իմ խնդրանքով Թալեաթը դոկտոր Միցիին Անգորայի փոխարեն ուղարկեց Կոնիա: Այնտեղ ամերիկացի միսիոներներից մեկը՝ դոկտոր Դոդը, ուներ արտակարգ հիվանդանոց: Նա այնտեղ դոկտոր Միցիին մի լավ սենյակ էր հատկացրել: Հիվանդանոցում անցկացրած մի քանի ամսվա ընթացքում դոկտոր Միցին շրջապատված էր լավ մարդկանցով, ստանում էր լավ սնունդ, ապրում էր առողջ միջավայրում, ուներ ցանկացած բոլոր գրքերը և դաշնամուր, առանց որի նա իրեն միանգամայն դժբախտ կզգար: Այնպես որ, ես կարծում եմ, որ Բեդրիի ու իմ միջև հաշիվն ամենևին էլ ոչ-ոքի չէր:

1916թ. հունվարի սկզբին լուր տարածվեց, թե Եգիպտոսում անգլիացիները վատ են վարվում թուրք ռազմագերիների հետ: Շատ չանցած՝ ես նամակներ ստացա երկու ավստրալիացիներից՝ հրամանատար Ստոքերից և լեյտենանտ Ֆիցջերալդից: Նամակում տեղեկացվում էր, որ նրանք

տասնմեկ օր է, ինչ փակված են Պատերազմի նախարարության ստորգետնյա նողկալի, խոնավ զնդանում՝ շրջապատված մակաբույծ հրեշավոր միջատներով: Այդ երկու ծովային սպաները Կոստանդնուպոլիս էին ժամանել Ամերիկայում կառուցված այն երկու սուզանավերից մեկով, որոնք հանդուգն ճամփորդություն էին կատարել Անգլիայից, անցել Դարդանելում տեղադրված ականների կողքով և ժամանել Մարմարա. նրանք մի քանի ամիս ահաբեկում ու իշխում էին այդ ներքին ծովում՝ արգելելով ցանկացած նավարկություն: Այն E-15 սուզանավը, որով ժամանել էին իմ թղթակիցները, շրջապատվել էր Դարդանելում, և նրա բոլոր սպաներն ու ողջ անձնակազմն ուղարկվել էին Փոքր Ասիայում գտնվող Աֆիոն Կարահիսարի ռազմագերիների թուրքական բանտ: Երբ լուրեր ստացվեցին Եգիպտոսում թուրք ռազմագերիների նկատմամբ ցուցաբերվող իբր վատ վերաբերմունքի մասին, վերոնշյալ բանտարկյալների շրջանում վիճակահանություն արվեց՝ որոշելու համար այն երկուսին, որ պետք է տարվեին Կոստանդնուպոլիս և որպես պատիժ նետվեին զնդանը: Ստոքերը և Ֆիցջերալդը քաշել էին չարաբաստիկ համարները և արդեն տասնմեկ օր էր՝ գտնվում էին այդ սոսկալի ստորգետնյա զնդանում: Ես անմիջապես խոսեցի էնվերի հետ այդ մասին ու առաջարկեցի, որ մի չեզոք բժիշկ և մի սպա ստուգեն Եգիպտոսում գտնվող թուրքերի վիճակը և ճշմարտացի զեկույց ներկայացնեն տեսածի մասին: Շուտով տեղեկացանք, որ թուրքերի հանդեպ կատարվող դաժանությունների մասին լուրը սուտ է, և որ իրականում անգլիացիների կողմից նրանք արժանացել են արտակարգ վերաբերմունքի:

Մոտավորապես այդ նույն ժամանակ ես այցելեցի Թուրքիայում Առաքելական պատվիրակ մոնսենյոր Դոլչիին: Զրույցի ընթացքում նա հիշատակեց լեյտենանտ Ֆիցջերալդի անունը, որը, նրա խոսքերով, ռազմագերի էր Աֆիոն Կարահիսարում:

- Նրա ճակատագիրը չափազանց կարևոր է ինձ համար, - ասաց նա,- Ֆիցջերալդը նշանված է Վատիկանում Անգլիայի դեսպանորդի դստեր հետ: Նրա մասին ես խոսել եմ էնվերի հետ, և նա խոստացել է, որ երիտասարդի հանդեպ հատուկ վերաբերմունք կցուցաբերվի:

- Նրա անունն ի՞նչ է, - հարցրի ես:

- Զեֆրի:

- Նրա հանդեպ, իրոք, «առանձնահատուկ» վերաբերմունք է ցուցաբերվում, - պատասխանեցի ես, - գիտե՞ք, որ այս պահին նա գտնվում է Կոստանդնուպոլսի զնդաններից մեկում:

Մոնսենյոր Դոլչին բնականաբար չափազանց մտահոգվեց, սակայն ես նրան հանգստացրի՝ հավաստիացնելով, որ նրա հովանավորյալը մի

քանի օրից ազատ կարձակվի:

- Որքա՞ն դաժան եք վարվում այդ երիտասարդների հետ, - ասացի ես էնվերին, - որևէ միջոցի դիմեք՝ այդ վիճակը շտկելու համար:

- Բարի՛: Ի՞նչ եք առաջարկում...

Ստոքերն ու Ֆիցջերալդը ռազմագերի էին և, ընդունված կարգի համաձայն, զնդանից ազատվելուց հետո պետք է հետ ուղարկվեին ռազմագերիների ճամբար: Ես էնվերին առաջարկեցի, որ նրանց ութ օր արձակուրդ տրվի՝ Կոստանդնուպոլսում անցկացնելու համար: Նա ընդունեց իրավիճակի նրբությունը, և երիտասարդներին ազատ արձակեցին: Նրանց տեսքը սարսափելի էր քսանհինգ օր զնդանում անցկացնելուց հետո՝ առանց լողանալու ու սափրվելու, առանց սպիտակեղենը փոխելու կամ որևէ այլ հնարավորության... Պարոն Ֆիլիպը գործի անցավ. ապահովեց նրանց բոլոր անհրաժեշտ իրերով, և շուտով մեր առջև հայտնվեցին երկու բարետես, երիտասարդ ծովային սպաներ: Ութօրյա նրանց արձակուրդը վերածվեց հաղթարշավի, թեև նրանց մշտապես ուղեկցում էր անգլախոս թուրք սպա: Մոնսենյոր Դոլչին և ԱՄՆ դեսպանությունը նրանց հրավիրում էին ճաշկերույթների, և նրանք հաճելի ժամանակ անցկացրին Օրիորդաց քոլեջում:

Երբ հասավ ռազմագերիների՝ ճամբար վերադառնալու ժամանակը, երիտասարդներն ասացին, որ համաձայն են մեկ ամիս ևս անցկացնել զնդանում, եթե ազատվելուց հետո կրկին հնարավորություն կունենան նույնքան ժամանակ անցկացնելու Կոստանդնուպոլսում:

Հակառակ այն ամենին, ինչ կատարվեց հետո, ես միշտ բարի կհիշեմ էնվերի կողմից Ֆիցջերալդի հանդեպ ցուցաբերված վերաբերմունքը: Ես հայտնեցի Պատերազմի նախարարին լեյտենանտի նշանադրության մասին:

- Չե՞ք կարծում, որ նա կրեց իր պատիժը, - հարցրի ես, - գուցե երիտասարդին թույլ տաք տո՞ւն վերադառնալ և ամուսնանալ իր սիրած աղջկա հետ:

Իմ բառերը շարժեցին էնվերի սրտի զգայուն լարերը:

- Ես դա կանեմ, եթե նա իր պատվով երդվի այլևս երբեք չկռվել Թուրքիայի դեմ:

Ֆիցջերալդը բնականաբար տվեց այդ խոստումը, և այդպիսով նրա կարճատև բանտարկությունը զնդանում ազատեց նրան հետագա բանտարկությունից և երջանկություն պարգևեց: Քանի որ տարաբախտ Ստոքերը ռոմանտիկ սիրավեպ չուներ, ինչը կարդարացներ նման խնդրանքը նաև նրա համար, վերադարձավ Փոքր Ասիայում գտնվող բանտը:

Նա արեց դա բրիտանական նավատորմի պանծալի ավանդույթներին վայել արիությամբ:

ԳԼՈՒԽ XXI

Բուլղարիան դրվում է աճուրդի

Դարդանելում Դաշնակիցների նավատորմի պարտությունը վերջնականապես չորոշեց Կոստանդնուպոլսի ճակատագիրը: Թեև թուրքերն ու գերմանացիները թեթևացած շունչ քաշեցին, երբ նավատորմը հեռացավ, սակայն լիովին լիցքաթափվել չէին կարող: Դեպի հինավուրց մայրաքաղաք տանող ամենաուղիղ ճանապարհը դեռ բաց էր նրանց թշնամիների համար:

1915թ. սեպտեմբերի սկզբին քաղաքի ամենաազդեցիկ գերմանացիներից մեկն ինձ մանրամասն բացատրեց իշխող ռազմական իրավիճակը: Ողջ իրադրությունը նա ամփոփեց մեկ նախադասությամբ. «Մենք ի զորու չենք պահելու Դարդանելն առանց Բուլղարիայի ռազմական աջակցության»:

Դա, իհարկե, նշանակում էր՝ եթե Բուլղարիան չմիանա Թուրքիային ու Կենտրոնական տերություններին, ապա Գալիպոլիի վրա Դաշնակիցների հարձակումը կավարտվի հաղթանակով, Կոստանդնուպոլիսը կընկնի, Օսմանյան կայսրությունը կփլուզվի, Ռուսաստանը կվերականգնի իր կարգավիճակը որպես տնտեսական ու ռազմական տերություն, և համեմատաբար կարճ ժամանակահատվածում պատերազմը կավարտվի Անտանտի հաղթանակով: Չէր բացառվում, որ Բուլղարիայի իրական չեզոքության պարագայում արդյունքը նույնը կլիներ, սակայն չափազանցություն չի լինի ասել, որ 1915թ. սեպտեմբեր ու հոկտեմբեր ամիսներին Բուլղարիայի կառավարությունն իր ձեռքին էր պահում պատերազմի տևողության հարցը: Այդ փաստի կարևորությունը դժվար է գերագնահատել: Կառաջարկեի, որ իմ ընթերցողները հայացք գցեին քարտեզի այն մասին, որին ըստ ամենայնի լավ ծանոթ չեն՝ բալկանյան պետություններին, այնպես, ինչպես դրանց սահմանները որոշված են Բուխարեստի պայմանագրով: Թուրքիայի եվրոպական մասը ներկայումս ընդգրկում է մի փոքր տարածք, որը ձգվում է մոտ հարյուր մղոն Կոստանդնուպոլսից դեպի արևմուտք: Այն պետությունը, որին հարում է Թուրքիայի եվրոպական մասը, Բուլղարիան է: Արևմտյան Եվրոպա տանող գլխավոր երկաթգիծը սկիզբ է առնում Կոստանդնուպոլսում ու անցնում Բուլղարիայի տարածքով՝ մտնելով Ադրիանապոլիս, Ֆիլիպոպոլիս և Սոֆիա: Այդ ժամանակ Բուլղարիան ի վիճակի էր հինգհարյուրհազարանոց միանգամայն կազմակերպված, զինավարժ բանակ ստեղծելու: Եթե նրանք արշավեին դեպի Կոստանդնուպոլիս, նրանց ոչինչ չէր կանգ-

նեցնի: Թուրքիան, իրոք, մեծ բանակ ուներ, սակայն այդ ժամանակահատվածում նրա բանակը կռվում էր Դաշնակիցների դեմ Դարդանելում և ռուսների դեմ՝ Կովկասում: Եթե Բուլղարիան թշնամանար, Թուրքիան ոչ զինվոր, ոչ էլ զինամթերք Գերմանիայից չէր ստանա. կհայտնվեր լիակատար մեկուսացման մեջ և Բուլղարիայի հարվածների ներքո շատ կարճ ժամանակում կվերանար որպես ռազմական ուժ ու եվրոպական երկիր:

Կցանկանայի առանձնահատուկ ուշադրություն հրավիրել այդ երկաթուղու վրա, քանզի դա, ի վերջո, այն գլխավոր ռազմավարական մրցանակն էր, հանուն որի պայքարում էր Գերմանիան: Երկաթգիծը Սոֆիայից մտնում է հյուսիսարևելյան Սերբիա, որտեղ կարևորագույն հանգույցներն են Նիշը և Բելգրադը, այնուհետ հատում է Սեֆ գետը, հետո՝ Դանուբը և ընթանում դեպի Բուդապեշտ ու Վիեննա և վերջապես՝ Բեռլին: Փաստորեն 1915-16 թվականներին Բալկաններում բոլոր ռազմական գործողությունները կատարվել են մեկ նպատակով՝ տիրանալ այդ երկաթուղուն: Եթե դա հաջողվեր, ապա Թուրքիան ու Գերմանիան այլևս իրարից անբաժան կլինեին. թե՛ տնտեսապես, թե՛ քաղաքական առումով նրանք կդառնային մեկ միավոր: Ինչպես արդեն նշել եմ, Դարդանելն այն օղակն էր, որը Ռուսաստանը կապում էր իր դաշնակիցների հետ: Դարդանելը փակելուց հետո Ռուսաստանը շատ արագ փլուզվեց: Մորավիայի և Մարիցայի հովիտները, որոնցով անցնում էր երկաթգիծը, Թուրքիայի համար որոշ առումով «ցամաքային Դարդանել» էր, որ Թուրքիային կապում էր իր դաշնակիցների հետ, և թշնամու ձեռքն անցնելու դեպքում Օսմանյան կայսրությունը կմասնատվեր: Միայն Բուլղարիայի միացումը տևտոնական դատին թուրքերին ու գերմանացիներին կընձեռեր այդ առավելությունը: Հենց Բուլղարիան միանար նրանց, երկաթուղու այն հատվածը, որ ձգվում էր մինչև Սերբիայի սահմանը, անմիջապես օգտագործելի կդառնար: Եթե Բուլղարիան միանար Կենտրոնական տերություններին որպես պատերազմի ակտիվ մասնակից, դրան անխուսափելիորեն կհետևեր Սերբիայի զավթումը: Այդպիսով կհաստատվեր Նիշից Բելգրադ և այնտեղից դեպի տևտոնական տերություններ տանող կապը: Դաշինքը Բուլղարիայի հետ Կոստանդնուպոլիսը կդարձներ Բեռլինի արվարձանը, Կրուպի բոլոր ռեսուրսները հասանելի կդարձներ թուրքական բանակին, անխուսափելիորեն կտապալեր Դաշնակիցների հարձակումը Գալիպոլիի վրա և կհաստատեր Արևելյան կայսրության հիմքերը՝ մի գաղափար, որ երեսուն տարի շարունակ գերմանական քաղաքականության կիզակետն էր:

Ուստի միանգամայն պարզ էր, թե ինչ նկատի ուներ գերմանացի իմ

բարեկամը, երբ սեպտեմբերի առաջին օրերին ասաց. «Առանց Բուլղարիայի մենք չենք կարող պահել Դարդանելը»: Հիմա այդ ամենը միանգամայն պարզորոշ է, և գերիշխում է այն տեսակետը, թե Գերմանիան դեռևս պատերազմից առաջ ապահովել էր Բուլղարիայի հետ դաշնակցելու խնդիրը: Այդ մասին վստահությամբ ասել չեմ կարող: Այն, որ Բուլղարիայի թագավորն ու Գերմանիայի կայսրը կարող էին դրա մասին պայմանավորվել նախապես, անշուշտ, չի բացառվում: Սակայն մենք չենք կարող եզրակացնել, թե հարցը դրանով լուծվեց, քանի որ վերջին տարիների փորձն ապացուցում է, որ հարկ չկա դաշինքները չափազանց լուրջ ընդունել: Կա՞ր արդյոք նման համաձայնություն, թե ոչ՝ հայտնի չէ, սակայն ես հստակ գիտեմ, որ թուրք պաշտոնյաներն ու գերմանացիները լիովին վստահ չէին, թե Բուլղարիան կմիանա իրենց: Ինձ հետ ունեցած զրույցներում նրանք մշտապես մտահոգություն էին հայտնում այդ հարցի վերաբերյալ, նույնիսկ եղավ մի պահ, երբ նրանք մտահոգություն ունեին, թե Բուլղարիան կհարի Անտանտին:

Բուլղարիային վերաբերող բանակցություններին առաջին անգամ անձնական առնչություն ունեցա մայիսի երկրորդ կեսին, երբ տեղեկացա, որ պարոն Կոլուչևը՝ Բուլղարիայի դեսպանորդը, հայտնել է «Ռոբերտ քոլեջում» սովորող բուլղարացի ուսանողներին, որ, ըստ ամենայնի, նրանք չեն կարող մնալ մինչև ուսումնական տարվա ավարտը. տուն կվերադառնան մինչև հունիսի 5-ը: Կոստանդնուպոլսի օրիորդաց վարժարանը նույնպես տեղեկացվել էր, որ բուլղարացի ուսանողուհիները պետք է տուն վերադառնան այդ նույն ժամանակ: Ամերիկյան այդ երկու հաստատությունները բազմաթիվ բուլղարացի ուսանողներ ունեին՝ հիմնականում իրենց երկրի փայլուն ներկայացուցիչներ: Ուսումնական այդ հաստատությունների միջոցով էր, որ իրարից հեռու գտնվող Ամերիկան ու Բուլղարիան բարեկամական հարաբերություններ էին հաստատել: Սակայն նախկինում նման բան երբեք չէր եղել: Բոլորը քննարկում էին այդ քայլի նշանակությունը. դա բավական պարզ էր թվում: Այդ ժամանակ բոլոր զրույցների հիմնական թեման Բուլղարիան էր՝ կմտնի՞ արդյոք պատերազմի մեջ: Եթե այո, ապա ու՞մ հետ կկապի իր ճակատագիրը: Մի օր լուրեր էին տարածվում, թե Բուլղարիան կմիանա Անտանտին, հաջորդ օրը՝ Բուլղարիան որոշել է անցնել Կենտրոնական տերությունների կողմը: Գերիշխում էր այն կարծիքը, թե Բուլղարիան աշխույժ սակարկում է երկու կողմերի հետ՝ լավագույն առաջարկ ստանալու համար: Եթե Բուլղարիան միանար Անտանտին, ուրեմն բնավ ցանկալի չէր, որ բուլղարահպատակները մնային Թուրքիայում, քանի որ ամերիկյան քոլեջների ուսանողները, որպես կանոն, սերում էին Բուլղարիայի հայտնի

ընտանիքներից (օրինակ՝ նրանցից մեկը գեներալ Իվանովի՝ բալկանյան պատերազմների ժամանակ բուլղարական բանակի հրամանատարի դուստրն էր): Բուլղարիայի կառավարությանը բնականաբար հետաքրքրում էր նրանց անվտանգության հարցը:

Ի վերջո շատերը հանգեցին այն եզրակացության, որ Բուլղարիան կմիանա Անտանտին: Այդ լուրն արագ տարածվեց Կոստանդնուպոլսում: Այդ հարցում հատկապես շահագրգիռ հետաքրքրություն էին ցուցաբերում թուրքերը: Դոկտոր Պատրիկը՝ Կոստանդնուպոլսի օրիորդաց վարժարանի նախագահը, արագ կերպով ավարտական միջոցառում կազմակերպեց բուլղարացի ուսանողների համար, որին ներկա էի նաև ես: Դա մի տխուր միջոցառում էր, որն ավելի շուտ թաղում էր հիշեցնում, քան ուրախ հավաք: Բուլղարացի աղջիկների մեծ մասը գրեթե հիստերիկ հոգեվիճակում էր. նրանք հավատացած էին, որ պատերազմը մոտենում է, և իրենց շուտափույթ տուն են ուղարկում՝ թուրքերի ճանկերից ազատելու համար: Նրանց վիճակն ինձ այնպես հուզեց, որ մենք բուլղարուհիներին բերեցինք ԱՄՆ դեսպանատուն, որտեղ նրանք հաճելի երեկո անցկացրին: Ճաշից հետո աղջիկները դադարեցին լաց լինել և սկսեցին մեզ զվարճացնել գեղեցիկ բուլղարական երգերով. այդպիսով տխուր սկսված օրն ուրախ ավարտ ունեցավ: Հաջորդ օրն առավոտյան բոլոր աղջիկները մեկնեցին Բուլղարիա:

Մի քանի շաբաթ անց Բուլղարիայի դեսպանորդն ինձ ասաց, որ ուսանողներին հետ կանչելը Բուլղարիայի կառավարության կողմից զուտ քաղաքական ակցիա էր: Պատերազմի անմիջական վտանգ չկար, սակայն Բուլղարիան ցանկանում էր, որ Թուրքիան ու Գերմանիան հասկանան, որ միանգամայն հնարավոր է, որ Բուլղարիան միանա Անտանտին: Բուլղարիան, ինչպես և բոլորս մտածում էինք, հանվել էր աճուրդի: Բուլղարիայի դիրքորոշման մեջ մի բան հստակ էր՝ Մակեդոնիային տիրանալու վճռականությունը: Ամեն ինչ, ըստ Կոլուչևի, պայմանավորված էր դրանով: Նա արտահայտում էր բուլղարական համընդհանուր տեսակետը, որ Բալկանյան առաջին պատերազմի ընթացքում նրանք արդար կերպով վերցրել էին այդ տարածքը, որ հետո Անտանտի տերություններն անարդարացիորեն զրկեցին նրանց Մակեդոնիայից, և որ ազգային, լեզվական հատկանիշներով, նաև ավանդույթներով Մակեդոնիան Բուլղարիայինն է, և Բալկաններում խաղաղություն չի լինի այնքան ժամանակ, մինչև Մակեդոնիան չվերադարձվի իր օրինական տիրոջը: Սակայն Բուլղարիային հարկավոր էր ավելին, քան խոստում, թե այն կփոխհատուցվի պատերազմից հետո. Բուլղարիան պահանջում էր անհապաղ օկուպացիա: Այն պահին, երբ Մակեդոնիան կհանձնվի

Բուլղարիային, վերջինս իր ուժերը կմիավորի Անտանտի հետ: Բալկաններում ընթացող խաղերում այդ պահին երկու մեծ մրցանակ կար. մեկը Մակեդոնիան էր, որին հավակնում էր Բուլղարիան, մյուսը՝ Կոստանդնուպոլիսը, որը Ռուսաստանը վճռել էր գրավել: Եթե Մակեդոնիան տրվեր իրեն, Բուլղարիան չէր առարկի, որ Ռուսաստանը ստանա Կոստանդնուպոլիսը:

Ինձ հասկացրին, որ Բուլղարիայի գլխավոր շտաբը ռազմական ծրագիր է մշակել Կոստանդնուպոլիսը գրավելու համար, և որ նրանք Անտանտին են ներկայացրել այդ ծրագիրը, որի համաձայն՝ գրեթե երեքհարյուրհազարանոց բուլղարական բանակը, նախանշված օրվանից սկսած, պետք է քսաներեք օր շրջափակման ենթարկեր Կոստանդնուպոլիսը: Բայց միայն Մակեդոնիան ստանալու խոստումը բավարար չէր. Բուլղարիան ձգտում էր իրական վերահսկողության:

Բուլղարիան գիտակցում էր Դաշնակիցների դժվարին կացությունը. չէր հավատում, թե Սերբիան ու Հունաստանը կամավոր կհանձնեն Մակեդոնիան, չէր հավատում նաև, որ Դաշնակիցները բռնի ուժով կհափշտակեն երկիրը նրանցից: Նման դեպքում վտանգ կար, որ Սերբիան սեպարատ խաղաղություն կկնքի Կենտրոնական տերություններ հետ: Բացի այդ, Բուլղարիան դեմ էր, որ Սերբիան ստանա Բոսնիան ու Հերցեգովինան՝ որպես փոխհատուցում Մակեդոնիան կորցնելու դիմաց, քանի որ կարծում էր, որ ընդլայնված Սերբիան մշտական վտանգ կլինի իր համար և որպես հետևանք Բալկաններում կվտանգի ապագա խաղաղությունը: Իրավիճակը չափազանց բարդ էր ու խճճված:

Թուրքիայում ամենից լավ տեղեկացված անձերից մեկը Պոլ Վայցն էր՝ «Frankfurter Zeitung»-ի թղթակիցը: Վայցը պարզապես լրագրող չէր. նա երեսուն տարի ապրել էր Կոստանդնուպոլսում, ուներ Թուրքիայի ներքին իրավիճակի խորքային իմացություն, գերմանական դեսպանության խորհրդականն էր և վստահված անձը: Նրա պարտականությունները կիսադիվանագիտական բնույթի էին. Վայցը, հիրավի, Թուրքիայում գերմանական ազդեցության տարածման ամենագիտակ գործակալներից էր: Բոլորին հայտնի էր, որ նա ծանոթ է Օսմանյան կայսրության ամենակարևոր դեմքերին, գիտի նրանց մոտենալու լավագույն մեթոդներն ու յուրաքանչյուրի արժեքը: Օգոստոսի ու սեպտեմբերի սկզբի այդ բախտորոշ օրերին ես մի քանի անգամ զրուցեցի Վայցի հետ Բուլղարիայի հարցի շուրջ: Նա շարունակ պնդում էր, որ բնավ հայտնի չէ, թե արդյոք Բուլղարիան իր ուժերը կմիավորի՞ Գերմանիայի հետ: Սակայն սեպտեմբերի 7-ին Վայցն ինձ մոտ եկավ կարևոր լուրերով. մեկ գիշերում իրավիճակը կտրուկ փոխվել էր. բարոն Նյուրաթը՝ Կոստանդնուպոլսում

Գերմանիայի դեսպանության խորհրդականը, մեկնել էր Սոֆիա և այդ այցի արդյունքում ստորագրվել էր պայմանագիր, որը Բուլղարիային դարձնում էր Գերմանիայի դաշնակիցը:

Գերմանիան, ասաց Վայցը, սիրաշահեց Բուլղարիային՝ կատարելով մի քայլ, որ Անտանտը չէր կարող ու չէր ցանկանում անել, և դա անմիջապես ապահովեց Բուլղարիայի վերահսկողությունը բաղձալի տարածքի վրա: Սերբիան հրաժարվեց Մակեդոնիան հանձնել Բուլղարիայի վերահսկողությանը, սակայն Թուրքիան զիջեց Օսմանյան կայսրության մի մասը: Ճիշտ է, խնդրո առարկա տարածքը շատ մեծ չէր, սակայն ուներ ռազմավարական զգալի առավելություններ, և Թուրքիայի կողմից այդ քայլին գնալը, իրոք, զոհաբերություն էր: Մարիցա գետը էնոսից մի քանի մղոն դեպի հյուսիս թեքվում է արևելք, հետո՝ կրկին հյուսիս, ապա արևմուտք՝ առանձնացնելով մոտ հազար քառակուսի մղոն տարածք, որտեղ գտնվում են այնպիսի կարևոր քաղաքներ, ինչպիսիք են Դեմոտիկան, Ղարաաղաչը և Ադրիանապոլսի մի մասը: Այդ տարածքն առանձնապես կարևոր է դարձնում այն հանգամանքը, որ այստեղով է անցնում հիսուն մղոն երկարությամբ երկաթգիծը՝ ձգվելով Դեդեաղաչից Սոֆիա: Ողջ երկաթուղին, բացառությամբ այդ հիսուն մղոնի, գտնվում է բուլղարական տարածքում, իսկ այդ կարճ հատվածը, որն անցնում է Թուրքիայով, կտրում է Բուլղարիայի հաղորդակցությունը Միջերկրական ծովի հետ: Բնականաբար բուլղարացիները երազում էին ձեռք բերել այդ հատվածը, ու հիմա Թուրքիան այն հանձնեց նրանց: Այդ զիջումը փոխեց Բալկաններում տիրող ողջ իրավիճակը. Բուլղարիան ստացավ Ադրիանապոլսի այն մասը, որը գտնվում էր Մարիցա գետից արևմուտք: Իհարկե, Բուլղարիային կհանձնվեր Մակեդոնիան, հենց որ Բուլղարիան ու նրա դաշնակիցները զավթեին այն:

Լավ հիշում եմ Վայցի ոգևորությունը, երբ ստորագրվեց վերոհիշյալ պայմանագիրը:

- Ամեն՝ բան որոշված է, - ասաց նա, - Բուլղարիան որոշեց միանալ մեզ. ամեն ինչ որոշվեց երեկ գիշեր Սոֆիայում:

Թուրքերն էլ թեթևացած շունչ քաշեցին: Վերջապես նրանք ելք տեսան ստեղծված ծանր վիճակից: Էնվերն ինձ խոստովանեց, որ «բուլղարական պայմանավորվածությունն» իրենց ուսերից մի հսկա բեռ գցեց:

- Մենք՝ թուրքերս, արժանի ենք գովասանքի, - ասաց նա, - Բուլղարիան Կենտրոնական տերությունների կողմը բերելու համար: Նրանք երբեք չէին գա մեզ օգնության, եթե մենք նրանց չզիջեինք այդ հողակտորը: Հանձնելով այն հիմա, այլ ոչ թե սպասելով պատերազմի ավարտին՝ մենք ապացուցեցինք մեր բարի կամքը: Իհարկե, մեզ համար չա-

փազանց դժվար էր այդ քայլին դիմելը, հատկապես Ադրիանապոլսի մի մասը հանձնելը, սակայն գործարքն արժանի էր իր գնին: Մենք այդ տարածքը հանձնեցինք Կոստանդնուպոլսի դիմաց, որովհետև եթե Բուլղարիան չանցներ մեր կողմը, մենք կկորցնեինք քաղաքը: Միայն պատկերացրեք, թե մենք որքան ենք բարելավել մեր վիճակը. հարկադրված էինք երկու հարյուր հազար մարդ պահել բուլղարական սահմանի վրա՝ այդ կողմից մեզ հնարավոր հարձակումից պաշտպանելու համար: Հիմա կարող ենք այդ ողջ զորքը տեղափոխել Գալիպոլիի թերակղզի և կասեցնել Դաշնակիցների առաջխաղացումը: Դարդանելում մենք չափազանց դժվարին կացության մեջ էինք զինամթերքի պակասի պատճառով: Սակայն հիմա Բուլղարիան, Ավստրիան ու Գերմանիան միացյալ ուժերով կհարձակվեն Սերբիայի վրա և մի քանի շաբաթից լիակատար վերահսկողության տակ կառնեն այդ երկիրը: Մենք նաև երկաթուղային ուղիղ հաղորդակցություն կունենանք Կոստանդնուպոլսից մինչև Ավստրիա ու Գերմանիա և կստանանք մեզ անհրաժեշտ զինամթերքը: Հիմա, երբ Բուլղարիան մեր դաշնակիցն է, Կոստանդնուպոլսի վրա հյուսիսից հարձակում չի լինի. մենք ռուսների դեմ անհաղթահարելի պատնեշ ենք ստեղծել: Չեմ հերքի, թե իրավիճակը մեզ համար չափազանց մտահոգիչ էր: Մենք վախենում էինք, որ Հունաստանն ու Բուլղարիան կմիավորվեն, հետո էլ Ռումինիան կներքաշվի: Այդ դեպքում Թուրքիան կկործանվեր. մենք կհայտնվեինք աքցանի մեջ: Իսկ հիմա մենք միայն մեկ խնդիր ունենք՝ անգլիացիներին ու ֆրանսիացիներին Դարդանելից բաց ծով դուրս քշել: Եթե ապահովվենք մեզ անհրաժեշտ զինվորներով ու զինամթերքով, ապա դրան կհասնենք շատ կարճ ժամանակում: Մենք զիջեցինք այդ փոքր տարածքը՝ հասկանալով, որ դա պատերազմը շահելու միակ ճանապարհն է:

Գործարքի արդյունքները հաստատեցին էնվերի գրեթե բոլոր կանխագուշակումները: Բուլղարիային «Ադրիանապոլսի կաշառքը» տալուց երեք ամիս հետո Անտանտն ընդունեց իր պարտությունը և ուժերը դուրս բերեց Դարդանելից: Դրա արդյունքում Ռուսաստանը, որը Դաշնակիցներին սատարելու հսկայական ներուժ ուներ, և որը ճիշտ կազմակերպելու ու պաշարներ ապահովելու դեպքում կարող էր Դաշնակիցներին շատ արագ հաղթանակի հասցնել, որպես պատերազմի որոշիչ գործոն վերացավ: Երբ անգլիացիներն ու ֆրանսիացիները դուրս եկան Գալիպոլիից, այդ քայլը տևական ցնցումներ առաջացրեց անծայրածիր Ռուսաստանում, և այդ հսկան սկսեց մխրճվել անարխիայի մեջ, քայքայվեց և հասավ կործանման եզրին:

Գերմանացիները նշեցին այդ մեծ հաղթանակը զուտ տևտոնական

ձևով: Նրանց համար 1916թ. հունվարի 17-ն առանձնանում է որպես պատերազմի ամենապանծալի օրերից մեկը: Կոստանդնուպոլսում ցնծում էին. բալկանյան առաջին ճեպընթացը կամ ինչպես գերմանացիներն էին ասում՝ Բալկանցուգը, պետք է ժամաներ կեսօրին: Կայարանը զարդարված էր դրոշներով ու ծաղիկներով, և Կոստանդնուպոլսի ավստրոգերմանական ողջ բնակչությունը, դեսպանությունների անձնակազմերը ներառյալ, եկել էին դիմավորելու այդ գնացքը: Երբ այն վերջապես ժամանեց կայարան, հազարավոր կոպիտ կոկորդներ հնչեցրին նույնքան կոպիտ «հոխ» ողջույնը:

1916թ. հունվարի 17-ից ի վեր Բալկանցուգը կանոնավոր երթևեկում էր Բեռլինից Կոստանդնուպոլիս: Գերմանացիները վստահ էին, որ այն գերմանական նոր կայսրության նույնքան մշտական ներկայությունն է լինելու, որքան Բեռլինից Համբուրգ գնացող գնացքը:

ԳԼՈՒԽ XXII

Թուրքը վերադառնում է նախնյաց ակունքներին

Դարդանելից Դաշնակիցների նավատորմի նահանջն ունեցավ հետևանքներ, որոնք աշխարհը դեռևս ամբողջովին չի ըմբռնել: Ինչպես արդեն նշեցի, գործնականում Դարդանելի ռազմական գործողությունները միտված էին մեկուսացնելու Օսմանյան կայսրությունը ողջ աշխարհից, բացառությամբ Գերմանիայի ու Ավստրիայի: Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանն ու Իտալիան, որոնք շուրջ մեկ դար շարունակ զսպում էին Օսմանյան կայսրությանը, վերջնականապես կորցրին հակազդելու կամ վերահսկելու իրենց հնարավորությունը: Հիմա թուրքերին թվում էր, թե իրար հաջորդող շլացուցիչ իրադարձությունները փոխել են իրենց՝ թուրքերի՝ եվրոպական տերություններից ունեցած խոնարհ, կախյալ կարգավիճակը՝ դարձնելով իրենց ազատ գործող մարդիկ: Երկու հարյուր տարվա ընթացքում առաջին անգամ նրանք կարող էին ապրել իրենց կյանքով՝ համաձայն սեփական նախասիրությունների և կառավարել ժողովրդին ըստ իրենց հայեցողության: Այս վերածնված ազգային կյանքի առաջին դրսևորումներից էր մի երևույթ, որը, իմ կարծիքով, ամենասարսափելին է մարդկության պատմության մեջ. նոր Թուրքիան, ազատվելով եվրոպական վերահսկողությունից, նշանավորեց իր ազգային վերածնունդը՝ սպանելով իր իսկ քաղաքացիներից շուրջ մեկ միլիոնին:

Անհնար է չափազանցել այն տպավորությունը, որ թուրքերի վրա ունեցավ Դաշնակիցների նավատորմի նահանջը: Նրանք հավատացած էին, որ մեծ ու վճռական հաղթանակ են տարել պատերազմում: Դարեր շարունակ, ասում էին նրանք, բրիտանական նավերը հաղթականորեն շրջում էին ծովերում և հիմա առաջին անգամ լուրջ պարտություն կրեցին թուրքերից: Հպարտության առաջին վայրկյաններին երիտթուրքերի առաջնորդներն ապրում էին իրենց կայսրության լիակատար վերածնման տեսիլքներով: Այն, ինչ երկու դար շարունակ փտող տերություն էր, հանկարծ նոր ու փառավոր կյանք սկսեց: Իրենց գոռոզությամբ թուրքերը սկսեցին քամահրանքով նայել նրանց, ովքեր իրենց սովորեցրել էին այն ամենը, ինչ նրանք գիտեին պատերազմելու ժամանակակից մեթոդների մասին, և ոչինչ նրանց այնպես չէր զայրացնում, որքան որևէ ակնարկ, թե իրենց հաղթանակի գոնե մի մասի համար պարտական են գերմանացի դաշնակիցներին:

- Իսկ ինչո՞ւ պետք է որևէ պարտավորություն զգանք գերմանացիների հանդեպ, - հարցնում էր ինձ Էնվերը, - ինչպե՞ս կարելի է համեմա-

տել այն, ինչ նրանք են արել մեզ համար մեր՝ նրանց համար արածների հետ: Ճիշտ է, նրանք մեզ մի քիչ գումար են տվել ու մի քանի սպա ուղարկել, բայց, տեսեք, մենք ինչե՞ր ենք արել... պարտության ենք մատնել բրիտանական նավատորմին, մի բան, որ ո՛չ գերմանացիները, ո՛չ էլ մեկ այլ պետություն չէր կարողանա անել: Մենք զորք ուղարկեցինք Կովկասյան ռազմաճակատ. այդպես զբաղված պահեցինք ռուսական բանակի մի հսկա մասը, որը հակառակ դեպքում կկռվեր Արևմտյան ճակատում: Այդկերպ մենք հարկադրեցինք բրիտանացիներին մեծաքանակ զորք պահել Եգիպտոսում, Միջագետքում՝ այդպիսով թուլացնելով Դաշնակիցների բանակը Եվրոպայում: Ո՛չ, գերմանացիները երբեք չէին հասնի ռազմական հաջողության առանց մեզ. եթե որևէ մեկը պետք է իրեն պարտավորված զգա, դա հենց իրենք են:

«Միություն և առաջադիմություն» կուսակցության առաջնորդների անսասան վստահությունը, որ դա իրո՛ք այդպես է, սկսեց զգալի ազդեցություն ունենալ թուրքական ազգային կյանքի ու քաղաքականության վրա: Իրականում թուրքերը հոխորտացող են ու վախկոտ: Առյուծի պես անվախ են, երբ հաջողությունն իրենց կողմն է, սակայն քծնող են, ստոր ու խղճուկ, երբ ծախողվում են: Հիմա, երբ պատերազմի ընթացքն ակնհայտորեն բարենպաստ էր Օսմանյան կայսրության համար, իմ առջև հայտնվեց թուրքի միանգամայն նոր տեսակ. վախկոտ ու տատանվող օսմանցու փոխարեն, որն անվստահ ու զգուշորեն խարխափում էր եվրոպական դիվանագիտության լաբիրինթոսում և փորձում իր համար բարենպաստ հնարավորություններ գտնել եվրոպական տերությունների հակասությունների մեջ, իմ առջև հայտնվեց հողի վրա ամուր կանգնած, հանդուգն, գոռոզ ու ինքնավստահ, իր կյանքը յուրովի ապրելու վճռականությամբ ու իր քրիստոնյա թշնամիների հանդեպ բացարձակ արհամարհանքով լցված մի կերպար: Ես, հիրավի, վկա դարձա ազգային հոգեբանության զարմանալի փոխակերպման՝ կերպարի հետադարձ զարգացման գրեթե դասական մի օրինակի: Քսաներորդ դարի ողորմելի, աղտոտ թուրքն անհետանում է, ու նրա փոխարեն հայտնվում է տասնչորստասնհինգերորդ դարերի թուրքը, որը հեղեղի նման հորդեց իր ասիական ամրություններից, զավթեց ճանապարհին հանդիպած բոլոր հզոր պետություններն ու հիմնեց պատմությանը հայտնի ամենամեծ կայսրություններից մեկը, որը տարածվում էր Ասիայից մինչև Աֆրիկա ու Եվրոպա: Այդ թալեաթներին, էնվերներին և կատարվող դեպքերին ճիշտ գնահատական տալու համար պետք է հասկանալ այն թուրքերին, որոնք Օսմանի ու նրա հաջորդների օրոք աշխարհում ունեին հզոր, սակայն կործանարար ազդեցություն: Հարկ է ընդունել այն փաստը, որ թուրքա-

կան մտածելակերպի հիմքում ընկած է բացարձակ քամահրանքն այլ ազգերի հանդեպ: Հիվանդագին գոռոզություն. սա այն հասկացությունն է, որը լիովին բացատրում է այդ տարօրինակ մարդկանց էությունը: Թուրքերը քրիստոնյաներին սովորաբար կոչում են մեկ բառով՝ «շներ», և դա նրանց համար զուտ այլաբանական հասկացություն չէ. նրանք իսկապես իրենց եվրոպացի հարևաններին ընկալում են որպես շատ ավելի անարժան արարածներ, քան ընտանի կենդանիներն են: «Տղա՛ս, - մի օր ինձ ասաց տարեց մի թուրք, - տեսնու՞մ ես այն խոզերին. դրանցից մի քանիսը սպիտակ են, մյուսները՝ սև, փոքր կամ մեծ. դրանք իրարից տարբերվում են որոշակի մանրուքներով, սակայն դրանք բոլորը խոզեր են: Նույնն էլ՝ քրիստոնյաները: Չխաբվե՛ս, տղաս: Այդ քրիստոնյաները կարող են գեղեցիկ հագնված լինել, նրանց կանայք կարող են շատ հմայիչ լինել, նրանց մաշկը ճերմակ է ու սքանչելի, նրանցից շատերը բավական խելացի են, նրանք հիասքանչ քաղաքներ են կառուցում ու կարծես թե հզոր պետություններ են ստեղծում, սակայն հիշի՛ր, որ այդ փայլուն արտաքինի տակ նրանք բոլորը նույնն են՝ խոզեր»:

Թուրքի ներկայությամբ բոլոր օտարերկրացիները զգում են այդ վերաբերմունքը: Թուրքն արտաքուստ կարող է ընդգծված քաղաքավարի լինել, սակայն ենթագիտակցորեն խորշում է իր քրիստոնյա բարեկամից՝ որպես մի պիղծ արարածից: Եվ այդ հաստատուն համոզմունքը դարեր շարունակ ուղղորդել է օսմանյան քաղաքականությունը ենթակա ժողովուրդների հանդեպ: Այս վայրի ոհմակը Կենտրոնական Ասիայի անապատներից վրա հասավ և փոթորկի պես ջախջախեց Միջագետքի ու Փոքր Ասիայի ժողովուրդներին, նվաճեց Եգիպտոսը, Արաբիան, Հյուսիսային Աֆրիկան, այնուհետև ներխուժեց Եվրոպա, բնաջնջեց բալկանյան ազգերը, գրավեց Հունգարիայի տարածքի մեծ մասը և նույնիսկ Օսմանյան կայսրության ամրակետեր հաստատեց Ռուսաստանի հարավում: Որքանով ինձ հաջողվեց պարզել, օսմանյան թուրքերն ունեին միայն մեկ առանձնահատուկ հատկանիշ՝ ռազմական տաղանդ: Նրանք ունեցել են աչքի ընկնող բազմաթիվ զորավարներ: Նրանց զավթիչ նախնիներն ունեին խիզախ, մոլեռանդ ու դիմացկուն մարտիկի համբավ, ինչպիսին նրանց ժառանգներն են այսօր: Ես կարծում եմ, որ հին թուրքերը քաղաքականությունը ավազակային մեթոդներով իրականացնելու ամենափայլուն օրինակն են. նրանք զուրկ էին այն ամենից, ինչ մենք անվանում ենք քաղաքակիրթ հասարակության հիմնական բաղադրիչներ. չունեին ո՛չ այբուբեն, ո՛չ գրքեր, ո՛չ բանաստեղծներ, ո՛չ արվեստ, ո՛չ ճարտարապետություն: Նրանք քաղաքներ չէին կառուցում ու չէին հիմնում հարատևող պետություններ, չունեին գյուղատնտեսություն կամ

արդյունաբերություն: Ուժի օրենքից բացի ոչ մի այլ օրենք չէին ճանաչում: Նրանք պարզապես վայրի, բարբարոս հեծյալներ էին: Թուրքերի համար ցեղական հաջողությունը նշանակում էր հարձակվել ավելի զարգացած ժողովուրդների վրա ու կողոպտել նրանց: 14-15-րդ դարերի ընթացքում թուրքերը զավթեցին ժամանակակից քաղաքակրթության այն օջախները, որոնք Եվրոպային նվիրել էին իր կրոնը, նաև քաղաքակրթությունը: Հնուց ի վեր այդ տարածքներում բնակվում էին խաղաղասեր, բարգավաճ ժողովուրդներ: Միջագետքի հարթավայրում բնակվում էր մեծաթիվ աշխատասեր, գյուղատնտեսություն վարող ժողովուրդ: Բաղդադն ամենախոշոր ու զարգացած քաղաքներից էր, Կոստանդնուպոլսում բնակչությունը շատ ավելի մեծ էր, քան Հռոմում, իսկ Բալկաններում ու Փոքր Ասիայում կային մի քանի հզոր պետություններ: Աշխարհի այս ողջ տարածքում թուրքերը հայտնվեցին որպես ավերիչ հեղեղ: Միջագետքը մի քանի տարի անց վերածվեց անապատի, Մերձավոր Արևելքի հիասքանչ քաղաքներն ավերվեցին, իսկ դրանց բնակիչները ստրկացվեցին: Քաղաքակրթության այն բոլոր բարիքները, որոնք թուրքերը զավթել են հինգ դարերի ընթացքում, վերցված են ստրկացված այն ժողովուրդներից, որոնց թուրքերն այնքան արհամարհում են: Թուրքերն իրենց կրոնը փոխառել են արաբներից, նրանց լեզուն ձեռք բերեց գրական որոշ արժեք արաբական ու պարսկական տարրեր յուրացնելու շնորհիվ: Նրանց գիրն էլ արաբական է: Կոստանդնուպոլսի ամենասքանչելի ճարտարապետական կոթողը՝ Սուրբ Սոֆիա մզկիթը, նախկինում քրիստոնեական տաճար է եղել, իսկ այսպես կոչված «թուրքական» ճարտարապետությունը վերցված է բյուզանդականից: Ձեռներեցությունն ու արդյունաբերությունը մշտապես լծի տակ ընկած ժողովուրդների՝ հույների, հրեաների, հայերի և արաբների ձեռքին են եղել: Թուրքերը երբեք եվրոպական արվեստ ու գիտություն չեն սովորել, հիմնել են փոքրաթիվ ուսումնական հաստատություններ, իսկ անգրագիտությունը նրանցում գերիշխող երևույթ է:

Այդ ամենի հետևանքով չքավորությունը Օսմանյան կայսրությունում հասել է այնպիսի ահավոր չափերի, և այնպիսի ողորմելի վիճակ է ստեղծվել, որ չես գտնի որևէ այլ երկրում: Թուրք ռամիկն ապրում է ցեխատանը, քնում հողի վրա, չունի ո՛չ սեղան, ո՛չ աթոռ, ո՛չ դանակ ու պատառաքաղ, ո՛չ էլ հագուստ, բացի այն մի քանի փալասից, որոնցով ծածկում է կռնակը և որոնք կրում է երկար տարիներ:

Հնարավոր է, որ ժամանակի ընթացքում թուրքերը կարողանան որոշ բաներ սովորել իրենց եվրոպացի կամ արաբ հարևաններից, սակայն կա մի բան, որ նրանք չեն հասկանում: Չեն հասկանում, որ զավթված ժողո-

վուրդներն ավելին են, քան պարզապես ստրուկներ: Երբ նրանք զավթում էին տարածքներ, այնտեղ լինում էին որոշակի քանակությամբ ուղտեր, ձիեր, ցուլեր, շներ, խոզեր և մարդ արարածներ: Այդ բոլոր կենդանի արարածներից այն մեկը, որ ամենից շատ էր իրենց նման, թուրքերի համար ամենաանկարևորն էր: Ասացվածք էր տարածվել, որ ձին կամ ուղտն ավելի մեծ արժեք ունի, քան մարդ էակը: Այդ կենդանիները փող արժեին, մինչդեռ բազմաթիվ էին «անհավատ քրիստոնյաները» օսմանյան տիրույթներում, և նրանց կարելի էր հարկադրել աշխատել: Ճիշտ է, որ առաջին սուլթանները ենթակա ժողովուրդներին ու եվրոպացիներին որոշակի իրավունքներ էին տվել, սակայն դա ինքնին արտացոլում էր այն արհամարհանքը, որն առկա էր բոլոր ոչ մահմեդականների հանդեպ: Ես արդեն նկարագրել եմ կապիտուլյացիաները, որոնց համաձայն՝ օտարազգիները Թուրքիայում ունեին իրենց դատարանները, բանտերը, փոստի գրասենյակներն ու այլ հաստատություններ: Առաջին սուլթանները նրանց տվել էին այդ իրավունքները՝ ոչ թե բարեսրտությունից դրդված, այլ սոսկ այն պատճառով, որ քրիստոնյա հպատակներին նայում էին որպես պիղծ արարածների, հետևաբար անարժան որևէ առնչություն ունենալու օսմանյան վարչարարական կամ դատական համակարգերին: Նույն տրամաբանությամբ սուլթանները որոշ ազգերի, օրինակ՝ հույներին ու հայերին, տվել էին «միլեթի»՝ համայնքի կարգավիճակ, ոչ թե այն պատճառով, որ ցանկանում էին խթանել նրանց անկախությունը կամ բարօրությունը, այլ՝ որովհետև նրանց դիտում էին որպես նողկալի արարածներ, որոնք արժանի չեն օսմանյան պետության մաս լինել: Կառավարության վերաբերմունքը քրիստոնյա սեփական հպատակների հանդեպ ապացուցվում է այն օրենքներով, որոնք սահմանափակում էին նրանց գործողությունների ազատությունը: Այն շինությունը, որտեղ քրիստոնյա է բնակվում, չպետք է աչքի ընկնի, իսկ եկեղեցիները զանգակատուն չպետք է ունենան: Քրիստոնյաներն իրավունք չունեն քաղաքում ձիով երթևեկելու, քանի որ դա ազնվածին մահմեդականների բացառիկ իրավունքն է: Թուրքն իրավունք ունի իր թրի սրությունը ստուգելու ցանկացած քրիստոնյայի պարանոցի վրա:

Երևակայեք մի հսկա երկիր, որը երկարուձիգ տարիներ նման վերաբերմունք է ցուցաբերում իր միլիոնավոր հպատակների հանդեպ: Դարեր շարունակ թուրքերը պորտաբույծների նման ապրել են իրենց լծի ծանրության տակ կքած աշխատասեր մարդկանց հաշվին: Թուրքերը դաժան հարկեր էին դնում նրանց վրա՝ հասցնելով վերջիններիս ծայրաստիճան չքավորության, տնտեսական կործանման, առևանգում էին նրանց ամենագեղեցիկ աղջիկներին ու բռնի ուժով տանում իրենց հա-

ռեմները, հավաքում հարյուրհազարավոր քրիստոնյա պատանիների և մեծացնում նրանց որպես մահմեդական զինվորներ: Ես չեմ նկարագրի այն ահավոր վասալական կախվածությունն ու հալածանքը, որ շարունակվում էր հինգ հարյուր տարի. իմ նպատակն է ընդգծել մահմեդական թուրքի բնածին վերաբերմունքն այն մարդկանց հանդեպ, ովքեր չեն պատկանում իրենց ցեղին կամ կրոնին. դրանք, ըստ նրանց, մարդ արարածներ չեն, հետևաբար չունեն իրավունքներ: Նրանք պարզապես անշունչ սեփականություն են, որոնց թույլատրվում է ապրել, եթե ծառայում են իրենց տերերի շահերին, բայց և կարող են անգթաբար ոչնչացվել ոչ պիտանի դառնալուն պես: Այդ վերաբերմունքն առավել խորացվում էր բացարձակ արհամարհանքով մարդու կյանքի հանդեպ և նրան ֆիզիկական ցավ պատճառելու մեծագույն հաճույքով, ինչը բնորոշ է պրիմիտիվ ժողովուրդներին:

Այդպիսին էր թուրքն իր ռազմական փառքի օրերին: Հիմա նրա վերաբերմունքը օտարերկրացիների և սեփական հպատակների հանդեպ մակերեսային փոփոխություն է կրել: Թուրքերի ռազմական անկումը և այն դյուրինությունը, որով «անհավատ» ազգերը ջախջախում էին նրանց ընտիր բանակները, Օսմանի գոռոզամիտ ժառանգներին հարկադրեցին հարգել թշնամու բացառիկ ունակությունները: Հարյուր տարվա ընթացքում սեփական կայսրության արագ փլուզումը, Օսմանյան կայսրությունից դուրս գալուց հետո նոր պետությունների՝ Հունաստանի, Սերբիայի, Բուլղարիայի և Ռումինիայի ստեղծումը, այն ակնառու փոփոխությունները, որ տեղի ունեցան այդ հետամնաց տարածքներում թուրքական լուծը թոթափելուց հետո, է՛լ ավելի սաստկացրին օսմանցիների ատելությունն «անհավատների» հանդեպ, սակայն դրանք որոշակի ազդեցություն ունեցան թուրքերի վրա՝ սեփական կարևորության չափն ընկալելու համար: Հիմա արդեն թուրքերից շատերը կրթություն էին ստանում եվրոպական համալսարաններում, ուսանում էին Եվրոպայի մասնագիտական դպրոցներում՝ ստանալով ժամանակակից բժշկի, վիրաբույժի, փաստաբանի, ինժեների կամ քիմիկոսի մասնագիտություն: Մահմեդականները, որքան էլ ատեին քրիստոնյաներին, չէին կարող անտեսել այն փաստը, որ առնվազն այս անցողիկ աշխարհի լավագույն բարիքները ստեղծել են եվրոպական ու ամերիկյան քաղաքակրթությունները:

Իսկ այժմ ժամանակակից պատմության զարգացումներից մեկը, որը պակաս հասկանալի էր թուրքերի համար, սկսեց ընկալվել նրանց առավել կրթված ու առաջադեմ անձանց կողմից: Հայտնվեցին առաջնորդներ, ովքեր զգուշորեն սկսեցին խոսել «սահմանադրություն», «ազատություն», «ինքնակառավարում» հասկացությունների մասին, և որոնց հա-

մար Անկախության հռչակագիրը[31] պարունակում էր ճշմարիտ դրույթներ, որոնք կարող էին որոշակի արժեք ունենալ նույնիսկ իսլամի համար: Այդ խիզախ ոգիները սկսեցին երազել բռնակալ սուլթանին գահընկեց անելու և նրա ապաշնորհ կառավարումը խորհրդարանական կարգերով փոխարինելու մասին: Ես արդեն նկարագրել եմ երիտթուրքերի շարժման վերելքն ու անկումը Թալեաթի, Էնվերի, Ջեմալի ու «Միություն և առաջադիմություն» կուսակցության գինակիցների ղեկավարությամբ: Այստեղ կցանկանայի ընդգծել այն միտքը, որ այս շարժումը նախատեսում էր թուրքական ողջ մտածողության ձևափոխումը, մասնավորապես՝ նրանց ենթակա ժողովուրդների հանդեպ: Թուրքական վերափոխված պետության մեջ հույները, սիրիացիները, հայերը և հրեաներն այլևս չպետք է համարվեին «պիղծ գյավուրներ»: Այսուհետ այդ ազգերը պիտի ունենային հավասար իրավունքներ և պարտականություններ: Նոր ռեժիմի ստեղծմանը հաջորդեց «մեղրամիսը» և գրեթե հիստերիկ հաշտեցումը, երբ հայերն ու թուրքերը հրապարակավ գրկախառնվում էին՝ ի նշան երկու հակամետ ժողովուրդների կատարյալ հաշտության: Թուրք առաջնորդները, ներառյալ Թալեաթն ու Էնվերը, այցելում էին քրիստոնեական եկեղեցիներ և երախտագիտության աղոթքներ հղում նոր կարգերի հաստատման համար, հետո այցելում հայկական գերեզմանոցներ՝ քավության արցունքներ թափելով այնտեղ թաղված նահատակ հայերի աճյունների վրա: Հայ քահանաներն իրենց հերթին հարգանքի տուրք էին մատուցում թուրքերին մահմեդական մզկիթներում: Էնվեր փաշան այցելեց հայկական մի քանի դպրոց՝ երեխաներին հավաստիացնելով, որ մահմեդական-քրիստոնյա կռվի օրերն անվերադարձ անցել են, և որ հիմա երկու ժողովուրդները պետք է ապրեն կողք կողքի՝ որպես քույրեր ու եղբայրներ: Որոշ ցինիկներ քմծիծաղով էին նայում այս ամենին, սակայն կար մի երևույթ, որը նույնիսկ նրանց ստիպեց հավատալ, որ հաստատվել է երկրային դրախտ: Օսմանյան կայսրության ողջ պատմության ընթացքում միայն մահմեդականներին էր թույլատրվում զենք կրել և ծառայել օսմանյան բանակում: Զինվոր լինելը չափից ավելի առնական ու փառավոր գործ էր համարվում, որպեսզի այն վստահվեր արհամարհված քրիստոնյաներին, սակայն հիմա երիտթուրքերը խրախուսում էին բոլոր քրիստոնյաներին զինվել և մահմեդականների հետ հավասար ծառայել բանակում: Ու քրիստոնյաները՝ շարքային զինվոր թե սպա, կռվեցին Իտալական և Բալկանյան պատերազմներում և թուրք գեներալներից մեծ գովասանքի արժանացան իրենց քաջության ու արհեստավարժության համար: Երիտթուրքերի շարժմանը ակտիվ մասնակցում էին հայազգի առաջնորդները. այդ մարդիկ անկեղծորեն հավատում

էին, որ հնարավոր է ստեղծել սահմանադրական Թուրքիա: Նրանք գիտակցում էին իրենց մտավոր ու մասնագիտական առավելությունը թուրքերից, ինչպես նաև վստահ էին՝ եթե իրենց հանգիստ թողնեն, ապա իրենք կարող են բարգավաճել Օսմանյան կայսրությունում, մինչդեռ եվրոպական վերահսկողության ներքո ավելի մեծ դժվարություններ կունենան եվրոպացի եռանդուն գաղութարարների հայտնվելու դեպքում: Արյունռուշտ սուլթան Աբդուլ Համիդի գահընկեց լինելուց և սահմանադրական կարգեր հաստատվելուց հետո հայերը հարյուրավոր տարիների ընթացքում առաջին անգամ իրենց ազատագրված զգացին:

Սակայն, ինչպես արդեն նշել եմ, այդ բոլոր երազանքները հօդս ցնդեցին երազի պես: Եվրոպական պատերազմի սկսվելուց շատ առաջ թուրքական ժողովրդավարությունն անհետացավ: Նոր սուլթանի իշխանությունը փոշիացավ, ինչպես նաև՝ նոր Թուրքիա ստեղծելու բաղձանքը: Մնաց միայն անհատների մի խումբ Թալեաթի ու Էնվերի գլխավորությամբ, որը երկրի իրական տերն էր: Կորցնելով ժողովրդավարության վերաբերյալ պատրանքները՝ այդ պաշտոնյաները փոխարինեցին դրանք ազգային նոր գաղափարով. ժողովրդավարական, սահմանադրական պետություն ստեղծելու փոխարեն նրանք հարություն տվեցին պանթուրքիզմի գաղափարին, Օսմանյան կայսրության բոլոր հպատակներին հավասար իրավունքներ տալու փոխարեն որոշեցին ստեղծել պետություն միայն թուրքերի համար: Ես դա նոր գաղափար անվանեցի, սակայն դա նոր էր միայն նրանց համար, ովքեր այդ պահին իրենց ձեռքին էին պահում երկրի ճակատագիրը, մինչդեռ իրականում դա պարզապես փորձ էր կյանքի կոչելու իրենց նախնիների ամենաբարբարոս գաղափարներից մեկը: Ինչպես արդեն ասացի, դա ատավիստական վերադարձ էր թուրքերի ճշմարիտ ակունքներին: Հիմա մենք համոզվեցինք, որ ազատության, հավասարության, եղբայրության և սահմանադրական կարգերի մասին ճամարտակող թուրքերը նման էին մանուկների, որոնք մեքենայաբար բառեր են կրկնում, իսկ «ժողովրդավարություն» բառը նրանք օգտագործեցին որպես աստիճան, որով կարելի էր մագլցել իշխանության գագաթ: Եվրոպական քաղաքակրթությանը հինգ հարյուր տարի առնչվելուց ու շփվելուց հետո էլ թուրքերը մնացին այն նույն ժողովուրդը, որը միջնադարում հայտնվեց Ասիայի տափաստաններից: Նրանց նախնիները նույն համառությամբ կառչում էին այն գաղափարից, թե պետությունը կազմված է մի քանի իշխող անձանցից, ովքեր իրավունք ունեն կողոպտելու, ստրկացնելու ու տանջահար անելու ցանկացած ժողովրդի, որին կարող են պահել իրենց ռազմական վերահսկողության տակ: Թեև Թալեաթը, Էնվերն ու Ջեմալը բավական համեստ

ծագում ունեին, սակայն նրանք նույնպես համակված էին այն նույն՝ «տեր ու ստրուկ» գաղափարով, որն ուղղորդում էր օսմանցիների և վաղ շրջանի սուլթանների պետականաշինության ծրագրերը: Ինչպես համոզվեցինք, թղթի վրա գոյություն ունեցող Սահմանադրությունը և նույնիսկ քրիստոնեական եկեղեցիներ նրանց սրտաճմլիկ այցերն անկարող էին արմատախիլ անել այս թափառաշրջիկ ցեղի՝ ի ծնե ունեցած այն համոզմունքը, թե աշխարհում գոյություն ունեն միայն երկու տեսակի մարդիկ՝ զավթողներ և զավթվողներ:

Երբ թուրքական կառավարությունը վերացրեց կապիտուլյացիաների համակարգը և այդպիսով ինքն իրեն ազատեց օտար պետությունների վերահսկողությունից, պարզապես քայլ առաջ կատարեց դեպի պանթուրքիզմի իր իդեալի իրագործումը: Արդեն նկարագրել եմ այն դժվարությունները, որոնց բախվում էի թուրքերի հետ քրիստոնեական դպրոցների վերաբերյալ հարցերը քննարկելիս: Դրանք փակելու կամ առնվազն թուրքական հաստատությունների վերածելու նրանց հաստատակամությունը պարզապես մեկ այլ բաղադրիչ էր ազգայնական այդ առաջընթացում: Նույնկերպ նրանք փորձեցին օտարերկրյա ձեռներեցներին հարկադրել աշխատանքի վերցնել միայն թուրքերի՝ հեռացնելով հույներին, հայերին և հրեա ծառայողներին, սղագրիչներին, բանվորներին և մյուս աշխատողներին: Բոլոր օտար ձեռնարկություններին նրանք ստիպեցին գրագրությունը վարել թուրքերեն՝ այդպիսով փորձելով աշխատանք ապահովել թուրքերի համար և հնարավորություն տալ նրանց ծանոթանալու բիզնես վարելու ժամանակակից մեթոդներին: Օսմանյան կառավարությունը նույնիսկ հրաժարվեց որևէ գործ ունենալ զինամթերք արտադրող ավստրիական ամենախոշոր ընկերության հետ այնքան ժամանակ, մինչև այն չունենար ընկերության թուրք բաժնետեր: Օտար լեզուները ստորացնելը վերածվել էր մոլուցքի: Օտարազգիները Կոստանդնուպոլսում տասնամյակներ շարունակ շփվում էին ֆրանսերենով, փողոցի ուղեցույցները գրված էին երկու լեզվով՝ ֆրանսերեն ու թուրքերեն: Ապշահար օտարերկրացիները մի օր արթնացան ու տեսան, որ ֆրանսերեն գրված բոլոր ցուցանակներն անհետացել են, և փողոցի անունները, ուղեցույցները և հանրային այլ ծանոթագրություններ գրված են միայն այդ տարօրինակ արաբական տառերով, որոնք շատ քչերին էին հասկանալի: Այդ փոփոխությունների հետևանքով համատարած խառնաշփոթ սկսվեց, սակայն իշխանավորները հրաժարվեցին վերականգնել «գարշելի» օտար գրությունները:

Թուրք առաջնորդները ոչ միայն վերադարձան իրենց նախնիների համոզմունքներին, այլև հասան այնպիսի ծայրահեղությունների, որպի-

սիք նախկին սուլթանների մտքով իսկ չէին անցել: Նրանց նախնիները 15-16-րդ դարերում իրենց ենթակա ազգերին վերաբերվում էին որպես ոտնատակի կեղտի, սակայն հավատում էին, որ նրանք, այնուամենայնիվ, ինչ-որ օգտակար դերակատարություն ունեն, և չէին խորշում նրանց որպես ստրուկ պահել: Սակայն «Միություն և առաջադիմություն» կոմիտեն Թալեաթի ու Էնվերի առաջնորդությամբ վճռեց իսպառ ազատվել նրանցից: Հնավանդ զավթիչ թուրքերը քրիստոնյաներին պահում էին որպես ծառա, իսկ նրանց նորելուկ ժառանգները, կատարելագործելով վաղեմի մեթոդները, որոշեցին պարզապես ոչնչացնել կամ թուրքացնել նրանց՝ կոտորելով կայսրության ոչ մահմեդական բնակչությանը: Սկզբում դա Թալեաթի ու Էնվերի՝ պետականություն ստեղծելու վերաբերյալ գաղափարներից չէր: Այն մարդը, որ առաջինը մտահղացավ այդ գաղափարը, պատմությանը հայտնի ամենագարշելի հրեշներից մեկն էր՝ «մեծ մարդասպան» Աբդուլ Համիդը: Նա գահ բարձրացավ 1876 թվականին՝ թուրքական պատմության համար բախտորոշ պահի: Իր կառավարման առաջին երկու տարիներին նա կորցրեց Բուլղարիան, ինչպես նաև կարևոր նշանակության կովկասյան գավառներ, իր ինքնիշխանության մնացորդները Մոնտենեգրոյում, Սերբիայում և Ռումինիայում, ինչպես նաև իր ողջ իշխանությունը Բոսնիայում ու Հերցեգովինայում: Հունաստանը վաղուց էր անկախացել, և այն գործընթացները, որոնք ի վերջո պետք է անջատեին Եգիպտոսը Օսմանյան կայսրությունից, արդեն սկսվել էին: Երբ սուլթանն անցավ իր ժառանգության կառավարմանը, նրա համար պարզ դարձավ, որ կգա մի օր, երբ իր գերիշխանության ողջ տիրույթը կանցնի անհավատների ձեռքը: Ո՞րն էր թուրքական անծայրածիր կայսրության փլուզման պատճառը: Իրական պատճառը, իհարկե, խորքային է՝ թուրքերի էությունը, սակայն Աբդուլ Համիդը տեսնում էր միայն այն մակերեսային ու ակնառու փաստը, որ եվրոպական մեծ տերությունների միջամտությունը ազատություն բերեց այդ ստրկացված ժողովուրդներին: Սուլթանի նախկին տիրույթներից պոկված բոլոր նոր երկրներից միայն Սերբիան էր, այս փաստը հիշենք ի պատիվ այդ երկրի, որը զենքով նվաճեց իր անկախությունը: Մնացած բոլորին ազատություն բերեցին Ռուսաստանը, Ֆրանսիան ու Մեծ Բրիտանիան: Իսկ այն, ինչ նախկինում արդեն մի քանի անգամ կատարվել էր, կարող էր նորից պատահել: Օսմանյան կայսրությունում դեռևս գոյություն ուներ մի միաձուլված ժողովուրդ, որին հատուկ էին ազգային զգայականությունը և ազգային ներուժը: Փոքր Ասիայի հյուսիսարևելյան մասում՝ Ռուսաստանին սահմանակից, գտնվում էին վեց գավառներ, որտեղ հայերը կազմում էին բնակչության ամենամեծ զանգվածը: Հերոդոտոսի ժամանակներից ի վեր Ասիայի այդ մասը կոչվել

է Հայաստան: Այսօրվա հայերն անմիջական ժառանգներն են այն ժողովրդի, որը երեք հազար տարի շարունակ բնակվել է այդ հողում: Նրանց վաղնջական ծագման պատմությունն այնքան հին է, որ պարփակված է առասպելների ու գաղտնիքների ծալքերում: Հայկական ամենախոշոր քաղաքի՝ Վանի ժայռոտ բարձունքներին դեռևս կան չվերծանված սեպագրեր, որոնք, որոշ գիտնականների համոզմամբ (թեև պետք է խոստովանեմ, որ նրանց թիվը մեծ չէ), ապացույց են այն բանի, որ հայերը Աստվածաշնչում հիշատակվող նույն խեթերն են: Սակայն հայերի մասին կարելի է վստահությամբ ասել, որ նրանք դարեր շարունակ եղել են Օսմանյան կայսրության արևելյան մասի ամենաքաղաքակիրթ ու աշխատասեր ժողովուրդը: Իրենց հարազատ սարերից հայերը տարածվել են սուլթանի բոլոր տիրույթներով և բոլոր խոշոր քաղաքներում կազմել բնակչության զգալի մասը: Ամենուրեք նրանք հայտնի են իրենց աշխատասիրությամբ, խելքով, պարկեշտությամբ ու կազմակերպվածությամբ: Նրանք այնքան են գերազանցում թուրքերին իրենց մտավոր ու բարոյական հատկանիշներով, որ ձեռներեցության ու արդյունաբերության զգալի մասն անցել է նրանց ձեռքը: Հույների հետ միասին կայսրության տնտեսական զորությունն են: Այս ժողովուրդը քրիստոնեությունը՝ որպես պետական կրոն ընդունել է չորրորդ դարում և հաստատել հայկական եկեղեցին, որը աշխարհի ամենահին քրիստոնեական եկեղեցին է:

Անասելի հետապնդումների ու ջարդերի պայմաններում, որոնց հավասարը գոյություն չունի, այս մարդիկ արտառոց համառությամբ կառչում են իրենց քրիստոնեական հավատքից: Տասնհինգ դար շարունակ նրանք բնակվել են Արմենիայում՝ քրիստոնեական փոքր կղզում՝ շրջապատված հետամնաց, թշնամական հավատքի ու ցեղի մարդկանցով: Նրանց դարավոր գոյատևումն անվերջանալի նահատակությունների, զոհաբերության պատմություն է: Այն տարածքը, որտեղ բնակվում են հայերը, կապող օղակ է Եվրոպայի ու Ասիայի միջև, և Ասիա ներխուժող բոլոր այլազգիները՝ սարակինոսները, թաթարները, մոնղոլները, քրդերն ու թուրքերը, անցել են նրանց խաղաղ երկրով: Դարեր շարունակ նրանք եղել են «Արևելքի Բելգիա»: Այդ ողջ ընթացքում հայերն իրենց ոչ թե ասիացի, այլ եվրոպացի են համարել. նրանք խոսում են հնդեվրոպական լեզվով, որի ծագումը գիտնականները կապում են արիականի հետ, և այն փաստը, որ նրանց դավանանքը Եվրոպայի դավանանքն է, մշտապես նրանց մղել է հայացքն ուղղել դեպի Արևմուտք: Նրանք շարունակ հույս են ունեցել, որ Արևմտյան աշխարհից մի օր կգա իրենց ազատությունը և նրանք կփրկվեն արյունախում զավթիչներից: Երբ 1876 թվականին Աբդուլ Համիդը հայացք նետեց իր քայքայված տիրույթներին, վճռեց,

որ Հայաստանը դրանց մեջ ամենավտանգավորն է: Իրավացիորեն թե ոչ՝ նա մտածում էր, որ հայերը ռումինացիների, բուլղարների, հույների ու սերբերի նման ձգտում են վերականգնել միջնադարում գոյություն ունեցած իրենց անկախ պետությունը: Նրան հայտնի էր նաև, որ Եվրոպան ու Ամերիկան համակրանքով են վերաբերվում այդ ձգտմանը: Բեռլինի պայմանագիրը, որը վերջ դրեց Ռուս-թուրքական պատերազմին, պարունակում էր մի հոդված, որը եվրոպական տերություններին լիազորում էր օգնության ձեռք մեկնել հայերին: Սուլթանն ինչպե՞ս կարող էր ազատվել այդ վտանգից: Առաջադեմ վարչակազմը հայերին կդարձներ ազատ մարդիկ, կպաշտպաներ նրանց կյանքն ու ունեցվածքը, քաղաքացիական ու կրոնական իրավունքները, ինչը նրանց ըստ ամենայնի կդարձներ խաղաղ ու հավատարիմ հպատակներ: Սակայն սուլթանն ի վիճակի չէր պետականաշինության նման գաղափար հղանալու, դրա փոխարեն Աբդուլ Համիդը որոշեց, որ Թուրքիան հայկական թնջուկից ազատելու միակ ճանապարհը այն հայերից մաքրելն է: Պետության կողմից կազմակերպված և իրականացված կոտորածների միջոցով երկու միլիոն տղամարդկանց, կանանց ու երեխաների ֆիզիկական ոչնչացումը դիտվում էր որպես Օսմանյան կայսրության հետագա փլուզումը կանխելու միակ միջոցը:

Այնուհետև շուրջ երեսուն տարի Թուրքիան աշխարհին ջարդերի միջոցով կառավարելու դաս էր տալիս: Եվրոպայում ու Ամերիկայում մենք լսում էինք այդ ջարդերի մասին միայն այն ժամանակ, երբ դրանք առանձնակի հրեշավոր չափերի էին հասնում, ինչպես պատահեց 1895-96 թվականներին, երբ գրեթե երկու հարյուր հազար հայ կոտորվեց ամենադաժան ձևով: Այդ երկարուձիգ տարիների ընթացքում հայերի գոյությունը մի շարունակական մղձավանջ է եղել. նրանց ունեցվածքը կողոպտում էին, տղամարդկանց սպանում, կանանց բռնաբարում, երիտասարդ աղջիկներին փախցնում ու ստիպում ապրել թուրքական հարեմներում: Այդուհանդերձ, Աբդուլ Համիդին չէր հաջողվում հասնել իր նպատակին: Եթե նրա կամքը լիներ, նա կոչնչացներ մի ողջ ժողովուրդ մեկ հրեշավոր սպանդի միջոցով: Հայերին նա փորձեց վերացնել 1895 և 1896 թվականներին, սակայն նրա ծրագիրը բախվեց անհաղթահարելի խոչընդոտների: Հիմնական բարդությունը Անգլիան, Ֆրանսիան ու Ռուսաստանն էին: Վերոհիշյալ վայրագությունները ծառայությունից հեռացած Գլադստոնին ստիպեցին, որ ութսունվեցամյա քաղաքական գործիչը վերադառնա իր պաշտոնին: Նրա ելույթները, որոնցում նա սուլթանին անվանեց «մեծ մարդասպան», ողջ աշխարհին ստիպեցին դատապարտել կատարվող ոճիրները: Ակնհայտ էր՝ եթե սուլթանը չհանդարտվեր, Անգ-

լիան, Ֆրանսիան ու Ռուսաստանը կարող էին միջամտել, և Թուրքիայի բեկորները, որ դեռևս մնացել էին նախկին մասնատումներից, ուղղակի կվերանային: Այդ էր պատճառը, որ Աբդուլ Համիդը ստիպված եղավ հրաժարվել իր դիվային մտադրությունից՝ ոչնչացնել մի ողջ ժողովուրդ, սակայն Հայաստանը շարունակում էր ապրել անողոք հալածանքների դանդաղ հոգեվարք: Ընդհուպ մինչև Եվրոպական պատերազմի սկիզբը հայկական վիլայեթներում ոչ մի օր չէր անցնում առանց բռնությունների ու սպանությունների: Երիտթուրքերի ռեժիմը, համընդհանուր եղբայրության խոստումներին հակառակ, հայերի վիճակը չթեթևացրեց: Արդեն նկարագրված «մեղրամսից» կարճ ժամանակ անց Ադանայում տեղի ունեցավ ամենասոսկալի ջարդերից մեկը, որի հետևանքով կոտորվեց երեսունհինգ հազար հայ:

Հիմա արդեն երիտթուրքերը, որ որդեգրել էին Աբդուլ Համիդի գաղափարներից շատերը, որդեգրեցին նաև հայերի հանդեպ վարած նրա քաղաքականությունը: Երկիրը թուրքացնելու մոլուցքը, համաձայն նրանց տրամաբանության, պահանջում էր բոլոր քրիստոնյաների՝ հույների, ասորիների և հայերի բնաջնջումը: Որքան էլ նրանք հիանում էին 15-16-րդ դարերի մահմեդական զավթիչներով, անմտորեն հավատում էին, թե այդ հռչակավոր ռազմիկները ճակատագրական մեկ սխալ են գործել. նրանք կարող էին ոչնչացնել երկրի ողջ քրիստոնյա բնակչությանը, սակայն չեն արել: Երիտթուրքերի կարծիքով, նման քաղաքականությունը պետականաշինության համար ճակատագրական սխալ է եղել, ինչը բացատրում էր այն բոլոր ձախողումները, որոնք վերջին շրջանում պատուհասել էին Թուրքիային: Եթե այդ ցեղապետերը Բուլղարիան զավթելուց հետո սրի քաշեին բոլոր բուլղարացիներին և Բուլղարիան բնակեցնեին մահմեդական թուրքերով, հիմա բուլղարական խնդիր այլևս չէր լինի, և Թուրքիան երբեք չէր կորցնի իր կայսրության այդ տարածքը: Իսկ եթե նրանք ոչնչացնեին նաև ռումինացիներին, սերբերին և հույներին, ապա այն գավառները, որ այժմ բնակեցված էին այդ ազգերով, մինչ օրս էլ կլինեին սուլթանի տիրույթների անբաժան մասը: Նրանք վստահ էին, որ անուղղելի սխալ է կատարվել, սակայն կործանումից փրկվելու հնարավորություն դեռ կա. նրանք կոչնչացնեն բոլոր հույներին, սիրիացիներին, հայերին ու քրիստոնյա մյուս ազգերին, նրանց տներն ու ագարակները կբնակեցնեն մահմեդական ընտանիքներով, իսկ դա երաշխիք կլինի, որ այդ տարածքները Թուրքիայից չեն խլի: Այս լայնածավալ ծրագիրն իրականացնելու համար պարտադիր չէ ոչնչացնել ամեն մի քրիստոնյա էակի. ամենագեղեցիկ ու առողջ հայ աղջիկներին բռնի կտանեն, կստիպեն մահմեդականություն ընդունել, ու նրանք կդառնան

Մարգարեի նվիրյալների կանայք կամ հարճերը: Նրանց երեխաներն ինքնաբերաբար մահմեդական կլինեն և կհզորացնեն կայսրությունը, ճիշտ այնպես, ինչպես ժամանակին դա արեցին ենիչերիները: Այդ հայ աղջիկները օժտված էին կանացիության ամենաբարձր հատկանիշներով, և երիտթուրքերն իրենց բիրտ բնազդով զգում էին, որ հայերի արյան հետ խառնվելը գենետիկ փոփոխություն կբերի իրենց բոլորին: Դեռահաս հայ պատանիները կարող են հանձնվել թուրք ընտանիքներին և դաստիարակվել այնպես, որ իրենց մտքով իսկ չանցնի, թե իրենք ամենևին էլ մահմեդական չեն: Սրանք թերևս այն տարրերն էին, որ կարող էին արժեք ներկայացնել նոր Թուրքիայի համար, որի ստեղծման ծրագրերն արդեն ընթացքի մեջ էին: Քանի որ անհրաժեշտ էր կանխարգելել հայերի նոր սերնդի ծնունդը, անհրաժեշտ էր ոչնչացնել հայազգի բոլոր տղամարդկանց, ովքեր կարող էին անիծյալների նոր սերունդ տալ: Տարեց կանայք ու տղամարդիկ Թուրքիայի համար վտանգ չէին ներկայացնում, քանի որ արդեն կատարել էին իրենց բնական առաքելությունը և ժառանգներ էին լույս աշխարհ բերել, սակայն նրանք, այնուամենայնիվ, խանգարող տարր էին, ուստի և պետք է ոչնչացվեին:

Ի տարբերություն Աբդուլ Համիդի՝ երիտթուրքերն իրենց ի զորու էին համարում իրականացնելու այդ «սրբազան» գործը: Նրանց նախորդների ճանապարհին կանգնած էին Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան ու Ռուսաստանը, սակայն հիմա այդ խոչընդոտն այլևս վերացված էր: Ինչպես արդեն նշեցի, երիտթուրքերը հավատացած էին, որ պարտության են մատնել այդ երկրներին, և որ դրանք այլևս չեն կարող միջամտել Թուրքիայի ներքին գործերին: Միայն մեկ երկիր կարող էր ընդդիմանալ այդ ծրագրերին՝ Գերմանիան: 1898 թվականին, երբ Եվրոպան ցնցվեց Գլադստոնի բացահայտումներից և պահանջում էր միջամտել, Վիլհելմ Երկրորդ կայսրը մեկնեց Կոստանդնուպոլիս, այցելեց Աբդուլ Համիդին, արյունարբու բռնակալի կրծքին ամրացրեց գերմանական բարձր շքանշան և համբուրեց սուլթանի այտերը: Այն նույն Կայսրը, ով արեց դա 1898 թվականին, 1915 թվականին դեռևս գահի վրա էր և Թուրքիայի դաշնակիցն էր: Եվ այսպես, 1915 թվականին, երկու հարյուր տարվա ընթացքում առաջին անգամ Թուրքիայի քրիստոնյա բնակչությունն ամբողջովին հայտնվել էր թուրքերի բարեգթության հույսին: Վերջապես եկել էր ժամանակը՝ «Թուրքիան՝ թուրքերին» գաղափարն իրականացնելու համար:

ԳԼՈՒԽ XXIII

«Հեղափոխություն» Վանում

Թուրքիայի Վան գավառը գտնվում է Փոքր Ասիայի հեռավոր հյուսիս-արևելյան անկյունում: Արևելյան մասում այն հարում է Պարսկաստանի սահմաններին, իսկ դրա հյուսիսային մասն ուղղված է դեպի Կովկաս: Վանը Օսմանյան կայսրության ամենագեղեցիկ ու բերքառատ շրջաններից է և ամենահարուստներից մեկը՝ իր պատմական ժառանգությամբ: Վիլայեթի մայրաքաղաք Վան քաղաքը սփռված է նույնանուն լճի արևելյան ափերին: Վանը Փոքր Ասիայի ամենամեծ քաղաքն է, որտեղ հայերը թվով գերազանցում են մահմեդականներին:

Իր գրեթե երեսունհազարանոց բնակչությամբ Վանը 1914 թվականի աշնանը համարվում էր Օսմանյան կայսրության ամենաերջանիկ ու բարգավաճ համայնքներից մեկը: Թեև Վանը հայաբնակ յուրաքանչյուր բնակավայրի նման ենթարկվում էր ճնշման ու կոտորածների բռնկումների, այդուհանդերձ մահմեդական լուծը համեմատական կարգով այդ աստիճանի ծանր չէր: Վիլայեթի թուրք գավառապետը՝ Թահսին փաշան, ամենակրթված ու առաջադեմ թուրք պաշտոնյաներից էր: Քաղաքի առավել բարեկեցիկ մասում բնակվող հայերի և ցեխաշեն թաղամասում բնակվող թուրքերի ու քրդերի միջև ձևավորված հարաբերությունները տարիներ շարունակ բավականին բարիդրացիական էին:

Այս վիլայեթի աշխարհագրական դիրքը, սակայն, անխուսափելիորեն պատճառ դարձավ, որպեսզի այն վերածվի ռազմական գործողությունների թատերաբեմի, իսկ նրա հայազգի բնակչության գործողությունները կասկածի առիթ տան: Եթե Ռուսաստանը փորձեր ներխուժել Թուրքիա, այդ նպատակի համար ամենահարմար ուղիներից մեկն անցնում էր հենց այդ գավառով: Պատերազմը նոր էր սկսվել, երբ հայտնվեցին լարվածության առաջին նշանները: Բանակի համար պաշարներ հավաքելը, ինչպես Թուրքիայի մյուս բոլոր մասերում, առավել ծանր բեռով ընկավ Վանի քրիստոնյա բնակչության ուսերին: Հայերը պարտադրված էին լուռ նայել, թե թուրք սպաներն ինչպես են տանում իրենց անասունները, ցորենի պաշարները, բոլոր տեսակի ապրանքները՝ փոխարենը տալով անարժեք թղթի մի կտոր: Դրան հաջորդած համընդհանուր զինաթափման փորձը նույնպես տագնապի տեղիք էր տալիս, ինչը էլ ավելի էր սաստկացնում դաժան վերաբերմունքը Կովկասում կռվող օսմանյան բանակի հայազգի զինվորների հանդեպ: Այլուս կողմից թուրքերը բազմաթիվ մեղադրանքներ էին բարդում քրիստոնյա բնակ-

չության վրա՝ փաստորեն Կովկասում թուրքական բանակի ծախողումների հիմնական մասը վերագրելով նրանց: Այն փաստը, որ Կովկասում կռվող ռուսական բանակում զգալի թիվ էին կազմում հայերը, հարուցեց թուրքերի անսանձ կատաղությունը: Քանի որ աշխարհի հայության գրեթե կեսը բնակվում է Ռուսաստանի կովկասյան գավառներում, և նրանք ռուսներին հավասար ենթակա են զորակոչի, թուրքական բողոքներն իրավական հիմք չունեին, քանի որ նշված հայերը ռուսական ցարի հպատակներն էին: Այդուհանդերձ, թուրքերը պնդում էին, թե Վանի և հայկական այլ վիլայեթների հայ զինվորների մեծ մասը դասալիք է, որ անցել է սահմանը, միացել ռուսական բանակին և ճանապարհների ու տեղանքի իմացությամբ նպաստել ռուսների հաղթանակներին: Թեև իրական փաստերն առայժմ բացահայտված չեն, չի բացառվում, որ մի քանի հարյուր մարդ դասալիք եղած լիներ: Պատերազմի սկզբում «Միություն և առաջադիմություն» կուսակցության գործակալները հայտնվեցին Էրզրումում ու Վանում՝ հայ համայնքի առաջնորդներին կոչ անելով մեկնել Ռուսահայաստան և փորձել հեղափոխություն սկսել ռուսական կառավարության դեմ: Եվ այն փաստը, որ հայերը հրաժարվեցին, է՛լ ավելի բորբոքեց թուրքերի կատաղությունը: Թուրքական կառավարությունը մեծ պատմություն դարձրեց Վանի հայերի «դավաճան» վարմունքը և նույնիսկ այն վկայակոչեց որպես հետագայում ողջ ժողովրդի հանդեպ դրսևորված վերաբերմունքի պատճառ: Նրանց այդ վարքագիծը մեկ անգամ ևս ապացուցում է թուրքական մտածողության այլասերված էությունը: Երեսուն տարի շարունակ հարյուրհազարավոր հայեր կոտորելուց, կանանց ու աղջիկներին բռնաբարելուց, կողոպտելուց ու հնարավոր բոլոր խոշտանգումների ենթարկելուց հետո, իսկապես, թուրքերը հավատում էին, որ կարող են հայերից ոգեշունչ «հավատարմություն» ակնկալել: Այն, որ Թուրքիայի համայն հայերի համակրանքը Անտանտի կողմն էր, գաղտնիք չէր: «Եթե ցանկանում եք իմանալ, թե ինչպես է ընթանում պատերազմը, - թունոտ գրում էր թուրքական մի թերթ, - պարզապես նայեք հայի դեմքին: Եթե նա ժպտում է, ուրեմն Դաշնակիցները հաղթում են, եթե ընկճված է, գերմանացիներն են հաղթում»: Եթե օսմանյան բանակի հայազգի զինվորը դասալիք է դառնում ու միանում ռուսներին, դա իսկապես հանցագործություն է պետության դեմ և պետք է պատժվի առանց քաղաքացիական բնակչության իրավունքները ոտնահարելու: Միայն թուրքը, թերևս նաև գերմանացի յունկերը կարող են դա արդարացման պատճառ դարձնել այն անմարդկային բարբարոսություններ համար, որ այդ ժամանակ կատարվում էին:

Թեև 1914-15 թվականների աշնանն ու ձմռանը մթնոլորտը հագեցած

էր գալիք ողբերգության կանխազգացումներով, հայերն արտակարգ զսպվածություն էին դրսևորում: Տարիներ շարունակ թուրքական սադրիչ մեթոդները դրդել էին քրիստոնյա բնակչությանը տաքարյուն գործողությունների, իսկ այնուհետ դա օգտագործվեց որպես հայերի ջարդերի արդարացում: Հայ հոգևորականներն ու քաղաքական առաջնորդները բազում ապացույցներ ունեին, որ թուրքերը վերստին փորձում են գործածել այդ նույն մարտավարությունը: Ահա թե ինչու վերոհիշյալ գործիչները շրջում էին հայրենակիցների շրջանում զգուշավորության, համբերության կոչերով թուրքերի բոլոր վիրավորանքների ու բռնությունների հանդեպ՝ մահմեդականներին առիթ չտալու համար իրագործել այն, ինչին վերջիններս ձգտում են: «Եթե նույնիսկ նրանք հրկիզեն մեր գյուղերից մի քանիսը, - ասում էին առաջնորդները, - մի՛ պատասխանեք. ավելի լավ է մի քանի գյուղ քանդվի, քան ողջ ժողովուրդը բնաջնջվի»:

Երբ պատերազմը սկսվեց, կենտրոնական կառավարությունը պաշտոնից ազատեց Թահսին փաշային՝ Վանի հաշտարար գավառապետին, և փոխարինեց նրան Զևդեթ բեյով, ով Էնվեր փաշայի աներորդին էր: Այդ քայլն ինքնին տագնապեցնող էր: Թուրքիայի պաշտոնական շրջաններում մշտապես կային սակավաթիվ անձինք, ովքեր չէին ընդունում ջարդերը՝ որպես պետական քաղաքականություն, և որոնց կենտրոնական կառավարությունը չէր կարող վստահել ամենաարյունալի հրամանների ճշգրիտ կատարումը: Ուստի երբ կոտորածներ էին նախապատրաստվում, նման «անհուսալի» պաշտոնյաներին փոխարինում էին առավել հուսալի ծառայակիցներով: Թահսինին փոխարինելու եկած մարդու կերպարը տագնապ էր հարուցում: Զևդեթն իր կյանքի մեծ մասն ապրել էր Վանում. անկայուն բնավորության տեր մարդ էր՝ ոչ մահմեդականների հանդեպ ունեցած այս պահին բարեկամական, մյուս պահին թշնամական տրամադրությամբ, երեսպաշտ, նենգ և դաժան, իր ազգի վատթարագույն ավանդույթներին հավատարիմ մի անձ: Նա ատում էր հայերին և ամբողջ սրտով կողմ էր Հայկական հարցի լուծմանը՝ վաղուց մշակված թուրքական ծրագրի համաձայն: Կասկած չի հարուցում այն փաստը, որ նա Վան էր եկել հստակ ցուցումներով՝ ոչնչացնել գավառի բոլոր հայերին, սակայն առաջիկա ամիսներին նման գործողությունների համար պայմանները բարենպաստ չէին: Զևդեթն ինքը բացակայում էր, քանի որ կռվում էր ռուսների դեմ Կովկասում, և թշնամու մոտակայքում գտնվելը թուրքերին ստիպում էր Վանի հայերին առայժմ չվնասելու խելամիտ քաղաքականություն վարել: Սակայն գարնան սկզբին ռուսները ժամանակավորապես նահանջեցին: Հաղթող բանակի համար ընդհանրապես ռազմական խելամիտ մարտավարություն է նահանջող բանակի

հետապնդումը: Թուրք գեներալների համար, սակայն, ռուսների նահանջը ռազմական հաջողություն էր, քանի որ հայերին զրկում էր իրենց պաշտպաններից և թողնում թուրքական բանակի «բարեգթությանը»: Նահանջող թշնամուն հետապնդելու փոխարեն թուրք բանակը շրջվեց և զավթեց իր սեփական տարածքը՝ Վանը: Քաջավարժ ռուս զինվորների դեմ կռվելու փոխարեն նրանք իրենց հրացանները, հրետանիները և մյուս զենքերը շրջեցին Վանի շրջակա գյուղերում բնակվող հայ կանանց, երեխաների ու ծերերի վրա: Ըստ իրենց սովորույթի՝ թուրքերը միմյանց միջև բաժանեցին ամենագեղեցիկ կանանց, կողոպտեցին ու այրեցին հայկական գյուղերը և օրեր շարունակ գլխատում էին հայերին: Ապրիլի 15-ին Ականցի մոտակայքում հավաքեցին հինգ հարյուր տղամարդու՝ լսելու սուլթանի հրամանը. մայրամուտին նրանց բոլորին քաղաքից դուրս հանեցին և սառնասրտորեն գնդակահարեցին: Այդ նույնը կրկնվեց Վանա լճի հյուսիսային ափերին գտնվող առնվազն ութսուն գյուղում, և երեք օրում նույն դաժանությամբ սպանվեց քսանչորս հազար հայ: Ահա մի դրվագ, որը նկարագրում է թուրքական մեթոդների աներևակայելի դաժանությունը: Երբ Շատախում խժդժություններ սկսվեցին, Վան վերադարձած Զևդեթ բեյը հայազգի չորս առաջնորդների խնդրեց մեկնել այդ քաղաք և հանգստացնել մարդկանց: Հայ առաջնորդները ճանապարհ ընկան՝ կանգ առնելով հայկական բոլոր գյուղերում՝ մարդկանց հորդորելու պահպանել հանրային անդորր: Երբ նրանք իրենց գործն ավարտեցին, այդ չորս հայերին տարան քրդական մի գյուղ և սպանեցին:

Այդ էր պատճառը, որ երբ Զևդեթ բեյն իր պաշտոնին վերադառնալուց հետո հրամայեց, որ Վանն անմիջապես 4000 զինվոր տրամադրի, հուսահատ մարդիկ, բնականաբար, այդ պահանջը կատարելու ոչ մի ցանկություն չունեին: Եթե հաշվի առնենք այն, ինչ տեղի ունեցավ դրանից առաջ և դրանից հետո, այլևս որևէ կասկած չի մնում այդ պահանջի իրական նպատակի մասին: Գործելով Կոստանդնուպոլսից ստացված հրամանների համաձայն՝ Զևդեթը մտադիր էր բնաջնջել Վանի ողջ բնակչությունը. 4000 պառողջ տղամարդ հավաքագրելու միակ նպատակը նրանց ոչնչացնելն էր՝ այդպիսով մնացյալ հայերին թողնելով բոլորովին անպաշտպան: Ժամանակ շահելու նպատակով հայերն առաջարկեցին ուղարկել նրան հինգ հարյուր զինվոր, իսկ մյուսներին ազատելու համար՝ գումար վճարել: Հիմա, սակայն, Զևդեթը սկսեց բարձրաձայն հոխորտալ «խռովության» և այն ցանկացած գնով ճնշելու իր վճռականության մասին: «Եթե ապստամբները թեկուզ մի կրակոց արձակեն, - հայտարարել էր նա, - ես կսպանեմ քրիստոնյաներին՝ տղամարդ, կին և այս հասակի երեխա», - վերջին բառն արտասանելիս ցույց էր տվել իր

ծունկը: Թուրքերը խրամատներ էին փորում հայկական թաղամասերի շուրջ և լցնում դրանք զինվորներով: Ի պատասխան այդ սադրանքի՝ հայերը սկսեցին պատրաստվել ինքնապաշտպանության: Ապրիլի 20-ին թուրք զինվորների մի ռոմակ քաղաքի մուտքի մոտ բռնեց մի քանի հայ կանանց: Հայերը շտապեցին նրանց օգնության և նույն պահին սպանվեցին: Հայկական թաղամասի վրա թուրքերը կրակ բացեցին հրացաններից և թնդանոթներից. շուտով քաղաքի մեծ մասը կրակի մեջ էր, և սկսվեց իսկական պաշարում: Հայերի ողջ մարտնչող ուժը կազմում էր հազար հինգ հարյուր մարդ: Նրանք ունեին ընդամենը երեք հարյուր հրացան և չնչին քանակությամբ զինամթերք, մինչդեռ Զեյթեթի բանակը կազմում էր հինգ հազար զինվոր՝ ամբողջովին զինված և զինամթերքով ապահովված: Այդուհանդերձ, հայերը կռվում էին աներևակայելի խիզախությամբ ու հմտությամբ: Նրանք ի զորու չէին թշնամուն անվերջ հետ մղելու, սակայն նրանց հայտնի էր, որ ռուսական բանակը կռվելով մոտենում է Վանին, և հույս ունեին, որ մինչև ռուսների տեղ հասնելը կկարողանան դիմադրել թուրքերին: Քանի որ իմ նպատակը մարտերի և պաշարումների պատմությունը գրի առնելը չէ, ես մանրամասն չեմ նկարագրի հայերի անձնական հերոսության բազմաթիվ օրինակներ, հայ կանանց հերոսական մասնակցությունը, հայ երեխաների ոգեշունչ խանդավառությունը, չեմ խոսի ամերիկյան միսիոներների ինքնազոհաբերման պատրաստակամության մասին, ինչպես օրինակ՝ դոկտոր Աշերի և նրա տիկնոջ, նաև օրիորդ Գրեյս Հ. Նապի և հազարավոր այն դեպքերի մասին, որ այդ սարսռալի ամիսը դարձրին հայոց պատմության ամենապանծալի էջերից մեկը: Զարմանահրաշ փաստ է, որ հայերն այդուհանդերձ հաղթանակեցին: Գրեթե հինգ անքուն շաբաթներից հետո անսպասելի հայտնվեց ռուսական բանակը, և թուրքերը ծողոպրեցին մոտակա շրջանները՝ իրենց կատաղությանը հագուրդ տալու համար կոտորելով շրջակա գյուղերի անպաշտպան հայերին: Ամերիկացի բժիշկ, միսիոներ դոկտոր Աշերը, ում հիվանդանոցը Վանում ռմբակոծվել էր, կհավաստի, որ թուրքերին դուրս քշելուց հետո ռուսները սկսեցին հավաքել ու հրկիզել այդ գավառում զոհված հայերի հիսունհինգ հազար դիակ:

Ես պատմեցի Վանի «հեղափոխության» պատմությունը ոչ միայն այն պատճառով, որ դա մի ողջ ժողովուրդ բնաջնջելու առաջին փորձն էր, այլ նաև այն պատճառով, որ այդ իրադարձությունները թուրքերի կողմից հիշատակվում են իրենց հետագա ոճրագործություններն արդարացնելու համար: Ինչպես այսուհետ կտեսնեք, երբ ես փորձում էի միջամտել հայերի համար, Թալեաթը, Էնվերը և մյուսներն անմիջապես բերում էին Վանի «հեղափոխականների» օրինակը՝ որպես հայերի դավաճանության

ապացույց: Մինչդեռ վերոհիշյալ «հեղափոխությունը» ընդամենը հայերի վճռականությունն էր պաշտպանելու իրենց կանանց պատիվը և սեփական կյանքն այն բանից հետո, երբ թուրքերը, ջարդելով հազարավոր հայերի, Վանի հայերին ցույց տվեցին իրենց սպասող ճակատագիրը:

ԳԼՈՒԽ XXIV

Մի ժողովրդի սպանություն

Հայ ժողովրդի բնաջնջումը 1915 թվականին հանդիպեց մի շարք այնպիսի խոչընդոտների, որոնք 1895 թվականին և այլ տարիների թուրքերի գործողություններին չէին խանգարել: Հայ տղամարդիկ նախկինում չունեին ո՛չ դիմադրելու ուժ, ո՛չ էլ հնարավորություն. հայերին արգելված էր զինվորական պատրաստություն անցնել, ծառայել թուրքական բանակում կամ զենք կրել: Ինչպես արդեն նշել եմ, այդ խտրականությունը վերացվեց 1908 թվականին, երբ իշխանության եկան երիտթուրք հեղափոխականները: Հիմա քրիստոնյաներին ոչ միայն թույլատրվում էր զենք կրել, այլև ազատության ու հավասարության իրենց տենդագին ոգևորության մեջ իշխանությունները քաջալերում էին նրանց այդ քայլը: Այդ էր պատճառը, որ 1915 թվականի առաջին կեսին թուրքական բոլոր քաղաքներում կային հազարավոր հայեր, ովքեր պատրաստված էին որպես զինվոր, և որոնց հատկացվել էին հրացաններ, ատրճանակներ և պաշտպանության այլ միջոցներ: Վանի իրադարձությունները մեկ անգամ ևս ապացուցեցին, որ հայերը կարող են լավագույնս օգտագործել այդ զենքը: Ակնհայտ էր, որ հայկական ջարդերն այս անգամ ավելի կնմանվեն պատերազմական գործողությունների, քան անպաշտպան տղամարդկանց ու կանանց այն սպանդին, որն այնքա՜ն հոգեհարազատ էր թուրքերին: Որպեսզի մի ողջ ժողովուրդ ոչնչացնելու այդ ծրագիրը հաջողվեր, անհրաժեշտ էր նախապես երկու քայլ անել. նախ զինաթափել հայ զինվորներին, ապա քաղաքներում ու ավաններում բոլոր հայերին զրկել զենքից: Հայաստանը ոչնչացնելուց առաջ նախ անհրաժեշտ էր հայերին անպաշտպան դարձնել:

1915 թվականի սկզբին թուրքական բանակում ծառայող բոլոր հայ զինվորներին նոր կարգավիճակ տրվեց: Մինչ այդ պահը նրանց մեծ մասը կռվում էր ռազմադաշտում, իսկ հիմա նրանց զինաթափեցին և վերածեցին աշխատուժի: Իրենց երկրին որպես հրետանավոր կամ հեծելազորային ծառայելու փոխարեն երբեմնի հայ զինվորները վերածվեցին ճանապարհաշինարար բանվորների և «բեռնակիր անասունների»: Բանակի բոլոր տեսակի պաշարները բարձվում էին նրանց մեջքերին, և նրանք, բեռի ու թուրքերի մտրակների, սվինների հարվածների տակ կքած, իրենց հյուծված մարմիններով հարկադրված էին քարշ տալ այդ ողջ բեռը դեպի Կովկասյան լեռներ: Երբեմն ստիպված էին լինում անցնել ձյան միջով, որը հասնում էր նրանց գոտկատեղին: Նրանք ամբողջ

ժամանակ դրսում էին. քնում էին մերկ հողի վրա այն հազվադեպ պատահող պահերին, երբ նրանց վերակացուների անվերջանալի հարվածները դադարում էին: Ստանում էին ուտելիքի փշրանքներ միայն: Հիվանդները թողնվում էին այնտեղ, ուր ընկել էին, իսկ թուրք բռնակալները կանգ էին առնում մի պահ միայն՝ նրանց ունեցվածքը կողոպտելու համար: Եթե ոմանց հաջողվում էր, մի կերպ քարշ գալով, հասնել վերջնակետին, շատ հաճախ նրանց հենց տեղում սպանում էին: Բազմաթիվ դեպքերում հայազգի զինվորներին ոչնչացնում էին է՛լ ավելի անմարդկային ձևով. հիմա արդեն նրանց սառնասրտորեն գնդակահարելը սովորական երևույթ էր դարձել: Գրեթե ամենուրեք դա կրկնվում էր. հայերին հավաքում էին հիսունից հարյուրհոգանոց խմբերով, հետո դրանք բաժանում էին չորսհոգանոց խմբերի, դուրս բերում գյուղից ոչ շատ հեռու մեկուսի մի վայր: Հետո լսվում էին հրացանային կրակոցներ, և թուրք ուղեկցող զինվորները մռայլադեմ վերադառնում էին գյուղ: Նրանց, ում ուղարկում էին մարմինները թաղելու, դիակները գտնում էին առանց հագուստի, քանի որ թուրքերը, որպես կանոն, գողանում էին նաև զոհերի շորերը: Երբեմն ոճրագործները «կատարելագործում» էին զոհերի տառապանքները՝ նրանց հարկադրելով մահից առաջ փորել սեփական գերեզմանափոսը:

Կկամենայի անդրադառնալ մի դրվագի, որն արտացոլված է մեր հյուպատոսներից մեկի զեկույցում, և որն այսօր ԱՄՆ Պետքարտուղարության պաշտոնական արձանագրությունների մաս է կազմում: Հուլիսի սկզբին 2000 հայ «ամելեներ», այսպես էին թուրքերը կոչում աշխատուժի վերածված զինվորներին, դուրս բերվեցին Խարբերդից՝ իբր ճանապարհներ կառուցելու համար: Քաղաքի հայերը հասկացան, թե դա ինչ է նշանակում, և գավառապետին աղաչեցին գթասիրտ լինել: Սակայն այդ պաշտոնյան պնդում էր, թե տղամարդկանց ոչինչ չի սպառնում, և նույնիսկ կանչում է գերմանացի միսիոներ պարոն Էմանին՝ հանդարտեցնելու համար խուճապահար մարդկանց: Գավառապետը երդվում է իր պատվով, որ նախկին զինվորները պաշտպանված կլինեն: Պարոն Էմանը հավատում է գավառապետին և հանգստացնում վախեցած մարդկանց: Վերոհիշյալ երկու հազար հոգուց սպանվեցին գրեթե բոլորը. միայն մի քանիսին հաջողվեց փախչել, և աշխարհն այդպես իմացավ կատարված սպանդի մասին: Մի քանի օր անց ևս 2000 զինվոր ուղարկվեց Դիարբեքիր: Այդ մարդկանց քաղաքից դուրս բերելու միակ նպատակը նրանց ոչնչացնելն էր: Որպեսզի նրանք դիմադրելու կամ փախչելու որևէ ուժ չունենան, այդ թշվառներին մշտապես քաղցած էին պահում: Կառավարության գործակալները նախապես անցնում էին ճանա-

պարհով, տեղեկացնում քրդերին, որ քարավան է մոտենում, և հրամայում էին կատարել իրենց հոգեհարազատ «պարտքը»: Ոչ միայն քուրդ տղամարդիկ էին սարերից թափվում այս սովատանջ մարդկանց վրա, այլև քրդուհիները՝ մսագործի դանակներով զինված. հարձակվում էին նրանց վրա, որպեսզի արժանանան Ալլահի այն շնորհին, որ տրվում է քրիստոնյա սպանողներին: Այսպիսի ջարդերն առանձին դեպքեր չէին. ես կարող եմ բազմաթիվ նման ահավոր դեպքերի օրինակներ բերել: Թուրքական կայսրության ողջ տարածքում մշտապես փորձեր էին արվում ոչնչացնելու հայազգի բոլոր հասուն տղամարդկանց՝ ոչ միայն վերացնելու համար արական սեռի հայերին, որ կարող էին նոր սերունդ տալ, այլև բնակչության անպաշտպան հատվածին հեշտ ավարի վերածելու համար:

Որքան էլ սարսռալի էին անզեն զինվորների ջարդերը, դրանք «գթասիրտ ու արդար» էին այն արարքների համեմատությամբ, որոնց արժանանում էին զենք թաքցնելու մեջ կասկածվող հայերը: Բնականաբար, երբ քաղաքներում ու ավաններում հայտնվեցին պաստառներ, որտեղ բոլորին հրամայվում էր ունեցած զենքը հանձնել շտաբ-կայան, քրիստոնյաները տագնապեցին, թեև հրամանը վերաբերում էր բոլոր քաղաքացիներին: Հայերը լավ էին գիտակցում, թե ինչ կկատարվի, եթե իրենք անզեն մնան, իսկ նրանց մահմեդական հարևաններին թույլ տրվի զենքը պահել: Սակայն շատ դեպքերում օրինապաշտ մարդիկ ենթարկվում էին այդ հրամանին, և նման դեպքերում թուրք պաշտոնյաները գրեթե հրճվանքով բռնագրավում էին նրանց ատրճանակները՝ որպես ապացույց, թե իբր նրանք պատրաստվում էին «հեղափոխության», և դավաճանության մեղադրանքով բանտ էին նետում իրենց զոհերին: Հազարավոր մարդիկ անկարող էին կատարել հրամանը այն պարզ պատճառով, որ հանձնելու զենք չունեին, իսկ է՛լ ավելի մեծ թվով մարդիկ համառորեն հրաժարվում էին հանձնել զենքերը ոչ այն պատճառով, որ ապստամբության էին նախապատրաստվում, այլ՝ հույս ունեին պաշտպանել իրենց կյանքը և իրենց կանանց պատիվը հնարավոր վայրագությունների դեպքում: Այդ անհնազանդների նկատմամբ կիրառված պատիժը ժամանակակից պատմության ամենասոսկալի էջերից է: Մեզնից շատերը վստահ են, որ կտտանքները վաղուց արդեն դադարել են վարչական ու դատական պատժամիջոց լինել, և ես չեմ հավատում, թե նույնիսկ միջնադարում եղել են ավելի սարսափելի տեսարաններ, քան նրանք, որ հիմա տեղի էին ունենում Թուրքիայի ողջ տարածքում: Թուրք ժանդարմների համար ոչ մի սրբություն չկար. թաքնված զենք փնտրելու պատրվակով նրանք կողոպտում էին եկեղեցիները, լկտիաբար պղծում խորանն ու սրբազան

առարկաները, հայերին ծաղրելու համար նույնիսկ քրիստոնեական ծիսակատարություններ էին կատարում: Նրանք ծեծում էին տերտերներին ու հասցնում անգիտակից վիճակի՝ ձևացնելով, թե իբր նրանք խռովության կազմակերպիչներն են: Երբ թուրքերին այդպես էլ չհաջողվեց եկեղեցիներում որևէ զենք հայտնաբերել, նրանք երբեմն բռնի ուժով ատրճանակ, հրացան, սուր էին դնում եպիսկոպոսների ու տերտերների ձեռքը, հետո դատում էին նրանց ռազմական դատարաններում՝ մեղադրելով զենք չկրելու օրենքը խախտելու համար: Այնուհետև, այդպես զինված, նրանց տանում էին փողոցներով՝ ամբոխի ատելությունը բորբոքելու համար: Նույն դաժանությամբ ու անպարկեշտությամբ ժանդարմները վարվում էին ոչ միայն տղամարդկանց, այլև կանանց հետ: Գրանցված են դեպքեր, երբ զենք թաքցնելու մեղադրանքով մերկացնում էին կանանց և ծեծում դալար ճիպոտներով: Նման ծեծի էին ենթարկում նույնիսկ հղի կանանց: Այդ խուզարկություններն այնքան հաճախ էին ուղեկցվում բռնություններով, որ մոտեցող ժանդարմներին տեսնելուն պես հայ կանայք ու աղջիկները փախչում էին անտառներ ու սարեր կամ թաքնվում լեռնային քարանձավներում:

Խուզարկումների նախօրեին բոլոր գյուղերում ու ավաններում ամրակազմ տղամարդկանց ձերբակալում ու բանտ էին նետում: Այս մարդկանց խոշտանգողները սատանայական հնարամտությամբ տանջում էին նրանց՝ ջանալով խեղճ զոհերին ստիպել խոստովանել իրենց «հեղափոխական» լինելը, բացահայտել զենքերի թաքստոցները: Որպես կանոն, ձերբակալվածին տանում էին մի սենյակ, որի երկու ծայրերում կանգնած թուրքերը սկսում էին «բաստինադո» կոչվող փորձությունը, որն Արևելքում հաճախ կիրառվող կտտանքի տեսակ է. զոհի կրունկներին հարվածում են բարակ ճիպոտով: Սկզբում ցավն այնքան էլ սաստիկ չէ, սակայն հետզհետե այն վերածվում է անասելի տանջանքի. ոտքերն ուռչում են ու այրվում, և նման խոշտանգումից հետո հաճախ ոտքն անդամահատելու անհրաժեշտություն է առաջանում: Թուրք ժանդարմներն իրենց հայ զոհերին բաստինադոյի էին ենթարկում այնքան ժամանակ, մինչև նրանք ուշագնաց էին լինում: Հետո, նրանց գլխին ջուր լցնելով, ուշքի էին բերում ու շարունակում ծեծը: Եթե դա չէր հնազանդեցնում զոհին, համոզելու համար նրանք բազում այլ մեթոդներ ունեին. թուրքերը մազ առ մազ պոկում էին զոհի հոնքերն ու մորուքը, այնուհետև մատների եղունգները, հետո կրակի վրա շիկացած մետաղը դնում էին կրծքին, մարմինը ծվատում մետաղե շիկացած ունելիով, այնուհետև եռացող յուղ լցնում վերքերին: Որոշ դեպքերում ժանդարմները նրանց ձեռքերն ու ոտքերը մեխում էին փայտի կտորներին՝ ակնհայտորեն նմանակելով

խաչելությունը, իսկ երբ զոհը հոգեվարքի մեջ էր ընկնում, գոռում էին. «Դե՛ հիմա քո Քրիստոսը թող գա ու փրկի քեզ»:

Նման բազում այլ դաժանություններ, որոնք ես չէի ցանկանա նկարագրել, որպես կանոն, կատարվում էին գիշերները: Թուրք զինվորները շարք էին կազմում բանտի դիմաց, թմբուկ էին զարկում, աղմկում սուլիչներով, որպեսզի զոհերի ճիչերը չհասնեն գյուղացիներին:

Բազմաթիվ դեպքերում անցնելով այդ տառապանքներով՝ հայերն այդուհանդերձ հրաժարվում էին զենքը հանձնել, քանզի ոչինչ չունեին հանձնելու, սակայն չէին կարող դրանում համոզել իրենց դահիճներին: Ուստի սովորական երևույթ էր դարձել՝ երբ հասնում էր ժանդարմների մոտենալու լուրը, հայերը զենք էին գնում իրենց թուրք հարևաններից և հանձնում այն՝ աննկարագրելի պատժից խուսափելու համար:

Մի անգամ ես քննարկում էի իրավիճակը մի թուրք բարձրաստիճան պաշտոնյայի հետ, ով մանրակրկիտ նկարագրում էր կիրառվող կտտանքները: Նա չէր թաքցնում, որ դրանք կազմակերպված են կառավարության կողմից, և թուրք այլ պաշտոնյաների նման նա էլ էր խանդավառությամբ արտահայտվում դրանք անիծյալ ժողովրդի հանդեպ կիրառելու մասին: Այդ պաշտոնյան ինձ ասաց, որ ամեն ինչ՝ բոլոր մանրուքներով, քննարկվել է գիշերային խորհրդակցությունների ժամանակ «Միություն և առաջադիմություն» կոմիտեի գլխավոր գրասենյակում: Տանջելու յուրաքանչյուր նոր մեթոդ թուրք պաշտոնյաները ողջունում էին որպես փայլուն հայտնություն, գիշերային խորհրդակցությունների մասնակիցները մշտապես տքնում էին՝ կտտանքի նոր մեթոդներ հայտնագործելու համար: Նա խոստովանեց, որ իրենք նույնիսկ խորացել են իսպանական ինկվիզիցիայի և պատմական այլ հաստատությունների՝ տանջահար միջոցներին վերաբերող արխիվների մեջ և որոշ մեթոդներ վերցրել այնտեղից: Նա ինձ չասաց, թե ով է այդ գազանային մրցակցության հաղթողը, սակայն Հայաստանով մեկ տխրահռչակ առաջնությունը պատկանում էր Ջևդեթ բեյին՝ Վանի վալիին (նրա գործողություններն այդ ասպարեզում ես արդեն նկարագրել եմ): Ողջ երկրում Ջևդեթը հայտնի էր որպես «Բաշկալեի պայտողը», քանի որ կտտանքների այդ գիտակը հորինել էր այդ ամենի «գլուխգործոցը»՝ ձիու պայտեր էր խփել իր հայազգի զոհերի ոտքերին:

Այսուհանդերձ, այդ ամենն այն չէր, ինչ ժամանակի թերթերը սովորաբար նկարագրում են որպես վայրագություններ հայերի դեմ. դրանք մի ողջ ժողովուրդ ոչնչացնելու նախապատրաստական քայլեր էին: Երիտթուրքերը շատ ավելի դաժան հնարամտություն ցուցաբերեցին, քան իրենց նախորդը՝ Աբդուլ Համիդը: Գահընկեց սուլթանի գլխում միայն մեկ

նպատակ կար՝ «սպանել, բնաջնջել», մինչդեռ թուրքական «ժողովրդավարությունը» մտահղացավ միանգամայն նոր ծրագիր. ողջ հայ ժողովրդին պարզապես գլխատելու փոխարեն նրանք վճռեցին բռնագաղթեցնել մարդկանց: Օսմանյան կայսրության հարավային ու հարավարևելյան մասում ընկած են սիրիական անապատը և Միջագետքի հովիտը: Թեև այդ տարածքի մի հատվածը ժամանակին ծաղկուն քաղաքակրթության վայր էր եղել, սակայն վերջին հինգ դարերի ընթացքում ենթարկվել էր ավերածության, ինչպես ցանկացած երկիր, որ ընկնում էր թուրքական լծի տակ: Հիմա այն մռայլ տափաստան է՝ առանց քաղաքների, գյուղերի ու կյանքի որևէ հետքի: Այդտեղի միակ բնակիչները սակավաթիվ մոլեռանդ բեդվինական վայրենի ցեղերն են: Միայն տարիների ջանադիր աշխատանքով էր հնարավոր այդ անապատը վերածել մարդկանց համար մշտական բնակավայրի: Կենտրոնական կառավարությունը հայտարարեց իր մտադրության մասին՝ հավաքել կայսրության տարբեր անկյուններում բնակվող երկու կամ ավելի միլիոն հայերի և նրանց ուղարկել այդ ամայի ու անհյուրընկալ վայրը: Նրանք այդ բռնագաղթերը նախաձեռնել էին՝ քաջ գիտակցելով, որ դա դաժանության ու անարդարության վերջնակետը կլինի: Փաստորեն թուրքերը ոչ մի մտադրություն չունեին հայերին վերաբնակեցնելու այս նոր վայրում: Նրանք շատ լավ գիտեին, որ բռնագաղթյալների մեծ մասը չի հասնի վերջնակետին, իսկ ովքեր հասնեն, կա՛մ այնտեղ կմեռնեն քաղցից ու ծարավից, կա՛մ կոչնչացվեն մահմեդական վայրենի ցեղերի կողմից: Բռնագաղթի իրական նպատակը կողոպուտն ու ոչնչացումն էր. սա, հիրավի, կոտորածների նոր մեթոդ էր: Երբ թուրքական իշխանությունները «աքսորի» հրաման արձակեցին, այդպիսով մի ողջ ժողովուրդ ոչնչացնելու որոշում կայացրին: Նրանք դա լավ էին գիտակցում և մեր զրույցներում նույնիսկ չէին էլ փորձում թաքցնել այդ փաստը:

Բռնագաղթերը շարունակվեցին 1915-ի գարնան ու ամռան ընթացքում: Մի քանի խոշոր քաղաքներում՝ Կոստանդնուպոլսում, Զմյուռնիայում ու Հալեպում, հայերին տեղահանումների չենթարկեցին: Բոլոր մյուս բնակավայրերը, որտեղ թեկուզ մեկ հայ ընտանիք կար, դարձան աննկարագրելի ողբերգության վայրեր: Ոչ մի հայ, ինչ կրթություն կամ ունեցվածք էլ ունենար, հասարակության որ խավին էլ պատկաներ, չէր կարող ազատվել այդ հրամանից: Գյուղերում սովորաբար մեկ-երկու օր առաջ փակցվում էին պաստառներ, որոնցում հայ բնակչությանը հրամայվում էր որոշակի ժամի ներկայանալ նախանշված հասարակական վայր, մյուս տեղերում քաղաքի մունետիկը, անցնելով փողոցից փողոց, բարձրաձայն կարդում էր հրամանը: Կային վայրեր, որտեղ որևէ նախազգու-

շացում չէր էլ արվում: Ոստիկանները հայտնվում էին հայի տան առջև և բոլոր բնակիչներին հրամայում հետևել իրենց. տանում էին տնային գործերով զբաղված կանանց՝ զրկելով նրանց նույնիսկ զգեստափոխվելու հնարավորությունից: Հայերի վրա ոստիկանության հարձակումը հիշեցնում էր Վեզուվի ժայթքումը Պոմպեյի վրա: Կանանց դուրս էին քշում լոգարաններից, երեխաներին հանում էին օրորոցներից, հացը չթխված էր մնում, ընտանեկան ճաշը՝ կրակին... Երեխաներին դուրս էին հանում դասարաններից՝ գրքերը թողնելով նստարանների վրա, տղամարդկանց ստիպում էին արորը թողնել դաշտում, իսկ անասունը՝ սարերի փեշերին: Նույնիսկ նոր ծննդաբերած կանանց ստիպում էին վեր կենալ անկողնուց և քնած մանուկներին գրկած՝ միանալ ահաբեկված ամբոխին: Հապճեպ վերցրած շալ, վերմակ կամ մի քիչ ուտելիք... Ահա այն ամենը, ինչ նրանք կարող էին վերցնել իրենց ունեցվածքից: Նրանց վախեցած հարցին, թե ուր են տանում իրենց, ժանդարմները բարեհաճում էին տալ միայն մեկ պատասխան՝ «երկրի խորքը»:

Երբեմն բռնագաղթյալներին տալիս էին մի քանի ժամ, բացառիկ դեպքերում մի քանի օր՝ ունեցվածքից և տան իրերից ազատվելու համար, սակայն իրականում դա բացահայտ կողոպուտ էր: Հայերը կարող էին ունեցվածքը միայն թուրքերին վաճառել, և քանի որ և՛ վաճառողը, և՛ գնորդը գիտեին, որ մեկ կամ երկու օրվա ընթացքում պետք է վաճառվեր հայի ողջ կյանքում կուտակածը, ապրանքի գները կազմում էին իրական արժեքի մի չնչին մասը: Կարի մեքենան վաճառվում էր մեկ-երկու դոլարով, կովը՝ մեկ դոլարով, ողջ տան կահույքը՝ մի քանի ղուրուշով: Շատ դեպքերում հայերին արգելում էին վաճառել, իսկ թուրքերին՝ գնել նույնիսկ այդ զավեշտական գներով՝ այն պատրվակով, թե կառավարությունը կվճարի ունեցվածքի գինը նրանց պարտատերերին, որոնք, իհարկե, անպակաս էին: Հայերի կահույքը տարվում էր պահեստ կամ կուտակվում հասարակական վայրերում, որտեղից այն սովորաբար կողոպտումտանում էին թուրքերը: Հայերին նաև պաշտոնապես տեղեկացրին՝ քանի որ նրանց «աքսորը» միայն ժամանակավոր է, և պատերազմի ավարտվելուն պես նրանց հետ կբերեն, նրանք չեն կարող վաճառել իրենց տները: Նախկին տերերը դեռ չէին հասցնում դուրս գալ գյուղից, երբ Թուրքիայի այլ վայրերից ներգաղթած մահմեդական մոհաջիրները բնակություն էին հաստատում հայերի տներում: Այդ նույն պատրվակով նրանց բոլոր թանկարժեք իրերը՝ դրամը, զարդերը, ժամացույցները, տանում էին ոստիկանատուն՝ «ապահովության համար, մինչև նրանց վերադարձը», իսկ հետո այդ ամենը բաժանում էին թուրքերի միջև: Սակայն կողոպուտը «աքսորյալ» հայերին քիչ էր հուզում, քանզի նրանց

աչքի առջև շատ ավելի սարսափելի ու ահավոր տեսարաններ էին տեղի ունենում: Տղամարդկանց հետևողական ոչնչացումը շարունակվում էր. նրանց հետ, ովքեր չէին ենթարկվել արդեն նկարագրված հալածանքներին, վարվում էին աննկարագրելի դաժանությամբ: Մինչև քարավանների ճամփա ընկնելը պատանի տղաներին բաժանում էին իրենց ընտանիքներից, կապում էին չորսհոգանոց խմբերով, տանում քաղաքի ծայրամասերն ու գնդակահարում: Հայերին նաև հրապարակավ կախում էին՝ առանց դատ ու դատաստանի. զոհերի միակ մեղքը հայ լինելն էր: Ոստիկաններն առանձնակի ոգևորությամբ էին սպանում ուսյալ ու ազդեցիկ հայերին: Ամերիկացի հյուպատոսներից և միսիոներներից ես մշտապես զեկույցներ էի ստանում նման հաշվեհարդարների մասին, և նրանց նկարագրություններից շատերը ընդմիշտ դաջվել են հիշողությանս մեջ: Անգորայում տասնհինգից յոթանասուն տարեկան բոլոր հայ տղամարդկանց ձերբակալել էին, կապել չորսհոգանոց խմբերով և քշել էին Կեսարիա տանող ճանապարհով: Հինգ-վեց ժամ քայլելուց հետո նրանք հասել էին աշխարհից կտրված մի վայր, որտեղ թուրք գյուղացիների խաժամուժը՝ զինված փայտերով, մուրճերով, կացիններով, գերանդիներով, բահերով ու սղոցներով, հարձակվել էր նրանց վրա: Այդ գործիքները ոչ միայն ավելի տանջալից մահ էին բերում, քան ատրճանակներն ու հրացանները, այլև, ինչպես հայտարարում էին թուրքերը, ավելի էժան էին նստում. վառոդ կամ փամփուշտ չէին վատնում: Այսկերպ նրանք ոչնչացրին Անգորայի ողջ արական բնակչությանը, այդ թվում՝ կրթված ու բարեկեցիկ մարդկանց, իսկ նրանց ծվատված դիերը թողեցին հովտում՝ գիշատիչ կենդանիների բաժին: Կոտորածից հետո գյուղացիներն ու ժանդարմները հավաքվել էին տեղի պանդոկում, տպավորություններ էին փոխանակում՝ պարծենալով, թե ով քանի «գյավուր» է սպանել: Իսկ Տրապիզոնում տղամարդկանց լցնում էին նավակները և ուղարկում Սև ծով. նրանց հետևում էին ժանդարմները, որոնք գնդակահարում էին այդ մարդկանց ու մարմինները նետում ջուրը:

Երբ քարավանները շարժվելու հրաման էին ստանում, դրանք, որպես կանոն, կազմված էին լինում կանանցից, երեխաներից ու ծերերից: Նրանք, ովքեր ի վիճակի էին պաշտպանելու նրանց վերահաս ճակատագրից, արդեն սպանված էին: Քաղաքապետը հեգնանքով «բարի ճանապարհ» էր մաղթում տարհանվող հայերին: Քարավանների ճանապարհ ընկնելուց առաջ կանանց երբեմն այլընտրանք էր առաջարկվում՝ մահմեդականություն ընդունել: Նույնիսկ նոր դավանանքն ընդունողներից ոմանց երկրային փորձությունները դրանով չէին ավարտվում. հավատափոխներին ստիպում էին իրենց երեխաներին հանձնել այսպես կոչ-

ված «մահմեդական որբանոց»՝ պայմանով, որ նրանց դաստիարակեն որպես Մարգարեի նվիրյալ հետևորդներ: Կանայք, իրենց հերթին, պարտավոր էին ապացուցել իրենց հավատափոխության անկեղծությունը՝ լքելով քրիստոնյա ամուսիններին և ամուսնանալով մահմեդականների հետ: Եթե ոչ մի բարեպաշտ մահմեդական նրանց հետ ամուսնանալու ցանկություն չէր հայտնում, որքան էլ այդ կանայք համառորեն ջանային ապացուցել իրենց հավատարմությունն իսլամին, նրանց նույնպես բռնագաղթեցնում էին:

Սկզբում Թուրքիայի կառավարությունը մեկնող քարավանները պաշտպանելու որոշ փորձեր էր ձեռնարկում. սպաները նրանց բաժանում էին խմբերի՝ սովորաբար մի քանի հարյուր կամ նույնիսկ մի քանի հազար մարդ, քաղաքացիական իշխանությունները ցուլերով լծված սայլեր էին տրամադրում, որոնք տանում էին բռնագաղթյալների ունեցվածքը՝ ինչը որ հաջողվել էր փրկել: Ոստիկաններն ուղեկցում էին այդ խմբերին՝ իբրև թե նրանց պաշտպանելու համար: Խղճուկ հագնված կանայք, երեխաներին գրկած կամ մեջքերին կապած, քայլում էին հենափայտերի օգնությամբ շարժվող ծերունիների կողքին: Սկզբում երեխաները հետուառաջ էին վազում՝ ողջ իրավիճակն ընկալելով որպես արկած: Փոքր-ինչ ավելի բարեկեցիկները գնում էին ձիու կամ ավանակի վրա: Գյուղացիներին երբեմն հաջողվում էր մի կով կամ մի ոչխար փրկել, որոնց քարշ էին տալիս իրենց կողքին, ինչպես նաև տնային կենդանիներ՝ շուն, կատու, թռչուններ, որոնք այս խայտաբղետ շարանի մասն էին կազմում: Հայկական հազարավոր ավաններից ու գյուղերից ճամփա ընկան այդ հուսալքված քարավանները: Նրանք ծածկել էին դեպի հարավ տանող ճանապարհները՝ ամենուրեք բարձրացնելով փոշու հսկայական ամպեր ու իրենց հետևից թողնելով «կյանքի փշրանքներ»՝ կոտրված աթոռներ, վերմակներ, անկողնու սպիտակեղեն, ամանեղեն և կենցաղային այլ իրեր, որոնք ցուցանում էին քարավանի ուղին: Երբ քարավանները դեռ նոր էին ճանապարհ ընկել, գաղթականները դեռևս մարդկային կերպարանք ունեին, սակայն մի քանի ժամ անց ճանապարհի փոշին նստեց նրանց դեմքերին ու շորերին, ցեխը կպավ ոտքներին, ու դանդաղ առաջ ընթացող այդ ամբոխը, ուժասպառությունից կորացած և իր «պաշտպանների» դաժանությունից սարսափած, ավելի շուտ նմանվում էր նոր տիպի տարօրինակ կենդանիների: Եվ այդպես՝ 1915թ. ապրիլից հոկտեմբեր. վեց ամիս շարունակ Փոքր Ասիայի գրեթե բոլոր ճանապարհները հեղեղված էին բռնագաղթյալների մղձավանջային խմբերով: Երևում էր, թե ինչպես են նրանց շարանները ոլոր-մոլոր առաջ ընթանում գրեթե բոլոր հովիտներով ու բարձրանում բոլոր սարերը և գնում էին,

գնում՝ չիմանալով ուր: Միայն գիտեին, որ բոլոր ճանապարհներն իրենց դեպի մահ են տանում: Քաղաք առ քաղաք, ավան առ ավան հայաթափ եղան դաժանագույն ձևով, ինչպես ես նկարագրեցի: Վեց ամիս անց, ամենակոպիտ հաշվարկով, մոտավորապես մեկ միլիոն երկու հարյուր հազար մարդ իր ճանապարհը բռնեց դեպի սիրիական անապատ:

- Աղոթեք մեզ համար, - ասում էին նրանք՝ լքելով իրենց տները, որտեղ նրանց նախնիներն ապրել էին շուրջ 2500 տարի: - Այս աշխարհում էլ չենք հանդիպի, սակայն երբևիցե կհանդիպենք: Աղոթեք մեզ համար...

Հայերը նոր էին դուրս եկել հարազատ գյուղերից, երբ սկսվեցին կոտորածները: Ճամփաները, որոնցով նրանք անցնում էին, ավելի շուտ ավանակի կածաններ էին, և այն, ինչ մի քանի ժամ առաջ սկսվեց որպես մարդկանց կազմակերպված երթ, շուտով վերածվեց խուռներամ, ցաքուցրիվ ամբոխի շարժման. մայրերը կորցրել էին իրենց երեխաներին, կանայք՝ ամուսիններին, ծերերը, կորցնելով կապն իրենց ընտանիքների հետ, քայլում էին հյուծված և ուժասպառ: Թուրք սայլատերերն իրենց զոհերից վերջին դրամը կորզելուց հետո հանկարծ նրանց ու նրանց ունեցվածքը շպրտում էին ճանապարհին՝ շրջվելով վերադառնում գյուղերը՝ նորանոր զոհեր գտնելու համար: Այդպիսով, շատ չանցած, բոլորը՝ ծեր, թե երիտասարդ, ստիպված էին ոտքով քայլել: Կառավարության ուղարկած ժանդարմները նրանց պաշտպանելու փոխարեն շուտով դարձան նրանց դահիճները: Նրանք, սվինները հրացաններին ամրացրած, քայլում էին մարդկանց հետևից և հարվածում հետ մնացողներին: Իսկ նրանց, ովքեր փորձում էին փոքր-ինչ կանգ առնել հանգստանալու համար կամ ուժասպառ ընկնում էին ճանապարհին, ամենայն դաժանությամբ ստիպում էին միանալ շարժվող ամբոխին: Նույնիսկ հղի կանանց հարվածում էին սվիններով. եթե նրանք ծննդաբերում էին ճանապարհին, անմիջապես ստիպում էին վեր կենալ և շարունակել ճանապարհը: Ճանապարհի ողջ ընթացքը մահմեդական բնակիչների հետ անվերջանալի պայքար էր: Ոստիկաններից մի քանիսն առաջ ընկնելով քրդական ցեղերին տեղեկացնում էին նրանց զոհերի մոտենալու մասին, ինչպես նաև թուրք գյուղացիներին՝ այն մասին, որ նրանց երկար սպասած առիթն արդեն մոտենում է: Կառավարությունը բացում էր բանտերի դռներն ու ազատ արձակում քրեական հանցագործներին՝ ակնկալելով, որ մոտեցող հայերի հետ նրանք իրենց կպահեն այնպես, ինչպես վայել է զտարյուն մահմեդականին: Այսպիսով, հանուն գոյատևման քարավաններն անվերջ պայքարի մեջ էին մի քանի տեսակի թշնամիների հետ՝ ուղեկցող ժանդարմների, թուրք գյուղացիների, քրդական ցեղերի և չեթե-

ների ու զանազան ավազակախմբերի հետ: Հիշենք՝ տղամարդիկ, որ կարող էին պաշտպանել այդ խեղճ գաղթականներին, կա՛մ սպանվել էին, կա՛մ ուղարկվել բանակ որպես աշխատուժ: Բացի այդ, կանխամտածված ձևով գաղթականներին նախապես զրկել էին ամեն տեսակի զենքից:

Երբ զոհերը դուրս էին քշվում իրենց բնակավայրերից, լեռնային գյուղերից հեղեղի նման ներքև էին հորդում քրդերը: Հափշտակում էին դեռահաս աղջիկներին՝ նախապես պոկելով նրանց երեսի քողը և տանում գեղեցիկներին իրենց սարերը: Առևանգում էին նաև իրենց դուր եկած երեխաներին ու անխնա կերպով կողոպտում բազմությանը: Եթե գաղթականների մոտ փող կամ ուտելիք էին գտնում, ավազակները հափշտակում էին նաև դրանք՝ թշվառ մարդկանց մատնելով սովամահության: Քրդերը հափշտակում էին նրանց հագուստը՝ երբեմն կանանց ու տղամարդկանց թողնելով բացարձակ մերկ: Այս վայրագությունների ողջ ընթացքում քրդերն անվարան սպանում էին մարդկանց. համընդհանուր սարսափին միախառնվում էին կանանց ու ծերերի ճիչերը: Նրանց, ում հաջողվել էր փախչել այդ սարսափներից, մահմեդական գյուղերում նոր սարսափներ էին սպասում: Այստեղ թուրք տականքը հարձակվում էր կանանց վրա. կատարվածից հետո կանայք մահանում էին կամ խելագարվում: Նման հրեշավոր փորձություններից հետո գաղթականները կամ, ավելի ճիշտ, հրաշքով ողջ մնացածները հաջորդ առավոտ շարունակում էին ճանապարհը: Որքան երկարում էր ճանապարհը, այնքան սաստկանում էր ժանդարմների կատաղությունը. թվում էր, թե նրանց զայրացնում է այն հանգամանքը, որ զոհերից ոմանք դեռ շարունակում են ապրել: Նրանք, ովքեր ընկնում էին ճանապարհին, նույն պահին սպանվում էին սվիններով: Քաղցից ու ծարավից հայերը մեռնում էին հարյուրներով: Նույնիսկ գետերին մոտենալիս նրանց պարզապես տանջելու համար ժանդարմները թույլ չէին տալիս ջուր խմել: Անապատի դաժան արևը վառում էր նրանց հազիվ ծածկված մարմինները, իսկ այրվող ավազի վրա քայլող նրանց ոտքերն այնպես էին վերքոտում, որ հազարավոր հայեր ընկնում էին ճանապարհին և տեղնուտեղը մեռնում: Այն, ինչ մի քանի օր առաջ մարդ-էակների քարավան էր, վերածվել էր փոշեծածկ կմախքների բազմության, որոնք տենդագին համառությամբ ուտելու որևէ բան էին փնտրում. խելացնոր վիճակում ուտում էին, ինչ պատահեր՝ խելագարվելով իրենց գոյությանը սպառնացող բոլոր սարսափներից, հիվանդություններից, զրկանքներից, սակայն նորից առաջ ու առաջ էին քշվում իրենց դահիճների սվիններով ու մտրակներով:

Այսպես առաջ շարժվելով՝ գաղթականներն իրենց հետևից թողնում էին մեկ այլ քարավան՝ ծերերի ու կանանց մեռած ու անթաղ մարմիններ.

նրանք մեռնում էին տիֆից, դիզենտերիայից ու խոլերայից: Կանայք, իրենց երեխաների համար վերջին անգամ աղերսելով ուտելիք ու ջուր, օտարներին աղաչում էին փրկել իրենց դահիճներից, իսկ երբ չէր հաջողվում, նրանց նետում էին ջրհորները կամ թողնում թփերում, որպեսզի գոնե հանգիստ մահանան: Հետևում մնացել էին աղջնակներ, որոնց հաճախ մեկ մեջիդիով (մոտավորապես՝ ութ սենթ), վաճառում էին ստրկության: Իրենց գնորդների բիրտ նպատակներին ծառայելուց հետո նրանք ստիպված էին պոռնիկի կյանք վարել: Հիվանդներով ու հոգեվարք ապրող մարդկանցով լցված փոքր ճամբարների շղթան, որ խառնվում էր չթաղված կամ կիսաթաղ դիակներին, ուղենշում էր առաջ շարժվող ամբոխի ճանապարհը: Նրանց մշտապես հետևում էին անգղերը, սոված շները կռվում էին մեռածների ոսկորների համար: Ամենաահավոր դեպքերը տեղի էին ունենում գետերի, հատկապես Եփրատի մոտ: Երբեմն գետն անցնելու ժամանակ ժանդարմները կանանց հրում-գցում էին ջուրը՝ կրակոցներով սպանելով նրանց, ովքեր փորձում էին լողալով փրկվել: Իրենց պատիվը փրկելու համար կանայք հաճախ, երեխաներին գրկած, իրենք էին նետվում ջուրը:

Հատված հյուպատոսական մի զեկույցից. «Հունիսի վերջին՝ շաբաթը երզրումից մի քանի օր շարունակ հայերի խմբեր բռնագաղթեցին. դրանց մեծ մասը սպանվեց ճանապարհին կրակոցներից կամ ջրախեղդ արվելով: Նրանցից մեկը՝ տիկին Զարուհին՝ մեծահարուստ տարեց մի տիկին, ում նետել էին Եփրատը, փրկվել էր՝ կառչելով գետում լողացող մի բեկորից: Նրան հաջողվել էր ափ դուրս գալ, վերադառնալ երզրում և թաքնվել իր թուրք բարեկամների տանը: Նա երզրումում Համառուսաստանյան քաղաքների միության ներկայացուցիչ իշխան Արգուտինսկիին պատմել էր, որ դողում է, երբ հիշում է, թե ինչպես թուրքերը հարյուրավոր երեխաների, խոցելով սվիններով, նետում էին Եփրատը, ու թե ինչպես էին կանանց ու տղամարդկանց մերկացնում, կապում իրար, գնդակահարում ու նետում գետը: Այդ մասին պատմելիս ողջ մարմնով սարսուռ էր անցնում: Երզնկայի մոտ հազարավոր դիակներ այնպես էին խցանել գետը, որ Եփրատը շեղվել էր իր հունից գրեթե հարյուր յարդ»:

Զավեշտ կարող է թվալ թուրքական կառավարության այն պնդումը, թե, իբր, իրենք լրջորեն մտադիր էին «հայերին աքսորել այլ բնակավայրեր»: Այն վերաբերմունքը, որին հայերն արժանացան ուղեկցող ժանդարմների կողմից, բացահայտորեն ապացուցում է, որ Էնվերի ու Թալեաթի իրական նպատակը հայերի բնաջնջումն էր: Այս անմարդկային պայմաններում հարավ բռնագաղթածներից քանի՞սն են հասել նոր բնակավայր: Առանձին վերցված մեկ քարավանի ճակատագիրը պարզո-

որոշ ցույց է տալիս է, թե ինչպես «աքսորի» այդ ծրագիրը վերածվեց բնաջնջման ծրագրի: Այդ գործի բոլոր մանրամասներն ինձ անմիջականորեն ներկայացվել են Հալեպում ԱՄՆ հյուպատոսի կողմից և ներկայումս պահվում են Վաշինգտոնում, Պետքարտուղարության արխիվներում:

Հունիսի 1-ին հայերի երեքհազարանոց քարավանը (հիմնականում՝ կանայք, աղջիկներ ու մանկահասակ երեխաներ) դուրս եկավ Խարբերդից: Ընդունված կարգով նրանց ուղեկցելու համար կառավարությունը հատկացրել էր յոթանասուն ժանդարմ թուրք առաջնորդի՝ բեյի հրամանատարությամբ: Ինչպես հատուկ էր ժանդարմներին, նրանք ոչ թե բռնագաղթյալների պաշտպանը դարձան, այլ նրանց տանջողն ու դահիճը: Հազիվ էին ճամփա ընկել, երբ բեյը քարավանից 400 լիրա հավաքեց՝ այն պատրվակով, թե անվտանգության նկատառումներով դրամն իր մոտ կպահի, մինչև քարավանը հասնի Մալաթիա: Գաղթականներից կորզելով սնունդ գնելու միակ միջոցը՝ բեյը հեռացավ՝ նրանց բոլորին թողնելով ժանդարմների «գթասրտության» հույսին:

Մինչև Ռաս-ուլ-Այն հասնելը, որն առաջին կանգառն էր Բաղդադի ճանապարհին, այդ ողջ ընթացքում դժբախտ «ճամփորդների» գոյությունը մի անվերջանալի մղձավանջ էր. ոստիկանները փութում էին՝ սարերում ապրող կիսավայրենի ցեղերին տեղեկացնելու, որ մոտենում են մի քանի հազար հայ կանայք ու աղջիկներ: Արաբներն ու քրդերը փախցնում էին աղջիկներին՝ շարունակաբար հարձակվելով քարավանի վրա, բռնաբարելով ու սպանելով կանանց: Հաճախ ժանդարմները նույնպես մասնակցում էին այդ ցոփ «խրախճանքին»: Քարավանում դեռևս մնացած մի քանի տղամարդու սպանեցին մեկ առ մեկ: Կանանցից ոմանց հաջողվել էր դրամը թաքցնել բերանում կամ վարսերի մեջ. դրանով նրանք ձիեր էին գնում, որոնք քրդերը գողանում-տանում էին: Վերջապես, երեսուն օր անց իրենց զոհերին կողոպտելուց, բռնաբարելուց, ծեծելուց ու սպանելուց հետո ժանդարմները լքեցին նրանց ու հեռացան: Երկու օր անց հայտնվեցին քրդերը, որոնք հավաքեցին դեռևս ողջ մնացած տղամարդկանց: Գտան 15-ից 90 տարեկան 150 տղամարդ. նրանց անմիջապես տարան մի կողմ ու գլխատեցին: Այդ նույն օրը Խարբերդի քարավանին միացավ մեկ այլ քարավան Սվազից՝ գաղթականների ընդհանուր թիվը հասցնելով տասնութ հազարի:

Հիմա արդեն հրամանատարությունը ստանձնեց մի քուրդ բեյ: Այդ պաշտոնում հայտնված մյուս բոլորի նման նա այդ նշանակումն ընկալեց որպես կողոպուտի, բռնությունների և սպանության հնարավորություն: Այդ ավազակը հավաքեց սարերում բնակվող իր բոլոր ցեղակիցներին և «հրավիրեց»՝ հայերի հետ վարվելու իրենց ուզածի պես: Օր ու գիշեր

նրանք տանում էին գեղեցիկ աղջիկներին, ովքեր երբեմն վերադառնում էին ողորմելի վիճակում ու պատմում իրենց ապրած սարսափների մասին: Բոլոր նրանք, ովքեր ծեր էին կամ տկար ու չէին կարող քայլել քարավանի հետ, պարզապես սպանվում էին: Թուրքական գյուղերում տեղի խուժանին թույլատրված էր հարձակվել հայ աղջիկների վրա: Երբ նոսրացած խումբը հասավ Եփրատի ափ, ջրում տեսավ երկու հարյուր տղամարդու լողացող դիեր: Նրանց այնպես էին կողոպտել, որ մարմինների վրա ցնցոտիներից բացի ոչինչ չկար: Վրա հասած քրդերը տարան նույնիսկ այդ ցնցոտիները:

Քարավանի մեծ մասը քայլեց ևս հինգ օր անապատի կիզիչ արևի տակ գրեթե ամբողջովին մերկ: Այդ հինգ օրվա ընթացքում նրանք հացի մի փշրանք կամ ջրի մի կաթիլ չունեին: «Հարյուրավոր մարդիկ ընկնում էին ճանապարհին, - գրված է զեկույցում, - նրանց լեզուներն ածխի նման սևացած էին, իսկ երբ հինգ օր անց հասան աղբյուրին ու նետվեցին դեպի ջուրը, ժանդարմները փակեցին նրանց ճանապարհը՝ թույլ չտալով գոնե մի քանի կաթիլ ջուր խմել: Նպատակ ունեին մի բաժակ ջուրը մեկից-երեք լիրայով վաճառելու, իսկ դրամը կորզելուց հետո նրանք չէին էլ տալիս ջուրը: Այլ վայրերում, որտեղ ջրհորներ կային, կանայք նետվում էին դրանց մեջ, քանի որ չկար ո՛չ պարան, ո՛չ դույլ՝ ջուրը վեր բարձրացնելու համար. նրանք խեղդվում էին, սակայն մյուսները շարունակում էին խմել այդ նույն ջրհորներից, որոնցում լողում էին դիակները: Երբեմն, երբ ջրհորներն այնքան էլ խոր չէին լինում, կանայք կարողանում էին մտնել ու դուրս գալ այնտեղից, մյուսները նետվում էին նրանց վրա ու լիզում կանանց թաց, աղտոտ շորերը իրենց ծարավը թեկուզ փոքր-ինչ հագեցնելու հույսով: Երբ նրանք մերկանդամ անցնում էին արաբական մի գյուղով, արաբները գթացին նրանց և ինչ-որ փալասներ տվեցին՝ մերկությունը ծածկելու համար: Բռնագաղթյալներից ոմանք, ում մոտ դեռևս ինչ-որ դրամ էր մնացել, հագուստ էին գնում, սակայն շատերը ողջ ճանապարհը մինչև Հալեպ այդպես էլ մերկ քայլեցին: Թշվառ, ամոթահար կանայք հազիվ էին կարողանում քայլել և շարժվում էին կքած:

Այդ ողորմելի էակներից մի քանիսը յոթանասուներորդ օրը հասան Հալեպ: Տասնութհազարանոց երկու քարավաններից տեղ հասան միայն 150 կին և երեխա: Նրանցից ամենագեղեցիկները դեռևս մնում էին թուրքերի ու քրդերի մոտ որպես գերի, մյուսներն այլևս մեռած էին:

Ես շարունակում եմ ներկայացնել այս սարսափները սոսկ այն պատճառով, որ առանց մանրամասների անգլախոս հանրությունը չի կարող ընկալել, թե ինչ երկիր է այն, որ կոչում ենք Թուրքիա: Ես չեմ հայտնում

ամենասարսռալի մանրամասները, քանի որ նկարագրումը սադիստական այդ սանձարձակությունների, որոնց զոհ էին դարձել հայ կանայք ու տղամարդիկ, Ամերիկայում երբեք չի հրապարակվի: Այս աստվածապաշտ մարդիկ ենթարկվեցին այնպիսի խոշտանգումների, որ միայն ոճրագործ, այլասերված միտքը կարող է հորինել, նաև հալածանքներ ու աղաղակող անարդարություն, որ ծնվել էին ամենահիվանդ ուղեղներում: Իմ խորին համոզմամբ՝ ողջ մարդկության պատմության մեջ չկա ավելի սահմռկելի դրվագ, քան սա է: Անցյալում կատարված կոտորածներն ու հալածանքները մթագնում են 1915 թվականին հայերին բաժին ընկած հալածանքների համեմատությամբ: Ալբիգոյցիների[32] կոտորածը 13-րդ դարի սկզբին համարվում էր պատմության ամենախայտառակ անցքերից մեկը: Ֆանատիզմի այդ բռնկումների ժամանակ սպանվեց շուրջ 60000 մարդ: Սուրբ Բարդուղիմեոսի գիշերվա ջարդերի ժամանակ ավելի քան 30000 մարդ զրկվեց կյանքից: Սիցիլիական վեսպերները[33], որոնք մարդկային պատմության նմանօրինակ ամենանողկալի դրվագներից էին, 8000 հոգու մահվան պատճառ դարձան: Տորկվեմադայի[34] ղեկավարած իսպանական ինկվիզիցիայի մասին հատորներ են գրվել, սակայն նրա վարչարարության տասնութ տարիների ընթացքում սպանվել էր շուրջ ութ հազար հերետիկոս: Թերևս պատմական միակ դրվագը, որ հիշեցնում է հայերի բռնագաղթերը, Ֆերդինանդի ու Իզաբելայի կողմից հրեաների վտարումն էր Իսպանիայից: Ըստ Պրեսկոտի[35] տվյալների՝ շուրջ հարյուր վաթսուն հազար մարդ վտարվել էր իրենց տներից և սփռվել Աֆրիկայում ու Եվրոպայում: Այսուհանդերձ, հայերի տառապանքների համեմատությամբ բոլոր հալածանքները մթագնում են. սպանվեց առնվազն վեց հարյուր հազար հայ, թեև այդ թիվը կարող է հասնել 1 միլիոնի: Եթե ավելի վաղ անցյալում կատարված բոլոր ջարդերը համեմատենք թուրքերի արածի հետ, ապա կնկատենք՝ դրանց հատուկ է մի հատկանիշ, որը կարելի է հիշատակել որպես գրեթե արդարացում. դրանք կրոնական ֆանատիզմի հետևանք էին, և այն հրահրող կանանց ու տղամարդկանց մեծ մասն անկեղծորեն հավատում էր, որ իրենք այդպես ծառայում են Արարչին: Անկասկած, կրոնական մոլեռանդությունը նաև թուրք ու քուրդ խուժանի հիմնական մղիչ ուժն էր. նրանք հայերին գլխատում էին որպես Ալլահին մատուցվող ծառայություն, սակայն նրանք, ովքեր մտահղացել էին հայերի կոտորածը, նման շարժառիթ չունեին: Իրականում նրանք բոլորը աթեիստ էին, որ իսլամը հարգում էին ոչ ավելի, քան քրիստոնեությունը, և նրանց դրդող միակ շարժառիթը սառնասիրտ և հաշվարկված պետական քաղաքականությունն էր:

Հայը օսմանյան լծի տակ գտնվող միակ ժողովուրդը չէր, որ տուժեց «Թուրքիան՝ թուրքերի համար» քաղաքականությունից: Այն, ինչ պատմեցի հայերի հետ կատարվածի մասին, կարելի է որոշակի փոփոխությամբ պատմել հույների և սիրիացիների մասին: Իրականում Թուրքիայի ազգայնացման գաղափարի առաջին զոհերը հույներն էին: Ես արդեն նկարագրել եմ, թե ինչպես պատերազմից մի քանի ամիս առաջ օսմանյան կառավարությունը սկսեց աքսորել իր հույն հպատակներին Փոքր Ասիայի մերձափնյա շրջաններից: Այդ խայտառակ անօրինականությունները քիչ հետաքրքրություն առաջացրին թե՛ Եվրոպայում և թե՛ Ամերիկայում, սակայն երեք-չորս ամսում ավելի քան 100000 հույներ տեղահանվեցին Միջերկրականի ափին գտնվող իրենց դարավոր բնակավայրերից և ուղարկվեցին հունական կղզիներ, նաև Թուրքիայի ներքին շրջաններ: Հիմնականում դրանք իրապես տեղահանումներ էին. հույներին, ճիշտ է, տեղահանեցին, սակայն զանգվածաբար չկոտորեցին: Ըստ ամենայնի՝ այդ էր պատճառը, որ քաղաքակիրթ աշխարհը բողոքի ձայն չբարձրացրեց այդ աքսորների դեմ, ուստի թուրքերը հետագայում որոշեցին նույնը կիրառել ոչ միայն հույների, այլև հայերի, սիրիացիների, նեստորականների և այլ հպատակների հանդեպ: Իրականում Բեդրի բեյը՝ ոստիկանապետը, Կոստանդնուպոլսում իմ օգնականներից մեկին անձամբ պատմել էր, որ օսմանյան կառավարությունը որոշել է այդ մեթոդը կիրառել կայսրության բոլոր այլազգիների հանդեպ:

Այսպիսով, հույների կոտորածներն ընթացան երկու ալիքով՝ պատերազմից առաջ և 1915 թվականի ամենասկզբին: Առաջինը հիմնականում հարվածեց Փոքր Ասիայի ծովափնյա մասերում բնակվող հույներին: Երկրորդ ալիքը հարվածեց նրանց, ովքեր բնակվում էին Թրակիայում և Մարմարայի, Դարդանելի, Բոսֆորի, ինչպես նաև Սև ծովի մերձափնյա շրջաններում: Հույների հանդեպ թուրքերը կիրառեցին գրեթե նույն քաղաքականությունը, ինչ հայերի հանդեպ: Նրանք սկսեցին հույներին հավաքագրել օսմանյան բանակ, այնուհետև, վերածելով աշխատանքային վաշտերի, օգտագործում էին նրանց Կովկասում և ռազմական գործողությունների այլ վայրերում ճանապարհներ կառուցելու համար: Հույն զինվորները, ճիշտ հայերի նման, հազարներով մեռնում էին սովից, ցրտից և այլ զրկանքներից: Տնից տուն նույն խուզարկությունները էին կատարվում թաքցրած զենք գտնելու պատրվակով նաև հունական գյուղերում. հույն կանայք ու տղամարդիկ ենթարկվում էին ծեծի ու կտտանքների, ճիշտ այնպես, ինչպես նրանց հայազգի համաքաղաքացիները: Հույներից կատարված բռնագրավումները, ինչպես և հայերի դեպքում, վերածվում էին պարզ ու լայնածավալ կողոպուտի:

Թուրքերը փորձում էին մահմեդականացնել, դավանափոխ անել հույն հպատակներին. հույն աղջիկները, ճիշտ հայուհիների նման, առևանգվում էին, բռնի տարվում թուրքական հարեմներ, իսկ հույն տղաներին փախցնում և ուղարկում էին մահմեդական ընտանիքներ: Ճիշտ հայերի նման, հույներին էլ մեղադրում էին դավաճանության մեջ. թուրքերը նրանց մեղադրում էին Մարմարա ծովում անգլիական սուզանավերին պաշարներ հասցնելու և լրտեսության համար:

Թուրքերը հայտարարեցին նաև, թե հույները հնազանդ չեն օսմանյան կառավարությանը և անհամբերությամբ սպասում են, թե երբ իրենք՝ թուրքաբնակ հույները, կդառնան Հունաստանի բնակչության մաս: Այս վերջին մեղադրանքը, անշուշտ, ճշմարիտ էր. հինգ դար շարունակ թուրքերի ձեռքին ամենասարսափելի տառապանքներ կրելուց հետո, բնական էր, նրանք պիտի երազեին այն պահը, երբ իրենց տարածքները կդառնան հայրենիքի մաս: Ճիշտ այնպես, ինչպես հայերի պարագայում, թուրքերն օգտվեցին այդ հանգամանքից՝ ողջ ժողովրդի վրա կատաղի հարձակում գործելու համար: Հույներին ամենուրեք հավաքում էին խմբերով և թուրք ժանդարմների «պաշտպանության» ներքո, հիմնականում՝ հետիոտն, ուղարկում էին երկրի ներքին շրջաններ: Թե քանի՞-քանիսն այդպես ցրվեցին երկրի չորս կողմը, հայտնի չէ. կարծիքները տատանվում են երկու հարյուր հազարից մեկ միլիոնի սահմանում: Հույների քարավանները ենթարկվում էին աննկարագրելի տանջանքների, սակայն նրանց, ինչպես հայերի դեպքում էր, համատարած չէին կոտորում, և դա էր, ըստ երևույթին, պատճառը, որ աշխարհը դրա մասին շատ բան չիմացավ: Թուրքերի կողմից դա խղճահարության դրսևորում չէր. ի տարբերություն հայերի՝ հույները կառավարություն ունեին, որը հետաքրքրված էր իր ժողովրդի վիճակով: Այդ ժամանակահատվածում տևտոնական տերությունները սպասում էին, թե Հունաստանը կարող է մտնել պատերազմի մեջ Անտանտի կողմից, իսկ հույների անխնա ջարդերը Փոքր Ասիայում, անկասկած, Հունաստանում այնպիսի տրամադրություններ կստեղծեին, որոնց առկայությամբ երկրի գերմանամետ թագավորն անկարող կլիներ իր երկիրը պատերազմից հեռու պահել: Այսպիսով, Թուրքիայի հայերին բաժին ընկած օսմանյան սարսափներից հույներին փրկեցին միայն պետական քաղաքականության նկատառումները: Այդուհանդերձ, նրանց տառապանքներն անասելի էին և կազմում էին մեկ այլ օղակ այն հանցագործությունների երկար շղթայում, որոնց համար քաղաքակրթությունը պետք է պատասխանատվության կանչի թուրքին:

ԳԼՈՒԽ XXV

Թալեաթը պատմում է, թե ինչու է բռնագաղթեցնում հայերին

Որոշ ժամանակ անցավ, մինչև հայերի հանդեպ կատարվող վայրագությունների պատմության բոլոր մանրամասները հասան ԱՄՆ դեսպանություն: Հունվարին ու փետրվարին կցկտուր լուրեր էին ստացվում, սակայն սկզբում դրանք ընկալվում էին որպես հայկական գավառներում տարիներ շարունակ ընթացող խժդժությունների դրսևորում: Երբ զեկույցներ ստացվեցին Ուրմիայից, էնվերը և Թալեաթը ժխտեցին դրանք՝ որպես չլսված չափազանցում, իսկ երբ առաջին անգամ տեղեկացանք Վանում կատարվող դեպքերի մասին, այս թուրք պաշտոնյաները հայտարարեցին, թե դրանք ոչ ավելին են, քան ամբոխի կողմից կազմակերպված անկարգություններ, ինչն իրենք շատ շուտով կվերցնեն իրենց վերահսկողության տակ: Հիմա ես հասկանում եմ այն, ինչ առաջին ամիսներին պարզ չէր. թուրքական կառավարությունը որոշել էր հնարավորինս երկար ժամանակ աշխարհից թաքցնել տեղի ունեցող իրադարձությունները: Նրանց նպատակն էր, որ Ամերիկան ու Եվրոպան հայ ժողովրդի ոչնչացման մասին տեղեկանան միայն այն ժամանակ, երբ կոտորածներն արդեն վերջնականապես իրականացված կլինեին: Քանի որ թուրքերն ամենից ավելի ցանկանում էին Ամերիկային պահել անգիտության մեջ, իմ անձնակազմի կամ անձամբ ինձ հետ իրավիճակը քննարկելիս նրանք դիմում էին ամենաանամոթ ստերի:

Ապրիլի սկզբին իշխանությունները Կոստանդնուպոլսում ձերբակալեցին շուրջ երկու հարյուր հայի և բռնագաղթեցրին երկրի խորքը: Նրանց մեծ մասը կրթական և հասարակական ասպարեզների առաջնորդներ էին, արդյունաբերության և ֆինանսական բնագավառի կարկառուն դեմքեր: Ես ծանոթ էի նրանցից շատերի հետ և անձնական հետաքրքրություն ունեի նրանց ճակատագրի հանդեպ: Սակայն երբ խոսեցի Թալեաթի հետ նրանց աքսորի մասին, նա պատասխանեց, որ կառավարությունը գործում է սոսկ ինքնապաշտպանական մղումներով: Վանի հայերը, ասաց նա, արդեն դրսևորեցին իրենց հեղափոխական հակումները. իրեն հայտնի է, որ Կոստանդնուպոլսի հայերը նամակագրություն են հաստատել ռուսների հետ, և որ ինքը բոլոր հիմքերն ունի կասկածելու, որ նրանք հեղափոխություն էին նախապատրաստում կենտրոնական կառավարության դեմ: Այդ պատճառով, հանուն իրենց ապահովության, հարկ կլինի հայերին ուղարկել Անգորա և Թուրքիայի

ներքին այլ շրջաններ: Թալեաթը ժխտում էր, որ դա մայրաքաղաքը հայերից ազատելու մի մեծ ծրագրի մաս է, և պնդում էր, որ Կոստանդնուպոլսի հայ զանգվածներին չեն անհանգստացնի:

Սակայն Թուրքիայի ներքին շրջաններից շուտով ստացված լուրերն ավելի ստույգ և խիստ մտահոգիչ դարձան: Դաշնակիցների նահանջը Դարդանելից զգալի փոփոխություն բերեց իր հետ: Մինչ այդ բազմաթիվ նշաններ կային, որ հայկական գավառներում լարված իրավիճակ է, սակայն երբ վերջնականապես պարզ դարձավ, որ հայերի ավանդական բարեկամները՝ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան ու Ռուսաստանը, չեն կարող որևէ քայլ անել այդ տառապյալներին օգնելու համար, թուրքերի դիմակը պատռվեց: Ապրիլին շատ անսպասելի ինձ զրկեցին ԱՄՆ հյուպատոսների հետ ծածկագրով հաղորդակցվելու իրավունքից: Խստագույն գրաքննություն մտցվեց նաև անձնական նամակագրության մեջ: Այդ ամենը կարող էր միայն նշանակել, որ Փոքր Ասիայում կատարվում են իրադարձություններ, որոնք թուրքական իշխանությունները փորձում էին գաղտնի պահել, բայց դա նրանց չհաջողվեց: Թեև ճամփորդելու համար ամեն տեսակի խոչընդոտներ էին հորինվում, սակայն ամերիկացիներից ոմանց, հիմնականում՝ միսիոներներին, դա հաջողվում էր:

Մենք միասին ժամեր էինք անցկացնում իմ աշխատասենյակում. նրանց աչքերից արցունքներ էին հոսում, երբ պատմում էին այն սարսափների մասին, որոնց միջով անցել էին: Նրանցից շատերը՝ թե՛ կանայք, թե՛ տղամարդիկ, կորցրել էին իրենց առողջությունը այն տեսարանների պատճառով, որոնց ականատես էին եղել: Շատ հաճախ նրանք ինձ նամակներ էին բերում ԱՄՆ հյուպատոսներից, որոնք իրենց հերթին հաստատում էին նրանց ամենասոսկալի պատմությունները և ավելացնում չարտաբերվող մանրամասներ: Ականատեսների վկայություններում հիմնական շեշտը դրվում էր թուրքերի այլասերվածության ու աներևակայելի դաժանության վրա, ինչը հայտնի էր դարեր շարունակ, սակայն թուրքերը շարունակում էին գերազանցել իրենք իրենց: Հիմա միայն մեկ հույս կար շուրջ երկու միլիոն մարդ ջարդերից, սովից և, ինչպես ինձ ասացին, առավել դաժան ճակատագրից փրկելու համար. դա Միացյալ Նահանգների բարոյական զորակցությունն էր: Այս դատապարտված ժողովրդի գործիչները հայտարարեցին՝ եթե ԱՄՆ դեսպանը չկարողանա թուրքին համոզել կանգնեցնել սպանող ձեռքը, ապա ողջ հայ ժողովուրդը աշխարհից կվերանա: Միայն Ամերիկայի ու Կանադայի միսիոներները չէին, որ հանդես էին գալիս այդ կոչով: Նրանց գերմանացի գործընկերներից ոմանք նույնպես փորձեցին միջամտել. այդ կանայք ու տղամարդիկ հաստատեցին վատթարագույնը, որ ես արդեն լսել

էի, և բացահայտորեն մեղադրում էին իրենց հայրենիքի առաջնորդներին: Նրանք չէին թաքցնում, որ որպես գերմանացի ստորացված են զգում, որ իրենց երկիրը կարող է դաշնակից լինել մի պետության, որն ընդունակ է նման դաժանությունների: Սակայն նրանց հայտնի էր նաև Գերմանիայի վարած քաղաքականությունը, և նրանք հասկանում էին, որ Գերմանիան չի միջամտի: Կայսրից օգնություն ակնկալելն անիմաստ էր: Նրանք ասացին, որ եթե Ամերիկան չմիջամտի, ջարդերը կշարունակվեն:

Ի պաշտոնե ես, իհարկե, միջամտելու իրավունք չունեի: Եթե իրավիճակին մոտենանք խիստ իրավական տեսանկյունից, թուրքական կառավարության կողմից իր երկրի հպատակների հանդեպ ցուցաբերվող վերաբերմունքն իր ներքին գործն էր: Քանի դեռ դա չէր սպառնում ամերիկացիների կյանքին կամ ամերիկյան շահերին, այն դուրս էր ամերիկյան կառավարության իրավասություններից: Երբ ես առաջին անգամ Թալեաթի հետ խոսեցի այդ մասին, նա իմ ուշադրությունը հրավիրեց հենց այդ հանգամանքի վրա: Մինչ այդ օրն իմ ունեցած բոլոր զրույցներից դա ամենալարվածն էր: Այդ օրերին ինձ այցելել էին երկու միսիոներներ՝ ամենայն մանրամասնությամբ նկարագրելով այն սարսափները, որ կատարվում էին Կոնիայում: Այդ պատմությունները լսելուց հետո այլևս ինձ զսպել չէի կարող և անմիջապես գնացի Բարձր Դուռ: Ես իսկույն նկատեցի, որ Թալեաթը կատաղած է. ամիսներ շարունակ նա փորձում էր ազատել իր ամենամտերիմ ընկերներին՝ Այուբ Սաբրիին ու Զինունին, որոնց անգլիացիները գերի էին պահում Մալթայում: Նրա անհաջողությունն այդ հարցում մշտական գրգռվածության ու մռայլության պատճառ էր: Անդադար այդ մասին էր խոսում, անում նոր առաջարկներ՝ իր ընկերներին Թուրքիա հետ բերելու համար, խնդրում էր իմ աջակցությունը: Այդ թուրք պաշտոնյան այնպես էր կատաղում բացակա ընկերների մասին խոսելիս, որ մենք նման դեպքերում ասում էինք, որ Թալեաթը «Այուբ Սաբրի տրամադրության մեջ է»: Այդ առավոտ Ներքին գործերի նախարարը «Այուբ Սաբրի» ամենամռայլ հոգեվիճակում էր: Կրկին փորձել էր ազատել իր գերյալ ընկերներին և նորից անհաջողության մատնվել: Սովորականի պես փորձում էր ինձ հետ արտաքուստ պահպանել հանդարտություն ու քաղաքավարություն, սակայն նրա կարճ ու կտրուկ նախադասությունները, բուլդոգի ծանր հայացքը, սեղանին հենած դաստակները հասկացնում էին, որ հիմա պատեհ ժամ չէ՝ նրա հոգում խղճմտանքի կամ կարեկցանքի որևէ նշույլ արթնացնելու համար: Սկզբում ես նրա հետ խոսեցի կանադացի միսիոներ դոկտոր Մաքնոթոնի մասին, ում Փոքր Ասիայում արտառոց դաժանությամբ էին վերաբերվում:

- Այդ անձը Անգլիայի գործակալ է, - պատասխանեց նա, - և մենք

ունենք դրա ապացույցը:

- Ցո՛ւյց տվեք, - ասացի ես:

- Ոչինչ չենք անի ոմն անգլիացի կամ կանադացի փրկելու համար, - պատասխանեց Թալեաթը, - մինչև ազատ չարձակեն Այուբին ու Զինունին:

- Բայց Դուք խոստացաք ամերիկյան գործերի համար վարձված անգլիացիներին վերաբերվել որպես ամերիկացիների, - ասացի ես:

- Հնարավոր է, - ասաց նախարարը, - սակայն խոստումը հավերժական ուժ չունի: Հիմա ես հետ եմ վերցնում այդ խոստումը. խոստումների ժամանակը սահմանափակ է:

- Եթե խոստումը պարտավորեցնող չէ, հապա ի՞նչն է, - հարցրի ես:

- Երաշխիքը, - արագ պատասխանեց Թալեաթը:

Թուրքական այս ուշագրավ տարբերակումը, անշուշտ, մետաֆիզիկական հետաքրքրություն էր ներկայացնում, սակայն այդ պահին ես ավելի գործնական բաներ ունեի քննարկելու: Սկսեցի խոսել Կոնիայի հայերի մասին: Դեռ նոր էի սկսել, երբ Թալեաթը է՛լ ավելի ագրեսիվ դարձավ. աչքերը բոցկլտացին, նա սեղմեց շրթունքները, թեքվեց դեպի ինձ և կատաղած ասաց.

- Նրա՞նք էլ են ամերիկացի:

Հարցի մեջ պարունակվող ակնարկը բնավ դիվանագիտական երանգ չուներ. դա մի պարզունակ ձև էր ինձ հասկացնելու, որ դա իմ գործը չէ: Վայրկյաններ անց Թալեաթն այդ նույն միտքն արտահայտեց բառերով:

- Հայերին չի կարելի վստահել, - ասաց նա, - բացի այդ, թե մենք ինչպես ենք վարվում նրանց հետ, Ամերիկայի գործը չէ:

Պատասխանեցի, որ ես ինձ համարում եմ հայերի բարեկամը և ցնցված եմ նրանց հանդեպ եղած վերաբերմունքից, սակայն Թալեաթը օրորեց գլուխը և հրաժարվեց քննարկել այդ հարցը: Ինձ համար պարզ էր, որ համառելով ես այդ պահին ոչնչի չեմ հասնի: Խոսք բացեցի մեկ այլ բրիտանահպատակի մասին, ով նույնպես դաժան վերաբերմունքի էր արժանացել:

- Նա անգլիացի է, այդպես չէ՞, - հարցրեց Թալեաթը, - ուրեմն նրա հետ կվարվեմ այնպես, ինչպես կամենամ:

- Կերե՛ք նրան, եթե ցանկանում եք, - պատասխանեցի ես:

- Չէ՛, չեմ մարսի:

Թալեաթն անկառավարելի հոգեվիճակում էր:

- Gott strafe England (Աստված պատժի Անգլիային), - գոռաց նա. դա նրա իմացած սակավաթիվ գերմաներեն բառերից էր: - Ինչ վերաբերում է ձեր հայերին, մենք թքած ունենք ապագայի վրա: Մենք միայն ներկայով

ենք ապրում: Իսկ անգլիացիների հարցով հեռագրեք Վաշինգտոն, որ մենք նրանց համար ոչինչ չենք անի, եթե նրանք չազատեն Այուբ Սաբրիին ու Զինունին:

Հետո նա թեքվեց իմ կողմը, դիրք ընդունեց, ձեռքը սեղմեց սրտին ու ասաց անգլերեն (կարծեմ դրանք միակ անգլերեն բառերն էին, որ նա գիտեր). «Այուբ Սաբրի - նա - ինձ - եղբայր...»:

Այնուհանդերձ, ես մեկ անգամ ևս խոսեցի դոկտոր ՄաքՆոթոնի մասին:

- Նա ամերիկացի չէ,- ասաց Թալեաթը, - կանադացի է:

- Դա գրեթե նույն բանն է,- պատասխանեցի ես:

- Լավ, - ասաց Թալեաթը, - եթե ես նրան ազատ արձակեմ, խոստանո՞ւմ եք, որ Միացյալ Նահանգները կգրավի Կանադան:

- Խոստանում եմ, - ասացի ես, և մենք ծիծաղեցինք այդ փոքրիկ կատակի վրա:

Վերջապես Թալեաթն ասաց.

- Ամեն անգամ, այստեղ գալով, ինձնից մի բան պոկում եք: Դե՛ լավ, կարող եք վերցնել ձեր ՄաքՆոթոնին:

Հայերի համար այս խոսակցությունը բնավ խոստումնալից սկիզբ չէր: Սակայն միշտ չէր, որ Թալեաթը «Այուբ Սաբրի» տրամադրության մեջ էր լինում:

Նա երեխայի նման արագ փոխում էր տրամադրությունը. մի օր դաժան էր ու կատաղած, իսկ հաջորդ օրը՝ բարյացակամ ու զիջող: Իմ ողջամտությունն ինձ հուշում էր, որ ես պետք է սպասեմ, մինչև նա ավելի բարեհոգի լինի, և միայն այդ ժամանակ բարձրացնեմ այն հարցը, որը բացահայտում էր նրա ողջ էության բարբարոս բնույթը: Շուտով նման առիթ ներկայացավ: Նկարագրված հանդիպումից մի քանի օր անց ես նորից այցելեցի Թալեաթին: Առաջին իսկ պահին նա բացեց գրասեղանի դարակն ու այնտեղից դեղնավուն հեռագրերի կապոց հանեց:

- Ինչո՞ւ այս դրամը մեզ չեք տալիս, - հեգնական ժպիտով հարցրեց նա:

- Ի՞նչ դրամ, - զարմացա ես:

- Ամերիկայից Ձեզ համար հեռագիր է ստացվել. Ձեզ խոշոր գումար են ուղարկում՝ հայերի համար: Դուք փողն այդկերպ չպետք է օգտագործեք. տվե՛ք այն մեզ՝ թուրքերիս, մենք դրա կարիքը շատ ունենք:

- Ես նման հեռագիր չեմ ստացել,- պատասխանեցի ես:

- Օ՛հ, անշուշտ, բայց կստանաք, - ասաց նա: - Ես միշտ առաջինն եմ ստանում Ձեզ ուղղված հեռագրերը: Երբ կարդում-վերջացնում եմ, ուղարկում եմ Ձեզ:

Դա իսկապես այդպես էր. ամեն առավոտ Կոստանդնուպոլսում ստաց-

ված բոլոր չգաղտնագրված հեռագրերն առաքվում էին Թալեաթին: Նա կարդում էր դրանք, ապա միայն թույլ տալիս, որ ուղարկվեն ըստ պատկանելության: Բացառություն չէր արվում նույնիսկ դեսպաններին ուղղված հեռագրերին, թեպետ գաղտնագրված հեռագրերին չէին դիպչում: Մեկ այլ իրավիճակում ես կբողոքեի իմ իրավունքների նման խախտման դեմ, սակայն Թալեաթի անկեղծ խոստովանությունը իմ նամակագրությանը միջամտելու մասին և նույնիսկ իմ սեփական հեռագրերը քթիս տակ թափահարելն ինձ հիանալի հնարավորություն էին ընձեռում արգելված թեմային անդրադառնալու համար:

Բայց Թալեաթն առաջվա նման խուսափում էր այդ թեմայից և թշնամանքով էր ընկալում ամերիկացի ժողովրդի ցուցաբերած հետաքրքրությունը հայ ժողովրդի ճակատագրի հանդեպ: Իր քաղաքականությունը նա բացատրում էր նրանով, որ հայերը մշտական հաղորդակցություն ունեն ռուսների հետ: Այս թեմայի շուրջ մեր բոլոր զրույցները համոզեցին ինձ, որ Թալեաթը այդ հալածվող ժողովրդի ամենաերդվյալ թշնամին է: Օգոստոսի 3-ին իմ օրագրում գրել եմ. «Ես այն տպավորությունը ստացա, որ Թալեաթի ցանկությունն է ամբողջովին բնաջնջել խեղճ հայերին»: Նա ինձ ասաց, որ «Միություն և առաջադիմություն» կոմիտեն մանրակրկիտ քննարկել է հարցը, և ներկայումս իրականացվող քաղաքականությունը պաշտոնապես ընդունված է նրանց կողմից: Նա նաև ասաց, որ ես չպետք է կարծեմ, թե բռնագաղթերը հապճեպ որոշված քայլ են. իրականում դրանք երկարատև և մանրակրկիտ քննարկումների արդյունք են:

Այդ մարդկանց հանդեպ գթասիրտ լինելու իմ բազում կոչերին նա պատասխանում էր երբեմն լուրջ, երբեմն բարկացած, երբեմն կատակով:

- Մի օր,- ասաց նա,- ես կգամ ու Հայկական հարցը կքննարկեմ Ձեզ հետ, - հետո ցածրաձայն ավելացրեց թուրքերեն, - բայց այդ օրը երբեք չի գա:

Նա մի օր ինձ հարցրեց.

- Ինչո՞ւ եք այդքան հետաքրքրվում հայերով. Դուք հրեա եք, այդ մարդիկ՝ քրիստոնյա: Մահմեդականներն ու հրեաները միշտ լավ հարաբերություններ են ունեցել միմյանց հետ: Հրեաներին մենք լավ ենք վերաբերվում: Ինչի՞ց եք բողոքում: Ինչո՞ւ եք մեզ խանգարում այդ քրիստոնյաների հետ անել այն, ինչ ցանկանում ենք:

Ես քանիցս նշել եմ, որ թուրքերն ամեն մի հարց ընկալում են որպես անձնական, սակայն նման մոտեցումն ապշեցրեց ինձ, թեև դա լիովին բացահայտում էր Թալեաթի մտածելակերպը. այն փաստը, որ, բացի «ազգություն» և «կրոն» հասկացություններից, գոյություն ունեն նաև այնպիսի արժեքներ, ինչպիսիք են մարդասիրությունն ու քաղաքա-

կրթությունը, երբեք, ոչ մի վայրկյան նրա մտքով չանցավ: Նրանք կարող են հասկանալ, որ քրիստոնյան կարող է պայքարել մեկ այլ քրիստոնյայի համար, կամ հրեան՝ հրեայի համար, սակայն այնպիսի վերացական հասկացություններ, ինչպիսիք են արդարամտությունն ու պարկեշտությունը, նրանց աշխարհընկալման մեջ գոյություն չունեն:

- Դուք չեք հասկանում, - պատասխանեցի, - ես այստեղ եմ ոչ թե որպես հրեա, այլ որպես Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպան: Իմ երկրում բնակվում են շուրջ իննսունյոթ միլիոն քրիստոնյա և ոչ ավելի քան երեք միլիոն հրեա: Ուրեմն, առնվազն որպես դեսպան ես 97 տոկոսով քրիստոնյա եմ: Սակայն հարցը դա չէ: Ես Ձեզ չեմ դիմում որևէ կրոնի կամ ժողովրդի անունից, այլ պարզապես որպես մարդ արարած: Դուք ինձ բազմիցս ասել եք, որ ուզում եք Թուրքիան տեսնել որպես ժամանակակից քաղաքակիրթ աշխարհի մաս: Հայերի հանդեպ ցուցաբերած ձեր վերաբերմունքը չի օգնի հասնելու այդ նպատակին. այդպես վարվելով՝ դուք հայտնվում եք հետամնաց և մոլեռանդ ազգերի շարքում:

- Մենք լավ ենք վերաբերվում ամերիկացիներին, - ասաց Թալեաթը, - չեմ հասկանում՝ Դուք ինչի՞ց եք դժգոհում:

- Ամերիկացիները խորապես վրդովված են հայերին հետապնդելու ձեր քաղաքականությունից, - պատասխանեցի ես: - Դուք պետք է խարըսխեք ձեր սկզբունքները մարդասիրության և ոչ թե ռասայական խտրականության վրա, այլապես Միացյալ Նահանգները ձեզ չի վերաբերվի որպես բարեկամի ու հավասարի: Դուք պետք է հասկանաք նաև այն հսկայական փոփոխությունները, որ տեղի են ունենում քրիստոնյաների հետ ողջ աշխարհում. մոռանալով ամեն տեսակի հակասություններ՝ նրանք միավորվում են, դառնում միասնական: Դուք արհամարհում եք ամերիկացի միսիոներներին, սակայն մոռանում եք, որ նրանց գործունեությանը, այդ թվում նաև նրանց հիմնած կրթական հաստատություններին սատարում են Ամերիկայի լավագույն մարդիկ: Ամերիկացիները պարզ մատերիալիստներ չեն, որ միշտ շահի հետևից են ընկած. նրանք խորապես մարդասեր են և ցանկանում են, որ արդարությունն ու քաղաքակրթությունը տարածվեն աշխարհով մեկ: Երբ այս պատերազմն ավարտվի, դուք կհայտնվեք նոր իրողության մեջ: Դուք ասացիք, որ իբրև հաղթող կարող եք արհամարհել աշխարհը, բայց սխալվում եք: Ամենուրեք կբախվեք հասարակական կարծիքի հետ, հատկապես՝ Միացյալ Նահանգներում: Մեր ժողովուրդը երբեք չի մոռանա այս կոտորածները: Նրանք միշտ կհիշեն ու կդատապարտեն քրիստոնյաների զանգվածային կամայական ոչնչացումը Թուրքիայում՝ այն ընկալելով առնվազն որպես կանխամտածված սպանություն և խստորեն կդատապարտեն այն ան-

ծանց, ովքեր պատասխանատու են դրա համար: Ձեզ չի հաջողվի թաքնվել Ձեր քաղաքական կարգավիճակի տակ՝ արդարանալով, թե իբր գործել եք որպես Ներքին գործերի նախարար, այլ ոչ թե որպես Թալեաթ: Դուք արհամարհում եք մեր երկրում ընդունված արդարության բոլոր գաղափարները:

Որքան էլ տարօրինակ էր, Թալեաթը չվիրավորվեց իմ այդ խոսքերից, չհրաժարվեց իր վճռականությունից. նույն հաջողությամբ ես կարող էի խոսքս ուղղել քարե պատին: Իմ վերացական արտահայտություններից նա անմիջապես անցավ նյութականին:

- Այդ մարդիկ, - ասաց նա, - հրաժարվեցին հանձնել զենքը՝ չնայած մեր հորդորներին: Նրանք մեզ ընդդիմացան Վանում, Ձեյթունում և օգնում էին ռուսներին: Սա միակ ձևն է, որով կարող ենք պաշտպանվել նրանցից ապագայում՝ այսօր բռնագաղթեցնելով նրանց:

- Ենթադրենք, թե որոշ հայեր, իրոք, դավաճանել են ձեզ, - ասացի ես: - Արդյոք դա պատճա՞ռ է մի ողջ ժողովուրդ բնաջնջելու: Արդյոք դա պատճա՞ռ է անմեղ կանանց ու երեխաներին տանջանքների ենթարկելու:

- Նման բաներն անխուսափելի են, - պատասխանեց նա:

Այդ պատասխանն այնքան խոսուն չէր ինձ համար, որքան այն, որ տվեց Թալեաթը՝ պատասխանելով «Berliner Tageblatt»-ի թղթակցին, ով ուղղել էր նրան նույն հարցը: «Մեզ նախատում են, - ըստ վերոհիշյալ թղթակցի՝ ասել էր Թալեաթը, - որ մենք տարբերություն չենք դնում անմեղ ու մեղավոր հայերի միջև: Բայց դա բացարձակապես անհնար է, քանի որ նրանք, ովքեր անմեղ են այսօր, կարող են մեղավոր լինել վաղը»:

Պատճառներից մեկը, որ Թալեաթն այդ թեման ինձ հետ ազատ քննարկել չէր կարող, այն էր, որ մեր դեսպանության աշխատակիցը, ով կատարում էր թարգմանությունը, հայ էր: Այդ պատճառով օգոստոսի սկզբին Թալեաթն ինձ մոտ մարդ ուղարկեց՝ խնդրելով ինձ մենակ գալ: Տեղեկացրեց, որ թարգմանիչ ինքը կապահովի: Սա առաջին դեպքն էր, երբ Թալեաթը խոստովանեց, որ հայերի հանդեպ իր վերաբերմունքը կարող է ինչ-որ կերպ նաև ինձ վերաբերվել: Հանդիպումը կայացավ երկու օր անց: Պատահեց այնպես, որ վերջին անգամ Թալեաթին այցելելուց հետո ես սափրել էի մորուքս: Իմ ներս մտնելու պահից աժդահա նախարարը սկսեց խոսել իրեն հատուկ հումորով:

- Դարձյալ երիտասարդացել եք, - ասաց նա, - այնքան երիտասարդ եք հիմա, որ այլևս չեմ կարող Ձեզ դիմել՝ որևէ խորհուրդ ստանալու համար:

- Ես սափրեցի մորուքս, որովհետև այն ամբողջովին ճերմակել էր

հայերի հանդեպ ձեր ցուցաբերած վերաբերմունքից:

Հաճոյախոսություններ փոխանակելուց հետո մենք անցանք բուն նյութին:

- Ես խնդրեցի Ձեզ այսօր գալ, - սկսեց Թալեաթը, - որպեսզի բացատրեմ Հայկական հարցի վերաբերյալ մեր դիրքորոշումը: Մեր վերաբերմունքը հայերի հանդեպ հիմնված է երեք հստակ հանգամանքների վրա. առաջին՝ նրանք հարստացել են թուրքերի հաշվին, երկրորդ՝ որոշել էին մեզ վերահսկողության տակ առնել և ստեղծել անկախ պետություն, երրորդ՝ նրանք աջակցում էին ռուսներին Կովկասում, և մեր ծախողումներն այնտեղ բացատրվում են հիմնականում նրանց գործողություններով: Ահա թե ինչու մենք եկանք անբեկանելի որոշման՝ մինչև այս պատերազմի ավարտը պետք է անզորացնել նրանց:

Վերոնշյալ կետերից յուրաքանչյուրի վերաբերյալ ես բազմաթիվ առարկություններ ունեի: Թալեաթի առաջին փաստարկը պարզորոշ հաստատում էր այն փաստը, որ հայերն ավելի աշխատասեր և ընդունակ են, քան բթամիտ, ծույլ թուրքերը: Կոտորածը՝ որպես գործարարական մրցակցությունը վերացնելու միջոց, անշուշտ, յուրահատուկ մտահղացում էր: Նրա ընդհանուր մեղադրանքը, որ հայերը «դավեր են նյութում» Թուրքիայի դեմ և անթաքույց համակրում Թուրքիայի թշնամիներին, իր հիմքում նշանակում էր, որ հայերը, հիրավի, դիմում են եվրոպական տերություններին խնդրելով պաշտպանել իրենց կողոպուտից, սպանություններից և բռնություններից: Ինչպես որևէ ազգային հարց, Հայկական հարցը դարեր շարունակ իրականացվող բռնությունների և անարդարության հետևանք էր. դրա դեմ գոյություն ուներ միայն մեկ լուծում՝ կառավարության իրավական համակարգի ստեղծումը, համակարգ, որտեղ բոլոր քաղաքացիներին կվերաբերվեն հավասար, և որտեղ բոլոր հանցագործությունները կպատժվեն որպես անհատի, այլ ոչ թե ժողովրդի արարք: Ես երկար վիճում էի նրա հետ այս և նման այլ հարցերի շուրջ:

- Վիճելն անիմաստ է, - ասաց Թալեաթը, - մենք արդեն վերացրել ենք հայերի երեք քառորդին. Բիթլիսում, Վանում և Էրզրումում այլևս հայեր չկան: Թուրքերի ու հայերի միջև առաջացած ատելությունն այնքան սաստիկ է, որ մենք պարտավոր ենք նրանց բնաջնջել, հակառակ դեպքում նրանք կսկսեն մտածել վրիժառության մասին:

- Եթե ձեզ վրա չեն ազդում մարդասիրական փաստարկները, մտածեք նյութական կորուստների մասին, - պատասխանեցի ես: - Այդ մարդիկ ձեր երկրի ձեռներեցներն են. նրանք են վերահսկում ձեր արդյունաբերության զգալի մասը, նաև խոշոր հարկատուներ են: Ինչպիսի՞ն կլինի

ծեր տնտեսական վիճակն առանց նրանց:

- Տնտեսական կորուստները մեզ չեն հետաքրքրում, - պատասխանեց Թալեաթը: - Այդ ամենը մենք արդեն հաշվարկել ենք և գիտենք, որ դրանք հինգ միլիոն անգլիական ֆունտ ստեռլինգից ավելի չեն լինի: Մեզ դա ամենևին չի մտահոգում: Ես Ձեզ հրավիրեցի այստեղ՝ հայտնելու, որ հայերի հանդեպ մեր մշակած քաղաքականությունը վերջնականապես որոշված է, և ոչինչ չի կարող փոխել այն: Անատոլիայում մեզ հայեր պետք չեն: Նրանք կարող են ապրել անապատում, ուրիշ ոչ մի տեղ:

Ես նորից փորձեցի համոզել Թալեաթին, որ հայերի ոչնչացումը կործանարար է Թուրքիայի միջազգային վարկանիշի համար, և որ այս երկիրը երբեք չի թոթափի այդ խայտառակության հետևանքները:

- Դուք ահավոր սխալ եք գործում, - ասացի ես և երեք անգամ կրկնեցի այդ բառերը:

- Այո՛, հնարավոր է, որ սխալ ենք գործում,- պատասխանեց նա (Թալեաթը սեղմեց շրթունքները և տարուբերեց գլուխը), - բայց մենք երբեք չենք զղջում:

Հայերի մասին ես բազմաթիվ զրույցներ ունեցա Թալեաթի հետ, սակայն ինձ այդպես էլ չհաջողվեց նույնիսկ չնչին արդյունքի հասնել: Նա վերստին վերադառնում էր այն փաստարկներին, որոնք բերել էր մեր նախորդ զրույցների ժամանակ: Մշտապես պատրաստակամություն էր հայտնում հարգելու իմ ցանկացած խնդրանք՝ կապված ամերիկացիների կամ նույնիսկ ֆրանսիացիների ու անգլիացիների հետ, սակայն ինձ չէր հաջողվում որևէ զիջման հասնել հայերի հարցում: Կարծում եմ, որ նա անձնական խոր զգացմունքներ ուներ՝ այս հարցի հետ կապված, և որքան ավելանում էին հայերի տառապանքները, այնքան աճում էր Թալեաթի ատելությունը նրանց հանդեպ: Մի անգամ, երբ խոսում էինք մի հայի մասին, ես ասացի Թալեաթին, որ նա սխալվում է՝ այդ անձնավորությանը թուրքերի թշնամի համարելով, և որ իրականում նա վատ չի վերաբերվում թուրքերին:

- Ոչ մի հայ չի կարող մեր բարեկամը լինել կոտորածներից հետո,- պատասխանեց Թալեաթը:

Մի օր Թալեաթն ինձ դիմեց ապշեցուցիչ խնդրանքով, որ ես երբևէ չէի լսել: Նյու Յորքի «New York Life Insurance Company» և «Equitable Life of New York» ապահովագրական ընկերությունները տարիներ շարունակ բավական ծավալուն բիզնես էին անում հայերի հետ: Նրանց կյանքի ապահովագրման գումարները նույնպես վկայում էին այդ մարդկանց ժուժկալ ապրելակերպի մասին:

- Խնդրում եմ, - ասաց Թալեաթը, - փորձեք համոզել ամերիկյան

ապահովագրական ընկերություններին, որպեսզի իրենց հայազգի հաճախորդների ցուցակն ուղարկեն մեզ: Նրանք բոլորն արդեն մեռած են, իսկ ժառանգներ չունեն, որ ստանան այդ փողը: Դրամը, իհարկե, պետք է անցնի պետությանը. հիմա կառավարությունն է ժառանգորդը: Կանե՞ք դա:

Սա արդեն չափն անց էր, և ես ափերիցս դուրս եկա:

- Ինձանից նման ցուցակ չեք ստանա, - ասացի ես ու դուրս եկա:

Հայերի հետ կապված մեկ այլ միջադեպ կատաղեցրեց Թալեաթին: Սեպտեմբերի վերջին տիկին Մորգենթաուն մեկնեց Նահանգներ: Հայերի տառապանքները խորապես ազդել էին նրա առողջության վրա, և իրականում նա մեկնեց տուն, քանի որ չէր կարող այլևս մնալ այդ երկրում: Սակայն նա վճռական էր այս դժբախտ ժողովրդին օգնելու գործում մի վերջին անգամ իր մասնակցությունը բերելու: Ամերիկա ուղևորվելիս նա եղավ Բուլղարիայում, որտեղ նրան տեղեկացրին, որ այդ երկրի էլեոնոր թագուհին ուրախ կլիներ նրան հանդիպելու համար: Ըստ էության՝ պատճառը տիկին Մորգենթաուի բոլորին հայտնի ներգրավվածությունն էր բարեգործական աշխատանքներում, ինչը և առիթն էր այս հրավերի: էլեոնոր թագուհին խելացի կին էր. ապրում էր անշուք ու միայնակ՝ իր ժամանակի մեծ մասը նվիրելով Բուլղարիայում ապրող չքավորների կենսապայմանների բարելավմանը: Նա քաջատեղյակ էր Ամերիկայում տարվող հանրային աշխատանքների մասին և մի քանի տարի առաջ ծրագրել էր այցելել ԱՄՆ՝ տեղում հանրային տների գործունեությանը ծանոթանալու համար: Երբ տիկին Մորգենթաուն այցելում է թագուհուն, այնտեղ են լինում երկու ամերիկացի բուժքույրեր՝ Նյու Յորքի «Հենրի Սթրիթ» հաստատությունից: Նրանք բուլղարացի մի խումբ աղջիկների ծանոթացնում էին ամերիկյան «Կարմիր խաչի» գործունեությանը:

Կինս հատկապես ցանկանում էր այցելել թագուհուն, զրուցել որպես կինը կնոջ հետ և բարեխոսել հայերի համար: Այդ օրերին Բուլղարիայի՝ պատերազմի մեջ մտնելու հարցը հասել էր կրիտիկական կետի, և Թուրքիան պատրաստ էր զիջումների գնալու՝ Բուլղարիան իր կողքին որպես դաշնակից ունենալու համար: Սա նման խնդրանքով դիմելու լավ առիթ էր:

Թագուհին տիկին Մորգենթաուին ընդունել էր ոչ պաշտոնական պայմաններում: Մեկ ժամ կինս նրա հետ զրուցել էր հայերի մասին: Նրա ասածների մեծ մասը ուղղակի բացահայտում էր թագուհու համար: Եվրոպական մամուլում այդ թեմայով շատ քիչ նյութ էր հրապարակվել, սակայն էլեոնոր թագուհին այն կանանցից էր, ումից ջանում էին հնարավորինս երկար ժամանակ թաքցնել ճշմարտությունը: Տիկին Մորգեն-

թաուն նրան էր ներկայացրել հայ կանանց ու երեխաների հանդեպ ցուցաբերված վերաբերմունքի մասին բոլոր փաստերը և խնդրել բարեխոսել նրանց համար: Նա նույնիսկ կարծիք էր հայտնել, թե անուղղելի սխալ կլինի, եթե Բուլղարիան, որ նախկինում նույնպես նման դաժանությունների է ենթարկվել թուրքերի կողմից, այս պատերազմում դառնա Թուրքիայի դաշնակիցը: Էլեոնոր թագուհին չափազանց հուզվել էր: Նա տիկնոջս շնորհակալություն էր հայտնել ճշմարտությունը բացահայտելու համար և խոստացել, որ անմիջապես կքննի հարցը՝ պարզելու համար, թե ինչ կարելի է անել:

Մեկնելու պահին տիկին Մորգենթաուն նկատել էր, որ դռան մոտ կանգնած է դուքս Մեկլենբուրգը: Այդ օրերին դուքսը ժամանել էր Սոֆիա՝ նպատակ ունենալով ապահովել Բուլղարիայի մասնակցությունը պատերազմին: Թագուհին նրան ներկայացրել էր տիկին Մորգենթաուին: Նորին մեծությունը քաղաքավարի էր, սակայն բավական սառը և վիրավորված: Նրա ողջ կեցվածքը, հատկապես տիկին Մորգենթաուի վրա նետած հայացքները վկայում էին, որ նա լսել էր զրույցի մեծ մասը: Քանի որ ինքը հսկայական ջանքեր էր գործադրում պատերազմում Գերմանիայի կողմում Բուլղարիայի մասնակցությունն ապահովելու համար, զարմանալի չէ, որ նրան դուր չէր եկել տիկնոջս՝ Բուլղարիայի թագուհուն ուղղված կոչը ընդդեմ Թուրքիայի հետ Բուլղարիայի դաշինքի:

Էլեոնոր թագուհին անմիջապես քննել էր Հայկական հարցը: Արդյունքում Թուրքիայում Բուլղարիայի դեսպանորդը ցուցում էր ստացել դաժանությունների դեմ բողոք հայտնելու: Բողոքը որևէ արդյունք չտվեց, բայց արթնացրեց Թալեաթի կատաղությունը Ամերիկայի դեսպանի հանդեպ: Մի քանի օր անց, երբ ընթացիկ գործերով գնացի Բարձր Դուռ, Թալեաթին գտա նողկալի տրամադրության մեջ: Իմ հարցերին նա պատասխանում էր կոպիտ, միավանկ բառերով, և ես կռահեցի, որ դրա պատճառը տիկին Մորգենթաուի զրույցն էր Բուլղարիայի թագուհու հետ: Սակայն մի քանի օր անց նա կրկին բարձր տրամադրություն ուներ, քանի որ Բուլղարիան դարձավ Թուրքիայի դաշնակիցը:

Թալեաթի վերաբերմունքը հայերի հանդեպ կարելի է ամփոփել այն ամբարտավան արտահայտությամբ, որ նա արել էր ընկերական շրջանում. «Հայկական հարցը լուծելու համար ես երեք ամսում արեցի ավելին, քան Աբդուլ Համիդը՝ երեսուն տարում»:

ԳԼՈՒԽ XXVI

Էնվեր փաշան խոսում է հայերի մասին

Այդ ողջ ժամանակաընթացքում ես ջանում էի ճնշում գործադրել նաև Էնվերի վրա: Ինչպես արդեն նշել եմ, Պատերազմի նախարարն իր էությամբ տարբերվում էր Թալեաթից: Նա կարողանում էր թաքցնել իր զգացմունքները. սովորաբար հանգիստ էր, սառնասիրտ և ծայրաստիճան քաղաքավարի: Սկզբնական շրջանում հայերի մասին խոսելիս նա Թալեաթի նման դաժան չէր: Նա ժխտեց նախկինում տարածված ասեկոսեները՝ որպես արտառոց չափազանցություն և հայտարարեց, որ Վանի դեպքերը պարզապես պատերազմական գործողություններ էին, և փորձեց մեղմել իմ մտավախություններն այն մասին, թե հայերի համընդհանուր ոչնչացումն այլևս վճռված հարց է: Եվ սակայն այդ ողջ ընթացքում Էնվերը ջանում էր մոլորեցնել ինձ, մինչդեռ այդ ամենի մասին նա բացահայտ ասել էր այլ անձանց, և ես տեղյակ էի այդ մասին: Մասնավորապես, նա չէր փորձել թաքցնել իրական վիճակը դոկտոր Լեփսիուսից, ով ներկայացնում էր գերմանացի միսիոներների շահերը: Դոկտոր Լեփսիուսն ազնվասիրտ քրիստոնյա ջենտլմեն էր: Նա 1895 թվականին ականատես էր եղել հայերի կոտորածին և խոշոր գումարներ էր հավաքել ջարդերի հետևանքով որբացած հայ երեխաների համար որբանոցներ կառուցելու նպատակով: 1915 թվականին նա վերադարձել էր՝ գերմանական միսիոներական կազմակերպությունների անունից Հայկական հարցն ուսումնասիրելու համար: Լեփսիուսը թույլտվություն խնդրեց ծանոթանալու ամերիկացի հյուպատոսների զեկույցներին, և ես նրան չմերժեցի: Այդ փաստաթղթերը, ինչպես նաև այլ աղբյուրների վկայությունները, հիմնականում՝ Թուրքիայի ներքին շրջաններում գործող գերմանացի միսիոներների զեկույցները, նրա համար որևէ կասկած չթողեցին թուրքերի վարած իրական քաղաքականության մասին: Նա ասաց, որ որպես գերմանացի նվաստացած է զգում իրեն, որ թուրքերը վճռել են բնաջնջել երկրի քրիստոնյա հպատակներին, մինչդեռ Գերմանիան, որ իրեն քրիստոնյա երկիր է համարում, ոչ մի ջանք չի գործադրում կոտորածները կանխելու համար: Էնվերը դոկտոր Լեփսիուսից չէր թաքցրել օսմանյան կառավարության նպատակը: Լեփսիուսը պարզապես ցնցված էր նրա անկեղծությունից, մանավանդ որ Էնվերը խոստովանել էր, որ իրենք վերջապես հայերից ազատվելու հնարավորություն են ստացել և մտադիր են օգտվել այդ հնարավորությունից:

Հիմա արդեն Էնվերն ինձ հետ ավելի անկեղծ էր, քանի որ իմ տրամա-

դրության տակ եղած հավաստի զեկույցներն անիմաստ էին դարձնում ճշմարտությունը թաքցնելու նրա փորձերը: Այս ամենի շուրջ ես երկար ու անկեղծ զրույցներ ունեցա էնվերի հետ: Առանձնապես հստակ եմ մտաբերում դրանցից մեկը. ես էնվերին տեղեկացրի, որ մտադիր եմ մանրամասն հետաքննել այդ հարցը, և նա բավական երկար ժամանակ հատկացրեց ողջ իրավիճակը քննարկելուն:

- Հայերին պատշաճ կերպով նախազգուշացրել էինք, - սկսեց էնվերը, - թե ինչ կլինի իրենց հետ, եթե միանան մեր թշնամիներին: Երեք ամիս առաջ ես կանչեցի հայերի պատրիարքին և ասացի՝ եթե հայերը փորձեն հեղափոխություն սկսել կամ աջակցել ռուսներին, ես անկարող կլինեմ փրկել նրանց գալիք արհավիրքներից: Իմ զգուշացումը որևէ ազդեցություն չունեցավ. հայերը փորձեցին հեղափոխություն սկսել և աջակցում էին ռուսներին: Ձեզ հայտնի է, թե ինչ կատարվեց Վանում: Նրանք վերահսկողության տակ առան քաղաքը, կառավարական շենքերի վրա ռումբեր նետեցին և մեծ թվով մահմեդականների սպանեցին: Մեզ հայտնի է, որ նրանք խռովություններ էին նախապատրաստում նաև այլ վայրերում: Դուք պիտի հասկանաք, որ այժմ Դարդանելում մենք կռվում ենք կյանքի համար՝ զոհաբերելով հազարավոր մարդկանց: Եվ մինչ մենք ներքաշված ենք այդ պայքարի մեջ, չենք կարող թույլ տալ, որ մեր սեփական քաղաքացիները թիկունքից հարվածեն մեզ: Մենք պարտավոր ենք կանխել դա, ինչ գնով էլ լինի: Ես ոչինչ չունեմ հայերի դեմ՝ որպես ժողովրդի, ազնվությամբ եմ ասում: Հիանում եմ նրանց խելքով ու աշխատասիրությամբ և իսկապես երջանիկ կլինեի տեսնել նրանց՝ որպես մեր քաղաքացիներ: Սակայն եթե նրանք պետք է միանան մեր թշնամիներին, ինչպես արեցին Վանի շրջանում, ուրեմն նրանց պետք է ոչնչացնել: Ես արեցի հնարավոր ամեն բան, որպեսզի անարդարություն չլինի: Բառացիորեն վերջերս հրամայեցի, որ բռնագաղթած հայերից երեքը տուն ուղարկվեն, քանի որ պարզեցի, որ նրանք անմեղ են: Կարեկցելով ու քաջալերելով հայերին՝ Ռուսաստանը, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան ու Ամերիկան նրանց համար բարի գործ չեն անում: Ես գիտեմ, թե նման խրախուսանքն ինչ է նշանակում այն մարդկանց համար, ովքեր հակված են հեղափոխության: Երբ մեր «Միություն և առաջադիմություն» կուսակցությունն ընդվզեց Աբդուլ Համիդի դեմ, ողջ աշխարհը խրախուսում էր մեզ: Եվ դա մեզ շատ օգնեց, նշանակալի դեր ունեցավ մեր հաջողության համար: Նույնկերպ այն հիմա կարող է օգնել հայերին իրագործելու իրենց հեղափոխական ծրագրերը: Ես վստահ եմ՝ եթե օտարերկրյա պետությունները նրանց չխրախուսեին, նրանք կհրաժարվեին ներկայիս կառավարությանը դիմակայելու իրենց ջանքերից և

կդառնային օրինապաշտ քաղաքացիներ: Հիմա մենք լիովին վերահսկում ենք այս երկիրը և առանց դժվարության կարող ենք վրեժ լուծել բոլոր տեսակի հեղափոխականներից:

- Ի վերջո, եթե նույնիսկ ընդունենք, որ Ձեր ասածները ճշմարիտ են, ինչո՞ւ չպատժել մեղավորներին: Ինչո՞ւ զոհաբերել մի ողջ ժողովուրդ որոշ անհատների հնարավոր հանցանքների համար, - հարցրի ես:

- Ձեր տեսակետն ընդունելի կլիներ խաղաղության պայմաններում, - պատասխանեց Էնվերը: - Այդ պարագայում հնարավոր կլիներ կիրառել ավելի մեղմ մեթոդներ՝ հայերին ու հույներին հանգստացնելու համար, սակայն պատերազմական պայմաններում մենք չենք կարող հետաքննել ու բանակցել. մենք պետք է գործենք արագ և վճռական: Ես նաև կարծում եմ, որ հայերը սխալ են գործում՝ ապավինելով ռուսներին: Ռուսները կցանկանային նրանց ավելի շուտ մեռած տեսնել, քան կենդանի: Նրանք նույնքան վտանգավոր են ռուսների, որքան և մեզ համար: Եթե նրանք անկախ կառավարություն հաստատեն Թուրքիայում, ապա Ռուսաստանի հայերը կփորձեն անկախ կառավարություն կազմել այնտեղ: Հայերը հանցավոր են նաև ջարդեր կազմակերպելու հարցում. ողջ Վանի շրջանում միայն երեսուն հազար թուրք է փրկվել, մյուսները սպանվել են հայերի ու քրդերի կողմից: Կովկասում ես փորձում էի պաշտպանել խաղաղ բնակչությանը: Հրամայեցի, որ նրանց որևէ վնաս չհասցվի, սակայն համոզվեցի, որ իրավիճակը դուրս է գալիս իմ վերահսկողությունից: Կոստանդնուպոլսում բնակվում է շուրջ յոթանասուն հազար հայ. նրանց ձեռք չեն տալու, բացի դաշնակցականներից և նրանցից, ովքեր դավեր են նյութում թուրքերի դեմ: Այդուհանդերձ, կարծում եմ, կարող եք չմտահոգվել. հայերի ջարդեր այլևս չեն լինի:

Էնվերի վերջին բառերը ես լուրջ չընդունեցի: Հենց այն պահին, երբ նա ճամարտակում էր, ջարդեր ու տեղահանություններ էին կատարվում հայաբնակ բոլոր գավառներում և առանց դադարի շարունակվեցին մի քանի ամիս:

Հիմա, երբ իրավիճակի վերաբերյալ զեկույցները հասան Միացյալ Նահանգներ, ողջ սրությամբ դրվեց հայերին օգնություն տրամադրելու հարցը: Հուլիսի երկրորդ կեսին ինձ տեղեկացրին, որ Զեյթունի ու Սուլթանիեի շուրջ հինգ հազար հայեր զրկվել են որևէ սնունդից: Այդ մասին ես խոսեցի Էնվերի հետ, և նա խոստացավ, որ նրանց պատշաճ սնունդ կուղարկվի: Նրան դուր չեկավ իմ այն առաջարկը, թե ամերիկացի ներկայացուցիչներ թող մեկնեն երկրի այդ մասերը, օգնեն ու խնամեն բռնագաղթյալներին: «Եթե թեկուզ մեկ ամերիկացի անի այդ քայլը, - ասաց Էնվերը, - կնշանակի խրախուսել բոլոր հայերին և ավելի սրել իրավի-

ճակը: Թուրքիայում ապրող քսանութ միլիոն բնակիչներից մեկ միլիոնը հայ է, և մենք չենք հանդուրժի, որ այդ մեկ միլիոնը պղտորի մյուսների անդորրը: Հայերի ամենամեծ խնդիրն այն է, որ նրանք անջատողական են: Նրանք վճռական են սեփական միապետությունն ունենալու հարցում. ռուսները նրանց հիմարացրել են: Իրենց հույսը կապելով ռուսների հետ՝ հայերն օգնում են նրանց այս պատերազմում: Մենք նրանց կստիպենք, որ իրենց պահեն թուրքերի նման: Դուք պետք է հիշեք՝ երբ մենք սկսեցինք հեղափոխությունը Թուրքիայում, ընդամենը երկու հարյուր հոգի էինք: Մեզ հաջողվեց մոլորեցնել սուլթանին և ժողովրդին. նրանք կարծում էին, թե մենք շատ ավելի շատ ենք ու հզոր: Իրականում մենք հաղթեցինք սոսկ մեր հանդգնության շնորհիվ և այդպես հաստատեցինք Սահմանադրություն: Հեղափոխություն կատարելու սեփական փորձը ստիպում է մեզ վախենալ հայերից: Եթե երկու հարյուր թուրք կարող էր տապալել կառավարությունը, ապա մի քանի հարյուր խելացի, կրթված հայեր կարող են անել նույնը: Ուստի մենք մշակեցինք նրանց երկրով մեկ ցրելու ծրագիրը, որպեսզի չկարողանան վնասել մեզ: Ես Ձեզ արդեն ասացի, որ զգուշացրել էի հայոց պատրիարքին՝ եթե հայերը հարձակվեն մեզ վրա, երբ մենք պատերազմի մեջ ենք, ապա մենք՝ թուրքերս, պատասխան հարված կհասցնենք, և դա կլինի անխնա հարված:

Էնվերին մշտապես կատաղեցնում էր ամերիկացի միսիոներների կամ հայերի մյուս բարեկամների կողմից վերջիններիս օգնելու կամ նրանց մասին հոգ տանելու որևէ առաջարկ: «Նրանք չափից ավելի են կարեկցում հայերին», - կրկնում էր նա նորից ու նորից:

Ես առաջարկեցի, որ մի քանի ամերիկացի մեկնի Տարսոն ու Մարզվան:

- Վախենում եմ, որ եթե նրանք գնան, այդ քաղաքների բնակիչները կբարկանան և խժդժություններ կսկսեն, ինչը կարող է միջադեպի առիթ դառնալ: Հայերի համար ավելի լավ կլինի, եթե ամերիկացի միսիոներներն իրենցից հեռու մնան:

- Բայց դուք կործանում եք երկրի տնտեսությունը, - ասացի ես մի անգամ՝ բերելով այն նույն փաստարկը, որ ներկայացրել էի Թալեաթին: Նա պատասխանեց գրեթե նույն բառերով՝ ապացուցելով, որ այդ թեման իշխանություններին բացարձակապես չի հետաքրքրում:

- Այս պահին տնտեսական նկատառումներն էական չեն. ամենակարևորը հաղթելն է: Դա է մեր միակ մտահոգությունը: Եթե մենք հաղթենք, ամեն բան լավ կլինի, իսկ եթե պարտվենք, միևնույն է, ամեն ինչ վատ կլինի: Մենք հուսահատ վիճակում ենք, ես դա ընդունում եմ, և

կռվում ենք որպես հուսահատներ: Մենք թույլ չենք տա, որ հայերը թիկունքից հարվածեն մեզ:

Սովամահության մատնված հայերին օգնություն հասցնելու հարցն ամեն շաբաթ է՛լ ավելի օրհասական էր դառնում, սակայն էնվերը շարունակում էր պնդել, որ ամերիկացիները պիտի հեռու մնան հայաբնակ գավառներից:

- Ինչպե՞ս կարող ենք հաց հասցնել հայերին, երբ մենք չենք կարող ապահովել հացով մեր սեփական ժողովրդին, - հայտարարեց էնվերը: - Ես գիտեմ, որ նրանք տառապում են, և շատ հավանական է, որ չկարողանան հաց ստանալ գալիք ձմեռվա ընթացքում: Բայց մենք ինքներս էլ մեծ դժվարությամբ ենք կարողանում ալյուր ու հագուստ գտնել այստեղ՝ Կոստանդնուպոլսում:

Ես ասացի, որ ունեմ անհրաժեշտ գումար, և որ ամերիկացի միսիոներները պատրաստ են մեկնելու և օգտագործելու այն՝ բռնագաղթյալների կարիքները հոգալու համար:

- Մենք չենք ցանկանում, որ ամերիկացիները կերակրեն հայերին՝, - կտրուկ պատասխանեց նա: - Դա նրանց ավելի կվնասի: Ես արդեն ասացի, որ նրանք հավատում են, որ բարեկամներ ունեն այլ երկրներում, և դա իր հերթին դրդում է նրանց ընդդիմանալու կառավարությանը, ինչի հետևանքով նոր դժբախտություններ են բերում իրենց գլխին: Եթե դուք՝ ամերիկացիներդ, սկսեք ուտելիք ու հագուստ բաժանել նրանց, հայերը կկարծեն, թե ազդեցիկ բարեկամներ ունեն Միացյալ Նահանգներում: Դա նրանց կմղի նոր ապստամբության, և այդ դեպքում մենք նրանց է՛լ ավելի խիստ կպատժենք: Եթե դուք այն գումարը, որ ստացել եք, մեզ՝ թուրքերիս տաք, մենք կհետևենք, որ այն ի նպաստ հայերի օգտագործվի:

Այդ առաջարկն անելիս էնվերը հոնքն անգամ չշարժեց, այդպես եղավ նաև այլ առիթներով: Այն պահին, երբ էնվերն առաջարկեց օգնության այդ կարգը, թուրք ժանդարմներն ու պաշտոնյաները ոչ միայն կողոպտում էին հայերի տները, այլև տանում նրանց սննդի պաշարներն ու փողը, պոկում կանանց վրայից նրանց վերջին հագուստը և մտրակներով զարկում նրանց մերկ մարմիններին՝ առաջ քշելով անապատի տապի միջով: Եվ հիմա Պատերազմի նախարարն առաջարկում է, որ մենք ամերիկյան դրամը տանք այն նույն «օրենքի պահապաններին»՝ իրենց զոհերի միջև բաժանելու համար: Ես, սակայն, պետք է զգուշավոր լինեի:

- Եթե Դուք կամ կառավարության այլ ղեկավարներ անձամբ պատասխանատու լինեք գումարը բաժանելու հարցում, մենք, անշուշտ, ամենայն սիրով այն ձեզ կվստահենք, - ասացի ես: - Սակայն դուք, բնա-

կանաբար, չեք ակնկալում,.որ մենք այդ դրամը կտանք այն մարդկանց, ովքեր սպանում են հայերին ու բռնության ենթարկում նրանց կանանց:

Սակայն Էնվերը կրկին վերադարձավ իր հիմնական մտքին.

- Հայերը չպետք է կարծեն, որ բարեկամներ ունեն Ամերիկայում, - ասաց նա, - դա կործանարար կլինի նրանց համար: Ավելի լավ է սովամահ լինեն, և սա ասելիս ես, իրոք, մտածում եմ հայերի բարօրության մասին. եթե նրանք համոզվեն, որ այլ երկրներում բարեկամներ չունեն, կհանդարտվեն, Թուրքիան կընդունեն որպես իրենց միակ հանգրվանը և կդառնան խաղաղ քաղաքացիներ: Մշտապես կարեկցանք ցուցաբերելով՝ ձեր երկիրը բարի գործ չի անում նրանց համար. դուք նրանց ավելի մեծ վտանգի եք ենթարկում:

Այլ կերպ ասած՝ ստացվում էր, որ որքան ամերիկացիներն ավելի շատ փող ուղարկեն հայերին սնունդ հասցնելու նպատակով, թուրքերն այնքան ավելի շատ հայեր կսպանեն: Էնվերի տրամաբանությունը պարզապես խելագարեցնող էր: Այդուամենայնիվ, վերջում նա զիջեց և ինձ թույլ տվեց օգնություն հասցնել տառապյալներին մի քանի միսիոների միջոցով: Մեր քննարկումների ընթացքում նա երեսպաշտորեն երդվում էր, թե ինքն այդ թշվառ ժողովրդի բարեկամն է, և որ նրա մեթոդների դաժանությունն իրականում քողարկված օրհնություն է: Քանի որ Էնվերը հաճախ էր հայտարարում, որ իր ցանկությունն է արդար լինել հայերի հանդեպ, և դրանով բացարձակապես տարբերվում էր Թալեաթից, ով բացահայտ հայտարարում էր հայերին բռնագաղթեցնելու իր վճռականության մասին, ես պատրաստեցի մի լավ մշակված ծրագիր՝ հայերի վիճակը թեթևացնելու համար: Ասացի՝ եթե նա ցանկանում է արդարամիտ լինել, ապա պետք է պաշտպանի անմեղ գաղթականներին և հնարավորինս մեղմացնի նրանց տառապանքները: Այդ նպատակով հարկ կլինի կազմել հայերից բաղկացած հատուկ կոմիտե՝ նրան օգնելու համար և ուղարկել ազդեցիկ մի հայի, ինչպիսին, օրինակ, Օսկան էֆենդին է՝ Փոստի և հեռագրության նախկին նախարարը՝ վիճակն ուսումնասիրելու, առաջարկներ ներկայացնելու, առկա դժվարությունները մեղմելու համար: Առաջարկներից և ոչ մեկը դուր չեկավ Էնվերին: Առաջինի վերաբերյալ նա ասաց, որ իր գործընկերները դա չեն հասկանա: Ինչ վերաբերում է Օսկանին, ապա ինքը հիանում էր նրա աշխատանքով, երբ Օսկանը կառավարության անդամ էր, և քաջալերում էր նրա սուր քննադատությունն անբարեխիղճ պաշտոնյաների հասցեին, սակայն վստահել նրան չի կարող, քանի որ Օսկանը Հայ դաշնակցական կազմակերպության անդամ է:

Մեկ այլ զրույցի ընթացքում ես ակնարկեցի, թե գուցե կենտրոնական

կառավարությունը պատասխանատո՞ւ չէ ջարդերի համար: Ես մտածեցի, որ դա նրան դուր կգա:

- Ես վստահ եմ, որ Կաբինետը երբեք չէր հրամայի կատարել նման դաժանագույն արարքներ, - ասացի ես: - Դուք, Թալեաթը և Կոմիտեի մյուս անդամները հազիվ թե կարող եք պատասխանատու համարվել այդ ամենի համար: Անկասկած, ձեր ստորադասները չափազանցել են ձեր հրամանները: Ես հասկանում եմ, որ միշտ չէ, որ հաջողվում է վերահսկել ստորադասներին:

Էնվերն անմիջապես լարվեց: Ես տեսա, որ իմ ասածները հանգիստ ու բարեկամական զրույցի հանգեցնելու փոխարեն խորապես վիրավորեցին նրան: Ես ակնարկեցի, որ Թուրքիայում կարող են կատարվել բաներ, որոնց համար ինքն ու իր բարեկամները պատասխանատու չեն:

- Դուք չարաչար սխալվում եք, - ասաց նա, - այս երկիրն ամբողջովին մեր վերահսկողության տակ է: Ես ոչ մի ցանկություն չունեմ մեղքը բարդելու ստորադասների վրա և միանգամայն պատրաստակամ եմ անձնական պատասխանատվություն ստանձնել այն ամենի համար, ինչ կատարվում է: Աքսորները հրամայված են Կաբինետի կողմից: Ես վստահ եմ, որ մենք միանգամայն արդարացի ենք այս հարցում՝ հաշվի առնելով հայերի թշնամանքն օսմանյան կառավարության հանդեպ: Մենք ենք Թուրքիայի իրական կառավարողները, և ոչ մի ստորադաս չէր համարձակվի այդպես վարվել առանց մեր հրամանի:

Էնվերը փորձում էր մեղմացնել իր պահվածքի ողջ բարբարոսությունը՝ առանձին դեպքերում ցուցաբերելով գթասրտություն: Համընդհանուր կոտորածների ծրագրի դեմն առնելու իմ փորձերում ոչ մի հաջողության չհասա. ինձ հաջողվեց, սակայն, մի քանի հայի փրկել մահից: Զմյուռնիայում գործող ԱՄՆ հյուպատոսից տեղեկացա, որ յոթ հայ դատապարտվել է կախաղանի: Այս մարդկանց մեղադրում էին 1909-ին տեղի ունեցած ինչ-որ անորոշ քաղաքական հանցանքի համար: Սակայն ո՛չ Ռահմի բեյը՝ Զմյուռնիայի գեներալ նահանգապետը, ո՛չ էլ զինվորական հրամանատարը չէին հավատում այդ մեղադրանքներին: Երբ նրանց մահապատժի հրամանը հասավ Զմյուռնիա, այդ պաշտոնյաները հեռագիր ուղարկեցին Կոստանդնուպոլիս առ այն, որ, համաձայն օսմանյան օրենքի, դատապարտվածներն իրավունք ունեն ներման հայցով դիմելու սուլթանին: Ստացված պատասխանը ճշգրիտ նկարագրում է հայերի իրավունքներն այդ տարիներին. «Տեխնիկական առումով դուք իրավացի եք. նախ կախեք նրանց, հետո ուղարկեք ներման խնդրագիրը»:

Այդ մարդկանց հարցով ես այցելեցի Էնվերին Բայրամին. սա մահմեդական ամենանշանավոր կրոնական տոնն է, որին հաջորդում է Ռամա-

դանը՝ պաս պահելու ամիսը: Բայրամը մի հատկանիշով նմանվում է Ծննդյան տոներին. այդ օրը մահմեդականները փոքրիկ նվերներ են փոխանակում, սովորաբար՝ քաղցրավենիք:

Սովորական ողջույններ փոխանակելուց հետո ես ասացի Էնվերին.

- Այսօր Բայրամ է, իսկ Դուք ինձ դեռ ոչ մի նվեր չեք արել:

Էնվերը ծիծաղեց:

- Ի՞նչ եք ուզում: Մի տուփ քաղցրավենի՞ք...

- Օ՛հ ոչ, - պատասխանեցի ես, - ես այդքան մանրախնդիր չեմ: Ուզում եմ, որ ներում շնորհեք այն յոթ հայերին, որոնց ռազմական դատարանը դատապարտել է Զմյուռնիայում:

Ասածս զվարճացրեց Էնվերին:

- Ներում խնդրելու ուշագրավ ձև է, - ասաց նա, - սակայն եթե Դուք հարցն այդպես եք դնում, ես Ձեզ մերժել չեմ կարող:

Նա անմիջապես կանչեց օգնականին՝ կարգադրելով հեռագրել Զմյուռնիա, որ այդ մարդկանց ազատ արձակեն:

Ահա այսպես, պատահականության բերումով, Թուրքիայում «արդարադատություն էր իրականացվում», և որոշումներ էին ընդունվում մարդկային կյանքերի վերաբերյալ: Դժվար է ավելի պարզ օրինակ բերել այն կատարյալ քամահրանքի, որ թուրքերն ունեն մարդկային կյանքի հանդեպ, և այն չնչին դերի, որ նրանց վարքում խաղում են սկզբունքները: Էնվերն ազատեց այդ մարդկանց՝ ոչ թե որևէ աննշան հետաքրքրություն ունենալով նրանց հանդեպ, այլ որպես ինձ մատուցված անձնական լավություն և հիմնականում այն անսպասելի ձևի համար, որով ես ներկայացրի խնդրանքս: Հայերին վերաբերող մեր զրույցներում Պատերազմի նախարարը ողջ թեմային վերաբերվում էր որպես սովորական մի երևույթի. մի ողջ ժողովրդի ճակատագիրը նա կարող էր քննարկել ի միջի այլոց և նույն անտարբերությամբ խոսել երեխաների սպանության մասին, ինչպես եղանակի մասին:

Մի օր Էնվերն ինձ խնդրեց իր հետ գնալ Բելգրադի անտառ: Քանի որ նրա վրա ներազդելու որևէ առիթ ես բաց չէի թողնում, ընդունեցի հրավերը: Մենք մեքենայով գնացինք Բույուկդերե, որտեղ մեզ դիմավորեցին չորս ծիավոր ծառաներ: Գեղատեսիլ անտառով մեր զբոսանքի ժամանակ Էնվերը դարձավ շատ ավելի զրուցասեր, քան երբևէ: Նա սիրով խոսում էր իր ծնողների մասին. «Երբ նրանք ամուսնացան,- ասաց Էնվերը, - հայրս տասնվեց տարեկան էր, իսկ մայրս՝ ընդամենը տասնմեկ»: Էնվերը ծնվել էր, երբ մայրը տասնհինգ տարեկան էր եղել: Խոսելով իր կնոջ՝ կայսեր դստեր մասին, նա բացահայտեց իր էության շատ ավելի զգայուն գծերը, քան ես երբևէ նկատել էի: Նա խոսեց այն պատվի մասին, որ կինը

բերեց իր տուն: Ափսոսանքով ասաց, որ բարեպաշտության վերաբերյալ մահմեդական պատկերացումն արգելում է կնոջը մասնակցել հասարակական կյանքին, սակայն ցանկություն հայտնեց, որ իր կինը և տիկին Մորգենթաուն հանդիպեն: Այդ շրջանում նա մի նոր, գեղեցիկ պալատ էր կահավորում Բոսֆորի ափին: «Երբ աշխատանքներն ավարտվեն, - ասաց նա, - արքայադուստրը Ձեր կնոջը նախաճաշի կհրավիրի»: Հենց այդ պահին մենք անցնում էինք մեծահարուստ մի հայի՝ պատգամավոր Աբրահամ փաշայի տան ու այգիների մոտով: Այդ մարդը սուլթան Աբդուլ Ազիզի մտերիմ բարեկամներից էր, և քանի որ Թուրքիայում տղամարդը ժառանգում է ոչ միայն իր հոր ունեցվածքը, այլև հոր ընկերներին, Թուրքիայի թագաժառանգը՝ Աբդուլ Ազիզի որդին, ամեն շաբաթ այցելում էր պատվարժան պատգամավորին: Երբ անցնում էինք զբոսայգով, Էնվերը զայրույթով նկատեց, որ անտառապահները կտրում են ծառերը, ու կանգնեցրեց նրանց: Երբ հետո իմացա, որ Պատերազմի նախարարը գնել է զբոսայգին, արդեն հասկացա նրա զայրույթի պատճառը: Քանի որ Աբրահամ փաշան ազգությամբ հայ էր, դա ինձ հնարավորություն տվեց վերաբացելու թեման:

Ես խոսեցի նրա հետ այն աննկարագրելի կտտանքների մասին, որոնց ենթարկվում էին հայ կանայք:

- Դուք ասացիք, որ ցանկանում եք պաշտպանել կանանց ու երեխաներին, - ասացի ես, - սակայն ես գիտեմ, որ Ձեր հրամանները չեն կատարվում:

- Այդ պատմությունները չեն կարող ճշմարիտ լինել,- ասաց Էնվերը, - ես չեմ պատկերացնում, որ թուրք զինվորը վատ վերաբերվի հղի կնոջը:

Եթե Էնվերը կարդար այն մանրամասն զեկույցները, որոնք ԱՄՆ դեսպանության արխիվներում էին, կփոխեր իր կարծիքը:

Կրկին անցնելով այլ թեմայի՝ նա ինձ հարցրեց ծիուս թամբի մասին, որը հայտնի «Գեներալ Մաքքլելլան» մակնիշի էր: Էնվերը փորձեց իմ ձիու թամբը և այնքան հավանեց, որ հետո վերցրեց այն, հրամայեց իր համար պատվիրել ճիշտ այդպիսին, ներառյալ անկյունում գրված համարը և դարձրեց այն իր ռազմական միավորումներից մեկի թամբերի մշտական տեսակը: Նա ինձ պատմեց երկաթուղու մասին, որ նա կառուցում էր Պաղեստինում, ընդգծեց, թե որքան լավ է աշխատում Կաբինետը, և նշեց, որ Թուրքիայում անշարժ գույքի շահավետ առքուվաճառքի հնարավորություններ կան: Նա նույնիսկ առաջարկեց, որ մենք միավորվենք հողի առքուվաճառքի գործում, քանի որ հողի գինը հաստատ բարձրանալու է: Սակայն ես համառորեն վերադառնում էի հայերի թեմային: Ինչպես և նախկինում, ոչնչի չհասա:

- Մենք նրանց թույլ չենք տա հավաքվել այն վայրերում, որտեղ նրանք կարող են դավեր նյութել և օգնել մեր թշնամիներին: Մենք նրանց նոր բնակավայրեր կուղարկենք, - ասում էր նա:

Էնվերի կարծիքով, մեր զբոսանքն այնքան հաճելի էր, որ մի քանի օր անց մենք նորից գնացինք զբոսանքի՝ այս անգամ մեզ հետ տանելով Թալեաթին և դոկտոր Գեյթսին՝ «Ռոբերտ քոլեջի» նախագահին: Էնվերը և ես ընթանում էինք առջևից, մեր ուղեկիցները հետևում էին մեզ: Թուրք պաշտոնյաներն արտառոց խանդով են վերաբերվում իրենց արտոնություններին: Քանի որ Պատերազմի նախարարը Կաբինետի ավագ անդամ է, Էնվերը պնդեց, որ մեր և մյուսների միջև զգալի հեռավորություն պահպանվի: Դա ինչ-որ չափով զվարճացրեց ինձ, քանի որ ես գիտեի՝ Թալեաթն ավելի զորեղ քաղաքական գործիչ է: Վերջինս, սակայն, ընդունեց այդ խտրականությունը և միայն մեկ անգամ իր ծիուն թույլ տվեց առաջ անցնել Էնվերից ու ինձնից: Պարկեշտության այդ խախտման կապակցությամբ Էնվերն արտահայտեց իր դժգոհությունը, իսկ Թալեաթը կանգ առավ, քաշեց ձիու սանձերը և խոնարհաբար տեղ զբաղեցրեց մեր թիկունքում:

- Պարզապես ես դոկտոր Գեյթսին ցուցադրում էի ձիուս վարգը, - մեղավոր ձայնով ասաց նա:

Ինձ, սակայն, պաշտոնական էթիկետի նման նրբերանգներից առավել այլ՝ ավելի կարևոր հարցեր էին հուզում. ես մտադիր էի դարձյալ խոսել հայերի մասին, սակայն ինձ նորից չհաջողվեց որևէ արդյունքի հասնել: Քննարկման համար Էնվերը շատ ավելի ուշագրավ թեմաներ գտավ. սկսեց խոսել իր ձիերի մասին, և մեկ այլ միջադեպ վերստին բացահայտեց թուրքական մտածողության փոփոխականությունը, այն դյուրինությունը, որով թուրքերը հրեշավոր դաժանության գործողություններից անցնում են բարության եզակի դրսևորումների: Էնվերն ասաց, որ շուտով ձիարշավ է անցկացվելու, և ափսոսանք հայտնեց, որ ձիավարժ չունի:

- Եթե ես Ձեզ համար անգլիացի ձիավարժ գտնեմ, պատրա՞ստ եք գործարքի, - հարցրի ես: - Նա ռազմագերի է. եթե հաղթի, ազատ կազատե՞ք նրան:

- Համաձայն եմ, - պատասխանեց Էնվերը:

Այդ մարդը, ում անունը Ֆիլդս էր, իսկապես մասնակցեց ձիարշավին որպես Էնվերի ջոկեյ և գրավեց երրորդ տեղը: Պարոն Ֆիլիպի բառերով ասած՝ ինքը ձիով սուրաց դեպի իր ազատությունը: Քանի որ նա առաջին տեղը չէր գրավել, Պատերազմի նախարարը, համաձայն պայմանավորվածության, պարտավոր չէր նրան ազատ արձակել, սակայն Էնվերն

այնուհանդերձ նրան թույլ տվեց վերադառնալ Անգլիա:

Այդ նույն զբոսանքի ժամանակ էնվերն ինձ ցուցադրեց դիպուկ կրակելու իր վարպետությունը:

Զբոսանքի ընթացքում ես հանկարծ կրակոցի ձայն լսեցի. էնվերի օգնականն էր, որ վարժվում էր մոտակա ինչ-որ թիրախի վրա: Էնվերն իսկույն իջավ ձիուց, հանեց իր ատրճանակը և ձեռքն ուղիղ առաջ մեկնած՝ նշան բռնեց:

- Տեսնո՞ւմ եք ծառի այն ճյուղը, - հարցրեց նա ինձ (այն մոտ երեսուն ոտնաչափ հեռու էր):

Ես գլխով արեցի, էնվերը կրակեց, և ճյուղը գետնին ընկավ:

Այն արագությունը, որով էնվերը դուրս քաշեց զենքը գրպանից, նշան բռնեց ու կրակեց, ինձ միանգամայն համոզիչ բացատրություն տվեց այն ազդեցության մասին, որ նա ուներ Թուրքիան կառավարող հրոսակախմբում: Բազմաթիվ պատմություններ էին պտտվում, որ իր կարիերայի կրիտիկական պահերին էնվերը չէր հապաղում կիրառել համոզելու այս մեթոդը: Ինձ հայտնի չէ, թե որքանով էին հավաստի այդ պատմությունները, սակայն դիպուկ նշանառության նրա արտակարգ ունակության մասին կարող եմ հավաստել:

Թալեաթը նույնպես սկսեց զվարճանալ նույն ձևով, հետո երկու պաշտոնյաները դիպուկ կրակելու մրցակցություն սկսեցին ուրախ ու անհոգ՝ հիշեցնելով պատժից ազատված երկու դպրոցականի:

- Ձեր այցեքարտերից վերցրե՞լ եք Ձեզ հետ, - հարցրեց էնվերը: Նա խնդրեց, որ ես այն ամրացնեմ ծառի վրա, այնուհետև մոտ հիսուն ոտնաչափ հետ գնաց:

Առաջինը կրակեց էնվերը. ձեռքն ամուր էր, աչքը՝ ուղիղ նշանակետին: Գնդակը դիպավ քարտի ճիշտ մեջտեղին: Այդ հաջողությունը նյարդայնացրեց Թալեաթին. նա նշան առավ, սակայն նրա կոպիտ ձեռքն ու դաստակը թեթևակի դողում էին. Թալեաթն իր ավելի երիտասարդ գործընկերոջ նման ատլետիկ, ճկուն ու ձիգ չէր: Թալեաթի կրակոցներից մի քանիսը դիպան քարտի եզրերին, սակայն նրան չհաջողվեց կրկնել էնվերի հաջողությունը:

- Եթե այցեքարտի փոխարեն դիմացս մարդ լիներ, - ասաց հաղթանդամ թուրքը՝ նորից հեծնելով ձին, - ես նրան մի քանի անգամ արդեն սպանած կլինեի:

Այդպես ավարտվեցին իմ փորձերը ժամանակի ամենահզոր երկու թուրքերին հետաքրքրելու իրենց կայսրության ամենաարժանավոր ժողովրդի ճակատագրով:

Ինչպես արդեն նշել եմ, մեծ վեզիր Սաիդ Հալիմն ազդեցիկ անձնա-

վորություն չէր: Կայսրությունում նրա պաշտոնը անունով էր ամենակարևորը, սակայն իրականում մեծ վեզիրը ձևական դերակատարություն ուներ. նրան ղեկավարում էին Թալեաթն ու Էնվերը ճիշտ այնպես, ինչպես ղեկավարում էին սուլթանին: Արարողակարգի համաձայն՝ դեսպանները պիտի վարեին բանակցությունները Սաիդ Հալիմի հետ, քանի որ նա նաև Արտաքին գործերի նախարարն էր, սակայն ինձ համար շատ շուտով պարզ դարձավ, որ նրա միջոցով ոչ մի հարց չի լուծվում: Ու թեև ես շարունակում էի ամեն երկուշաբթի քաղաքավարական այց կատարել նրան, այդուհանդերձ, գերադասում էի ուղղակի համագործակցել այն դեմքերի հետ, ովքեր հարցեր լուծելու իրական իշխանություն ունեին: Որպեսզի ինձ չմեղադրեն այն հարցում, թե չեմ դիմում բոլոր հնարավոր միջոցների՝ օսմանյան կառավարության վրա ներազդելու համար, ես մի քանի անգամ Հայկական հարցը ներկայացրի մեծ վեզիրի ուշադրությանը: Քանի որ նա ազգությամբ ոչ թե թուրք էր, այլ եգիպտացի արաբ՝ ազնվական ծագումով ու լավ կրթված, թվում էր, թե պետք է այլ վերաբերմունք ունենա այդ մարդկանց նկատմամբ: Սակայն ես սխալվում էի. մեծ վեզիրը նույնքան թշնամաբար էր տրամադրված հայերի հանդեպ, որքան Էնվերն ու Թալեաթը: Շուտով ինձ համար պարզ դարձավ, որ այդ թեմայի հիշատակումն անգամ նրան չափազանց նյարդայնացնում է: Ըստ ամենայնի՝ նա չէր ցանկանում, որ իր նրբագեղ կեցվածքն «աղավաղվի» նման տհաճ ու անկարևոր հարցերով: Մեծ վեզիրի վերաբերմունքը բացահայտվեց, երբ Հունաստանի գործերի հավատարմատարը նրա հետ խոսեց հույների հետապնդումների մասին: Սաիդ Հալիմն ասաց, որ նման հայտարարությունները ավելի վնասում են հույներին, քան օգնում:

- Մենք կանենք նրանց խնդրածի ճիշտ հակառակը, - հայտարարեց մեծ վեզիրը:

Իմ կոչերին ձևական գլխավոր նախարարը վերաբերվում էր պետական այրին հազիվ թե հարիր ձևով: Ինձ հանձնարարվել էր բրիտանական, ֆրանսիական և ռուսական կառավարությունների անունից նրան հայտարարություն ներկայացնել առ այն, որ նշված տերությունները հայերի նկատմամբ իրականացվող վայրագությունների համար անձամբ պատասխանատու կճանաչեն այն անձանց, ովքեր այդ պահին կառավարում են Օսմանյան կայսրությունը: Անշուշտ, դա նշանակում էր՝ եթե Դաշնակիցները հաղթանակ տանեն, նրանք մեծ վեզիրին, Թալեաթին, Էնվերին ու Ջեմալին կվերաբերվեն որպես սովորական մարդասպանների: Ես գնացի նրա մոտ՝ այս բավական անախորժ հարցը քննարկելու համար: Եգիպտոսի թագավորական գերդաստանի մի անդամի հետ նստած՝ բավական մռայլ տրամադրությամբ պտտեցնում էր համրիչը: Նա

անմիջապես խոսեց վերոհիշյալ հայտարարության մասին. նրա դեմքը կարմրատակել էր զայրույթից: Նա սկսեց ճամարտակել ողջ հայ ժողովրդի մասին: Հայտարարեց, թե Վանում հայ «ապստամբները» հարյուր քսան հազար թուրք են սպանել: Այս և նման հայտարարությունները այնքան անհեթեթ էին, որ ես ակամա սկսեցի եռանդագին պաշտպանել այդ հալածված ժողովրդին, ինչը է՛լ ավելի կատաղեցրեց մեծ վեզիրին: Եվ մոռանալով հայերին՝ նա սկսեց վիրավորել իմ երկիրը՝ կրկնելով սովորական դարձած այն մեղադրանքը, թե հայերի հանդեպ ունեցած մեր համակրանքը նրանց բոլոր դժբախտությունների պատճառն է:

Այդ հանդիպումից շատ չանցած՝ Սաիդ Հալիմն այլևս Արտաքին գործերի նախարարը չէր: Նրան հաջորդեց Հալիլ բեյը, որ մի քանի տարի եղել էր թուրքական խորհրդարանի խոսնակը: Հալիլը միանգամայն այլ տիպի անձնավորություն էր՝ անհամեմատ ավելի զուսպ, խելացի և ազդեցիկ: Խոսում էր հանգիստ ու սահուն, բարյացակամ էր և ժամանակի մյուս թուրք քաղաքական գործիչների պես ամբողջովին չէր կորցրել պարկեշտությունը: Ասում էին, որ Հալիլը դեմ էր հայերի ջարդերին, սակայն պաշտոնեական դիրքը ստիպում էր նրան ընդունել դրանք, և ինչպես ինձ հայտնի դարձավ՝ նաև պաշտպանել: Նախարարի պաշտոնը ստանձնելուց հետո Հալիլը շուտով այցելեց ինձ և հայերի ջարդերի մասին բավականին խճճված բացատրություն տվեց: Կոտորածների վերաբերյալ ինձ արդեն հայտնի էին մի շարք պաշտոնական դիրքորոշումներ. Թալեաթինը՝ արյունռուշտ և կատաղի, Էնվերինը՝ զգուշավոր, քայլերը հաշվարկված, մեծ վեզիրինը՝ բավական նյարդային: Հիմա Հալիլը մի ողջ ժողովրդի ոչնչացման մասին խոսում էր գրեթե զվարթ ձայնով: Կատարվածի ոչ մի դրվագ, նույնիսկ ամենաահավոր դեպքերը, որոնց մասին ես պատմում էի, ամենևին չազդեցին նրա անխռով տրամադրության վրա: Զրույցը սկսեց այն խոստովանումից, որ ոչինչ չի կարող արդարացնել այդ ջարդերը, սակայն, ավելացրեց նա, դրանք հասկանալու համար ես պետք է խորհեմ որոշ փաստերի շուրջ:

- Ես ընդունում եմ, որ հայերի հանդեպ ցուցաբերվող նման վերաբերմունքը կառավարության սխալն է, - ասաց Հալիլը, - սակայն վնասն արդեն հասցվել է: Ի՞նչ կարող ենք անել: Այդուհանդերձ, եթե կան սխալներ, որ ի վիճակի ենք ուղղելու, մենք կուղղենք: Ձեզ նման ես էլ ցավում եմ անտեղի և չարդարացված չափերի բռնությունների համար: Կցանկանայի Ձեզ ներկայացնել Բարձր Դռան տեսակետը: Ես ընդունում եմ, որ դա արդարացում չէ, սակայն կարծում եմ, որ կան մեղմացուցիչ որոշ հանգամանքներ, որոնք Դուք պարտավոր եք նկատի առնել օսմանյան կառավարության մասին կարծիք կազմելուց առաջ:

Այնուհետև նա մյուսների նման անդրադարձավ Վանի դեպքերին, հայերի անկախության ձգտմանը և ռուսներին ցուցաբերած օգնությանը: Այդ ամենը ես արդեն բազմիցս լսել էի:

- Ես ասացի Վարդգեսին (հայազգի պատգամավոր, ում, ինչպես հայազգի այլ բազում առաջնորդների, շուտով սպանեցին), որ եթե, իրոք, նրա ժողովուրդը ձգտում է անկախության, ապա պետք է սպասի պատեհ առիթի. միգուցե ռուսական զորքերին հաջողվի հաղթել թուրքերին և գրավել բոլոր հայաբնակ գավառները: Այդ դեպքում ինձ համար հասկանալի կլիներ, որ հայերը ցանկանում են իրենք իրենց կառավարել: Ինչու՞ չսպասել, ասացի ես Վարդգեսին, մինչև գա նման նպաստավոր ժամանակ: Ես նրան զգուշացրի, որ հայերին թույլ չենք տա թիկունքից հարվածել մեզ, և եթե նրանք թշնամական գործողություններ ձեռնարկեն մեր զորքերի դեմ, մենք կբնաջնջենք բոլոր հայերին, որ գտնվում են մեր բանակի թիկունքում, և վերացնելու մեր մեթոդը կլինի նրանց հեռավոր հարավային շրջաններ արտաքսելը: Ինչպես գիտեք, Էնվերը նման զգուշացում էր արել հայոց պատրիարքին, սակայն, հակառակ այդ բարեկամական նախազգուշացումներին, նրանք հեղափոխություն սկսեցին:

Ես նրան հարցրի մարդասիրական օգնություն ցուցաբերելու եղանակների մասին և հայտնեցի, որ Ամերիկայից արդեն ստացել եմ քսան հազար փաունդ (հարյուր հազար դոլար):

- Օսմանյան կառավարության խնդիրն է, - կտրուկ պատասխանեց նա, - տեղավորել այդ մարդկանց. նրանց ապահովել կացարանով և սնունդով, մինչև իրենք ի վիճակի կլինեն իրենց կարիքները հոգալու: Կառավարությունը, անշուշտ, կկատարի իր պարտքը: Բացի այդ, Ձեր նշած հարյուր հազար դոլարն իրականում չնչին գումար է:

- Իրավացի եք, - համաձայնեցի ես, - սակայն դա միայն սկիզբն է. ես վստահ եմ, որ կհայթայթեմ անհրաժեշտ գումարն ամբողջությամբ:

- Էնվեր փաշան համոզված է, որ օտարները չպետք է օգնեն հայերին, - պատասխանեց Հալիլը: - Ես չեմ ասում, թե նրա շարժառիթներն արդարացի են կամ ոչ: Պարզապես դրանք ներկայացնում եմ Ձեզ, ինչպես որ կան: Էնվերն ասում է, որ հայերն իդեալիստ են, որ այն պահին, երբ օտարները սկսեն օգնել նրանց, կբորբոքվեն նրանց ազգային նկրտումները: Նա միանգամայն վճռական է օտարերկրացիների հետ հայերի ունեցած կապերը վերացնելու հարցում:

- Դա՞ է Էնվերի միջոցը հայերի հետագա գործողությունները կասեցնելու, - հարցրի ես:

Այս բավական սուր հարցին ի պատասխան՝ Հալիլը բարի ժպտաց ու պատասխանեց.

- Հայերը հետագա գործողությունների որևէ հնարավորություն չունեն:

Քանի որ այդ պահին արդեն սպանվել էր շուրջ հինգ հարյուր հազար հայ, Հալիլի անկեղծ պատասխանն ուներ առնվազն մի հատկանիշ, որ բացակայում էր նրա մյուս բոլոր հայտարարություններում. այն ճշմարիտ էր:

- Օգնության կարոտ քանի՞ հայ կա հարավային գավառներում, - հարցրի ես:

- Տեղյակ չեմ, չեմ կարող նույնիսկ մոտավոր թիվ ասել:

- Մի քանի հարյուր հազա՞ր...

- Հավանաբար, - խոստովանեց Հալիլը, - սակայն չեմ կարող ասել՝ քանի հարյուր հազար: Նրանցից շատ-շատերը տուժեցին միայն այն պատճառով, որ էնվերին չհաջողվեց բավարար թվով զորք ուղարկել նրանց պաշտպանելու համար: Նրանց մի մասին զինվորականները ուղեկցեցին և իրենց շատ լավ դրսևորեցին. նրանցից քառասունը նույնիսկ զոհաբերեց իր կյանքը՝ պաշտպանելով հայերին: Սակայն մենք ստիպված էինք ժանդարմներին հետ կանչել՝ բանակում ծառայելու համար և նոր մարդիկ ուղարկել՝ հայերին ուղեկցելու: Ճշմարիտ է, որ այդ ժանդարմները ցավալիորեն չափն անցել են:

- Թուրքերից շատերը չեն քաջալերում այդ մեթոդները, - ասացի ես:

- Չեմ ժխտում, - պատասխանեց մշտապես հարմարվող Հալիլը, քաղաքավարի խոնարհվեց և հեռացավ:

Էնվերը, Հալիլը և մյուսները հաճախ պնդում էին, թե օտարերկրացիները չպետք է օգնեն հայերին: Այդ այցից մի քանի օր հետո ԱՄՆ դեսպանատուն այցելեց Արտաքին գործերի նախարարի տեղակալը: Նա եկել էր ինձ փոխանցելու Ջեմալից ստացված հաղորդագրությունը: Ջեմալը, որ այդ օրերին Սիրիայում էր, իր իրավասության տակ էր պահում քրիստոնյաներին և չափազանց գրգռված էր այն հետաքրքրության պատճառով, որ ԱՄՆ հյուպատոսները դրսևորում էին հայերի հանդեպ: Հիմա նա ինձ հորդորում էր կարգադրել այդ պաշտոնյաներին «չխառնվել հայկական գործերին»: «Ջեմալը չի կարող մեղավորներին զանազանել անմեղներից, - ասաց լրաբերը, - ուստի որոշել է պատժել բոլորին»: Որոշ ժամանակ անց Հալիլն ինձ գանգատվեց, որ ԱՄՆ հյուպատոսները հայերի մասին փաստեր են ուղարկում Ամերիկա, և որ թուրքական կառավարությունը պնդում է, որ նրանք վերջ տան դրան:

Ի դեպ, այդ տեղեկությունների մեծ մասը ես էի ուղարկում: Եվ հետագայում էլ շարունակեցի ուղարկել:

ԳԼՈՒԽ XXVII

Գերմանիայի դեսպան. «Հայերի համար ոչինչ չեմ անի»

Մի պահ ընդունենք, որ Հայկական հարցը չունի մեկ այլ՝ նույնքան հետաքրքրություն հարուցող ասպեկտ, քան հետևյալը. արդյոք գերմանացիներն այս ամենին մասնակի՞ց էին: Որքանո՞վ է Գերմանիայի կայսրը պատասխանատու հայ ժողովրդի զանգվածային ոչնչացման համար: Արդյոք գերմանացիները ջարդերի կողմնակի՞ց էին, լուռ դիտո՞ղդ, թե դեմ էին կոտորածներին: Վերջին չորս տարվա ընթացքում Գերմանիան պատասխանատվություն է կրում պատմության բազում մռայլ էջերի համար: Արդյոք պատասխանատո՞ւ է նաև այս անկասկա՛ծ ամենադաժան էջի համար:

Կարծում եմ՝ ընթերցողը կնկատի, որ թուրք պարագլուխների ասածները որոշ չափով հիշեցնում են գերմանական ռազմական փիլիսոփայությունը: Եվս մեկ անգամ կցանկանայի մեջբերել Էնվերի և Թուրքիայի այլ պարագլուխների մասնավոր արտահայտությունները, որ նրանք օգտագործում էին հայկական ջարդերին անդրադառնալիս. «Հայերն իրենք են մեղավոր իրենց ճակատագրի համար», «նրանց ազնվորեն զգուշացրել էին», «մենք պայքարում էինք մեր ազգի գոյության համար... մենք արդարացիորեն կիրառել ենք բոլոր հնարավոր միջոցները՝ այդ նպատակներին հասնելու համար», «մենք ժամանակ չունենք մեղավորներին անմեղներից զատելու», «մենք մտածում ենք միայն պատերազմում հաղթելու մասին»: Այս արտահայտությունները ծանոթ են, այնպես չէ՞: Եվ իրոք, ես կարող եմ գրառել իմ բոլոր զրույցները Էնվերի հետ, Հայաստանի փոխարեն գրել Բելգիա, Էնվերի բառերը վերագրել գերմանացի որևէ գեներալի, և մեր առջև կհայտնվի Գերմանիայի անթաքույց վերաբերմունքն իրեն ենթակա բոլոր ազգերի հանդեպ: Սակայն պրուսական հայեցակետն ավելի խորն է: Հայերի հետ կապված դեպքերն ունեն մի նոր հատկանիշ, որը բնավ թուրքական չէ: Դարեր շարունակ թուրքերը հայերին և մյուս ենթակա ժողովուրդներին վերաբերվել են աննկարագրելի բարբարոսությամբ: Նրանց մեթոդները միշտ դաժան, բիրտ և պարզունակ են եղել: Նրանք ընդունակ էին ջարդելու հայերի գլուխները, և այդ սարսափելի օրինակը լավագույնս նկարագրում է այն դաժան ու նախնադարյան մեթոդները, որ նրանք կիրառում էին Հայկական հարցը լուծելու համար: Սպանությունը նրանք ընկալում են որպես մեթոդ, բայց ոչ որպես գիտություն: Սակայն 1915-16 թվականներին հայերի հանդեպ կիրառվող քաղաքականությունն իրականացվում էր բացարձակապես

նոր մղումներով. նոր մեթոդը բռնագաղթն էր: Հինգ հարյուր տարվա ընթացքում թուրքերն անթիվ միջոցներ էին մշակել՝ իրենց քրիստոնյա հպատակներին ֆիզիկապես տանջելու համար, սակայն նախկինում թուրքերի մտքով երբեք չէր անցել նրանց տեղահանել իրենց բնակավայրերից, որտեղ նրանք ապրել էին հազարավոր տարիներ, ու քշել հարյուրավոր մղոններ հեռու՝ անապատի խորքերը: Թուրքերն ինչպե՞ս հղացան այդ գաղափարը: Ես արդեն պատմել եմ, թե ինչպես 1914 թվականին՝ Եվրոպական պատերազմից անմիջապես առաջ, թուրքական կառավարությունը շուրջ հարյուր հազար հույների արտաքսեց Թուրքիայի ասիական ափին գտնվող իրենց տներից, որտեղ նրանք բնակվել էին դարեր շարունակ, և արտաքսեց Էգեյան ծովում գտնվող կղզիներ: Ասացի նաև, որ ծովակալ Ուզդոմը՝ Թուրքիայում ծառայող գերմանացի ամենաականավոր ծովային մասնագետներից մեկը, հայտնեց ինձ, որ այդ տեղահանման գաղափարը թուրքերին հուշել են գերմանացիները: Սակայն ամենակարևորն այն է, որ մարդկանց զանգվածաբար աքսորելու գաղափարը նորագույն պատմության մեջ զուտ գերմանական մեթոդ է: Որևէ մեկը, ով ծանոթանում է պանգերմանիզմի պատմությանը, մշտապես հանդիպում է այդ երևույթին: Գերմանական աշխարհ ստեղծելու նվիրյալները, որպես իրենց ծրագրի մի մաս, մանրակրկիտ մշակել են ֆրանսիացիներին Ֆրանսիայի որոշ շրջաններից, բելգիացիներին Բելգիայից, լեհերին Լեհաստանից, սլավոններին Ռուսաստանից (նաև այլ բնիկ ժողովուրդների, որ հազարավոր տարիներ բնակվել են այդտեղ) դուրս մղելու ծրագիր՝ նրանց տարածքներում վստահելի, ազնվաբարո գերմանացիների բնակեցնելու համար: Հազիվ թե հարկ է ապացուցել, որ գերմանացիները որդեգրել էին այդ մեթոդը որպես պետական քաղաքականություն. նրանք դա անում էին վերջին չորս տարվա ընթացքում: Արդեն տեղահանվել են հազարավոր ֆրանսիացիներ ու բելգիացիներ: Ավստրո-Հունգարիան ոչնչացրել է սերբ բնակչության մեծ մասին և տեղափոխել հազարավոր սերբ երեխաների իր տարածք՝ նրանց որպես կայսրության նվիրյալներ մեծացնելու համար: Ժողովուրդների տեղահանման իրական պատկերի մասին մենք ամբողջական պատկերացում չենք ունենա մինչև պատերազմի ավարտը, սակայն արդեն իսկ պարզ է, որ դրա ծավալները զարհուրելի են:

Գերմանացի որոշ գրողներ նույնիսկ քաջալերում էին այդ քաղաքականության կիրառումը հայերի հանդեպ: Ըստ փարիզյան «Le Temps» թերթի՝ Պոլ Ռորբախը «տարիներ առաջ Բեռլինում կայացած համաժողովի ժամանակ առաջարկել է, որ Հայաստանը մաքրվի հայերից: Նրանք պետք է սփռվեն Միջագետքում և այլ վայրերում, իսկ նրանց տեղը պետք

է գրավեն թուրքերը, որպեսզի հայերն ազատվեն ռուսական որևէ ազդեցությունից, և որպեսզի Միջագետքում հայտնվեն գյուղացիներ, որոնք այնտեղ այս պահին չկան»: Այս ամենի նպատակը միանգամայն պարզ էր. Գերմանիան կառուցում էր Բաղդադի երկաթուղին, որն անցնում էր Միջագետքի անապատով: Նոր գերմանական կայսրություն ստեղծելու գործում սա կարևորագույն տարր էր. երկաթուղին պետք է ձգվեր Համբուրգից մինչև Պարսից ծոց: Սակայն երկաթգիծը չէր գործի, եթե այնտեղ չլիներ երկաթուղին սպասարկող ձեռներեց ու աշխատասեր բնակչություն: Ծույլ թուրքերը բանի պետք չէին, մինչդեռ հայերը ճիշտ այն մարդիկ էին, որ անհրաժեշտ էին այդ գործի համար: Այդ ամենը միանգամայն համընկնում էր գերմանացիների պետական շահերին. մարդկանց դուրս քշել այն տարածքներից, որտեղ նրանք ապրել էին դարերով, ու տեղափոխել ահավոր կիզիչ անապատ: Այն փաստը, որ հայերը մշտապես բնակվել են կլիմայական մեղմ պայմաններում, պանգերմանիստների համար արգելք չէր: Ես պարզեցի, որ Գերմանիան սկսել էր ցանել այս գաղափարի սերմերը շատ տարիներ առաջ: Պարզեցի նաև, որ գերմանացի «գիտնականներն» այդ մասին դասախոսում էին Արևելքում: Հայերից մեկն ինձ ասաց. «Հիշում եմ, գնացի մի հայտնի գերմանացի պրոֆեսորի դասախոսությանը: Նրա հիմնական միտքն այն էր, թե թուրքերը մեծ սխալ են գործել՝ գթասրտություն ցուցաբերելով ոչ թուրք բնակչության հանդեպ: Նա նաև ասաց, որ կայսրության բարգավաճումն ապահովելու միակ միջոցն է գործել առանց որևէ զգացմունքայնության իրենց ենթակայության տակ գտնվող ազգերի ու ժողովուրդների հանդեպ, որոնք խանգարում են թուրքերի ծրագրերին»:

Հայությանը վերաբերող հարցերում պանգերմանիստները պաշտոնական տեսակետ ունեն: Ես կբավարարվեմ մեջբերելով «Mittel-Europa» աշխատանքի հեղինակ Ֆրիդրիխ Նաումանին, ով պանգերմանական գաղափարների թերևս ամենատաղանդավոր քարոզիչն է: Ասիային վերաբերող իր աշխատության մեջ Նաումանը, ով իր կյանքը սկսել էր որպես քրիստոնյա հոգևորական, մանրամասն խոսում է 1895-96 թվականների հայկական ջարդերի մասին: Ես մեջբերում եմ միայն մի քանի դրվագ՝ բացահայտելու համար գերմանական պետական քաղաքականությունը այդ խայտառակ արարքի հարցում. «Եթե 80000-100000 հայերի ոչնչացումը դիտարկենք զուտ որպես վայրենի ջարդեր, - գրում է Նաումանը, - կարող ենք հանգել միայն մեկ եզրակացության. մենք պարտավոր ենք աներկբայորեն, ամենայն զայրույթով ու ցասումով դատապարտել և՛ ոճրագործներին, և՛ կազմակերպիչներին: Մարդկանց հսկայական զանգվածների նրանք հրեշավոր ջարդերի են ենթարկել:

Դրանք ավելի զանգվածային էին և ավելի ահավոր, քան այն կոտորածները, որոնց Կառլ Մեծը[36] ենթարկեց սաքսոններին: Այն ահասարսուռ կտտանքները, որ նկարագրում է Լեփսիուսը, գերազանցում են մեզ հայտնի մյուս բոլոր դեպքերը: Ուրեմն ի՞նչն է մեզ խանգարում՝ հարձակվելու թուրքի վրա և բղավելու. «Չքվի՛ր, նողկալի՛ արարած». միայն մեկ բան՝ թուրքի պատասխանը. «Ես նույնպես պայքարում եմ իմ գոյության համար», և մենք հավատում ենք նրան: Հավատում ենք՝ հակառակ այն վրդովմունքին, որ անիծյալ մահմեդականներն արթնացնում են մեր հոգում, հավատում ենք, որ թուրքերն օրինականորեն պաշտպանում են իրենց, և նախ և առաջ տեսնում ենք, որ Հայկական հարցը և հայկական ջարդերը Թուրքիայի ներքին գործն են. ընդամենը մի դրվագ այն հոգեվարքի, որն ապրում է հսկա կայսրությունը, և որը չի ցանկանում կործանվել առանց իրականացնելու փրկվելու իր վերջին փորձը, թեկուզ և արյունահեղության գնով: Բոլոր մեծ տերությունները, բացառությամբ Գերմանիայի, վարում են այնպիսի քաղաքականություն, որի նպատակն է խաթարել Թուրքիայի բնականոն կյանքը: Թուրքիայի ենթակայության տակ գտնվող բոլոր ազգերի համար նրանք պահանջում են մարդու իրավունքներ, ասել է թե՝ մարդասիրություն և քաղաքակրթություն կամ քաղաքական ազատություններ, այսինքն՝ այն, ինչ նրանց կհավասարեցնի թուրքերին: Սակայն ճիշտ այնքան, ինչքան հին Հռոմի բռնատիրական պետությունը կարող էր հանդուրժել Նազարեթցու դավանանքը, նույնքան էլ՝ Օսմանյան Թուրքիան, որն իրականում Արևելյան Հռոմեական կայսրության քաղաքական ժառանգորդն է, կարող էր հանդուրժել արևմտյան ազատ քրիստոնեության որևէ դրսևորում իր հպատակների շրջանում: Հայոց հարցը Թուրքիային սպառնում է ոչնչացմամբ: Այդ է պատճառը, որ թուրքերը գործում են որպես բարբարոս ասիական պետություն՝ ոչնչացնելով հայերին, որպեսզի դեռ երկար ժամանակ նրանք անկարող լինեն քաղաքական ուժ դառնալ: Անշուշտ, դաժան մի արարք, քաղաքական հուսահատ քայլ՝ իր մանրամասներով ամոթալի, սակայն քաղաքական պատմության մի դրվագ՝ ասիական ձևով... Հակառակ այն վրդովմունքին, որ գերմանացի քրիստոնյաները զգում են այս՝ արդեն կատարված փաստի համար, նրանց մնում է միայն լռելյայն ամոքել վերքերը և հանդուրժել, որ իրադարձությունները հոսեն իրենց հունով: Մեր քաղաքականությունն Արևելքում վաղուց ի վեր որոշված է. մենք պատկանում ենք այն խմբին, որը սատար է կանգնում թուրքերին, և դա փաստ է, որով պետք է ուղղորդվեն մեր գործողությունները... Մենք չենք արգելում որևէ մոլի քրիստոնյայի հոգալ այդ ահավոր ոճրի զոհերի հոգսերը՝ մեծացնել նրանց երեխաներին կամ հոգ տանել ծերերի մասին: Թող

Աստված օրհնի նրանց բարի գործերը, ինչպես հավատով ներշնչված է ամեն մի գործ: Սակայն մենք պարտավոր ենք զգույշ լինել, որպեսզի բարեգործության դրսևորումները չընդունեն քաղաքական արարքների տեսք, ինչը կարող է վնասել գերմանական քաղաքականությանը: Մտքի անգլիական դպրոցին հարող ինտերնացիոնալիստը կարող է քայլել հայերի կողքին: Ազգայնականը, որը մտադիր չէ զոհաբերել Գերմանիայի ապագան հանուն Անգլիայի, պետք է արտաքին քաղաքականությանը վերաբերող հարցերում հետևի Բիսմարկի նախանշած ուղուն, նույնիսկ այն դեպքում, եթե այն իր դրսևորումներում դաժան է... Ազգային քաղաքականություն. ահա այն ամենակարևոր բարոյական պատճառը, հանուն որի մենք՝ պետական այրերս, պարտավոր ենք անտարբեր մնալ Թուրքիայում բնակվող ժողովուրդների տառապանքների հանդեպ, որքան էլ դա ցավոտ լինի մեր մարդկային զգացմունքների համար... Դա մեր պարտքն է, որը մենք պետք է ճանաչենք ու խոստովանենք Աստծո և մարդկանց առջև: Եթե այդ մղումով մենք հիմա սատարում ենք թուրքական պետությանը, ապա դա անում ենք՝ մեր շահերից ելնելով, մեր փայլուն ապագայի տեսլականով... Մի կողմից դա մեր՝ որպես պետության պարտականությունն է, մյուս կողմից՝ որպես մարդ-արարածի: Լինում են ժամանակներ, երբ պարտականությունների այդ բախման մեջ մենք կարող ենք ընտրել միջինը: Մարդկային տեսանկյունից դա բնական է, սակայն ոչ բարոյական: Այս դեպքում և նման բոլոր դեպքերում մենք պետք է հստակ գիտակցենք, որտեղ է ամենաէական ու ամենակարևոր բարոյական պարտքը: Ընտրություն կատարելուց հետո մենք չպետք է տատանվենք: Վիլհելմ Երկրորդը կատարել է այդ ընտրությունը. նա դարձավ սուլթանի բարեկամը, քանզի մտածում է ավելի հզոր, անկախ Գերմանիայի մասին»:

Այսպիսին էր գերմանական պետական փիլիսոփայությունը Հայկական հարցի վերաբերյալ, և ես պատեհություն ունեցա տեսնելու նաև դրա կիրառումը գերմանացիների կողմից: Հենց առաջին զեկույցները հասան Կոստանդնուպոլիս, ես մտածեցի, որ վայրագությունները կանխելու ամենաարդյունավետ միջոցը կլինի բոլոր երկրների դիվանագիտական ներկայացուցչությունների համատեղ բողոքը՝ ուղղված օսմանյան կառավարության դեմ: Մարտի երկրորդ կեսին ես այդ մասին խոսեցի Վանգենհայմի հետ: Նրա հակակրանքը հայերի հանդեպ անմիջապես իրեն զգացնել տվեց. սկսեց փնովել նրանց ամենախիստ բառերով: Ինչպես Թալեաթն ու Էնվերը, նա նույնպես Վանի դեպքերը համարում էր ապստամբություն՝ առանց որևէ սադրանքի, և նրա աչքին նույնպես հայերը պարզապես դավաճան կարիճներ էին, ինչպես թուրքերի համար:

- Ես կօգնեմ սիոնիստներին, - ասաց նա՝ մտածելով, որ ասածն ինձ անձամբ դուր կգա, - սակայն հայերի համար ընդհանրապես ոչինչ չեմ անի:

Վանգենհայմը ձևացրեց, թե իբր այն կարծիքին է, որ Հայկական հարցը հիմնականում առնչվում է Միացյալ Նահանգներին: Իմ մշտական միջնորդությունը հօգուտ հայերի հավանաբար նման տպավորություն էր ստեղծել, և նրա գերմանական ուղեղում այդ ժողովրդի հանդեպ ցուցաբերված գթասրտության ցանկացած դրսևորում կնշանակեր զիջում ամերիկյան կառավարությանը: Իսկ այդ պահին նա բնավ տրամադրված չէր ամերիկացիներին գոհացնող որևէ բան անել:

- Ակնհայտ է, որ Միացյալ Նահանգները միակ երկիրն է, որ այդչափ հետաքրքրություն է ցուցաբերում հայերի հանդեպ, - ասաց նա: - Ձեր միսիոներները նրանց բարեկամներն են, և ձեր ժողովուրդն իրեն համարում է հայերի հովանավորը: Նշանակում է՝ հայերին օգնելու հարցը զուտ ամերիկյան գործ է: Ինչպե՞ս կարող եք ակնկալել, որ ես ինչ-որ բան կանեմ, երբ Ամերիկան զինամթերք է վաճառում Գերմանիայի թշնամիներին: Պարոն Բրայանը հոդված է տպագրել՝ նշելով, որ Անգլիային ու Ֆրանսիային զենք չվաճառելը չեզոքությունը խախտող քայլ կլինի: Քանի դեռ ձեր կառավարությունը նման դիրքորոշում ունի, մենք հայերի համար ոչինչ անել չենք կարող:

Ըստ ամենայնի՝ միայն գերմանական տրամաբանությունը կարող էր որևէ կապ տեսնել մեր կողմից Դաշնակիցներին զինամթերք վաճառելու և Թուրքիայի կողմից հազարավոր հայ կանանց ու երեխաների սպանելու միջև: Սակայն այդ պահին Վանգենհայմի տված միակ պատասխանը դա էր: Ես հաճախ էի զրուցում նրա հետ, սակայն հայերի հանդեպ գթասրտություն ցուցաբերելու իմ կոչին նա միշտ հակադրում էր Դարդանելում ամերիկյան ականների օգտագործման փաստը: Շուտով մեր հարաբերություններում նկատելի սառնություն հայտնվեց, որովհետև ես հրաժարվեցի հաստատել նրա «մասնակցությունը» Գալիպոլիի թերակղզի ֆրանսիացի ու բրիտանացի քաղաքացիների աքսորները կանխելու գործում: Բավական չոր հեռախոսազրույցից հետո, երբ նա ինձ խնդրեց հեռագրել Վաշինգտոն առ այն, թե Վանգենհայմն ինքն այս հարցում թուրքերին չի սատարել, մեր փոխադարձ այցերը մի քանի շաբաթով դադարեցին:

Կոստանդնուպոլսում ապրում էին որոշ ազդեցիկ գերմանացիներ, ովքեր չէին ընդունում Վանգենհայմի տեսակետը: Ես արդեն նշել եմ Պոլ Վայցին, ով երեսուն տարի եղել է «Frankfurter Zeitung»-ի թղթակիցը և Մերձավոր Արևելքում կատարվող անցքերի մասին հավանաբար գիտեր

ավելին, քան որևէ այլ գերմանացի: Թեև Վանգենհայմը մշտապես ապավինում էր Վայցին՝ տեղեկություններ ստանալու համար, սակայն նա միշտ չէ, որ հետևում էր նրա խորհրդին: Վայցը չէր ընդունում օրթոդոքս կայսերական վերաբերմունքը հայերի հանդեպ, քանի որ հավատացած էր, որ, հրաժարվելով ընթացող իրադարձություններին ակտիվորեն միջամտելուց, Vaterland-ն իրեն տևական վնաս է հասցնում: Վայցը հաճախ էր այդ մասին զրուցում Վանգենհայմի հետ, սակայն որևէ արդյունքի չէր հասնում: Այդ մասին ինձ անձամբ ասաց Վայցը 1916-ի հունվարին Թուրքիայից իմ մեկնելուց մի քանի շաբաթ առաջ: Մեջբերում եմ նրա բառերն այդ հարցի վերաբերյալ.

«Հիշում եմ, որ ամենասկզբում Դուք ինձ ասացիք, թե ինչ մեծ սխալ է գործում Գերմանիան Հայկական հարցում, - ասաց Վայցը: - Ես լիովին համամիտ եմ: Սակայն, երբ խոսեցի այդ մասին Վանգենհայմի հետ, նա ինձ երկու դեպքում էլ դուրս վռնդեց»:

Մյուս գերմանացին, որ դեմ էր կատարվող դաժանություններին, Նյուրաթն էր՝ գերմանական դեսպանության խորհրդականը: Նրա վրդովմունքը հասավ այն աստիճանի, որ Թալեաթի ու Էնվերի հետ շփվելիս նրա բառերը գրեթե անցնում էին դիվանագիտական սահմանը: Սակայն նա էլ ինձ խոստովանեց, որ չկարողացավ որևէ ազդեցություն ունենալ նրանց վրա:

- Նրանք անսասան և վճռական են իրենց բռնած գործը շարունակելու մեջ , - ասաց Նյուրաթը:

Իհարկե, քանի դեռ Գերմանիայի դեսպանը հրաժարվում էր միջամտել, ոչ մի գերմանացի չէր կարող ներազդել թուրքական կառավարության վրա: Ժամանակն անցնում էր, և ավելի ու ավելի պարզ էր դառնում, որ Վանգենհայմն բռնագաղթերի դեմն առնելու ոչ մի մտադրություն չունի: Սակայն նա ցանկություն ուներ վերականգնելու բարեկամական հարաբերություններն ինձ հետ և շուտով երրորդ անձի միջոցով հետաքրքրվեց, թե ես նրան ինչու չեմ այցելում: Ես չգիտեմ՝ որքան երկար կտևեր այդ սառնությունը, եթե նա անձնական մեծ ողբերգություն չապրեր. հունիսին Գերմանիայի ռազմական կցորդ, փոխգնդապետ Լայպցիգը մահացավ ամենաողբերգական և առեղծվածային հանգամանքներում Լուլե Բուրգասի կայարանում. նա սպանվել էր ատրճանակի կրակոցից: Համաձայն մի վարկածի՝ զենքը պատահաբար կրակել էր, ըստ մեկ այլ վարկածի՝ փոխգնդապետն ինքնասպան էր եղել, ըստ երրորդ վարկածի՝ թուրքերը սխալմամբ սպանել էին նրան՝ կարծելով, թե Լիման ֆոն Սանդերսն է: Լայպցիգը Վանգենհայմի ամենամտերիմ բարեկամներից էր. երիտասարդ տարիներին միասին ծառայել էին բանակի

զինվորական նույն ստորաբաժանումում: Կոստանդնուպոլսում նույնպես անբաժան էին: Ես իսկույն գնացի դեսպանի մոտ՝ հայտնելու ցավակցությունս: Վանգենհայմին գտա կատարելապես հուսահատ վիճակում: Նա ինձ ասաց, որ սրտի հետ կապված խնդիրներ ունի, որ գրեթե ուժասպառ է և դիմել է մի քանի շաբաթով արձակուրդ ստանալու խնդրանքով: Ինձ հայտնի էր, որ Վանգենհայմին տանջում է ոչ միայն ընկերոջ մահը: Գերմանացի միսիոներները Գերմանիան ողողել էին հայերին վերաբերող հաղորդագրություններով և կառավարությանը կոչ էին անում վերջ դնել ջարդերին: Որքան էլ մտահոգ ու նյարդայնացած լիներ Վանգենհայմը, այդուհանդերձ, նա վերստին ապացուցեց, որ նույն անզիջում գերմանացի միլիտարիստն է: Մի քանի օր անց նա ինձ մոտ եկավ պատասխան այցով:

- Որտե՞ղ է Քիտչընների բանակը, - հարցրեց Վանգենհայմը և շարունակեց, - այժմ մենք պատրաստվում ենք Բելգիան հանձնելու: Գերմանիան մտադիր է հեռահար սուզանավերի հսկա նավատորմ կառուցել: Հաջորդ պատերազմում մենք կկարողանանք լիակատար շրջափակման մեջ առնել Անգլիան: Այդ սուզանավերի կայանների համար Բելգիան մեզ պետք չէ: Մենք երկիրը կվերադարձնենք բելգիացիներին, իսկ փոխարենը կվերցնենք Կոնգոն:

Ես ևս մեկ անգամ խնդրեցի միջամտել հալածանքների ենթարկվող քրիստոնյաների համար: Եվ կրկին մենք երկար զրույց ունեցանք այդ թեմայի շուրջ:

- Հայերը, - ասաց Վանգենհայմը, - այս պատերազմում ապացուցեցին, որ թուրքերի թշնամին են: Միանգամայն պարզ է, որ այդ երկու ժողովուրդները չեն կարող ապրել նույն պետության մեջ: Ամերիկացիները պարտավոր են նրանց մի մասը տեղափոխել ԱՄՆ, մենք՝ գերմանացիներս, հայերի մի մասը կուղարկենք Լեհաստան, իսկ նրանց փոխարեն հայկական գավառներ կուղարկենք Լեհաստանի հրեաներին, եթե, իհարկե, նրանք խոստանան վերջ տալ իրենց սիոնիստական դավերին:

Ու թեև ես խոսում էի ամենայն լրջությամբ, Գերմանիայի դեսպանը հրաժարվեց օգնել հայերին: Այդուամենայնիվ, հուլիսի 4-ին Վանգենհայմը ներկայացրեց բողոքի պաշտոնական նոտա: Նա խոսել էր ոչ թե Թալեաթի կամ Էնվերի հետ՝ այն դեմքերի, ովքեր իրական հեղինակություն ունեին, այլ՝ մեծ վեզիրի հետ, ով պարզապես դրածո էր: Նրա արարքն ամբողջությամբ նույնքան ձևական էր, որքան նրա բողոքը ֆրանսիացի ու անգլիացի քաղաքացիական բնակչությանը Գալիպոլի ուղարկելու և Դաշնակիցների համար որպես թիրախ օգտագործելու դեմ: Այդ քայլի միակ նպատակը Գերմանիայի տեսակետը պաշտոնապես

գրանցելն էր: Թերևս ինձ համար նրա ներկայացրած բողոքի երեսպաշտությունն ավելի բացահայտ էր, քան մյուսների համար, քանի որ ճիշտ այն պահին, երբ Վանգենհայմը ներկայացնում էր իր՝ այսպես կոչված բողոքը, նա ինձ նկարագրում էր այն հանգամանքները, որոնց պատճառով Գերմանիան չէր կարող գործնական քայլեր ձեռնարկել՝ կոտորածները կանխելու համար: Մեր զրույցից շատ չանցած՝ Վանգենհայմը ստացավ իր արձակուրդը և մեկնեց Գերմանիա:

Որքան էլ Վանգենհայմը դաժան գտնվեր հայերի հանդեպ, նա այն աստիճանի անհանդուրժող չէր նրանց հանդեպ, որքան Հումանը՝ Գերմանիայի ռազմածովային կցորդը Կոստանդնուպոլսում: Նա ազդեցիկ դեմք էր, նրա դիրքը Կոստանդնուպոլսում համապատասխանում էր Բոյ էդի[37] դիրքին Ամերիկայում: Գերմանացի մի դիվանագետ ինձ ասաց, որ Հումանն իր էությամբ ավելի թուրք է, քան Էնվերն ու Թալեաթը: Չնայած Հումանի այդ համբավին՝ ես փորձեցի ստանալ նրա աջակցությունը: Դիմեցի նրան, քանի որ նա Էնվերի բարեկամն էր և ընկալվում էր որպես կարևոր օղակ Գերմանիայի դեսպանության և թուրքական հրամանատարության միջև: Հումանը Կայսեր անձնական ներկայացուցիչն էր, մշտական կապի մեջ էր Բեռլինի հետ և արտահայտում էր Գերմանիայի իշխող շրջանների տեսակետը: Նա խոսեց Հայկական հարցի մասին ամենայն անկեղծությամբ ու դաժանությամբ:

- Կյանքիս մեծ մասն ապրել եմ Թուրքիայում, - ասաց նա, - ես լավ եմ ճանաչում հայերին: Գիտեմ նաև, որ հայերն ու թուրքերը չեն կարող միասին ապրել այս երկրում: Նրանցից մեկը պիտի հեռանա: Ես թուրքերին չեմ մեղադրում հայերի հետ նման ձևով վարվելու համար: Կարծում եմ, որ դա միանգամայն արդարացված է: Ավելի թույլ ժողովուրդը պետք է ենթարկվի: Հայերն ուզում են մասնատել Թուրքիան. այս պատերազմում նրանք թուրքերի ու գերմանացիների դեմ են, ուստի այստեղ ապրելու իրավունք չունեն: Ես նաև կարծում եմ, որ Վանգենհայմը չափն անցավ՝ բողոքի նոտա ներկայացնելով. ես նման բան չէի անի:

Ես չթաքցրի, որ ինձ սարսափեցնում է նման մոտեցումը, սակայն Հումանը շարունակեց պախարակել հայ ժողովրդին, իսկ թուրքերին ազատեց որևէ մեղքից:

- Դա անվտանգության հարց է, - ասաց նա, - թուրքերը պետք է պաշտպանվեն, և այդ առումով նրանք միանգամայն արդարացված են իրենց արարքներում: Մենք յոթ հազար հրացան գտանք Կադըքյոյում, որոնք պատկանում էին հայերին: Սկզբում Էնվերը պատրաստ էր մեղմ վարվելու հայերի հետ, իսկ չորս ամիս անց պնդում էր, որ նրանց տրվի իրենց հավատարմությունն ապացուցելու մեկ այլ հնարավորություն:

Սակայն Վանի դեպքերից հետո նա ստիպված էր զիջել բանակին, որն այդ ողջ ընթացքում պնդում էր, որ թիկունքը պետք է պաշտպանված լինի: Կոմիտեն որոշում ընդունեց բռնագաղթեր իրականացնելու օգտին, և Էնվերը դժկամությամբ համաձայնեց: Հայերն անում են ամեն ինչ՝ Թուրքիան կործանելու համար, և միակ ելքը նրանց բռնագաղթեցնելն է: Էնվերը չափից ավելի բարեսիրտ անձնավորություն է. նա անգամ ճանճ չի սպանի, սակայն, երբ պետք է պաշտպանել նվիրական գաղափարները, կանի դա առանց երկյուղի կամ երկմտանքի: Ավելին, երիտթուրքերը պետք է ազատվեն հայերից՝ իրենց պաշտպանելու համար: Կոմիտեն հզոր է միայն Կոստանդնուպոլսում և մի քանի այլ խոշոր քաղաքներում: Մյուս բոլոր տեղերում թուրքերը սատարում են «հին թուրքին»: Իսկ բոլոր «հին թուրքերը» մոլեռանդ են. նրանք ամենքը դեմ են ներկայիս կառավարությանը, և Կոմիտեն ստիպված է անել ամեն ինչ պաշտպանվելու համար: Սակայն չեմ կարծում, թե այլ քրիստոնյաներ կտուժեն: Թուրքը հազար թուրքի մեջ հեշտությամբ կճանաչի երեք հայի:

Հումանը միակ ազդեցիկ գերմանացին չէր, որ այդ կարծիքին էր: Տարբեր աղբյուրներից ինձ լուրեր էին հասնում, թե հայերի օգտին արած իմ միջամտությունն ինձ հետզհետե ավելի ու ավելի անցանկալի անձ է դարձնում Գերմանիայի պաշտոնական շրջաններում: Հոկտեմբերյան մի օր Գերմանիայի դեսպանության խորհրդական Նյուրաթն այցելեց ինձ և ցույց տվեց այդ օրերին ստացած մի հեռագիր Գերմանիայի արտաքին գործերի գերատեսչությունից: Այն պարունակում էր տեղեկություններ այն մասին, որ կոմս Քրուվը և կոմս Կրոմերը Լորդերի պալատում խոսել են հայերի կոտորածների մասին և դրանց պատասխանատվությունը դրել գերմանացիների վրա: Նրանք հայտարարել էին, որ տեղեկությունները ստացել են ամերիկացի վկայից: Հեռագիրը հղում էր կատարում նաև «Western Gazette» թերթում տպագրված հոդվածին, որտեղ ասվում էր, թե որոշ շրջաններում Գերմանիայի հյուպատոսները կազմակերպել և նույնիսկ առաջնորդել են հայերի վրա կատարվող հարձակումները՝ հատկապես նշելով Հալեպում Գերմանիայի հյուպատոս Ռոսլերին: Նյուրաթն ինձ ասաց, որ ստացել է իր կառավարության ցուցումը՝ Կոստանդնուպոլսում ապահովել ԱՄՆ դեսպանի հերքումն այդ մեղադրանքների առնչությամբ: Ես հրաժարվեցի հանդես գալ նման հերքմամբ՝ ընդգծելով, որ չեմ կարծում, թե ի պաշտոնե կոչված եմ որոշելու, թե ո՛վ է պատասխանատու այդ ոճրագործությունների համար՝ գերմանացինե՞րը, թե թուրքերը:

Դիվանագիտական շրջաններում ամենուրեք իշխում էր այն կարծիքը, թե հայկական ջարդերի նման լայն արձագանքը Եվրոպայում և

Միացյալ Նահանգներում ապահովել է ԱՄՆ դեսպանը: Ես անվարան կասեմ՝ նրանք իրավացի էին: Դեկտեմբերին որդիս՝ Հենրի Մորգենթաու Կրտսերն այցելեց Գալիպոլիի թերակղզի, որտեղ հանդիպեց գեներալ Լիման ֆոն Սանդերսի և գերմանացի այլ սպաների հետ: Հազիվ էր Հենրին ոտք դրել Գերմանական շտաբ, երբ նրան մոտեցել էր մի քանի սպա ու ասել.

- Հայկական հարցի վերաբերյալ ամերիկյան թերթերում տպագրվող Ձեր հոր հոդվածները շատ ուշագրավ են:

- Հայրս հոդվածներ չի գրում, - պատասխանել էր որդիս:

- Դե՛, եթե նա դրանց տակ չի ստորագրում, դեռևս չի նշանակում, թե դրանք նա չի գրում:

Ֆոն Սանդերսը նույնպես խոսել էր այդ մասին:

- Ձեր հայրը մեծ սխալ է գործում՝ խոսելով այն մասին, թե թուրքերն ինչպես են վարվում հայերի հետ - ասել էր նա: - Դա, իսկապես, նրան չի վերաբերում:

Քանի որ նման ակնարկներն ինձ վրա ոչ մի ազդեցություն չէին գործում, գերմանացիները որոշեցին անցնել սպառնալիքների: Աշնան սկզբին Բեռլինից Կոստանդնուպոլիս ժամանեց դոկտոր Նոսիգը: Նա Գերմանիայում ծնված հրեա էր և ժամանել էր Թուրքիա՝ սիոնիստների դեմ պայքար ծավալելու: Մենք մի քանի րոպե զրուցեցինք, և նա ինձ պատմեց իր հրեամետ գործունեության մասին: Շուտով ես պարզեցի, որ նա Գերմանիայի քաղաքական գործակալ է: Դոկտոր Նոսիգը երկու անգամ այցելեց ինձ: Առաջին անգամ խոսեց անորոշ ձևակերպումներով, քանի որ այցի նպատակը, հավանաբար, ինձ հետ ծանոթանալն էր և դրական տպավորություն ստեղծելը: Երկրորդ անգամ այլ թեմաներով մակերեսային զրույցից հետո նա անցավ բուն հարցին. մոտ քաշելով աթոռը՝ սկսեց խոսել մտերմիկ ու գաղտնածածուկ:

- Պարո՛ն դեսպան, - ասաց նա, - մենք երկուսս էլ հրեա ենք, և ես կցանկանայի Ձեզ հետ խոսել որպես հրեան հրեայի հետ: Հուսամ՝ չեք վիրավորվի, եթե ես ինձ թույլ տամ մի փոքրիկ խորհուրդ տալ Ձեզ. Դուք չափից ավելի մեծ հետաքրքրություն եք ցուցաբերում հայերի հանդեպ, և չեմ կարծում, որ գիտակցում եք, թե այդ պատճառով ինչպիսի անցանկալի անձ եք դառնում տեղի իշխանությունների համար: Կարծում եմ՝ պարտավոր եմ զգուշացնել, որ թուրքական կառավարությունը մտադիր է Ձեզ հետ կանչելու խնդրանք ներկայացնել: Հայերի հարցով Ձեր բոլոր բողոքներն ապարդյուն են: Գերմանացիները նրանց համար չեն միջամտի, և Դուք միայն հարվածի տակ եք դնում օգտակար լինելու Ձեր հնարավորությունները և կանգնում վտանգի առջև. Ձեր կարիերան

կարող է խայտառակ ավարտ ունենալ:

- Դուք տալիս եք այդ խորհուրդը, որովհետև, իրոք, մտահոգվա՞ծ եք իմ բարօրությամբ, - հարցրի ես:

- Անշո՛ւշտ, - պատասխանեց նա , - մենք՝ բոլոր հրեաներս, հպարտանում ենք Ձեզանով և չէինք կամենա տեսնել Ձեր կարիերայի աղետալի վախճանը:

- Այդ դեպքում վերադարձե՛ք Գերմանիայի դեսպանություն, - ասացի ես, - և Վանգենհայմին հաղորդեք հետևյալը. «Դե ինչ, արեք ամեն բան, որպեսզի ինձ հետ կանչեն: Եթե ես պետք է մարտիրոսվեմ, զոհաբերվելու ավելի ազնիվ առիթ հազիվ թե լինի: Ես կողջունեմ դա, քանի որ չեմ կարող պատկերացնել ավելի մեծ պատիվ, քան այն, որ ես՝ հրեաս, դիմում էի ամեն քայլի՝ հարյուրհազարավոր քրիստոնյաների կյանք փրկելու համար»:

Դոկտոր Նոսիգը շտապով դուրս եկավ իմ աշխատասենյակից, և ես նրան այլևս երբեք չտեսա: Երբ հաջորդ անգամ հանդիպեցի էնվերին, ասացի նրան, որ լուրեր են շրջում, թե օսմանյան կառավարությունը մտադիր է խնդրել, որ ինձ հետ կանչեն: Նա ամենայն լրջությամբ հերքեց այդ պատմությունը՝ որպես բացարձակ սուտ: «Մենք նման հիմար սխալ չենք անի», - ասաց նա:

Կասկած իսկ չի կարող լինել, որ ինձ ահաբեկելու այդ փորձը մտահղացել էին Գերմանիայի դեսպանությունում:

Հոկտեմբերի սկզբին Վանգենհայմը վերադարձավ Կոստանդնուպոլիս: Նրա հետ կատարված փոփոխությունը ցնցեց ինձ: Օրագրումս գրել եմ. «Նա Վոտանի[38] կատարյալ պատկերն էր ներկայացնում»: Դեմքն անընդհատ ծամածռվում էր, աջ աչքը փակված էր սև կապով: Նա չափազանց նյարդային էր ու հուսալքված: Վանգենհայմն ինձ ասաց, որ գրեթե չի հանգստացել. գործերի պատճառով ստիպված է եղել արձակուրդի մեծ մասն անցկացնել Բեռլինում: Վանգենհայմի վերադարձից մի քանի օր անց նրան հանդիպեցի Հասքյուի ճանապարհին: Նա ասաց, որ գալիս էր Ամերիկայի դեսպանատուն, և մենք երկուսով քայլեցինք դեսպանատան ուղղությամբ: Ինձ արդեն հայտնել էին, որ Թալեաթը մտադիր է բռնագաղթեցնել Թուրքիայում մնացած բոլոր հայերին, և այդ լուրը հարկադրեց ինձ մի վերջին անգամ խնդրանքով դիմել Կոստանդնուպոլսում գտնվող այն միակ մարդուն, ով կարող էր վերջ դնել այդ սարսափին: Ես ուղեկցեցի Վանգենհայմին դեսպանատան երկրորդ հարկ, որտեղ կարող էինք անկաշկանդ խոսել: Ավելի քան մեկ ժամ մենք վերջին անգամ զրուցեցինք այդ մասին:

- Բեռլինից ինձ հեռագիր են ուղարկել, - ասաց նա: - Ձեր Պետքար-

տուղարի խոսքերով՝ Դուք հայտարարել եք՝ երբ Բուլղարիան անցավ մեր կողմը, հայերն ավելի քան երբևէ ենթարկվեցին դաժան կոտորածների:

- Ո՛չ, ես նման հեռագիր չեմ ուղարկել, - պատասխանեցի ես: - Խոստովանում եմ, որ բազում տեղեկություններ եմ ուղարկել Վաշինգտոն. ամեն մի զեկույցի ու հայտարարության պատճենը ես ուղարկել եմ Պետքարտուղարություն: Այնտեղ դրանք ապահով պահվում են, և ինձ ինչ էլ պատահի, վկայությունը լիարժեք է, ու ամերիկացի ժողովրդին այդ տեղեկությունները հասցնելու համար իմ բանավոր զեկույցն անհրաժեշտ չի լինի: Սակայն Ձեր այդ հայտարարությունն այնքան էլ ճշգրիտ չէ: Պարզապես ես տեղեկացրի պարոն Լանսինգին, որ որևէ ազդեցություն, որ կարող էր գործել Բուլղարիան, հիմա արդեն, երբ նա դարձավ Թուրքիայի դաշնակիցը, այլևս անհնար է պատկերացնել:

Մենք նորից խոսեցինք տեղահանումների մասին:

- Գերմանիան դրանց համար պատասխանատու չէ, - ասաց Վանգենհայմը:

- Կարող եք դա անվերջ կրկնել, - պատասխանեցի ես, - միևնույն է, դրան ոչ ոք չի հավատում: Աշխարհն ընդմիշտ Գերմանիային պատասխանատու կհամարի դրա համար: Այդ հանցագործությունների մեղքը կդառնա ձեր հավերժական ժառանգությունը: Ես գիտեմ, որ Դուք բողոքի նոտա ներկայացրիք: Բայց ի՞նչ օգուտ դրանից: Դուք ինձանից ավելի լավ գիտեք, որ այդ բողոքը ոչ մի արդյունք չի ունենա: Ես չեմ պնդում, թե Գերմանիան մեղավոր է այդ ջարդերը հրահրելու գործում, սակայն Գերմանիան մեղավոր է այն առումով, որ կարող էր կանգնեցնել դրանք ու չարեց: Եվ միայն Ամերիկան ու ձեր այսօրվա թշնամիները չէ, որ ձեզ պատասխանատու կճանաչեն: Կգա մի օր, երբ Գերմանիայի ժողովուրդը պատասխանատվության կկանչի ձեր կառավարությանը: Դուք քրիստոնյա ժողովուրդ եք, և կգա ժամանակ, երբ գերմանացիները կգիտակցեն, որ ձեր թողտվությամբ մահմեդականները կործանել են մեկ այլ քրիստոնյա ժողովուրդ: Ձեր բողոքն այն մասին, որ ես տեղեկություններ եմ ուղարկում Պետքարտուղարություն, պարզապես հիմարություն է: Դուք իսկապե՞ս հավատում եք, որ նման դժոխային վայրագությունները կարող եք գաղտնի պահել: Այդքան հիմար մի՛ եղեք և ջայլամական մտքեր մի՛ արտահայտեք: Մի՛ կարծեք՝ եթե դուք անտեսում եք այդ հանցագործությունները, կարող եք ողջ աշխարհին էլ ստիպել չնկատել դրանք: Նման ոճրագործությունների արձագանքները երկինք են հասնում: Դուք իրո՞ք հավատում եք, որ ես, տեղեկանալով այդ ամենի մասին, չէի զեկուցի իմ կառավարությանը: Եվ մի՛ մոռացեք, որ ամերիկացի միսիոներների

հետ միաժամանակ հայերի մասին ինձ տեղեկություններ էին ուղարկում նաև գերմանացի միսիոներները:

- Ձեր ասածը գուցե ճշմարիտ է, - պատասխանեց Գերմանիայի դեսպանը, - սակայն մեր առջև ծառացած մեծագույն խնդիրը այս պատերազմում հաղթելն է: Թուրքիան լուծեց իր արտաքին թշնամիների հարցերը և՛ Դարդանելում, և՛ Գալիպոլիում: Հիմա նրանք փորձում են շտկել իրենց ներքին խնդիրները: Թուրքերը չափազանցած մեծ մտավախություն ունեն, որ իրենց կրկին կպարտադրեն կապիտուլյացիաները: Մինչ նորից այդ լծի տակ հայտնվելը նրանք մտադիր են իրենց ներքին հարցերն այնպես կարգավորել, որ օտարերկրյա միջամտության ոչ մի առիթ չլինի: Թալեաթն ինձ ասել է, որ մտադիր է այդ հարցը լուծել մինչև խաղաղության հաստատումը: Նրանք չեն ցանկանում, որ հետագայում ռուսներն ասեն, թե իրավասու են միջամտելու հայերի գործերին, քանի որ Ռուսաստանում մեծ թվով հայեր են բնակվում, որոնց հուզում է Թուրքիայում գտնվող ազգակիցների վիճակը: Ժամանակին Գիրսը հենց այդպես էր վարվում, և հիմա թուրքերը թույլ չեն տա, որ Ռուսաստանի կամ մեկ այլ երկրի դեսպան հետագայում նման հնարավորություն ունենա: Ամեն դեպքում հայերը խղճուկ արարածներ են: Կոստանդնուպոլսում Դուք շփվել եք ուսյալ հայերի հետ և հայերի մասին դատում եք նրանցով, սակայն բոլոր հայերը չէ, որ այդպիսին են: Ես ընդունում եմ, որ նրանց հետ դաժան վարվեցին: Ես մարդ ուղարկեցի՝ եղածը հետաքննելու, և նա զեկուցեց, որ ամենասարսափելի բռնությունները կատարել են ոչ թե թուրք պաշտոնյաները, այլ ինչ-որ ավազակախմբեր:

Վանգենհայմը կրկին առաջարկեց հայերին տեղափոխել Միացյալ Նահանգներ, և ես մեկ անգամ ևս բացատրեցի նրան դրա անիրագործելիությունը:

- Մոռացե՛ք այդ բոլոր նկատառումները, - ասացի ես, - մի պահ մոռանանք ռազմական անհրաժեշտության, պետական քաղաքականության և այլ հարցերի մասին և այս ամենը դիտարկենք որպես մարդասիրական խնդիր: Մի՛ մոռացեք, որ այդ դաժանությունների հիմնական զոհերը տարեց կանայք, ծեր տղամարդիկ ու անօգնական երեխաներն են: Ինչու՞ Դուք՝ որպես մարդ արարած, չեք տեսնում, որ այս մարդիկ ապրելու իրավունք ունեն:

- Թուրքիայում առկա ներքին իրավիճակի պայմաններում ես չեմ միջամտի,- պատասխանեց Վանգենհայմը:

Ես հասկացա, որ հարցի հետագա քննարկումն անիմաստ է:

Վանգենհայմը մարդկային կարեկցանքի, խղճահարության որևէ նշույլ չուներ, և ես նողկանքով շրջվեցի նրանից: Գերմանիայի դեսպանը

վեր կացավ, որ հեռանա. նույն պահին նա կտրուկ շունչ քաշեց, ոտքերը հանկարծ թուլացան: Ես ցատկեցի ու բռնեցի նրան հենց այն պահին, երբ արդեն ընկնում էր: Մեկ րոպեի չափ նա բացարձակապես ապշած մնաց: Հետո մտացիր նայեց ինձ, վեր կացավ ու հավաքեց իրեն: Ես բռնեցի դեսպանի ձեռքը, օգնեցի իջնել աստիճաններով և նստեցրի մեքենան: Մինչ այդ նա արդեն ուշքի էր եկել գլխապտույտից և բարեհաջող տուն հասավ: Երկու օր անց նա, ճաշասեղանի մոտ նստած, կաթված էր ստացել: Նրան տարել էին ննջասենյակ ու պառկեցրել անկողնում, սակայն նա այլևս ուշքի չեկավ: Հոկտեմբերի 24-ին ինձ պաշտոնապես տեղեկացրին, որ Վանգենհայմը մահացել է: Վերջին հիշողությունս նրա մասին այն էր, որ Գերմանիայի դեսպանը, Ամերիկայի դեսպանատանը՝ իմ առանձնասենյակում նստած, կտրականապես հրաժարվում է որևէ ազդեցություն գործել՝ մի ողջ ժողովրդի կոտորած կանխելու համար: Նա այն պաշտոնյան էր, և նրա կառավարությունն այն միակ կառավարությունն էր, որ ի վիճակի էին դադարեցնելու այդ ոճրագործությունները, սակայն, ինչպես բազմիցս ինձ Վանգենհայմն էր ասել, գերմանացիների միակ նպատակը այս պատերազմում հաղթելն էր:

Մի քանի օր անց պաշտոնական Թուրքիան և դիվանագիտական կորպուսը վերջին հրաժեշտը տվեցին պրուսական համակարգի այս կատարյալ մարմնավորմանը:

Թաղման արարողությունը տեղի ունեցավ Բերայում՝ Գերմանիայի դեսպանատան պարտեզում: Ողջ պարտեզը լցված էր ծաղիկներով: Այս պարզ, բայց և տպավորիչ արարողակարգի ողջ ընթացքում ընտանիքից, դեսպաններից ու սուլթանի ներկայացուցիչներից բացի բոլորը մնացին կանգնած: Հետո սկսվեց սգո երթը. գերմանացի նավաստիներն ուսերի վրա տանում էին դագաղը, այլ նավաստիների ձեռքին ծաղիկների հսկայական փնջեր էին, նրանց հետևից քայլում էին դիվանագիտական կորպուսի անդամները և թուրքական կառավարության պաշտոնյաներ: Սգո շարասյան առջևից քայլում էր մեծ վեզիրը: Ողջ ճանապարհը ես անցա էնվերի կողքին: Հետևից քայլում էր «Գեբեն» և «Բրեսլաու» նավերի սպայական անձնակազմը: Գերմանացի բոլոր գեներալները շքերթային համազգեստով էին: Թվում էր, թե ողջ Կոստանդնուպոլիսը դուրս է թափվել փողոց, ու մթնոլորտը տոնականի էր նմանվում: Մենք քայլեցինք Դոլմա Բահչեով՝ սուլթանի պալատի մոտով, անցնելով այն դարպասը, որով մտնում են դեսպանները, երբ գալիս են հավատարմագիր հանձնելու: Նավահանգստում սպասում էր շոգենավը, կողքին կանգնած էր Նյուրաթը՝ Գերմանիայի դեսպանության խորհրդականը՝ իր հանգուցյալ ղեկավարի դին ընդունելու համար: Ամբողջովին ծաղիկներով ծածկված

դագաղը տեղադրեցին նավի վրա: Երբ նավը ուղղություն վերցրեց դեպի նեղուց, վեց ոտնաչափ հասակով պրուսացի Նյուրաթը՝ ռազմական համազգեստով, ձեռքին ծածանվող ճերմակ փետրափնջով սաղավարտը, կանգնած էր ծգված ու լուռ: Վանգենհայմին թաղեցին Թերապիայում՝[39] Գերմանիայի դեսպանատան ամառանոցի զբոսայգում, իր բարեկամ գնդապետ Լայպցիգի կողքին: Ոչ մի այլ հանգրվան ավելի պատշաճ չէր լինի, քանզի սա էր նրա դիվանագիտական հաղթանակների բեմահարթակը, այստեղից էր, որ երկու տարի առաջ նա ռադիոազդանշաններով ուղղություն տվեց «Գեբեն» և «Բրեսլաու» նավերին ու նրանց ապահով հասցրեց Կոստանդնուպոլիս: Դրա արդյունքում Թուրքիան պատերազմի մեջ մտավ որպես Գերմանիայի դաշնակից: Դա ճանապարհ հարթեց այն բոլոր հաղթանակների և այն բոլոր սարսափների համար, որ անխուսափելիորեն պետք է հետևեին այդ քայլին:

ԳԼՈՒԽ XXVIII

Էնվերը կրկին փորձում է խաղաղության հասնել Հրաժեշտ սուլթանին և Թուրքիային

Հայերին ոչնչացումից փրկելու իմ անկարողությունը Թուրքիան իմ աչքին վերածեց սոսկ մի բնակավայրի, և ես հասկացա, որ այլևս ի վիճակի չեմ ամենօրյա հարաբերություններ ունենալ այն անձանց հետ, ովքեր, որքան էլ բարյացակամ ու քաղաքավարի լինեին ԱՄՆ դեսպանի հանդեպ, միևնույն է, «գարշահոտություն էին արձակում» մեկ միլիոն զոհերի արյունից: Եթե ես կարողանայի անել ավելին ամերիկացիների, Թուրքիայում բնակվող օտարերկրացիների կամ Օսմանյան կայսրության հալածված ազգերի համար, ես, անշուշտ, կմնայի: Հիմա, սակայն, ամերիկացիների ու եվրոպացիների վիճակն ավելի անվտանգ էր, իսկ ինչ վերաբերում էր հալածվող ազգերին, ապա ես այլևս սպառել էի բոլոր հնարավորություններս: Ավելին, Միացյալ Նահանգներում սպասվում էր մի իրադարձություն, որը, ըստ իս, անխուսափելիորեն հզոր ազդեցություն պետք է ունենար աշխարհի ու ժողովրդավարության ապագայի վրա՝ նախագահական ընտրություններ: Ես համոզված էի, որ միջազգային քաղաքական կյանքում չկար ավելի կարևոր բան, քան Նախագահ Վիլսոնի վերընտրությունը: Չեմ կարող պատկերացնել՝ ինչ կլինի, եթե ամերիկացի ժողովուրդը սրտագին չսատարի այս մեծ գործչին. դա անկանխատեսելի ու աղետալի հետևանքներ կունենա ոչ միայն Միացյալ Նահանգների, այլև ողջ աշխարհի համար: Ես հանգեցի այն եզրակացության, որ եթե կարող եմ որևէ աջակցություն ցուցաբերել Նախագահ Վիլսոնի վերընտրման գործում, ապա լավագույնս կծառայեմ իմ հայրենիքին, եթե այդ ժամանակահատվածում գտնվեմ տանը:

Ես մեկ այլ գործնական պատճառ էլ ունեի տունդարձի համար. ցանկանում էի անձամբ փոխանցել Նախագահին և Պետքարտուղարությանը այն ճշգրիտ տեղեկությունները, որ ունեի Եվրոպայում տիրող իրավիճակի մասին: Հատկապես կարևոր էր նրանց հասցնել վերջին զարգացումները խաղաղություն հաստատելու վերաբերյալ: 1915թ. երկրորդ կեսին և 1916թ. սկզբին Կոստանդնուպոլսում խաղաղությունը քննարկվող հիմնական թեման էր: Էնվեր փաշան ինձ հաճախ հորդորում էր համոզել Նախագահ Վիլսոնին, որպեսզի նա միջամտի՝ պատերազմին վերջ դնելու համար: Նա քանիցս խոստովանել էր, որ Թուրքիան ուժասպառ է եղել պատերազմից, և որ երկրի փրկությունը պայմանավորված է անհապաղ խաղաղության հաստատմամբ: Ես արդեն նկարագրել եմ այն

իրավիճակը, որ առկա էր պատերազմի առաջին մի քանի ամիսներին, սակայն 1915-ի վերջին այն անհամեմատ վատթարացել էր: Երբ թուրքերը որոշեցին աքսորել ու բնաջնջել իրենց հպատակ ժողովուրդներին, հատկապես՝ հայերին ու հույներին, նրանք այդպիսով ստորագրեցին իրենց սեփական տնտեսական մահապատիժը: Ես նշել էի, որ հենց այդ մարդիկ էին, որ վերահսկում էին Թուրքիայի արդյունաբերությունը և ֆինանսները, զարգացնում էին երկրի գյուղատնտեսությունը, և քրիստոնյա հպատակների հանդեպ գործած անպատմելի ոճրի հետևանքները հիմա երևում էին ամենուրեք. դաշտերը մնացել էին լքված, անմշակ, և ամեն օր հազարավոր գյուղացիներ սովամահ էին լինում: Քանի որ հայերն ու հույները նաև ամենախոշոր հարկատուներն էին, նրանց կոտորածը մեծապես կրճատեց պետական եկամուտները: Թուրքական բոլոր նավահանգիստները փակ էին, ուստի վերացել էին նաև մաքսատուրքերը: Այն փաստը, որ Թուրքիան դժվարությամբ էր դրամ հայթայթում առօրյա և ռազմական ծախսերի, ինչպես նաև արտաքին պարտքի տոկոսները վճարելու համար, բավական լավ է ներկայացնում երկրի քայքայված վիճակը: Նման փաստարկի առկայությամբ Թուրքիան բազմաթիվ պատճառներ ուներ խաղաղության ձգտելու համար:

Բացի այդ, Էնվերը և իշխող կուսակցությունը մտավախություն ունեին՝ եթե շուտափույթ խաղաղություն չհաստատվի, երկրում կարող է հեղափոխություն բռնկվել: Այդ ժամանակահատվածում Պետքարտուղարությունն ուղարկած իմ զեկույցներից մեկում ես գրել եմ. «Այս մարդիկ պատրաստ են ամեն ինչի՝ իրենց իշխանությունը պահպանելու համար»:

Այսուհանդերձ, Էնվերի պնդումները խաղաղության վերաբերյալ ես լուրջ չէի ընդունում:

- Դուք Ձեր և ձեր կուսակցության անունի՞ց եք խոսում այս խնդրի շուրջ, - հարցրի ես նրան, - թե՞ իրականում խոսում եք նաև Գերմանիայի անունից: Ես չեմ կարող ներկայացնել Ձեր առաջարկը, եթե Գերմանիան այս հարցում ձեզ չի սատարում: Նրանց հետ խոսե՞լ եք այդ մասին:

- Ո՛չ, - պատասխանեց Էնվերը, - սակայն ինձ հայտնի է նրանց կարծիքը:

- Դա բավարար չէ: Ավելի լավ կլինի նրանց հետ ուղղակի խոսել Գերմանիայի դեսպանության միջոցով: Ես չէի ցանկանա ներկայացնել մի առաջարկ, որը չեն քաջալերում տևտոնական բոլոր դաշնակիցները:

Էնվերի համոզմամբ՝ այդ հարցը Գերմանիայի դեսպանի հետ քննարկելը գրեթե անիմաստ էր:

Սակայն նա ասաց, որ մեկնում է հունգարառոմանական սահմանի վրա գտնվող Օրսովա քաղաք, որտեղ պետք է հանդիպեր Գերմանիայի

Գլխավոր շտաբի պետ Ֆալկենհայնին: Ֆալկենհայնը, ասաց Էնվերը, կարևոր մարդ է: Նրա հետ Էնվերը պետք է խոսեր խաղաղության մասին:

- Ինչու՞ եք կարծում, որ հիմա պատեհ առիթ է խաղաղության պայմանները քննարկելու համար, - հարցրի ես Էնվերին:

- Որովհետև երկու շաբաթ հետո մենք պետք է ամբողջովին ոչնչացնենք Սերբիան: Մեր կարծիքով, դա Դաշնակիցներին կստիպի խոսել խաղաղության մասին: Ֆալկենհայնի հետ ունեցած իմ հանդիպման նպատակն է ավարտել պատրաստությունները Եգիպտոսը գրավելու համար: Մենք ակնկալում ենք, որ մի քանի օրից մեզ կմիանա Հունաստանը: Արդեն մի քանի տոննա մթերք ու անասնակեր ենք պատրաստել Հունաստան ուղարկելու համար: Իսկ երբ Հունաստանը միանա մեզ, Ռումինիան, իհարկե, կանի նույնը: Երբ Հունաստանն ու Ռումինիան միանան մեզ, մենք մեկմիլիոնանոց թարմ ուժեր կունենանք: Անհրաժեշտ ողջ զենքն ու զինամթերքը մենք կստանանք Գերմանիայից, հենց որ ուղիղ երկաթգիծը բացվի: Այդ ամենը մեզ հիանալի պայմաններ է ստեղծում խաղաղության մասին խոսելու համար:

Ես Պատերազմի նախարարին առաջարկեցի վերոնշյալ հարցը քննարկել Ֆալկենհայնի հետ նախատեսված հանդիպման ընթացքում և վերադառնալուն պես ինձ տեղեկացնել արդյունքների մասին: Ինչ-որ ձևով այս խոսակցությունը հասել էր Գերմանիայի դեսպանին՝ կոմս Վոլֆ-Մետերնիխին. նա անմիջապես այցելեց ինձ՝ այդ հարցը քննարկելու: Նա ուզում էր, որ ես հասկանամ երկու բան. Գերմանիան երբեք չի հանձնի Էլզաս-Լոթարինգիան և կպահանջի վերադարձնել իր բոլոր գաղութները: Ես պատասխանեցի, որ հավանաբար անիմաստ է քննարկել խաղաղության պայմանները, մինչև Անգլիան նախ չգրանցի ռազմական խոշոր հաղթանակ:

- Գուցե այդպես է, - պատասխանեց կոմսը, - սակայն չեք կարող ակնկալել, որ Գերմանիան Անգլիային թույլ կտա հասնել նման հաղթանակի սոսկ նրա համար, որ Անգլիան տրամադրվի քննարկելու խաղաղության հարցը: Ես կարծում եմ՝ Դուք իրավացի չեք: Սխալ կլիներ կարծել, թե Անգլիան առ այսօր խոշոր հաղթանակներ չի տարել: Կարծում եմ, որ Անգլիան արդեն գրանցել է իրեն պատիվ բերող մի քանի հաղթանակ: Վերհիշեք, թե ինչեր են արել բրիտանացիները: Մեծ Բրիտանիան անվիճելի առավելություն հաստատեց ծովերում և ճնշեց գերմանական ողջ առևտուրը: Անգլիան իր տարածքից ոչ միայն մի թիզ անգամ չկորցրեց, այլև ձեռք բերեց բազմաթիվ նոր գաղութներ: Անգլիան անեքսիայի ենթարկեց Կիպրոսն ու Եգիպտոսը, զավթեց գերմանական բոլոր գաղութները: Բրիտանիան վերահսկում է Միջագետքի զգալի մասը:

Անհեթեթ է ասել, թե Անգլիան այս պատերազմում ոչինչ չի շահել:

Դեկտեմբերի 1-ին Էնվերն այցելեց ԱՄՆ դեսպանատուն և պատմեց Ֆալկենհայնի հետ ունեցած իր զրույցի մասին: Գերմանիայի Գլխավոր շտաբի պետն ասել էր, որ իր երկիրը միանգամայն պատրաստ է քննարկելու խաղաղության պայմանները, սակայն Գերմանիան նախօրոք չի կարող ներկայացնել իր պայմանները, քանի որ նման քայլը կընկալվի որպես թուլություն: Սակայն մի բան պարզ էր. Դաշնակիցները հիմա կստանան շատ ավելի նպաստավոր պայմաններ, քան երբևէ ապագայում: Էնվերն ինձ ասաց, որ գերմանացիները պատրաստ են հանձնելու Ֆրանսիայից զավթած բոլոր տարածքները և ըստ էության՝ ողջ Բելգիան: Բայց կար մի հարց, որից նրանք հետ չեն կանգնի՝ Սերբիայի վերջնական մասնատումը: Մակեդոնիայի ոչ մի թիզ հող չպետք է վերադարձվի Սերբիային, և նույնիսկ նախկին Սերբիային որոշ տարածքներ հետ չեն տրվի. ասել է թե՝ Սերբիան պիտի վերածվի շատ ավելի փոքր երկրի, քան եղել էր բալկանյան պատերազմներից առաջ և փաստորեն պետք է վերանա որպես անկախ պետություն: Արդեն այն ժամանակ այս ամենի իմաստը պարզ էր: Գերմանիան ստացավ այն, ինչի համար սկսել էր պատերազմը՝ անխափան երկաթուղի Բեռլինից մինչև Կոստանդնուպոլիս և Արևելք: Պանգերմանական «Mittel Europa» (Բեռլինից Բաղդադ տնտեսական ընդհանուր տարածք ստեղծելու գերմանական ծրագիրը) գաղափարի մի մասը՝ զգալի մասը, այլևս ռազմական կատարված փաստ էր: Ակնհայտորեն Գերմանիան պատրաստ էր հրաժարվելու Ֆրանսիայի ու Բելգիայի հյուսիսային շրջանները զավթելու գաղափարից՝ պայմանով, որ Անտանտը հաշտվի արդեն կատարված զավթումների հետ: Ֆալկենհայնի առաջարկը գործնականում չէր տարբերվում այն առաջարկից, որ Գերմանիան առաջ քաշեց 1914 թվականի վերջին: Էնվեր-Ֆալկենհայն վերոհիշ-յալ զրույցն այն տեսքով, որ ինձ ներկայացվեց, հաստատում էր, որ դա նախօրոք մշակված էր Գերմանիայի կողմից:

Ինձ համար այդ ամենը նշանակում էր, որ շուտափույթ խաղաղություն չի լինի, սակայն մտածեցի, որ հարկ է փաստերը ներկայացնել Նախագահին: Ես դիմեցի Վաշինգտոն՝ խնդրանքով, որպեսզի ինձ թույլ տան որոշ ժամանակով բացակայել Թուրքիայից, և ստացա այն:

Հունվարի 13-ին ես հրաժեշտի հանդիպումներ ունեցա Էնվերի ու Թալեաթի հետ: Երկուսն էլ ամենահաճելի տրամադրության մեջ էին: Հավանաբար նրանք էլ ինձ պես մտովի անդրադառնում էին այն բոլոր բախտորոշ իրադարձություններին, որ տեղի ունեցան Թուրքիայում և ողջ աշխարհում այն երկու տարվա ընթացքում, որ անցել էին մեր առաջին հանդիպումից հետո: Այն օրերին Թալեաթն ու Էնվերը պարզապես

արկածախնդիր մարդիկ էին, որ բարձր դիրքերի էին հասել սպանությունների և դավերի միջոցով: Նրանց վիճակը հիմա անկայուն էր, քանի որ ամեն պահ կարող էր բռնկվել մեկ այլ հեղափոխություն, որը նրանց կնետեր այն անհայտության մեջ, որից բարձրացել էին: Սակայն այս պահին նրանք Օսմանյան կայսրության անվիճելի տիրակալներն էին, ժամանակի հզորագույն ռազմական տերության դաշնակիցները և ինչպես միանգամայն անհեթեթորեն իրենք էին կարծում՝ բրիտանական նավատորմի ջախջախողները: Այդ մեծագույն հրճվանքի պահին, երբ ընդամենը երկու շաբաթ առաջ Դաշնակիցները Դարդանելից դուրս բերեցին իրենց ուժերը, Էնվերն ու Թալեաթը իրենց երկիրը վերստին համաշխարհային տերություն էին համարում:

- Լսել եմ, որ հայրենիք եք վերադառնում՝ հսկայական գումարներ վատնելու և ձեր Նախագահին վերընտրելու համար, - ասաց Թալեաթը. սա կեսկատակ ակնարկ էր այն փաստի առնչությամբ, որ ես Դեմոկրատների ազգային կոմիտեի ֆինանսական հանձնախմբի նախագահն էի: - Դա տխմարություն է, ավելի լավ է մնաք այստեղ և այդ փողը տաք Թուրքիային: Մենք դրա կարիքն ավելի շատ ունենք, քան ձեր ժողովուրդը: Սակայն հուսով ենք, որ շուտով կվերադառնաք, - ավելացրեց նա արևելցուն հատուկ քաղաքավարի կեղծավորությամբ: - Մենք և Դուք միասին ենք վեր բարձրացել. Դուք ժամանեցիք հենց այն պահին, երբ մենք եկանք իշխանության, և չեմ պատկերացնում, թե ինչպես կկարողանանք այսքան մտերմանալ մեկ այլ անձնավորության հետ: Բացի այդ, մենք Ձեր հանդեպ չափազանց ջերմ զգացումներ ունենք: Իհարկե, եղան տարաձայնություններ, երբեմն՝ նույնիսկ բավական կրքոտ, սակայն մենք Ձեզ միշտ արդարամիտ մարդ ենք համարել և հարգում ենք Ձեր կողմից ներկայացվող ամերիկյան քաղաքականությունը Թուրքիայում: Չէինք ցանկանա, որ Դուք հեռանայիք նույնիսկ մի քանի ամսով:

Ես ասացի, որ շոյված եմ:

- Շատ հաճելի է նման խոսքեր լսելը, - պատասխանեցի ես: - Քանի որ դուք ինձ այդչափ գովաբանեցիք, գիտեմ, որ չեք զլանա ինձ մի քանի խոստում տալ: Քանզի երկուսդ էլ ներկա եք հիմա, չեք կարողանա հրաժարվել ձեր ասածից: Խոստանու՞մ եք իմ աշխատողների հետ պատշաճորեն վարվել, այնպես, ինչպես իմ ներկայությամբ:

- Ամերիկացի միսիոներների, դպրոցների և քոլեջների հարցում, - ասաց Թալեաթը, և Էնվերը գլխով արեց, - մենք Ձեզ խոստանում ենք: Նրանց ոչ մի դեպքում չեն դիպչի. նախկինի նման նրանք կարող են շարունակել իրենց աշխատանքը: Այդ մասին մի՛ մտահոգվեք:

- Իսկ անգլիացիներն ու ֆրանսիացիներ՞ը..., - հարցրի ես:

- Դե՛, - ասաց Թալեաթը ժպտալով, - դրանց հետ մենք ժամանակ առ ժամանակ կզվարճանանք, բայց մի՛ անհանգստացեք, նրանց հետ վատ չենք վարվի:

Ես վերջին անգամ խոսեցի այն մասին, ինչը երկար ամիսներ որպես ծանր բեռ ընկած էր սրտիս: Գիտեի, որ որևէ խնդրանք իզուր կլինի, այդուհանդերձ վճռեցի հարցնել.

- Իսկ հայե՞րը...

Թալեաթի ջերմ վերաբերմունքն անմիջապես չքվեց. դեմքը խոժոռվեց, աչքերում սատանայական կրակ վառվեց:

- Հարկ չկա խոսել նրանց մասին, - ասաց նա՝ թափահարելով ձեռքը: - Մենք նրանց հաշիվներն արդեն փակել ենք: Ամեն բան վերջացած է:

Ահա այսպիսին էր իմ հրաժեշտը Թալեաթի հետ: «Ամեն բան վերջացած է». սրանք էին նրա վերջին բառերը:

Հաջորդ օրը հրաժեշտի այցով գնացի սուլթանի մոտ: Նույն հաճելի, բարի ծերուկն էր, ում առաջին անգամ հանդիպել էի երկու տարի առաջ: Նա ինձ ընդունեց ոչ պաշտոնական ձևով՝ եվրոպական հագուստով, և խնդրեց նստել իր կողքին: Զրուցեցինք գրեթե քսան րոպե և ի թիվս այլ թեմաների՝ խոսեցինք նաև այն լավ հարաբերությունների մասին, որ հաստատվել էին Ամերիկայի ու Թուրքիայի միջև: Նա երախտագիտություն հայտնեց այն հետաքրքրության համար, որ ես ունեմ իր երկրի հանդեպ, և հույս հայտնեց, որ ես շուտով կվերադառնամ: Հետո խոսեց պատերազմի ու խաղաղության մասին:

- Ամեն մի տիրակալ խաղաղություն է երազում, - ասաց նա: - Մեզանից ոչ ոք կողմ չէ արյունահեղությանը, սակայն լինում են ժամանակներ, երբ պատերազմներն անխուսափելի են: Մենք կցանկանայինք բոլոր տեսակի վեճերը կարգավորել բարեկամաբար, բայց դա միշտ չէ, որ հնարավոր է: Սա կարծես թե հենց այդպիսի դեպքերից է: Բրիտանիայի դեսպանին ես ասացի, որ մենք չենք ցանկանա պատերազմել իր երկրի դեմ: Նույնն էլ հիմա Ձեզ եմ ասում: Սակայն Թուրքիան պետք է պաշտպանի իր իրավունքները: Ռուսաստանը հարձակվեց մեզ վրա, և մենք բնականաբար պետք է պաշտպանվեինք: Այս պատերազմը մեր կողմից ծրագրված չէր: Դա Ալլահի գործն էր, ճակատագիր:

Ես հույս հայտնեցի, որ պատերազմը շուտով կավարտվի:

- Այո՛, մենք նույնպես ցանկանում ենք, որ խաղաղություն հաստատվի, - ասաց Նորին մեծությունը, - սակայն այդ խաղաղությունը պետք է երաշխավորի մեր կայսրության շահերը: Ես վստահ եմ, որ այնպիսի քաղաքակիրթ ու ծաղկուն երկիր, ինչպիսին Ամերիկան է, նույնպես խաղաղության է ձգտում և ամեն բան պիտի անի, որպեսզի այդ խաղաղությունը

տևական լինի:

Այդ զրույցի ընթացքում սուլթանն ասաց մի բան, որի շուրջ ես հետո երկար մտորում էի: Դա նրա հայտարարությունն էր. «Ռուսաստանը հարձակվեց մեզ վրա»: Այս պարզամիտ ծերուկը հավատում էր, որ, իրոք, դա այդպես էր: Պարզ էր նաև, որ նա տեղյակ չէր իրական փաստերին, չգիտեր, որ թուրքական ռազմանավերը գերմանացի սպաների հրամանատարությամբ, ռուսական նավահանգիստները ռմբակոծելով, Թուրքիան նետեցին պատերազմի մեջ: Ճշմարտությունը խոստովանելու փոխարեն երիտթուրքերը սուլթանին ներկայացրել էին այդ հեքիաթը Ռուսաստանի հարձակման մասին: Մեր զրույցի ընթացքում միանգամայն պարզ դարձավ, թե Թուրքիայի պաշտոնական տիրակալին որքանով է կայսրության կառավարությունը տեղյակ պահում երկրին վերաբերող կարևորագույն փաստերի մասին:

Մեր հանդիպման ընթացքում Թալեաթն ու Էնվերը հրաժեշտի բառեր չարտասանեցին, քանի որ որոշել էին գալ կայարան՝ ինձ բարի ճանապարհ մաղթելու: Գնացքի շարժվելուց մի քանի րոպե առաջ հայտնվեց Բեդրին՝ բավական գունատ ու շփոթված, և ինձ հաղորդեց նրանց ներողությունը:

- Նրանք չեն կարող գալ, - ասաց Բեդրին, - թագաժառանգ արքայազնը ինքնասպանություն է գործել:

Ես թագաժառանգին լավ էի ճանաչում ու գիտեի, որ նա ինձ հետ նույն գնացքով պետք է մեկներ Բեռլին: Նա պատրաստվում էր ճանապարհորդության մեկնելու Գերմանիա և այդ նպատակով նրան հատկացված հատուկ վագոնը կցվել էր գնացքին: Ես բազմիցս հանդիպել էի Յուսուֆ Իզզեդինին. նա ինձ մի քանի անգամ հրավիրել էր իր մոտ, և մենք ժամեր շարունակ զրուցել էինք Միացյալ Նահագների և ամերիկյան հաստատությունների մասին, որոնց հանդեպ նա մշտապես մեծ հետաքրքրություն էր դրսևորում: Թագաժառանգն ինձ բազմիցս խոստովանել էր, որ կցանկանար կառավարման ամերիկյան որոշ գաղափարներ ներմուծել Թուրքիա: Այդ առավոտ, երբ մենք պատրաստվում էինք Բեռլին մեկնելու, թագաժառանգին գտել էին՝ իր առանձնատան հատակին ընկած, մարմինն արյունով ողողված, երակները բացված: Յուսուֆը Աբդուլ Ազիզի որդին էր: Աբդուլ Ազիզը Թուրքիայի սուլթանն էր 1861-1876 թվականներին և նույն սարսափելի եղանակով վերջ էր տվել իր կյանքին քառասուն տարի առաջ: Հայր ու որդի մահացել էին նույն հանգամանքներում: Այն փաստը, որ Յուսուֆը բացահայտորեն համակրում էր Դաշնակիցներին, որ դեմ էր Թուրքիայի մասնակցությանը պատերազմին Գերմանիայի կողմից, և այն, որ նա խիստ անհաշտ

էր «Միություն և առաջադիմություն» կոմիտեի հետ, բազմաթիվ հարցերի տեղիք էին տալիս: Ինձ ոչինչ հայտնի չէ այն պատմություններից, որ փոխանցվում էին բերանից բերան: Ես պարզապես ասեմ, որ պաշտոնական զեկույցում նրա մահվան պատճառը նշված էր՝ «ինքնասպանություն»:

«On l'a suicidé!» (նրան ինքնասպան արեցին), - նկատել էր սրամիտ մի ֆրանսիացի, երբ ներկայացվել էր պաշտոնական եզրակացությունը:

Այդ ողբերգական լուրի տպավորությամբ, բնականաբար, Կոստանդնուպոլսից շարժվեցինք մռայլ տրամադրությամբ, սակայն ուղևորությունը բավական հետաքրքիր անցավ: Ես գտնվում էի հանրահայտ «Բալկանցուգ» գնացքում, որը կատարում էր իր երկրորդ ուղևորությունը Կոստանդնուպոլսից Բեռլին: Ինձ հատկացվել էր N 13 վագոնախցիկը: Տարբեր մարդիկ գալիս էին այն տեսնելու ու հայտնում, որ հետադարձ ճանապարհին գնացքի վրա կրակել են, և դրա հետևանքով պատուհաններից մեկը կոտրված է:

Գնացքում հենց սկզբից պարզեցի, որ ուղևորներից մեկը ծովակալ Ուզդոմն է. նա փայլուն կարիերա էր ունեցել նավատորմում: Ի թիվս այլ նվաճումների՝ եղել էր և կայսերական «Հոհենցոլլեր» նավի նավապետը, և բարեկամական հարաբերություններ ուներ Կայսեր հետ: Ուզդոմին վերջին անգամ հանդիպել էի Դարդանել կատարած իմ այցելության ժամանակ. այնտեղ նա թուրքական պաշտպանական գծերի գլխավոր հրահանգիչն էր: Մեր հանդիպման առաջին իսկ պահից գեներալը խոսք բացեց Դաշնակիցների ձախողված հարձակման մասին: Անթաքույց հայտնեց իր մտավախությունների մասին, որ այդ հարձակումը կարող էր և հաջողվել:

- Մեզ թվում էր, թե նրանք արդեն ուր որ է կծեղքեն պաշտպանական գիծը, - ասաց նա: - Բոլորս վհատված ու ընկճված էինք նման հեռանկարի հնարավորությունից: Մենք պարտական ենք թուրքերի հերոսությանը և անթիվ մարդկային կյանքեր զոհաբերելու նրանց պատրաստակամությանը: Հիմա ամեն ինչ ավարտված է. մեր գործի այդ մասն արված է:

Ծովակալի կարծիքով, բրիտանական ափհանումը վատ էր նախապատրաստված, սակայն նա հիացմունքով էր խոսում Դաշնակիցների հմտորեն կատարած նահանջի մասին: Ես նաև լրացուցիչ պարզաբանումներ ստացա հայերի ջարդերի վերաբերյալ եղած գերմանական տեսակետի մասին: Ուզդոմը ոչ մի փորձ չարեց դրանք արդարացնելու կամ թուրքերին մեղադրելու: Այդ հարցի մասին նա խոսում էր հանգիստ ու անտարբեր, զուտ որպես ռազմական խնդրի մասին, և նրան լսելիս ոչ ոք չէր կռահի, որ խոսքը մեկ միլիոն մարդկային կյանքերի մասին է: Նա

շատ ուղիղ հայտարարեց, որ հայերը խոչընդոտ էին, խանգարում էին գերմանացիների հաջողություններին, հետևաբար այդ խոչընդոտը պետք էր վերացնել որպես ոչ պիտանի գերանների կույտ: Այդ ամենի մասին նա խոսում էր նույնքան անտարբեր, որքան քաղաքի ռմբակոծմանը խոչընդոտող շինությունները վերացնելու մասին:

Դժբախտ Սերբիա... Երբ մեր գնացքն անցնում էր Սերբիայի ավերված տարածքով, ես մտածում էի այն մասին, թե ինչ է նշանակում պատերազմը այս փոքր ու խիզախ երկրի համար: Վերջին երկու տարիներին այստեղի ժողովուրդը կանգնած էր մեն մենակ, առանց Դաշնակիցների օգնության՝ ջանալով մարել պանգերմանական զավթողական տենդը, ճիշտ այնպես, ինչպես մի քանի դար շարունակ կանգնել էր որպես բարիկադ թուրքական հարձակումների ճանապարհին: Եվ վճարեց դրա դիմաց: Մենք անցնում էինք բազմաթիվ ագարակների մոտով, որոնք լքված էին, մոլախոտով ծածկված ու անմշակ, շինությունները մնացել էին առանց տանիքների, երբեմն գետնին հավասարեցված: Գետերի մոտով անցնելիս տեսնում էինք պայթեցված կամուրջների բեկորներ: Քանդված կամուրջների տեղում գերմանացիները կառուցել էին նորերը: Մենք տեսանք թշվառ ու սովալլուկ կանանց ու երեխաների, սակայն ոչ մի տղամարդ այդպես էլ չերևաց. նրանք բոլորը կա՛մ սպանվել էին, կա՛մ գտնվում էին Սերբիայի՝ դեռևս շնչող փոքրաթիվ ու խիզախ բանակում: Այդ ողջ ընթացքում մեր կողքով անցնում էին կամ կանգնած էին կայարաններում գերմանացի զինվորներով լի գնացքները՝ որպես մեր տեսած բոլոր դժբախտությունների ու կործանման բավարար բացատրություն:

ԳԼՈՒԽ XXIX

Ֆոն Յագովը, Ցիմերմանը և գերմանական ծագումով ամերիկացիները.

1916թ. փետրվարի 2-ի երեկոյան մեր գնացքը ժամանեց Բեռլինի կայարան: Օրը հիշարժան էր, քանզի այդ օրը գերմանաամերիկյան հարաբերություններում գրանցվեց լուրջ ճգնաժամ: Առաջին անձը, ում հանդիպեցի, իմ վաղեմի բարեկամ և գործընկեր դեսպան Ջեյմս Ջերարդն էր: Պարոն Ջերարդն ինձ ասաց, որ հավաքում է իրերը և ամեն պահ պատրաստ է հեռանալու Բեռլինից, քանի որ վստահ է՝ ԱՄՆ-Գերմանիա հարաբերությունների խզումը օրերի հարց է, նույնիսկ ժամերի: Այդ պահին Ամերիկան ու Գերմանիան քննարկում էին «Լուզիտանիայի» հետ կատարված վրդովեցուցիչ իրադարձությունները:[40] Բանակցությունները հասել էին այն կետին, որ կայսերական կառավարությունը պատրաստ էր ափսոսանք հայտնելու կատարվածի համար, փոխհատուցում վճարելու՝ վստահեցնելով, որ նման միջադեպ այլևս տեղի չի ունենա: Սակայն ԱՄՆ Նախագահը և պարոն Լանսինգը պնդում էին, որ գերմանացիները «Լուզիտանիայի» խորտակումն ընդունեն որպես ապօրինի գործողություն: Դա նշանակում էր, որ հետագայում Գերմանիան չէր կարողանա առանց իրեն հիմար վիճակի մեջ դնելու վերսկսել ռազմական գործողությունները սուզանավերի մասնակցությամբ, մի քայլ, որը գերմանական կառավարությունը ճանաչել է որպես միջազգային իրավունքի խախտում: Սակայն մեր կառավարությունը զիջելու ոչ մի մտադրություն չուներ, և այդպիսով երկու պետությունների հարաբերությունները ծայրաստիճան լարված էին:

- Ավելին ոչինչ չեմ կարող անել, - ասաց պարոն Ջերարդը: - Կցանկանայի, որ Դուք խոսեիք Ցիմերմանի ու ֆոն Յագովի հետ. գուցե Ձե՞զ հաջողվի նոր փաստարկներ ներկայացնել նրանց:

Իմ բազմաթիվ այցելուներից ես շուտով իմացա, որ մթնոլորտը Բեռլինում լարված է և հետզհետե դառնում է ավելի հակաամերիկյան: Մեր երկիրն ամենուրեք ընկալվում էր որպես Անտանտի դաշնակից: Ես պարզեցի, որ Մեծ Բրիտանիայի հետ ունեցած մեր սերտ հարաբերությունների մասին պտտվում էին ամենաանհեթեթ կարծիքներ: Այսպես օրինակ տարածվել էր այն կարծիքը, թե սըր Սեսիլ Սպրինգ-Ռայսը՝ Բրիտանիայի դեսպանը Վաշինգտոնում, մշտապես հանդիպում էր Նախագահ Վիլսոնի վարչակազմի անդամների հետ և խորհուրդներ տալիս մեր ազգային քաղաքականության բոլոր հարցերի վերաբերյալ:

Ժամը երեքին պարոն Ջերարդն ինձ ուղեկցեց ֆոն Յագովի տուն, և մենք մոտ մեկ ժամ զրուցեցինք Գերմանիայի արտաքին գործերի նախարարի հետ: Ֆոն Յագովը փոքրամարմին, նրբակազմ մարդ էր՝ նյարդային բնավորությամբ: Մեր զրույցի ընթացքում նա ծխում էր գլանակ գլանակի հետևից: Մեծապես մտահոգ էր ԱՄՆ-ի ու Գերմանիայի միջև ստեղծված իրավիճակով: Թող չթվա, թե Գերմանիայի կառավարության համար հեշտ կլիներ խզել կապերը ԱՄՆ-ի հետ: Այդ օրերին գերմանական թերթերը ծաղրում և վիրավորում էին մեզ՝ զավեշտալի համարելով այն գաղափարը, թե Վաշինգտոնը կարող է պատերազմի մեջ մտնել: Ինձ վրա մեծ տպավորություն գործեց այն տարբերությունը, որ առկա էր մամուլի թեթևամտության և այն անհանգստության, նույնիսկ վախի միջև, որ տիրում էր գերմանացի պաշտոնյաների շրջանում: Բեռլինյան մամուլն ինչ էլ գրեր, Գերմանիայի կառավարությանը մտահոգում էր այն հնարավորությունը, որ մեր մարդկային և նյութական ռեսուրսները կարող են նետվել օգնելու Անտանտին:

- Ափսոս, որ պարոն Լանսինգը պնդում է, որ մենք «Լուզիտանիայի» խորտակումը ճանաչենք որպես անօրինական գործողություն, - իր խոսքը սկսեց ֆոն Յագովը, - նա գործում է որպես տեխնիկական մանրուքներից կառչած փաստաբան:

- Եթե կուզեք իմանալ ճշմարտությունը,- պատասխանեցի, - ես չեմ կարծում, թե Միացյալ Նահանգների կառավարությանը հետաքրքրում են տերմինաբանությունը կամ տեխնիկական մանրուքները: Սակայն դուք պարտավոր եք ոչ երկիմաստ հայտարարել, որ զղջում եք այդ արարքի համար, որ դուք այն սխալ եք համարում, և որ դա այլևս չի կրկնվի: Քանի դեռ այդ քայլը չեք արել, Ամերիկան բավարարված չի լինի:

- Մենք չենք կարող դա անել, - ասաց ֆոն Յագովը, - Գերմանիայի հասարակական կարծիքը դա չի հանդուրժի: Եթե մենք նման հայտարարություն անենք, ներկայիս կառավարությունը կտապալվի:

- Ինձ թվում էր, որ այստեղ՝ Գերմանիայում, դուք լիովին վերահսկում եք հասարակական կարծիքը, - նկատեցի ես, - դա, հավանաբար, որոշ ժամանակ կպահանջի, սակայն դուք, իհարկե, կարող եք փոխել հասարակական կարծիքն այնպես, որ նման հայտարարությունը հավանության արժանանա:

- Եթե խոսքը վերաբերում է մամուլին, դա, իրոք, այդպես է, - պատասխանեց ֆոն Յագովը, - մենք լիովին վերահսկում ենք այն, սակայն դրա համար ժամանակ է պետք: Թերթերը չեն կարող անմիջապես փոխել իրենց գրածները. դա պետք է արվի աստիճանաբար, երկու-երեք շաբաթվա ընթացքում: Դա մենք կարող ենք ապահովել, սակայն խորհրդարանի

որոշ անդամների մենք վերահսկել չենք կարող: Նրանք այնպիսի աղմուկ կբարձրացնեն, որ մենք ստիպված կլինենք հրաժարական տալ:

- Իմ կարծիքով, դուք կարող եք այդ անդամներին հավաքել և բացատրել Միացյալ Նահանգները պատերազմից հեռու պահելու անհրաժեշտությունը, և նրանք կհամոզվեն: Ցավն այն է, որ դուք՝ գերմանացիներդ, չեք հասկանում իմ երկրում առկա իրավիճակը: Ձեզ թվում է, թե Ամերիկան պատերազմի մեջ չի մտնի: Դուք չեք հասկանում Նախագահ Վիլսոնին. ձեր կարծիքով, նա իդեալիստ է, խաղաղության մարդ և ոչ մի պարագայում զենք չի վերցնի: Դա մեծ սխալ է, որը որևէ երկրի թանկ կարժենա: Վիլսոնի բնավորությունը երկակի է. մի՝ մոռացեք, որ նրա երակներում հոսում է շոտլանդահռլանդական արյուն: Մինչ օրս դուք տեսել եք նրա շոտլանդական կողմը՝ չափազանց զգուշավոր, ամեն քայլը կշռադատող, համբերատար ու կայուն: Սակայն նրա մեջ վառվում են նաև իռլանդացու կրակն ու բռնկուն բնավորությունը: Եթե նա «ատամները սեղմի, առանց գործիքի բերանը չես բացի»: Եթե նա վճռի կռվել, ուրեմն կկռվի իր ողջ ուժով՝ մինչև վերջ: Կարող եք շարունակել ձեր սադրանքները, բայց կա մի սահմանագիծ, որը չեք հատի: Ձեզ հավանաբար մոլորեցրել է այն փաստը, որ Կոնգրեսի որոշ հեղինակավոր անդամների, նույնիսկ կառավարության մեկ անդամի դավանանքը խաղաղությունն է: Սակայն կա միայն մեկ մարդ, ով կարող է այդ հարցը որոշել՝ ԱՄՆ Նախագահը: Նա այդ հարցը կլուծի այնպես, ինչպես արդարացի և ճիշտ կհամարի անկախ նրանից, թե ուրիշներն ինչ կասեն:

Ֆոն Յագովն ասաց, որ ես ԱՄՆ Նախագահին նոր լույսի տակ ներկայացրի: Սակայն նա դեռ ուներ մեկ այլ պատճառ հավատալու, որ Ամերիկան պատերազմի մեջ չի մտնի:

- Իսկ Ամերիկայում բնակվող գերմանացիներ՞ը..., - հարցրեց նա:

- Կարող եմ Ձեզ պատմել նրանց մասին, - պատասխանեցի ես, - որովհետև ինքս նրանցից մեկն եմ: Ես ծնվել եմ Գերմանիայում և կյանքիս առաջին ինը տարին ապրել եմ այնտեղ: Գերմանական արվեստը միշտ սիրել եմ՝ երաժշտությունը, գրականությունը: Սակայն ծնողներս հեռացան այդ երկրից, որովհետև դժբախտ էին այնտեղ: Ամերիկան մեզ ընդունեց որպես հարազատների. տուն տվեց, բարեկեցիկ ու երջանիկ կյանք տվեց մեզ և մեզ նման միլիոնավոր մարդկանց: Չկա որևէ աշխատանք կամ հասարակական դիրք, որ անհասանելի լինի մեզ համար: Իմ կարծիքով, աշխարհում հազիվ թե գտնվեն ավելի գոհ մարդիկ, քան Միացյալ Նահանգների գերմանացիներն են:

Ես չէի կարող բացահայտել իմ սեփական մտքերը, քանի որ դեռևս դեսպան էի, սակայն ասացի, ինչ հնարավոր էր:

- Օրինակ՝ իմ երեխաները. պատերազմի ողջ ընթացքում նրանց համակրանքը Անգլիայի ու Դաշնակիցների կողմն է: Որդիս այստեղ է, ինձ հետ: Նա ինձ ասաց՝ եթե Ամերիկան մտնի պատերազմի մեջ, նա անմիջապես կամավոր կմեկնի բանակ: Դուք իրո՞ք մտածում եք՝ եթե մենք պատերազմենք Գերմանիայի դեմ, ապա Ամերիկայի գերմանացիները կանցնեն ձեր կողմը: Դա պարզապես ծիծաղելի է: Եվ Ամերիկայի գերմանացիների մեծ մասն այդ կարծիքին է:

- Բայց ես լսել եմ՝ եթե դուք պատերազմեք մեր դեմ, Միացյալ Նահանգների գերմանացիներն ապստամբություն կբարձրացնեն, - ասաց Ֆոն Յագովը:

- Մտքներիցդ հանեք այդ գաղափարը, - պատասխանեցի ես, - առաջին իսկ անձը, որ նման բան կփորձի, կպատժվի այնքան արագ ու կտրուկ, որ նման տրամադրությունները երկար չեն շարունակվի: Եվ ես կարծում եմ, որ Ամերիկայի օրինապահ գերմանացիներն առաջինը կկիրառեն այդ պատիժը:

- Մենք չենք ցանկանում խզել մեր կապերը Միացյալ Նահանգների հետ, - ասաց Ֆոն Յագովը, - բայց մեզ ժամանակ է պետք հասարակական կարծիքը փոխելու համար: Կա երկու ճամբար, որոնք սուզանավային պատերազմի մասին ունեն ծայրահեղ տարբեր տեսակետներ. մեկը կարծում է, որ այն անհրաժեշտ է առավելագույնս սաստկացնել՝ անկախ հետևանքներից, որ կարող է ունենալ ԱՄՆ-ի կամ մեկ այլ տերության համար: Ներկայիս կառավարությունն ունի այլ տեսակետ. մենք պատրաստ ենք կատարելու ձեր Նախագահի պայմանները, սակայն միլիտարիստական թևը մեզ վրա ճնշում է գործադրում: Նրանք մեզ կստիպեն հրաժարական տալ, եթե ասենք, որ «Լուզիտանիայի» խորտակումն անօրինական էր կամ սխալ: Կարծում եմ, որ Նախագահ Վիլսոնը կհասկանա մեզ: Մենք կաշխատենք նրա հետ, բայց պետք է զգուշավոր լինենք: Քանի որ պարոն Վիլսոնը կուզենար խուսափել մեր կապերի խզումից, կարծում եմ, պետք է գերադասի, որ իշխանության գլուխ մենք լինենք: Ինչո՞ւ անել մի բան, ինչը մեզ դուրս կմղի կառավարությունից, և մեր փոխարեն կհայտնվեն մարդիկ, ովքեր անխուսափելի կդարձնեն պատերազմը Ամերիկայի ու Գերմանիայի միջև:

- Դուք ուզո՞ւմ եք, որ Վաշինգտոնը հասկանա, որ ձեր կառավարության երկարակեցությունը կախված է նման հայտարարություն չանելուց, - հարցրի ես:

- Միանգամայն ճիշտ է, - պատասխանեց Ֆոն Յագովը, - կխնդրեի, որ Դուք այդ մասին անմիջապես հեռագրեք Վաշինգտոն: Նախագահին հայտնեք, որ եթե մեզ հիմա հեռացնեն կառավարությունից, մեր փոխա-

րեն կգան մարդիկ, ովքեր ստորջրյա անսանձ պատերազմ վարելու կողմնակից են:

Ֆոն Յագովին զարմացրել էին Նախագահ Վիլսոնին տված իմ բնութագիրը և պատերազմելու նրա պատրաստակամությունը:

- Մեր ընկալմամբ՝ նա բացարձակապես խաղաղասեր անձնավորություն է, - ասաց նա: - Մենք չենք հավատում, որ ամերիկացի ժողովուրդը կգնա պատերազմի: Նրանք հեռու են դեպքերի վայրից և, ի վերջո, հանուն ինչի՞ պիտի կռվեն: Չէ՞ որ ձեր նյութական շահերը չեն տուժել:

- Սակայն գոյություն ունի մի բան, հանուն որի մենք կկռվենք. դա բարոյական սկզբունքն է, - պատասխանեցի ես: - Միանգամայն պարզ է, որ դուք ամերիկյան ոգին չեք հասկանում. չեք հասկանում, որ մենք չենք շտապում ոչ այն պատճառով, որ չենք ցանկանում կռվել, այլ՝ որովհետև ցանկանում ենք լիովին արդար լինել: Նախ ուզում ենք ձեռքի տակ ունենալ բոլոր փաստերը: Ես ընդունում եմ, որ մենք չենք սիրում խառնվել այլ երկրների վեճերին, սակայն մենք կպնդենք մեր իրավունքը՝ օվկիանոսն օգտագործել այնպես, ինչպես հարմար ենք գտնում և թույլ չենք տա, որ Գերմանիան մշտապես խախտի այդ իրավունքը և սպանի մեր քաղաքացիներին: Գուցե ամերիկացիները երիտասարդ ազգ են, բայց այն պահին, երբ կորոշեն, որ պետք է պաշտպանեն իրենց իրավունքները, կանեն դա՝ անկախ հետևանքներից: Եթե ձեզ թվում է, թե ամերիկացիները հանուն սկզբունքի չեն կռվի, ապա դուք հավանաբար մոռանում եք, որ մեր բոլոր պատերազմները մղվել են հանուն սկզբունքի: Դիցուք, դրանցից ամենամեծը՝ 1861-1865 թվականների քաղաքացիական պատերազմը. Հյուսիսը պայքարում էր ստրուկների ազատագրման համար. դա զուտ սկզբունքի հարց էր, մեր նյութական շահերի հետ առնչություն չուներ: Եվ մենք կռվեցինք մինչև վերջ, թեև կռվում էինք մեր եղբայրների դեմ:

- Մենք չենք ուզում Ամերիկայի հետ վատ հարաբերություններ ունենալ,- ասաց ֆոն Յագովը: - Աշխարհի խաղաղությունը կախված է երեք երկրից՝ Անգլիայից, Միացյալ Նահանգներից և Գերմանիայից: Մենք երեքս պետք է միավորվենք, խաղաղություն հաստատենք և պաշտպանենք այն: Ես երախտապարտ եմ Ձեզ բացատրության համար. հիմա իրավիճակը շատ ավելի լավ եմ հասկանում, սակայն, միևնույն է, չեմ հասկանում, թե ինչու է ձեր կառավարությունն այդչափ խիստ Գերմանիայի և այդքան բարեհաճ Անգլիայի հանդեպ:

Ես տվեցի ավանդական բացատրություն. այն է՝ ամեն մի երկրի հետ մեր խնդիրները դիտում ենք որպես առանձին հարց և չենք կարող մեր

վերաբերմունքը Գերմանիայի հանդեպ որևէ կերպ պայմանավորել Անգլիայի հանդեպ ունեցած մեր վերաբերմունքով:

- Այո՛, իհարկե, - տխուր պատասխանեց ֆոն Յագովը: - Դա ինձ հիշեցնում է բակում խաղացող երկու տղաների. մեկին պետք է հիմա պատժեն, մյուսը սպասում է իր հերթին: Վիլսոնը նախ կպատժի գերմանացի տղային, հետո, երբ նրա հետ գործն ավարտի, կանցնի Անգլիային: Սակայն, - ավարտեց նա խոսքը, - կխնդրեի, որ հեռագրեք ձեր Նախագահին, որ այդ մասին խոսել եք ինձ հետ և հիմա հասկանում եք Գերմանիայի տեսակետը: Կարո՞ղ եք նրան խնդրել, որ առայժմ ոչինչ չձեռնարկի, մինչև Դուք հասնեք Ամերիկա և անձամբ բացատրեք իրավիճակը:

Ես խոստացա և պարոն Ջերարդի հետ միասին անմիջապես հեռագիր ուղարկեցի Վաշինգտոն:

Ժամը չորս անց կեսին ես դոկտոր Ալեքսանդրի և նրա կնոջ կողմից հրավիրված էի իրենց տուն՝ թեյ խմելու: Իմ ժամանելուց մոտավորապես տասնհինգ րոպե անց հայտնվեց Ցիմերմանը: Նա ֆոն Յագովի ճիշտ հակապատկերն էր: Ցիմերմանն ինձ թվաց ավելի հզոր և՛ ֆիզիկապես, և՛ իր հոգեբանությամբ: Նա բարձրահասակ էր, հաղթանդամ, վստահ պահվածքով: Նրա բարձրացրած հարցերն անմիջական էին և պրպտուն, իսկ ինքը՝ չափազանց հաճելի և համոզիչ:

Գերմանաամերիկյան հարաբերությունների շուրջ զրույցը Ցիմերմանը սկսեց մի հայտարարությամբ, որը, իր կարծիքով, ըստ ամենայնի պետք է որ ինձ դուր գար: Նա ասաց, թե պատերազմի ընթացքում որքա՜ն լավ են իրենց դրսևորել Գերմանիայի հրեաները, և թե որքա՜ն պարտավորված են իրենց զգում գերմանացիները դրա համար:

- Պատերազմից հետո, - ասաց նա, - Գերմանիայում նրանց շատ ավելի լավ կվերաբերվեն, քան նախկինում:

Ցիմերմանն ասաց, որ տեղյակ է իմ ու ֆոն Յագովի միջև կայացած խոսակցությանը և խնդրեց ինձ կրկնել դրա մի մասը: Նրան հատկապես հետաքրքրում էր իմ ասածը Ամերիկայի գերմանացիների մասին, և կցանկանար ինձնից իմանալ այն փաստերը, որոնց հիման վրա կառուցել էի եզրակացությունս: Շատ գերմանացիների նման նա նույնպես մեր բնակչության գերմանական տարրն ընկալում էր գրեթե որպես Գերմանիայի մաս:

- Վստա՞հ եք, որ պատերազմի դեպքում ձեր երկրի գերմանացիները չեզոք կգտնվեն Միացյալ Նահանգների հանդեպ, - հարցրեց նա: - Նրանց զգացմունքները հայրենիքի հանդեպ արդյոք ավելի՞ հզոր չեն:

- Դուք Ամերիկայի գերմանացիներին ընկալում եք որպես մեր բնակչության առանձին հատված, որ ապրում է մյուսներից անջատ և ամերիկ-

յան կյանքի հետ շատ քիչ ընդհանրություն ունի, - պատասխանեցի ես: - Դուք չարաչար սխալվում եք. նրանցից մի քանիսին կարող եք կաշառել, որպեսզի մեծ աղմուկ հանեն և գոռալով գերմանամետ կարգախոսներ տարածեն: Սակայն խոսքս գերմանական ծագում ունեցող միլիոնավոր ամերիկացիների մասին է: Այդ մարդիկ իրենց ամերիկացի են համարում և ուրիշ ոչինչ: Նրանց երկրորդ սերունդը հատկապես դեմ է, որ իրեն ընկալեն որպես գերմանացի: Նրանք խոսում են միայն անգլերեն, չեն կարդում գերմանական թերթեր և չեն հաճախում գերմանական դպրոցներ: Նրանք նույնիսկ հրաժարվում են գնալ լյութերական եկեղեցի, որտեղ խոսում են գերմաներեն: Նյու Յորքում բնակվում է ավելի քան մեկ միլիոն ամերիկագերմանացի, սակայն մեծ դժվարությամբ է հաջողվում մեկ գերմանական թատրոն պահել այնտեղ: Պատճառն այն է, որ այդ մարդիկ գերադասում են անգլախոս թատրոն հաճախել: Գործում է գերմանական մի քանի ակումբ, սակայն դրանց անդամների թիվն աննշան է: Ամերիկայում գերմանական ծագումով ամերիկացիները նախընտրում են ընդհանուր ակումբների անդամակցել, և Նյու Յորքում չկա որևէ ակումբ, նույնիսկ շատ հանրահայտ, որտեղ նրանց չընդունեն: Նյու Յորքի քաղաքական ու հասարակական կյանքում գերմանական ծագումով բազմաթիվ ամերիկացիներ են հասել բարձր դիրքի հենց միայն իրենց արժանիքների շնորհիվ, սակայն նաև նրանցից շատերը նշանակալի պաշտոններ են զբաղեցնում իրենց ծագումից անկախ: Եթե Միացյալ Նահանգներն ու Գերմանիան պատերազմեն իրար դեմ, Ամերիկայի գերմանացիների նվիրվածությունը կզարմացնի ոչ միայն ձեզ, այլև ողջ աշխարհին: Մեկ այլ բան. եթե մենք մտնենք պատերազմի մեջ, ապա կկռվենք մինչև վերջ, և դա կլինի շատ երկար ու վճռական պայքար:

(Հիմա երեք տարի անց, ես այդ կանխագուշակումներից ամաչելու պատճառ չունեմ: Երբեմն մտորում եմ, թե ի՞նչ է ներկա պահին մտածում Ցիմերմանն ասածներիս մասին:)

Իմ բացատրություններից հետո Ցիմերմանը սկսեց խոսել միայն Թուրքիայի մասին: Նա կարծես թե ջանում էր պարզել՝ արդյոք թուրքերը կարո՞ղ են սեպարատ հաշտություն կնքել: Ես նրան բավական կտրուկ ասացի, որ թուրքերն իրենց պարտավորված չեն զգում գերմանացիների հանդեպ: Այդ թեման ինձ մեկ այլ հնարավորություն ընձեռեց:

- Թուրքիայում շատ ուսանելի բաներ սովորեցի գերմանական մեթոդների մասին, - ասացի ես, - կարծում եմ, որ մեծ սխալ կլինի այդ նույն մարտավարությունը փորձարկել Ամերիկայում: Խոսում եմ այդ մասին, քանի որ արդեն սաբոտաժի դեպքեր են եղել: Նման գործողությունները էլ ավելի են միավորում Ամերիկայի գերմանացիներին ձեր դեմ

և հրում Անգլիայի գիրկը:

- Բայց Գերմանիայի կառավարությունը պատասխանատու չէ դրա համար. մեզ ոչինչ հայտնի չէ, - ասաց Ցիմերմանը:

Ես, իհարկե, չհավատացի այդ հայտարարությանը, քանի որ վերջին իրադարձությունները բացահայտեցին դրանց ստահոդ լինելը, և մենք անցանք այլ թեմաների: Նորից բարձրացվեց սուզանավերի հարցը:

- Մենք կամավոր ենք սահմանափակել մեր նավատորմի ռազմական գործողությունները, - ասաց Ցիմերմանը, - ծովում մենք ոչինչ չենք կարող անել առանց մեր սուզանավերի: Ըստ իս՝ Միացյալ Նահանգները մեծ սխալ է գործում՝ այդ աստիճանի կտրուկ դեմ լինելով սուզանավերին: Դուք ծովային երկար սահման ունեք, և սուզանավերը մի օր կարող են ձեզ էլ պետք գալ: Ենթադրենք՝ որևէ եվրոպական պետություն կամ, ասենք, Ճապոնիան հարձակվի ձեզ վրա: Այդ ժամանակ սուզանավերը ձեզ լավ ծառայություն կմատուցեն: Բացի այդ, եթե դուք շարունակեք պնդել «Լուզիտանիայի» վերաբերյալ այդ հայտարարությունը, մեր կառավարությունն ուղղակի կհանձնեք Տիրպիցի կողմնակիցներին:

Ցիմերմանը նորից խոսեց Թուրքիայում առկա իրավիճակից: Նրա հարցերը վկայում էին այն մասին, որ նա չափազանց դժգոհ է Գերմանիայի նոր դեսպան կոմս Վոլֆ-Մետերնիխից: Վերջինիս հավանաբար չէր հաջողվել շահել Թուրքիայում իշխող ուժերի համակրանքը, և նա բեռ էր դարձել Գերմանիայի արտաքին գործերի գերատեսչության ուսերին: Մետերնիխն այլ վերաբերմունք ուներ հայերի հանդեպ, քան Վանգենհայմը, և անկեղծորեն փորձել էր համոզել Թալեաթին ու Էնվերին վերջ տալ ջարդերին: Ցիմերմանն ինձ ասաց, որ դրանով Մետերնիխը մեծ սխալ է գործել՝ ի չիք դարձնելով իր ազդեցությունը Կոստանդնուպոլսում: Ցիմերմանը չէր թաքցնում իր դժգոհությունը Մետերնիխի դրսևորած մարդասիրությունից: Հիմա ես հասկանում եմ, որ Վանգենհայմը, իրոք, ներկայացնում էր պաշտոնական Բեռլինի տեսակետը: Այսպիսով, գերմանական իշխանության ամենաբարձր մակարդակով ես ստացա իմ ներքին համոզմունքի հաստատումը, որ հայերի բռնագաղթի կազմակերպման հարցում Գերմանիան տվել էր իր համաձայնությունը:

Մի քանի օր անց շոգենավով մեկնեցինք Կոպենհագեն, իսկ 1916թ. փետրվարի 22-ին ես նորից հայտնվեցի Նյու Յորքի նավահանգստում, տանը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] **Մառնի ճակատամարտ** - ճակատամարտ՝ Մառն գետի երկայնքով, որը հայտնի է նաև որպես «Մառնի հրաշք» (1914 թ., սեպտեմբերի 5-12): Դաշնակիցները հաղթեցին Գերմանիային այս ճակատամարտում, ինչը կասեցրեց վերջինիս հարձակումը Փարիզի վրա: Մառնի ճակատամարտը հսկայական նշանակություն ունեցավ Առաջին համաշխարհայինի ընթացքի և արդյունքների վրա:

[2] **Ֆրիդրիխ Ադոլֆ Յուլիուս ֆոն Բեռնարդի (1849-1930թթ.)** - գերմանացի գեներալ և ռազմական պատմաբան: Քարոզում էր անողոք ագրեսիա, բացարձակ արհամարհանք միջազգային պայմանագրերի հանդեպ՝ պատերազմն անվանելով «աստվածային գործ»:

[3] **Օտտո ֆոն Բիսմարկ (1815-1898թթ.)** - գերմանացի խոշոր քաղաքական գործիչ: 1871-ին մի քանի փայլուն ռազմական հաղթանակների արդյունքում միավորեց գերմանական պետությունները (բացառությամբ՝ Ավստրիայի)՝ ստեղծելով հզոր Գերմանական կայսրություն Պրուսիայի առաջնորդությամբ:

[4] **Կլեմենս ֆոն Մետերնիխ (1773-1859թթ.)** - ավստրիացի քաղաքական գործիչ, իր ժամանակի հայտնի դիվանագետ: 1809-1848 թվականներին եղել էր Ավստրիայի արտաքին գործերի նախարարը:

[5] **Ջոզեֆ Ֆուշե** - ֆրանսիացի պետական գործիչ, Նապոլեոն Առաջինի կառավարության անդամ, ոստիկանապետ:

[6] **Վիլյամ Էվարտ Գլադստոն** - անգլիացի ականավոր քաղաքական գործիչ: Իր շուրջ վաթսունամյա քաղաքական կարիերայի ընթացքում չորս անգամ եղել է Մեծ Բրիտանիայի վարչապետը:

[7] **Wilhelmstrasse** - Բեռլինի կենտրոնական և ամենաաշխույժ փողոցներից մեկը, որտեղ մինչև 1945 թվականը գտնվում էին Գերմանիայի արտաքին գործերի նախարարությունը և պետական այլ հաստատություններ:

[8] **«Գերմանիան ամեն ինչից վեր է»** - կայսերական Գերմանիայի օրհներգն է, և «Հերթափոխ Հռենոսի վրա» երգը:

[9] Խոսքը 1913-ին ԱՄՆ Կոնգրեսի կողմից ընդունված այսպես կոչված «Սակագնային ակտի» մասին է, որի ընդունմամբ սակագները Ամերիկայում իջեցվեցին 40 տոկոսից 25 տոկոսի:

[10] **Սեդան** – քաղաք Ֆրանսիայում, որտեղ Ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ Սեդանի ճակատամարտում կայսր Նապոլեոն Երրորդը և նրա հարյուրհազարանոց բանակը գերի վերցվեցին պրուսացիների կողմից: 1871թ. սեպտեմբերի 2-ը՝ Սեդանի ճակատամարտի օրը, հռչակվեց Գերմանիայի ազգային տոն:

[11] **Լուվեն** - բելգիական քաղաք, որն ամբողջովին ոչնչացվեց գերմանացիների կողմից 1914 թվականի օգոստոսին:

[12] **Ածխալցիչ կայան** - նավահանգիստ, որը կառուցվել էր հատկապես նավերի ածխապաշարները կամ վառելանյութի այլ պաշարներ լրացնելու համար: Կայանները վերացան, երբ ածխի օգտագործումը որպես վառելանյութ դադարեցվեց:

[13] **Մոնս** - բելգիական քաղաք: Մոնսի ճակատամարտը Առաջին համաշխարհային պատերազմի առաջին ռազմական գործողությունն էր, որին մասնակցեց բրիտանական զինուժը: Պարտություն կրելով իրենց թվով գերազանցող գերմանական բանակից՝ անգլիացիները ստիպված եղան նահանջել:

[14] Բարձր Դռանը հավատարմագրվելիս օտարերկրյա դեսպանները թուրքական իշխանություններին ի պահ էին հանձնում իրենց ազգային անձնագրերը: Անձնագիր հետ պահանջելը նշանակում էր երկրից հեռանալու մտադրություն և իրականում բողոքի ակցիա էր:

[15] **Կապիտուլյացիաներ** - Օսմանյան կայսրության զիջումները կամ ինչպես ասում էին՝ կապիտուլյացիաները պայմանագրեր էին՝ կնքված Օսմանյան կայսրության և եվրոպական երկրների միջև: Որպես կանոն, դրանք երկկողմ համաձայնագրեր էին, ըստ որոնց՝ սուլթանն իր քրիստոնյա հպատակներին բնակության և առևտրի որոշակի իրավունքներ ու արտոնություններ էր տալիս: Ի հատուցումն՝ եվրոպական երկրները դաշնակցային կապեր էին հաստատում Թուրքիայի հետ:

[16] **Ռիչարդ Կոբդեն (1804-1865թթ.)** - անգլիացի պետական գործիչ և

խոշոր ձեռներեց: Ուսումնասիրելով Թուրքիան և նրա քաղաքականությունը եկել էր այն եզրակացության, որ այդ երկիրն ընդունակ չէ իրեն ինքնուրույն կառավարելու, ուստի Թուրքիայի անկախության և տարածքային ամբողջականության պահպանումն անիմաստ է: Կոբդենը համոզված էր, որ Թուրքիայի ապագան իր քրիստոնյա բնակչության ձեռքին է, և հորդորում էր բրիտանական իշխանություններին դաշնակցել ոչ թե մահմեդական կառավարիչների, այլ Թուրքիայում ապրող քրիստոնյաների հետ:

[17] **Աբրոգացիա** - օրենքի վերացում, օրենքը չեղյալ հայտարարելը:

[18] **Էմբարգո** - իսպաներեն արգելանք:

[19] Պատերազմ ԱՄՆ-ի և Իսպանիայի միջև 1898թ. ապրիլ-օգոստոս ամիսներին, երբ Միացյալ Նահանգները սատարեց Կուբային վերջինիս Իսպանիայից անկախանալու պայքարում:

[20] **Ռայյան** - Օսմանյան կայսրության ոչ մահմեդական հպատակ:

[21] **Բարդուղիմեոսյան գիշեր** - 1572 թվականի օգոստոսի 24-ի գիշերը և դրան հաջորդած մի քանի շաբաթը, երբ Փարիզում ու Ֆրանսիայի շրջաններում կաթոլիկները կոտորեցին հազարավոր բողոքականների:

[22] **Սելամլըք** – մահմեդականների տներում տղամարդկանց հատկացված հարկաբաժին:

[23] **Ֆիզիոգնոմիա** -անհատի բնավորության կամ խառնվածքի որոշումը՝ ըստ նրա դիմագծերի:

[24] **Դոմինյոն** – կառավարման հատուկ ռեժիմ ունեցող գաղութային տիրույթ:

[25] **Standard Oil** - ամերիկյան խոշոր նավթային ընկերություն:

[26] **Ոսկեղջյուր** - բնական ծովախորշիկ Բոսֆորում, որը կիսում է Ստամբուլը երկու մասի. այստեղ հազարավոր տարիներ ապաստան են գտել հունական, հռոմեական, բյուզանդական, թուրքական և այլ նավեր:

[27] **Հերո և Լեանդր** – ըստ հունական դիցաբանության՝ Լեանդրն ամեն

գիշեր լողում էր իր սիրեցյալ Հերոյի՝ Աֆրոդիտե դիցուհու քրմուհու մոտ, որն ապրում էր Դարդանելի մյուս ափին: Հերոն ամեն գիշեր ճրագ էր վառում, որպեսզի Լեանդրը չկորցնի իր ուղին: Սակայն մի գիշեր քամին հանգցնում է ճրագը, և Լեանդերը, մոլորվելով մթության մեջ, խեղդվում է Դարդանելում: Իմանալով սիրելիի մահվան մասին՝ Հերոն ինքնասպան է լինում՝ աշտարակից նետվելով ջուրը:

[28] **Քսերքսես (մ. թ. ա. 519-465թթ.)** - Պարսիկների չորրորդ թագավորը. հայտնի էր հատկապես Հունաստան կատարած իր արշավանքներով:

[29] Խոսքը գերմանական պաշտոնական «Der Tag» օրաթերթի մասին է:

[30] **Հելիգոլանդ** - ծովախորշ Հյուսիսային ծովում՝ Գերմանիայի սահմանի մոտ: Հելիգոլանդի ծովախորշում 1914 թվականի օգոստոսի 28-ին տեղի ունեցավ Առաջին համաշխարհային պատերազմի առաջին ծովամարտը:

[31] Հեղինակը նկատի ունի Ամերիկայի Անկախության հռչակագիրը:

[32] **Ալբիգոյցիներ** - Ֆրանսիայի հարավում գտնվող Ալբի քաղաքում սկիզբ առած աղանդի հետևորդներ: 1208-ին Հռոմի Պապ Ինոկենտիոս Երկրորդի հրամանով ալբիգոյցիներին դաժանաբար կոտորեցին, ինչից հետո այդ աղանդը վերացավ:

[33] **Սիցիլիական վեսպերներ** - 1282 թվականին Սիցիլիայում կատարված հեղափոխությունը՝ Ֆրանսիայի թագավոր Շառլ Առաջինի տիրապետության դեմ: Վեց շաբաթվա ընթացքում ապստամբները սպանեցին երեք հազար ֆրանսիացի կին ու տղամարդ, և Շառլ Առաջինը կորցրեց կղզու վերահսկողությունը:

[34] **Տորկվեմադա** - Ինոկենտիոս VIII Պապի կողմից նշանակված մեծ ինկվիզիտոր, ում հրամանով սպանվեցին հազարավոր հրեաներ:

[35] **Վիլյամ Պրեսկոտ (1796-1859թթ.)** - ամերիկացի պատմաբան, իսպանագետ:

[36] **Կառլ Մեծ (742-814թթ.)** - նախ՝ ֆրանկների թագավորը, այնուհետ՝ Հռոմեական սրբազան կայսրության առաջին կայսրը: Սաքսոնիայում, որը գտնվում էր ներկայիս Գերմանիայի հյուսիսարևմտյան մասում, Կառլը

18 ճակատամարտ է ունեցել և ի վերջո Սաքսոնիան միացրել իր տիրույթներին:

[37] **Կառլ Բոյ էդ** - Առաջին աշխարհամարտի տարիներին Գերմանիայի ռազմածովային կցորդը Վաշինգտոնում:

[38] **Վոտան** -գերմանական դիցաբանության մեջ պատերազմի աստվածը, նույն ինքը Օդինը սկանդինավյան դիցաբանության մեջ:

[39] **Թերապիա** - թաղամաս Կոստանդնուպոլսում:

[40] **«Լուզիտանիա»** - ամերիկյան օվկիանոսային նավ, որը 1915 թվականին ռմբակոծվեց գերմանական սուզանավի կողմից և խորտակվեց: Նավում գտնվող 1959 ուղևորներից 1198-ը զոհվեց:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ..... 3

ՆԱԽԱԲԱՆ.....7

ԳԼՈՒԽ I. Գերմանացի գերմարդը Կոստանդնուպոլսում 8

ԳԼՈՒԽ II. «Բոսսերի համակարգը» Օսմանյան կայսրությունում, և ինչպես այն օգտակար եղավ Գերմանիայի համար.....21

ԳԼՈՒԽ III. «Կայսեր անձնական ներկայացուցիչ» Վանգենհայմը դեմ է Հունաստանին ամերիկյան ռազմանավեր վաճառելուն.....37

ԳԼՈՒԽ IV. Գերմանիան մոբիլիզացնում է թուրքական բանակը 53

ԳԼՈՒԽ V. Վանգենհայմը զարտուղի ճանապարհով անցկացնում է «Գեբեն» և «Բրեսլաու» ռազմանավերը Դարդանելի նեղուցով 58

ԳԼՈՒԽ VI. Վանգենհայմը պատմում է ԱՄՆ դեսպանին՝ ինչպես Կայսրն սկսեց պատերազմը 68

ԳԼՈՒԽ VII. Գերմանիայի ծրագրերը նոր տարածքների, ածխալցիչ կայանների և ռազմատուգանքի վերաբերյալ 74

ԳԼՈՒԽ VIII. Գերմանական քարոզչության դասական օրինակ 78

ԳԼՈՒԽ IX. Գերմանիան փակում է Դարդանելը՝ Ռուսաստանը կտրելով իր դաշնակիցներից 85

ԳԼՈՒԽ X. Թուրքիան վերացնում է կապիտուլյացիաները էնվերն ապրում է պալատում. մեծ փողեր և հարսնացու՝ կայսերական ընտանիքից 91

ԳԼՈՒԽ XI. Գերմանիան պատերազմի մեջ է ներքաշում Թուրքիային 99

ԳԼՈՒԽ XII. Թուրքերը փորձում են պատշաճ վարվել թշնամի երկրների քաղաքացիների հետ, սակայն գերմանացիները պահանջում են հալածել նրանց 104

ԳԼՈՒԽ XIII. Ներխուժում «Նոտր Դամ դե Սիոն» դպրոց 116

ԳԼՈՒԽ XIV. Վանգենհայմը և «Բեթղեհեմ» պողպատի ընկերությունը «սրբազան պատերազմ», որի գաղափարը ծնվել էր Գերմանիայում 124

ԳԼՈՒԽ XV. Ջեմալը՝ խռովարար Մարկոս Անտոնիոս խաղաղություն հաստատելու գերմանացիների առաջին փորձը 134

ԳԼՈՒԽ XVI. Թուրքերը պատրաստվում են Կոստանդնուպոլիսը լքելու և նոր մայրաքաղաք գտնելու Փոքր Ասիայում Դաշնակիցների նավատորմը ռմբակոծում է Դարդանելը 144

ԳԼՈՒԽ XVII. Էնվերը ներկայանում իբրև մեկը, ով ի ցույց դրեց «բրիտանական նավատորմի խոցելիությունը» Դարդանելի՝ իր դարն ապրած պաշտպանական համակարգը 157

ԳԼՈՒԽ XVIII. Դաշնակիցների նավատորմը հեռանում է հաղթանակին ընդհուպ մոտեցած 167

ԳԼՈՒԽ XIX. Պայքար երեք հազար խաղաղ բնակիչների համար 178

ԳԼՈՒԽ XX. Օտարերկրյա քաղաքացիների նոր փորձությունները 193

ԳԼՈՒԽ XXI. Բուլղարիան դրվում է աճուրդի 199

ԳԼՈՒԽ XXII. Թուրքը վերադառնում է նախնյաց ակունքներին 207

ԳԼՈՒԽ XXIII. «Հեղափոխություն» Վանում 221

ԳԼՈՒԽ XXIV. Մի ժողովրդի սպանություն 227

ԳԼՈՒԽ XXV. Թալեաթը պատմում է, թե ինչու է բռնագաղթեցնում հայերին.....244

ԳԼՈՒԽ XXVI. Էնվեր փաշան խոսում է հայերի մասին 256

ԳԼՈՒԽ XXVII. Գերմանիայի դեսպան. «Հայերի համար ոչինչ չեմ անի»....271

ԳԼՈՒԽ XXVIII. Էնվերը կրկին փորձում է խաղաղության հասնել. հրաժեշտ սուլթանին և Թուրքիային 287

ԳԼՈՒԽ XXIX. Ֆոն Յագովը, Ցիմերմանը և գերմանական ծագումով ամերիկացիները 296

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 304

Խմբագիր և սրբագրիչ՝ Սվետլանա Դանիելյան
Շապիկի ձևավորում՝ Լուսինե Մաթևոսյան

[4000 դ.]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0288530

Ա 99497
II

ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ՀԱՍՏԱՏՈՒՏ